# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .................. 5
Նպատակը և խնդիրները .................. 5
Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները .................. 6
ՀՀ 2007 – 2009 թթ ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը .................. 7
Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները .................. 7

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .................. 9

ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ .................. 10
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .................. 10
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ .................. 10
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ .................. 11
Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ .................. 11
Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները .................. 11

ԳԼՈՒԽ 2. ՀՀ 2007-2009 ԹԹ ՄԺԾԾ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ .................. 12
ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ .................. 13
Համախառն ներքին արդյունքը՝ ըստ տնտեսության առանձին ճյուղերի .................. 13
Համախառն ներքին արդյունքը՝ ըստ ծախսային բաղադրիչների .................. 14
Սպառողական գներ .................. 14
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ .................. 14
Արտահանում .................. 15
Ներմուծում .................. 15
Գործոնային եկամուտներ և տրանսֆերտներ .................. 15
Ընթացիկ հաշիվ .................. 16

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2007 – 2009 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ .................. 17
ՀՀ 2007 – 2009 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .................. 17
ՀՀ 2007 - 2009 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ .................. 18

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ .................. 22
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ .................. 22
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ .................. 24
Արտաքին պետական պարտք .................. 24
Ներքին պետական պարտք .................. 26
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2007-2009 ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .................. 28
2007-2009 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ .................. 30
ՀՀ 2007-2009 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ .................. 37
ՀՀ 2007-2009 ԹԹ ՄԺԾԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ .................. 40
Ռիսկերի աղբյուրները .................. 40
Հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը .................. 41
Փոխհատուցման հնարավորությունները .................. 41

ՄԱՍ Բ ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ .................. 42

ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2007-2009 ԹԹ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .................. 43

ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ .................. 46
6.1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .................. 46

6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ...48
6.2.1. Նպատակները ...48
6.2.2. Գերակայությունները ...49
6.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ...49
6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ...50

ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ...53
ԳԼՈՒԽ 7.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ...53
7.1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ...53
7.1.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ...60
7.1.3 ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ...71
Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն ...73
7.2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ...81
7.2.1. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ...81
7.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ...82
7.2.3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 2007-2009 թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ...84

ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ...88
8.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ88
8.2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ...93
8.2.1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ...93
8.2.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2007-2009ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ...94
8.2.3 ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ...96
ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ...97

ԳԼՈՒԽ 9. ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ...109
9.1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ...109
9.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ...126
9.2.1.Նպատակները ...126
9.2..2.Գերակայությունները ...127
9.2..3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ...128
9.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ...132

ԳԼՈՒԽ 10. ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ ...150
10.1. ՄՇԱԿՈՒՅԹ ...150
10.1.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ...150
10.1.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ...158
10.1.2.2. Գերակայությունները ...161
10.1.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ...163
10.1.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ...163
10.2. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԴԻՈ ...183
10.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ...183
10.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ...188
10.2.2.3. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ...190

10.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ....... 191
10.2..4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ....... 193
10.3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ ....... 196
10.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ....... 196
10.3.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ....... 201
10..3.2.3. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ....... 202
10.3..3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ....... 202

**ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ....... 211**
11.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ....... 211
11.1.1. Գյուղատնտեսության զարգացման միտումները ....... 211
11.1.2.Գյուղատնտեսության հիմնական խնդիրները ....... 212
11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ....... 213
11.2.1 Նպատակները ....... 213
11.2.2. Գերակայությունները ....... 214
11.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ....... 215
11.3. ՈԼՈՐՏԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ....... 216

**ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ....... 235**
12.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ....... 235
12.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ....... 239
12.2.1. Նպատակները ....... 239
12.2.2. Գերակայությունները ....... 239
12.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ....... 241
12.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ....... 241
12.4. ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ ....... 244

**ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ ....... 252**
1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ....... 252
2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ , ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ....... 253
2.1.Նպատակները ....... 253
2.2. Գերակայությունները ....... 254
2.3.Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ....... 254
3.ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ....... 255

**ԳԼՈՒԽ 14. ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ....... 258**
14.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ....... 258
14.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ....... 265
14.2.1. Նպատակները ....... 265
14.2.2. Գերակայությունները ....... 265
14.2.3. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ....... 265
14..3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ....... 265

**ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ ....... 278**
15.1. ՀՀ էներգետիկ համակարգի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները ....... 278
15.1.1.Համակարգի ընդհանուր նկարագիրը ....... 278
15.1.2.Վերջին երկու տարիների զարգացման միտումները ....... 278
15.1.3. Համակարգի հիմնական խնդիրները ....... 280
15.2. Համակարգի նպատակները, գերակայությունները և ծախսերի վրա ազդող գործոնները ՄԺԾԾ ժամանակահատվածում ....... 280
15.2.1. Նպատակները ....... 280

15.2.3. Համակարգում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ....281
15.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում համակարգում իրականացվելիք ծախսային ծրագրերը ....281
15.3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը ....281

ԳԼՈՒԽ 16.1. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ 284
16.1.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները ....284
16.1.5. Գերակայությունները ....294
16.1.6. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի վրա ազդող գործոնները ..295
16.1.7.Գոյություն ունեցող ծախսային ծրագրեր ....296

ԳԼՈՒԽ 16.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ .... 301
16.2.1. Իրավիճակի նկարագրություն ....302
2. Ոլորտի նպատակները, գերակայությունները և ծախսերի վրա ազդող գործոնները ՄԺԾԾ ժամանակահատվածում: ....312
2.1. Նպատակը ....312
2.2 Հիմնական գերակայությունները....312
2.3. Ծրագրվող ծախսերը և ակնկալվող արդյունքները....312
16.2.1.Կադաստրի բնագավառի 2007-2009թթ. պետական ծախսերի կանխատեսումը .....319

ԳԼՈՒԽ 16.3.ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ .... 323
16.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ....323
16.3.2.ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ....325
16.3.2.1.Նպատակները....325
16.3.2.3. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ....327
16.3.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 327

ԳԼՈՒԽ 17. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ .... 328
17.1.ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ....328
17.1.2. Այլընտրանքային ծառայության ապահովում ....328
17.2. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ....329
Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում իրավիճակի նկարագրություն.329
Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում ....329
Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում նպատակները, գերակայությունները....336
Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները ....341
Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները ....343

ԳԼՈՒԽ 18. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերի ծրագիր 347
1. Պետական կապիտալ ծախսերի ծրագրման հիմնադրույթները ....347
2. 2000 - 2006 թթ հիմնական զարգացումները....351
3 .Պետական կապիտալ ծախսերի անհրաժեշտությունը ....353
4. Կապիտալ ծախսերի ծրագրման սկզբունքները....354
5. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերի շրջանակը....355
6. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերը` ըստ ոլորտների....357

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .... 368

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունում արձանագրված դրական տեղաշարժերը պայմանավորված են հիմնականում կառավարության տնտեսական գործառույթների իրականացմամբ: Առաջիկա տարիներին կառավարությունը կշարունակի տնտեսական միջոցառումների իրականացումը` պետական միջամտությունն ուղղելով ինչպես շուկայի «բացերի» մեղմմանը, այնպես էլ եկամուտների և ռեսուրսների վերաբաշխմանն ու տնտեսության կայունացմանը: Կառավարության այսպիսի ծավալուն սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետության և ամբողջականության ապահովման գրավականը գերակա խնդիրների հստակեցումն ու դրանք միջնաժամկետ (նաև` երկարաժամկետ) ռազմավարական ծրագրերի հենքի վրա լուծելն է: Մասնավորապես, ներկայումս ՀՀ իշխանությունների գերակա խնդիրներից մեկը երկրում աղքատության կրճատումն է: Դեռևս 2003 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է իշխանության տարբեր մակարդակների, մի շարք հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների մասնակցությամբ մշակված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը: Խնդրի համակողմանի լուծման առումով իր ուրույն դերն ունի պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը, որը կանոնավոր կերպով սկսել է իրականացվել 2003 թվականից:

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ արդեն չորրորդ տարին է, ինչ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացն օրենքով ճանաչվել է ընդհանուր բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս և իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգով:

ՀՀ բյուջետային գործընթացում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման փուլի առանձնացումը պայմանավորված է այդ փաստաթղթի քաղաքական կարևորությամբ: Հարկ է նշել նաև, որ համապարփակ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրն այն ռազմավարական հենքն է, որի շրջանակներում վարվում են միջազգային ֆինանսական օժանդակության ներգրավման հիմնահարցերին առնչվող բանակցությունները:

#### Նպատակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացի պրակտիկայում պետական բյուջեի նախագիծը մշակվում է տարեկան կտրվածքով: Պետական ծախսերի կառավարման առումով տարեկան կտրվածքով մշակվող և իրականացվող պետական բյուջեներն ունեն որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, տարեկան ծրագրերի հիմքում դրվում են կարճաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներ, իրականացվող քաղաքականությունների և տարեկան բյուջետային ծախսերի միջև կապը ժամանակային անհամապատասխանության պատճառով հստակ չէ: Այդ պատճառով, որպես կանոն, վերահսկման առարկա է հանդիսանում ծախսերի չափը և ոչ թե ակնկալվող արդյունքը (նաև մատուցվող ծառայության որակը): Պետական ծախսերի քաղաքականությունը որակական առումով հստակ ձևակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել պետական ծախսերի ծրագրային պահանջները միջնաժամկետ (հնարավորության դեպքում` նաև երկարաժամկետ) հեռանկարում, որն իր հերթին ենթադրում է մակրոտնտեսական միջավայրի ակնկալվող զարգացումների, հասանելի բյուջետային միջոցների ծավալի կանխատեսելիություն:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական նպատակը պետական ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է:

Ըստ էության, պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը գնահատվում է հետևյալ երեք հայտանիշների հիման վրա`

(i) <u>Համընդհանուր հարկաբյուջետային կարգապահություն.</u> բյուջետային ռեսուրսների փաթեթը պետք է լինի հստակ և համապարփակ ձևակերպված, ձևավորվի նախքան ըստ առանձին ուղղությունների

ծախսերի բաշխումը և հիմնավորված լինի միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներով: Ծախսերի բաշխումը հստակորեն պետք է իրականացվի վերը նշված բյուջետային ռեսուրսների շրջանակներում, իսկ դրանց հետագա կատարումը՝ սահմանված ծախսային գերակայություններին համապատասխան ընտրված ծրագրերի գծով նախատեսված բյուջետային հատկացումների սահմանաքանակների շրջանակներում:

(ii) <u>Տեղաբաշխման արդյունավետություն.</u> պետական ծախսերը պետք է համահունչ լինեն պետական քաղաքականության գերակայություններին, և համակարգը պետք է հնարավորություն ընձեռի իրականացնել միջոցների միջոլորտային և ներոլորտային վերաբաշխում՝ նվազ գերակայություններից դեպի առավել կարևորները և ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցողները:

(iii) <u>Տեխնիկական (արտադրական) արդյունավետություն.</u> ճյուղային նախարարությունները (գերատեսչությունները) պետք է ապահովեն արդյունավետության հասանելի առավելագույն մակարդակ, որը պետք է համադրելի լինի մասնավոր հատվածի համապատասխան ցուցանիշների հետ:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման համակարգի ներդրումը նպատակ է հետապնդում լուծել հետևյալ խնդիրները՝

(i) բարելավել մակրոտնտեսական հաշվեկշռվածությունը՝ ի հաշիվ ռեսուրսների (եկամուտների) իրատեսական և համապարփակ փաթեթի ձևավորման,

(ii) նպաստել պետական ֆինանսական միջոցների հաշվին կատարվող բյուջետային հատկացումների միջոլորտային և ներոլորտային արդյունավետ վերաբաշխմանը՝ ըստ գերակա ուղղությունների,

(iii) հնարավորինս նվազեցնել քաղաքականությունների և դրանց ֆինանսավորման միջև առկա անորոշությունները՝ նպաստելով ծրագրերի մշակման որակի բարձրացմանը,

(iv) ըստ ոլորտների սահմանել կոշտ բյուջետային սահմանափակումներ՝ ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) համար պայմաններ և խթաններ ստեղծելով հասանելի միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման համար,

(v) բարելավել բյուջետային ծրագրերի գնահատման համակարգը և մեծացնել պետական ֆինանսների կառավարման թափանցիկության աստիճանը:

**<u>Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները</u>**

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը շարունակական գործընթաց է և, ըստ էության, իրենից ներկայացնում է «քաղաքականությունների ձևակերպում - պլանավորում - բյուջետավորում» տրամաբանական ամբողջական շղթա: Այն հնարավորություն է ընձեռում մեղմել հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի միջև հնարավոր անհամապատասխանությունը, ինչպես նաև պետական ծախսերում կատարել առանձին բնագավառներում իրականացվող պետական քաղաքականության փոփոխություններին համարժեք փոփոխություններ: Այս առումով արդարացված է, որ ՄԺԾԾ-ի մշակումը (և/կամ վերանայումը), ըստ ժամանակի, նախորդում է տարեկան պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ դառնալով տարեկան պետական բյուջեների կազմման ուղեցույց:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ենթադրում է՝

(i) մակրոտնտեսական կայուն միջավայրին համապատասխանող բյուջետային ռեսուրսների (մուտքերի) համապարփակ և իրատեսական գնահատական,

(ii) քաղաքականությունների իրականացման նպատակով կատարվող ծախսերի՝ վարից վեր մոտեցմամբ գնահատական,

(iii) հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի ներդաշնակության ապահովում համապատասխան մեխանիզմների օգնությամբ:

**ՀՀ 2007 – 2009 թթ ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը**

ՀՀ 2007–2009 թթ ՄԺԾԾ-ի մշակման գործընթացը կանոնակարգվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ վարչապետի 2005 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 907-Ն որոշմամբ և այդ որոշման հանձնարարականների հիման վրա ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումներով:

Ըստ էության, նման մոտեցումը խնդրին վկայում է այն մասին, որ ՀՀ կառավարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը որպես բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս դիտելով, կարևորում է նաև վերջինիս քաղաքական նշանակությունը:

Ծրագրի մշակման ամենակարևոր նախապայմաններից մեկը համապատասխան ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումն է, որի աստիճանական զարգացումը կնպաստի ապագայում ծրագրերի որակի բարձրացմանը:

Ընթացիկ տարում, ինչպես և վերջին երեք տարիներին ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացը կառավարվել, վերահսկվել և համակարգվել է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված ստորև նշված երկու մարմինների կողմից.

(i) ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի՝ մշտապես գործող բարձրագույն խորհուրդ (խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ), որն ապահովում է ռազմավարական որոշումների կայացումը և մշակման գործընթացի վերահսկողությունը,

(ii) ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման աշխատանքները համակարգող՝ մշտապես գործող խումբ (խմբի ղեկավար՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ), որը ապահովում է պետական միջնաժամկետ ծրագրի մշակման աշխատանքների համակարգումը:

Նման մոտեցումը ընդգծում է բյուջետային գործընթացում ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) մասնակցության դերը, որը պետք է նպաստի ճյուղային մակարդակում բյուջետային ծրագրման բարելավմանը և ռազմավարական հիմնավոր որոշումների կայացմանը՝ հնարավորինս ապահովելով նախանշված քաղաքականությունների և հասանելի ֆինանսական միջոցների համապատասխանությունը: Այս համատեքստում կարևորվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) գործողությունների փոխհամաձայնեցումը, որից մեծապես կախված է ոչ միայն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծերի մշակման որակը, այլ նաև դրանց կատարումը:

Դրա հետ մեկտեղ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշտապես գործող բարձրագույն խորհրդի աշխատանքներին ՀՀ վարչապետի առաջարկությամբ և իշխող քաղաքական կոալիցիայի մեջ մտնող քաղաքական կուսակցությունների ներկայացմամբ ներգրավված են այդ կուսակցությունները ՀՀ Ազգային ժողովում ներկայացնող մի շարք պատգամավորներ: Նման մոտեցումը ապահովում է քաղաքական ուժերի մասնակցությունը բյուջետային գործընթացին արդեն իսկ ՄԺԾԾ-ի մշակման նախնական փուլում, որը հնարավորություն է ընձեռում հենց սկզբից համադրել ՀՀ կառավարության և կոալիցիոն քաղաքական ուժերի մոտեցումները և կողմնորոշումները ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսվելիք առանձին ռազմավարությունների և ծախսային գերակայությունների ընտրության հարցերում:

**Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները**

Ծրագրի նպատակների իրագործումն ապահովելու համար ՀՀ կառավարությունն իրականացնում է

բարեփոխումներ նաև ծրագրային բյուջետավորումը հանրապետությունում ներդնելու ուղղությամբ: Ծրագրային բյուջետավորման բարեփոխման գերակա նպատակը պետական ծախսերի տնտեսական և ֆինանսական արդյունավետության բարձրացումն է՝ ռեսուրսներն առաջնահերթ ծախսային ծրագրերին ուղղելու համար ՀՀ կառավարությանն աջակցելու միջոցով: Ծրագրային բյուջետավորման շրջանակներում այդ աջակցությունն իրականացվում է ՀՀ կառավարությանը պետական ծախսերի հատկացումների և պետական աշխատանքների գծով ավելի ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Մասնավորապես, ՀՀ կառավարությանը և հանրությանը տրամադրվում է տեղեկատվություն՝ պետական ֆինանսավորման դիմաց տրամադրվող ծառայությունների կամ անմիջական արդյունքների վերաբերյալ: Հետևաբար, ծրագրային բյուջետավորումը հանդիսանում է գործիք սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձին օղակները շաղկապելու համար, ինչպես օրինակ, աղքատության հաղթահարման ռազմավարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և պետական բյուջեների հետ: Նշվածը կօգնի հասկանալ ծախսերի վերաբերյալ կայացված որոշումների նպատակաուղղվածությունը և ծախսային քաղաքականությունն ամբողջությամբ ուղղել կառավարության ընդհանուր նպատակների իրագործմանը:

Ներկայումս ծրագրային բյուջետավորման բարեփոխումների փորձնական աշխատանքներն իրականացվում են սոցիալական ոլորտի չորս նախարարություններում: Փորձնական աշխատանք կատարող այդ նախարարություններում փորձարկվում են ծրագրային բյուջետավորման բարեփոխման մեթոդաբանությունը և մոտեցումները հանրապետությունում դրանց կիրառելիությունը հաստատելու համար:

# ՄԱՍ Ա.

# ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

# ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով» և 2003 թվականի հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ ՀՀ կառավարության գործունեության ծրագրով: Վերը նշված փաստաթղթերի համաձայն ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները (սույն ծրագրի իմաստով գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ).

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կպահպանվի վերը նշված գերակայությունների համաձայն իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման համար հանրապետության բյուջետային ռեսուրսները համալրելու պահանջը այլ՝ հիմնականում արտաքին աղբյուրներից պաշտոնական տրանսֆերտների և փոխառու միջոցների ներգրավման միջոցով: Վերը նշվածը, հաշվի առնելով նաև պետական պարտքի ցուցանիշները խելամիտ սահմաններում պահելու խնդիրը, էականորեն սահմանափակում է ՀՀ կառավարության հնարավորությունները:

## ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ՀՀ կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկն է: Հարկաբյուջետային քաղաքականությունը ներկայացնող այս փաստաթուղթը, ոլորտների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ միասին, կազմում է ՀՀ կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:

Սույն ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մասը ներկայացնում է ՀՀ կառավարության ընդհանուր երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները, միջնաժամկետ և կարճաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները և ռազմավարական ծախսային գերակայությունները: Դրանք տնտեսական և հարկաբյուջետային այն չափանիշներն են, որոնք դրվելու են ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

## ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

### Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը ՀՀ 2007-2009թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի մշակման ընթացքում առաջնորդվել է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում ամրագրված հարկաբյուջետային սկզբունքներով: Քանի որ բյուջետային մուտքերի սղությունը և ծախսերի վրա ազդող գործոնները սահմանափակում են կարճաժամկետ հեռանկարում այդ սկզբունքների իրագործման հնարավորությունները, ՀՀ կառավարությունը մտադիր է կիրառել այդ սկզբունքները երկարաժամկետ հեռանկարում: Դրանք հիմք կծառայեն ընթացիկ քաղաքականությունների և ՀՀ կառավարության երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

### Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

ՀՀ կառավարությունը առկա ծախսային գերկայությունները համադրել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների հետ՝ հաջորդ 3 տարիների ընդհանուր ծախսային մակարդակը որոշելու համար:

Կպահպանվի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության աճի միտումը՝ 2008, 2009 թթ այդ ցուցանիշի միջին աճի տեմպը կկազմի 0.3%: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները և ելնելով ՀՆԱ-ի 3.0%-ի սահմաններում դեֆիցիտի ֆինանսավորման համար համապատասխան աղբյուրների առկայությունից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2007-2009թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 19.5%-ի չափով:

Նշված պայմաններում դրական միտումները կշարունակվեն նաև պետական պարտքի բնագավառում: Ոչ արտոնյալ վարկերի արդեն իսկ վերաձևակերպման պայմաններում արտաքին պարտքի աճը էական ազդեցություն չի ունենա երկրի վճարունակության վրա, որովհետև մի շարք որակական ցուցանիշներ հիմնականում չեն փոփոխվի կամ կփոխվեն դրական ուղղությամբ:

## ԳԼՈՒԽ 2. ՀՀ 2007-2009 ԹԹ ՄԺԾԾ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Վերջին տասը տարիներին հանրապետությունում արձանագրվել է անընդմեջ տնտեսական աճ՝ միջինը կազմելով տարեկան 8.7%: 2005 թվականի վերջին, ինչպես և կանխատեսվում էր, ՀՆԱ-ի մակարդակը գերազանցեց 1990 թվականի մակարդակը 20.8 տոկոսային կետով:

Վերջին տարիների տնտեսական զարգացումները հիմք են տալիս ենթադրելու, որ մակրոտնտեսական կայուն միջավայրը և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող կառուցվածքային բարեփոխումները, ուղեկցվելով արտաքին ֆինանսական աջակցությամբ, կարող են ծրագրային ժամանակաշրջանի համար ապահովել տնտեսական աճի բարձր տեմպեր (միջին տարեկան՝ 5.8 տոկոս):

Մակրոտնտեսական կանխատեսումների հիմնական սցենարը կառուցված է ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի համագործակցությամբ իրականացվող ԱՀԱՎ, ԱԿՏԱ և ԱՀՌԾ ծրագրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի հենքի վրա և ենթադրում է դրանցով նախանշված քաղաքականությունների և միջոցառումների հետևողական և ամբողջական իրագործում:

Ծրագրային ժամանակահատվածում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 2 . 1. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ**

| Ցուցանիշներ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | փաստացի | | | | ծրագիր | կանխատեսում | | |
| Տնտեսական աճ,% | 13.2 | 14.0 | 10.5 | 14.0 | 6.7 | 6.0 | 6.0 | 5.5 |
| Սղաճ, տարեկան միջին,% | 1.1 | 4.7 | 7.0 | 0.6 | 1.4 | 3.0 | 3.0 | 3.0 |
| ՀՆԱ դեֆլյատոր,% | 0.7 | 4.6 | 6.3 | 3.2 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| Պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ,% | -2.6 | -1.3 | -1.7 | -1.9 | -2.9 | -2.8 | -2.8 | -1.4 |
| Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների) /ՀՆԱ,% | –8.5 | –8.9 | -6.2 | –5.5 | -5.2 | -5.0 | -4.9 | -4.8 |

Ծրագրային ժամանակահատվածում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսվում են հետևյալ զարգացումները.

(i) Իրական ՀՆԱ-ն ունենալու է կայուն աճի միտում: 2006 թվականին ծրագրվել է իրական ՀՆԱ-ի 6.7% աճ: 2007-2009 թվականներին իրական ՀՆԱ-ի տարեկան աճը կկազմի համապատասխանաբար 6.0, 6.0 և 5.5 տոկոս:

(ii) Սպառողական գները կցուցաբերեն կայուն վարքագիծ՝ տարեկան միջին հաշվով աճելով 3 տոկոսով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ընդհանուր եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը 2005 թվականի համապատասխան փաստացի ցուցանիշի նկատմամբ կավելանա 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 17.5%: Այդուհանդերձ, զգալի տեղաշարժեր կլինեն բյուջետային եկամուտների կառուցվածքում՝ ի հաշիվ հարկային եկամուտների առաջանցիկ աճի (հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2005 թվականի նկատմամբ կավելանա 2.0 տոկոսային կետով՝ 2009 թվականին կազմելով 16.3%): 2007-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը չի գերազանցի 3 տոկոսը: Ապրանքների և ծառայությունների արտահանումը 2007-2009 թվականներին (դոլարային արտահայտությամբ) կաճի ավելի արագ, քան ներմուծումը (միջին հաշվով համապատասխանաբար՝ տարեկան 9 և 7 տոկոս): Դա կհանդիսանա ընթացիկ հաշվի բարելավման հիմնական գործոններից մեկը:

## ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### Համախառն ներքին արդյունքը՝ ըստ տնտեսության առանձին ճյուղերի

Վերջին երեք տարիների միջին տնտեսական աճը կազմել է 12.8%: Այսպիսի բարձր տնտեսական աճի պայմաններում կառուցվածքային տեղաշարժեր են տեղի ունեցել ՀՆԱ-ի կազմում: Տնտեսական աճի մեջ ներդրում են ունեցել տնտեսության բոլոր ճյուղերը: Վերջին տարիներին շինարարության ճյուղի աճի տեմպերն աչքի են ընկնում անհամեմատ բարձր ցուցանիշներով: Շինարարության ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում 1995 թվականի 6.5% մակարդակից աճել է մինչև 21.7 տոկոս՝ 2005 թվականին:

Ծրագրային ժամանակահատվածում տնտեսության հիմնական ճյուղերի մասնաբաժինը ՀՆԱ-ում ներկայացված է Աղյուսակ 2.2-ում:

**Աղյուսակ 2.2. ՀՆԱ-ի կառուցվածքը՝ ըստ տնտեսության հիմնական ճյուղերի (%՝ ՀՆԱ-ի նկատմամբ)**

| Ցուցանիշներ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | փաստացի | | | ծրագիր | կանխատեսում | | |
| Արդյունաբերություն | 19.3 | 19.2 | 18.8 | 18.5 | 18.7 | 18.8 | 18.6 |
| Գյուղատնտեսություն | 21.5 | 22.5 | 18.7 | 18.4 | 18.0 | 17.5 | 17.1 |
| Շինարարություն | 15.7 | 15.6 | 21.7 | 22.1 | 22.4 | 22.7 | 22.9 |
| Տրանսպորտ և կապ | 5.9 | 6.0 | 5.6 | 5.6 | 5.5 | 5.5 | 5.4 |
| Առևտուր և հանրային սնունդ | 10.9 | 11.2 | 10.5 | 10.5 | 10.5 | 10.5 | 10.4 |
| Այլ ոլորտներ | 17.6 | 17.1 | 16.2 | 15.9 | 15.8 | 15.4 | 15.6 |
| Զուտ անուղղակի հարկեր | 9.1 | 8.4 | 8.5 | 9.0 | 9.1 | 9.6 | 10.0 |
| Ընդամենը ՀՆԱ՝ շուկայական գներով | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

Արդյունաբերության ճյուղում 2005 թվականին ստեղծված ավելացված արժեքը աճել է 7.4%-ով: Կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ հատկանշական աճ է արձանագրել էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ճյուղը, որոշակի նվազում է արձանագրել հանքագործական արդյունաբերությունը, հատկապես մետաղե հանքաքարերի արդյունահանման ճյուղը, ինչը կկրի ժամանակավոր բնույթ և 2006 թվականին արտադրության ծավալները աստիճանաբար կվերականգնվեն: Ընդհանուր աճ է արձանագրել նաև մշակող արդյունաբերությունը, չնայած որոշակի անկում է դիտվել նշանակալի տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղերից ոսկերչական արտադրատեսակների արտադրությունում:

Արդյունաբերության ճյուղի իրական աճը –2007-2009 թվականների համար կանխատեսվում է միջինը տարեկան 5.7%: Առավել արագ կզարգանան արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերը:

2005 թվականին գյուղատնտեսությունում ավելացված արժեքն աճել է 11.2%-ով և ապահովել ՀՆԱ-ի աճի 2.5 տոկոսային կետը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը պայմանավորված է եղել բուսաբուծական հիմնական մշակաբույսերի (+14.9%) և անասնաբուծական հիմնական մթերքի համախառն արտադրության ավելացմամբ (+6.4%): Վերջին տարիներին գյուղատնտեսությանը բնորոշ միտումներից է անասնապահական մթերքների արտադրության կայուն աճը: Վերջինիս հաշվին ապահովվում է անասնապահական արտադրանքի տեղական սպառման մեծ մասը: 2007-2009 թվականների համար գյուղատնտեսության ճյուղի աճը կանխատեսվում է 2007 թվականի համար 4.0, իսկ 2008, 2009թթ համար՝ տարեկան 3.0%-ի չափով:

2006 թվականին կանխատեսվում է 6.7% տնտեսական աճ՝ 3.0% դեֆլյատորի պայմաններում: 2007-2009 թվականների համար ՀՆԱ-ի միջին տարեկան աճը կանխատեսվում է 5.8%-ի սահմաններում: Նման աճը կապահովվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճի հաշվին:

Ծրագրային ժամանակահատվածում տնտեսության հիմնական ճյուղերի իրական աճերը %-ով ներկայացված են Աղյուսակ 2.3-ում:

**Աղյուսակ 2. 3. Տնտեսության հիմնական ճյուղերի իրական աճերը (տոկոս)**

| Ցուցանիշներ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | փաստացի | | | ծրագիր | կանխատեսում | | |
| ՀՆԱ իրական աճ,%, այդ թվում՝ | 14.0 | 10.5 | 14.0 | 6.7 | 6.0 | 6.0 | 5.5 |
| Արդյունաբերություն | 15.6 | 2.2 | 7.4 | 4.5 | 6.5 | 6.0 | 4.5 |
| Գյուղատնտեսություն | 4.2 | 14.2 | 11.2 | 5.0 | 4.0 | 3.0 | 3.0 |
| Շինարարություն | 45.5 | 15.3 | 35.1 | 8.5 | 7.5 | 8.0 | 6.5 |
| ՀՆԱ-ի դեֆլյատոր,% | 4.6 | 6.3 | 3.2 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |

**Համախառն ներքին արդյունքը՝ ըստ ծախսային բաղադրիչների**

Ըստ ծախսային բաղադրիչների՝ 2005 թվականին ՀՆԱ-ի մեջ սպառումը շարունակեց ՀՆԱ-ից ավելի ցածր մակարդակի վրա՝ կազմելով նրա 86.8 տոկոսը: Հարկ է նշել, որ սպառման նման ցուցանիշ առաջին անգամ արձանագրվեց 2002 թվականին: 2009 թվականին կանխատեսվում է, որ ՀՆԱ-ն կգերազանցի սպառումը մոտ 13.8 տոկոսային կետով: Սակայն կլանումը (սպառում գումարած ներդրումներ) կմնա ՀՆԱ-ից մեծ, որը ենթադրում է զուտ արտահանման բացասական մեծության առկայություն: Զուտ արտահանման բացասական մեծությունը կդրսևորի նվազման միտում և 2009 թվականին կկազմի ՀՆԱ-ի մոտ 9.1 տոկոսը: Ներդրումները ՀՆԱ-ի մեջ 2007-2009 թվականների համար կկազմեն միջինը 22.8%, որոնք կֆինանսավորվեն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջոցների հաշվին:

Ծրագրային ժամանակահատվածում անվանական ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 2.4-ում:

**Աղյուսակ 2. 4. Անվանական ՀՆԱ ծախսային կառուցվածքը (%՝ ՀՆԱ նկատմամբ)**

| Ցուցանիշներ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *փաստացի* | | | *ծրագիր* | *կանխատեսում* | | |
| ՀՆԱ | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Սպառում | 93.5 | 92.6 | 86.8 | 89.0 | 88.1 | 87.2 | 86.2 |
| Ներդրումներ | 24.3 | 24.9 | 29.7 | 22.6 | 22.7 | 22.8 | 22.9 |
| Զուտ արտահանում | -17.9 | -14.7 | -13.0 | -11.6 | -10.8 | -10.0 | -9.1 |
| Վիճ. շեղում | 0.1 | -2.8 | -3.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

**Սպառողական գներ**

Վերջին տարիների ընթացքում սպառողական գների ինդեքսը համարվում է կանխատեսելի, կառավարելի և չի գերազանցել 3% մակարդակը: Բացառություն է կազմել 2003 թվականը, երբ սպառողական գների ինդեքսի մակարդակը տարեվերջին կազմեց 8.6%, իսկ տարեկան միջինը՝ 4.7%, որը պայմանավորված էր արտաքին գործոններով:

2005 թվականի դեկտեմբերին 2004 թվականի դեկտեմբերի համեմատ սղաճի կազմել է -0.2%՝ ծրագրված մինչև 3.0%-ի դիմաց, իսկ միջին տարեկան սղաճը կազմել է 0.6%, ծրագրված 2.2%-ի դիմաց, որը չի գերազանցել սղաճի ծրագրված մակարդակը:

2007-2009 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականությունն ուղղված է լինելու սղաճի տարեկան մինչեւ 3% մակարդակի պահպանմանը:

## ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Վերջին տարիներին արտաքին հատվածի տնտեսական ծրագրերը մշակելիս, նկատի ունենալով բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման և կառուցվածքային բարեփոխումների իրականացման

արդյունքում արտահանման ընդլայնման հնարավորությունը, շեշտը դրվում էր միջնաժամկետ հատվածում վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բարելավման վրա: Այդ խնդիրը Հայաստանում թեև դժվարությամբ, բայց հաղթահարվում է: Արտահանման աճին նպաստող քաղաքականություններից ամենակարևորը, թերևս, 2003 թվականին Հայաստանի անդամակցությունն էր Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, որը հնարավոր դարձավ հատկապես առևտրի քաղաքականությունը միջազգային կանոններին համապատասխանեցնելու արդյունքում: Թեև այս իրադարձությունը կարճաժամկետ հատվածում արտահանման աճի վրա մեծ ազդեցություն չի թողնի, սակայն երկարաժամկետ հատվածում կդառնա արտահանման կարողությունների զարգացման հիմնական շարժիչը:

Վերջին տարիներին բնորոշ են զուտ արտահանման մեծացման դրական միտումները, որոնք մի կողմից պայմանավորված են ներմուծման կրճատմամբ (ներմուծվող ապրանքները փոխարինվում են հայրենական արտադրության ապրանքներով), մյուս կողմից՝ արտահանման ընդլայնմամբ: Միջնաժամկետ հատվածում կշարունակվեն բացահայտվել տնտեսության այն ճյուղերի հարաբերական առավելությունները, որոնք ունեն ընդգծված արտահանման ուղղվածություն: Կմշակվեն և կներդրվեն նշված ճյուղերին օժանդակելու նոր մեխանիզմներ և կզարգացվեն գոյություն ունեցողները:

**Արտահանում**

2003-2005 թվականներին ապրանքների արտահանման միջին տարեկան ծավալը կազմել է 805 մլն ԱՄՆ դոլար և 2002 թվականի համեմատ աճել է մոտ երկու անգամ՝ հիմնականում պայմանավորված «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի ցուցանիշների աճով: Սակայն պետք է նշել, որ արդյունաբերության տարբեր ենթաճյուղերի աճը նպաստավոր պայմաններ է ստեղծել արտահանման բազմազանեցման (դիվերսիֆիկացման) համար: 2006 թվականին կանխատեսվում է 15% արտահանման աճ: 2007-2009 թվականներին ակնկալվում է ապրանքների արտահանման ծավալների շուրջ 1380 մլն ԱՄՆ դոլարի (ՖՕԲ) միջին տարեկան մակարդակ և միջին տարեկան 10.3% աճ (դոլարային արտահայտությամբ): Նույն ցուցանիշը ապրանքների և ծառայությունների համար կլինի 9.3%, այսինքն՝ ապրանքների արտահանումն ավելի արագ է աճելու, քան ծառայություններինը:

**Ներմուծում**

2003-2005 թվականներին ներմուծման միջին տարեկան մակարդակը կազմել է 1298 մլն ԱՄՆ դոլար (ՖՕԲ)՝ 2002 թվականի համեմատ աճելով մոտ 47%-ով: Միջնաժամկետ հատվածում ներմուծման ծավալների աճը կպայմանավորվի ինչպես համախառն տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ տեղական արտադրությունը կազմակերպելու համար հումքի ներկրման և օտարերկրյա ուղղակի ներդրումներով ֆինանսավորվող տեխնոլոգիաների ներմուծման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից, կնվազեն ներմուծվող ապրանքները տեղական արտադրության ապրանքներով փոխարինելու՝ նախորդ տարիներին նկատված տեմպերը՝ պայմանավորված ներմուծվող ապրանքների փոխարինման հնարավորությունների սահմանափակությամբ: Արդյունքում՝ 2007-2009 թվականներին ապրանքների ներմուծման միջին տարեկան աճը (դոլարային արտահայտությամբ) կկազմի շուրջ 7.3%, իսկ ապրանքների և ծառայությունների համար՝ շուրջ 6.8%: 2006 թվականին կանխատեսվում է 13.4% ներմուծման աճ. բարձր համախառն տնօրինվող եկամուտների պայմաններում:

**Գործոնային եկամուտներ և տրանսֆերտներ**

Գործոնային եկամուտների և մասնավոր տրանսֆերտների ընդհանուր ծավալները 1999 թվականից

դրսևորել են աճի միտում՝ վերջին երեք տարիներին կազմելով միջինը 309 մլն ԱՄՆ դոլար: 2006 - 2009 թվականներին նշված հոդվածների ցուցանիշների վարքագծի վրա էական ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի սպասարկումը, ուղղակի ներդրումներից ստացվող շահույթի վերաներդրումը և Հայաստանի Հանրապետության հիմնական գործընկեր երկրներում ակնկալվող տնտեսական աճի միտումները: Արդյունքում՝ զուտ գործոնային եկամուտների և տրանսֆերտների աճի տեմպը միջնաժամկետ հատվածում կդրսևորի նվազման միտում:

Կառուցվածքային բարեփոխումների իրականացման նախնական փուլում օտարերկրյա պաշտոնական տրանսֆերտներն էական դեր էին խաղում համախառն պահանջարկի ֆինանսավորման հարցում: 1995-2005 թվականների ընթացքում պաշտոնական տրանսֆերտների տեսակարար կշիռը ՀՆԱ- ում 12 տոկոսից (1995 թ.) նվազել է մինչև 1.4% (2005 թ.): Միջնաժամկետ հեռանկարում ընթացիկ պաշտոնական տրանսֆերտները տարեկան կկազմեն ՀՆԱ-ի միջինը 1 տոկոսը:

**Ընթացիկ հաշիվ**

1995-1998 թվականներին ընթացիկ հաշվի (առանց պաշտոնական տրանսֆերտների) պակասուրդը մեծացել էր՝ 1995 թվականի 368 մլն ԱՄՆ դոլարից 1998 թվականին հասնելով 515.7 մլն ԱՄՆ դոլարի: ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդի հարաբերակցությունը 1995-1998 թվականներին կազմել է միջինը 27%: 1999 թվականին, պայմանավորված գերազանցապես արտաքին առևտրի հոսքերով (մասնավորապես՝ ներմուծման ծավալների կտրուկ նվազմամբ), ընթացիկ հաշվի պակասուրդը (առանց պաշտոնական տրանսֆերտների) կազմեց 400.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ-ում՝ 21.7%: 2000-2005 թվականներին ընթացիկ հաշվի պակասուրդը էապես կրճատվեց՝ 2005 թվականին հասնելով շուրջ 271 մլն ԱՄՆ դոլարի: ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը (առանց պաշտոնական տրանսֆերտների) 2005 թվականին հասավ 5.5 տոկոսի:

2007-2009 թվականներին ընթացիկ հաշվի պակասուրդը առանց պաշտոնական տրանսֆերտների կկազմի ՀՆԱ-ի շուրջ 4.9%, իսկ ներառյալ պաշտոնական տրանսֆերտները՝ 3.9%:

# ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2007 – 2009 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

## ՀՀ 2007 – 2009 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԺԾԾ մշակման փուլում էական նշանակություն ունեցող խնդիրներից է պետական եկամուտների կանխատեսելիությունը, որն իր հերթին հնարավորություն է տալիս գնահատել միջնաժամկետ բյուջետային ծախսերի իրատեսական ծավալները: Այս առումով կարևորվում է եկամուտների միջնաժամկետ քաղաքականությունը: Բյուջետային ծախսերը ներքին ռեսուրսների հաշվին ֆինանսավորելու, պետական պարտքի կառավարման և բյուջետային դեֆիցիտի կարգավորման անհրաժեշտությունը ուղենշում են միջնաժամկետ հատվածում եկամուտների քաղաքականության բնորոշ առանձնահատկությունը, այն է` պետական ծախսերն ապահովել ֆինանսական ռեսուրսներով: Այս առումով առավել ընդգծվում է հատկապես հարկային քաղաքականության դերը, քանի որ պետական եկամուտների գերակշռի մասը` մոտ 90%-ը կազմում են հարկային եկամուտներն ու պետական տուրքերը: Համեմատության համար հարկ է նշել, որ հարկային եկամուտների ու պետական տուրքերի հաշվին 2005 թվականին ֆինանսավորվել է ծախսերի 77.0%-ը, 1995 թվականի 44.1%-ի դիմաց:

2007-2009թթ եկամտային քաղաքականությունը կիրականացվի ԱՀՌԾ և ՀՀ կառավարության գործունեության ծրագրով ամրագրված երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես.

- Առաջիկա տարիներին պետական եկամուտների հավաքագրման աստիճանի բարձրացումը կլինի հարկաբյուջետային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների հարաբերությունը կավելացվի տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով:
- Կառավարությունը հարկային եկամուտների ավելացման հիմնական նպատակին կհասնի հատկապես տնտեսության ստվերային հատվածի կրճատման հաշվին` բացառելով տնտեսվարող սուբյեկտների հանդեպ օրենքի պահանջներով չպայմանավորված վարչարարական ճնշումները,
- Կբարձրացվի հարկային վարչարարության արդյունավետությունը,
- Կիրականացվեն միջոցառումներ կուտակված գերավճարների և ապառքների մարման ուղղությամբ, ինչպես նաև ձեռք կառնվեն միջոցառումներ` նոր  գերավճարների և ապառքների առաջացումը թույլ չտալու համար,
- Պետական բյուջեի ծախսերն առավելապես ապահովված կլինեն ներքին ռեսուրսներով և կնվազի պետական ծախսերի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից:

2007-2009թթ եկամուտների քաղաքականության (հատկապես` հարկային քաղաքականության) առաջիկա տարիների զարգացումները կընթանան վերը նշված սկզբունքների համաձայն:

2007-2009թթ իրականացվելիք հարկային քաղաքականությունը չի նախատեսում հարկերի  դրույքաչափերի այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի վրա: Սա նշանակում է, որ այդ տարիներին հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացմանը կնպաստեն ՀՀ հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք վարչարարական միջոցառումները: ՀՀ 2007-2009 թվականների պետական բյուջեների հարկային եկամուտների հավաքագրումն ապահովող` ՀՀ հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումները ներկայացված են հավելված N1-ում:

## ՀՀ 2007 - 2009 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ՀՀ 2007-2009 թթ պետական բյուջեների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 447.6 մլրդ դրամի, 507.6 մլրդ դրամի և 563.1 մլրդ դրամի չափով: Եկամուտների տարեկան ծավալների նման մակարդակը կապահովվի հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների գծով ակնկալվող բյուջետային մուտքերի, որոնք կկազմեն այդ տարիների տարեկան մուտքերի միջինը 93.4%-ը:

**Աղյուսակ 3.1. 2007-2009թթ ծրագրված բյուջետային եկամուտները**

| Եկամտատեսակը | 2007թ | 2008թ | 2009թ |
|---|---|---|---|
| Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ (մլրդ դրամներով) | 447.6 | 507.6 | 563.1 |
| *%-ով ՀՆԱ-ի[1] նկատմամբ* | *16.6%* | *17.3%* | *17.6%* |
| Հարկային եկամուտներ և պետական տուրք (մլրդ դրամներով) | 421.4 | 471.1 | 524.7 |
| *%-ով ՀՆԱ-ի նկատմամբ* | *15.6%* | *16.0%* | *16.4%* |
| Ոչ հարկային եկամուտներ (մլրդ դրամներով) | 7.1 | 5.8 | 5.9 |
| *%-ով ՀՆԱ-ի նկատմամբ* | *0.3%* | *0.2%* | *0.2%* |
| Կապիտալի գործառնություններից եկամուտներ (մլրդ դրամներով) | 4.10 | 0.09 | 0.09 |
| *%-ով ՀՆԱ-ի նկատմամբ* | *0.152 %* | *0.003 %* | *0.003 %* |
| Պաշտոնական տրանսֆերտներ (մլրդ դրամներով) | 15.0 | 30.5 | 32.4 |
| *%-ով ՀՆԱ-ի նկատմամբ* | *0.6%* | *1.0%* | *1.0%* |

Հարկային եկամուտների[2] գծով 2007-2009թթ բյուջետային մուտքերը ծրագրվել են՝ հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի տարեկան աճը 0.3-0.4%-ի չափով ապահովելու սկզբունքի կիրառմամբ:

Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկային եկամուտների գծով բյուջետային մուտքերի 2006 թվականի ծրագրային մակարդակը իրատեսական է և առկա օրենսդրական նախադրյալներն ու կիրառվելիք վարչարարական միջոցառումները բավարար հիմքեր կստեղծեն այն հավաքագրելու համար:

2007-2009 թվականների հարկային եկամուտների հավաքագրման առաջարկվող մակարդակների իրատեսական լինելը գնահատելու համար հարկ է դիտարկել այն բնութագրող մի քանի ցուցանիշներ:

**Աղյուսակ 3.2. ՀՀ 2005-2009թթ պետական բյուջեների հարկային եկամուտների վերաբերյալ առանձին ցուցանիշներ**

| Ցուցանիշներ | 2005թ | 2006թ | 2007թ | 2008թ | 2009թ |
|---|---|---|---|---|---|
| | *փաստ* | *կանխատեսում* | | | |
| Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ) | 2,244.0 | 2,467.0 | 2,693.5 | 2,940.7 | 3,195.5 |
| Հարկային եկամուտներ և պետական տուրքեր (մլրդ դրամ) | 321.5 | 372.1[3] | 421.4 | 471.1 | 524.7 |
| *աճը նախորդ տարվա նկատմամբ (%-ով)* | *20.4* | *15.7* | *13.3* | *11.8* | *11.4* |
| *հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)* | *14.3* | *15.1* | *15.6* | *16.0* | *16.4* |
| *հարկային սահունության գործակից* | *1.1* | *1.6* | *1.4* | *1.3* | *1.3* |

Ներկայացված աղյուսակից կարելի է եզրակացնել, որ 2007-2009թթ հարկային եկամուտների հավա-

---

[1] ²Ûëï»Õ ¨ ³ÛëáõÑ»ï 2006 Ãí³Ï³ÝÇ Ù³ÏñáïÝï»ë³Ï³Ý óáõó³ÝÇßÝ»ñÁ (Ù³ëÝ³íáñ³å»ë ÐÜ²-Ý) ¨ ¹ñ³Ýó ÑÇÙ³Ý íñ³ Ñ³ßí³ñÏí³Í óáõó³ÝÇßÝ»ñÁ ï³ñµ»ñíáõÙ »Ý ÐÐ 2006 Ãí³Ï³ÝÇ å»ï³Ï³Ý µÛáõç»Ç Ý³Ë³·ÍÇ Ùß³ÏÙ³Ý ÷áõÉáõÙ ÏÇñ³éí³Í Ñ³Ù³å³ï³ëË³Ý óáõó³ÝÇßÝ»ñÇó: ²Û¹ ï³ñµ»ñáõÃÛáõÝÁ å³ÛÙ³Ý³íáñí³Í ¿ Ýñ³Ýáí, áñ 2006 Ãí³Ï³ÝÇ Ù³ÏñáïÝï»ë³Ï³Ý óáõó³ÝÇßÝ»ñÁ Íñ³·ñ»Éáõ Ñ³Ù³ñ ³Ûë ÷³ëï³ÃáõÕÃÁ Ùß³Ï»ÉÇë Ñ³ßíÇ »Ý ³éÝí»É 2005 Ãí³Ï³ÝÇ Ý³ËÝ³Ï³Ý ÷³ëï³óÇ, ÇëÏ ÐÐ 2006 Ãí³Ï³ÝÇ å»ï³Ï³Ý µÛáõç»Ç Ý³Ë³·ÇÍÁ Ï³½Ù»ÉÇë` 2005 Ãí³Ï³ÝÇ Ï³ÝË³ï»ëáõÙ³ÛÇÝ ïíÛ³ÉÝ»ñÁ:

[2] ²ÛëáõÑ»ï` Ñ³ñÏ³ÛÇÝ »Ï³ÙáõïÝ»ñÇ Ï³½ÙáõÙ ÏÝ»ñ³éíÇ Ý³¨ å»ï³Ï³Ý ïáõñùÁ:

[3] Ð³ßíÇ ¿ ³éÝí³Í §ÐÐ 2006 Ãí³Ï³ÝÇ å»ï³Ï³Ý µÛáõç»Ç Ù³ëÇÝ¦ ÐÐ ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í ·áõÙ³ñÇ` 364.3 ÙÉñ¹ ¹ñ³ÙÇ ÝÏ³ïÙ³Ùµ 2006 Ãí³Ï³ÝÇ ÁÝÃ³óùáõÙ ÐÐ Ï³é³í³ñáõÃÛ³Ý áñáßÙ³Ùµ ³í»É³óí³Í 7.8 ÙÉñ¹ ¹ñ³ÙÁ:

քագրման միջին տարեկան աճը կանխատեսվող սցենարի համաձայն կկազմի 12.1%, իսկ հարկային սահունության գործակիցը՝ միջին տարեկան 1.3: Հարկային սահունության նման բարձր ցուցանիշ ծրագրելը, ինչպես և նախորդ տարիներին, ենթադրում է հարկային եկամուտների հավաքագրման ծրագրային մակարդակն ապահովելու ուղղությամբ հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք վարչարարական միջոցառումների իրականացման անհրաժեշտություն:

2007-2009թթ հարկային եկամուտների ծրագրային մակարդակի ապահովման որոշակի ռեզերվներ է պարունակում տնտեսության զարգացման կանխատեսվող սցենարը: 2002-2009թթ մակրոտնտեսական ցուցանիշների փաստացի և կանխատեսումային մեծությունների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ հարկային եկամուտների կանխատեսումները կրում են պահպանողական բնույթ և տնտեսական զարգացումներում ծրագրայինի նկատմամբ արձանագրվելիք դրական տեղաշարժերը կարող են նպաստել հարկային եկամուտների աճին:

**Աղյուսակ 3.3. 2002-2009թթ փաստացի և կանխատեսումային մակրոտնտեսական ցուցանիշները**

| Ցուցանիշը | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ) | 1,362.5 | 1,624.6 | 1,896.4 | 2,244.0 | 2,467.0 | 2,693.5 | 2,940.7 | 3,195.5 |
| *աճը նախորդ տարվա նկատմամբ* | 15.9% | 19.2% | 16.7% | 18.3% | 9.9% | 9.2% | 9.2% | 8.7% |
| ՀՆԱ-ի իրական աճ | 13.2% | 14.0% | 10.5% | 14.0% | 6.7% | 6.0% | 6.0% | 5.5% |
| ՀՆԱ-ի դեֆլյատոր | 0.7% | 4.6% | 6.0% | 3.2% | 3.0% | 3.0% | 3.0% | 3.0% |
| Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար) | 882.5 | 1,130.2 | 1,196.3 | 1,566.1 | 1,775.3 | 1,917.3 | 2,051.5 | 2,194.2 |
| *աճը նախորդ տարվա նկատմամբ* | 14.1% | 28.1% | 5.8% | 31.9% | 12.5% | 8.0% | 7.0% | 6.9% |

ՀՀ 2006-2008թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում կատարված կանխատեսումների համեմատությամբ 2007, 2008 թվականների հարկային եկամուտների կանխատեսումները բացարձակ արժեքով կրել են որոշակի փոփոխություններ՝ պայմանավորված.

- կիրառված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումային մեծությունների փոփոխությամբ,
- փաստացի գանձումների տվյալների բազայում, ինչպես նաև մակրոցուցանիշների կազմում 2005 թվականի փաստացի ցուցանիշների թարմացմամբ:

**Աղյուսակ 3.4. ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ-ի և ՀՀ 2006-2008 թթ ՄԺԾԾ-ի շրջանակներում հարկային եկամուտների գծով կատարված կանխատեսումների տարբերությունը**

| Ցուցանիշներ | 2007թ | 2008թ | 2009թ |
|---|---|---|---|
| 1. Ըստ ՀՀ 2006-2008 թթ ՄԺԾԾ (մլրդ դրամներով) | 400.7 | 448.2 | x |
| %-ով ՀՆԱ-ի նկատմամբ | 15.9% | 16.3% | x |
| 2. Ըստ ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ (մլրդ դրամներով) | 421.4 | 471.1 | 524.7 |
| %-ով ՀՆԱ-ի նկատմամբ | 15.6% | 16.0% | 16.4% |
| 3. ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ-ի և ՀՀ 2006-2008 թթ ՄԺԾԾ-ի շրջանակներում կատարված կանխատեսումների տարբերությունը (մլրդ դրամներով) | 20.7 | 22.9 | x |
| %-ով ՀՆԱ-ի նկատմամբ | -0.3% | -0.3% | x |

Ոչ հարկային եկամուտները 2007-2009թթ համար ծրագրվել են, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2007 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում ներկայացված համապատասխան հայտերը, առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիների հավաքագրման միտումները, ինչպես նաև օրենսդրական առանձին փոփոխությունները:

Ոչ հարկային եկամուտները 2007-2009թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 7.1 մլրդ դրամի, 5.8 մլրդ դրամի և 5.9 մլրդ դրամի չափով: Ոչ հարկային եկամուտների գծով 2006-2008թթ ՄԺԾԾ-ի

շրջանակներում կատարվածի նկատմամբ 2007, 2008թթ մուտքերի նոր կանխատեսումները կրել են ինչպես գումարային, այնպես էլ կառուցվածքային փոփոխություններ: Այսպես, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում (ՀՀ կենտրոնական բանկում) բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2007, 2008 թվականների համար նախատեսվել էր 0.9-ական մլրդ դրամ, սակայն այս կանխատեսումներում նշված եկամտատեսակի գծով մուտքեր չեն նախատեսվել, քանի որ ներկայումս ՀՀ կենտրոնական բանկի հետ վարվում են բանակցություններ՝ գանձապետական միասնական հաշվի օրական մնացորդի դիմաց վճարվող տոկոսավճարի շուրջ: Ոչ հարկային մյուս եկամտատեսակների գծով 2007, 2008թթ մուտքերի վերանայման անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է ինչպես օրենսդրական դաշտի, այնպես էլ հաշվարկման հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան հաշվարկային դրամային փոխարժեքի փոփոխությամբ: Ոչ հարկային եկամուտների կանխատեսումներում տեղ գտած էական փոփոխությունները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

**Աղյուսակ 3.5. Ոչ հարկային եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ի և ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ-ի շրջանակներում կատարված կանխատեսումների տարբերությունները (մլն դրամ)**

| Եկամտատեսակը | 2006-2008թթ ՄԺԾԾ | | 2007-2009թթ ՄԺԾԾ | | Տարբերության պատճառը |
|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2007 | 2008 | |
| ա) բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներ | 915.5 | 915.5 | 0.0 | 0.0 | գանձապետական միասնական հաշվի օրական մնացորդի դիմաց վճարվող տոկոսավճարների մասով վարվում են բանակցություններ |
| բ) ոչ ռեզիդենտներին (Վրաստանին) տրամադրված վարկերի օգտագործման վճարներ (տոկոսներ) | 108.1 | 106.1 | 241.2 | 239.7 | «Հայաստանի Հանրապետության հանդեպ Վրաստանի պարտքի վերաձևակերպման մասին» 2006թ սեպտեմբեր ամսին կնքված համաձայնագիր |
| գ) իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր | 1 372.4 | 1 413.4 | 1 712.6 | 1 759.0 | օրենսդրական դաշտի փոփոխություններ |
| դ) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարներ | 1 488.6 | 1 577.9 | 1 662.2 | 1 745.3 | հավաքագրման միտումների փոփոխություն |
| ե) ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարներ | 0.0 | 0.0 | 740.0 | 470.0 | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք |

Ընդհանուր առմամբ ոչ հարկային եկամուտների գծով 2007,2008թթ ակնկալվող տարեկան մուտքերի 2007-2009թթ ՄԺԾԾ և 2006-2008թթ ՄԺԾԾ կանխատեսումների տարբերությունները հետևյալն են.

**Աղյուսակ 3.6. ՀՀ 2007-2009 թթ ՄԺԾԾ-ի և ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ի շրջանակներում ոչ հարկային եկամուտների գծով կատարված կանխատեսումների տարբերությունը (մլրդ դրամ)**

| Եկամտատեսակը | 2007թ | 2008թ | 2009թ |
|---|---|---|---|
| 1. Ոչ հարկային եկամուտները ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 6.6 | 5.6 | x |
| 2. Ոչ հարկային եկամուտները ըստ ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ | 7.1 | 5.8 | 5.9 |
| 3. Ոչ հարկային եկամուտների գծով ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ-ի և ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ կանխատեսումների միջև տարբերությունը | 0.5 | 0.2 | x |

<u>Կապիտալի գործառնություններից ստացվող եկամուտների</u> գծով 2007-2009թթ

ծրագրվել է համապատասխանաբար 4,096.3 մլն դրամ, 88.3 մլն դրամ և 90.3 մլն դրամ: 2007 թվականի համար ծրագրված մուտքերից 4,000.0 մլն դրամն ակնկալվում է ստանալ Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից: 2007-2009թթ վերը նշված գումարների կազմում համապատասխանաբար 73.6 մլն դրամը, 65.6 մլն դրամը, 67.6 մլն դրամը ծրագրվել է պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների օտարումից, որից նախորդ տարիների առուվաճառքի պայմանագրերից բխող տարաժամկետ վճարումները կազմում են համապատասխանաբար 13.6 մլն դրամ, 15.6 մլն դրամ, 17.6 մլն դրամ: Պետական սեփականություն հանդիսացող այլ գույքի օտարումից ակնկալվող մուտքերը 2007-2009թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 22.7-ական մլն դրամ:

ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ի շրջանակներում կատարված կանխատեսումները վերանայվել են հիմնականում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման մասով՝ նախկինում ակնկալվող 200-ական մլն դրամի դիմաց ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ շրջանակներում կատարված կանխատեսումներում 2007 թվականի մուտքերը ծրագրվել են 4.0 մլրդ դրամի չափով, իսկ 2008 թվականի համար մուտքեր չեն ծրագրվել:

Պաշտոնական տրանսֆերտները 2007-2009թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 15.0 մլրդ դրամի, 30.5 մլրդ դրամի և 32.4 մլրդ դրամի չափով՝ հաշվի առնելով դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները:

**Աղյուսակ 3.7. 2007-2009 թթ. ծրագրված պաշտոնական տրանսֆերտները (մլրդ դրամներով)**

| Դոնորը | 2007թ | 2008թ | 2009թ |
|---|---|---|---|
| | *կանխատեսում* | | |
| 1. Ընդամենը պաշտոնական տրանսֆերտների 2006-2008թթ կանխատեսումները | 7.7 | 1.1 | x |
| 2. Ընդամենը պաշտոնական տրանսֆերտների 2007-2009թթ կանխատեսումները | 15.0 | 30.5 | 32.4 |
| որից՝ | | | |
| Նիդեռլանդների Թագավորության կառավարությունից | 2.51 | x | x |
| Եվրոմիությունից (պարենային ապահովման ծրագիր) | 3.75 | x | x |
| «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ | 5.68 | 27.27 | 31.59 |
| Տրանսֆերտներ այլ աղբյուրներից | 3.06 | 3.28 | 0.86 |
| 3. Պաշտոնական տրանսֆերտների գծով ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ի և ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ միջև տարբերությունը | -7.3 | -29.4 | x |

Հարկ է նշել, որ հաշվարկներում կիրառվող տվյալների բազայի հետագա թարմացման հետ կապված հնարավոր է 2007-2009թթ բյուջետային եկամուտների կանխատեսումների վերանայում (2007 թվականինը՝ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման, 2008, 2009թթ՝ ՀՀ 2008-2010թթ ՄԺԾԾ-ի մշակման փուլում):

2007-2009թթ բյուջետային եկամուտների կանխատեսումների հետագա ճշգրտումներում էական կլինեն նաև հետևյալ լրացուցիչ տեղեկությունների օգտագործումը.

- հաշվարկներում կիրառված մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխություն,
- բյուջետային եկամուտների գանձման համար պատասխանատու մարմինների կողմից ստացվելիք լրացուցիչ տեղեկություններ,
- ազգային հաշիվների համակարգի 2004, 2005թթ որոշ մակրոտնտեսական ցուցանիշների փաստացի տարեկան տվյալներ,
- 2005 թվականի վիճակագրական այլ ցուցանիշներ:

## ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

### ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

Առաջիկա տարիներին ևս պետական բյուջեի ձևավորումն ընթանալու է բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար ներգրավվող միջոցների գերակշիռ մասը կազմելու են փոխառու միջոցները, ընդ որում՝ արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների հիմնական մասը կուղղվեն նպատակային բնույթ և կուղղվի սոցիալական ոլորտներում և հասարակական ենթակառուցվածքներում ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը:

Ստորև ներկայացվում է ՀՀ 2005-2009 թվականների պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տե՛ս Աղյուսակ 4.1):

**Աղյուսակ 4.1. ՀՀ 2005-2009 թթ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)**

| Ցուցանիշներ | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|
| | փաստացի | հաստատված պետական բյուջե | ծրագիր | | |
| Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ՝ ընդամենը | 42,758.9 | 69,837.7 | 76,543.6 | 81,349.5 | 44,412.4 |
| այդ թվում՝ | | | | | |
| 1. Ներքին աղբյուրներ | 29,499.2 | 39,185.9 | 19,759.0 | 10,185.0 | 10,187.6 |
| - պետական արժեթղթեր | 6.368.1 | 7,000.0 | 8,500.0 | 10,500.0 | 10,500.0 |
| - այլ ներքին աղբյուրներ | 23,131.1 | 32,185.9 | 19,759.0 | -315.0 | -312.4 |
| 2. Արտաքին աղբյուրներ | 13,259.7 | 30,651.8 | 41,534.6 | 66,050.5 | 34,224.8 |
| - վարկերի ստացում | 22.738.6 | 37,870.7 | 49,100.0 | 72,507.5 | 42,658.2 |
| - վարկերի մարում | -7,2227.0 | -7,219.0 | -7,565.4 | -6,457.1 | -8,433.5 |
| 3. Այլ աղբյուրներ | -2,251.8 | 0.0 | 6,750.0 | 5,114.0 | |

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀԱՆ- ի նկատմամբ 2007 թվականի 2.8%-ի դիմաց 2009 թվականին կնվազի մինչև ՀՆԱ-ի 1.4%, որը պայմանավորված է դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների սղությամբ: Սակայն հարկ է նշել, որ դեֆիցիտի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների հայթայթման դեպքում դեֆիցիտ/ ՀՆԱ հարաբերությունը 2007-2009 թվականներին կարող է հասցվել մինչև ՀՆԱ-ի 3.0 %

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների տեսակարար կշիռը դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների ընդհանուր ծավալում 2007-2009 թվականներին կտատանվի 36.9%-ից 26.9%՝ 2006 թվականի ծրագրային 56.1%-ի դիմաց: Ինչպես Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների մեծ մասի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բնորոշ առանձնահատկություններից մեկը

նրա որոշակի կախվածությունն է արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական տրանսֆերտներից), որը կկրի շարունակական բնույթ: (տե՛ս Գծանկար 4.1):

**Գծանկար 4 .1 ՀՀ 2006-2009թթ. պետական բյուջերի ֆինանսաավորումը արտաքին աղբյուրների հաշվին**




Պետական բյուջեի, մասնավորապես՝ դրա դեֆիցիտի ֆինանսավորումը դեռևս շարունակում է էական կախվածության մեջ մնալ արտաքին վարկերից և դրամաշնորհներից: Տարբեր մեթոդներով հաշվարկված դեֆիցիտների համեմատական վերլուծությունները նույնպես հաստատում են այդ փաստը (տե՛ս Աղյուսակ 4.2):

**Աղյուսակ 4.2. Կոնվենցիոնալ, ոչ կոնվենցիոնալ, առաջնային և ընթացիկ դեֆիցիտները 2005-2009 թթ (%՝ ՀՆԱ նկատմամբ, ընդ որում բացասական նշանով՝ հավելուրդի համանման ցուցանիշները)**

| Ցուցանիշներ | 2005փաստացի | 2006 հաստատված պետական բյուջե | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| Ոչ կոնվենցիոնալ դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը | ***2.25*** | ***2.91*** | ***2.84*** | ***2.77*** | ***1.39*** |
| Կոնվենցիոնալ դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների (առանց դրամաշնորհների) և ծախսերի տարբերությունը | *2.87* | *4.46* | *3.40* | *3.81* | *2.41* |
| Ընթացիկ դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ընթացիկ ծախսերի տարբերությունը | *-1.14* | *-1.64* | *-1.75* | *-2.14* | *-2.98* |
| Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների (առանց դրամաշնորհների) և ծախսերի (առանց տոկոսավճարների) | *2.34* | *4.03* | *2.99* | *3.42* | *2.04* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| տարբերությունը | | | | | |

Աղյուսակում բերված ցուցանիշների համադրումից երևում է, որ կոնվենցիոնալ դեֆիցիտը միջին տարեկան մոտ 13.9-ով գերազանցում է ոչ կոնվենցիոնալ դեֆիցիտը, ընդ որում դրամաշնորհների ազդեցությունը դեֆիցիտի վրա միջին հաշվով կազմում է տարեկան ՀՆԱ-ի 0.9%-ը:

Եթե հաշվարկենք ընթացիկ դեֆիցիտը միայն ընթացիկ եկամուտներով, ապա նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիտարկվող ՄԺԾԾ ժամանակահատվածում ծրագրավորվում է ընթացիկ հավելուրդ, պարզ կդառնա, որ պետական բյուջեի սեփական եկամուտները 2006-2009թթ բավարար են ամենաանհրաժեշտ ընթացիկ ծախսերը ծածկելու համար:

Պետական պարտքի սպասարկման հետ կապված տոկոսավճարների ազդեցությունը դեֆիցիտի վրա երևում է կոնվենցիոնալ և առաջնային դեֆիցիտների համադրումից: Մասնավորապես 2007-2009թթ ժամանակահատվածում կոնվենցիոնալ դեֆիցիտում տոկոսավճարների տեսակարար կշռի տարեկան միջինը կկազմի 9.6%` 2006 թվականի ծրագրավորված 12.4 %-ի դիմաց:

Կանխատեսման համաձայն` առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունում ներքին խնայողությունները կավելանան, որը հնարավորություն կտա աստիճանաբար ավելացնել ներքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը` միաժամանակ իջեցնելով տոկոսավճարները:

Քանի որ պետական բյուջեի դեֆիցիտը գերազանցապես ֆինանսավորվում է փոխառու միջոցների հաշվին, ապա դրա մեծությունը և կառուցվածքը էապես առնչվում են պետական ներքին և արտաքին պարտքը բնութագրող ցուցանիշների հետ:

## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Ստորև ներկայացվում է ՀՀ պետական պարտքի առկա կառուցվածքի և միջնաժամկետ հատվածում դրա փոփոխության կանխատեսվող միտումները.

**Աղյուսակ 4.3 ՀՀ պետական պարտքը 2004-2008 թթ (մլն ԱՄՆ դոլար)**

| Ցուցանիշներ | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|
| | փաստացի | ծրագիր | կանխատեսում | | |
| Պետական պարտք` ընդամենը | 1216.6 | 1399.8 | 1490.4 | 1641.9 | 1724.6 |
| %` ՀՆԱ նկատմամբ | 24.8 | 24.5 | 24.9 | 25.1 | 24.3 |
| այդ թվում` | | | | | |
| - արտաքին պարտք | 1099.2 | 1257.4 | 1338.5 | 1466.8 | 1526.0 |
| որից` ՀՀ կենտրոնական բանկի պարտք | 176.4 | 171.3 | 160.1 | 141.4 | 117.8 |
| - ներքին պարտք | 117.3 | 142.4 | 151.8 | 175.2 | 198.5 |

### Արտաքին պետական պարտք

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշների շարունակական բարելավման միտումը պահպանվել է 2005 թվականին և ըստ կանխատեսումների արձանագրված միտումը կպահպանվի:

**Աղյուսակ 4.4 ՀՀ արտաքին պետական պարտքը 2005-2009 թթ (մլն ԱՄՆ դոլար)**

| Ցուցանիշներ | 2005 փաստացի | 2006 ծրագիր | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|
| | | | կանխատեսում | | |
| Կառավարության արտաքին պարտքը և նրա կողմից տրամադրված երաշխիքներ | 922.8 | 1086.1 | 1178.4 | 1325.4 | 1408.2 |
| Սպասարկում* | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 26.5 | 27.0 | 26.9 | 24.8 | 30.1 |
| - տոկոսավճար | 10.7 | 9.8 | 10.0 | 10.5 | 11.4 |
| - մարում | 15.8 | 17.2 | 16.8 | 14.3 | 18.7 |
| Տոկոսավճար / հարկային եկամուտներ (%) | 1.6 | 1.1 | 1.1 | 1.0 | 1.0 |
| Տոկոսավճար / պետական բյուջեի ծախսեր (%) | 1.2 | 0.9 | 0.9 | 0.8 | 0.8 |

- Սպասարկումը (տոկոսավճար և մարում) առանց ՀՀ կենտրոնական բանկի կողմից սպասարկվող KfW-ի կողմից տրամադրված Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար տրամադրված վարկի

Ստորև ներկայացվում են ՀՀ 2005-2009թթ. արտաքին պարտքի հիմնական բնութագրերը:

**Աղյուսակ 4.5 ՀՀ պետական արտաքին պարտքի հիմնական բնութագրերը 2005-2009թթ (մլն ԱՄՆ դոլար)**

| *Ցուցանիշներ* | *2005թ. փաստացի* | *2006թ. ծրագիր* | *2007թ.* | *2008թ.* | *2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| | | | *կանխատեսում* | | |
| Արտաքին պետական պարտք | 1,099.2 | 1,257.4 | 1,338.5 | 1,466.8 | 1,526.0 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 22.4 | 22.0 | 22.4 | 22.4 | 21.5 |
| Միջին արդյունավետ տոկոսադրույք | 1.1 | 0.9 | 0.8 | 0.8 | 0.8 |
| Արտոնյալ վարկերի կշիռը (%) | 98 | 99.2 | 99.6 | 99.7 | 99.8 |
| Սպասարկում / արտահանում (%) | 4.7 | 4.0 | 3.1 | 2.9 | 2.8 |
| Տոկոսավճար / արտահանում (%) | 0.9 | 0.7 | 0.7 | 0.6 | 0.6 |
| Սպասարկում / ՀՆԱ (%) | 1.3 | 1.1 | 0.9 | 0.8 | 0.8 |

**Գծապատկեր 4.2**

***ՀՀ արտաքին պետական պարտքի և արտաքին պետական պարտք / ՀՆԱ ցուցանիշի դինամիկան***




2007-2009թթ նպատակահարմար է պետական բյուջեի դեֆիցիտը արտաքին աղբյուրներից ֆինան-

սավորել բացառապես արտոնյալ աղբյուրների հաշվին (2007-2009թթ նախատեսվում է վարկային զամբյուղում արտոնյալ վարկերի տեսակարար կշռի մեծացում), հետագայում՝ արտաքին արտոնյալ աղբյուրներից օգտվելու հնարավորության նվազման և ներքին շուկայում տոկոսադրույքների նվազմանը զուգընթաց, կարևորել նաև ֆինանսավորման ներքին աղբյուրները: Արտաքին պարտքի աճը պետք է ուղեկցվի արտաքին պարտքի բեռը գնահատող ցուցանիշների հարաբերական կայունությամբ, կամ, նվազագույնը, արտաքին պարտքի բեռի աճը պետք է համահունչ լինի ներքին պարտքի բեռի նվազմանը: Սա նշանակում է, որ վերցված նոր պարտքի տոկոսադրույքը չպետք է գերազանցի պարտքի փաստացի միջին տոկոսադրույքը:

Միաժամանակ ցանկալի է, որ ստացվող նոր վարկերն ունենան մարման երկար ժամանակահատված, որը կփոքրացնի պարտքի ամենամյա մարումների ծավալը և հնարավորություն կտա պահել երկրի վճարունակությունը:

Արտահանման կայուն աճը արտաքին պարտքի սպասարկմանն ու մարմանն ուղղվող միջոցների համեմատաբար կայուն մեծության պայմաններում կհանգեցնի արտաքին պարտքի տոկոսավճար/արտահանում և արտաքին պարտքի սպասարկում/արտահանում ցուցանիշների էական բարելավման:

Ինչ վերաբերում է արտարժութային հոսքերին և արտաքին պարտք/արտահանում, արտաքին պարտքի սպասարկում/արտահանում հարաբերություններին, ապա արտահանման աճի պայմաններում, երբ արտաքին տոկոսավճարների էական աճ չի սպասվում (ի հաշիվ բացառապես արտոնյալ վարկերից օգտվելու), պարտքի կառավարման լրացուցիչ բարդություններ չեն առաջանա:

**Ներքին պետական պարտք**

Միջնաժամկետ հատվածում ներքին պետական պարտքի կառավարման բնագավառում, բացի ռազմավարական հիմնական նպատակներից (պարտքի ժամկետների երկարաձգում և էժանցում), ուրվագծվում են հետևյալ խնդիրները.

- օրենսդրական դաշտի կատարելագործում, այսինքն՝ «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի ընդունում և պետական արժեթղթերի շուկան կարգավորող իրավական ակտերի համապատասխանեցում պարտքի մասին օրենքի դրույթներին,
- շուկայի թափանցիկության և կանխատեսելիության ապահովման նպատակով պետական արժեթղթերի թողարկումների տարեկան ծրագրերի նախապես հրապարակում՝ ըստ առանձին թողարկումների ժամկետների և ծավալների: Այս ուղղությամբ առաջին քայլը կատարվել է 2005թ-ին՝ հրապարակվել է տարվա ընթացքում երկարաժամկետ պարտատոմսերի թողարկումների գրաֆիկը, իսկ 2006թ-ի սկզբում շուկայի բոլոր մասնակիցներին ներկայացվել է տարվա ընթացքում թողարկվելիք պարտատոմսերի թողարկումների ծրագիրը (թողարկումների օրերով, ժամկետներով և ծավալներով):
- խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում: Այստեղ նպատակը բնակչության մոտ դրամով խնայողությունների ձևավորման խթանումն է, և դրանց ներգրավումը պետական պարտատոմսերի մեջ: Այս պարտատոմսերը նպաստելու են նաև գանձապետական պահառու համակարգի զարգացմանը և համակարգում պարտատոմսերի շրջանառության ծավալների մեծացմանը:
- պետական պարտատոմսերի իրացվելիությունը մեծացնելու նպատակով երկրորդային շուկայի զարգացման գործընթացին աջակցում, այդ շրջանակներում նաև գործակալների կողմից կատարվող գնանշումների մեխանիզմի գործունակության բարձրացում:
- միջոցառումների նախաձեռնում, որը հնարավորություն կտա պետական պարտատոմսերի շուկայի ներդրողների կազմը որակապես բարելավել և նվազեցնել սահմանափակ թվով ներդրողներից կախվա-

ծության ռիսկերը:

Դեռևս 2000թ-ին շրջանառության մեջ է դրվել «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: 2002թ-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջով պետական պարտատոմսերի շուկայում սուբյեկտների իրավունքների սահմանափակում պարունակող դրույթները պետք է ամրագրվեն օրենքով: Սույն փաստը պատճառ հանդիսացավ նախագծի շրջանառությունից դուրս բերման և լրամշակման համար, որպես օրենքի առանձին գլուխ ներմուծելով ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի շուկայում հանդես եկող սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, վարքագծի սահմանափակումները սահմանող դրույթները: Այս բնագավառում առաջիկա ծրագրերի թվում է օրենքի ընդունումը մինչև 2007թ-ի հուլիսի 1-ը: Պետք է նշենք, որ ներկայումս պարտատոմսերի շուկան կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ-ի հունիսի 3-ին ընդունած N1103-Ն որոշմամբ:

Նշենք, որ 2005 թվականի ընթացքում թողարկվել ու շրջանառության մեջ են գտնվում երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի չորս թողարկումներ, որոնց շնորհիվ էական շեղում է գրանցվել 2005թ-ի համար նախկինում ծրագրված ժամկետայնության և եկամտաբերության ցուցանիշներում:

**Աղյուսակ 4.6. ՀՀ ներքին պետական պարտքի հիմնական բնութագրերը 2005-2009 թթ (մլն դրամ)**

| Ցուցանիշներ | 2005թ. | 2006թ. | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|---|---|
| | *փաստացի* | *ծրագիր* | *կանխատեսում* | | |
| Ներքին պարտք, որից` | 52 828.3 | 59 828.3 | 68 328.3 | 78 828.3 | 89 328.3 |
| Երկարաժամկետ պարտատոմսեր | 9 113.7 | 12 536.3 | 17 500.0 | 23 500.0 | 30 000.0 |
| Միջնաժամկետ պարտատոմսեր | 37 427.7 | 38 300.8 | 39 662.7 | 40 257.7 | 42 204.8 |
| Կարճաժամկետ պարտատոմսեր | 6 286.9 | 8 991.2 | 11 665.6 | 14 570.6 | 16 123.5 |
| Միջին տոկոսադրույք(%) | 7.31 | 8.00 | 9.00 | 9.00 | 9.00 |
| Միջին ժամկետայնություն(օր) | 1101 | 1200 | 1300 | 1400 | 1600 |
| Տոկոսավճար | 5 066.4 | 6 200.0 | 6 600.0 | 6 500.0 | 6 500.0 |

Վերոհիշյալ աղյուսակում սպասարկման ծախսերի տնտեսումը 2005թ-ին պայմանավորված էր եկամտաբերության աննախադեպ անկմամբ` մինչև 4.0% կարճաժամկետների համար, միջնաժամկետների համար` 5.4% և երկարաժամկետների համար` 7.8%: Բացի դրանից, տարվա վերջում ծրագրվածից մոտ 100 օրով ավել է մարման փաստացի միջին ժամկետայնությունը` հիմնականում երկարաժամկետ պարտատոմսերի թողարկմամբ պայմանավորված: Վերջինիս հետևանքով մեծացել է նաև մարման ցրվածությունն ըստ տարիների` հասնելով մինչև 2020 թվականը: 2006թ-ից սկսած հետագա տարիներին սպասարկման ծախսերի ծրագրային ցուցանիշները կառուցվել են այն տրամաբանությամբ, որ մարման ժամկետայնությունը և տարիների մեջ ցրվածությունը աճելու է ի հաշիվ ներքին պարտքում միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի ծավալների աճի, որոնց ընթացիկ սպասարկումը կատարվելու է տարեկան առնվազն երկու անգամ: Բացի այդ, եկամտաբերության աճ կարող է գրանցվել նաև այն պատճառով, որ ՀՀ ԿԲ-ն անցնելով սղաճի նպատակադրման ծրագրին այսուհետ տոկոսադրույքների միջոցով է հասնելու ԿԲ հիմնական խնդրի լուծմանը: Այս պարագայում ևս ենթադրվում է պարտքի միջին եկամտաբերության փոքր-ինչ աճ, ինչն իր արտացոլումը կգտնի տարեկան սպասարկման ծախսերում: Միջին ժամկետ հատվածում նախատեսվում է նաև ՆՊՊ-ի աճ, որը միտված կլինի արտաքին պարտքային աղբյուրների աստիճանական փոխարինմանը ներքին աղբյուրներից ներգրավված միջոցներով:

2005 թվականին ներքին պարտքի կառավարման նպատակներն ու սկզբունքները իրենց տրամաբա-

նական շարունակությունն են գտնելու 2006թ-ի և 2007-2009 թթ. համար նախատեսվող ծրագրերում: 2007-2009թթ-ին ներքին պարտքի կառավարման ծրագրերում գերակայող են լինելու ձևավորված երկարաժամկետ միտումների պահպանումը, ոչ բանկ ներդրողների թվի շարունակական աճը ու կառուցվածքի որակական բարելավումը: Միջին ժամկետ հատվածում նախատեսվում է ապահովել թողարկումների այնպիսի քաղաքականություն, որը հնարավորություն կտա էական տատանումներից զերծ պահել ներքին պարտքի տոկոսադրույքները, շուկայում ապահովել կայունություն, կանխատեսելիություն և նվազեցնել սպասարկման ծախսերը՝ զուգահեռաբար մեծացնելով պարտատոմսերի թողարկման ժամկետայնությունը և դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորությունը: Այս խնդիրների լուծումը զուգակցվելու է պարտատոմսերի հետգնումների շարունակական իրականացմամբ, որը հնարավորություն կտա մշտապես բարձր պահել պետական պարտատոմսերի իրացվելիության մակարդակը, շրջանառությունից դուրս բերել բանկ և շուկայի տեսանկյունից պակաս իրացվելի պարտքային գործիքները, միաժամանակ հարթել մարումների գրաֆիկը:

Միջինժամկետ հատվածում շարունակվելու է 1993-94թթ-ին թողարկված ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը, որը շարունակվելու է մինչև 2014թ-ը: 2003-2005թթ-ի ընթացքում հետ են գնվել 37.8 մլն դրամի պարտատոմսեր, որից 2005թ-ին՝ 24.5 մլն դրամի: 2007-2009թթ-ի ընթացքում նախատեսվում է շարունակել պարտատոմսերի հետգնումը, որի համար միջնաժամկետ հատվածում նախատեսվում է միջոցներ տրամադրել հետևյալ ծավալներով.

**Աղյուսակ 4.7 ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի մարում (մլն. դրամ)**

| | 2006թ | 2007թ | 2008թ | 2009թ |
|---|---|---|---|---|
| Ներքին շահող փոխառության պարտատոմսերի մարում | 25.0 | 17.0 | 15.0 | 10.0 |

## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2007-2009 ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2007 - 2009 թթ ՀՀ պետական բյուջեների կանխատեսվող մուտքերի վերլուծությունից երևում է, որ 2006 թվականի մակարդակի համեմատ, 2007 թվականի անվանական ՀՆԱ-ի շուրջ 9.2% աճի պայմաններում, 2007 թվականի պետական բյուջեի մուտքերի ծավալը ծրագրավորվում է շուրջ 8.7% կամ 41.8 մլրդ դրամ ավելացումով (հիմնականում հարկային եկամուտների հավելաճի հաշվին): Միաժամանակ 2007 թվականի մակարդակի համեմատ պետական բյուջեի մուտքերի ծավալի 12.4 % աճ է կանխատեսվում 2008 թվականին (անվանական ՀՆԱ-ի 9.2% կանխատեսվող աճի պայմաններում) և 2008 թվականի մակարդակի համեմատ՝ 2009 թվականին՝ 2.9%-ով (անվանական ՀՆԱ-ի 8.7% կանխատեսվող աճի պայմաններում):

**Աղյուսակ 4.8. Բյուջետային ռեսուրսների փաթեթում 2007-2009 թթ կանխատեսվող փոփոխությունները**

(մլն դրամ)

| Ցուցանիշներ | 2007թ ծրագիր | 2008թ ծրագիր | 2009թ ծրագիր |
|---|---|---|---|
| 1. Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ | 447,647.7 | 507,562.6 | 563,133.0 |
| Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 16.6 | 17.3 | 17.6 |
| 2. Բյուջետային վարկերի վերադարձից մուտքեր | 825.1 | 949.0 | 2,001.9 |
| Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.03 | 0.03 | 0.06 |

| Ցուցանիշներ | 2007թ ծրագիր | 2008թ ծրագիր | 2009թ ծրագիր |
|---|---|---|---|
| 3. Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ | 76,543.6 | 81,349.5 | 44,412.3 |
| Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.84 | 2.77 | 1.39 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ** | **525,016.4** | **589,861.0** | **609,547.2** |
| Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 19.5 | 20.1 | 19.1 |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ ըստ 2006-2008թթ ՄԺԾԾ*** | **488,715.5** | **535,583.2** | **X** |
| Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) *ըստ 2006-2008թթ ՄԺԾԾ* | *19.43* | *19.51* | |
| **ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՎԵԼԱՃ (նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ)** | **41,817.3** | **64,844.7** | **19,686.2** |
| Մուտքերի հավելաճը %-ով՝ նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ | 8.7 | 12.4 | 3.3 |
| 4. Ոլորտային կտրվածքով նախորդ տարվա մակարդակի նկատմամբ ազատված զուտ միջոցներ | 21,411.4 | 7,182.3 | 29,350.9 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (նախորդ տարվա ռեսուրսների մակարդակի նկատմամբ)** | 63,228.7 | 72,027.0 | 49,037.1 |
| Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.35 | 2.45 | 1.53 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (նախորդ տարվա ռեսուրսների մակարդակի նկատմամբ) ըստ 2006-2008թթ ՄԺԾԾ* | 56,378.4 | 65,922.4 | *X* |
| Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)*ըստ 2006-2008թթ ՄԺԾԾ* | 2.24 | 2.4 | |
| **Հավելյալ բյուջետային ռեսուրսների կանխատեսվող բաշխումը 2007-2009 թթ՝ ըստ ոլորտների** | 63,228.7 | 72,027.0 | 49,037.1 |
| այդ թվում՝ | | | |
| 1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն | 12,160.9 | 8,344.7 | 16,876.3 |
| 2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր | 23,276.8 | 12,846.6 | 9,453.3 |
| 3. Տնտեսության ճյուղեր | 16,534.0 | 46,582.4 | 4,050.8 |
| 4. Պետական կառավարում | 3,674.9 | - | 4,378.8 |
| 5. Աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիաները և ԱԺ ընդունված օրենքներով համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցումը) | 3,316.3 | 1,895.7 | 1,076.0 |
| 6. Այլ ոլորտներ | 4,265.8 | 2,357.6 | 12,804.1 |

Ինչպես երևում է աղյուսակից 2007-2009թթ ՄԺԾԾ-ով 2007-2008 թվականների համար ծրագրավորվող բյուջետային մուտքերի հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ գերազանցում է 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2007-2008 թթ համար նախատեսված մակարդակին (ընդ որում եթե 2007 թվականի գծով աճը աննշան է, ապա

2008 թվականին այն կազմում է 0.5 տոկոսային կետ): Դրա հետ մեկտեղ 2007-2009թթ ՄԺԾԾ-ի 2007-2008 թվականներին` նախորդ տարվա համեմատ ծրագրավորվող հավելյալ մուտքերը գերազանցում են նույն տարիներին 2006-2008թթ ՄԺԾԾ-ով նախատեսված հավելյալ մուտքերի գումարները (համապատասխանաբար` 6.9 մլրդ դրամով և 6.1 մլրդ դրամով):

Ինչպես երևում է աղյուսակից` 2007-2009 թվականներին, նախորդ տարվա համեմատ, ստացվելիք լրացուցիչ մուտքերի զգալի մասը 104.5 մլրդ դրամը կամ ընդհանուրի 56.7 %-ը նախատեսվում է ուղղել սոցիալ-մշակութային ճյուղերի ու գիտության, ինչպես նաև տնտեսության ճյուղերի ֆինանսավորմանը, ընդ որում` սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը բաժին կհասնի լրացուցիչ մուտքերի ընդհանուր գումարի 20.3%-ը: 2007-2009 թթ նախատեսվում է շարունակել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածության ավելացումը:

Սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը հատկացված հավելյալ միջոցների շուրջ 35.4%-ը կտրամադրվի կրթության բնագավառին, շուրջ 16.0%-ը` սոցիալական ապահովության և ապահովագրության բնագավառին և 37.4%-ը` առողջապահությանը (հիմնականում առաջնային` ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժօգնությանը):

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության համակարգերի պահպանման և արտակարգ իրավիճակների համակարգի ծախսերին կուղղվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 24.7%-ը, որը պայմանավորված է վերոհիշյալ համակարգի մարմինների կենսագործունեության ապահովման համար համապատասխան միջոցների հատկացման անհրաժեշտությամբ:

Տնտեսության ճյուղերին 2007-2009 թվականներին կհատկացվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 36.4%-ը, ընդ որում` այդ գումարների գերակշիռ մասը` 66.8%-ը, կտրվի էներգետիկ համակարգին (նշված միջոցների աղբյուր են հանդիսանում արտաքին աղբյուրներից նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվելիք փոխառու միջոցները), 12.2%-ը` ճանապարհային տնտեսությանը, 19.1%-ը` գյուղատնտեսության ոլորտին, և 1.9.%-ը` տնտեսության այլ ճյուղերին:

Պետական կառավարման ոլորտին նախատեսվում է հատկացնել հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 4.4%-ը: Այդ միջոցներն ուղղվելու են քաղաքացիական ծառայության և դատական համակարգում իրականացվելիք բարեփոխումների գործընթացի ապահովմանը:

2007-2009 թվականներին տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցություն (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիաները և Ազգային ժողովի ընդունված օրենքներով համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցումը) ցուցաբերելու նպատակով պետական բյուջեից կհատկացվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 3.41%-ը:

## 2007-2009 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ` ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ՀՀ 2007-2009 թվականների պետական բյուջեների ծախսերի կանխատեսումները` ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով[4]:

**Աղյուսակ 4.9. ՀՀ 2005-2009 թթ պետական բյուջեների ծախսերը` ըստ ոլորտների (մլն դրամ)**

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[7] | 2006 հաստատված պետական բյուջե[8] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 417,505.8 | 482,193.9 | 524,191.2 | 588,912.0 | 607,545.4 |

[4] *ԱÛëáõÑ»ï¨ ëáõÛÝ ·ÉËáõÙ §êáóÇ³É-Ùß³ÏáõÃ³ÛÇÝ ×ÛáõÕ»ñ¦, §îÝï»ëáõÃÛ³Ý ×ÛáõÕ»ñ¦ ¨ §²ÛÉ áÉáñïÝ»ñ¦ ËÙµ»ñÁ Ý»ñÏ³Û³óíáõÙ »Ý ³é³Ýó å»ï³Ï³Ý Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ýñ³å»ï³Ï³Ý ¨ï³ñ³Íù³ÛÇÝ Ù³ñÙÇÝÝ»ñÇ ³å³ñ³ïÝ»ñÇ å³Ñå³ÝÙ³Ý Í³Ëë»ñÇ, áñáÝù ÙÇ³íáñí³Í »Ý §ä»ï³Ï³Ý Ï³é³í³ñáõÙ¦ ËÙµáõÙ*

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[7] | 2006 հաստատված պետական բյուջե[8] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 394,600.1 | 439,889.6 | 488,119.9 | 534,598.7 | X |
| *այդ թվում`* | | | | | |
| 1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն | 144,475.6 | 188,651.3 | 200,770.2 | 206,824.5 | 223,700.6 |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ* | 8.9 | 7.9 | 7.5 | 7.0 | 7.0 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 34.6 | 39.1 | 38.3 | 35.1 | 36.8 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 149,209.7 | 170,242.9 | 194,338.0 | 219,102.7 | X |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ* | *7.1* | *7.4* | *7.7* | *8.0* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *37.8* | *38.7* | *39.8* | *41.0* | X |
| 2. Պաշտպանություն, ազգային անվտանգություն, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր | 94,332.8 | 105,692.8 | 128,969.6 | 141,816.2 | 151,269.5 |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ* | 5.8 | 4.4 | 4.8 | 4.8 | 4.7 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 22.6 | 21.9 | 24.6 | 24.1 | 24.9 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 86,444.6 | 102,973.2 | 112,634.7 | 120,690.6 | X |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ* | *4.1* | *4.5* | *4.5* | *4.4* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *21.9* | *23.4* | *23.1* | *22.6* | X |
| 3. Տնտեսության ճյուղեր | 65,880.0 | 96,492.1 | 91,558.3 | 135,891.5 | 109,555.1 |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ* | 4.1 | 4.0 | 3.4 | 4.6 | 3.4 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 15.8 | 20.0 | 17.5 | 23.1 | 18.0 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 76,237.1 | 67,765.5 | 69,399.7 | 55,793.3 | X |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ* | *3.6* | *2.9* | *2.8* | *2.0* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *19.3* | *15.4* | *14.2* | *10.4* | X |
| 4. Պետական կառավարում | 37,862.19 | 41,005.3 | 44,680.2 | 41,741.1 | 46,119.9 |
| *- տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)* | 2.3 | 1.7 | 1.7 | 1.4 | 1.4 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 9.1 | 8.5 | 8.5 | 7.1 | 7.6 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 33,043.5 | 35,410.3 | 42,476.5 | 43,306.6 | X |
| *- տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)* | *1.6* | *1.5* | *1.7* | *1.6* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *8.4* | *8.0* | *8.7* | *8.1* | X |
| 5. Աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին | 13,752.00 | 14,668.0 | 17,984.3 | 19,880.0 | 20,956.0 |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | 0.8 | 0.6 | 0.7 | 0.7 | 0.7 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 3.3 | 3.0 | 3.4 | 3.4 | 3.4 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 13,752.0 | 14,668.0 | 16,792.0 | 16,916.0 | X |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | *0.7* | *0.6* | *0.7* | *0.6* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ* | *3.5* | *3.3* | *3.4* | *3.2* | X |

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[7] | 2006 հաստատված պետական բյուջե[8] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| *ծավալում (%)* | | | | | |
| 6. Այլ ոլորտներ | 61,203.28 | 35,684.35 | 40,228.67 | 42,758.76 | 55,944.32 |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ* | 2.7 | 1.5 | 1.5 | 1.5 | 1.8 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 14.7 | 7.4 | 7.7 | 7.3 | 9.2 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 35,913.17 | 48,829.7 | 52,479.0 | 78,789.46 | X |
| *- հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ* | *1.7* | *2.1* | *2.1* | *2.9* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *9.1* | *11.1* | *10.8* | *14.7* | X |

*[7] Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2005 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

*[8] Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2006 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

**Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության** խմբում 2007-2009 թվականներին ևս կարևորվելու է հատկապես կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

**Աղյուսակ 4.10. Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության ոլորտի 2005-2009 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով**

(մլն դրամ)

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[9] | 2006 հաստատված պետական բյուջե[10] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ընդամենը | 144,475.6 | 188,651.3 | 200,770.2 | 206,824.5 | 223,700.6 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 149,209.7 | 170,242.9 | 194,338.0 | 219,102.7 | X |
| այդ թվում՝ | | | | | |
| 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 56,453.16 | 77,081.2 | 80,648.0 | 85,188.0 | 90,316.6 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.5 | 3.2 | 3.0 | 2.9 | 2.8 |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 13.5 | 16.0 | 15.4 | 14.5 | 14.9 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 57,460.8 | 65,706.6 | 74,990.5 | 90,094.7 | X |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.7 | 2.9 | 3.0 | 3.3 | X |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 14.6 | 14.9 | 15.4 | 16.9 | X |
| 2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ | 43,313.4 | 54,700.7 | 56,655.4 | 57,481.3 | 60,667.4 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.9 | 2.3 | 2.1 | 2.0 | 1.9 |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 10.4 | 11.3 | 10.8 | 9.8 | 10.0 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 45,882.3 | 52,355.2 | 55,467.6 | 56,642.4 | X |
| - տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%) | 2.2 | 2.3 | 2.2 | 2.1 | X |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 11.6 | 11.9 | 11.4 | 10.6 | X |
| 3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | 30,596.0 | 38,625.3 | 44,201.5 | 46,456.7 | 52,622.9 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.4 | 1.6 | 1.6 | 1.6 | 1.6 |

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[9] | 2006 հաստատված պետական բյուջե[10] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 7.3 | 8.0 | 8.4 | 7.9 | 8.7 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 31.651.3 | 36.627.5 | 47,546.4 | 55,433.1 | X |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.5 | 1.6 | 1.9 | 2.0 | X |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 8.0 | 8.3 | 9.7 | 10.4 | X |
| 4. ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ | 9,988.2 | 13,051.1 | 14,114.1 | 11,823.6 | 13,542.9 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.4 | 0.5 | 0.5 | 0.4 | 0.4 |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 2.4 | 2.7 | 2.7 | 2.0 | 2.2 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 10,112.7 | 11,324.7 | 11,596.7 | 11,739.1 | X |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.5 | 0.5 | 0.5 | 0.4 | X |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 2.6 | 2.6 | 2.4 | 2.2 | X |
| 5. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ | 4,124.9 | 5,193.1 | 5,151.1 | 5,874.9 | 6,550.8 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 1.0 | 1.1 | 1.0 | 1.0 | 1.1 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 4,102.6 | 4,228.9 | 4,736.8 | 5,193.4 | X |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | X |
| - տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | X |

[9] *Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2005 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

[10] *Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2006 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

Առաջիկա տարիներին կրթական ոլորտում պետական քաղաքականության գերակայությունը կլինի հանրակրթական համակարգի բարեփոխումների խնդիրը (որին կուղղվի ոլորտի ծախսերի գերակշիռ մասը): Առողջապահության բնագավառում 2007-2009 թվականներին բյուջետային միջոցները կնպատակաուղղվեն առաջնային բուժօգնության ամրապնդման և զարգացման ծրագրերին:

Սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառում առաջիկա տարիներին շեշտը կդրվի ընտանեկան նպաստների համակարգի կատարելագործման, սոցիալական ապահովության ծրագրերի իրականացման, ինչպես նաև կենսաթոշակների բարձրացման վրա:

**<u>Տնտեսության ճյուղերի</u>** 2007-2009 թվականների ծախսերը նպատակաուղղված են լինելու արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին:

Աղյուսակ 4.11. Տնտեսության ճյուղերի 2005-2009 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[11] | 2006 հաստատված պետական բյուջե[12] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐ՝ ընդամենը | 65,880.0 | 96,492.1 | 91,558.3 | 135,891.5 | 109,555.1 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 76,237.1 | 67,765.5 | 69,399.7 | 55,793.3 | *X* |
| *այդ թվում՝* | | | | | |
| 1. ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ | 3,157.6 | 4,215.0 | 17,768.7 | 49,073.1 | 30,111.5 |

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[11] | 2006 հաստատված պետական բյուջե[12] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.1 | 0.2 | 0.7 | 1.7 | 0.9 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 0.8 | 0.9 | 3.4 | 8.3 | 5.0 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 10,736.7 | 6,371.3 | 15,067.2 | 2,596.4 | *X* |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | *0.5* | *0.3* | *0.6* | *0.1* | *X* |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *2.7* | *1.4* | *3.1* | *0.5* | *X* |
| 2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՋԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ | 12,851.3 | 19,152.9 | 20,870.0 | 31,987.2 | 30,509.1 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.6 | 0.8 | 0.8 | 1.1 | 1.0 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 3.1 | 4.0 | 4.0 | 5.4 | 5.0 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 15,438.8 | 16,699.6 | 16,081.2 | 10,484.0 | X |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.7 | 0.7 | 0.6 | 0.4 | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 3.9 | 3.8 | 3.3 | 2.0 | X |
| 3. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ | 20,808.9 | 41,153.9 | 22,562.9 | 26,723.8 | 30,774.6 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.9 | 1.7 | 0.8 | 0.9 | 1.0 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 5.0 | 8.5 | 4.3 | 4.5 | 5.1 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 20,925.8 | 16,808.5 | 13,073.0 | 14,142.6 | X |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | *1.0* | *0.7* | *0.5* | *0.5* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *5.3* | *3.8* | *2.7* | *2.6* | X |
| 4. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 22,702.7 | 24,561.2 | 21,782.7 | 19,955.6 | 11,216.3 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.0 | 1.0 | 0.8 | 0.7 | 0.4 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 5.4 | 5.1 | 4.2 | 3.4 | 1.8 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 23,334.8 | 21,813.6 | 18,355.9 | 19,069.3 | X |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | *1.1* | *0.9* | *0.7* | *0.7* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *5.9* | *5.0* | *3.8* | *3.6* | X |
| 5. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐ | 6,359.4 | 7,409.2 | 8,573.9 | 8,151.9 | 6,943.6 |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.3 | 0.3 | 0.3 | 0.3 | 0.2 |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 1.5 | 1.5 | 1.6 | 1.4 | 1.1 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 5,801.0 | 6,072.5 | 6,822.4 | 9,501.0 | X |
| - Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%) | *0.3* | *0.3* | *0.3* | *0.3* | X |
| *- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *1.5* | *1.4* | *1.4* | *1.8* | X |

[11] *Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2005 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

[12] *Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2006 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

Պետության կողմից հատկապես կկարևորվեն գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի, ճանապարհային, ջրային և բնակարանային-կոմունալ տնտեսության զարգացմանն ուղղված ծախսերը, որոնց զգալի մասը նախատեսվում է իրականացնել արտաքին ֆինանսական աջակցությամբ:

**Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգերի** պահպանման ծախսերի աճը պայմանավորված է լինելու նշված կառույցների կենսագործունեության ապահովման համար բավարար պայմանների ստեղծման

և դրա շնորհիվ այդ կառույցների պատրաստականության բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտությամբ:

**Պետական կառավարման** բնագավառում ծախսերը, 2006 թվականի համեմատությամբ, 2007-2009 թվականներին կունենան բացարձակ կայուն աճ՝ պայմանավորված պետական կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովման անհրաժեշտությամբ:

Պետական կառավարման համակարգի բոլոր ոլորտներում առաջնահերթ խնդիրներից է կոռուպցիայի դեմ պայքարը, օրենքի առջև բոլորի հավասարության ապահովումը: Պետական կառավարման բարեփոխումները նախատեսվում է իրականացնել երեք ուղղություններով, այն է՝ պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային վերափոխումներ, քաղաքացիական ծառայության և ֆինանսական կառավարման բարեփոխումներ:

Նշված ծրագրի ֆինանսավորումը ապահովելու նպատակով առաջիկա տարիներին պետական կառավարման բնագավառում լրացուցիչ ֆինանսական ներդրումների անհրաժեշտություն կառաջանա, մասնավորապես՝ պետական ծառայողների վերապատրաստման, նրանց աշխատանքի վարձատրության և սոցիալական ապահովման երաշխիքների ստեղծման, պետական կառավարման մարմինների կենսագործունեության անհրաժեշտ այլ կանոնավոր կարիքների բավարարման համար: Դրանով պայմանավորված՝ 2007-2009 թթ ժամանակահատվածի վերջում նախատեսվող հատկացումների ծավալները, 2006 թվականի ծրագրային մակարդակի համեմատ, կաճեն շուրջ 5.1 մլրդ դրամով կամ 1.2 անգամ, ընդ որում՝ 2007 թվականին՝ 1.1 անգամ, իսկ 2007-2009 թվականներին միջին տարեկան աճը նախորդ տարվա նկատմամբ կկազմի 12.5 %:

2007-2009 թվականներին, 2006 թվականի մակարդակի համեմատ, տեղական ինքնակառավարման բնագավառին 2007-2009 թվականներին պետական աջակցության գծով նախատեսվող ծախսերի աճը պայմանավորված է օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված պարտադիր լիազորությունների շրջանակներում առկա հիմնախնդիրների իրագործման համար բավարար ֆինանսական բազայի ապահովման անհրաժեշտությամբ:

**Այլ ոլորտներ** խմբի համար 2007-2009 թվականներին նախատեսվող ծախսերի գերակշիռ մասը բաժին կընկնի պետական պարտքի սպասարկման և արտաքին տնտեսական աջակցություն ծախսերին:

**Աղյուսակ 4.12. Այլ ոլորտների 2005-2009 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)**

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[13] | 2006 հաստատված պետական բյուջե[14] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | 61,203.28 | 35,684.35 | 40,228.67 | 42,758.76 | 55,944.32 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 35,913.17 | 48,829.7 | 52,479.0 | 78,789.46 | *X* |
| *այդ թվում՝* | | | | | |
| 1. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ (տոկոսավճարներ) | 9,933.18 | 10,315.4 | 11,114.9 | 11,218.7 | 11,616.5 |
| - *հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | 0.4 | 0.4 | 0.4 | 0.4 | 0.4 |
| - *տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 2.4 | 2.1 | 2.1 | 1.9 | 1.9 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 12,130.7 | 12,158.5 | 11,977.2 | 11,940.4 | *X* |
| - *հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | *0.6* | *0.5* | *0.5* | *0.4* | *X* |
| - *տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *3.1* | *2.8* | *2.5* | *2.2* | *X* |
| 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԼՂՀ-ին | 13,636.6 | 16,086.7 | 18,087.3 | 20,474.6 | 20,984.3 |
| - *հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | 0.6 | 0.7 | 0.7 | 0.7 | 0.7 |
| - *տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 3.3 | 3.3 | 3.5 | 3.5 | 3.5 |

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[13] | 2006 հաստատված պետական բյուջե[14] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 13,636.6 | 15,064.7 | 16,706.5 | 17,987.3 | X |
| - *հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | *0.6* | *0.7* | *0.7* | *0.7* | X |
| - *տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *3.5* | *3.4* | *3.4* | *3.4* | X |
| 5. ԱՅԼ | 37,633.5 | 9,282.3 | 11,026.5 | 11,065.4 | 23,343.5 |
| - *հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | 1.7 | 0.4 | 0.4 | 0.4 | 0.7 |
| - *տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | 9.0 | 1.9 | 2.1 | 1.9 | 3.8 |
| Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ | 10,145.9 | 12,200.5 | 11,615.7 | 11,612.3 | X |
| - *հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | *0.5* | *0.5* | *0.5* | *0.4* | X |
| - *տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *2.6* | *2.8* | *2.4* | *2.2* | X |

[13] *Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2005 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

[14] *Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2006 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

**Ü°ð¸Æð 1. ä»ï³Ï³Ý ³ç³ÏóáõÃÛáõÝÁ ï»Õ³Ï³Ý ÇÝùÝ³Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³Ï³ñ·ÇÝ**

1996 թվականին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո, մինչ օրս, այդ մարմինների գործունեության արդյունքները վկայում են, որ չնայած համակարգում ներկայումս առկա մի շարք լուրջ հիմնախնդիրներին, այն գործնականում կայացել է և ի վիճակի է ապահովել օրենքով իրեն վերապահված լիազորությունների կատարումը: Մասնավորապես դրա մասին է վկայում համայնքների բյուջեների կատարման ամփոփ ցուցանիշների` անցած վերջին 6 տարվա պատկերը, որը մի կողմից վկայում է համայնքների ֆինանսական հնարավորությունների շարունակական բարելավման, իսկ մյուս կողմից` պետության աջակցության ծավալների տարեց-տարի ընդլայնման մասին:

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|
| | փոփոխությունը նախորդ տարվա փաստացիի նկատմամբ | | | | | |
| Համայնքների բյուջեների սեփական եկամուտներ (առանց պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրված պաշտոնական տրանսֆերտների գումարների) | 0.2% | -3.8% | 8.3% | 37.5% | 11.9% | 9.1% |
| Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրված պաշտոնական տրանսֆերտներ | 136.9% | 31.0% | 76.6% | -22.3% | 32.1% | 39.9% |
| Համայնքների բյուջեների ծախսեր | 9.9% | 23.7% | 21.7% | 16.0% | 22.9% | 26.8% |

Հաշվի առնելով հանրապետության համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունը` տեղական ինքնակառավարման համակարգին պետական ֆինանսական աջակցության հիմնական նպատակն է ֆինանսապես օժանդակել համայնքների ներդաշնակ զարգացմանը: Նշված աջակցությունը մեծապես ցուցաբերվելու է ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրման եղանակով, ինչպես նաև, Համաշխարհային բանկի աջակցությամբ, ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից համայնքների ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման միջոցով:

Կշարունակվի Հայաստանի Հանրապետության օրենքներով համայնքների բյուջեների եկամուտների նվազման փոխհատուցումը պետական բյուջեից: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ միջոցներ կձեռնարկվեն համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության ճկունությունը բարձրացնելու ուղղությամբ:

2007-2009թթ ժամանակահատվածում նույնպես, ինչպես և նախկինում, պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալն էական կախվածության մեջ կլինի արտաքին հոսքերից:

**Աղյուսակ 4.13. Արտաքին աղբյուրներից 2005-2009 թթ ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական տրանսֆերտների) հաշվին ֆինանսավորվող ծախսերը**

| Ցուցանիշներ | 2005 փաստացի | 2006 հաստատված պետական բյուջե | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| **Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլրդ դրամ)** | **34.3** | **75.1** | **64.1** | **103.1** | **75.1** |
| *Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | *1.5* | *3.1* | *2.4* | *3.5* | *2.4* |
| *Տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *8.2* | *15.6* | *12.2* | *17.5* | *12.4* |
| **Նույնը ըստ 2006-2008թթ ՄԺԾԾ (մլն դրամ)** | **56,3** | **51,3** | **56.0** | **52.7** | **X** |
| *Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)* | *2.7* | *2.2* | *2.2* | *1.9* | *X* |
| *Տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում (%)* | *14.3* | *11.2* | *11.5* | *9.9* | *X* |

Այդ մասին է վկայում արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական տրանսֆերտների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին կանխատեսվող 2007-2009 թթ ծախսերի մեծ տեսակարար կշիռը (միջին տարեկան) բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում` 14.0% և ՀՆԱ-ի նկատմամբ` 2.7%:

## ՀՀ 2007-2009 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ` ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Դիտարկվող 2007-2009 թթ ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի հարաբերակցությու-

նը ՀՆԱ-ի նկատմամբ կտատանմի 19.5% -18.9%-ի միջակայքում: Նույն միտումը բնորոշ է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերին, որոնց հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կտատանմի համապատասխանաբար 14.2-13.6% և 4.5-5.2%: Համանման միտումներ կձևավորի կապիտալ (առանց զուտ վարկավորման) և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՝ 0.32-0.37:

**Աղյուսակ 4.14. 2005-2009 թթ ընթացիկ և կապիտալ ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները**

| Ցուցանիշներ | 2005 փաստացի[15] | 2006 պետական բյուջե[16] | 2007 ծրագիր | 2008 ծրագիր | 2009 ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, (մլն դրամ) | **417,505.9** | **482,193.9** | **524,191.3** | **588,912.0** | **607,545.4** |
| *այդ թվում`* | | | | | |
| - ընթացիկ ծախսեր, (մլն դրամ) | **329,134.9** | **332,157.7** | **381,540.8** | **413,902.6** | **435,862.6** |
| *%-ով` ՀՆԱ-ի նկատմամբ* | 14.7 | 13.8 | 14.2 | 14.1 | 13.6 |
| - կապիտալ ծախսեր, (մլն դրամ) | **75,262.1** | **132,990.3** | **122,070.4** | **152,256.1** | **150,613.0** |
| *%-ով` ՀՆԱ-ի նկատմամբ* | **3.4** | **5.5** | **4.5** | **5.2** | **4.7** |
| *Կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցու-թյունը* | 0.23 | 0.40 | 0.32 | 0.37 | 0.35 |
| - վարկավորում` հանած մարումը, (մլն դրամ) | **13,108.9** | **17,045.90** | **20,580.14** | **22,753.38** | **21,069.83** |
| *%-ով` ՀՆԱ-ի նկատմամբ* | **0.6** | **0.7** | **0.8** | **0.8** | **0.7** |
| Նույնը ըստ 2006-2008թթ ՄԺԾԾ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, (մլն դրամ) | 394,600.1 | 439,889.6 | 488,119.9 | 534,598.7 | X |
| *այդ թվում`* | | | | | |
| - ընթացիկ ծախսեր, (մլն դրամ) | 295,157.7 | 326,258.4 | 359,014.6 | 381,841.7 | X |
| *%-ով` ՀՆԱ-ի նկատմամբ* | *14.0* | *14.2* | *14.3* | *13.9* | *X* |
| - կապիտալ ծախսեր, (մլն դրամ) | 89,372.8 | 97,265.0 | 111,396.1 | 134,811.5 | X |
| *%-ով` ՀՆԱ-ի նկատմամբ* | *4.2* | *4.2* | *4.4* | *4.9* | X |
| *Կապիտալ և ընթացիկ ծախսերի հարաբերակցու-թյունը* | *0.303* | *0.298* | *0.310* | *0.353* | X |
| - վարկավորում` հանած մարումը, (մլն դրամ) | 10,069.6 | 16,366.2 | 17,709.17 | 17,945.5 | X |
| *%-ով` ՀՆԱ-ի նկատմամբ* | *0.5* | *0.7* | *0.7* | *0.7* | X |

[15] *Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2005 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

[16] *Աղյուսակի այս սյունակում «Նույնը ըստ ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ» և դրան հաջորդող երկու համապատասխան տողերում ներկայացված են ՀՀ 2006-2008թթ ՄԺԾԾ-ով 2006 թվականի համար նախատեսված ցուցանիշները*

2007-2009 թվականների ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 71.6 %-ը կկազմեն ընթացիկ ծախսերը (2006 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 68.9 %): 2007-2009 թվականներին ընթացիկ ծախսերի անվանական մեծությունների աճի միջին տարեկան տեմպը կապիտալ ծախսերի և վարկավորում` հանած մարումը ծախսերի աճի միջին տարեկանի տեմպին կգերազանցի 28.9 տոկոսային կետով:

Դիտարկվող ժամանակահատվածում **<u>ընթացիկ ծախսերի</u>** մեծ մասի կատարումը ուղղված կլինի պետական կարիքների համար ապրանքների և ծառայությունների գնումներին, բնակչությանը նպաստների և փոխհատուցումների վճարմանը, ՀՀ պետական ներքին և արտաքին պարտքի սպասարկմանը (տոկոսավճար), տնտեսության որոշ ճյուղերում բնակչությանը ջրամատակարարման, ոռոգման և փոխադրումների բնագավառում ծառայություններ մատուցող առանձին ընկերությունների սուբսիդավորմանը, պետական ավտոճանապարհների պահպանությանը և շահագործմանը, տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության տրամադրմանը և պետական կառավարման մարմինների աշխատակիցների աշխատանքի վարձատրությանը:

2007-2009 թվականների ընթացքում կանխատեսվող 424.9 մլրդ դրամ կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալի 55.8 %-ը (237.15 մլրդ դրամ) կֆինանսավորվի ներքին աղբյուրների հաշվին: Կապիտալ ծախսերի իրականացման գերակայությունները ինչպես և նախկինում լինելու են էներգետիկայի, ճանապարհային, տրանսպորտային, ջրային տնտեսության, գյուղատնտեսության և բնակշինարարության, դպրոցաշինության ու առողջապահության ոլորտները: Առանձնակի տեղ է տրվելու նաև միջազգային ֆինանսական կառույցներում (Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ, Բազմակողմ ներդրումների միջազգային գործակալություն, Առևտրի և զարգացման Սևծովյան բանկ, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ, Ասիական զարգացման բանկ) կապիտալում մասնակցության ապահովմանը (համաձայն այդ կառույցներին անդամակցելու համար Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների): Կապիտալ ծախսեր է նախատեսվում նաև իրականացնել ԱՄՆ կառավարության կողմից Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված ֆինանսական ռեսուրսների հաշվին տնտեսության առանձին ոլորտներում՝ մասնավորապես գյուղատնտեսության և տրանսպորտի ճյուղերում:

Դիտարկվող ժամանակահատվածում կանխատեսվող բյուջետային ծախսերի ընդհանուր ծավալում **<u>զուտ վարկավորման</u>** ծախսերի միջին տարեկան տեսակարար կշիռը կկազմի 3.7%: Վարկավորումը հիմնականում կրելու է արտաքին տնտեսական աջակցության բնույթ:

## ՀՀ 2007-2009 ԹԹ ՄԺԾԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ իրատեսականության տեսանկյունից կարևորվում են հարկաբյուջետային շրջանակի ծրագրային սցենարից հնարավոր շեղումները, որոնք ծրագրի կատարման վրա կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Հատկապես էական են բացասական հետևանքներ առաջացնող շեղումները, որոնք հանգեցնելու են ծախսերի ծրագրերում համապատասխան վերանայումներ (կրճատումներ) կատարելուն: Այս առումով ռիսկային գործոնների բացահայտումը և դրանց ազդեցության գնահատումը էապես կարող է որոշակիացնել ծրագրում կատարվելիք հնարավոր ճշգրտումների շրջանակները: Նման վերլուծությունն առավել կարևորվում է 2007 թվականի համար՝ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների շրջանակում անհրաժեշտության դեպքում տարեկան բյուջեի հիմքում դրվող կանխատեսումները համակարգված վերանայելիս:

### Ռիսկերի աղբյուրները

Ընդհանուր առմամբ կարելի է տարանջատել ռիսկերի հետևյալ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել ծրագրային ռեսուրսային փաթեթից բացասական շեղումների.

(i) ներքին ռեսուրսների գծով,

(ii) արտաքին օժանդակության գծով:

Ներքին ռեսուրսների մասով 2007-2009 թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է հիմնականում ապահովել հարկային եկամուտների հաշվին: Վերջիններիս հավաքագրումը մեծապես կախված կլինի մի կողմից հանրապետությունում տնտեսական միջավայրի վրա ներքին քաղաքական դաշտի զարգացումների և արտաքին գործոնների ազդեցության արդյունքներից, մյուս կողմից՝ հարկահավաքման բնագավառում ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք վարչարարական միջոցառումների իրականացման արդյունավետությունից:

<u>Ներքին քաղաքական դաշտի զարգացումների և արտաքին գործոնների ազդեցություն</u>. Ռիսկը կարող է առաջանալ ներքին քաղաքական լարվածության սրման կամ արտաքին գործոնների (արտաքին տնտեսական շուկաներում, ինչպես նաև երկրի սահմաններում իրավիճակի սրում) ազդեցության արդյունքում հանրապետությունում տնտեսական միջավայրի կտրուկ վատթարացման դեպքում և գնահատման չի ենթարկվում.

<u>Վարչարարական միջոցառումների իրականացում</u>. ՀՀ կառավարության նպատակաուղղվածությունը չհաշվառվող և չհարկվող տնտեսության ծավալների կրճատմանը միտված կոնկրետ քայլերի իրականացմանը էական ազդեցություն կունենա տնտեսական դաշտում տնտեսվարողների իրավունքների հավասարության և նրանց միջև հարկային բեռի առավել արդարացի բաշխման գործընթացի վրա, դրանով իսկ նպաստելով հարկային եկամուտների հավաքագրման բնագավառում իրավիճակի բարելավմանը և պետական բյուջե լրացուցիչ մուտքերի հավաքագրմանը: Այս դեպքում տնտեսության ստվերային հատվածի կրճատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման գրավականը հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների բարեհաջող ընթացքն է, որն ըստ նախորդ տարիների փաստացի տվյալների կարելի է համարել հուսալի:

<u>Արտաքին օժանդակության մասով</u> 2007-2009 թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել ինչպես պաշտոնական տրանսֆերտների, այնպես էլ վարկերի հաշվին:

<u>Պաշտոնական տրանսֆերտների և վարկերի մասով</u>. Այս դեպքում ծրագրային սցենարից հնարավոր շեղումները հիմնականում պայմանավորված կլինեն արտարժույթների փոխանակային կուրսերի՝ ծրագրային և փաստացի ցուցանիշների տարբերությամբ, իսկ առանձին դեպքերում՝ նաև ֆինանսական

միջոցների տրամադրման նախապայմանների կատարման աստիճանից:

**Հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը**

Ներքին ռեսուրսների մասով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակի հավաքագրումը ենթադրում է ծախսերի վերանայում՝ կրճատման ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային եկամուտները ամրագրված չեն որոշակի ծախսատեսակի կամ ծրագրի, ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ հիմք ընդունելով գերակայության սկզբունքը. այն է՝ առաջին հերթին կրճատվելու են այն ծախսատեսակների կամ ծրագրերի գծով ծախսերը, որոնք ունեն գերակայության ավելի ցածր աստիճան:

Արտաքին օժանդակության գծով մուտքերի թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման մոտեցումները լինելու են տարբեր՝ կախված արտաքին օժանդակության բնույթից: Այս առումով կարևոր հանգամանքներից է սպասվելիք արտաքին օժանդակության կառուցվածքն ըստ նշանակության: Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են ծրագրային (նպատակային) բնույթի պաշտոնական տրանսֆերտներն ու վարկերը (2007 թվականին՝ 89.4 %, 2008 և 2009 թվականներին՝ միջինը շուրջ 99.2 %):

**Աղյուսակ 4.15. Արտաքին օժանդակությունը՝ ըստ նշանակության (մլրդ դրամ)**

| Ցուցանիշներ | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|
| Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն | 6.8 | 0.7 | 0.7 |
| Պաշտոնական տրանսֆերտներ | 6.8 | 0.7 | 0.7 |
| Վարկեր | 0 | 0 | 0 |
| Ծրագրային (նպատակային) օժանդակություն | 57.3 | 102.4 | 74.4 |
| Պաշտոնական տրանսֆերտներ | 8.2 | 29.9 | 31.7 |
| Վարկեր | 49.1 | 72.5 | 42.7 |
| Ընդամենը արտաքին օժանդակություն | 64.1 | 103.1 | 75.1 |

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ ելնելով դրանց գերակայության աստիճանից, մինչդեռ ծրագրային (նպատակային) պաշտոնական տրանսֆերտների և վարկերի թերստացումը հանգեցնելու է այն ծրագրերի գծով մասհանումների կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրներին (մասնավորապես, ծրագրային վարկերի կառուցվածքում գերակշռում են սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների ոլորտներում Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող նպատակային ծրագրերը):

**Փոխհատուցման հնարավորությունները**

2007-2009 թթ ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի վրա դրական հետևանքներ կարելի է ակնկալել բարենպաստ մակրոտնտեսական զարգացումներից, որոնք կարող են որոշ չափով փոխհատուցել արտաքին օժանդակության և հարկային վարչարարության գծով գնահատվող հնարավոր «կորուստները»: 2007-2009թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մակրոտնտեսական զարգացման սցենարի կանխատեսումները կատարվել են 2006 թվականի սկզբներին: Տարվա ընթացքում նախատեսվածի դիմաց մակրոտնտեսական միջավայրի բարելավումը բարենպաստ պայմաններ կստեղծի լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրման համար:

# ՄԱՍ Բ

# ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

## ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2007-2009 ԹԹ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող փաստաթղթում ընդհանուր գծերով ներկայացվում են 2007-2009թթ ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ ոլորտների քաղաքականության գերակայությունները: Այս գերակայությունները բխում են ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարական գերակայությունների համատեքստից և պետք է ծառայեն որպես հիմք՝ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Ինչպես արդեն վերը նշվել էր ՀՀ կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները.

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

**Աղյուսակ 5.1. ՀՀ պետական բյուջեի ռեսուրսների և ծախսերի փաթեթում 2007-2009 թթ կանխատեսվող փոփոխությունները նախորդ տարվա համեմատությամբ (մլն դրամ)**

| Ցուցանիշներ | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|
| Հավելյալ բյուջետային ռեսուրսների կանխատեսվող բաշխումը 2007-2009 թթ՝ ըստ ոլորտների | 63,228.7 | 72,027.0 | 49,037.1 |
| *այդ թվում՝* | | | |
| 1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն | 12,160.9 | 8,344.7 | 16,876.3 |
| 2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր | 23,276.8 | 12,846.6 | 9,453.28 |
| 3. Տնտեսության ճյուղեր | 16,534.0 | 46,582.4 | 4,050.8 |
| 4. Պետական կառավարում | 3,674.9 | - | 4,378.82 |
| 5. . Աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիաները և ԱԺ ընդունված օրենքներով համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցումը) | 3,316.3 | 1,895.7 | 1,076.0 |

Ինչպես երևում է աղյուսակից, 2007-2009 թվականներին, նախորդ տարվա համեմատ, ստացվելիք լրացուցիչ մուտքերի 104.5 մլրդ դրամը կամ ընդհանուրի 56.7%-ը նախատեսվում է ուղղել սոցիալ-մշակութային ճյուղերի ու գիտության, ինչպես նաև տնտեսության ճյուղերի ֆինանսավորմանը, ընդ որում՝ սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը բաժին կհասնի լրացուցիչ մուտքերի ընդհանուր գումարի 20.3%-ը: Նշվածը վկայում է այն բանի մասին, որ 2007-2009 թթ նախատեսվում է զգալի ավելացնել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածությունը:

Սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը հատկացված հավելյալ միջոցների շուրջ 35.4%-ը

կտրամադրվի կրթության բնագավառին, շուրջ 16.0%-ը՝ սոցիալական ապահովության և ապահովագրության բնագավառին և 37.4%-ը՝ առողջապահությանը (հիմնականում առաջնային՝ ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժօգնությանը):

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության համակարգերի պահպանման և արտակարգ իրավիճակների համակարգի ծախսերին կուղղվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 24.7%-ը, որը պայմանավորված է վերոհիշյալ համակարգի մարմինների կենսագործունեության ապահովման համար համապատասխան միջոցների հատկացման անհրաժեշտությամբ:

Տնտեսության ճյուղերին 2007-2009 թվականներին կհատկացվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 36.4%-ը, ընդ որում՝ այդ գումարների գերակշիռ մասը՝ 66.8%-ը, կտրվի էներգետիկ համակարգին (նշված միջոցների աղբյուր են հանդիսանում արտաքին աղբյուրներից նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվելիք փոխառու միջոցները), 12.2%-ը՝ ճանապարհային տնտեսությանը, 19.1%-ը՝ գյուղատնտեսության ոլորտին, և 1.9 %-ը՝ տնտեսության այլ ճյուղերին:

Պետական կառավարման ոլորտին նախատեսվում է հատկացնել հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 4.4%-ը: Այդ միջոցներն ուղղվելու են քաղաքացիական ծառայության և դատական համակարգում իրականացվելիք բարեփոխումների գործընթացի ապահովմանը:

Տեղական ինքնակառավարման բնագավառին պետական աջակցության տեսքով 2007-2009 թվականներին նախատեսվում է հատկացնել հավելյալ միջոցների 3.4%-ը, հիմնականում համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և ՀՀ օրենքներով համայնքների բյուջեների եկամուտների նվազման փոխհատուցման նպատակով:

Ստորև ներկայացվում է 2007-2009 թթ կանխատեսվող պետական ծախսերի ընդհանուր պատկերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման խմբերի:

**Աղյուսակ 5.2. ՀՀ 2005-2009 թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ գործառական դասակարգման խմբերի**

(մլն դրամ)

| Գործառական դասակարգման խմբերի անվանումները | | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|---|
| | | փաստացի | հաստատված պետական բյուջե | ծրագիր | | |
| Ընդամենը ծախսեր | | 417,505.86 | 482,193.9 | 524,191.3 | 588,912.1 | 607,545.4 |
| | այդ թվում՝ | | | | | |
| 01 | Ընդհանուր բնույթի պետական ծառայություն | 44,211.91 | 48,851.4 | 53,787.1 | 56,044.3 | 54,466.8 |
| 02 | Պաշտպանություն | 64,414.0 | 74,125.56 | 94,795.0 | 103,562.5 | 111,590.0 |
| 03 | Հասարակական կարգի պահպանություն, ազգային անվտանգություն և դատական գործունեություն | 35,000.9 | 36,607.3 | 39,557.7 | 44,179.0 | 47,241.4 |
| 04 | Կրթություն և գիտություն | 60,827.46 | 82,283.2 | 86,232.9 | 91,511.8 | 97,369.7 |
| 05 | Առողջապահություն | 31,079.72 | 39,435.2 | 45,048.6 | 47,320.5 | 53,609.3 |
| 06 | Սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն | 44,145.9 | 55,869.87 | 57,984.8 | 58,851.6 | 62,203.8 |
| 07 | Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն | 10,407.6 | 13,597.67 | 14,683.1 | 12,406.9 | 14,184.1 |
| 08 | Բնակարանային-կոմունալ տնտեսություն | 22,702.7 | 24,561.35 | 21,782.7 | 19,955.6 | 11,216.3 |
| 09 | Վառելիքային և էներգետիկ համալիր | 3,623.5 | 4,778.2 | 18,342.9 | 49,654.1 | 30,716.9 |
| 10 | Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն | 13,180.2 | 19,727.2 | 21,497.6 | 32,633.3 | 31,227.0 |
| 11 | Արդյունաբերություն, հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), շինարարություն և բնապահպանություն | 4,778.3 | 5,790.97 | 6,378.1 | 4,807.4 | 2,566.0 |

| Գործառական դասակարգման խմբերի անվանումները | | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|---|
| | | փաստացի | հաստատված պետական բյուջե | ծրագիր | | |
| 12 | Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ | 21,050.2 | 41,541.3 | 22,961.1 | 27,132.3 | 31,229.0 |
| 13 | Տնտեսական այլ ծառայություններ | 2,950.0 | 3,682.57 | 4,530.8 | 5,734.8 | 7,033.5 |
| 14 | Հիմնական խմբին չդասվող ծախսեր | 59,133.3 | 31,342.0 | 36,608.9 | 35,118.1 | 52,891.5 |

Ինչպես երևում է աղյուսակից, քննարկվող ժամանակահատվածում, ինչպես և նախորդ տարիներին, պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ամենամեծ ծավալները բաժին են ընկնելու «Պաշտպանություն», «Կրթություն ու գիտություն» և «Սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն» խմբերին, համապատասխանաբար` 18.0 %-ը, 16.0 %-ը և 10.4 %-ը:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման վերը նշված և մնացած մի շարք այլ խմբերի 2007-2009 թթ պետական ծախսերի քաղաքականությունը ներկայացվում է հաջորդ գլուխներում:

## ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Պետական կառավարման մարմինների 2007-2009 թվականների ՄԺԾԾ-ի մշակման հիմքում դրվել են ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով և ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի N 777-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2006-2008 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանված՝ կառավարման մարմիններին վերաբերող դրույթները:

### 6.1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը վերջին տարիներին որդեգրել է հանրային կառավարման համակարգի արդյունավետության, ծառայությունների որակի և մատչելիության, թափանցիկության և հաշվետվելիության, վերահսկելիության բարձրացման ուղղությամբ բարեփոխումների նոր ռազմավարություն, որն իրականացվում է հետևյալ երեք ուղղություններով՝

(i) պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային բարեփոխումներ,

(ii) քաղաքացիական ծառայության ներդրում,

(iii)ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումներ:

***Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային բարեփոխումներ***

Պետական կառավարման համակարգի բնագավառում իրականացվող բարեփոխումների ընթացքում վերջին տարիներին ձեռք բերվեց շոշափելի առաջընթաց, որը նշանակալից էր առանձնապես վարչական վերակառուցման և քաղաքացիական ծառայության ներդրման բնագավառում:

Հայաստանի Հանրապետությունում սկսած 2002 թվականից իրականացվել և ներկայումս շարունակվում է պետական կառավարման համակարգի բարեփոխումների և պետական կառավարման առանձին մարմինների վերակազմակերպման գործընթացը, որի համար հիմք հանդիսացան «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները և այլ իրավական ակտերը: Նախարարությունները ներկայումս իրականացնում են իրենց բնագավառի քաղաքականության ձևավորման, մոնիտորինգի և համակարգման գործառույթները, իսկ ծառայությունների մատակարարման և ստուգումների իրավասությունները փոխանցվեցին ենթակա գործակալություններին և տեսչություններին, որը հանգեցրեց կրկնվող գործառույթների մի նշանակալից մասի վերացմանը:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումներում կարևորվում է նաև դատական համակարգի բարեփոխումների իրականացումը: Միջնաժամկետ ժամանակահատվածում շարունակվելու է դատական համակարգի ամրապնդման, դատական գործավարության գործընթացների բարելավման, դատավորների ու արդարադատության իրականացմանը մասնակցող անձանց մասնագիտական գիտելիքների և օրենսդրական դաշտի կատարելագործումը: Արդեն իսկ ՀՀ Սահմանադրությամբ վերախմբագրվել են մի

շարք դրույթներ՝ մասնավորապես կապված Վճռաբեկ դատարանի, Արդարադատության խորհրդի և Սահմանադրական դատարանի հետ՝ հստակեցնելով այդ մարմինների լիազորությունները: Բարեփոխումներ սկսեցին իրականացնել նաև քաղաքացիական ծառայության համակարգում:

**(ii) Քաղաքացիական ծառայության ներդրում,**

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և հարակից ենթաօրենսդրական իրավական ակտերի հիման վրա իրականացվեց քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման գործընթացը: Իրականացվելիք բարեփոխումների շնորհիվ քաղաքացիական ծառայողները տարանջատվել են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանցից և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներից, սահմանվել են քաղաքացիական ծառայության մուտքի և ծառայությունից ազատվելու հավասար պայմանները, ապահովվել են մասնագիտական առաջխաղացման հնարավորությունները, քաղաքացիական ծառայության կայունությունը, հրապարակայնությունը: Այդ ընթացքում հստակեցվեցին քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պատասխանատվության սահմանները և քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը: Նշված բնագավառում շարունակվում է իրականացվել բարեփոխումները և համակարգի կատարելագործումը, որտեղ առավել մեծ ուշադրության է արժանի քաղաքացիական ծառայության համակարգում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավումը և աշխատանքային առաջխաղացման շարունակական ընթացակարգերի կիրառումն ապահովող համապատասխան համակարգի և կարողությունների զարգացումը: Քաղաքացիական ծառայություն ներդրած հիմնարկներում որակյալ մասնագետներ ներգրավելու նպատակով նախատեսվում է բարեփոխումներ կատարել նաև քաղաքացիական ծառայության վարձատրության համակարգում, որի կատարելագործման նպատակով առաջին պլան է մղվում քաղաքացիական ծառայողների աշխատանքի կատարողականի գնահատման համակարգի ներդրման անհրաժեշտությունը: Այդ կապակցությամբ առաջիկայում նախատեսվում է քաղաքացիական ծառայողների պարգևատրման գործող համակարգը փոխարինել աշխատանքի խրախուսման նոր համակարգով և քաղաքացիական ծառայողների աշխատանքի խրախուսումը իրականացնել կատարողականի գնահատման հիման վրա:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների կարևորագույն ուղղություններից մեկը, որը նաև ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ծրագրի հիմնական միջոցառումներից է, պետական ծառայության համակարգում ներգրավված աշխատողների աշխատավարձերի բարձրացումն է, որն իրականացվում է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին», «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին», «Դատավորի կարգավիճակի մասին», «Դատախազության մասին», «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան:

***<u>Ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումները</u>*** միտված են եղել բյուջետային կառավարման արդյունավետության բարձրացմանը և միջնաժամկետ հեռանկարում իրականացվելու են հետևյալ հիմնական ուղղություններով.

(i) Բյուջեն սերտորեն շաղկապված է ՀՀ կառավարության միջին ժամկետ ռազմավարության հետ: Այս առումով, Կառավարության միջին ժամկետ ռազմավարության կարևորագույն փաստաթուղթը միջին ժամկետ ծախսերի ծրագիրն է, որտեղ արտացոլվում են մակրոտնտեսական, դրամավարկային, հարկաբյուջետային և պետական ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները: Հետևաբար, ՀՀ կառավարության

քաղաքականության և միջոցառումների առավելագույն հնարավոր ընդգրկումը միջին ժամկետ ծախսերի ծրագրում առավել իրատեսական կդարձնի նրա իրագործումը: Մյուս կողմից, այս գործընթացի շարունակականությունը և անընդհատությունը ապահովելու համար ՄԺԾԾ-ն ընդգրկված է բյուջետային գործընթացում և ամրագրվել է նաև օրենսդրորեն՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում:

(ii) Բյուջետային ողջ գործընթացի հրապարակայնության բարձրացում: Նշվածը կապահովվի առաջիկա տարիներին ՀՀ կառավարության կողմից հաստատվող ՄԺԾԾ-ն հասարակության համար մատչելի դարձնելու միջոցով՝ դրանով իսկ նախադրյալներ ստեղծելով պետական նշանակության հարցերի (որոնք իրենց արտացոլումը կարող են ստանալ նաև պետական բյուջեում) քննարկումներում քաղաքացիների և քաղաքացիական հասարակության մասնակցության համար:

(iii)Բյուջեի ընդգրկվածության մեծացում: Բյուջեն պետք է ներառի բոլոր կանխիկ և անկանխիկ պետական ֆինանսական հոսքերը, այդ թվում՝ արտաբյուջետային միջոցները և արտաքին ֆինանսավորման հետ կապված գործառնությունները: Այդ ուղղությամբ ՀՀ կառավարությունը ձգտում է առկա տեղեկատվության հիման վրա հնարավորինս կրճատել արտաբյուջետային շրջանառությունը, հաշվի առնելով ստացվող ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման առանձնահատկությունները:

(iv) Բյուջեի կատարման ընթացքում վերահսկողության ուժեղացում: Այստեղ կարևորվում է բոլոր նախարարությունների և գերատեսչությունների պատասխանատվության բարձրացումը իրենց հատկացված բյուջեների կատարման և դրանց հաշվետվությունների ժամանակին ներկայացման գործում: Այս առնչությամբ կբարձրացվի ԱԺ Վերահսկիչ պալատի դերը և նշանակությունը,, որը նաև հակակոռուպցիոն քաղաքականության կարևոր քայլ է: «Պետական հատվածի արդիականացման ծրագրի» բաղադրիչներից մեկը ԱԺ Վերահսկիչ պալատի ուժեղացումն է, որի հիմնական նպատակը վերահսկողության գործունեության արդյունավետության մեծացումն է:

(v) Բյուջեի կանխատեսելիության բարձրացում: Այս հարցում կարևոր նշանակություն ունի ոչ միայն բյուջեի կապը միջին ժամկետ ծախսերի ծրագրի հետ, այլև բյուջեի բոլոր ծրագրված ցուցանիշների գծով լիարժեք փաստացի կատարողականների ապահովումը, ինչպես նաև ծրագրային բյուջետավորման անցնելու համար օրենսդրական և մեթոդաբանական հիմքերի նախապատրաստման ապահովումը, որի գծով աշխատանքները ներկայումս ընթացքի մեջ են:

(vi) Բյուջեն պետք է նաև լինի պարզ և հստակ, մատչելի բոլոր օգտվողների համար, որը հնարավորություն կտա հասարակայնության լայն խավերին հսկողություն իրականացնել նրա կատարման նկատմամբ: Նշվածը կապահովվի ծրագրային բյուջետավորման անցնելու գործընթացի զարգացումներին համահունչ Ազգային ժողովին և հասարակությանը պետական բյուջեի նախագծի և ծրագրերի ներկայացման ձևերի կատարելագործմամբ, որի կապակցությամբ ՀՀ կառավարությունը նպատակաուղղված աշխատանքներ է իրականացնում:

## 6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 6.2.1. Նպատակները

ՀՀ պետական կառավարման համակարգին ուղղվող ծախսերի հիմնական նպատակը պետական ծառայողների կողմից հանրության համար առավել մատչելի, որակյալ և անաչառ ծառայությունների

մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: Դրանց շարքին կարելի է դասել պետական ծառայողների ֆինանսական և իրավական պաշտպանվածությունն ապահովող երաշխիքների արմատավորումը, ինչպես նաև պարբերաբար պարտադիր վերապատրաստման և ատեստավորման ընթացակարգերի ներդրումը, պետական կառավարման մարմինների տեխնիկական վերազինումը:

### 6.2.2. Գերակայությունները

Կառավարման ապարատում և դատական համակարգում բարեփոխումների իրականացման հաջողության հիմնական գրավականը և այդ ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն ուղղություններից է պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացումը:

Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր ուղղություններից է կառավարման մարմինների և նրանցում յուրաքանչյուր աշխատատեղի վերազինումը ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով:

### 6.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Պետական կառավարման համակարգում 2007-2009 թթ. իրականացվելիք ծախսերի կառուցվածքի և ծավալների վրա ազդեցություն ունեն հետևյալ գործոնները.

(i) քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև դատական համակարգի պաշտոնատար անձանց պաշտոնային դրույքաչափերի, քաղաքացիական ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափերի (2006 թ. 30.0 հազար դրամի նկատմամբ սահմանվել է համապատասխանաբար՝ 2007 թ. 35.5 հազար դրամ, 2008 թ. 35.5 հազար դրամ, 2009 թ. 40.0 հազար դրամ), հարկադիր կատարողների բազային պաշտոնային դրույքաչափերի (2006 թվականի 35.0 հազար դրամի նկատմամբ սահմանվել է համապատասխանաբար՝ 2007 թ. 42.0 հազար դրամ, 2008 թ. 42.0 հազար դրամ, 2009 թ. 47.0 հազար դրամ) բարձրացումը, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող վարձու աշխատողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձերի ավելացումը (2007թ. 20 % և 2009 թ. 20 %):

(ii) «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին», «Դատախազության մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջների ապահովումը:

(iii) պետական կառավարման մարմինների կենսագործունեության, ինչպես նաև տեխնիկական վերազինման նպատակով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման համար անհրաժեշտ միջոցների նախատեսումը:

(iv) ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգում նոր դեսպանատան բացման հետ կապված պահպանման ծախսերի նախատեսումը:

(v) ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն և վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշման և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի «Սակագներ հաստատելու մասին» N 404-Ն հրամանի պահանջներին համապատասխան պետական կառավարման մարմինների ծառայողական գործուղումների ծախսերի հատուցման և կապի ծառայությունների վճարների ավելացումը, ինչպես նաև «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ

օրենքի պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների կողմից վճարման կարգադրություններ արձակելու հիման վրա փոստային ծառայությունների գծով ծախսերի ավելացումը:

(vi) Կոմունալ ծառայությունների /գազի և ջրի/ սակագների ավելացման հետ կապված լրացուցիչ միջոցների նախատեսումը

## 6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական կառավարման համակարգի բնականոն գործունեության համար անհրաժեշտ պետական ֆինանսավորման ծավալների պահպանումը առաջնահերթ խնդիր է:

Պետական կառավարման մարմինների 2007-2009 թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի բաշխումն ըստ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ներկայացված է ստորև բերված գծանկարում:

**Գծանկար 6.3.1 Պետական կառավարման մարմինների 2007-2009 թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի բաշխումը՝ ըստ իշխանության մարմինների (%-ով ընդամենի նկատմամբ)**




Ծախսերը, 2006 թվականի համեմատությամբ, 2007 թվականին կաճեն 3.3 մլրդ դրամով, 2008 թվականին, 2007 թվականի համեմատությամբ՝ 0.9 մլրդ դրամով և 2009 թվականին, 2008 թվականի համեմատությամբ՝ 3.9 մլրդ դրամով:

Ծախսերի (անվանական արտահայտությամբ) աճը կզուգակցվի նաև ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցության փոփոխությամբ: Այսպես, 2006 թվականի համար ծրագրված մակարդակի դիմաց (ՀՆԱ 1.47 %) պետական կառավարման համակարգի համար պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2007-2009 ՄԺԾԾ ժամանակահատվածի համար կկազմեն համապատասխանաբար՝ ՀՆԱ-ի 1.44, 1.35 և 1.36 %-ը:

Նշված ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում կփոփոխվի հետևյալ կերպ՝ 2006 թվականի համար ծրագրավորված մակարդակի փոխարեն (7.3 %) պետական կառավարման համակարգի ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում 2007 թվականին կկազմի 7.4 %, 2008 թվականին՝ 6.7 % և 2009 թվականին՝ 7.2 %:

Ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, պետական կառավարման համակարգի ծախսերի կառուցվածքում գերակշռողը ընթացիկ ծախսերն են՝ կազմելով այդ համակարգի ծախսերի 2007-2009 թթ. ընդհանուր ծավալի 99.1 %-ը: Ընթացիկ ծախսերում գերակշռող մասը կազմում են աշխատավարձը և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները՝ 67.4 %:

2007 թվականին, 2006 թվականի համեմատ, աշխատավարձի ֆոնդը (վրաեկով) կավելանա շուրջ 3.3 մլրդ դրամով: Անը պայմանավորված է՝ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև դատական համակարգի պաշտոնատար անձանց պաշտոնային դրույքաչափերի բարձրացմամբ՝ 2007 թվականի հուլիսի 1-ից, քաղաքացիական ծառայողների աշխատավարձի հաշվարկման բազային պաշտոնային դրույքաչափի բարձրացմամբ՝ 2007 թ. համար ընդունվել է 35.5 հազար դրամ /ՀՀ 2006 թ. պետական բյուջեով սահմանված է 30.0 հազ. դրամ/, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային և մաքսային ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հարկադիր կատարողների բնականոն աճով և բազային պաշտոնային դրույքաչափի բարձրացմամբ՝ 2007 թ. համար ընդունվել է 42 հազար դրամ /ՀՀ 2006 թ. պետական բյուջեով սահմանված է 35.0 հազ. դրամ/, «Դատավորի կարգավիճակի մասին» և «Դատախազության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների և դատախազների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների ավելացմամբ, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող վարձու աշխատողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի 20 %-ի չափով ավելացմամբ:

2008 թվականին, 2007 թվականի համեմատ, աշխատավարձի ֆոնդը (վրաեկով) կավելանա շուրջ 1.5 մլրդ դրամով: Անը պայմանավորված է՝ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճով /բազային պաշտոնային դրույքաչափը պահպանվել է 2007 թ. մակարդակով՝ 35.5 հազար դրամ/, «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային և մաքսային ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հարկադիր կատարողների աշխատավարձի բնականոն աճով /բազային պաշտոնային դրույքաչափը պահպանվել է 2007 թ. մակարդակով՝ 42.0 հազար դրամ/, «Դատավորի կարգավիճակի մասին» և «Դատախազության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների և դատախազների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների ավելացմամբ, ինչպես նաև քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոն զբաղեցնող և դատական համակարգի պաշտոնատար անձանց նախորդ տարվա հուլիսի 1-ից սահմանված պաշտոնային դրույքաչափերը տարեկան կտրվածքով հաշվարկելու հետ:

2009 թվականին, 2008 թվականի համեմատ, աշխատավարձի ֆոնդը (վրաեկով) կավելանա շուրջ 3.1 մլրդ դրամով: Անը պայմանավորված է՝ քաղաքացիական ծառայողների աշխատավարձի հաշվարկման բազային պաշտոնային դրույքաչափի բարձրացմամբ՝ 2009 թ. համար ընդունվել է 40.0 հազար դրամ /ՀՀ 2008թ. պետական բյուջեով սահմանված է 35.5 հազ. դրամ/, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային և մաքսային ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հարկադիր կատարողների բնականոն աճով և բազային պաշտոնային դրույքաչափի բարձրացմամբ՝ 2009 թ. համար ընդունվել է 47 հազար դրամ /ՀՀ 2008 թ. պետական բյուջեով սահմանված է 42.0 հազ. դրամ/, «Դատավորի կարգավիճակի մասին» և

«Դատախազության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների և դատախազների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների ավելացմամբ, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող վարձու աշխատողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի 20 %-ի չափով ավելացմամբ:

**Գծանկար 6.3.2. Պետական կառավարման մարմինների 2007-2009 թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի բաշխումը**՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների խոշորացված խմբերի (%)




2007 թվականին Ազգային Ժողովի պատգամավորների ընտրությունների անցկացման համար նախատեսվել է 356.7 մլն դրամ:

2008 թվականին ՀՀ Նախագահի ընտրությունների անցկացման համար նախատեսվել է 371.9 մլն դրամ, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման համար՝ 329.5 մլն.դրամ:

# ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ 7.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթղթի հիմքում դրվել է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» կրթության ոլորտին վերաբերող դրույթները, 2006-2008 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2007-2008 թվականներին վերաբերող ցուցանիշները, ինչպես նաև կրթության ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության գործող համապատասխան օրենքները, կառավարության առանձին որոշումներն ու դրանցից բխող ծախսային առանձնահատկությունները :

### 7.1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանում շարունակում է պետական ու ազգային կարևորագույն խնդիր համարվել կրթության համակարգի պահպանումը, զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը: Որակյալ կրթության ապահովումը և դրա մատչելիության բարձրացումը միջին և երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի և աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է, ինչն ամրագրված է նաև «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»:

Կրթության համակարգի հետագա զարգացումը ՀՀ կառավարության կողմից դիտվում է որպես տնտեսության առաջընթացի առաջնային գերակայություն :

Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր : Այսպես, կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը (ներառյալ լրացուցիչ կրթության գծով ծախսերը) 2005 թվականին կազմել են ՀՆԱ-ի 2.53 %-ը՝ 2004 թվականի 2.33 %-ի դիմաց, իսկ 2006 թվականին՝ 3.23 % (Տես՝ աղյուսակ 7. 1-ը):

**Աղյուսակ 7.1. Հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի 2003-2006 թվականների պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ -ում**

| | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը կրթություն** | **1.96** | **2.33** | **2.53** | **3.23** |
| այդ թվում՝ | | | | |
| Հանրակրթական ծրագրեր | 1.54 | 1.95 | 2.13 | 2.75 |
| Մասնագիտական կրթական ծրագրեր | 0.37 | 0.33 | 0.31 | 0.36 |

**Ծանոթություն**. Հանրակրթական ծրագրերը ներառում են տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթությունը և հատուկ ընդհանուր կրթությունը: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթությունը, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթության ծրագրերը:

## ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2006 թվականին հանրապետությունում գործում են 1417 հանրակրթական դպրոցներ, որոնցում սովորում է 475499 աշակերտ՝ 2005 թվականի 488786-ի դիմաց: Դասարանների թիվը 2005 թվականի 22043-ի դիմաց 2006 թվականին կկազմի 21542, որում հաշվի է առնվել նաև 2006/2007 ուսումնական տարվանից 12-ամյա ուսուցման անցման հետ կապված դասարանների թվի 634-ով ավելացումը՝ պայմանավորված 2 տարիքային խմբի (6 և 6.5- 7 տարեկանների) առաջին դասարանների կոմպլեկտավորմամբ :

Վերջին տարիներին կառավարության կողմից կրթության ոլորտում իրականացված միջոցառումները (հանրակրթության կառավարման ապակենտրոնացում, հաստատությունների ինքնավարության աճ, անցում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի, աշխատուժի օգտագործման արդյունավետության բարելավում) ուղղված են համակարգի կառավարման ու բովանդակության բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու հանրակրթության որակի բարելավմանը: Բարելավվել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման :

Համակարգի բարեփոխման ուղղությամբ 2005-2006 թվականներին իրականացվել են մի շարք միջոցառումներ : Մասնավորապես՝

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 25-ի թիվ 444 որոշման, բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման նպատակով, 2005 թվականին ավարտվել է հանրակրթական բոլոր դպրոցների անցումը ֆինանսավորման նոր ձևի և խորհուրդներով կառավարման համակարգի: Ֆինանսավորման՝ ըստ աշակերտների թվի բանաձևով հաշվարկը չի կիրառվում ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի թիվ 773 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված՝ աշակերտների թվից անկախ ֆինանսավորվող հանրակրթական դպրոցների նկատմամբ, որոնց ֆինանսավորման չափը որոշվում է ըստ դասարան-կոմպլեկտների թվի :
- Հանրակրթության ոլորտում առաջնահերթ խնդիր համարելով ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը՝ պետությունը հետևողական իրականացնում է աշխատավարձերի բարձրացման քաղաքականությունը՝ այն դիտելով որպես կրթության որակի բարձրացման գրավական: Մասնավորապես, ուսուցիչների միջին ամսական աշխատավարձը 2005 թվականին բարձրացվել է 65.3 տոկոսով, 2006 թվականին՝ 16.1 տոկոսով՝ հասցնելով շուրջ 58.3 հազար դրամի՝ ապահովելով ուսուցիչների տարեկան աշխատավարձի հասցնումը մեկ շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի չափին :
- Տնօրենների և փոխտնօրենների միջին ամսական աշխատավարձը 2005 թվականին բարձրացվել է 65.3 տոկոսով, 2006 թվականին՝ 16.1 տոկոսով՝ հասցնելով 60.1 հազ. դրամի : Բարձրացվել են նաև հանրակրթական հաստատությունների ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատողների աշխատավարձերը, որի արդյունքում 2006 թվականին այն կհասցվի 21.2 հազ. դրամի:
- Դպրոցների ջեռուցման բարելավման նպատակով 2005-2006 թվականներին լրացուցիչ միջոցներ են նախատեսվել վառելիքի և ջեռուցման գծով՝ կապված նոր կաթսայատների շահագործման և հեղուկ վառելիքի գնի աճի հետ (2006 թվականի հաշվարկներում հեղուկ վառելիքի 1 լիտրի գինը հաշվարկվել է 320 դրամով՝ 2005 թվականի 200 դրամի դիմաց):
- 2005-2006 թվականներին միջոցներ են նախատեսվել ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները

մանկավարժական կադրերով համալրման, դպրոցների համակարգչային սարքավորումների պահպանման և ինտերնետային կապով ապահովման նպատակով:

➢ Շարունակվել են տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով ապահովումը, ինչպես նաև Ներքին սփյուռքի դպրոցների աշակերտներին դասագրքերով ապահովման աշխատանքները:

➢ Կրթության բնագավառի բովանդակային և կառուցվածքային բարեփոխումներն առաջ են բերել մանկավարժական կադրերի շարունակական վերապատրաստման, մասնագիտական որակի բարելավման անհրաժեշտություն, որի նպատակով նախատեսվում է տարեկան վերապատրաստվող ուսուցիչների թիվը հասցնել շուրջ 20 տոկոսի՝ միաժամանակ ապահովելով վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջան: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը շարունակաբար իրականացնում է նաև սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը :

➢ 2006 թվականին զգալի միջոցներ են նախատեսվել 12-ամյա կրթության անցումն ապահովող հանրակրթական ծրագրերի մշակման և տպագրման, ուսուցիչների համար մեթոդական ձեռնարկների տպագրման, հատուկ օժանդակ դպրոցների համար ծրագրերի մշակման նպատակով:

➢ Դպրոցների ջեռուցման համակարգերի և շենքային բարենպաստ պայմանների ապահովման նպատակով՝ 2005-2006 թվականներին զգալի միջոցներ են նախատեսվել կրթական օբյեկտների հիմնանորոգման և կապիտալ շինարարության ուղղությամբ: Միաժամանակ, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում շարունակվում են մի շարք համայնքների դպրոցների շենքերի վերանորոգման, դպրոցների սեփական կաթսայատների կառուցման, ինչպես նաև դպրոցները աշակերտական սեղան-նստարաններով ապահովման աշխատանքները:

➢ Գիշերօթիկ և հատուկ դպրոցների երեխաների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվը 2005 թվականին բարձրացվել է 20 տոկոսով, իսկ 2006 թվականին՝ 30 տոկոսով՝ կազմելով գիշերող սաների համար 783 դրամ, երթևեկների համար՝ 472 դրամ:

➢ 2006 թվականին կրկնակի անգամ բարձրացվել են նաև գրասենյակային, այլ ծախսերի, կապի ծառայությունների, այլ կոմունալ և այլ ծառայությունների ձեռքբերման գծով ծախսերը:

Իրականացվել են նաև մի շարք միջոցառումներ կրթության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝

• բարձրացվել է հանրակրթական դպրոցներում աշակերտ/ ուսուցչական դրույք և աշակերտ/ոչ ուսուցիչ հարաբերակցությունների մակարդակը, որը 2005 թվականին համապատասխանաբար կազմել է, 13.89 և 21.63՝ 2004 թվականի 13.1 և 19.7-ի դիմաց, իսկ 2006 թվականին վերջիններս կկազմեն 13.8 և 22.73 :

• Ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածության մակարդակը 2005 թվականին կազմել է շաբաթական 22 ժամ՝ 2004 թվականի 20 ժամի դիմաց (համեմատության կարգով նշենք, որ ՏՀԶԿ երկրներում նշված ցուցանիշը կազմում է շաբաթական 38 ժամ, իսկ ՀՀ պետական հատվածում՝ 40 ժամ):

• Դասարանների խտությունը 2004 թվականի 22.2-ի դիմաց 2005 թվականին կազմել է 22.3, իսկ 2006 թվականին 22.2, ինչը պայմանավորված է 2006/2007 ուսումնական տարվանից 12-ամյա ուսուցման անցման հետ (համաձայն միջնակարգ կրթության չափորոշիչների՝ այն պետք է կազմի 25-30 երեխա (ավագ դպրոցներում՝ 20-25)):

Հանրակրթության ներկա խնդիրներից է կրթության որակի բարձրացումը և արդի պահանջներին համապատասխանության ապահովումը: Այդ խնդրի լուծման համար 2004 թվականից «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի միջոցներով սկսվել են հանրակրթության բովանդակության նորացմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, ընդունվել է հանրակրթության պետական

կրթակարգը, որը սահմանում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների այն ծավալը և արժեքների համակարգը, որ պետք է ձևավորվի հանրակրթական դպրոցում, և որի նպատակներն են կրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային կրթական չափանիշներին կրթության համապատասխանեցումը, կրթության բնագավառում միասնական քաղաքականության իրականացման ապահովումը, մանկավարժական մեթոդների շարունակական կատարելագործումը, գնահատման չափանիշների, սկզբունքների և մեխանիզմների մշակումն ու բարելավումը և այլն:

ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Հանրակրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը» և «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը»: Մշակվել են հայոց լեզու, գրականություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա առարկաների նոր չափորոշիչները և ուսումնական ծրագրերի ընթացակարգերը, ընթացքի մեջ են բնագիտական և հասարակագիտական առարկաների նոր չափորոշիչների ուսումնական ծրագրերի մշակման աշխատանքները:

Գնահատման նոր համակարգի ներդրմանն է ուղղված «Սովորողների գնահատման հայեցակարգի» ընդունումը: Հայեցակարգով նախատեսվում է ներդնել գնահատման նոր համակարգ, որը կոչված է հանրակրթության համակարգում սովորողների ընթացիկ առաջադիմության և նրանց ուսումնառության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման գործընթացի բարեփոխմանը :

Մշակվել և ՀՀ Շիրակի մարզում փորձարկվել են դպրոցի ավարտական ու բուհական միասնական քննությունների թեստերի նմուշօրինակները և քննությունների անցկացման նոր ընթացակարգերը: Ընթանում են նաև դպրոցի սովորողների ընթացիկ ու ձևավորող գնահատման մեթոդաբանության և ուսումնական առարկաների ընթացիկ գնահատման թեստերի մշակման աշխատանքները:

2005 թվականին Հայաստանի 167 դպրոցներ համալրվել են համակարգչային սարքավորումներով: Ընթացքի մեջ է ևս 375 դպրոցի համակարգչային սարքավորումների տրամադրման գործընթացը:

Վարկային ծրագրերի շրջանակներում ՀՀ մարզերից ընտրվել է 52 դպրոց-կենտրոն, որոնցում արդեն ավարտված են ուսուցիչների վերապատրաստման համար նախատեսված դասասենյակների վերանորոգման աշխատանքները: Դպրոց-կենտրոնները 2006 թվականի ընթացքում կհամալրվեն անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով և համապատասխան գույքով: 2005 թվականին սկսվել են ուսուցման համակարգչային մեթոդների և գրագիտության ուղղությամբ ուսուցիչների վերապատրաստումները: 2005 թվականի ընթացքում շուրջ 2500 ուսուցիչ վերապատրաստվել են: Կրթակարգի և գնահատման նոր համակարգի ներդրման նպատակով ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպման գործընթացն արդեն սկսված է:

2005 թվականին սկսվել է դպրոցների տնօրենների վերապատրաստումների երկրորդ փուլը՝ բարեփոխումների նոր փուլին համապատասխան և հիմնական ուղղություններն ընդգրկող մոդուլներով: 2005 թվականի ընթացքում վերապատրաստվել են շուրջ 515 տնօրեն:

Ընթանում է հանրակրթական հաստատությունների օպտիմալացման արդյունքում աշխատանքից ազատված ուսուցիչների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրականացումը: 2005 թվականին Զբաղվածության տարածքային կենտրոնում գրանցվել է 2751 կրճատված ուսուցիչ, նրանցից 829-ը ստացել են լրացուցիչ դրամական վճար, 43-ը՝ տեղափոխման դրամաշնորհ, 490-ը ցանկություն են հայտնել ընդգրկվելու մասնագիտական ուսուցման ծրագրերում:

Վարկային ծրագրի շրջանակներում շարունակվում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործարկումը և նրա կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Վերջին երեք տարիներին վերաիմաստավորվել և նոր հիմքերի վրա են դրվել Հայաստան-Սփյուռք կրթական հարաբերությունները, որոնց զարգացմանը նպաստել են նախ՝ 2002 թվականի Հայաստան-

Սփյուռք երկրորդ համաժողովը, ապա նաև՝ 2004 թվականին անցկացված Համահայկական առաջին կրթական խորհրդաժողովը, որն իր շարունակությունը կունենա 2006 թվականին:

2005-2006 թվականներին շարունակվել են բուհերի անվճար համակարգ սփյուռքահայ դիմորդների ընդունելությունը՝ յուրաքանչյուր տարի ընդունելով 70-ական դիմորդների:

Սփյուռքի հետ համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում, որպես գլխավոր խնդիրների, հատուկ ուշադրություն է դարձվել՝

- հայության տարբեր հատվածների ընդհանրական, միևնույն նպատակները հետապնդող ազգային հնարավոր միասնական կրթական դաշտի ձևավորման,
- Սփյուռքի ինքնապահպանման մեխանիզմների ամրապնդման,
- Հայաստան-Սփյուռք կրթական բոլոր մակարդակներում հարաբերությունների աշխուժացման վրա (այդ թվում՝ համահայկական միջոցառումների անցկացման միջոցով):

Կարևորելով կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերը, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրացիայի խնդիրները, պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար՝ զարգացման շեղումները շտկելու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով: Պետական ռազմավարությունն այս բնագավառում ուղղված է մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները:

2005 ընդունվել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Ներառական կրթության հայեցակարգը», որի հիմնական նպատակն է ուրվագծել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպման և հատուկ կրթության բարեփոխման հիմնադրույթները:

***Արտադպրոցական կրթությունը,*** որպես աճող սերնդի դաստիարակության հիմնական օղակ, կոչված է իրականացնելու երեխաների նախասիրական և լրացուցիչ կրթական պահանջմունքները :

Տարեց-տարի ավելանում է նշված ծրագրերում ընդգրկված երեխաների թիվը, օգտագործվում են ինչպես պետական ֆինանսավորումը, այնպես էլ՝ վճարովի ծառայություններից առաջացած միջոցները:

Հանրապետության կրթական համակարգում ներկայումս գործում են 53 արտադպրոցական հիմնարկներ՝ մարզադպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական, տեխնիկական, բնապահպանական, գեղագիտական կենտրոններ, որոնցում ընդգրկված են շուրջ 26108 դպրոցականներ :

Դպրոցականների շրջանում վերջին տարիներին տարբեր մարզաձևերից պարբերաբար անցկացվող մարզական խաղերը (սպարտակիադաները) զգալի նպաստում են դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը, առողջ ապրելակերպի կենսագործմանը :

**Նախադպրոցական կրթության** զարգացումը, ինչպես ամրագրված է «Կրթության զարգացման պետական ծրագրում», ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես, գործունեության առաջնային ուղղություններն են օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

Նախադպրոցական կրթության համակարգի բարեփոխման և զարգացման շրջանակներում ընդունվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը, որը կոչված է կարգավորելու նախադպրոցական կրթության համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական

և ֆինանսական հիմքերը: Օրենքի գործառությամբ հստակեցվելու են պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները նախադպրոցական կրթության ոլորտում:

***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ***

Առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունում ***բարձրագույն մասնագիտական կրթության*** զարգացումները պայմանավորված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրվելով:

Եվրոպական միասնական կրթական համակարգին Հայաստանի բարձրագույն կրթության ինտեգրման ապահովման ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը և դիպլոմների ճանաչելիությունը ապահովելու նպատակով 2005 թվականին ստեղծվել է «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամը, որի նպատակն է ապահովել Հայաստանի մասնակցությունը ENIC/NARIC ցանցին:

Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ 2004/2005 ուսումնական տարվանից սկսած՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերով:

Մշակվել և հաստատվել են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր.

- «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ տալու կարգը հաստատելու մասին»,
- «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողներին պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին»,
- «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին»: Վերջինիս համաձայն՝ 2005/2006 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից կրեդիտային համակարգը կրթափորձի կարգով մասնակիորեն կկիրարկվի 6 պետական բուհերում:
- «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին», որի համաձայն՝ պետական բուհերում իրականացվել են խորհուրդների ձևավորման աշխատանքները և ընտրվել են խորհուրդների նախագահները: Ներկայումս իրականացվում են բուհերի ռեկտորների ընտրությունները:

Ավարտվել են աշխատանքները ՀՀ բուհերում ներդրված մասնագիտությունների չափորոշիչների մշակման և հաստատման ուղղությամբ: Իրականացվում է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների գործող ցանկի վերլուծություն՝ մասնագիտությունների խոշորացման, ինչպես նաև աշխատանքային շուկայի պահանջներին համապատասխանության տեսանկյունից: Հանրապետության բուհերում ներդրվել են մի շարք ժամանակակից նոր մասնագիտություններ, որոնք հիմքեր կստեղծեն գերակա ուղղությունների զարգացման համար:

Ներկայումս բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում է պետական բուհերում՝ անվճար և վճարովի հիմունքներով և ոչ պետական բուհերում՝ վճարովի հիմունքներով: Բարձրագույն

կրթությամբ մասնագետների պատրաստումը բուհերում իրականացվում է 19 ՀՀ պետական և դրանց 10 մասնաճյուղերում: Բուհերում մասնագետներ պատրաստվում են շուրջ 220 մասնագիտությունների գծով, ուսուցման առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով:

ՀՀ պետական բուհերում ներկայումս սովորում են 58.8 հազար ուսանողներ, որոնցից շուրջ 38 հազարը՝ վճարովի համակարգում, իսկ 65 ոչ պետական բուհերում՝ 22.8 հազար ուսանող: Ոչ պետական բուհերից 30-ը հավատարմագրված է ամբողջությամբ, իսկ 3-ը՝ առանձին մասնագիտություններով:

2006 թվականից ասպիրանտների կրթաթոշակները սահմանվել են ամսական 10.0 հազ. դրամ, իսկ հայագիտական մասնագիտությունների գծով ասպիրանտների կրթաթոշակը՝ 15.0 հազ. դրամ:

***Նախնական և միջին մասնագիտական կրթության*** համակարգի պահպանումը, զարգացումը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին և գերակայություններին վերջինիս համապատասխանեցումն իրականացվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարության» դրույթներին համապատասխան, որով սահմանվել են ՀՀ նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների ռազմավարական խնդիրները: Դրանք են՝

1. Բաց և ժողովրդավարական համակարգի ստեղծումը,
2. Կրթության շարունակականության ապահովումը,
3. Կրթական ծառայությունների մատուցման որակի բարձրացումը,
4. Հնտրությունների ապահովումը՝ ըստ անհատական կարողությունների, ըստ տնտեսության և աշխատանքի շուկայի կարիքների,
5. Ծախսերի արդյունավետության բարձրացումը,
6. ՄԿՈՒ տարբեր ձևերի ներառումը միասնական օրենսդրական շրջանակում,
7. Մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման և ղեկավարման ռացիոնալացումը,
8. Ինտեգրումը կրթության բնագավառի միջազգային զարգացումներին :

***Միջին մասնագիտական*** կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում, ինչպես նաև մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ առանձին կրթական ծրագրի ձևով: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավարտական ատեստավորումն անցած շրջանավարտներին շնորհվում է կրտսեր մասնագետի որակավորում:

***Նախնական մասնագիտական*** (արհեստագործական) կրթությունն իրականացվում է նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ արհեստագործական ուսումնարաններում, ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում: Այս կրթության նպատակը հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական՝ արհեստագործի որակավորմամբ կադրերի (որակյալ բանվորի կամ վարպետի) պատրաստումն է:

Ուսուցումը մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվում է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով: Ներկայումս հանրապետությունում գործող 74 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (քոլեջներում) և 27 արհեստագործական ուսումնարաններում անվճար սովորում են, համապատասխանաբար, 6536 և 4014 սովորողներ:

2006 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը, որոնք ներառում են արհեստագործական կրթության 102 մասնագիտություն՝ շուրջ 350 որակավորմամբ, և միջին մասնագիտական կրթության 352 մասնագիտություն, որից ներկայումս ուսուցանվում է շուրջ 100-ը:

2004 թվականից իրականացվող ԵՄ Տասիսի «Աջակցություն Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման միասնական համակարգի զարգացմանը» ծրագրի շրջանակներում մշակվել են «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008 թվականների գործողությունների պլանը», «Մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության և ռազմավարության մշակման ուղեցույցը», «Մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման կառավարման ձեռնարկը» : Վերանայվել և հաստատվել են նաև միջին մասնագիտական կրթության ուսուցանվող մասնագիտությունների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերն ըստ ուսումնական հաստատությունների:

Մասնագիտական կրթության ոլորտում զգալի միջոցներ են նախատեսվել աշխատավարձերի բարձրացման, այլ ծախսերի ավելացման, ինչպես նաև կրթական օբյեկտների հիմնանորոգման գծով : Այսպես`

- 2005-2006 թվականներին նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ուսուցում իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում աշխատավարձերը բարձրացվել են հանրակրթության համակարգում առաջարկվող աշխատավարձերի բարձրացումների ընդհանուր սկզբունք- ներով, իսկ մնացած միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մանկավարժական և վարչական աշխատողների միջին ամսական աշխատավարձերը 2006 թվականին հաշվարկվել են 30.0 հազ. դրամով :
- մեկ սանի հաշվով սննդի նորմատիվը 2005 թվականին բարձրացվել է 20 տոկոսով, իսկ 2006 թվականին` 30 տոկոսով` կազմելով գիշերող սաների համար 783 դրամ, երթևեկների համար` 472 դրամ :
- զգալի միջոցներ են նախատեսվել վառելիքի և ջեռուցման գծով` կապված նոր կաթսայատների շահագործման և հեղուկ վառելիքի գնի աճի հետ (2006 թվականի հաշվարկներում հեղուկ վառելիքի 1 լիտրի գինը հաշվարկվել է 320 դրամով` 2005 թվականի 200 դրամի դիմաց) :

### 7.1.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

## 2.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2007-2009 թվականների ժամանակահատվածում կրթության ոլորտում` համակարգի բարեփոխումների ուղղությամբ իրականացվող միջոցառումները նպատակ ունեն ապահովել «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով» կրթության ոլորտով նախատեսված հիմնական ցուցանիշների կատարումը : Այս ուղղությամբ իրականացվող միջոցառումները դիտվում են որպես կրթության որակի բարձրացման գրավական:

***ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ***

Հանրակրթության ոլորտում ծրագրային ժամանակահատվածում կշարունակվեն բարեփոխումները` ուղղված համակարգի գործունեության և կառավարման արդյունավետության բարձրացմանը, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործմանը , ոլորտի աշխատողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանը` հանրապետական, մարզային, համայնքային և դպրոցական մակարդակներում:

Որպես միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու առաջին քայլերից մեկը` 2006/2007

ուսումնական տարվանից անցում կկատարվի 12-ամյա կրթական համակարգի :

«Կրթության որակի և համապատասխանության» վարկային ծրագրի շրջանակներում, ըստ առանձին ծրագրային ուղղությունների, կիրականացվեն՝

- Հանրակրթության կրթակարգի, առարկայական ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի ներդրում, որի նպատակն է բարձրացնել հանրակրթության որակը՝ արդիականացնելով հանրակրթության բովանդակությունը և ներդնելով որակի վերահսկման ու գնահատման միասնական նոր համակարգ:
- Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրում հանրակրթության համակարգում, որի նպատակն է ՏՀՏ-ն ներդնել կրթության գործընթացում որպես ուսուցման և դասավանդման ժամանակակից միջոց՝ նպաստելով սովորողների առաջադիմության բարձրացմանը:

2007-2009 թվականների ընթացքում մոտ 600 դպրոցներում կհիմնվեն դպրոցական համակարգչային կենտրոններ՝ համալրված ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներով, և առնվազն 150 դպրոցներ կփոխկապակցվեն ինտերնետին և իրար: Բնագիտական, մաթեմատիկայի և ինֆորմատիկա, օտար լեզուներ առարկաների համար կստեղծվեն հայալեզու համակարգչային ուսումնական ծրագրեր, որոնք կօգտագործվեն այդ առարկաների դասավանդման գործընթացում:

- Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում, որի նպատակն է բարելավել ուսուցիչների մանկավարժական գիտելիքներն ու հմտությունները:

2007-2009 թվականների ընթացքում հանրակրթության հիմնական առարկաների մոտ 30000 ուսուցիչ կվերապատրաստվեն նոր առարկայական ծրագրերի և գնահատման համակարգի կիրառման ուղղությամբ, իսկ մոտ 8000 ուսուցիչ՝ ՏՀՏ-ի կիրառման ուղղությամբ:

- Հանրակրթության համակարգի կառավարում և արդյունավետության բարձրացում, որի նպատակն է՝

- շարունակել հանրակրթության ոլորտում բարեփոխումները,

- բարձրացնել հանրակրթական համակարգի գործունեության արդյունավետությունը և զարգացնել հանրակրթության ոլորտի կառավարիչների գիտելիքները, հմտությունները և կարողությունները՝ կենտրոնական, մարզային, համայնքային և դպրոցական մակարդակներում:

2007-2009 թվականներին կվերապատրաստվեն մոտ 800 դպրոցի տնօրեն:

Կընդլայնվի և կզարգանա Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը :

Կշարունակվեն օպտիմալացման արդյունքում կրճատված ուսուցիչներին տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերը :

Նախատեսվում է նաև՝

ա/ Մանկավարժական կադրերի առարկայական և մեթոդական վերապատրաստում տարեկան 20%-ի չափով: Դա ենթադրում է.

- հանրակրթական դպրոցների ուսուցիչների 1/5-րդ մասի վերապատրաստում,
- ուսուցիչներին հատկացվող մեթոդական նյութերի ավելացում,
- ինտերնետային կապի միջոցով վերապատրաստում անցած ուսուցիչների դպրոցների հետ հետադարձ կապի ապահովում,
- ուսուցման նոր մեթոդների, նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում :

բ/ Կրթության բովանդակային սպասարկում և նորմատիվ դաշտի բարելավում, որը ենթադրում է.

- ուսումնական պլանների, ծրագրերի, չափորոշիչների, ձեռնարկների վերամշակում և փորձարկում,
- սփյուռքի հայկական դպրոցների համար ուսումնական ծրագրերի և ձեռնարկների մշակում,
- ուսուցման արդյունքների գնահատման նյութերի պատրաստում, փորձարկում և ներդրում,

- կրթության բնագավառը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի մշակում:

գ/ Մարզերում մեթոդական վերապատրաստումների ապահովում, ուսումնական նյութերի տեղայնացում, սփյուռքահայ դպրոցների բովանդակային և մեթոդական սպասարկում:

Աշխատանքներ կծավալվեն նաև համայնքային և ծնողական լայն հասարակությանը դպրոցի կառավարման և զարգացման գործընթացին մասնակից դարձնելու ուղղությամբ:

Ներկայումս ինչպես հանրակրթության համակարգը, այնպես էլ նրա անբաժանելի մաս կազմող ***հատուկ կրթության*** համակարգը գտնվում է բարեփոխումների փուլում: Հատուկ հաստատությունների բարեփոխումները ընթանում են համաձայն «Երեխաների իրավունքների մասին», «Կրթության մասին» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, արժևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները:

Բարեփոխման ծրագիրը հիմնված է 2 հիմնարար սկզբունքների վրա՝ կրթության մատչելիություն և որակ: Հատուկ կրթությունը ենթադրում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հավասար պայմանների ստեղծումը և կարիքին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն տալը:

Հատուկ դպրոցների մի մասը՝ 11 դպրոց, կախված աշակերտական համակազմից և դպրոցի հզորություններից, կվերակազմավորվեն հանրակրթականի: ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող 3 հատուկ դպրոցները կընդլայնեն իրենց գործունեության շրջանակները որպես գիտամեթոդական կենտրոններ և ուսումնա-կրթական բազաներ: Մեկ հատուկ հանրակրթական հաստատություն կվերակազմակերպվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքների գնահատման կենտրոնի:

Հանրակրթական դպրոցներում աստիճանաբար կներդրվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման ներառական համակարգը (ներկայումս նման մոդել փորձարկվում է Երևանի 6 դպրոցներում), կիրականացվի «Ներառական մոդել դպրոցների հզորացման ծրագիրը» : Հետագայում հանրապետությունում կստեղծվի ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանց:

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից մշակված և ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 593 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագիրը» հիմք է ընդունվել 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի կրթական հաստատությունների ուսումնական շենքերով ապահովվածության և դրանց հիմնանորոգման անհրաժեշտության վերաբերյալ հաշվարկների համար:

Ուսումնական գույքի մասով առավել առաջնային է մնում դպրոցներն աշակերտական սեղան-նստարաններով ապահովելու հարցը:

Նախատեսվում է շարունակել գազով աշխատող կաթսայատների կառուցումը:

2007-2009 թվականներին կշարունակվի Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը : Կշարունակվեն նաև Սփյուռքի հայկական դպրոցներին դասագրքերով ապահովման աշխատանքները, կստեղծվի հայ գրականությունից ուսումնական ձեռնարկ Սփյուռքի համար :

***Արտադպրոցական դաստիարակության ոլորտում*** միջնաժամկետ ժամանակահատվածում կշարունակվեն արտադպրոցական համակարգի և մարզառազմական ոլորտի բարեփոխումները :

Մասնավորապես նախատեսվում է իրականացնել՝

- արտադպրոցական կրթական հիմնարկների տարբեր տեսակների զարգացում, կրթության բովանդակության բարելավում,
- ըստ հետաքրքրությունների սովորողների պահանջարկի բավարարում, լրացուցիչ ծառայությունների ոլորտի ընդլայնում,
- չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի և ուսուցիչների ձեռնարկների մշակում,
- ուսումնական հաստատությունները ուսումնական գույքի մասով առավել առաջնային համարվող մարզագույքով ապահովում, ինչպես նաև նախնական զինվորական պատրաստության կաբինետների և զենքի պահպանման սենյակների վերազինում,
- հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման դասաժամերի ավելացում (շաբաթական 3 ժամ՝ նախկին 2 ժամի փոխարեն),
- գեղագիտական, գեղարվեստական, բնապահպանական, տուրիստական, տեխնիկական տարաբնույթ ծրագրերի և միջոցառումների իրականացում:

Առաջիկա տարիներին պետական միջոցները կուղղվեն այս համակարգի հաստատությունների նյութատեխնիկական բազայի ուժեղացմանը, դրանով իսկ նախադրյալներ ստեղծելով հետագա զարգացման համար:

***<u>ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</u>***

Թեև միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում միջին մասնագիտական և բարձրագույն կրթության բնագավառները դիտվում են նպատակների երկրորդ մակարդակում, այդուհանդերձ, տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների պայմաններում այս ոլորտների բարեփոխումները և զարգացումները միջնաժամկետ ծրագրի շրջանակներում ևս կարևորվում են:

Մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են շուկայական տնտեսությանը համապատասխանության ապահովումը, որակի բարձրացումը և միջազգային չափանիշներին համադրելիությունը, մատչելիության և հավասարության բարձրացումը:

Առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մասնագիտական կրթության զարգացումները պայմանավորված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրվելով:

Հաշվի առնելով եվրոպական բարձրագույն կրթական տարածքին միանալու անհրաժեշտությունը, սահմանվում են ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների հետևյալ ռազմավարական նպատակները.

- Ապահովել Հայաստանի բարձրագույն կրթության որակավորման աստիճանների և դիպլոմների ճանաչելիությունը եվրոպական բարձրագույն կրթական տարածքում և դրանց համեմատելիությունը եվրոպական համապատասխան բուհական որակավորումների և դիպլոմների հետ.
- Ապահովել Հայաստանի մասնակցությունը ENIC/NARIC ցանցին և Լիսաբոնի կոնվենցիայի հիմնական դրույթների իրականացումը:
- Համապատասխանեցնել ՀՀ բուհական դիպլոմների հավելվածը (Diploma Supplement) եվրոպական մշակված ստանդարտին:
- Իրականացնել ծրագրային նորացման գործընթաց ՀՀ պետական բուհերում, նպատակ ունենալով մերձեցնելու ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը եվրոպական ստանդարտներին:
- Ստեղծել բարձրագույն կրթության արտասահմանյան որակավորումների ճանաչման ազգային գրասենյակ (տեղեկատվական կենտրոն) :

- ՀՀ բուհերում ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգ, որը համադրելի կլինի կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգին (ECTS) /ՀՀ կառավարության կողմից ընդունված «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ որոշման համաձայն՝ 2006/20007 ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսվելու է ուսման կազմակերպման կրեդիտային համակարգի ներդրման գործընթացը, և ըստ բուհերի, կրթական ծրագրերի և մասնագիտությունների կազմվելու է ժամանակացույց՝ կրեդիտային համակարգին փուլային անցման համար/:
- Զևակերպել բարձրագույն կրթության որակավորման աստիճաններին ներկայացվող պահանջները կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի ECTS միավորների տեսքով, ձևավորել անհրաժեշտ տեղեկատվական փաթեթ և մեթոդական նյութեր:
- Մշակել կրթական օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտ փաթեթ՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ հայաստանյան ուսանողների անարգել միջբուհական տեղափոխումների և միջազգային շարժունության համար:
- Մշակել միջոցառումներ ուսանողական շարժունությանն ուղղորդված եվրոհամայնքի ծրագրերում ՀՀ բուհերի ուսանողների ընդլայնված մասնակցության համար:
- Միանալ եվրոպական համագործակցության ծրագրերին բարձրագույն կրթության որակի արժևորման և հավատարմագրման ասպարեզում:
- Համապատասխանեցնել հավատարմագրման առկա չափանիշներն ու մեխանիզմները հավատարմագրման համաեվրոպական պլատֆորմի շրջանակներում ձևավորվող եվրոպական ստանդարտներին:
- Կանոնակարգել ՀՀ պետական բուհերի մագիստրատուրա ընդունելության և մագիստրոսի որակավորման աստիճանի շնորհման պայմանները:
- Զարգացնել համագործակցություն որակի գնահատման եվրոպական ցանցի (ENQA) հետ, ստեղծել հիմքեր՝ հետագայում ցանցին անդամակցելու համար:

Ներկայումս վերափոխման անհրաժեշտություն ունեն նաև բարձրագույն կրթության ֆինանսավորման սկզբունքներն ու մեխանիզմները: 2005 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ տալու և ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողներին պետական կրթաթոշակ տալու կարգերը: Ուսանողական նպաստի ձևով պետությունը լրիվ կամ մասնակի փոխհատուցում է օրենքով նախատեսված անձանց (ուսանողների), սոցիալապես անապահով ուսանողների, պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված, ինչպես նաև ընդունելության քննությունների արդյունքում առավել բարձր միավորներով ընդունված ուսանողների ուսման վճարը: Պետական կրթաթոշակը ուսանողներին տրվելու է ուսման առաջադիմության և հասարակական ակտիվության հաշվառմամբ:

Սոցիալապես անապահով խավերի մուտքը բարձրագույն կրթության համակարգ հեշտացնելու խնդիրը նպատակահարմար է լուծել ուսանողական վարկեր տրամադրող կառույցների ստեղծմամբ: Ուսանողական վարկերի գաղափարն ամրագրված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում և «Բարձրագույն կրթության ռազմավարության» ծրագրում: Նշված խնդիրը նպատակահարմար է լուծել քայլ առ քայլ:

Միջին և նախնական մասնագիտական կրթության ոլորտի հիմնական նպատակներն են լինելու հասարակական կյանքի տարբեր բնագավառների համար, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ՀՀ աշխատանքային շուկայի արդի պահանջների բավարարմանը նպատակաուղղված կրտսեր մասնագետների և արհեստագործների պատրաստումը, անհատի մասնագիտական կրթության, նրա

հոգևոր ու ֆիզիկական զարգացման պահանջմունքների բավարարումը:

Նախնական և միջին մասնագիտական կրթության ժողովրդավարական և արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով ակնկալվում է`

- ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը, նրանց կարողությունների և հմտությունների կայացմանն ուղղված համակարգի արդյունավետությունը՝ մասնագիտական կրթական չափորոշիչների մշակման, օրենսդրական և նորմատիվային համապատասխան դաշտի մշակման ու ներդրման ճանապարհով:
- ապահովել մրցունակությունը աշխատաշուկայում՝ նոր մասնագիտությունների ներդրման, դրանց նյութատեխնիկական և ուսումնամեթոդական ապահովման, դասախոսների և ղեկավար աշխատողների վերապատրաստման ու որակավորման բարձրացման ճանապարհով,
- բոլորի համար ապահովել հաջողության հասնելու հնարավորություններ ողջ կյանքի ընթացքում՝ հենվելով սովորողների անհատական կարողությունների և տնտեսության ու աշխատաշուկայի պահանջների համապատասխանեցման վրա՝ օրենսդրական և նորմատիվային համապատասխան դաշտի մշակման ու ներդրման ճանապարհով:

Արդյունքում նախատեսվում է ունենալ.

- միջին և նախնական մասնագիտական կրթության բաց և ժողովրդավարական համակարգ,
- ուսումնական հաստատությունների ռացիոնալ համակարգ,
- աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթություն և ուսուցում, կրթական ծառայությունների մատուցման բարձր որակ,
- ծախսերի կատարման մեծ արդյունավետություն, սոցիալական գործընկերության ապահովում,
- ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկություն,
- կրթության բնագավառի միջազգային զարգացումներին ինտեգրում,
- ողջ կյանքի ընթացքում ուսուցման և շարունակական կրթության հնարավորության ապահովում:

Պետությունը հատուկ ուշադրություն է դարձնելու նաև լրացուցիչ կրթությանն ու վերապատրաստման ծրագրերին՝ նպատակ ունենալով մեղմել աշխատուժի հնարավորությունների (առաջարկի) և աշխատանքի շուկայի պահանջների միջև առկա ճեղքվածքը: Այս նպատակին է ուղղված 2006 թվականին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Մեծահասակների կրթության հայեցակարգը և ռազմավարությունը», համաձայն որի Հայաստանում մեծահասակների կրթության ռազմավարությունը պետք է նպատակաուղղված լինի ապահովելու և ընդլայնելու ցանկացած տարիքի ՀՀ քաղաքացիների մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը, մշակելու նոր ուսումնական նյութեր և վերապատրաստման դասընթացներ, օժանդակելու դասավանդման նոր մեթոդների ներդրմանը, բարձրացնելու մասնագիտական կրթության արդյունավետությունը և աշխատաշուկայի հետ կապը :

## 2.2 ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթության բնագավառի զարգացումը ՀՀ կառավարության կողմից դիտվում է որպես տնտեսության առաջընթացի առաջնային գերակայություն, այդ իսկ պատճառով կպահպանվի կրթության ոլորտի գերակա վիճակը 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի ողջ ժամանակահատվածում :

***ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ***

Ինչպես նշված է նաև «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում» կրթության ոլորտի հիմնական գերակայություն է համարվում տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր

կրթությունը՝ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Նախորդ տարիների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով ամրագրված հանրակրթության գերակա վիճակը պահպանվել է նաև 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով :

Հանրակրթության ոլորտի հիմնական գերակայություն են շարունակում մնալ՝

- կրթության բովանդակային բարեփոխումը, նորմատիվ դաշտի բարելավումը,
- աշխատավարձերի բարձրացումը,
- մանկավարժական կադրերի վերապատրաստումների իրականացումը, մեթոդական սպասարկումը,
- վերապատրաստումների իրականացումը մարզերում,
- 12-ամյա կրթության և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցումն ապահովող նյութերի և նորմատիվային փաստաթղթերի մշակումն ու ներդրումը:

Չնայած դպրոցների շենքային պայմանների բարելավման նպատակով ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումներին, այնուամենայնիվ առաջնային են մնում կրթական հաստատությունների ուսումնական շենքերով ապահովվածության, դրանց հիմնանորոգման, շենքերի պահպանության, շահագործման, կոմունալ-կենցաղային և ուսումնանյութական բազայի համալրման,կաքսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման աշխատանքների շարունակական իրականացումը :

Հանրակրթության ոլորտում շարունակում է գերակայություն մնալ նաև հանրակրթության անբաժանելի մաս կազմող ***հատուկ կրթության համակարգը***, որի բարեփոխումների ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և բոլոր օրենքները, այդ թվում նաև «Կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքները իրավունք են տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներին իրենց երեխայի համար ընտրել դպրոցի տիպ՝ հանրակրթական կամ հատուկ հանրակրթական: Ելնելով երեխայի սոցիալիզացիայի խնդրից նպատակահարմար է երեխայի կրթությունը կազմակերպել հանրակրթական դպրոցում: Մյուս կողմից՝ հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթություն կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ կայուն հատուկ կրթության համակարգ, որը տվյալ երեխայի համար կմշակի և կառաջարկի ուսումնական ծրագրեր և մեթոդներ:

Հաշվի առնելով այս գործոնները, առաջիկա տարիներին ևս կրթության բնագավառում պետության հիմնական գերակայություն է հանդիսանալու հանրակրթության ոլորտը, որին էլ կուղղվեն կրթության բնագավառին նախատեսվող պետական հատկացումների գերակշիռ մասը (Տես՝ Աղյուսակ N 7. 2):

Հատուկ ուշադրություն է պահանջում Սփյուռքի հայկական դպրոցները դասագրքերով ապահովման խնդիրը: Այն հանդիսանում է Հայաստան-Սփյուռք քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը:

Սփյուռքի դպրոցները դասագրքերով ապահովելու հարցը շատ է կարևորվում Սփյուռքի կողմից և հանդիսանում է կրթօջախների գոյատևման, աճող սերնդի ազգային ինքնագիտակցության ձևավորման և հայկական պետականության նկատմամբ կողմնորոշվածության հիմնական միջոցներից մեկը:

***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ***

Թեև ծրագրային ժամանակահատվածում կրթության ոլորտի ծախսերի գերակշիռ մասն ուղղվելու է հանրակրթության ոլորտ, այդուհանդերձ տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների պայմաններում հատուկ կարևորություն են ստանում մասնագիտական և վերապատրաստման ծրագրերի որակի բարձրացումը և համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում կարևորվում են միջին մասնագիտական, բարձրագույն և լրացուցիչ կրթության ծրագրերի բարեփոխումների խնդիրները, որոնք հնարավորություն կտան իրականացնել աշխատանքի շուկայի պահանջներին համապատասխան վերապատրաստում՝ հատուկ մեխանիզմներ նախատեսելով երկարաժամկետ գործազրկության մեջ գտնվողների ներգրավման և վերապատրաստման համար:

Հաշվի առնելով մասնագիտական կրթության համակարգի արտակարգ կարևորությունը երկրի ապագա արդյունավետ զարգացման համար, դրա համալիր բարեփոխումները դառնում են հույժ կարևոր և անհետաձգելի:

Կարևորելով մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) դերը՝ սահմանվել է համակարգի զարգացման միջնաժամկետ ծրագրի հետևյալ գերակայությունները.

- Մասնագիտական կրթության և ուսուցման՝ կարողությունների վրա հիմնված չափորոշիչների ներդրում.
- Որակի մոնիտորինգի մեխանիզմների արդիականացում.
- Տեխնիկական աջակցության և որակի երաշխավորման ենթակառուցվածքի ստեղծում.
- Ծախսերի արդյունավետության և կրթական արդյունքների (ելքերի) բարելավում.
- Մասնագիտական կրթության ուսուցման արդիականացման իրականացման ու մոնիտորինգի ազգային կարողությունների զարգացում :

Հանրակրթության և մասնագիտական ծրագրերի ծախսերի կառուցվածքը՝ ըստ կրթական տարբեր մակարդակների, ներկայացված է Գծանկար 7.1. -ում:

**Գծանկար 7.1. Կրթության բնագավառում պետական ծախսերը 2004-2009 թթ.՝ ըստ կրթական մակարդակների (%՝բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)**




***Ծանոթություն.*** Հանրակրթական ծրագրերը ներառում են տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր և հատուկ ընդհանուր կրթությունը: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ու

լրացուցիչ կրթության ծրագրերը:

**Աղյուսակ 7.2. Կրթության բնագավառի 2006-2009 թվականների պետական ծախսերը 2006-2008 թվականների և 2007-2009թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով**

| Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի անվանումները | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հաստատ-ված բյուջե | 2006-08թթ. ՄԺԾԾ | 2006-08թթ. ՄԺԾԾ | 2007-09թթ. ՄԺԾԾ | 2006-08թթ. ՄԺԾԾ | 2007-09թթ. ՄԺԾԾ | 2007-09թթ. ՄԺԾԾ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | **77477.4** | **65975.9** | **75293.9** | **81081.8** | **90447.9** | **85636.9** | **90818.9** |
| **այդ թվում`** | | | | | | | |
| Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում | 396.2 | 269.4 | 303.4 | 433.9 | 353.2 | 448.8 | 502.3 |
| Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն | 61737.3 | 52927.7 | 61676.1 | 64868.0 | 76177.0 | 67719.1 | 71168.1 |
| Հատուկ ընդհանուր կրթություն | 4335.0 | 4187.9 | 4423.9 | 4981.8 | 4833.8 | 5301.0 | 5574.5 |
| Արտադպրոցական դաստիարակություն | 2477.1 | 884.0 | 884.0 | 1259.1 | 884.0 | 1326.3 | 1449.2 |
| Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն | 1014.5 | 986.7 | 1261.0 | 1435.2 | 1405.8 | 1829.3 | 2204.3 |
| Միջին մասնագիտական կրթություն | 1827.6 | 1567.7 | 1592.7 | 2142.5 | 1640.1 | 2464.5 | 2794.6 |
| Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն | 5302.4 | 4572.8 | 4562.5 | 5538.2 | 4557.5 | 6110.2 | 6645.9 |
| Լրացուցիչ կրթություն | 387.3 | 579.7 | 590.3 | 423.1 | 596.5 | 437.7 | 480.1 |

Թեև ինչպես 2006-2008 թվականների, այնպես էլ 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով կրթության բնագավառի հիմնական գերակայությունը հանրակրթության ոլորտն է, և ծախսերի հիմնական ուղղությունները երկու ՄԺԾ ծրագրերով փոփոխությունների չեն ենթարկվել, այնուամենայնիվ 2007-2009 թվականների ՄԺԾԾ-ով նախատեսված 2007 թվականի ծախսերը 2006-2008 ՄԺԾԾ-ի նկատմամբ աճել են՝ պայմանավորված հետևյալով.

- ուսուցիչների աշխատավարձը մեկ շնչին ընկնող տարեկան ՀՆԱ-ի չափին հասցնելու հետ կապված, այն 2006-2008 թվականների ՄԺԾԾ-ով 2007 թվականի համար նախատեսված 9.2 տոկոսով բարձրացման փոխարեն՝ 2007-2009 թվականների ՄԺԾԾ-ով 2007 թվականին բարձրացվել է 19.57 տոկոսով (բարձրացումների նույն մոտեցումը կիրառվել է նաև վարչական աշխատողների աշխատավարձերի նկատմամբ),
- 2007-2009 թվականների ՄԺԾԾ-ով բարձրացվել են արտադպրոցական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական, լրացուցիչ կրթական հաստատությունների աշխատողների աշխատավարձերը՝ միաժամանակ ապահովելով 2007-2009 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձերը՝ համապատասխանաբար ըստ տարիների 20.0 ; 25. 0 և 30.0 հազար դրամ :
- լրացուցիչ միջոցներ են նախատեսվել 2006/2007 ուսումնական տարվանից 12-ամյա կրթական համակարգի անցման հետ կապված,
- 2007-2009 թվականներին լրացուցիչ միջոցներ են նախատեսվել նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում՝ անվճար ընդունելության տեղերի՝ 1000-ով ավելացման հետ կապված,
- զգալի միջոցներ են նախատեսվել՝ սննդամթերքի ձեռքբերման գծով (2007 թվականին սննդի հաշվարկային նորմատիվը բարձրացվել է 20 տոկոսով), կոմունալ ծառայությունների գծով՝ սակագների փոփոխություններով պայմանավորված, գործուղումների և ծառայողական ուղևորությունների, սեփական կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման, կրթական օբյեկտների հիմնանորոգման գծով և այլն:

## 2.3 ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

***ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ***

2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվող կրթության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որը հնարավորություն կտա ապահովելու նշված ոլորտում «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով» նախատեսված հիմնական ցուցանիշների կատարումը, ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների իրականացումը, ինչպես նաև համակարգի արդյունավետության բարձրացման և հանրակրթության ռացիոնալացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների շարունակումը:

Մասնավորապես 2007-2009 թվականներին նախատեսվում է`

- բարձրացնել ուսուցիչների միջին ամսական աշխատավարձը` 2007 թվականին 19.57 տոկոսով և հասցնել շուրջ 69.7 հազ. դրամի` 2006 թվականի 58.3 հազ. դրամի դիմաց, 2008 և 2009 թվականներին` համապատասխանաբար ըստ տարիների, 9.18 և 8.67 տոկոսներով` հասցնելով 2008 թվականին 76.0 հազ. դրամի, 2009 թվականին` 82.5 հազ. դրամի:
- բարձրացնել վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը 2007 թվականին 19.57 տոկոսով և հասցնել 71.8 հազ. դրամի` 2006 թվականի 60.1 հազ. դրամի դիմաց, իսկ 2008 և 2009 թվականներին այն 1.5 անգամ կգերազանցի մանկավարժների 2008 և 2009 թվականների միջին ամսական աշխատավարձը` կազմելով ըստ տարիների 115.3 և 125.3 հազ. դրամ: Ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը 2007-2009 թվականներին նախատեսվում է բարձրացնել 9.18 տոկոսով` միաժամանակ ապահովելով 2008 թվականի համար 25.0 հազ. դրամ, իսկ 2009 թվականի համար` 30.0 հազ. դրամ հանրապետությունում նվազագույն աշխատավարձը :
- 2006/07 ուսումնական տարվանից, 12-ամյա ուսուցման անցման հետ կապված, 2007-2009 թվականներին յուրաքանչյուր տարվա համար հաշվի է առնվել դասարանների թվի 634-ով ավելացումը, որը պայմանավորված է 2006 թվականի սեպտեմբերից 2 տարիքային խմբի (6 և 6.5-7 տարեկանների) առաջին դասարանների կոմպլեկտավորմամբ:
- Հանրապետությունում գործող հանրակրթական այն դպրոցների համար, որտեղ միջինը 8 առարկաների գծով ժամերի թիվը 1 դրույքից պակաս է, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով լրացուցիչ նախատեսել տարեկան 161.3 մլն դրամ:
- 12-ամյա ուսուցման անցման հետ կապված` նախատեսել միջոցներ ուսումնական ձեռնարկների, ծրագրերի, չափորոշիչների մշակման գծով :
- Ապահովել տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով:
- Նախատեսել միջոցներ հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար, որի նպատակով 2007-2009 թվականներին, ըստ տարիների, նախատեսվել է 90.0 մլն դրամ :
- Նախատեսել միջոցներ հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման նպատակով` ըստ տարիների 304.3 մլն դրամի չափով : Հանրակրթական դպրոցների համակարգչային սարքավորումների պահպանումը կիրականացվի հանրապետության 330 դպրոցների համար, իսկ ինտերնետային կապով կապահովվեն 480 դպրոցներ :

- ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով շարունակել ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները:
- 2007-2009 թվականներին 20%-ով բարձրացնել հատուկ դպրոցներում սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվը, որը գիշերող սաների համար կկազմի 940 դրամ, երթևեկների համար՝ 566 դրամ, 2006 թվականի համապատասխան 783 և 472 դրամի դիմաց:
- Կրկնակի անգամ բարձրացնել գործուղումների և ծառայողական ուղևորությունների գծով ծախսերը, լրացուցիչ միջոցներ նախատեսել կոմունալ ծառայությունների գծով՝ կապված սակագների փոփոխության հետ :
- Նախատեսել միջոցներ կրթական հաստատությունների հիմնանորոգման գծով :
- Շարունակել սեփական կաթսայատներով ջեռուցման համակարգի ներդնումը (համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 593 որոշման), և լրացուցիչ միջոցներ նախատեսել վառելիքի և ջեռուցման ծախսերի գծով, կապված սեփական կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման հետ:
- Ապահովել դպրոցներն աշակերտական գույքով :

Վերոնշյալ խնդիրների իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է շարունակել կրթական համակարգի ռացիոնալացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, որոնք ուղղված են լինելու կրթության ոլորտում մարդկային և ֆիզիկական կապիտալի ավելի արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Հանրակրթության ոլորտում արդյունավետության բարձրացման ուղղությամբ 2007-2009 թվականներին կիրականացվեն ներքոնշյալ միջոցառումները.

- աշակերտ/ուսուցչական դրույք և աշակերտ/ ոչ ուսուցիչ հարաբերակցությունները 2009 թվականին կհասցվեն, համապատասխանաբար, 14.44 և 23.75՝ 2007 թվականի 14.04 և 23.33-ի դիմաց :
- 2007-2009 թվականներին դասարանների միջին խտությունն ըստ տարիների կլինի 21.8՝ պայմանավորված 12-ամյա ուսուցման անցման հետ :
- դպրոցներում սահմանել աշակերտների օպտիմալ թվաքանակ՝ ապահովելով ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 24-ի N 1236 և 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 2047-Ն որոշումների կատարումը /թերհամալրված դասարանների վերահամալրում, խիստ թերհամալրված դասարանների դեպքում՝ երկու, երեք դասարանների համախմբում/, պահպանելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 և 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1937-Ն որոշումներով սահմանված սկզբունքները :
- կրթական չափորոշիչների փոփոխություն, ուսուցման նոր մեթոդների ներդրում, ուսումնական նոր նյութերի անհրաժեշտություն, որոնց հետ կապված կավելանան ուսուցիչներին հատկացվող նոր նյութերի ստեղծման և ծառայությունների իրականացման ծախսերը :

## *ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ*

2007-2009 թվականներին մասնագիտական կրթության ոլորտի ծախսերը հիմնականում պայմանավորված են հետևյալ գործոններով.

- 2007-2009 թվականներին աշխատավարձերի բարձրացմամբ, որը նախնական մասնագիտական և հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ուսուցում իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվել է հանրակրթության համակարգում

առաջարկվող աշխատավարձերի բարձրացումների ընդհանուր սկզբունքներով, իսկ մնացած միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մանկավարժական և վարչական աշխատողների միջին ամսական աշխատավարձերը 2007 թվականին բարձրացվել են 20 տոկոսով՝ այն հասցնելով 36.0 հազ. դրամի : Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի, ինչպես նաև բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթական հաստատություններում աշխատողների միջին ամսական աշխատավարձերը 2007 թվականին բարձրացվել են 20 տոկոսով՝ միաժամանակ ապահովելով հանրապետությունում 2007-2009 թվականներին, համա-պատասխանաբար ըստ տարիների, 20.0 ; 25.0 և 30.0 հազ. դրամ նվազագույն աշխատավարձը:

- արհեստագործական ուսումնական հաստատություններում 2007-2009 թվականներին անվճար ընդունելության տեղերի թվի 1000-ով ավելացմամբ և նոր ուսումնարանների բացմամբ;
- 2007 թվականին մեկ սանի հաշվով սննդի հաշվարկային նորմատիվի 20 տոկոսով բարձրացմամբ ;
- կոմունալ ծառայությունների գծով ծախսերի ավելացմամբ՝ պայմանավորված սակագների փոփոխություններով :

### 7.1.3 ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Կրթության բնագավառի պետական ֆինանսավորման ծավալների աճը և վիճակի բարելավումը դիտվելու է որպես առաջնահերթ խնդիր նաև ՀՀ 2007-2009 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ողջ ժամանակահատվածում:

2007-2009 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով կրթության ոլորտի գծով (ներառյալ կառավարման ապարատի, հիմնանորոգման, վարկային ծրագրի և ՀՍՆՀ-ի գծով ծախսերը) նախատեսվել են ծախսեր՝ 2007 թվականին 81081.8 մլն, 2008 թվականին՝ 85636.9 մլն և 2009 թվականին՝ 90818.9 մլն դրամի չափով: Ծախսերի աճը նախորդ տարիների նկատմամբ կկազմի՝ 2007 թվականին 4.7 տոկոս, 2008 թվականին՝ 5.6 տոկոս, 2009 թվականին՝ 6.1 տոկոս:

2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2007 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 3.01 %-ը, 2008 թվականին՝ 2.91 %-ը և 2009 թվականին՝ 2.84 %-ը:

**Գծանկար 7. 2. Պետական բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշները կրթության բնագավառում**



Աղյուսակ 7. 3. Կրթության ոլորտի պետական ծախսերը 2005-2009 թվականներին՝ ըստ ուղղությունների

(մլն դրամ)

| ենթախմբերի անվանումը | 2005 պետ. բյուջե փաստ | 2006 հաստատ-ված պետ. բյուջե | ըստ 2007-2009 թթ. ՄԺԾԾ-ի | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2007 | 2008 | 2009 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝** | **56702.5** | **77477.4** | **81081.8** | **85636.9** | **90818.9** |
| **Կրթության և գիտության բնագավառում պետական կառավարում** | 249.4 | 396.2 | 433.9 | 448.8 | 502.3 |
| Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն | 44383.0 | 61737.3 | 64868.0 | 67719.1 | 71168.1 |
| Հատուկ ընդհանուր կրթություն | 3468.2 | 4335.0 | 4981.8 | 5301.0 | 5574.5 |
| Արտադպրոցական դաստիարակություն | 1537.7 | 2477.1 | 1259.1 | 1326.3 | 1449.2 |
| **Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն** | 669.4 | 1014.5 | 1435.2 | 1829.3 | 2204.3 |
| Միջին մասնագիտական կրթություն | 1439.3 | 1827.6 | 2142.5 | 2464.5 | 2794.6 |
| Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն | 4318.2 | 5302.4 | 5538.2 | 6110.2 | 6645.9 |
| Լրացուցիչ կրթություն | 637.3 | 387.3 | 423.1 | 437.7 | 480.1 |
| | *փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %* | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **36.6** | **4.7** | **5.6** | **6.1** |
| **Կրթության և գիտության բնագավառում պետական կառավարում** | | 58.8 | 9.5 | 3.4 | 11.9 |
| Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն | | 39.1 | 5.1 | 4.4 | 5.1 |
| Հատուկ ընդհանուր կրթություն | | 25.0 | 14.9 | 6.4 | 5.2 |
| Արտադպրոցական դաստիարակություն | | 61.1 | - 49.2 | 5.3 | 9.3 |
| **Նախնական մասնագիտական արհեստագործական) կրթություն** | | 51.6 | 41.5 | 27.5 | 20.5 |
| Միջին մասնագիտական կրթություն | | 27.0 | 17.2 | 15.0 | 13.4 |
| Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն | | 22.8 | 4.4 | 10.3 | 8.8 |
| Լրացուցիչ կրթություն | | -39.2 | 9.2 | 3.5 | 9.7 |

Աղյուսակ 7.4 Կրթության բնագավառում պետական ծախսերի կառուցվածքը 2005-2009 թվականներին՝ ըստ մակարդակների (%՝ բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)

| ենթախմբերի անվանումը | 2005 թ. | 2006 թ. | 2007 թ. | 2008 թ. | 2009 թ. |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Կրթության և գիտության բնագավառում պետական կառավարում | 0.44 | 0.51 | 0.54 | 0.52 | 0.55 |
| Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն | 78.27 | 79.68 | 80.0 | 79.08 | 78.36 |
| Հատուկ ընդհանուր կրթություն | 6.12 | 5.6 | 6.14 | 6.19 | 6.14 |
| Արտադպրոցական դաստիարակություն | 2.71 | 3.2 | 1.55 | 1.55 | 1.60 |
| Նախնական մասնագիտական (արհեստագործական) | 1.18 | 1.31 | 1.77 | 2.14 | 2.43 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| կրթություն | | | | | |
| Միջին մասնագիտական կրթություն | 2.54 | 2.36 | 2.64 | 2.88 | 3.08 |
| Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն | 7.62 | 6.84 | 6.83 | 7.13 | 7.32 |
| Լրացուցիչ կրթություն | 1.12 | 0.50 | 0.52 | 0.51 | 0.53 |

Ծրագրային ժամանակահատվածի վերջում, կրթության ոլորտի ծախսերի կառուցվածքում ընթացիկ ծախսերին բաժին կընկնի ընդհանուր մասհանումների 81.1 %-ը, իսկ կապիտալ ծախսերին՝ 18.9 %-ը: Ընթացիկ ծախսերում գերակշռող մասը կազմում են աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները:

**Գծանկար 7.3. Կրթության ոլորտի 2006-2009 թվականների պետական ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների (%՝ բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)**




**Աղյուսակ 7. 5 Կրթության ոլորտի պետական ծախսերը 2007-2009 թվականներին՝ ըստ գոյություն ունեցող և նոր ծրագրերի (հազ. դրամներով)**

| | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|
| Գոյություն ունեցող պարտավորությունների ընդհանուր ծախսերը | 81076720.9 | 85636901.9 | 90818908.8 |
| Նոր նախաձեռնությունների ընդհանուր ծախսերը | 5100.0 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 81081820.9 | 85636901.9 | 90818908.8 |

**Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն**

Ծրագրային ժամանակահատվածում կրթության ոլորտի պետական ծախսերի ավելացումները գրեթե ամբողջությամբ ուղղվելու են հանրակրթության ոլորտ:

2007 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության գծով ծախսերը 2006 թվականի նկատմամբ կաճեն 5.1 %-ով և կկազմեն 64868.0 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 80.0 %-ը: 2008 թվականին այս ենթախմբի ծախսերը 2007 թվականի նկատմամբ կաճեն 4.4 %-ով և կկազմեն 67719.1 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 79.08 %-ը, իսկ 2009 թվականին՝ 2008 թվականի նկատմամբ ծախսերը կաճեն 5.1 % -ով՝ կազմելով 71168.1 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի78.36 %-ը:

Հանրակրթության ոլորտում պետական ծախսերի ծրագրվող աճը կհանգեցնի մեկ աշակերտի հաշվով կատարվող ծախսերի զգալի ավելացման: Ձարգացումների ներկայացվող սցենարի պարագայում, 2009 թվականին մեկ աշակերտի հաշվով ծախսերը 2006 թվականի համապատասխան ցուցանիշի համեմատ կաճեն 27.8 տոկոսով: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ մեկ աշակերտի հաշվով ծախսերի նման վարքագիծը մասամբ պայմանավորված է նաև բնակչության ժողովրդագրական կառուցվածքում կանխատեսվող

փոփոխություններով:

**Աղյուսակ 7.6. Մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերը հանրակրթության ոլորտում**

| | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| Ինդեքս (2006թ. = 100 ) | 100.0 | 106.0 | 115.9 | 127.8 |
| Յուշագրային հոդվածներ | | | | |
| Աշակերտների թվաքանակը (2006թ. = 100) | 100.0 | 99.1 | 94.6 | 90.2 |
| Պետական ծախսերը հանրակրթության ոլորտում (2006թ. = 100) | 100.0 | 105.1 | 109.7 | 115.3 |

Հանրակրթության ոլորտում առաջնահերթ խնդիրներից են ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը և վերապատրաստումը: Այս ուղղությամբ իրականացվող միջոցառումները դիտվում են որպես կրթության որակի բարձրացման գրավական: Պետությունը շարունակելու է աշխատավարձերի բարձրացման քաղաքականությունը:

Հանրակրթության գծով 2007-2009 թվականներին նախատեսված միջոցները հնարավորություն կտան ուսուցիչների տարեկան աշխատավարձի չափը մոտավորապես պահել մեկ շնչին ընկնող տարեկան ՀՆԱ-ի չափով: Աշխատավարձերի բարձրացումները կնպաստեն հանրակրթական դպրոցները որակյալ մասնագետներով համալրելու գործընթացին. այդ խնդիրներն ավելի սուր են դրված գյուղական բնակավայրերում և սահմանամերձ շրջաններում, որոնք լինելու են իշխանությունների ուշադրության կենտրոնում: Բարձրացումների արդյունքում ուսուցիչների միջին ամսական աշխատավարձը 2007 թվականին կհասցվի շուրջ 69.7 հազ. դրամի՝ 2006 թվականի 58.3 հազ. դրամի դիմաց, 2008 թվականին՝ 76.0 հազ. դրամի; 2009 թվականին՝ 82.5 հազ. դրամի:

2007-2009 թվականներին զգալի կբարձրացվի նաև հանրակրթական հաստատությունների վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը, որն ըստ տարիների կհասցվի 71.8 ; 115.3 և 125.3 հազ. դրամի : Կբարձրացվի նաև ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը՝ ապահովելով հանրապետությունում 2008 թվականին 25.0 հազ. դրամ և 2009 թվականին 30.0 հազ. դրամ նվազագույն աշխատավարձը :

Ծրագրային ժամանակահատվածում աշխատավարձերի նման քաղաքականության արդյունքում աշխատավարձին ուղղվող միջոցները կկազմեն հանրակրթության ոլորտում ընթացիկ ծախսերի մոտ 90.4 %-ը :

Պետությունը շարունակելու է տարրական դասարանների աշակերտներին դասագրքերով ապահովելու քաղաքականությունը: 2006/2007 ուսումնական տարվանից 12-ամյա ուսուցման անցման հետ կապված՝ միջոցներ կնախատեսվեն նաև ուսումնական ձեռնարկների, ծրագրերի, չափորոշիչների մշակման գծով :

Դպրոցների շենքերի վերակառուցումը և ջեռուցման հետ կապված հարցերը ևս գտնվելու են առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում: Մասնավորապես, ջեռուցման համակարգերի անհամապատասխանությունը և շենքային ոչ բարենպաստ պայմանները խաթարում են կրթական գործընթացի անընդհատությունը՝ հանգեցնելով որակի զգալի կորուստների: Ուստի կապիտալ ծախսերն առաջնահերթ կարգով կուղղվեն դպրոցների ջեռուցման խնդիրների լուծմանը, սանհանգույցների և տանիքների վերանորոգմանը, ապակեպատմանը, հիդրոմեկուսացման և ջրահեռացման միջոցառումների իրականացմանը:

Զգալի միջոցներ են նախատեսվել կոմունալ ծառայությունների գծով՝ կապված սակագների փոփոխությունների, ինչպես նաև դպրոցների ջեռուցումը կաթսայատների միջոցով կազմակերպելու հետ, գործուղումների և ծառայողական ուղևորությունների գծով՝ ծախսերի կրկնակի բարձրացմամբ պայմանավորված:

Միևնույն ժամանակ, հատուկ ուշադրություն է դարձվելու հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

Մասնավորապես, կարևորվում են դպրոցները ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով համալրելու խնդիրները : Այս նպատակով նախատեսվող գումարները կուղղվեն դպրոցները տեխնիկական սարքավորումներով վերազինման, ցանցի հիմնական ենթակառույցի շահագործման ապահովման, դպրոցներում Ինտերնետ կապի տեղադրման, սպասարկման, Ինտերնետ համակարգչային կենտրոնների հիմնման ու այլ աշխատանքների իրականացմանը :

Հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավո-րումների պահպանման գծով 2007-2009 թվականներին ըստ տարիների նախատեսվել է 304.3 մլն դրամ: Հանրակրթական դպրոցների համակարգչային սարքավորումների պահպանումը կիրականացվի հանրապետության 330 դպրոցների համար, իսկ ինտերնետային կապով կապահովվեն 480 դպրոցներ :

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով կշարունակվեն ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները, որի համար ըստ տարիների նախատեսվել է համապատասխանաբար 86.3 ; 83.2 և 83.2 մլն դրամ: Նշված գումարները նախատեսվել են 400 գործուղվող մանկավարժների հաշվով՝ 2006 թվականի 196-ի դիմաց: Նախատեսվում է նաև ուսուցիչների վերապատրաստման մասով իրականացվող ծառայությունների ընդլայնում ՀՀ մարզերում, սահմանամերձ տարածքներում, ԼՂՀ-ում :

2007 թվականին 5.1 մլն դրամ է նախատեսվել «ՀՀ էկոլոգիական կրթության ռազմավարական ծրագրի» գծով :

Դպրոցները ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով համալրելու խնդիրների լուծման ուղղությամբ նշանակալի կլինի արտաքին աղբյուրներից ակնկալվող ծրագրային օժանդակությունը:

<u>**ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ**</u>

«Կրթության որակի և համապատասխանության» վարկային ծրագրի նպատակն է բարձրացնել հանրակրթության որակը՝ արդիականացնելով հանրակրթության բովանդակությունը և ներդնելով որակի վերահսկման ու գնահատման միասնական համակարգ, ներդնել տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաները (ՏՀՏ) հանրակրթության բնագավառում, բարելավել ուսուցիչների մանկավարժական գիտելիքները, շարունակել բարեփոխումները հանրակրթության ոլորտում:

Ծրագրի շրջանակներում 2007-2008 թվականների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

**<u>Հանրակրթության պետական չափորոշիչների և հենքային ուսումնական պլանի համալիր փաստաթղթի (Հանրակրթության պետական կրթակարգ) և գնահատման նոր համակարգի ստեղծում,</u>** որի շրջանակներում կմշակվեն և գործածության մեջ կդրվեն հանրակրթության հիմնական առարկաների ծրագրերը և սովորողների գիտելիքների գնահատման նոր համակարգը: Կգործի «Գնահատման և թեստավորման կենտրոնը», որը կիրականացնի դպրոցի ավարտական և բուհերի ընդունելության քննությունները՝ աշխարհի առաջավոր փորձի կիրառմամբ:

**<u>Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների մշակում և ներդրում դպրոցներում,</u>** որի շրջանակներում 2007-08 թվականների ընթացքում մոտ 600 դպրոցներում կհիմնվեն դպրոցական համակարգչային կենտրոններ և մոտ 150 դպրոցներ կմիացվեն համադպրոցական միասնական ցանցին և կստանան ինտերնետային կապ:

**<u>Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում,</u>** որի շրջանակներում հանրակրթության

հիմնական առարկաների մոտ 30000 ուսուցիչներ կվերապատրաստվեն նոր առարկայական ծրագրերի և գնահատման նոր համակարգի կիրառման ուղղությամբ, իսկ մոտ 8000 ուսուցիչներ կվերապատրաստվեն տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման գծով:

**Համակարգի կառավարում և արդյունավետություն**, որի շրջանակներում 2007-2008 թվականների ընթացքում կվերապատրաստվեն մոտ 800 դպրոցի տնօրեն : Կընդլայնվի և կզարգանա Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ԿԿՏՀ):

Օպտիմալացման արդյունքում կրճատված ուսուցիչներին կտրամադրվի սոցիալական աջակցություն:

Կրթության ոլորտում, վերոնշյալ վարկային ծրագրից բացի, 2007-2009 թվականներին աշխատանքներ կիրականացվեն նաև **Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում**՝ ըստ տարիների 654.7 ; 1091.8 և 1091.8 մլն դրամի չափով :

2007-2008 թվականներին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին, ըստ տարիների 92.7 և 19.2 մլն դրամի չափով ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում կիրականացվեն մարզային զարգացման ծրագրեր :

### *Հատուկ ընդհանուր կրթություն*

2007 թվականին հատուկ ընդհանուր կրթության գծով ծախսերը 2006 թվականի նկատմամբ կավելանան 14.9 %-ով և կկազմեն 4981.8 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 6.14 %-ը: 2008 թվականին այս ենթախմբի ծախսերը 2007 թվականի նկատմամբ կավելանան 6.4 %-ով՝ կազմելով 5301.0 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 6.19 %-ը, իսկ 2009 թվականին ծախսերը 2008 թվականի նկատմամբ կաճեն 5.2 %-ով՝ կազմելով 5574.5 մլն դրամ, որը կկազմի կրթության ընդհանուր պետական ծախսերի 6.14 %-ը:

Հատուկ կրթության գծով ծախսերի աճը 2007-2009 թվականներին հիմնականում պայմանավորված է համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ, որը կիրականացվի հանրակրթության համակարգում իրականացվող բարձրացումների ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև մեկ սանի հաշվով սննդի հաշվարկային նորմատիվի 20 տոկոսով բարձրացմամբ՝ կազմելով գիշերող սաների համար 940 դրամ, երթևեկների համար՝ 566 դրամ, 2006 թվականի համապատասխան 783 և 472 դրամի դիմաց: Հաշվարկներում հաշվի են առնվել կոմունալ ծառայությունների գծով սակագների փոփոխությունները, ինչպես նաև կրկնակի բարձրացվել են գործուղումների և ծառայողական ուղևորությունների գծով ծախսերը:

### *Արտադպրոցական դաստիարակություն*

Արտադպրոցական դաստիարակության գծով ծախսերը 2007-2009 թվականներին կրթության ընդհանուր պետական ծախսերում կկազմեն, համապատասխանաբար՝ 1.55; 1.55 և 1.60 տոկոս կամ ըստ տարիների 1259.1 ; 1326.3 և 1449.2 մլն դրամ:

Արտադպրոցական դաստիարակության գծով նախատեսվում է մանկավարժական, վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների միջին ամսական աշխատավարձերի բարձրացում՝ 2007 թվականին 20%-ով, միաժամանակ ապահովելով 2007 թվականին 20.0 հազ. դրամ, 2008 թվականին 25.0 հազ. դրամ և 2009 թվականին 30.0 հազ. դրամ հանրապետությունում նվազագույն աշխատավարձը:

2007-2009 թվականներին միջոցներ են նախատեսվել «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գծով, ըստ տարիների, 9.0 ; 11.0 և 13.0 մլն դրամի չափով : 2009 թվականին 5.0 մլն դրամ է նախատեսվել ՀՀ մարզերում «Երեխաների հատուկ

ստեղծագործական կենտրոնի» գործունեության ընդլայնման համար :

Հաշվարկներում լրացուցիչ միջոցներ են նախատեսվել կապի և կոմունալ ծառայությունների գծով՝ կապված սակագների փոփոխությունների հետ, մարզադպրոցների ջեռուցումը կաթսայատների միջոցով կազմակերպելու հետ, ինչպես նաև գործուղումների և ծառայողական ուղևորությունների գծով՝ ծախսերի կրկնակի բարձրացմամբ պայմանավորված :

***Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն***

2007 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ծախսերը 2006 թվականի նկատմամբ կավելանան 41.5 %-ով և կկազմեն 1435.2 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 1.77 %-ը: 2008 թվականին այս ենթախմբի ծախսերը 2007 թվականի նկատմամբ կավելանան 27.5 %-ով՝ կազմելով 1829.3 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 2.14 %-ը, իսկ 2009 թվականին ծախսերը 2008 թվականի նկատմամբ կաճեն 20.5 %-ով՝ կազմելով 2204.3 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 2.43 %-ը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով 2007-2009 թվականների ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ, որը կիրականացվի հանրակրթության համակարգում իրականացվող բարձրացումների ընդհանուր սկզբունքներով:

2007-2009 թվականների հաշվարկներում լրացուցիչ միջոցներ են նախատեսվել նոր արհեստագործական ուսումնարանների բացման և արհեստագործական ուսումնական հաստատություններում անվճար ընդունելության տեղերի թվի 1000-ով ավելացման հետ կապված:

Բացի այդ, լրացուցիչ միջոցներ են նախատեսվել կոմունալ ծառայությունների գծով՝ կապված սակագների փոփոխությունների հետ, ինչպես նաև գործուղումների և ծառայողական ուղևորությունների գծով՝ պայմանավորված ծախսերի կրկնակի բարձրացմամբ:

***Միջին մասնագիտական կրթություն***

Միջին մասնագիտական կրթության գծով ծախսերը 2007-2009 թվականներին, ըստ տարիների, կրթության ընդհանուր պետական ծախսերում համապատասխանաբար կկազմեն 2.64, 2.88 և 3.08 տոկոս, կամ՝ 2142.5, 2464.5 և 2794.6 մլն դրամ:

Հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ուսուցում իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում աշխատավարձերի բարձրացումը հաշվարկվել է հանրակրթության համակարգում առաջարկվող բարձրացումների ընդհանուր սկզբունքներով: Իսկ մնացած միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մանկավարժական և վարչական աշխատողների միջին ամսական աշխատավարձերը 2007 թվականին բարձրացվել են 20 տոկոսով՝ այն հասցնելով 36.0 հազ. դրամի , ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձերը 2007 թվականին նույնպես բարձրացվել են 20 տոկոսով՝ միաժամանակ ապահովելով հանրապետությունում 2007-2009 թվականներին, համապատասխանաբար ըստ տարիների, 20.0 ; 25.0 և 30.0 հազ. դրամ նվազագույն աշխատավարձը:

Մեկ սովորողի հաշվով սննդի հաշվարկային նորմատիվը բարձրացվել է 20 տոկոսով՝ կազմելով գիշերող սաների համար 940 դրամ, երեխեկների համար՝ 566 դրամ, 2006 թվականի համապատասխան 783 և 472 դրամի դիմաց:

Հաշվարկներում լրացուցիչ միջոցներ են նախատեսվել նաև կապի և կոմունալ ծառայությունների գծով՝ կապված սակագների փոփոխությունների հետ, ինչպես նաև գործուղումների և ծառայողական ուղևորությունների գծով՝ պայմանավորված ծախսերի կրկնակի բարձրացմամբ:

*Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն*

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության գծով ծախսերը 2007 թվականին կկազմեն 5538.2 մլն դրամ, 2008 թվականին` 6110.2 մլն դրամ և 2009 թվականին` 6645.9 մլն դրամ, որը կրթության ընդհանուր պետական ծախսերում կկազմի, համապատասխանաբար` 6.83 ; 7.13 և 7.32 տոկոս:

Նախատեսվում է աշխատողների միջին ամսական աշխատավարձերի բարձրացում 2007 թվականին 20%-ով, միաժամանակ ապահովելով 2007 թվականին` 20.0 հազ. դրամ, 2008 թվականին 25.0 հազ. դրամ և 2009 թվականին 30.0 հազ. դրամ հանրապետությունում նվազագույն աշխատավարձը:

Ասպիրանտների կրթաթոշակները հաշվարկվել են 10.0 հազ. դրամով, իսկ հայագիտական մասնագիտությունների ասպիրանտներինը` 15.0 հազ. դրամով :

2007-2009 թվականներին յուրաքանչյուր տարի 27.6 մլն դրամ է նախատեսվել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի գծով :

Հաշվարկներում լրացուցիչ միջոցներ են նախատեսվել կապի և կոմունալ ծառայությունների գծով` կապված սակագների փոփոխությունների հետ, ինչպես նաև գործուղումների և ծառայողական ուղևորությունների գծով ծախսերի կրկնակի բարձրացման հետ:

*Լրացուցիչ կրթություն*

Լրացուցիչ կրթության գծով ծախսերը 2007 թվականին կկազմեն 423.1 մլն դրամ կամ կրթության ընդհանուր ծախսերի 0.52 տոկոսը, 2008 թվականին` 437.7 մլն դրամ կամ 0.51 տոկոսը, 2009 թվականին` 480.0 մլն դրամ կամ 0.53 տոկոսը :

Նախատեսվում է աշխատողների միջին ամսական աշխատավարձերի բարձրացում` 2007 թվականին 20%-ով, միաժամանակ ապահովելով 2007 թվականին 20.0 հազ. դրամ, 2008 թվականին 25.0 հազ. դրամ և 2009 թվականին 30.0 հազ. դրամ հանրապետությունում նվազագույն աշխատավարձը:

2007-2009 թվականներին յուրաքանչյուր տարվա համար 62.8 մլն դրամ է նախատեսվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին` ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման նպատակով, 70.5 մլն դրամ` ՀՀ վճռաբեկ դատարանին` դատավորների վերապատրաստման գծով:

Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարությանը` հատուկ ծառայողների վերապատրաստման նպատակով, ըստ տարիների նախատեսվել է 33.0; 33.7 և 35.2 մլն դրամ:

Հաշվարկներում լրացուցիչ միջոցներ են նախատեսվել կապի և կոմունալ ծառայությունների գծով` կապված սակագների փոփոխությունների հետ, ինչպես նաև գործուղումների և ծառայողական ուղևորությունների գծով` պայմանավորված ծախսերի կրկնակի բարձրացմամբ:

Աղյուսակ 7.7. Կրթության ոլորտի 2005-2009թթ. ծախսերը ըստ կատարող պետական մարմինների, ծախսերի գործառական դասակարգման խմբերի և ենթախմբերի /մլն դրամով/

| խումբ | ենթախումբ | ենթախմբերի անվանումներն ըստ կատարող պետական մարմինների | 2005 թ. | | | 2006 թ. | | | 2007 թ. | | | 2008թ. | | | 2009 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փաստացի | | | հաստատված | | | ՄԺԾԾ | | | | | | | | |
| | | | ընդամենը | այդ թվում՝ ընթացիկ ծախսեր | այդ թվում՝ կապիտալ ծախսեր | ընդամենը | այդ թվում՝ ընթացիկ ծախսեր | այդ թվում՝ կապիտալ ծախսեր | ընդամենը | այդ թվում՝ ընթացիկ ծախսեր | այդ թվում՝ կապիտալ ծախսեր | ընդամենը | այդ թվում՝ ընթացիկ ծախսեր | այդ թվում՝ կապիտալ ծախսեր | ընդամենը | այդ թվում՝ ընթացիկ ծախսեր | այդ թվում՝ կապիտալ ծախսեր |
| 04 | | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, որից | 56702.5 | 47762.9 | 8939.6 | 77477.4 | 56719.1 | 20758.3 | 81081.8 | 67043.5 | 14038.4 | 85636.9 | 70695.2 | 14941.7 | 90818.9 | 73697.1 | 17121.8 |
| | 01 | Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում | 249.4 | 191.7 | 57.7 | 396.2 | 354.8 | 41.5 | 433.9 | 433.9 | | 448.8 | 448.8 | | 502.3 | 502.3 | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 249.4 | 191.7 | 57.7 | 396.2 | 354.8 | 41.5 | 433.9 | 433.9 | | 448.8 | 448.8 | | 502.3 | 502.3 | |
| | 03 | Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն | 44383.0 | 36464.3 | 7918.6 | 61737.3 | 42929.7 | 18807.6 | 64868.0 | 50829.6 | 14038.4 | 67719.1 | 52777.4 | 14941.7 | 71168.1 | 54046.3 | 17121.8 |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2359.5 | 1884.7 | 474.8 | 4800.0 | 2565.5 | 2234.5 | 5908.7 | 4677.7 | 1231.0 | 5097.4 | 4266.7 | 830.7 | 3201.7 | 3171.7 | 30.0 |
| | | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 128.2 | 128.2 | 0.0 | 152.1 | 152.1 | 0.0 | 168.7 | 168.7 | | 173.9 | 173.9 | | 187.1 | 187.1 | |
| | | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2672.3 | 0.0 | 2672.3 | 4808.6 | | 4808.6 | 12060.0 | | 12060.0 | 13000.0 | | 13000.0 | 16000.0 | | 16000.0 |
| | | ՀՀ կառավարության աշխատակազմ | 1095.5 | 3.4 | 1092.1 | 494.1 | | 494.1 | 654.7 | | 654.7 | 1091.8 | | 1091.8 | 1091.8 | | 1091.8 |
| | | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | | | 51.7 | | 51.7 | 92.7 | | 92.7 | 19.2 | | 19.2 | | | |
| | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | | | | 8358.0 | | 8358.0 | | | | | | | | | |
| | | ՀՀ բնապահպանության նախարարություն | | | | | | | 5.1 | 5.1 | | | | | | | |
| | | Երևանի քաղաքապետարան | 7809.2 | 7800.4 | 8.8 | 8968.3 | 8968.3 | | 10644.9 | 10644.9 | | 11161.2 | 11161.2 | | 11746.3 | 11746.3 | |
| | | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | 2755.1 | 2290.2 | 465.0 | 3073.3 | 2749.1 | 324.3 | 3046.5 | 3046.5 | | 3206.5 | 3206.5 | | 3322.7 | 3322.7 | |
| | | ՀՀ Արարատի մարզպետարան | 3450.6 | 3045.2 | 405.4 | 3842.7 | 3495.8 | 346.9 | 3811.4 | 3811.4 | | 3978.0 | 3978.0 | | 4158.5 | 4158.5 | |
| | | ՀՀ Արմավիրի մարզպետարան | 3458.4 | 3150.6 | 307.8 | 3918.8 | 3698.4 | 220.5 | 4170.9 | 4170.9 | | 4394.2 | 4394.2 | | 4590.0 | 4590.0 | |
| | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | 3976.6 | 3592.9 | 383.7 | 4305.3 | 4155.3 | 150.0 | 4749.8 | 4749.8 | | 4962.4 | 4962.4 | | 5158.9 | 5158.9 | |
| | | ՀՀ Լոռու մարզպետարան | 3710.0 | 3357.0 | 353.0 | 4085.4 | 3965.7 | 119.7 | 4608.2 | 4608.2 | | 4938.3 | 4938.3 | | 5202.0 | 5202.0 | |
| | | ՀՀ Կոտայքի մարզպետարան | 3163.5 | 2889.4 | 274.0 | 3659.0 | 3359.0 | 300.0 | 3810.2 | 3810.2 | | 3992.9 | 3992.9 | | 4153.2 | 4153.2 | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ Շիրակի մարզպետարան | 3983.1 | 3711.2 | 271.9 | 4627.9 | 4353.0 | 274.9 | 4661.7 | 4661.7 | | 4863.7 | 4863.7 | | 5039.9 | 5039.9 | |
| | | ՀՀ Սյունիքի մարզպետարան | 2264.1 | 2037.4 | 226.7 | 2761.4 | 2374.4 | 386.9 | 2806.4 | 2806.4 | | 2961.9 | 2961.9 | | 3138.6 | 3138.6 | |
| | | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | 1337.0 | 902.5 | 434.5 | 1519.6 | 1041.1 | 478.5 | 1213.2 | 1213.2 | | 1293.0 | 1293.0 | | 1359.3 | 1359.3 | |
| | | ՀՀ Տավուշի մարզպետարան | 2220.0 | 1671.3 | 548.7 | 2311.1 | 2052.0 | 259.1 | 2454.9 | 2454.9 | | 2585.0 | 2585.0 | | 2818.2 | 2818.2 | |
| | 04 | **Հատուկ ընդհանուր կրթություն** | **3468.2** | **3390.5** | **77.6** | **4335.0** | **4271.5** | **63.5** | **4981.8** | **4981.8** | | **5301.0** | **5301.0** | | **5574.5** | **5574.5** | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 1485.7 | 1485.7 | 0.0 | 1960.9 | 1947.3 | 13.5 | 2271.0 | 2271.0 | | 2433.0 | 2433.0 | | 2576.7 | 2576.7 | |
| | | ՀՀ կառավարության աշխատակազմ | 40.0 | | 40.0 | 50.0 | | 50.0 | | | | | | | | | |
| | | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 37.6 | | 37.6 | | | | | | | | | | | | |
| | | Երևանի քաղաքապետարան | 591.9 | 591.9 | | 703.1 | 703.1 | | 817.8 | 817.8 | | 859.9 | 859.9 | | 905.7 | 905.7 | |
| | | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | 105.8 | 105.8 | | 120.5 | 120.5 | | 139.4 | 139.4 | | 152.5 | 152.5 | | 161.3 | 161.3 | |
| | | ՀՀ Արմավիրի մարզպետարան | 151.4 | 151.4 | | 193.4 | 193.4 | | 230.3 | 230.3 | | 251.9 | 251.9 | | 265.1 | 265.1 | |
| | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | 41.3 | 41.3 | | 52.7 | 52.7 | | 60.9 | 60.9 | | 67.3 | 67.3 | | 71.9 | 71.9 | |
| | | ՀՀ Լոռու մարզպետարան | 229.3 | 229.3 | | 273.7 | 273.7 | | 312.5 | 312.5 | | 324.2 | 324.2 | | 332.6 | 332.6 | |
| | | ՀՀ Կոտայքի մարզպետարան | 111.4 | 111.4 | | 133.6 | 133.6 | | 165.9 | 165.9 | | 180.7 | 180.7 | | 190.9 | 190.9 | |
| | | ՀՀ Շիրակի մարզպետարան | 317.9 | 317.9 | | 392.6 | 392.6 | | 460.5 | 460.5 | | 488.6 | 488.6 | | 511.8 | 511.8 | |
| | | ՀՀ Սյունիքի մարզպետարան | 306.1 | 306.1 | | 393.9 | 393.9 | | 453.7 | 453.7 | | 467.9 | 467.9 | | 478.6 | 478.6 | |
| | | ՀՀ Տավուշի մարզպետարան | 49.8 | 49.8 | | 60.5 | 60.5 | | 69.9 | 69.9 | | 74.9 | 74.9 | | 79.7 | 79.7 | |
| | 05 | **Արտադպրոցական դաստիարակություն** | **1537.7** | **843.6** | **694.1** | **2477.1** | **999.4** | **1477.8** | **1259.1** | **1259.1** | | **1326.3** | **1326.3** | | **1449.2** | **1449.2** | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 218.7 | 218.7 | | 270.5 | 270.5 | | 312.0 | 312.0 | | 365.4 | 365.4 | | 418.8 | 418.8 | |
| | | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 14.3 | 14.3 | | 15.3 | 15.3 | | 27.0 | 27.0 | | 29.2 | 29.2 | | 59.9 | 59.9 | |
| | | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 694.1 | 0.0 | 694.1 | 1477.8 | 0.0 | 1477.8 | | | | | | | 0.0 | 0.0 | |
| | | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 514.8 | 514.8 | | 614.6 | 614.6 | | 804.3 | 804.3 | | 804.5 | 804.5 | | 827.7 | 827.7 | |
| | | Երևանի քաղաքապետարան | 33.7 | 33.7 | | 23.2 | 23.2 | | 27.5 | 27.5 | | 29.8 | 29.8 | | 34.0 | 34.0 | |
| | | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | 5.2 | 5.2 | | 5.5 | 5.5 | | 6.5 | 6.5 | | 6.8 | 6.8 | | 7.7 | 7.7 | |
| | | ՀՀ Արմավիրի մարզպետարան | 4.6 | 4.6 | | 4.9 | 4.9 | | 5.8 | 5.8 | | 6.2 | 6.2 | | 7.2 | 7.2 | |
| | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | 3.0 | 3.0 | | 3.2 | 3.2 | | 3.7 | 3.7 | | 4.1 | 4.1 | | 4.8 | 4.8 | |
| | | ՀՀ Կոտայքի մարզպետարան | 15.2 | 15.2 | | 16.3 | 16.3 | | 18.5 | 18.5 | | 20.8 | 20.8 | | 23.2 | 23.2 | |
| | | ՀՀ Շիրակի մարզպետարան | 9.3 | 9.3 | | 18.9 | 18.9 | | 22.7 | 22.7 | | 25.4 | 25.4 | | 28.3 | 28.3 | |
| | | ՀՀ Սյունիքի մարզպետարան | 12.5 | 12.5 | | 13.6 | 13.6 | | 15.8 | 15.8 | | 18.7 | 18.7 | | 21.6 | 21.6 | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | **12.5** | 12.5 | | **13.2** | 13.2 | | **15.5** | 15.5 | | **15.5** | 15.5 | | **16.0** | 16.0 | |
| | **06** | **Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն** | **669.4** | **663.3** | **6.1** | **1014.5** | **1014.5** | | **1435.2** | **1435.2** | | **1829.3** | **1829.3** | | **2204.3** | **2204.3** | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | **438.1** | 435.1 | 3.0 | **672.7** | 672.7 | | **975.7** | 975.7 | | **1326.5** | 1326.5 | | **1667.6** | 1667.6 | |
| | | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | **11.8** | 11.8 | | **25.0** | 25.0 | | **28.8** | 28.8 | | **30.5** | 30.5 | | **32.8** | 32.8 | |
| | | Երևանի քաղաքապետարան | **88.0** | 88.0 | | **124.4** | 124.4 | | **164.3** | 164.3 | | **177.7** | 177.7 | | **191.7** | 191.7 | |
| | | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | **22.7** | 22.7 | | **39.2** | 39.2 | | **56.1** | 56.1 | | **63.5** | 63.5 | | **66.8** | 66.8 | |
| | | ՀՀ Արմավիրի մարզպետարան | **14.7** | 14.7 | | **22.0** | 22.0 | | **30.5** | 30.5 | | **33.0** | 33.0 | | **35.8** | 35.8 | |
| | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | **15.1** | 15.1 | | **22.1** | 22.1 | | **29.2** | 29.2 | | **32.1** | 32.1 | | **34.1** | 34.1 | |
| | | ՀՀ Կոտայքի մարզպետարան | **30.7** | 30.7 | | **46.7** | 46.7 | | **63.2** | 63.2 | | **68.7** | 68.7 | | **73.7** | 73.7 | |
| | | ՀՀ Շիրակի մարզպետարան | **23.5** | 23.5 | | **31.8** | 31.8 | | **46.7** | 46.7 | | **53.3** | 53.3 | | **54.6** | 54.6 | |
| | | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | **4.2** | 4.2 | | | | | | | | | | | | | |
| | | ՀՀ Տավուշի մարզպետարան | **20.5** | 17.4 | 3.1 | **30.6** | 30.6 | | **40.7** | 40.7 | | **44.0** | 44.0 | | **47.3** | 47.3 | |
| | **07** | **Միջին մասնագիտական կրթություն** | **1439.3** | **1432.3** | **7.0** | **1827.6** | **1756.6** | **71.0** | **2142.5** | **2142.5** | | **2464.5** | **2464.5** | | **2794.6** | **2794.6** | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | **666.8** | 659.8 | 7.0 | **786.8** | 786.8 | | **991.9** | 991.9 | | **1235.2** | 1235.2 | | **1494.2** | 1494.2 | |
| | | ՀՀ առողջապահության նախարարություն | **166.6** | 166.6 | | **195.3** | 195.3 | | **219.1** | 219.1 | | **223.0** | 223.0 | | **228.9** | 228.9 | |
| | | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | **156.5** | 156.5 | | **247.8** | 195.8 | 52.0 | **247.9** | 247.9 | | **278.1** | 278.1 | | **302.7** | 302.7 | |
| | | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | **111.8** | 111.8 | | **134.7** | 134.7 | | **161.6** | 161.6 | | **179.6** | 179.6 | | **193.5** | 193.5 | |
| | | ՀՀ էներգետիկայի նախարարություն | **20.8** | 20.8 | | **43.5** | 24.5 | 19.0 | **28.6** | 28.6 | | **31.2** | 31.2 | | **34.0** | 34.0 | |
| | | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | **316.8** | 316.8 | | **419.5** | 419.5 | | **493.4** | 493.4 | | **517.4** | 517.4 | | **541.3** | 541.3 | |
| | **08** | **Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն** | **4318.2** | **4213.7** | **104.6** | **5302.4** | **5005.4** | **297.0** | **5538.2** | **5538.2** | | **6110.2** | **6110.2** | | **6645.9** | **6645.9** | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | **3235.8** | 3135.8 | 100.0 | **3696.8** | 3596.8 | 100.0 | **4119.0** | 4119.0 | | **4689.5** | 4689.5 | | **5222.3** | 5222.3 | |
| | | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | | | | **197.0** | | 197.0 | | | | | | | | | |
| | | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ | | | | **104.8** | 104.8 | | **113.1** | 113.1 | | **114.4** | 114.4 | | **117.1** | 117.1 | |
| | | ՀՀ պաշտպանության նախարարություն | **729.5** | 729.5 | | **729.5** | 729.5 | | **729.5** | 729.5 | | **729.5** | 729.5 | | **729.5** | 729.5 | |
| | | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | **300.4** | 295.8 | 4.6 | **324.2** | 324.2 | | **326.4** | 326.4 | | **326.7** | 326.7 | | **326.9** | 326.9 | |
| | | ՀՀ կառավարությանն առընթեր | **52.5** | 52.5 | | **250.1** | 250.1 | | **250.1** | 250.1 | | **250.1** | 250.1 | | **250.1** | 250.1 | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ազգային անվտանգության ծառայություն | | | | | | | | | | | | | | | |
| | | Լրացուցիչ կրթություն | 637.3 | 563.5 | 73.8 | 387.3 | 387.3 | | 423.1 | 423.1 | | 437.7 | 437.7 | | 480.1 | 480.1 | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 208.8 | 157.0 | 51.8 | | | | | | | | | | | | |
| 05 | 06 | ՀՀ առողջապահության նախարարություն | 81.9 | 81.9 | | 79.3 | 79.3 | | 90.8 | 90.8 | | 96.7 | 96.7 | | 107.3 | 107.3 | |
| 01 | 02 | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 57.0 | 57.0 | | 62.0 | 62.0 | | 59.0 | 59.0 | | 61.0 | 61.0 | | 85.0 | 85.0 | |
| 01 | 05 | ՀՀ արդարադատության նախարարություն | 12.3 | 12.3 | | 18.6 | 18.6 | | 33.0 | 33.0 | | 33.7 | 33.7 | | 35.2 | 35.2 | |
| 03 | 01 | ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն | 48.8 | 48.8 | | 68.4 | 68.4 | | 75.8 | 75.8 | | 81.8 | 81.8 | | 88.0 | 88.0 | |
| 01 | 01 | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ | 108.8 | 108.8 | | 19.2 | 19.2 | | 19.2 | 19.2 | | 19.2 | 19.2 | | 19.2 | 19.2 | |
| | | ՀՀ կառավարության աշխատակազմ | 111.6 | 89.5 | 22.0 | | | | | | | | | | | | |
| 01 | 06 | ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով | | | | 56.8 | 56.8 | | 62.8 | 62.8 | | 62.8 | 62.8 | | 62.8 | 62.8 | |
| 01 | 01 | ՀՀ Ազգային ժողով | | | | 0.6 | 0.6 | | | | | | | | | | |
| 03 | 03 | ՀՀ վճռաբեկ դատարան | | | | 70.5 | 70.5 | | 70.5 | 70.5 | | 70.5 | 70.5 | | 70.5 | 70.5 | |
| 03 | 03 | ՀՀ դատախազություն | 8.2 | 8.2 | | 12.0 | 12.0 | | 12.0 | 12.0 | | 12.0 | 12.0 | | 12.0 | 12.0 | |

## 7.2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### 7.2.1. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը պետական բյուջեից իրականացվում է բազային, նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ձևերով: Նշված երեք ձևերը սահմանող՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ու գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգերը, հաստատվել են ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի համապատասխանաբար NN 1121, 1122 և 1123 որոշումներով:

Գիտության ֆինանսավորման համակարգը կատարելագործելու նպատակով խնդիր դրվեց ընդլայնել գիտության ոլորտի բազային ֆինանսավորման ծավալը և ներդնել պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման ձևը, որը բացակայում էր նախորդ տարիներին:

2004 թվականին սկսվել է գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգին համապատասխան 2003 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված 5 նպատակային ծրագրերի ֆինանսավորումը: 2004 թվականի ընթացքում պարբերաբար իրականացվել է հաստատված 4 նպատակային ծրագրերի կատարման մոնիտորինգ:

Սկսած 2003 թվականից պետական բյուջեով բազային ֆինանսավորման չորս բաղկացուցիչ մասերից արդեն երեքը դրվել են գործածության մեջ: ՀՀ 2006 թ. պետական բյուջեով նախատեսվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրով 951592.5 հազար դրամ, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրով 184007.5 հազար դրամ և գիտական կադրերի պատրաստման ծրագրով 69810.0 հազար դրամ /բարձրացվել է ասպիրանտների կրթաթոշակը 10 հազ.դրամի, իսկ հայագիտության գծով ասպիրանտներինը՝ 15 հազ. դրամի չափով/, իսկ 2005 թ. ավելացել է նաև չորրորդը՝ հիմնարար և կարևորագույն կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրերը, որոնց համար պետական բյուջեով 2006 թվականին նախատեսվել է 1528754.0 հազար դրամ: «Գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգ»-ին համապատասխան 2004 թվականից ֆինանսավորվում են 5 պետական նպատակային ծրագրեր, որոնց համար ՀՀ 2006 թ. պետական բյուջեով նախատեսվել է 733328.3 հազար դրամ: Դրանք իրենցից ներկայացնում են համալիր նախագծեր գիտության և տեխնիկայի զարգացման ոլորտի գերակա ուղղությունների վերաբերյալ՝ 3-ից 5 տարի տևողությամբ:

2002 թվականի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգ»-ին համապատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարի 2005 թվականի հունվարի 31-ի N 27 - Ա/Ք հրամանով սկսվել է 2006 թվականի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ծրագրերի ֆինանսավորման գործընթացը: Նախատեսվել է ֆինանսասավորում 1279025.0 հազար դրամի չափով՝ 760 գիտական թեմայի և 2720 հաստիքով աշխատողների համար:

ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով նախատեսվել է նաև բոլոր գիտական աշխատողներին գիտությունների դոկտոր և գիտությունների թեկնածու գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ՝ համապատասխանաբար 10 և 5 հազ. դրամի չափով: Մշակվել և շրջանառության մեջ է դրվել գիտական ոլորտի բարեփոխումների ծրագիրը:

2006թ. պետական բյուջեից գիտությանը հատկացված է 5193065.3 հազար դրամ:

Գիտության ոլորտի գիտնականի գիտությամբ զբաղվելու ազատականացման շնորհիվ արտերկրից և

միջազգային տարբեր կազմակերպություններից հանրապետության գիտության ոլորտին ուղղված դրամաշնորհային ծրագրերի ընդհանուր ֆինանսական ծավալը 2004թ-ին կազմել է 8 մլն. 452 հազ. ԱՄՆ դոլար:

Գիտության ոլորտում առկա են հետևյալ խնդիրները.

- գիտության կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման դանդաղ գործընթացը և միասնական պետական կառավարման համակարգի ոչ լիակատար ձևավորված լինելը,
- գիտական ոլորտի բաժանվածությունը երեք մասի՝ ակադեմիական, բուհական, ճյուղային,
- առկա ֆինանսավորման միջոցների սահմանափակությունը և օգտագործման ցածր արդյունավետությունը,
- գիտական ոլորտի կառուցվածքային ցրվածությունը, գիտական ուղղությունների անհարկի բազմազանությունը, արդյունքում՝ գիտական ներուժի ոչ արդյունավետ օգտագործումը,
- գիտական կազմակերպություններում և բուհերում կադրերի երիտասարդացման անբավարար մակարդակը, երիտասարդ կադրերի հերթափոխի հարցը,
- ՀՀ-ից որակյալ գիտական կադրերի, առաջին հերթին երիտասարդների արտահոսքը,
- ՀՀ գիտության գերակա ուղղություններում գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը,
- մշտական գործող անկախ փորձագիտական համակարգի բացակայությունը,
- գիտությանը հասցեագրված՝ պետության կողմից պատվերի բացակայությունը՝ կոնկրետ ձևակերպված խնդիրների լուծման առումով,
- գիտական աշխատողների ֆինանսավորման վիճակի բարելավման հարցը,
- ասպիրանտների և դոկտորանտների կրթաթոշակների բարձրացման հարցը,
- կրթության և գիտության ինտեգրման և արտադրության հետ համագործակցության խնդիրը,
- ՀՀ-ում ինովացիոն գործունեության համար համապատասխան օրենսդրական դաշտի դանդաղ ձևավորման պայմաններում գիտական արդյունքների ներդրման արդյունավետ համակարգի բացակայությունը,
- համապարփակ միասնական գիտական տեղեկատվական համակարգի բացակայությունը,
- գիտական ոլորտում ժամանակակից գիտատեխնիկական բազայի բացակայությունը:
- գիտական ոլորտի արդյունքների առևտրայնացման ցածր մակարդակը:

Վերը նշված խնդիրներից առաջնահերթ են՝

ա/Գիտական ոլորտի բարեփոխումների խնդիրը: Այդ բարեփոխումները նպատակ ունեն գիտության կառավարման բոլոր մակարդակներում անհրաժեշտ միջոցառումների իրականացում՝ միասնական պետական կառավարման համակարգի ստեղծմամբ:

բ/ Աշխատավարձի էական բարձրացումը: Սկսած 2007 թվականից նախատեսվում է միջին աշխատավարձի ամենամյա բարձրացումներ մինչև 20 %-ի չափով:

գ/ Գիտական ներուժի վերարտադրության խնդիրը:

### 7.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

#### ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գիտության ոլորտի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ

արդյունավետ օգտագործելը, համաշխարհային ընկերակցության մեջ մեր երկրի կայուն տեղն ապահովելը:

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ելնելով վերոհիշյալ խնդիրներից առաջիկա երեք տարվա ընթացքում գերակայությունները հետևյալն են:

1. Գիտական ոլորտի բարեփոխումները,
2. Գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացում,
3. Գիտական ներուժի վերարտադրություն,
4. Մշտական գործող անկախ փորձագիտական կառույցի ստեղծում և զարգացումը,
5. Գիտատեխնիկական տեղեկատվական և վերլուծական կենտրոնի աշխատանքների համակարգված կազմակերպում:

**Աղյուսակ 7.2.1 Գիտության 2006-2009 թվականների պետական ծախսերը 2006-2008թթ. և 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերով**

մլն դրամներով

| Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի անվանումները | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հաստատ-ված բյուջե | 2006-08թթ. ՄԺԾԾ | 2006-08թթ. ՄԺԾԾ | 2007-09թթ. ՄԺԾԾ | 2006-08թթ. ՄԺԾԾ | 2007-09թթ. ՄԺԾԾ | 2007-09թթ. ՄԺԾԾ |
| Գիտություն, ընդամենը | 5193.1 | 4228.9 | 4736.8 | 5151.1 | 5193.4 | 5874.9 | 6550.8 |
| այդ թվում` | | | | | | | |
| Պայմանագրային (թեմատիկ) | 1279.0 | 1077.7 | 1157.2 | 1328.7 | 1246.3 | 1503.8 | 1503.8 |
| **Բազային** | 2734.2 | 2394.0 | 2772.4 | 3083.2 | 2989.9 | 3631.9 | 4307.8 |
| Նպատակային-ծրագրային | 733.3 | 551.0 | 601.0 | 739.2 | 751.0 | 739.2 | 739.2 |
| Կապիտալ ծախսեր | 446.6 | - | - | | | | |

2007-2009թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով ծախսերի աճը 2006-2008թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրի նկատմամբ պայմանավորված է բյուջեի եկամտային մասի ավելի բարձր աճով, որի հետ կապված աճել են նաև գիտության ծախսերը, համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի:

## ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Համաձայն «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի պետությունը յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ:

Ելնելով վերոհիշյալից, միջնաժամկետ ժամանակահատվածում գիտության ոլորտի համար հատակացվող գումարները` ըստ տարիների աճի դեպքում հիմնականում կուղղվեն գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացմանը և որոշ ծառայությունների գծով սակագների բարձրացմամբ պայմանավորված ծախսերին:

### 7.2.3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 2007-2009 թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

2007-2009 թթ. պետական բյուջեից գիտության ֆինանսավորմանն ուղղված լրացուցիչ գումարները նախատեսվում են առաջին հերթին ուղղել գիտական աշխատողների միջին ամսական աշխատավարձի բարձրացմանը 20 տոկոսով:

2007 թվականի աշնանը կիայտարարվի պայմանագրային /թեմատիկ ֆինանսավորմամբ գիտական թեմաների նոր մրցույթ:

2007 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կսկսի կիրառել համաֆինանսավորման սկզբունքը, որով մասամբ կհաղթահարվի պետբյուջեից գիտությանը հատկացվելիք սուղ միջոցների խնդիրը: Այդ առումով անհրաժեշտաբար պետք է դիտարկվի գիտության հիմնադրամի ստեղծման հարցը: Համաֆինանսավորման սկզբունքը գիտական հետազոտությունների և մշակումների ժամանակակից բարձր մակարդակ ապահովելու լրացուցիչ խթան կհանդիսանա, ներկայացվող առավելագույնս գրավիչ գիտական նախագծերի տարբեր աղբյուրներից ֆինանսավորման համար:

2006 թ. պետք է իրականացվի նոր մրցույթ ավարտվող պետական նպատակային ծրագրերի փոխարեն:

2006թ. նախատեսվել է ստեղծել, իսկ հետագա տարիներին նաև զարգացնել, անկախ փորձագիտական կառույց, որի գործունեության հիմքում պետք է լինի բազային, պայմանագրային /թեմատիկ/ և այլ գիտական ծրագրերի անկախ փորձաքննությունը:

**ԱՂՅՈՒՍԱԿ 7.2.2. 2006-2009 թթ. գիտության ոլորտի ծախսերը՝ ըստ ծրագրերի /մլն. դրամներով/**

| | | 2006թ. | *փոփոխությունը %-ով* | 2007թ. | *փոփոխությունը %-ով* | 2008թ. | *փոփոխությունը %-ով* | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Գիտություն** /առանց կապիտալ ծախսերի/, **ընդամենը** | **4746.52** | ***404.611*** | **5151.13** | ***723.748*** | **5874.88** | ***675.904*** | **6550.78** |
| | **այդ թվում՝** | | | | | | | |
| 1. | Պայմանագրային (թեմատիկ) | 1279.025 | *49.68* | 1328.705 | *175.095* | 1503.8 | *0* | 1503.8 |
| | տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%) | 24.63 | | 25.80 | | 25.60 | | 22.96 |
| 2. | Բազային | 2734.164 | *349.0178* | 3083.182 | *548.653* | 3631.835 | *675.9044* | 4307.739 |
| | տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%) | 52.65 | | 59.85 | | 61.82 | | 65.76 |
| 3. | Նպատակային-ծրագրային | 733.3283 | *5.913* | 739.2413 | *0* | 739.2413 | *0* | 739.2413 |
| | տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%) | 14.12 | | 14.35 | | 12.58 | | 11.28 |

**ԱՂՅՈՒՍԱԿ 7.2.3. 2006-2009 թթ. գիտության ոլորտի ծախսերը՝ ըստ կատարող պետական մարմինների, ծախսերի գործառնական դասակարգման խմբերի և ենթախմբերի /մլն. դրամներով/**

| | | | 2006թ. հաստատված բյուջե | | | 2007թ. ՄԺԾԾ-ով | | | 2008թ. ՄԺԾԾ-ով | | | 2009թ. ՄԺԾԾ-ով | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | *ընդամենը* | *ընթացիկ ծախսեր* | *կապիտալ ծախսեր* | *ընդամենը* | *ընթացիկ ծախսեր* | *կապիտալ ծախսեր* | *ընդամենը* | *ընթացիկ ծախսեր* | *կապիտալ ծախսեր* | *ընդամենը* | *ընթացիկ ծախսեր* | *կապիտալ ծախսեր* |
| 04 | 10 | **Գիտություն, ընդամենը** | **5193.07** | **4746.52** | **446.55** | **5151.13** | **5151.13** | | **5874.88** | **5874.88** | | **6550.78** | **2.25** | |
| | | **այդ թվում՝** | | | | | | | | | | | | |
| | | **Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ** | **1279.03** | **1279.03** | | **1328.71** | **1328.71** | | **1503.80** | **1503.80** | | **1503.80** | **1503.80** | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 1279.03 | 1279.03 | | 1328.71 | 1328.71 | | 1503.80 | 1503.80 | | 1503.80 | 1503.80 | |
| | | **Բազային ֆինանսավորմամբ** | **2734.16** | **2734.16** | | **3083.18** | **3083.18** | | **3631.83** | **3631.83** | | **4307.74** | **4.31** | |
| | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 495.99 | 495.99 | | 566.35 | 566.35 | | 659.88 | 659.88 | | 755.66 | 755.66 | |
| | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն /ՀՀ ԳԱԱ-ի գծով/ | 1635.39 | 1635.39 | | 1846.06 | 1846.06 | | 2210.12 | 2210.12 | | 2688.84 | 2688.84 | |
| | | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն | 305.11 | 305.11 | | 339.83 | 339.83 | | 395.89 | 395.89 | | 455.27 | 455.27 | |
| | | ՀՀ առողջապահության նախարարություն | 68.90 | 68.90 | | 78.68 | 78.68 | | 89.27 | 89.27 | | 101.98 | 101.98 | |
| | | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 96.63 | 96.63 | | 110.80 | 110.80 | | 125.70 | 125.70 | | 143.59 | 143.59 | |
| | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2.02 | 2.02 | | 2.34 | 2.34 | | 2.65 | 2.65 | | 3.03 | 3.03 | |
| | | ՀՀ մշակույթի և երիտասարդության նախարարություն | 18.66 | 18.66 | | 20.42 | 20.42 | | 23.16 | 23.16 | | 26.46 | 26.46 | |
| | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 15.32 | 15.32 | | 17.56 | 17.56 | | 19.92 | 19.92 | | 22.76 | 22.76 | |
| | | ՀՀ կառավարության աշխատակազմ | 74.23 | 74.23 | | 74.23 | 74.23 | | 74.23 | 74.23 | | 74.23 | 74.23 | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | 21.92 | 21.92 | | 26.92 | 26.92 | | 31.01 | 31.01 | | 35.92 | 35.92 | |
| | | **Նպատակային-ծրագրային ֆինանսավորմամբ** | **733.33** | **733.33** | | **739.24** | **739.24** | | **739.24** | **739.24** | | **739.24** | **739.24** | |
| | | ՀՀ պաշտպանության նախարարություն | 605.52 | 605.52 | | 610.40 | 610.40 | | 610.40 | 610.40 | | 610.40 | 610.40 | |
| | | ՀՀ ֆինանսների և էկո-նոմիկայի նախարարու-թյուն /ՀՀ ԳԱԱ-ի գծով/ | 127.81 | 127.81 | | 128.84 | 128.84 | | 128.84 | 128.84 | | 128.84 | 128.84 | |
| | | **Կապիտալ ծախսեր** | **446.55** | | **446.55** | | | | | | | | | |
| | | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 200.00 | | 200.00 | | | | | | | | | |
| | | ՀՀ ֆինանսների և էկո-նոմիկայի նախարա-րություն /ՀՀ ԳԱԱ-ի գծով/ | 246.55 | | 246.55 | | | | | | | | | |

Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության ծրագրերի գծով 2007-2009 թվականների ՄԺԾԾ-ով սահմանված հատկացումների կանխատեսումների բաշխումը ծրագրային դասակարգմամբ ներկայացված է Հավելված 2-ի N 1 աղյուսակում :

# ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման հիմքում դրվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 994-Ն որոշմամբ ամրագրված առողջապահությանը վերաբերող դրույթները, հաշվի են առնվել նաև «Հայաստանի Հանրապետության 2006-2008 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի թիվ 777-Ն որոշմամբ հաստատված 2006-2008 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի և ՀՀ 2006 թվականին արդեն իսկ իրականացվող ծրագրերի ցուցանիշները:

## 8.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության բնակչության ժողովրդագրական վիճակի պատկերը վերջին տարիներին կրել է որոշակի փոփոխություններ, ինչն իր ազդեցությունն է ունեցել առողջապահության ոլորտի վրա: Բնակչության աշխատունակ տարիքի մարդկանց արտագաղթի արդյունքում տեղի են ունեցել էական փոփոխություններ բնակչության տարիքային խմբերում: Եթե 90-ական թվականների սկզբին մինչև 15 տարեկան երեխաները կազմում էին մշտական բնակչության ընդհանուր թվաքանակի 28.3 տոկոսը, մեծահասակները՝ 51.2 տոկոսը, իսկ ծերերը՝ 20.5 տոկոսը, ապա արդեն 2004թ.՝ կապված միգրացիայի հետ, պատկերը փոխվել է. բնակչության ընդհանուր թվաքանակի կառուցվածքում երեխաների թիվը նվազել է մինչև 21,6 տոկոսի, մեծահասակներինը նվազել է մինչև 46,3 տոկոսի, իսկ հասակավոր տարիքի անձանց թիվն աճել է մինչև 32.1 տոկոսի և գրեթե 50 տոկոսով գերազանցում է երեխաների թվաքանակին: Բնակչության տիպը պրոգրեսիվից փոխվել է դեպի ռեգրեսիվի: Կապված երկրում սոցիալ-տնտեսական զարգացման դրական միտումներից, արտագաղթի կրճատման, համեմատաբար երիտասարդ ընտանիքների հայրենիք վերադարձի և ծնելիության մակարդակի բարձրացման միտումների հետ կանխատեսվում է, որ մոտ ապագայում հանրապետության բնակչության տիպը ռեգրեսիվից կփոխվի ստացիոնարի, ապա՝ նորից պրոգրեսիվի:

Անկախության տարիների ընթացքում հանրապետությունում ծնելիությունը նվազել է 2.5 անգամ: Այսպես, եթե 1986 թ. Հայաստանում ծնվել էր 81 հազար երեխա, ապա 2001 թ.՝ 32 հազար, իսկ ծնելիության ցուցանիշը 1000 բնակչի հաշվով նվազել է համապատասխանաբար 24–ից մինչև 8.4-ի: Նույն ժամանակաշրջանում ընդհանուր մահացությունը աճել է 1.4 անգամ (1986թ. 1000 բնակչի հաշվով 5.7-ից 2001թ. հասնելով մինչև 8,0-ի), իսկ բնակչության բնական աճի ցուցանիշը նվազել է ավելի քան 8.7 անգամ՝ համապատասխանաբար 18,3–ից նվազելով մինչև 2.1-ի: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ այդ ֆոնի վրա սկսած 2002 թ. նկատվում է ծնելիության ցուցանիշի աճ (2001թ.–8,4, 2002թ.– 10.1, 2003թ. -11.2, 2004թ.– 11,7): Այդ պարագայում թեև ընդհանուր մահացածության մակարդակը մնում է բարձր, այնուհանդերձ դիտարկվում է մանկական մահացության ցուցանիշի նվազում ավելի քան 2 անգամ (այդ 1000 կենդանածնի հաշվով 1986թ. 23.6–ից 2004թ. իջել է մինչև 11.5-ի): Մայրական մահացության 2004 թվականի ցուցանիշը կազմել է 26,9 (100 000 կենդանածնի հաշվով) և վերջին տարիներին դրսևորվում է այդ ցուցանիշի նվազման

դրական միտում: Սակայն այն թեև զգալի ցածր է ԱՊՀ երկրների միջին մակարդակից (40.0), այդուհանդերձ դեռևս ավելի քան 2 անգամ գերազանցում է Եվրոպական համանման միջին ցուցանիշին (8.8):

Կյանքի սպասվելիք տևողությունը ծնվելիս սկսած 2002 թ. շարունակաբար կազմել է 75,9 տարի և հետագա տարիներին գրեթե չի փոփոխվել:

Վերջին տարիներին արձանագրվել է ծնունդների աճի միտում:

**Գծանկար 8.1 Ընդամենը ծնունդներ, որից ծնվել են կենդանի**




Մոր և մանկան առողջության պահպանման հիմնախնդիրները և հետագա ռազմավարության հիմնական դրույթները հաստատվել են «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» 2003թ. օգոստոսի 8-ի N1000-Ն, «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» 2003թ. օգոստոսի 8-ի N 994-Ն, «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» 2003թ. դեկտեմբերի 18-ի N1745-Ն ՀՀ կառավարության որոշումների դրույթներով:

Բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների դինամիկայի վերաբերյալ առավել ճշգրիտ պատկերացում կազմելու նպատակով վերլուծությունը կատարվել է հիմնվելով գրանցված հիվանդությունների բացարձակ թվերի վրա: Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ 2004 թ. գրանցված հիվանդությունների թիվը 1999 թ. համեմատությամբ նվազել է 139,2 հազար դեպքով (2004թ.` 1017,4 հազար դեպք, 1999 թ.` 1156,6 հազար դեպք): Համանման պատկեր է կյանքում առաջին անգամ ախտորոշված հիվանդությունների դեպքում (2004թ.` 590,6 հազար դեպք, 1999թ.` 653.8 հազար դեպք): Սակայն առանձին հիվանդությունների գծով այդ օրինաչափությունը չի պահպանվում: Հատկապես ուշադրության է արժանի սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դինամիկան: Ստորև ներկայացվում է ընդհանուր հիվանդացության փոփոխությունը.

**Աղյուսակ 8.1 Բնակչության ընդհանուր հիվանդացությունը,**

| | 1999 թ. | 2000 թ. | 2001 թ. | 2002 թ. | 2003 թ. | 2004 թ. |
|---|---|---|---|---|---|---|
| **Գրանցված հիվանդությունների թիվը** | | | | | | |
| ընդամենը | **1 156 642** | **1055 795** | **977 653** | **967 179** | **1 139 331** | **1 017 434** |
| կյանքում առաջին անգամ գրանցված | **653 836** | **594 015** | **531 208** | **519 843** | **604 952** | **590 621** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **որից`** | | | | | | |
| ***Վարակիչ և մակաբուծական հիվանդություններ*** | | | | | | |
| ընդամենը | 95 441 | 84 532 | 81 884 | 75 216 | 77 027 | 72 037 |
| կյանքում առաջին անգամ գրանցված | 78 953 | 65 371 | 61 106 | 56 314 | 60 180 | 58 089 |
| այդ թվում` ***Տուբերկուլյոզ*** | | | | | | |
| ընդամենը | 5 280 | 5 458 | 5 786 | 6 050 | 6 068 | 6 165 |
| կյանքում առաջին անգամ գրանցված | 1 434 | 1 284 | 1 343 | 1 393 | 1 437 | 1 558 |
| ***Չարորակ նորագոյացություններ*** | | | | | | |
| ընդամենը | 22 589 | 21 927 | 23 451 | 24 384 | 25 580 | 26 522 |
| կյանքում առաջին անգամ գրանցված | 5 415 | 5 413 | 5 666 | 5 734 | 5 951 | 6 174 |
| ***Շաքարային դիաբետ*** | | | | | | |
| ընդամենը | 37 284 | 38 845 | 38 842 | 40 630 | 39 831 | 38 850 |
| կյանքում առաջին անգամ գրանցված | 3 272 | 2 834 | 2 817 | 3 005 | 2 808 | 3 622 |
| ***Հոգեկան խանգարումներ*** | | | | | | |
| ընդամենը | 55 661 | 55 501 | 53 908 | 51 942 | 46 198 | 52 827 |
| կյանքում առաջին անգամ գրանցված | 4 756 | 4 854 | 4 638 | 4 433 | 4 817 | 5 694 |
| ***Հիպերտոնիկ հիվանդություն*** | | | | | | |
| ընդամենը | 33 333 | 32 842 | 31 353 | 31 442 | 31 507 | 31 613 |
| կյանքում առաջին անգամ գրանցված | 5 173 | 5 029 | 5 244 | 5 866 | 6 181 | 6 234 |
| ***Սրտի իշեմիկ հիվանդություն*** | | | | | | |
| ընդամենը | 53 852 | 48 925 | 46 689 | 48 532 | 46 300 | 35 426 |
| կյանքում առաջին անգամ գրանցված | 7 162 | 7 380 | 7 206 | 8 052 | 8 581 | 8 278 |
| ***Վնասվածքներ և թունավորումներ*** | | | | | | |
| ընդամենը | 76 398 | 72 188 | 60 888 | 61 143 | 60 966 | 46 357 |
| կյանքում առաջին անգամ գրանցված | 75 048 | 70 948 | 59 501 | 59 537 | 59 757 | 45 450 |

Վիճակագրական հետազոտությունները հիմք են տալիս նշելու, որ ընդհանուր հիվանդացության մակարդակը իջել է: 1998 թվականին բնակչության ընդհանուր հիվանդացությունը կազմել է 1135723 դեպք, 2003 թվականին` 1139331 դեպք, 2004 թվականին` 1017434 դեպք: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, 2004 թվականին բոլոր ներկայացված հիվանդությունների գրանցված դեպքերի թիվը 15 տարվա ընթացքում աճել են ոչ այնքան բարձր տեմպերով և տատանվում են 1,2-ից - 1,9 անգամի միջակայքում, իսկ որոշ հիվանդությունների առումով նույնիսկ նկատվում է որոշակի նվազեցում: Սակայն այդ չի կարելի ասել մահվան դեպքերի մասին, քանի որ դրանց աճը գերազանցում է գրանցված հիվանդությունների աճի տեմպերը:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ առողջապահության ոլորտի բուժկազմակերպությունները` հատկապես առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) օղակը, դեռևս պատշաճ մակարդակով չեն կազմակերպում առաջնային և երկրորդային կանխարգելման աշխատանքները, ակտիվ ձևով և ժամանակին չեն հայտնաբերում հիվանդությունները և իրականացնում բուժականխարգելիչ օգնությունը: Մյուս կողմից էլ ցածր են մնում բնակչության շրջանում առողջության պահպանման վերաբերյալ բժշկահիգիենիկ գիտելիքները, հիվանդները ժամանակին չեն դիմում բժիշկներին, զբաղվում են ինքնաբուժությամբ կամ ընդհանրապես չեն բուժվում: Այդ բոլորի հետևանքով գրանցվում են հիվանդությունների բարդացած ձևերը, ավելանում են մահվան դեպքերը` հատկապես սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով տառապող հիվանդների մոտ:

Իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ զգալի ռեսուրսներով հագեցած համակարգը արդյունավետ չի գործում, ինչի արդյունքում էլ բնակչությանը տրամադրվող բուժօգնությունն ու ծառայությունները գտնվում էին ցածր մակարդակում, անմատչելի էին բնակչության համար և դրա արդյունքում նվազում է համակարգի նկատմամբ բնակչության վստահությունը:

Առողջապահության բնագավառում հիմնական գերակայություն է շարունակում համարվել առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնությունը: Սկսած 2006 թվականից ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բուժօգնության ծրագրերում ընդգրկվել է ամբողջ ազգաբնակչությունը՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, (բացառությամբ ստոմատոլոգիական բուժօգնությունից, որն անվճար է միայն բնակչության սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածների և մինչև 8 տարեկան երեխաների համար), որի արդյունքում նկատելի աճել են հաճախումները ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում:

**Գծանկար 8.2 Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում բնակչության մեկ շնչին ընկնող տարեկան միջին հաճախումները**




Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով 2006 թվականին նախատեսվել է 14344.6 մլն դրամ՝ 2005 թվականի 11507.8 մլն դրամի դիմաց կամ աճը կազմել է 24.7 %: Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության շրջանակներում նախատեսվել է վեց ծրագրերի իրականացում:

Հիվանդանոցային բուօգնության գծով նախատեսվել է 14611.1 մլն դրամ (այդ թվում՝ 495.0 մլն դրամ կապիտալ նորոգման ծախսեր) 2005 թվականի 13344.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմել է 9.5 տոկոս: Հիվանդանոցային բուժօգնության գծով աճը հիմնականում պայմանավորված է մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքի բարձրացմամբ, ՀՀ 2005 թվականի պետական բյուջեով հաստատված նկատմամբ 5811 հիվանդանոցային դեպքի բուժման և բուժհիմնարկների կապիտալ վերանորոգման գծով ծախսերի 455.0 մլն դրամով ավելացմամբ: Հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող բուժհաստատություններում մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքը նախատեսվել է 9000 դրամ՝ 2005 թվականի 8700 դրամի դիմաց կամ աճը կազմել է 3.4 տոկոս, որը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ, դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծախսերի ավելացմամբ: Բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվել է 38.7 հազ. դրամ (2005 թվականի 37.5 հազ. դրամի դիմաց), իսկ միջին

բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը` մինչև 30.3 հազ. դրամ (2005 թվականի 29.3 հազ. դրամի դիմաց):

Հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում 2006 թվականին նախատեսվել է տասներկու ծրագրերի իրականացում:

Ինչպես 2005 թվականին, այնպես էլ 2006 թվականին նախատեսվել է շտապ բժշկական օգնության ծառայության ֆինանսավորումն ընդգրկել հիվանդանոցային բուժօգնության ենթախմբի մեջ: «Շտապ բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսվել է 336615 կանչ 1132.5 մլն դրամ գումարով` 2005 թվականի 333310 կանչի և 1088.9 մլն դրամի դիմաց: Ծրագրի գծով աճը պայմանավորված է` շտապ բժշկական օգնության կանչերի 3305-ով (այդ թվում ընտանեկան բժիշկների կողմից շտապօգնության մեքենայով իրականացվող 2500 տնային կանչերով) ավելացմամբ` 7.9 մլն դրամ գումարով և շտապ բժշկական օգնության կանչերի գների բարձրացմամբ` 35.7 մլն դրամ գումարով:

Առաջիկա տարիներին կշարունակվի առողջապահության համակարգի օպտիմալացման գործընթացի խորացումը, որը նպատակ կունենա շարունակելու իրականացնել այնպիսի ռազմավարություն, որը կբարձրացնի համակարգի արդյունավետությունը, որը կենթադրի հիվանդանոցային մահճակալային ֆոնդի կրճատում, մահճակալների տարեկան միջին զբաղվածության ավելացում և այլն:

**Գծանկար 8.3 Մահճակալի միջին տարեկան զբաղվածությունը**




Առկա խնդիր է դիտարկվում առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի շարունակական ավելացման պայմաններում առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը, ինչպես նաև բուժօգնության ծառայությունների մատչելիության բարձրացումը: Առողջապահության ոլորտում պետական ծախսերի աճը հանդիսանում է ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկը: Ծրագրային ամբողջ ժամանակահատվածի ընթացքում առողջապահության ոլորտի պետական ծախսերն ունենալու են աճի միտում:

2000-2006թթ. հանրապետությունում իմունոկանխարգելման, մալարիայի, խոլերայի դեմ պայքարի և կանխարգելման համալիր հակահամաճարակային միջոցառումների իրականացման շնորհիվ, որոշ վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարելավվել է: Մալարիայով հիվանդացությունը 2004 թվականին` 1998 թվականի հետ համեմատած, նվազել է մոտավորապես 2,0 անգամ, 2000-2003թթ հանրապետությունում չեն արձանագրվել խոլերայի, պոլիոմիելիտի դեպքեր: Եզակի է դարձել դիֆթերիայի, կապույտ հազի, փայտացման դեպքերի

արձանագրումը: 1994թ սկսած Իմունականխարգելման ազգային ծրագրում ընդգրկված հիվանդությունների առումով արձանագրվել է հիվանդացության և մահացության նվազման միտում:

Երկրում չի գործում ժամանակակից պահանջները բավարարող առողջապահության վիճակագրական, տեղեկատվական–վերլուծական համակարգ: Ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և մոնիտորինգի ուղղությամբ նորմատիվ փաստաթղթերի մշակման, ինչպես նաև վերլուծական և կազմակերպական աշխատանքները դեռևս բավարար մակարդակով չեն կատարվում:

Առողջապահության ոլորտի համար շարունակում է խնդիր դիտարկվել ընդհանուր հիվանդացության կազմում տուբերկուլյոզով, շաքարային դիաբետով, սրտամկանի սուր ինֆարկտով, ինչպես նաև չարորակ նորագոյացություններով հիվանդների թվի ավելացումը:

Հանրապետության առողջապահության ոլորտի առջև խնդիր է դրված ապահովել յուրաքանչյուր քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, զարգացնել պետության կողմից երաշխավորված բնակչության համար անվճար բժշկական օգնությունը և իրական մատչելիությունը:

## 8.2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 8.2.1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող ծրագրերի նպատակներն են՝

1. ***Բնակչության հիգիենիկ-հակահամաճարակային անվտանգության ապահովումը, մասնավորապես***՝ դիֆթերիայի առաջացման տեղական դեպքերի վերացումը, հեպատիտ «Բ» վիրուսակիրների թիվը 40%-ով նվազեցումը, տուբերկուլյոզի հիվանդացությունը և մահացությունը մոտ 10%-ով նվազեցումը, մալարիայի առաջացման դեպքերի՝ 5-ից ցածր մակարդակի (100 000 բնակչի հաշվով) նվազեցումը և այդ հիվանդության վերացումը, դիարեայի ցածր մակարդակի պահպանումը և մահվան դեպքերի նվազեցումը, կարմրուկի վերացումը և հավաստագրման համար կարմրուկից ազատված գոտի հռչակումը:

2. ***Բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը , Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը, մասնավորապես***՝ սիրտ-անոթային հիվանդությունների հիվանդացության մակարդակի իջեցում 10%-ով, միկրոանոթային և մակրոանոթային բարդություններով, շաքարային դիաբետով հիվանդների հոսպիտալացման դեպքերի նվազեցում՝ 5%-ով, ուռուցքային հիվանդությունների վաղ ախտորոշման ցուցանիշի բարձրացում՝ 15%-ով, առաջնային բուժկանխարգելիչ միջոցառումների մեջ կանխարգելիչ միջոցառումների տեսակարար կշռի ավելացումը, տարեկան մոտ 150 ընտանեկան բժիշկի և 150 ընտանեկան բուժքրոջ պատրաստումը, ժամանակակից լաբորատոր-գործիքային ախտորոշիչ սարքավորումներով և տեխնոլոգիաներով, դեղորայքային և բուժպարագաներով հագեցվածության բարձրացումը, իրականացվող բժշկական

օգնության որակի բարձրացումը, բնակչության անվճարունակ հատվածի համար բուժօգնության մատչելիության մակարդակի բարձրացումը:

3. ***Մոր և մանկան առողջության պահպանման ապահովումը , մասնավորապես`*** հղի կանանց վաղաժամ կոնսուլտացիոն հսկողության ապահովումը առնվազն 70%-ով, մայրական մահացության մակարդակը 1/3-ով նվազեցումը, տնային պայմաններում ծննդաբերության դեպքերի նվազեցումը` ապահովելով ծննդաբերության 100% ընդգրկվածությունը ստացիոնար պայմաններում, պերինատալ և վաղ նեոնատալ մահացությունը 10%-ով նվազեցումը, մանկական մինչև 1 տարեկան և մինչև 5 տարեկան մահացության մակարդակի 1/4-ով նվազեցումը, երեխաների պատվաստումների 90%-ով ընդգրկվածության ապահովումը, մինչև 4 ամսական երեխաների 55%-ի և մինչև 6 ամսական երեխաների 30%-ի բացառապես կրծքով սնուցման ապահովումը, հաշմանդամություն ունեցող երեխաների 35%-ի ընդգրկվածության ապահովումը անհատական վերականգնողական ծրագրերում:

4. ***Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններից բուժվողների բուժօգնության ապահովումը:***

### 8.2.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2007-2009ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի ծրագրային գերակայություններն են համարվում բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման, ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության դերի իրական բարձրացման, մոր և մանկան առողջության ապահովման, սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման և բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման, ինչպես նաև տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը:

***Հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում***

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այս համակարգի անխափան գործունեության ապահովումը կենսական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության առողջության պահպանման համար:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման առումով` ծրագիրը նախատեսում է երկրում ապահովել հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը, բնակչության առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինֆեկցիոն և զանգվածային ոչ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելումը, հասարակական առողջապահության համակարգի զարգացումը:

*Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն*

Ինչպես բնակչության աղքատության հաղթահարման համատեքստում, այնպես էլ 2007-2009թթ. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի ֆինանսավորման միջին ժամկետ ծրագրի համատեքստում առողջապահության ոլորտի գերակա ուղղություն է շարունակում դիտվել առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա:

Հաշվի առնելով առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության մատչելիության ավելի բարձր մակարդակը և ազգաբնակչությանը տարածքային կտրվածքով հասանելիության ավելի մեծ աստիճանը՝ պետական բյուջեի կառուցվածքում ավելացվելու է առաջնային բուժօգնության բաժինը՝ ի հաշիվ հիվանդանոցային բուժօգնությանը տրամադրվող միջոցների տեսակարար կշռի կրճատման և ընդհանուր ծախսերի ավելացման:

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնությանն ուղղվող գումարները 2007 թվականին կկազմի 16726.3 մլն դրամ կամ 2006թ. հաստատված բյուջեի նկատմամբ կաճի 16.6 %-ով և կկազմի առողջապահությանն ուղղվող ծախսերի **37.1 տոկոսը, նախորդ տարվա 36.4 տոկոսի դիմաց**:

Աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագրով նախատեսվում է առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության բաժինը առողջապահության բնագավառի ծախսերի կառուցվածքում 2007թ. հասցնել **36.1 տոկոսի** (համաձայն վերոնշյալ ծրագրի՝ առողջության առաջնային պահպանմանն ուղղվող ծախսերի տեսակարար կշռի տոկոսադրույքը հաշվարկելիս, կենտրոնացված կարգով դեղորայքի ձեքբերման ծախսերի գումարը ընդգրկված է եղել առողջության առաջնային պահպանմանն ուղղվող ծախսերի կազմում, այժմ դեղորայքային ապահովման ծախսերը ընդգրկված են «Բուժօգնության այլ ծառայություններ» ենթախմբում, ուստի համադրելի համարելու համար՝ առաջնային պահպանման տոկոսադրույք հաշվարկելիս կենտրոնացված կարգով ձեռքբերվող դեղորայքի ծախսերը հանված են:)

**Գծանկար 8.4 Ամբուլատոր և հիվանդանոցային բուժօգնության ֆինանսավորումը (առողջապահության ընդհանուր ծախսերի նկատմամբ,%)**




*Մոր և մանկան առողջության պահպանում*

Կանանց և երեխաների առողջության պահպանման, այդ թվում՝ վերարտադրողական առողջության խնդիրներին համարժեք ուշադրության ցուցաբերումը սկզբունքային նշանակություն ունի առողջ սերունդ ունենալու և բնակչության առողջական վիճակի բարելավման առումով: Այդ նպատակով վերահաստատվել է կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունը: Մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի շրջանակներում նախատեսվում է զգալիորեն ավելացնել ինչպես հիվանդանոցային, այնպես էլ առաջնային բուժօգնության կազմակերպությունների՝ մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական ծախսերը: Մասնավորապես՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության շրջանակներում մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության ծախսերը մեկ հիվանդի հաշվով: Երեխաների բուժօգնության ուղղությամբ հատուկ ուշադրություն է դարձվելու հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների իրականացմանը:

***Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման և բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովմանն ուղղված ծրագրերը***

Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը սկզբունքային նշանակություն ունի բնակչության առողջության պահպանման հարցում:

Ծրագրի նպատակն է 2007-2009 թթ. բնակչության աղքատ խավերի, սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման մատչելիության բարձրացումը և առավելագույնս ապահովումը: Նախատեսվում է բուժօգնություն ստացողների շարքում ընդլայնել սոցիալապես անապահով խմբերը ներկայացնող անձանց թիվը: Ծրագիրը նախատեսում է 2007-2009 թթ ընթացքում իրականացնել կանխարգելիչ, ախտորոշիչ և բժշկական օգնության ամենալայն ծավալ՝ հիվանդությունների բոլոր հիմնական խմբերի գծով, առողջապահության համակարգի բոլոր օղակներում՝ առանց մասնագետների ցանկի, հաճախումների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների թվի սահմանափակման:

***Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը***

Անհրաժեշտ է մեծացնել ինֆեկցիոն հիվանդությունների, այդ թվում՝ տուբերկուլյոզի, սեռավարակների և ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ հայտնաբերման և լիարժեք բուժման արդյունավետությունը:

### 8.2.3 ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

2007 թվականին, 2006 թվականի համեմատ, առողջապահությանը պետական բյուջեից հատկացումները կավելանան 5692.7 մլն դրամով: Ելնելով ոլորտում վարվող պետական քաղաքականությունից և հիմնական գերակայություններից՝ այդ գումարի 41.8 տոկոսը՝ մոտ 2381.7 մլն դրամ կուղղվի բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովմանը, որը կկազմի

առողջապահության ընդհանուր ծախսերի 37.1 տոկոսը, 2008թ.՝ 41.1 տոկոսը, 2009թ.՝ 41.7 տոկոսը:

Ընդհանուր ավելացման 5.1 տոկոսը կամ մոտ 290.1 մլն դրամ կուղղվի բնակչության հիգիենիկ-հակահամաճարակային անվտանգության ապահովմանը. վերջինիս հատկացվող պետական ծախսերը 2006 թ. համեմատ կավելանան 15.0 %-ով և կկազմի առողջապահության ընդհանուր ծախսերի 4.9 տոկոսը, 2008թ.՝ 5.4 տոկոսը, 2009թ.՝ 5.6 տոկոսը:

2007թ. հիվանդանոցային բուժօգնությանը հատկացվող ծախսերը 2006 թ. համեմատ կավելանան մոտ 1971.6 մլն դրամով, այն կկազմի ընդհանուր ավելացման 34.6 տոկոսը և կկազմի առողջապահության ընդհանուր ծախսերի 35.7 տոկոսը, 2008թ.՝ 39.0 տոկոսը, 2009թ.՝ 39.1 տոկոսը:

Հաշվի առնելով, հիվանդանոցային բուժօգնության համեմատ, առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գերակայությունը, մատչելիության ավելի բարձր մակարդակը և ազգաբնակչությանը տարածքային կտրվածքով հասանելիության ավելի մեծ աստիճանը, առողջապահության պետական ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում նախատեսվել է առաջնային բուժօգնության ֆինանսավորման բարձր աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ մասնավորապես 2007 թվականին 2006 թվականի համեմատությամբ առողջապահությանն ուղղվող ծախսերը կաճեն 14.5 տոկոսով, իսկ առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնությանն ուղղվող ծախսերը 16.6 տոկոսով: Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության համակարգում առողջության կանխարգելումը և վաղ հայտնաբերումը ենթադրում է ընդհանուր հիվանդացության նվազման աջակցություն: Եթե 1998թ. պետական բյուջեի առողջապահությանն ուղղվող ներդրումների 56.6 տոկոսը հատկացվել է հիվանդանոցային բուժօգնության կազմակերպմանը, իսկ 19.0 տոկոսը առողջության առաջնային պահպանմանը, ապա 2007թ. ծախսային հարաբերակցության փոփոխությունը համապատասխանաբար կազմել է՝ 35.7% և 37.1%, 2008թ.՝ 39.0% և 41.1%, 2009թ.՝ 39.1% և 41.7%,: Առողջապահության ոլորտում ներդրումային աճի տենդենցը ենթադրում է, որ բնակչության համար ամենամատչելի և իր գործունեության հիմքում կանխարգելման կարևորագույն գործառույթ իրականացնող առաջնային բուժօգնության ոլորտը սկսել է գործել առավել արդյունավետ, ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում հաճախումները լուրջ ավելացման միտում ունեն:

## ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2007-2009թթ. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի ֆինանսավորման միջին ժամկետ ծրագրով առողջապահության պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ՝ ըստ ստորև ներկայացված գծանկարի:

**Գծանկար 8. 5 Առողջապահության ոլորտի պետական ծախսերի մակարդակը (%՝ ՀՆԱ-ի նկատմամբ)**




2007-2009թթ. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի ֆինանսավորման միջին ժամկետ ծրագրով առողջապահության պետական ծախսերի տեսակարար կշիռը պետական ընդհանուր ծախսերում ներկայացված է ստորև:

**Գծանկար 8.6 Առողջապահության բնագավառին հատկացվող ծախսերը՝ ընդհանուր բյուջետային ծախսերի նկատմամբ (%)**




Բյուջետային հատկացումների աճը մասնավորապես ուղղվելու է առողջապահության միջոլորտային և ներոլորտային ծրագրային գերակայություններով պայմանավորված նպատակների իրականացմանը:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնարար դրույթ է հանդիսացել, առկա ֆինանսական ռեսուրսների պայմաններում, բնակչության ամենաաղքատ և սոցիալապես առավել անպաշտպան խմբերի՝ բժշկական ծառայություններից օգտվելու մատչելիության աստիճանի բարձրացումը՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով ազգաբնակչության բուժսպասարկման վիճակի բարելավմանը:

2007-2009 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահության ոլորտին (ներառյալ առողջապահական օբյեկտների հիմնանորոգման, կապիտալ շինարարության համար կատարվող

ծախսերը, վարկային ծրագրին ՀՀ կառավարության մասնակցությունը, վարկային և գրանտային ծրագրերը) նախատեսվում է 2007 թվականին հատկացնել 45048.6 մլն դրամ, այդ թվում՝ ընթացիկ ծախսերի մասով՝ 39777.2 մլն դրամ, կապիտալ ծախսերի մասով՝ 5271.4 մլն դրամ, 2008 թվականին՝ 47320.4 մլն դրամ, այդ թվում՝ ընթացիկ ծախսերի մասով՝ 45636.5 մլն դրամ, կապիտալ ծախսերի մասով՝ 1683.9 մլն դրամ, 2009 թվականին՝ 53609.3 մլն դրամ, այդ թվում՝ ընթացիկ ծախսերի մասով՝ 51811.2 մլն դրամ, կապիտալ ծախսերի մասով՝ 1798.1 մլն դրամ: Ծախսերի աճը նախորդող տարիների նկատմամբ կկազմի՝ 2007 թվականին՝ 14.5 % կամ 5692.7 մլն դրամ, 2008 թվականին՝ 5.0 % կամ 2271.8 մլն դրամ, 2009 թվականին՝ 13.3 % կամ 6288.9 մլն դրամ:

**Աղյուսակ 8.2 Առողջապահության բնագավառի պետական ծախսերը՝ ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների (մլն դրամ)**

| Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | ՀՀ 2005թ. փաստացի բյուջե | ՀՀ 2006թ. հաստատված բյուջե | 2007թ. | + - | % | 2008թ. | + - | % | 2009թ. | + - | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առողջապահություն, այդ թվում | 31,079.7 | 39,355.9 | 45,048.6 | 5,692.7 | 14.5 | 47,320.4 | 2,271.8 | 5.0 | 53,609.3 | 6,288.9 | 13.3 |
| `- ընթացիկ ծախսեր | 29,650.7 | 34,433.5 | 39,777.2 | 5,343.7 | 15.5 | 45,636.5 | 5,859.3 | 14.7 | 51,811.2 | 6,174.7 | 13.5 |
| `- կապիտալ ծախսեր | 1,429.0 | 4,922.4 | 5,271.4 | 349.0 | 7.1 | 1,683.9 | -3,587.5 | -68.1 | 1,798.1 | 114.2 | 6.8 |
| ՀՀ առողջապահության բնագավառում պետական կառավարմանը ուղղվող ծախսեր | 483.7 | 730.5 | 847.1 | 116.6 | 16.0 | 863.8 | 16.7 | 2.0 | 986.4 | 122.6 | 14.2 |
| տեսակարար կշիռը բնագավառի ծախսերի նկատմամբ,% | 1.2 | 1.9 | 1.9 | | | 1.8 | | | 1.8 | | |
| Հիվանդանոցային բուժօգնություն | 14244.9 | 14,116.1 | 16,087.7 | 1,971.6 | 14.0 | 18,451.4 | 2,363.7 | 14.7 | 20,952.5 | 2,501.1 | 13.6 |
| տեսակարար կշիռը բնագավառի ծախսերի նկատմամբ,% | 36.2 | 35.9 | 35.7 | | | 39.0 | | | 39.1 | | |
| Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն, այդ թվում | 12,093.3 | 14,344.6 | 16,726.3 | 2,381.7 | 16.6 | 19,445.4 | 2,719.1 | 16.3 | 22,342.4 | 2,897.0 | 14.9 |
| `- ընթացիկ ծախսեր | 12,040.2 | 14,339.6 | 16,721.3 | 2,381.7 | 16.6 | 19,440.4 | 2,719.1 | 16.3 | 22,337.4 | 2,897.0 | 14.9 |
| `- կապիտալ ծախսեր | 53.1 | 5.0 | 5.0 | 0.0 | 0.0 | 5.0 | - | - | 5.0 | - | 0.0 |
| տեսակարար կշիռը բնագավառի ծախսերի նկատմամբ,% | 30.7 | 36.4 | 37.1 | | | 41.1 | | | 41.7 | | |
| Հիգիենիկ և հակահամա-ճարակային ծառայություններ | 1440.0 | 1,934.6 | 2,224.7 | 290.1 | 15.0 | 2,574.9 | 350.2 | 15.7 | 2,986.5 | 411.6 | 16.0 |
| տեսակարար կշիռը բնագավառի ծախսերի նկատմամբ,% | 3.7 | 4.9 | 4.9 | | | 5.4 | | | 5.6 | | |
| Բուժօգնության այլ ծառայություններ, այդ թվում | 2,057.3 | 2,720.2 | 2,865.0 | 144.8 | 5.3 | 3,301.3 | 436.3 | 15.2 | 3,832.9 | 531.6 | 16.1 |
| `- ընթացիկ ծախսեր | 1,093.7 | 1,725.0 | 1,725.0 | 0.0 | 0.0 | 1,983.8 | 258.8 | 15.0 | 2,321.0 | 337.2 | 17.0 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| `- կապիտալ ծախսեր | 963.6 | 995.2 | 1,140.0 | 144.8 | 14.5 | 1,317.5 | 177.5 | 15.6 | 1,511.9 | 194.4 | 14.8 |
| տեսակարար կշիռը բնագավառի ծախսերի նկատմամբ,% | 5.2 | 6.9 | 6.4 | | | 7.0 | | | 7.1 | | |
| Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր | - | 1,323.1 | 1,521.6 | 198.5 | 15.0 | 1,763.2 | 241.6 | 15.9 | 2,115.8 | 352.6 | 20.0 |
| տեսակարար կշիռը բնագավառի ծախսերի նկատմամբ,% | - | 3.4 | 3.4 | | | 3.7 | | | 3.9 | | |
| Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում, այդ թվում` | 38.4 | 520.0 | 764.0 | 244.0 | 46.9 | - | | | - | | |
| `- կապիտալ ծախսեր | 38.4 | 520.0 | 764.0 | 244.0 | 46.9 | - | | | - | | |
| տեսակարար կշիռը բնագավառի ծախսերի նկատմամբ,% | 0.1 | 1.3 | 1.7 | | | - | - | - | - | | |
| Համաշխարհային բանկի ինչպես նաև Մեծ Բրիտա-նիայի և Հյուսիսային Իռ-լանդիայի միացյալ թագա-վորության աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրեր, այդ թվում` | 722.1 | 3,666.8 | 4,012.2 | 345.4 | 9.4 | 920.4 | -3,091.8 | -77.1 | 392.8 | -527.6 | -57.3 |
| `- ընթացիկ ծախսեր | 348.2 | 264.5 | 649.8 | 385.3 | 145.6 | 559.0 | -90.8 | -14.0 | 111.6 | -447.4 | -80.0 |
| `- կապիտալ ծախսեր | 373.9 | 3,402.2 | 3,362.4 | -39.8 | -1.2 | 361.4 | -3,001.0 | -89.3 | 281.2 | -80.2 | -22.2 |
| *տեսակարար կշիռը բնագավառի ծախսերի նկատմամբ,%* | *1.8* | *9.3* | *8.9* | | | *1.9* | | | *0.7* | | |

**Գծանկար 8.7 Առողջապահության ոլորտի պետական ծախսերը` ըստ տնտեսագիտական դասակարգման**

**Ստորև ներկայացված է առողջապահության ոլորտի ընդհանուր ծախսերի տարանջատումը` ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի:**



**Գծանկար 8. 8 2007 թ. առողջապահության ոլորտի ծախսերի կառուցվածքը՝ ըստ ենթախմբերի (%)**




***Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն***

Այս համակարգը, որպես գերակա ուղղություն, բյուջեի ծախսերում ունի առաջանցիկ աճ:

2007 թվականին առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 16726.3 մլն դրամ՝ նախորդ տարվա 14344.6 մլն դրամի դիմաց. աճը կազմում է 16.6 % կամ 2381.7 մլն դրամ:

2007թ. առաջնային (ամբուլատոր պոլիկլինիկական) համակարգում տեղամասային բժիշկների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է հասցնել մինչև 64200 դրամի 2006 թվականի 58400 դրամի դիմաց, բուժքույրերինը՝ 41100 դրամի, 2006 թվականի 37400 դրամի դիմաց, իսկ նեղ մասնագիտացմամբ զբաղվող բժիշկների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 55000 դրամ (2006թ. 50000 դրամի դիմաց) բուժքույրերինը՝ 33000 դրամ (2006թ. 30000 դրամի դիմաց):

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության շրջանակներում 2007 թվականին նախատեսվում է բուժօգնություն մատուցողների տնտեսական բնույթի ծախսերի ավելացում, որը պայմանավորված է ջեռուցման, էլեկտրաէներգիայի, ջրմուղ-կոյուղու և կապի ծախսերի սակագների ավելացման հետ:

2006 թվականից ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնությունը անվճար է հանրապետության ողջ բնակչության համար: Ելնելով դրանից ավելացել են տեղամասային թերապևտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների և նեղ մասնագետների մոտ բնակչության հաճախումների թիվը, որն ունի ավելացման միտում: Կապված հաճախումների թվի ավելացման հետ ավելացել է նաև լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների քանակը՝ 2006 թվականի 3022.2 հազարի դիմաց 2007 թվականին նախատեսվում է 3376.2 հազար հետազոտություն, այդ թվում 180.0 հազար հետազոտություն նախատեսվում է կանանց

բակտերիոսկոպիական և արգանդի վզիկի օնկոցիտոլոգիական հետազոտության համար: Կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով, 40 տարեկան և բարձր տարիքի կանանց համար տարին մեկ անգամ նախատեսվում է կրծքագեղձի կլինիկական հետազոտություն և զննման կասկածելի արդյունքի դեպքում նախատեսվում է 12.0 հազար մամոգրաֆիայի հետազոտություն:

**Աղյուսակ 8. 3 Առաջնային բուժօգնության ֆինանսավորումը 2005-2008 թթ.՝ ըստ ծրագրերի (մլն դրամ)**

| Ֆինանսավորվող ծրագրեր | 2006թ. ծրագիր | 2007թ. | փոփոխու-թյան%-ը | տարբերու-թյունը | 2008թ. | փոփոխու-թյան%-ը | տարբերու-թյունը | 2009թ. | փոփոխու-թյան%-ը | *տարբերու-թյունը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն, այդ թվում | 14,344.6 | 16,726.3 | 16.6 | 2,381.7 | 19,445.4 | 16.3 | 2,719.1 | 22,342.4 | 14.9 | *2,897.0* |
| Բնակչության առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր | 8,609.30 | 9,797.0 | 13.9 | 1,197 | 11,376.1 | 16.0 | 1,570 | 12,985 | 14.1 | *1,609* |
| Մասնագիտացված բժշկական օգնության գծով պետական պատվեր | 2,028.60 | 2,295.0 | 13.1 | 266 | 2,666.5 | 16.2 | 372 | 3,121.1 | 17.0 | *455* |
| Հեմոդիալիզի անցկացման գծով պետական պատվեր | 736.30 | 833.10 | 13.1 | 97 | 955.1 | 14.6 | 122 | 1,085.5 | 13.7 | *130* |
| Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր | 1008.3 | 1332.9 | 32.2 | 325 | 1,597.2 | 19.8 | 264 | 1,864.6 | 16.7 | *267* |
| Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության գծով պետական պատվեր | 1926.4 | 2,426.7 | 25.5 | 491 | 2,794.2 | 15.6 | 377 | 3,198.3 | 14.5 | *404* |
| Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության գծով պետական պատվեր | *35.7* | *41.6* | *16.5* | *6* | *56.3* | *35.3* | *15* | *87.8* | *56.0* | *32* |

2008 թ. առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով հատկացումները կկազմեն 19445.4 մլն դրամ կամ 2007 թ. համեմատ կավելանան 16.3 տոկոսով, 2009 թ.՝ 22342.4 մլն դրամ կամ 2008 թ. համեմատ ավելացումը կկազմի 14.9 %:

***Հիվանդանոցային բուժօգնություն***

Հիվանդանոցային բուժօգնության գծով 2007 թ. նախատեսվում է հատկացնել 16087.7 մլն դրամ՝ 2006 թվականի 14116.1 մլն դրամի դիմաց, աճը կազմում է 14.0 % կամ 1971.6 մլն դրամ:

2007 թվականին հիվանդության բուժման միջին տևողությունը կկազմի 10.3 օր, 2006 թվականի 10.6 օրվա դիմաց, իսկ մահճակալների միջին տարեկան զբաղվածությունը՝ 158 օր, 2006 թվականի 156 օրվա դիմաց:

Հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում մեկ հիվանդի բուժման մեկ օրվա միջին

արժեքը, 2006 թվականի 9000 դրամի դիմաց, 2007 թվականին նախատեսվում է սահմանել 10200 դրամ կամ աճը կազմում է 13%: Հիվանդանոցային համակարգում բժիշկների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը 2007 թվականին նախատեսվում է 43700 դրամ, 2006 թվականի 38700 դրամի դիմաց, իսկ բուժքույրերինը՝ 34200 դրամ, 2006 թվականի 30300 դրամի դիմաց: 2007 թվականին նախատեսվում է տնտեսական բնույթի ծախսերի ավելացում, որը պայմանավորված է ջեռուցման, էլեկտրաէներգիայի, ջրմուղ-կոյուղու և կապի ծախսերի սակագների ավելացման հետ:

Ըստ վիճակագրական տվյալների բնակչության 8-10%-ը կարիք ունեն ստանալու հիվանդանոցային բուժօգնություն (կամ մոտ 295.0 հազ դեպք), որից պետական պատվերի շրջանակներում 2006թ. հաստատված բյուջեով նախատեսվել է ընդգրկել 191.8 հազար դեպք, իսկ 2007թ.՝ 197,4 հազար դեպք: Հիվանդանոցային բուժօգնության դեպքերի ավելացումը պայմանավորված է հանրապետության տնտեսական կայունությունից ելնելով հիվանդանոցային բուժհաստատություններ բնակչության դիմելիության մակարդակի բարձրացման հետ: Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) օղակում իրականացվող մի շարք միջոցառումների և ծրագրերի իրականացման արդյունքում, ամբուլատոր հաճախումների թվականակի ավելացման հետևանքով ավելանում են նաև բնակչության կյանքում առաջին անգամ ախտորոշված հիվանդությունների քանակը, մասնավորապես առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության շրջանակներում բարձր ռիսկի խմբերին իրականացվող պարտադիր հետազոտությունների (խորխի բակտերիոսկոպիկ, խորխի բակտերոլոգիական հետազոտություններ, ֆլյուրոգրաֆիա և այլն) արդյունքում բարձացել է կյանքում առաջին անգամ ախտորոշված ակտիվ տուբերկոլյոզով հիվանդների թվաքանակը: Այսպես 2000 թվականին հայտնաբերվել է 1284 հիվանդ, 2002 թվականին՝ 1393 հիվանդ, 2004 թվականին՝ 1558 հիվանդ: Ընդհանուր առմամբ հանրապետության տուբերկուլյոզային դիսպանսերներում հսկողության տակ գտնվող ակտիվ տուբերկուլյոզով հիվանդների թվաքանակը 2005 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6165 մարդ: Դեպքերի ավելացումը պայմանավորված է նաև տուբերկուլյոզի բուժման ազգային ծրագրի շրջանակներում տուբերկուլյոզի դեղակայուն ձևերով հիվանդների երկարաժամկետ բուժման նորագույն մոդելների կիրառմամբ:

Հոգեկան հիվանդների բուժման և խնամքի գծով դեպքերի աճը պայմանավորված է կյանքում առաջին անգամ ախտորոշված հոգեկան խանգարումների թվաքանակի ավելացմամբ: Այսպես 2000 թվականին հայտնաբերվել է 1285 հիվանդ, 2002 թվականին՝ 1411 հիվանդ, 2004 թվականին՝ 1653 հիվանդ: Նման աճի միտում պահպանվել է նաև 2005 թվականին:

«Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր» և «Մինչև 7 տարեկան երեխաների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրերի շրջանակներում 2005 թվականի փաստացի բուժօգնություն է մատուցվել համապատասխանաբար 32.6 և 23.0 հազար հիվանդներին: Այս ծրագրերի շրջանակներում 2007 թվականին համապատասխանաբար նախատեսվում է բուժօգնություն մատուցել 34.5 և 24.1 հազար հիվանդներին: Դեպքերի աճը պայմանավորված է ինչպես վերը նշված հիվանդանոցային բուժօգնության մատչելիության մակարդակի բարձրացմամբ, այնպես էլ սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկի ընդլայնմամբ՝ ընտանեկան նպաստի համակարգում ընգրկվածների նախորդ տարվա 38 բալի փոխարեն սահմանվել է 36 բալ:

**Աղյուսակ 8.4. Հիվանդանոցային բուժօգնության ֆինանսավորումը 2007-2009 թթ՝ըստ ծրագրերի (մլն դրամ)**

| Ֆինանսավորվող ծրագրեր | 2006թ. ծրագիր | 2007թ. | փոփոխու-թյան%-ը | տարբերու-թյունը | 2008թ. | փոփոխու-թյան%-ը | տարբերու-թյունը | 2009թ. | փոփոխու-թյան%-ը | *տարբերու-թյունը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հիվանդանոցային բուժօգնություն, այդ թվում՝** | 14,116.1 | 16,087.7 | 14.0 | 1,971.6 | 18,451.4 | 14.7 | 2,363.7 | 20,952.5 | 13.6 | 2,501.1 |
| Տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր | 902.0 | 1,054.2 | 16.9 | 152.1 | 1,210.2 | 14.8 | 156.1 | 1,374.9 | 13.6 | 164.7 |
| Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդություններիի բժշկականօգնության գծով պետական պատվեր | 523.1 | 654.9 | 25.2 | 131.8 | 748.7 | 14.3 | 93.8 | 846.5 | 13.1 | 97.8 |
| Սեռական ճանապարհով փոխանցվող հիվան-դությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր | 74.3 | 77.9 | 4.9 | 3.6 | 89.3 | 14.7 | 11.4 | 101.3 | 13.4 | 12.0 |
| Հոգեկան հիվանդների բժշ-կական օգնության գծով պետական պատվեր | 1,310.5 | 1,398.5 | 6.7 | 88.0 | 1,611.5 | 15.2 | 213.1 | 1,824.6 | 13.2 | 213.1 |
| Շտապ բժշկական օգնու-թյան գծով պետական պատվեր | 1,132.5 | 1,277.9 | 12.8 | 145.4 | 1,443.4 | 13.0 | 165.5 | 1,596.9 | 10.6 | 153.5 |
| Նարկոլոգիական հիվանդ-ների բժշկական օգնության գծով պետական պատվեր | 80.4 | 102.7 | 27.7 | 22.3 | 118.1 | 15.1 | 15.5 | 134.8 | 14.1 | 16.7 |
| Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր | 2,006.9 | 2,145.8 | 6.9 | 138.9 | 2,461.1 | 14.7 | 315.3 | 2,798.0 | 13.7 | 336.9 |
| Անհետաձգելի բժշկական օգնության գծով պետական պատվեր | 3,037.2 | 3,231.9 | 6.4 | 194.7 | 3,699.2 | 14.5 | 467.4 | 4,219.1 | 14.1 | 519.9 |
| Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր | 2,375.3 | 3,074.0 | 29.4 | 698.6 | 3,529.4 | 14.8 | 455.4 | 4,022.7 | 14.0 | 493.4 |
| Մինչև 7 տարեկան երեխա-ների հիվանդանոցային բուժօգնության գծով պետ. պատվեր | 1,639.0 | 2,147.3 | 31.0 | 508.3 | 2,465.4 | 14.8 | 318.1 | 2,810.1 | 14.0 | 344.6 |
| Զորակոչային և նախազո-րակոչային տարիքի ան-ձանց բժշկական օգնության և փորձաքննության գծով պետական պատվեր | 1,035.0 | 922.8 | -10.8 | -112.1 | 1,075.1 | 16.5 | 152.2 | 1,223.6 | 13.8 | 148.6 |

** 2006թ. ծրագրում և 2007թ. կանխատեսման կազմում ընդգրկված չէ կապիտալ շինարարությանն ուղղված գումարները:*

2008թ. հիվանդանոցային բուժօգնությանը կուղղվի 18451.4 մլն դրամ, 2007թ. համեմատ ծախսերը կավելանան 14.7 տոկոսով կամ 2363.7 մլն դրամով: 2008թ. հիվանդանոցային բուժօգնություն կստանան 197.3 հազար հիվանդանոցային դեպք: Հիվանդանոցային բուժօգնության մեկ օրվա գինը կկազմի 11700 դրամ:

2009թ. հիվանդանոցային բուժօգնությանը կուղղվի 20952.5 մլն դրամ, 2008թ. համեմատ ծախսերը կավելանա 13.6 տոկոսով կան 2501.1 մլն դրամով: 2009թ. հիվանդանոցային բուժօգնություն կստանան 197.3 հազար հիվանդանոցային դեպք: Հիվանդանոցային բուժօգնության մեկ օրվա գինը կկազմի 13300 դրամ:

***Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություն***

ենթախմբում ընդգրկված ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, հանրային առողջության պահպանման նպատակով փորձագիտական հետազոտությունների անցկացում, ուսումնասիրություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ: Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը իրականացնում է հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) կողմից սանիտարահամաճարակաբանական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև բնակչության առողջության վրա արտաքին աշխարհի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելում:

2007 թ. «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություն» ենթախմբի ծրագրային ծախսերը նախատեսվում են 2224.7 մլն դրամ, այդ թվում՝

- Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական միջոցառումների իրականացման գծով պետական պատվեր ծրագրի ծախսերը կազմում են 1655.4 մլն դրամ՝ 2006 թվականի 1439.4 մլն դրամի դիմաց, կամ աճ է նախատեսվել 15.0 %-ով,

- Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվեր ծրագրի ծախսերը կազմել են 227.0 մլն դրամ՝ 2006 թվականի 193.8 մլն դրամի դիմաց, կամ աճ է նախատեսվել 17.1 %-ով,

- Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր ծրագրի ծախսերը կազմում են 218.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 192.2 մլն դրամի դիմաց, կամ աճ է նախատեսվել 13.4 %-ով,

- ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխարգելման ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր ծրագրի ծախսերը կազմում են 66.3 մլն դրամ՝ նախորդ տարվա 58.0 մլն դրամի դիմաց, կամ աճ է նախատեսվել 14.3%-ով,

- Ախտահանման ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր ծրագրի ծախսերը կազմում են 58.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 51.2 մլն դրամի դիմաց:

Վերոնշյալ ծրագրերի շրջանակներում նախատեսվում է համաճարակաբանական հետազոտություններ անցկացնել վարակային հիվանդությունների օջախներում, իրականացնել ազգաբնակչության իմունիզացիայի կատարման նկատմամբ հսկողություն, մանրէաբանական, սանիտարա-քիմիական հետազոտություններ, նախազգուշական սանիտարական հսկողություն, նախագծերի հիգիենիկ փորձաքննություն, կառուցվող և վերակառուցվող օբյեկտների շահագործման ընդունում, հատուկ վտանգավոր վարակների՝ աղիքային, կաթիլային վարակիչ հիվանդությունների, խոլերայի, բրուցելյոզի, կատաղության, սիբիրախտի և այլ հատուկ վտանգավոր ինֆեկցիաների օջախներում հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում, ՁԻԱՀ/ՄԻԱՎ կանխարգելման վերաբերյալ կազմ-լուսավորչական աշխատանքներ, ռիսկի խմբի անձանց հսկողություն և հետազոտությունների անցկացում: Վերոնշյալ ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա ապահովել ՀՀ բնակչության համաճարակային անվտանգությունը, նվազեցնել բնակչության հիվանդացությունը տարափոխիկ հիվանդություններից:

2008 թ. «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություն» ենթախմբի ծրագրային

ծախսերը նախատեսվում են 2574.9 մլն դրամ կամ 2007թ. նկատմամբ 15.7 տոկոսով ավելի:

2009 թ. «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություն» ենթախմբի ծրագրային ծախսերը նախատեսվում են 2986.5 մլն դրամ կամ 2008թ. նկատմամբ 16.0 տոկոսով ավելի:

*«Բուժօգնության այլ ծառայություններ» ենթախումբ*

2007թ. կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումներ ձեռքբերելու համար նախատեսվում է 1140.0 մլն դրամ, 2008թ. համապատասխանաբար՝ 1317.5 մլն դրամ, 2009թ.՝ 1511.9 մլն դրամ:

Կենտրոնացված կարգով ձեռքբերվող դեղորայքի գումարը կկազմի 2007թ.՝ 1725.0 մլն դրամ, 2008թ.՝ 1983.8 մլն դրամ, 2009թ.՝ 2321.0 մլն դրամ:

*Արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր*

2007-2009թթ. ժամանակահատվածում Համաշխարհային բանկի կողմից տրամադրված միջոցներով առողջապահության ոլորտում կիրականացվի Առողջապահության համակարգի երկրորդ վարկային ծրագիրը, որի նպատակն է բարելավել բուժօգնության որակն ու մատչելիությունը, իրականացնել առողջապահության համակարգի օպտիմալացման այնպիսի ռազմավարություն, որը կբարձրացնի համակարգի արդյունավետությունը:

Առողջապահության համակարգի արդիականացման ծրագիրը կտարանջատվի չորս հիմնական բաղադրիչի՝ ընտանեկան բժշկության զարգացում, հիվանդանոցային համակարգի օպտիմալացում և արդիականացում, ինստիտուցիոնալ զարգացում, ծրագրի ղեկավարում:

Ծրագրիը շրջանակներում կվերապատրաստվեն առողջության առաջնային պահպանման ոլորտում աշխատող բժիշկները և բուժքույրերը, որպես ընտանեկան բժշկության մատուցողներ, ինչով և կավարտվի անցումային ժամանակաշրջանը՝ ներկայումս գործող ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգից դեպի ընտանեական բժշկության: Ծրագիրը կաջակցի կրթական կենտրոնների բարելավմանը և ընդլայնմանը, վերջիններս կհագեցվեն անհրաժեշտ ուսումնական, գրասենյակային, բժշկական սարքավորումներով, տրանսպորտային միջոցներով: Կբարելավվի ընտանեական բժշկության ծառայություններ մատուցողների աշխատանքային միջավայրը: Ծրագրի իրականացման ընթացքում ակնկալվում է վերանորոգել ԱԱՊ հաստատություններ և կառուցել ամբուլատորիաներ:Ծրագիրը կաջակցի նաև Երևանի նորաստեղծ հիվանդանոցային միավորում-ներից ընտրված մի քանի հիվանդանոցային ընկերություններում և մարզերում իրականացվող ներ-քին օպտիմալացմանը, վերջիններիս ղեկավարման և կառավարման համակարգերի ամրապնդման միջոցառումներին, կներդրվեն ղեկավարման տեղեկատվական համակարգեր և կիրականացվի ղեկավար աշխատակազմի ուսուցում: Հիվանդանոցային միավորումները կվերազինվեն նաև անհրաժեշտ սարքավորումներով, կիրականցվեն վերապատրաստման դասընթացներ բժշկական թափոնների վարման բնագավառում: Ծրագրի շրջանակներում կստեղծվեն կարողություններ առողջապահության ոլորտի գործունեության գնահատման համար, մասնավորապես դրանք կհանդիսանան առողջապահության ազգային հաշիվները և առողջապահության համակարգի գործունեության հաշվետվությունները:

Աղյուսակ 8. 5 Ստորև ներկայացվում է Համաշխարհային Բանկի վարկային միջոցների և ՀՀ կառավարության մասնակցության գումարները ըստ տնտեսագիտական դասակարգման (մլն դրամ)`

| | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ Համաշխարհային բանկի և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրեր, այդ թվում`** | **4,012.2** | **920.4** | **392.8** |
| *`- ընթացիկ ծախսեր* | **649.8** | **559.0** | **111.6** |
| *`- կապիտալ ծախսեր* | **3,362.4** | **361.4** | **281.2** |
| 1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր, այդ թվում` | **3,729.0** | **599.9** | **280.4** |
| *`- ընթացիկ ծախսեր* | **498.1** | **379.8** | **111.6** |
| *`- կապիտալ ծախսեր* | **3,230.9** | **220.1** | **168.8** |
| 2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագիր, այդ թվում` | **151.7** | **179.2** | **-** |
| *`- ընթացիկ ծախսեր* | **151.7** | **179.2** | **-** |
| *`- կապիտալ ծախսեր* | **-** | **-** | **-** |
| 3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագրի շրջանակներում «Սոցիալական և տնտեսական փոքրամասշտաբ ենթակառուցվածքի վերականգնում առողջապահության ոլորտում» ենթածրագիր, այդ թվում` | **67.5** | **112.5** | **112.4** |
| *`- ընթացիկ ծախսեր* | **-** | **-** | **-** |
| *`- կապիտալ ծախսեր* | **67.5** | **112.5** | **112.4** |
| 4. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից ՀՀ ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագիր, այդ թվում` | **64.0** | **28.8** | **-** |
| *`- ընթացիկ ծախսեր* | **-** | **-** | **-** |
| *`- կապիտալ ծախսեր* | **64.0** | **28.8** | **-** |

### *«Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր» ենթախումբ*

2007 թ. ենթախմբի ծրագրային ծախսերը նախատեսվում են 1521.6 մլն դրամ կամ 2006թ. նկատմամբ 15.0 տոկոսով ավելի:

2008 թ. ենթախմբի ծրագրային ծախսերը նախատեսվում են 1763.2 մլն դրամ կամ 2007թ. նկատմամբ 15.9 տոկոսով ավելի:

2009 թ. ենթախմբի ծրագրային ծախսերը նախատեսվում են 2115.8 մլն դրամ կամ 2008թ. նկատմամբ 20.0 տոկոսով ավելի:

Ենթախումբը ընդգրկում է հետևյալ ծրագրերը`

- Պաթանատոմիական, դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր,
- Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում,

- Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվեր,
- Արյան հավաքագրման և դրան առնչվող ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր,
- Դեղագործական շուկայի կանոնակարգման և դրան առնչվող ծառայությունների գծով պետական պատվեր,
- Առողջապահական այլ ծառայությունների գծով պետական պատվեր,
- Ծխելու դեմ պայքարի պետական ծրագրի գծով պետական պատվեր:

**Աղյուսակ 8. 6 Առողջապահության ծախսերը՝ ըստ իրականացնող մարմինների (մլն դրամ)**

| | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|
| 1. ՀՀ նախագահի աշխատակազմ, այդ թվում՝ | 100.0 | 100.0 | 120.0 |
| - ընթացիկ ծախսեր | 100.0 | 100.0 | 120.0 |
| - կապիտալ ծախսեր | - | - | - |
| 2. ՀՀ կառավարության աշխատակազմ, այդ թվում՝ | 67.5 | 112.5 | 112.5 |
| - ընթացիկ ծախսեր | - | - | - |
| - կապիտալ ծախսեր | 67.5 | 112.5 | 112.5 |
| 3.ՀՀ առողջապահության նախարարություն, այդ թվում՝ | 44,666.8 | 46,903.0 | 53,159.9 |
| - ընթացիկ ծախսեր | 39,531.9 | 45,365.4 | 51,479.3 |
| - կապիտալ ծախսեր | 5,134.9 | 1,537.6 | 1,680.6 |
| 4.ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն, այդ թվում՝ | 81.9 | 90.3 | 97.3 |
| - ընթացիկ ծախսեր | 81.9 | 90.3 | 97.3 |
| - կապիտալ ծախսեր | | | |
| 5.ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգություն, այդ թվում՝ | 26.8 | 29.5 | 31.8 |
| - ընթացիկ ծախսեր | 26.8 | 29.5 | 31.8 |
| - կապիտալ ծախսեր | | | |
| 6.ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այդ թվում՝ | 64.0 | 28.8 | - |
| - ընթացիկ ծախսեր | - | - | - |
| - կապիտալ ծախսեր | 64.0 | 28.8 | - |
| 7.ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե, այդ թվում՝ | 41.6 | 56.3 | 87.8 |
| - ընթացիկ ծախսեր | 36.6 | 51.3 | 82.8 |
| - կապիտալ ծախսեր | 5.0 | 5.0 | 5.0 |

Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության ծրագրերի գծով 2007-2009թթ. ՄԺԾԾ-ով սահմանված հատկացումների կանխատեսումների բաշխումը ծրագրային դասակարգմամբ ներկայացված է Հավելված 2-ի N 2 աղյուսակում:

## ԳԼՈՒԽ 9. ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

### 9.1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ոլորտում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության այն ծրագրերը, որոնց համար Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գլխադասային է:

Ոլորտի պետական ֆինանսավորման ծավալների աճը և արդյունավետության բարձրացումը ծրագրային ողջ ժամանակահատվածում դիտվել է որպես առաջնահերթ խնդիր:

Ոլորտի հիմնական խնդիրները ուղղակիորեն առնչվում և համընկնում են աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գերակայություններին, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգի զարգացման և աղքատության հաղթահարման գործում դրա մասնակցության և արդյունավետության բարձրացմանը:

Ոլորտի առավել կարևոր միջոցառումներն են՝ բնակչության կենսաթոշակային և առավել կարիքավոր ընտանիքներին ընտանեկան նպաստով, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության ու պետական աջակցության, ինչպես նաև բնակչության զբաղվածության պետական կարգավորման խնդիրների լուծման ապահովումը:

**Սոցիալական ապահովագրության բնագավառ**

2006թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության ենթակա անձանց շրջանակը, ապահովագրական նպաստների իրավունք տվող պայմանները, դրանց տեսակները, հաշվարկման, նշանակման և վճարման կարգը (նշված իրավահարաբերությունները մինչ այդ կանոնակարգվում էին ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով): Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով 2006թ. ընդունվել են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներ, իսկ 2007-2009թթ. նախատեսվում է կատարել պարտադիր սոցիալական ապահովագրության առանձին պետական ծրագրերի իրականացումն ապահովող իրավական դաշտի շարունակական կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակման և համապատասխան ընթացքի ապահովման, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության առանձին պետական ծրագրերի օրենսդրության միասնական կիրառման ապահովման (մեթոդական ղեկավարման) աշխատանքներ:

**Կենսաթոշակային ապահովության**

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների իրականացումը ներառվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006

թվականի գործունեության գերակա խնդիրների ցանկում, որի շրջանակներում կկատարվեն գերակա խնդրի լուծմանն ուղղվող հետևյալ աշխատանքները.

ա) Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության բարեփոխումների ռազմավարության հաստատում.

բ) կենսաթոշակային ապահովության բարեփոխումների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի հաստատում.

գ) կենսաթոշակային ապահովության բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների և իրավական այլ ակտերի ստեղծում.

դ) կենսաթոշակային ապահովագրության համակարգում անհատական (անձնավորված) հաշվառման համակարգի լիարժեք ներդրման ապահովում:

Կենսաթոշակային ապահովության բնագավառի միջնաժամկետ զարգացման միտումները պայմանավորված կլինեն կենսաթոշակային ապահովության նոր ռազմավարության իրականացմամբ, ինչի շնորհիվ, սկսած 2008 թվականից, նախատեսվում է ներդնել կենսաթոշակային ապահովության խառը համակարգ, որը կունենա հետևյալ բաղկացուցիչները.

1. պետական կենսաթոշակային ապահովություն,

2. պարտադիր կուտակային կենսաթոշակային ապահովագրություն` մինչև 30 տարեկան աշխատող անձանց համար` նրանց աշխատավարձից կատարվող վճարումների հաշվին,

3. կամավոր կենսաթոշակային ապահովագրություն` ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների և ապահովագրական ընկերությունների միջոցով:

Ելնելով Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթներից (կետ 7.1.3., ենթակետ 285, 292) կարևորվում են հատկապես պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման բազան մեծացնելուն ուղղված միջոցառումները, ինչի համար, առաջին հերթին, կշարունակվեն անհատական (անձնավորված) հաշվառման համակարգի լիարժեք ներդրումն ապահովող աշխատանքները, առանց որի հնարավոր չի լինի իրականացնել իրական կուտակային կենսաթոշակային ապահովագրություն:

Այս համատեքստում կշարունակվեն նաև սոցիալական ապահովության քարտերի կիրառումն ապահովող իրավական դաշտի շարունակական կատարելագործման, տեղեկատվական բազաների միջև տվյալների ինքնաշխատ փոխանակության միջազգային փորձի ուսումնասիրության, սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական բազաների միջև տվյալների ինքնաշխատ փոխանակության մեխանիզմների (ընթացակարգերի) շարունակական կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակման և համապատասխան ընթացքի ապահովման աշխատանքները:

ԱՀՌԾ-ով նախանշված հաջորդ խնդիրը վերաբերում է տարիքային կենսաթոշակների տարբերակման աստիճանի կտրուկ ավելացմանը` պայմանավորված աշխատանքային ստաժով: Կենսաթոշակառուի անձնական գործակցի ներմուծմամբ որոշակիորեն ապահովվել է սոցիալական արդարության սկզբունքը, այն է` որքան շատ աշխատանքային ստաժ, այնքան ավելի բարձր կենսաթոշակ, որն արդյունք է ՀՀ կառավարության` վերջին տարիներին որդեգրած հետևողական քաղաքականության, ինչի շնորհիվ վերջին 2,5 տարվա ընթացքում կենսաթոշակի ապահովագրական մասի միջին չափը բարձրացել է գրեթե կրկնակի (ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը

100 դրամից բարձրացվել է 180 դրամի):

Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է նաև կենսաթոշակի փոխհատուցման գործակցի աստիճանական բարձրացում (ապահովելով այդ ցուցանիշի համապատասխանությունը Եվրոպական սոցիալական խարտիայի նորմերին), որը 30 տարվա ապահովագրական ստաժ ունեցող անձի համար կազմում է առնվազն 40 տոկոս, այսինքն` կենսաթոշակը կազմում է նախկին աշխատավարձի առնվազն 40 տոկոսը:

***Սոցիալական աջակցության բնագավառ***

***Ընտանեկան նպաստի համակարգ***

Որպես աղքատության հաղթահարման կարևորագույն գործիք առանձնահատուկ դեր և նշանակություն ունի ընտանեկան նպաստը:

Ընտանեկան նպաստի համակարգը երկրում գործում է արդեն 7 տարի և այս տարիների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, հաշվառված, նպաստառու ընտանիքների թվի շարժը խոսում են ծրագրի հասցեականության մեծացման, ինչպես նաև անուղղակիորեն աղքատության կրճատման մասին: Համակարգում հաշվառվելու համար ընտանիքն իրեն պետք է համարի աղքատ և ակնկալի պետությունից որևէ աջակցություն ստանալ: Հաշվառված ընտանիքների թվի կրճատումը, իսկ դրանում նպաստառու ընտանիքների թվի տեսակարար կշռի մեծացումը խոսում է բնակչության կողմից իրազեկվածության, միաժամանակ հասցեականության մեծացման, ինչպես նաև աղքատության կրճատման օգտին: Ստորև ներկայացվում է հաշվառված և նպաստառու ընտանիքների թվի շարժը 1999 թվականից մինչև 2005 թվականը:

**Աղյուսակ 9.1. Նպաստառու ընտանիքների հարաբերակցությունը ՀՀ-ում 1999-2005թթ.**

| | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|---|
| հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից) | 67.70 | 52.85 | 43.99 | 38.61 | 28.37 | 26.96 | 25.42 |
| նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից) | 40.68 | 50.52 | 54.70 | 54.86 | 67.84 | 63.88 | 64.81 |
| նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից) | 27.54 | 26.70 | 24.06 | 21.18 | 19.25 | 17.22 | 16.48 |

Վերջին երկու տարվա ընթացքում տարբերակվել է նպաստի չափը: Միաժամանակ 2005 թվականին հստակեցվեց միանվագ դրամական օգնության տրամադրման հիմքերը` սահմանվեցին միանվագ դրամական օգնություն տրամադրելու երկու առանձին` նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, ինչպես նաև հանրակրթական դպրոցի առաջին դասարան ընդունվելու դեպքերը: Առաջին դեպքում միանվագ դրամական օգնության չափը սահմանվեց 35 հազար դրամ, իսկ երկրորդ դեպքում` 20 հազար դրամ:

Հաշվի առնելով 2004-2005 թվականների դրական փորձը 2006 թվականին ընտնտենկան նպաստի իրավունք տվող սահմանային միավորը իջեցվեց մեկ միավորով` 34.00-ից դարձավ 33.00, իսկ բազային մասը բարձրացվեց 1000 դրամով և դարձավ 7000 դրամ: Ընտանեկան նպաստի չափը տարբերակվեց հետևյալ ձևով.

33.01-37.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների `յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը` 4000 դրամ, չորս և ավելի մինչև 18 տարին չլրացած անդամ ունեցող ընտանիքների (այսուհետ` բազմազավակ ընտանիք) մինչև 18 տարին չլրացած

անդամին տրվող հավելումը՝ 5000 դրամ, բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 4500 դրամ, բազմազավակ և բարձր լեռնային կամ բազմազավակ և սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5500 դրամ.

37.01-40.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 4500 դրամ, բազմազավակ ընտանիքի մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5500 դրամ, բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5000 դրամ, բազմազավակ և բարձր լեռնային կամ բազմազավակ և սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ.

40.01 և ավելի անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝ յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5000 դրամ, բազմազավակ ընտանիքի մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ, բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5500 դրամ, բազմազավակ և բարձր լեռնային կամ բազմազավակ և սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ:

Միաժամանակ 2006 թվականի համար սահմանվեց ևս մեկ միանվագ դրամական օգնության տրամադրման դեպք՝ նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու և աշխատող չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ դրամական օգնություն:

Իրականացվող քաղաքականությունը՝ ֆինանսական միջոցներն առավելապես երեխա ունեցող ընտանիքներին ուղղելը, տալիս է իր արդյունքները՝ շարունակվում է նպաստառու ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների տեսակարար կշռի մեծացումը:

**Աղյուսակ 9.2. Երեխա ունեցող ընտանիքների փոխհարաբերությունը ՀՀ 1999-2005թթ.**

| | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ընտանիք (% հաշվառվածներից) | 40.68 | 50.52 | 54.70 | 54.86 | 67.84 | 63.88 | 64.81 |
| երեխա ունեցող ընտանիքներ (% հաշվառվածներից) | 36.26 | 47.19 | 54.47 | 60.75 | 63.5 | 65.56 | 69.29 |

Նման մոտեցումն արդեն իսկ ամրագրվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով, ուստի և նշված քաղաքականությունը շարունակվելու է նաև 2007-2009 թվականներին:

2005 թվականի ընթացքում ընտանեկան նպաստի միջին չափը կազմել է շուրջ 12.0 հազ. դրամ: Նպաստառու ընտանիքների միջին ամսական թիվը կազմել է շուրջ 128 հազար ընտանիք, իսկ միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքները՝ միջինը՝ 23 հազար:

Այս նպատակի համար 2007 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվող 26 587.7 մլն. դրամը նախորդ տարվա նկատմամբ շուրջ 9.2 %-ով ավելի է, որը նույնպես ուղղվելու է ընտանեկան նպաստի միջին չափի բարձրացմանը և հիմնականում, ինչպես նախորդ տարիներին, ընտանիքի անչափահաս անդամներին: 2007 թվականին նպաստառու ընտանիքների թիվը

հանրապետությունում կնվազի հասնելով 125,1 հազարի: Ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կբարձրանա մինչև 17,6 հազ. դրամ, պահպանելով նպաստի չափի տարբերակման սկզբունքը:

*Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ*

Հանրապետությունում շարունակվում է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագրի իրականացումը: Նպաստի չափը դեռևս շատ ցածր է, ընդամենը 2300 դրամ: Ստորև ներկայացվում է նպաստառուների թիվն ըստ տարիների:

**Աղյուսակ 9.3. Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստառուների թիվը ՀՀ 1999-2004թթ.**

| Տարիներ | 1999թ. | 2000թ. | 2001թ. | 2002թ. | 2003թ. | 2004թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Նպաստառուներ | 10450 | 10091 | 8780 | 7326 | 7721 | 7330 |

**Երեխայի ծննդյան միանվագ նպաստ**

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 2003 թվականի հոկտեմբերից բարձրացել է հավասարվելով 35000 դրամի: Այն նպաստել է 2004 թվականի ընթացքում սույն նպաստը ստացող անձանց թվի մեծացմանը: Միաժամանակ հարկ է նշել, որ սա աջակցել է նաև հանրապետությունում ծնունդների չգրանցման դեպքերի կրճատմանը: Ստորև ներկայացվում է ըստ տարիների երեխայի ծննդյան կապակցությամբ նպաստ ստացած անձանց թիվը:

**Աղյուսակ 9.4. Երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ ստացած անձանց թիվը ՀՀ 1999-2004թթ.**

| Տարիներ | 1999թ. | 2000թ. | 2001թ. | 2002թ. | 2003թ. | 2004թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ծնված երեխաների թիվը | 36500 | 34300 | 32100 | 32200 | 35800 | 37500 |
| Նպաստառուներ | 26200 | 24500 | 25674 | 25707 | 28884 | 30283 |
| Նպաստառուներ (% ծնված երեխաներից) | 71.78 | 71.43 | 79.98 | 78.90 | 89.68 | 80.75 |

Ընտանեկան նպաստի ծրագրով 2005 թվականին սահմանվել է ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում ծնված երեխայի համար միանվագ դրամական օգնություն 35 հազար դրամի սահմաններում, այսինքն անուղղակիորեն տարբերակվել է երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստը պայմանավորված ընտանիքի անապահովության մակարդակով:

***Զբաղվածության, աշխատանքի և աշխատավարձի բնագավառ***

***Զբաղվածության համակարգ***

Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության քաղաքականությունը նպատակաուղղված է լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովմանը՝ աշխատանքի խթանման, զբաղվածության խրախուսման, բնակչության եկամուտների ավելացման և հավաքագրված միջոցների բաշխման արդարացի մեխանիզմների ներդրման:

Այս տեսանկյունից կարևորվում է զբաղվածության այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որն առաջին հերթին կնպաստի տնտեսության զարգացմանը. մի կողմից՝

զարգացնելով գործազուրկների հմտությունները ու բարձրացնելով նրանց տնտեսական ակտիվությունը և արդյունքում հաղթահարելով նրանց աղքատությունը, մյուս կողմից՝ շահագրգռելով գործատուին պահպանել գործող աշխատատեղերը, ստեղծել նոր աշխատատեղեր և թափուր աշխատատեղերը համալրել ժամանակակից մասնագիտություններին, այդ թվում՝ տեխնոլոգիաներին տիրապետող, բանիմաց, հմուտ մասնագետներով:

2005թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակչության թիվը կազմել է 3212.2 հազ. մարդ, աշխատանքային ռեսուրսները կազմել են ամբողջ բնակչության 63.5 %-ը կամ 2041.5 հազ. մարդ:

Ըստ վիճակագրության ազգային ծառայության տվյալների, տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 1999-2005թթ. կայուն նվազման միտում է ունեցել և 1999թ. 1462.4 հազ. մարդուց նվազելով 2005թ. կազմել է 1196.5 հազ. մարդ: Չնայած 1994-2004թթ. հանրապետությունում արձանագրված տնտեսական աճին՝ զբաղվածությունը տարեցտարի կրճատման միտում է ունեցել և 2005թ. կազմել է 1081.7 հազ. մարդ:

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումները հանգեցրել են զբաղվածության կառուցվածքի էական փոփոխությունների: Կառուցվածքային բարեփոխումների արդյունքում նվազել է զբաղվածությունը պետական հատվածում և աճել՝ մասնավոր հատվածում:

Աշխատանք փնտրող անձանց թվաքանակը հանրապետությունում 2006թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 121.0 հազ. մարդ: Նրանց 73.5 %-ը կամ 89.0 հազարը գործազուրկ են: Կանանց տեսակարար կշիռը շարունակում է մնալ բարձր և կազմում է գործազուրկների թվի 70.8 %-ը կամ 63.0 հազ. մարդ: Գործազուրկների թվի մեջ մեծ է քաղաքային բնակչության տեսակարար կշիռը՝ շուրջ 92.9%:

2006թ. հունվարի 1-ի դրությամբ բարձրագույն կրթություն ունեցողները կազմել են գործազուրկների ընդհանուր թվի 14.0 %-ը, միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 25.8 %, ընդհանուր միջնակարգ կրթություն ուեցողները՝ 54.0% և թերի միջնակարգ կրթություն ունեցողները՝ 6.2 %:

Գործազուրկների տարիքային ցենզը հետևյալն է. մինչև 18 տարեկանները 0.1 % են, 18-22 տարեկանները կազմում են գործազուրկների թվի 1.1 %-ը, 23-30 տարեկանները՝ 13.8 %-ը, 31-50 տարեկանները՝ 70.5 %-ը, իսկ 50-ից բարձր տարիքի անձանց թիվը՝ 14.5 %:

Մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեն գործազուրկների 82.3%-ը:

2005 թվականի ընթացքում աշխատանքի են տեղավորվել 8296 մարդ հիմնականում՝ առևտրի, հասարակական սննդի և արդյունաբերության ոլորտներում: Զարգացման միտումներ են նկատվում գյուղատնտեսության և գյուղմթերքների վերամշակման, սպասարկման, շինարարության, արդյունաբերության ոլորտներում:

2006 թվականին նախատեսվում է հանրապետությունում ստեղծել 20.0-22.0 հազ աշխատատեղ, որից շուրջ 7300-ը՝ համալրել զբաղվածության պետական ծառայության միջոցով: Վարձատրվող հասարակական աշխատանքներում կընդգրկվեն շուրջ 8829 քաղաքացի:

2005թ. հոկտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով սահմանվող առանձին իրավահարաբերություններ կարգավորելու համար ընդունվել են թվով 9 Հայաստանի

Հանրապետության կառավարության որոշումներ: Զբաղվածության օրենսդրության կատարելագործման խնդիրը դրված է հետագա երեք տարիների աշխատանքային գործունեության հիմքում: Զբաղվածության բնագավառի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում կարևորվում է սոցիալական գործընկերության համակարգի ներդրման խնդիրը: Զբաղվածության արդյունավետ քաղաքականությունը պահանջում է տնտեսության արագ տեմպերով զարգացման ապահովում հանրապետության բոլոր մարզերում և տարածաշրջաններում: Երկրում իրականացվող զբաղվածության քաղաքականությանն իրենց անմիջական մասնակցությունը պետք է ունենան տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, գործատուների միությունները, որոնք իրենց հերթին խիստ շահագրգռված են բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Ոլորտի առաջիկա երեք տարիների զարգացման հիմնական ուղղությունները մեծապես կախված կլինեն զբաղվածության մակրոտնտեսական քաղաքականության մեջ կատարվող հայեցակարգային մոտեցումներից, որն իր արտահայտությունը կստանա զբաղվածության քաղաքականության զարգացման հայեցակարգի հիմնադրույթներում:

Աշխատանք փնտրող քաղաքացիների մի ստվար զանգված, այդ թվում՝ հաշմանդամները, երիտասարդները աշխատանք գտնելու հարցում աշխատաշուկայում հանտնվել են ոչ հավասար պայմաններում և կրում են դժվարություններ: «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով աշխատանք փնտրող քաղաքացիների այս խումբը համարվում է աշխատաշուկայում անմրցունակ և նախատեսվում են հատուկ ծրագրեր աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման և աշխատանքի տեղավորման համար:

### *Վարձատրվող հասարակական աշխատանքներ*

Աշխատանք փնտրող չզբաղված քաղաքացիների, մասնավորապես գործազուրկների, ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների չզբաղված անդամների, հողի սեփականաշնորհումից օգտվելու պատճառով զբաղված համարվող աշխատանք փնտրողների, ինչպես նաև աշխատանք փնտրող այլ չզբաղված անձանց և ուսանողների համար ժամանակավոր զբաղվածություն ապահովելու նպատակով, առաջիկայում ևս շարունակվելու են կազմակերպվել վարձատրվող հասարակական աշխատանքներ: Վարձատրվող հասարակական աշխատանքները կազմակերպվում են համայնքների կողմից (Երևանում՝ թաղային համայնքների կողմից)՝ հիմնականում համայնքների սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների վերանորոգման, նորոգման աշխատանքների օժանդակելու համար:

### *Աշխատանքի կարգավորման համակարգ*

Հանրապետության տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի աշխատանքի պետական կարգավորումը: Մակրոտնտեսական ցուցանիշերի բարելավումը մեծապես պայմանավորված է նաև տնտեսությունում աշխատանքի շարժառիթների խթանումից և խրախուսումից:

Մասնավորապես, աշխատանքի պետական կարգավորման քաղաքականությունը կնպաստի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և աշխատանքի որակի բարելավմանը: Աշխատանքի խթանման համար առանձնահատուկ նշանակություն ունի աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործումը, կազմակերպություններում աշխատանքի անվտանգության և հիգիենայի պայմանների բարելավումը, սոցիալական գործընկերության զարգացումը, աշխատավորների ներկայացուցիչների մարմինների ստեղծումը և նրանց ակտիվությունը, աշխատանքի բնագավառում օրենսդրական դաշտի ընդլայնումը և ամենակարևորն է աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ հսկողության իրականացումը: Աշխատանքի ոլորտում վերը նշված բարեփոխումները կնպաստեն հանրապետությունում պետության դերի բարձրացմանը, գործարարության կազմակերպմանը և ծավալմանը, ինչպես նաև կբարելավեն ներդրումային իրավիճակը և մակրոտնտեսական ցուցանիշները:

2006 թվականի հունվարի դրությամբ Հայաստանի Հանրապետությունը արդեն իսկ վավերացրել է աշխատանքի ոլորտին վերաբերող Աշխատանքի միջազգային կազմակերպության թվով 29 կոնվենցիաններ և հանձնարարականներ:

2004 թվականի նոյեմբերի 9-ին ընդունվել և 2005 թվականի հունիսի 21-ից գործողության մեջ է մտել ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, որը պահանջում է աշխատանքային հարաբերությունների նոր մոտեցումներ և իրավական ակտերի ընդունում: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել աշխատավորների կոլեկտիվների և գործատուների միջև կնքվող կոլեկտիվ պայմանագրերի կնքման ընթացակարգեր, սահմանել տարիֆա-որակավորման սանդղակներ և սոցիալական այլ երաշխիքներ:

Անհրաժեշտություն է առաջացել իրականացնել կազմակերպություններին, գործարարներին, արհեստակցական միություններին աշխատանքի, աշխատավարձի, աշխատանքի անվտանգության կազմակերպման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և ապահովել տեղեկատվությամբ:

Վերոհիշատակված նպատակներից ելնելով անհրաժեշտ է ընդունել ՀՀ աշխատանքային օրենսգրքի կիրարկումը ապահովող մի շարք նորմատիվ ակտեր:

Աշխատանքի ոլորտում հետևողական իրականացվող գործընթացները կբերեն աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորմանը, աշխատանքային պայմանների բարելավմանը և սոցիալական գործընկերության զարգացմանը:

### *Աշխատավարձի կարգավորման համակարգ*

Ներկայումս գոյություն ունեն լուծման ենթակա խնդիրներ որոնք առնչվում են աշխատողների աշխատավարձի մակարդակի, նյութական խրախուսման, սոցիալական պաշտպանվածության համակարգերի անհամապատասխանությանը նրանց ունեցած լիազորություններին և պարտականություններին:

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը նույնպես ամրագրել է հանրային կառավարման ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտությունը և այդ համատեքստում հանրային ծառայողների աշխատանքի վարձատրության բարելավումը:

Աշխատավարձի պետական կարգավորման քաղաքականությունը կնպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

ՀՀ-ում ներկայումս փորձ է արվում գտնել աշխատավարձի կազմակերպման այնպիսի ձևեր, որոնք առավել չափով կհամապատասխանեն արտադրության կազմակերպման ժամանակակից պահանջներին:

Աշխատանքի վարձատրության մակարդակի, վարձատրության մեխանիզմների, կառուցվածքի և աշխատավարձի նկատմամբ սահմանվող հավելումների ու հավելավճարների համակարգերի ռազմավարական որոշումները համապատասխանում են վարձատրության միջազգային մոտեցումներին և ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին:

2001-2005թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունը արդեն իսկ վավերացրել է նախարարության կողմից նախապատրաստված աշխատավարձի ոլորտին վերաբերող 2 կոնվենցիաներ՝ «Աշխատավարձի պաշտպանության մասին» թիվ 95 և «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին» թիվ 131:

Վերջին տարիների ընթացքում իրականացվել են նաև մի շարք տնտեսական և օրենսդրական բարեփոխումներ:

Աշխատավարձի քաղաքականությունը նպատակաուղղված է պետական և մասնավոր հատվածների աշխատանքի վարձատրության մակարդակների միջև առկա տարբերության կրճատմանը, որը կարելի է իրականացնել փուլային տարբերակով՝ հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները:

Նշված հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է ընդունել մի շարք նորմատիվ իրավական ակտեր, որոնք կնպաստեն վարձատրության համակարգի բարելավմանը:

ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափը 2006թ. հունվարի 1-ից «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված է 15000 դրամ, իսկ հաշվարկային հիմք հանդիսացող նվազագույն ամսական աշխատավարձը 1000 դրամ է:

ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով նախատեսված է 2015թ. նվազագույն աշխատավարձի չափը մոտեցնել 16000 դրամ գումարի՝ նպատակ ունենալով կրճատել աղքատությունը և բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Սակայն սահմանված 2006 թվականի հունվարի 1-ից/ 15000 դրամ նվազագույն աշխատավարձի դեպքում էլ խնդիր է հանդիսանում այն, որ գործող նվազագույն ամսական աշխատավարձը չի կատարում իր սոցիալական, վերարտադրողական և կարգավորիչ գործառույթները և այն պետք է հանդիսանա պետության եկամտային քաղաքականության գործիք, որն էլ կնպաստի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Նպատակ ունենալով նվազագույն աշխատավարձի չափը աստիճանաբար հասցնել միջին աշխատավարձի 60 %-ին /եվրոպական սոցիալական խարտիայի փորձագետների կողմից կատարված եզրահանգումներ, ըստ որի աշխատավարձը պետք է կազմի միջին աշխատավարձի 60 %-ը/՝ պահպանելով ԱՄԿ թիվ 131 կոնվեցիայի, ԱՄԿ թիվ 135 հանձնարարականի և Եվրոպական սոցիալական խարտիայի դրույթները, երկրում նվազագույն աշխատավարձը պետք է սահմանվի՝ հիմք ընդունելով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, միջին աշխատավարձի մակարդակը:

Նախատեսվում է 2007-2009թթ միջնաժամկետ ծախսային ծրագրով նվազագույն աշխատավարձի բարձրացում և 2007թ.՝ 20000 դրամ, 2008թ.՝ 25000 դրամ, 2009թ.՝ 30000 դրամ,

պահպանելով հաշվարկային հիմք հանդիսացող գործող նվազագույն աշխատավարձի 1000 դրամ չափը:

Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը 2006 թ. հունվարի 1-ից սահմանված է 30000 դրամ /Բազային աշխատավարձի չափի հաստատման համար հիմք է հանդիսանում քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության և վարձատրության համակարգի վերաբերյալ ՀՀ կառավարության լիազորված մարմնի կողմից ներկայացված զեկույցը, որը բխում է «Քաղաքացիական ծառայողներ վարձատրության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածից, ՀՀ կառավարության 2002թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1932 և ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 23-ի թիվ 572 որոշումներից/:

Նախատեսվում է 2007-2009թթ. ՄԺԾԾ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացում:

***Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառ***

***Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացում***

Ներկայումս հանրապետության մանկատներում խնամվում են 1185 առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, այդ թվում 250-ը խնամվում են բարեգործական մանկատներում, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության 8 մանկատներում խնամվում են 935 երեխաներ, այդ թվում 337-ը՝ մասնագիտացված մանկատներում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության 8 մանկատներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունը իրականացնելու համար պետության կողմից ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները:

2007-2009թ.թ. նախատեսվում է մանկատներում նույն թվով երեխաների խնամք իրականացնել, քանի որ փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր տարի մանկատներ ընդունվում են 80-ից 90 երեխա, իսկ մասնագիտացված մանկատներ ընդունվելու համար ներկայումս արդեն հերթագրված են 57 երեխաներ:

ՀՀ 2005թ. պետական բյուջեով նախատեսվել է նաև մանկատներում խնամվող երեխաներին անձնական մանր ծախսերի համար անհրաժեշտ գումարով ապահովումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի ու դաստիարակության համար պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 05.08.2004թ N 1324-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետով, համաձայն որի մանկատների 7-12 տարեկան երեխաները կստանան ամսական 2000 դրամ, իսկ 13-18 տարեկանները՝ 3000 դրամ:

Հասարակությունն այսօր կիսում է այն համոզմունքը, որ տարբեր դրդապատճառներով առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կազմում են բնակչության սոցիալապես առավել խոցելի խումբը: Այդ առումով մտահոգության առիթ է հանրապետությունում սոցիալական որբության երևույթի տարածումը՝ ընդհանուր անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակի պայմաններում: Դրա վկայությունն է հանդիսանում այն փաստը, որ վերջին տարիներին միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հետ մեկտեղ մանկատներում հայտնվում են նաև ծնող ունեցող (հաճախ

նույնիսկ երկու ծնող), բայց տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ հաստատված տարեկան ծրագրերի շրջանակներում 2002-2003թթ. իրականացրել է «Մանկատների բեռնաթափում» ծրագիրը: Այն իրականացվել է երկու փուլով՝ 2002թ. իրականացվել է «Մանկատանը խնամվող երեխաների վիճակի ուսումնասիրություն», որի նպատակն էր բացահայտել նախարարության ենթակայության մանկատներում խնամվող երեխաների ընտանեկան վիճակը: Այդ կապակցությամբ մշակվել է մանկատներում խնամվող երեխաների վիճակի հետազոտման երկու հարցաշար, իրականացվել է հետազոտության շրջանակներում տեղեկություններ հավաքողների վերապատրաստում: Արդյունքում, կատարվել է 8 մանկատներում խնամվող շուրջ 875 երեխաների վիճակի հետազոտություն:

Մանկատների ուսումնասիրության արդյունքները փաստում են 1998թ. համեմատությամբ խնամվող երեխաների թվի մոտ 17% աճ հատկապես մասնագիտացված մանկատներում, որը բնակչության աղքատության, դեղորայքի և բուժծառայությունների բարձր գների, ծնողների ծնողավարական հմտությունների պակասի, երեխաներին ուղղված խնամքի ծառայությունների բացակայության և այլ գործոնների համալիր ազդեցության արդյունք է: Մանկատներում խնավող երեխաների թվի աճին զուգահեռ տեղի է ունենում նաև սոցիալական որբության վիճակում հայտնված երեխաների թվի տեսակարար կշռի մեծացում: Հարկ է նշել նաև, որ 2002թ. համեմատությամբ 2003թ. վերոհիշյալ մանկատներում խնամվող երեխաների թիվն ավելացել է ևս 50-ով:

2003թ. իրականացվել է ծրագրի երկրորդ փուլը՝ «**Մանկատանը խնամվող երեխաների ընտանիքների ուսումնասիրությունը»**, որի նպատակն էր պարզել այդ ընտանիքների վիճակը, երեխաներին մանկատուն հանձնելու դրդապատճառները, և այն ընտանիքների շրջանակը, որոնց հնարավոր կլինի վերադարձնել երեխաներին՝ պետության կողմից համապատասխան աջակցություն ցուցաբերելու պարագայում: Այդ կապակցությամբ մշակվել է մանկատներում խնամվող երեխաների ընտանիքների ուսումնասիրման հարցաշար և իրականացվել է ուսումնասիրության շրջանակներում տեղեկություններ հավաքողների վերապատրաստում: Հետազոտման համար ընտրվել են մանկատներում խնամվող երեխաների 187 ընտանիքներ: Ընտանիքների ուսումնասիրման համար հիմնական նպատակ է ընտրվել ընտանիքի սոցիալ-տնտեսական, բնակարանային և կենցաղային պայմանների, ընտանիքի անդամների առողջական վիճակի, նրանց զբաղվածության խնդիրների, ինչպես նաև ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի պարզումը: Փաստացի ուսումնասիրվել են 168 ընտանիքներ, որոնցից 78-ը երկու ծնող ունեցող ընտանիքներ են, 90-ը՝ միածնող:

Ակնկալվում էր, որ ծրագրի իրականացման արդյունքում 10%-ով կկրճատվի մանկատանն ապրող երեխաների թիվը՝ սակայն, ուսումնասիրության արդյունքները չարդարացրին կանխատեսումները և մասնագետների կողմից ուսումնասիրված 168 ընտանիքներից միայն 13-ը ճանաչվեցին երեխաներին ընտանիք վերադարձնելու համար պայմանական բարենպաստ ընտանիքներ, որոնց սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորման դեպքում հնարավոր կլինի երեխային վերադարձնել ընտանիք:

Մնացած ընտանիքները ճանաչվել են երեխաներին ընտանիք վերադարձնելու համար անբարենպաստ՝ հիմք ընդունելով նրանց սոցիալ-տնտեսական, կենցաղային, ինչպես նաև բարեյահոգեբանական ծայրահեղ վատ պայմանները:

2004թ. հուլիսի 1-ին ՀՀ կառավարության N 988-Ն որոշմամբ հաստատվեց **«Մանկատների բեռնաթափում»** փորձնական ծրագիրը, որի համաձայն 2004թ-ին 26 երեխաներ պետք է վերադարձվեին վերոհիշյալ 13 ընտանիքներ: Սակայն Եվրոպական Հանձնաժողովի Պարենային ապահովության ծրագրի ղեկավարության վերստուգիչ հանձնաժողովի ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի միջև կայացած համաձայնության արդյունքում որոշվեց ծրագրի իրականացումը կասեցնել մինչև բեռնաթափման նոր ռազմավարության մշակումը: Նախատեսվում է 2006թ-ին վերսկսել այդ ծրագիրը:

***Պետական աջակցություն մանկական խնամակալական կազմակերպությունների (այսուհետ՝ մանկատների) շրջանավարտներին***

Սույն ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում պետական մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը և կանխարգելել սոցիալապես անապահով այդ խավի ընդլայնումը, ստեղծել բավարար պայմաններ մանկատան շրջանավարտների համար հետագա կյանքի ինքնուրույն կազմակերպման և հասարակությանը նրանց ինտեգրելու համար:

Սկսած 1991 թվականից, հանրապետության այդ տարիներին գործող մանկատներից չափահաս դառնալու կապակցությամբ, դուրս են գրվել շուրջ 300 շրջանավարտներ: Ուսումնասիրությունների արդյունքում նրանցից հայտնաբերվել են շուրջ 220-ը, որոնք բնակվում էին հիմնականում տարբեր հանրակացարաններում՝ Լամպերի գործարանի, Ջեյթունի և Նոր Նորքի 2-րդ զանգվածի ուսանողական ավաններում, պատահական վայրերում, ծայրահեղ անբարենպաստ պայմաններում: Այժմ հանրապետությունում գործող մանկատներից տարեկան դուրս են գրվում 18 տարին լրացած 20-25 սան:

ՀՀ կառավարության 2003թ.-ի հոկտեմբերի 30-ի N 1419-Ն որոշմամբ հաստատվել և առաջին անգամ 2003թ. պետական բյուջե է ընդգրկվել «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը: Ծրագիրի շրջանակներում շահառուների համար իրականացվելու են.

ա) բնակելի տարածքով ապահովման,

բ) մասնագիտական կողմնորոշման, ուսուցման, վերապատրաստման,

գ) հիմնական կարիքները բավարարող եկամտի ապահովման,

դ) բժշկական օգնության տրամադրման,

զ) սոցիալական պատրոնաժի և այլ միջոցառումներ:

***Երեխաներին սոցիալական հոգածության համայնքային կենտրոններում սոցիալ - հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցում***

Հայաստանի Հանրապետությունը այսօր իրականացնում է մանկության պաշտպանության համակարգի բարեփոխումների այնպիսի ռազմավարություն, որը նախատեսում է ռիսկի ենթակա երեխաների (ՌԵԵ) խնամքի և սոցիալական հոգածության ենթահամակարգի ապակենտրոնացում,

այդ համակարգին ընտանիքահեն և համայնքահեն բնույթի հաղորդում, որը կնպաստի երեխաների լիարժեք սոցիալական ինտեգրացիային:

Ցերեկային կենտրոնների ստեղծումը նախատեսված է ՀՀ կառավարության 2003թ-ի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագրով»:

Ճապոնիայի Սոցիալական զարգացման հիմնադրամի աջակցությամբ 2003-2005թթ. իրականացված «երեխաների խնամքի համակարգի բարեփոխումներ» փորձնական ծրագրի արդյունքում, հանրապետությունում 2005 թվականից սկսել է գործել երեխաների Երևանի Աջափնյակ համայնքի սոցիալական հոգածության կենտրոնը, իսկ Գյումրի քաղաքում կգործի 2006 թվականից, որոնց նպատակն է երեխաների պաշտպանության պետական ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացումը հիմնականում տեղափոխել համայնքներ, այն նկատառումով, որ ներկայիս կենտրոնացված ծառայությունները չեն համապատասխանում ռիսկի ենթակա երեխաների բազմապիսի հիմնախնդիրների լուծման ժամանակակից պահանջներին, քանի որ երեխային զրկում են ընտանիքի, համայնքի և իր լիարժեք սոցիալականացման համար անհրաժեշտ առաջնային միջավայրում արդյունավետ ինտեգրվելու հնարավորություններից:

Կենտրոնների նպատակն է սոցիալական միջնորդության,աջակցության տարբեր ձևերի, սոցիալ-մանկավարժական, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվությունների մատուցման միջոցով նպաստել ծնողական խնամքից զրկված, այդ վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում գտնվող երեխաների հիմնախնդիրների լուծմանը:

Կենտրոնների խնդիրներն են`

ա) իրականացնել երեխաներին սպառնացող ռիսկերի սոցիալական ախտորոշում (պարզել ռիսկի պատճառները և միջավայրը), մշակել յուրաքանչյուր երեխային սպառնացող ռիսկերի վերացմանն ուղղված աշխատանքների անհատական ծրագրեր և ժամանակացույց,

բ) անհատական պլանին համապատասխան իրականացնել ռիսկի ենթակա երեխաների սոցիալ-վերականգնողական աշխատանքներ,

գ) մասնակցել ծնողական խնամքից զրկված և դրա զրկման վտանգի ենթակա երեխաների որդեգրման, խնամակալության (հոգաբարձության) հանձնելու, ինչպես նաև խնամատար ընտանիքներում տեղավորելու աշխատանքների կազմակերպմանը,

դ) աջակցել կրթադաստիարակչական հաստատություններից դուրս մնացած երեխաներին կրթական հաստատություններում տեղավորելու աշխատանքներին,

ե) աջակցել համայնքի ռիսկի ենթակա երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներին,

զ) աջակցել առողջապահության, կրթական, մշակույթի և այլ ոլորտների հաստատությունների ծառայություններից երեխաների օգտվելու հնարավորությունների մեծացմանը,

է) նպաստել երեխաների հիմնախնդիրների հրատապության վերաբերյալ հանրության իրազեկության աստիճանի բարձրացմանը և դրանց լուծմանը մասնակցելու ակտիվ

դիրքորոշման ձևավորմանը:

***Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառ***

Ոլորտի հիմնական խնդիրներն են՝ հաշմանդամների ինտեգրումը հասարակություն, վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ օգնության ծառայությունների կազմակերպման բարելավումը, միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կազմակերպումը, Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հաշմանդամ զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության ապահովումը, բռնադատվածների բնակարանային պայմանների բարելավման նպատակով արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկերի տրամադրման գործընթացի կազմակերպումը և այլն:

***Տարեցներին մատուցվող ծառայություններ***

***Տարեցների խնամքի իրականացում***

Տարեցների սոցիալական պաշտպանության ապահովումը պետության հիմնական խնդիրներից է:

Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկումը իրականացվում է ինչպես շուրջօրյա խնամքի կազմակերպություններում՝ տուն-ինտերնատներում, այնպես էլ՝ տնային պայմաններում և ցերեկային խնամքի կենտրոնում:

Համակարգի 4 տուն-ինտերնատներում ներկայումս խնամվում են 1000 տարեցներ: Բացի այդ, Երևանի N1 տուն ինտերնատում շուրջօրյա խնամվում են նաև 30 անօթևաններ, իսկ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատին կից ցերեկային խնամքի կենտրոնում՝ ևս 50 տարեցներ:

Տնային պայմաններում խնամվում են 1200 միայնակ տարեց և հաշմանդամ քաղաքացի:

Հանրապետությունում բնակվում է մոտ 11000 միայնակ, անժառանգ կենսաթոշակառու, որոնց զգալի մասը ունի սոցիալական սպասարկման և խնամքի կարիք:

***Բռնադատվածների բնակարանային պայմանների բարելավում***

Բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային շինարարության համար արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկեր տրամադրելու հարցերը կարգավորելու նպատակով, երկարաժամկետ վարկեր տրամադրելու գործընթացը իրականացվում է 2000թ.-ից՝ համաձայն «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 20-ի թիվ 410 որոշման:

Այդ նպատակի համար 2006թ. պետական բյուջեում նախատեսվել է 150.0 մլն. դրամ: Նախարարությունում հաշվառված է 400-ից ավելի բռնադատված, որոնցից 300-ը ունի հիմնավոր փաստաթղթեր: Դիմումների հոսքը ավելացել է 2005թ. «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունից հետո, որով բռնադատվածներին թույլ տրվեց վարկով ոչ միայն անհատական տուն կառուցել, այլև՝ բնակարան ձեռք բերել:

*Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ*

*Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում*

Հաշմանդամների պրոթեզավորումը և վերականգնողական պարագաներով ապահովումը նպաստում է նրանց հասարակություն ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց,ինչպես նաև՝ ընտանիքի սոցիալական խնդիրները,որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության ռազմավարության և աղքատության հաղթահարման ծրագրի պահանջներից է:

Երկու պրոթեզարանների (գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով աշխատող) միջոցով պատրաստվում և հաշմանդամներին անվճար տրամադրվում են վերին և ստորին վերջույթների պրոթեզներ, օրթեզներ, պրոթեզի և օրթոպեդիկ կոշիկներ, քայլակներ, հենակներ, ձեռնափայտեր, բուժական սեղմիրաններ և աղեկապեր, սուպինատորներ և այլն: Նրանց միջոցով կազմակերպվում է նաև պետական բյուջեի միջոցներով գնված վերականգնողական պարագաների (սայլակներ, լսողական սարքեր և կրծքագեղձի պրոթեզներ) բաշխումը հաշմանդամներին:

Բացի այդ, նշված կազմակերպություններում իրականացվում է պրոթեզների և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգում: Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգման ծրագրի շրջանակում նախատեսված է իրականացնել նաև հաշմանդամի սայլակների, լսողական սարքերի և օրթոպեդիկ կոշիկների վերանորոգում:

ՄԺԾԾ-ում հաշմանդամների պրոթեզաօրթոպեդիկ օգնության և վերականգնողական պարագաներով ապահովման ծառայությունների գծով ծախսերի ավելացումը պայմանավորված է վերջին տարիներին բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների և պրոթեզավորող կազմակերպությունների գործունեության ակտիվացման՝ հաճախակի մարզեր այցելություններ կատարելու արդյունքում պրոթեզավորման կամ վերականգնողական պարագայի կարիք ունեցող հաշմանդամների վաղ հայտնաբերմամբ, ինչպես նաև այդ պարագաների տրման ժամկետները լրանալու և նորերը հատկացնելու անհրաժեշտության և հաշմանդամներին տրամադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների ցանկում նոր պարագաներ ընդգրկելու անհրաժեշտության հանգամանքով:

Հաշմանդամներին վերականգնողական պարագաներով անվճար ապահովումը նախատեսված է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

Միևնույն ժամանակ, ձայնաստեղծ սարքերի անվճար տրամադրումը և աչքի անվճար պրոթեզավորումը նախատեսված է «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարությամբ», որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության նոյեմբերի 3-ի նիստի N 44 արձանագրությամբ:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված է ձայնալարերը հեռացրած շուրջ 400 մարդ, որոնք շփման և հաղորդակցման դժվարություններ ունեն, ինչը խոչընդոտում է նրանց լիարժեք կյանքով ապրելու, աշխատելու, սովորելու, որի հետևանքով նրանց մոտ առաջանում են հոգեբանորեն բարդույթներ և մեկուսանում հասարակությունից:

Վերջին տարիներին հաշմանդամների աչքի պրոթեզների պատրաստումը պետական պատվերի շրջանակներում չի իրականացվում համապատասխան պետական ծրագրի բացակայության պատճառով:

Աչքի պրոթեզի կարիք ունեցող, հիմնականում անապահով հաշմանդամները, անվճարունակ լինելով, հնարավորություն չունեն դիմելու վճարովի պրոթեզավորման համար, ուստի մնում են առանց պրոթեզի, որն ի դեպ ունի ոչ միայն կոսմետիկ, այլ նաև մեծ հոգեբանական նշանակություն, հատկապես՝ երիտասարդ հաշմանդամների համար, որոնք դեռ սովորելու, աշխատելու, ամուսնանալու խնդիրներ ունեն: Աչքի պրոթեզավորման կարիք ունեցող հաշմանդամների թիվը տարեկան կազմում է շուրջ 50 մարդ («Աչք» ՍՊԸ-ի տվյալներով):

Ելնելով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և 2005թ. ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարության» դրույթներից անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ հաշմանդամներին հասարակություն ինտեգրելու, նրանց համապատասխան անհրաժեշտ պարագաներով ապահովելու համար:

ՀՀ 2006թ. պետական բյուջեով հաստատված ծավալը կազմում է 12898 հատ, այդ թվում՝

| | |
|---|---|
| պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ | 11492 հատ |
| հաշմանդամի սայլակ | 200 հատ |
| լսողական ապարատ | 500 հատ |
| պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգում | 706 հատ |

***Բժշկասոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության հիվանդանոցային ծառայությունների մատուցում***

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ հաշմանդամների հասարակություն ինտեգրման գործընթացում կարևորագույն գործոն է հաշմանդամների վերականգնումը՝ նրանց լիարժեք կյանքի վերադարձնելու նպատակով: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն կունենան հաղթահարել ընտանիքի համար «հոգս ու բեռ» լինելու իրենց հոգեբանական բարդույթը, կկարողանան աշխատել և գոնե մասամբ հոգալ իրենց կարիքները, ինչպես նաև ընտանիքի սոցիալական խնդրները, որը բխում է մեր երկրի սոցիալական քաղաքականության ռազմավարության և աղքատության հաղթահարման ծրագրի պահանջներից:

Հաշմանդամների վերականգնման ծրագիրն անմիջականորեն կապված է պրոթեզավորման ծրագրի հետ, քանի որ ծրագրով նախատեսված միջոցների մեծ մասը ծախսվում է պրոթեզավորվող հիվանդների նախա և հետպրոթեզավորման բուժման վրա:

2005թ. պետական բյուջեի այս ծրագրով նախատեսվել էր 309 մարդու վերականգնողական բուժում, սակայն փաստացի վերականգնողական բուժում է ստացել 465 մարդ, իսկ ՀՀ 2006թ. պետական բյուջեով՝ 407 մարդ:

***Հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների մատուցում***

Սույն ծրագրի շրջանակներում իրականացվում է մարդկանց հոգեկան առողջության

պահպանման, բուժման և վերականգնման աշխատանքներ: Ծրագրի վերջնանպատակն է հիվանդների բուժումն ու վերականգնումը, նրանց լիարժեք կյանք վերադարձնելը:

ՀՀ 2005-2006թթ. պետական բյուջեով հաստատվել է 392 հիվանդ, Մժծծ-ով առաջարկվող ծավալները չեն փոփոխվել:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերում» ծրագրով ՀՀ 2006 թվականի պետական բյուջեում առաջին անգամ նախատեսվեց տեսողությունը կորցրած հաշմանդամներին տրամադրել 5980 հատուկ տառատեսակներով գրքեր, տետրեր և «Խոսող գրքեր»:

***Մարդասիրական օգնության կարգով ստացվող սննդի բաշխում***

Պարենի համաշխարհային ծրագրի և ՀՀ կառավարության միջև 2000թ. հունիսի 9-ին ստորագրված և 2001թ. սեպտեմբերի 12-ին Ազգային ժողովի կողմից վավերացված Հիմնական Համաձայնագրի շրջանակներում 2004թ. հունիսի 2-ին Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի ղեկավարի և ՀՀ կառավարության անունից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից ստորագրված «Օգնություն Հայաստանի անապահով խմբերին օգնության ու վերականգնման երկարատև միջոցառումների ծրագիր - Արմենիա 10053.1» համաձայնագրի 3.1 կետի համաձայն ՀՀ կառավարությունը ստանձնել է պարտավորություն՝ տրամադրել միջոցներ «Օգնության սննդի բաշխում» ծրագրով պարենի բեռնաթափման, պահեստավորման, պահպանման ու բաշխման աշխատանքների, շահառուների վերլուծության և ցուցակների տպագրման համար:

Ծրագրի արժեքն է 6.443.095 ԱՄՆ դոլար: Ծրագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի 3 հիմնական ոլորտներից մեկին՝ սոցիալական աջակցությոան, որը հնարավորություն է տալիս պետությանը ընտանեկան նպաստ ստացող 132400 ընտանիքներից ծայրահեղ աղքատ 35000 ընտանիքների կամ 21,87 %-ի համար մեղմացնել սոցիալական լարվածությունը: ՄԱԿ ՀՊԾ աջակցությամբ «Օգնության սննդի բաշխում» ծախսային ծրագիրն իրականացվում է յուրաքանչյուր 2 ամիսը 1 անգամ Երևան քաղաքում, ՀՀ Շիրակի և ՀՀ Լոռու մարզերի քաղաքային բնակավայրերում սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջոցով:

Սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում, մեթոդաբանական և գիտահետազոտական աշխատանքների իրականացում

Ծրագրի իրականացման նպատակն է աշխատանքի և սոցիալական ոլորտում կադրերի գիտական և աշխատանքային մակարդակի բարձրացումը, նրանց համապատասխան մեթոդական ձեռնարկներով և ուղեցույցերով ապահովումը: Կադրերի վերապատրաստման միջոցով բարձրացնել սոցիալական ոլորտի աշխատողների որակավորման մակարդակը, խորացնել գիտելիքները, կատարելագործել նրանց գործարար հատկանիշները, ինչպես նաև մեթոդական ձեռնարկների ու

ցուցումների մշակման ու գործողության մեջ դնելու միջոցով ապահովել տեսականի և գործնականի ինտեգրումը, ՀՀ օրենքների, նորմատիվ իրավական ակտերի և դրանց փոփոխությունների մասին տեղեկացվածության ապահովումը` շահագրգիռ կազմակերպությունների աշխատողներին:

***«ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. Նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում» և « Վետերանների պատվովճարներ» ծրագրեր***

Ինչպես նախկին տարիներին, այս եռամյակում ևս կարևորվում է Հայրենական մեծ պատերազմի վետերանների, զոհվածների ընտանիքների, հաշմանդամ դարձած զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության, մասնավորապես` որոշ արտոնությունների դիմաց դրամական օգնության և Հայրենական մեծ պատերազմի վետերաններին` պատվովճարի տրամադրման հարցերի պետական կարգավորումը:

Համաձայն 2005թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի, 2006թ. հունվարի 1-ից Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամսյա պատվովճարի չափը սահմանվեց 10000 դրամ:

Համաձայն 2005թ. նոյեմբերի 11-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի, հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին որոշ արտոնությունների դիմաց տրամադրվող ամենամսյա դրամական օգնության չափերը 2006թ. հունվարի 1-ից բարձրացվեցին.

- հաշմանդամ դարձած զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքների համար` 5000 դրամից դարձել է 6000 դրամ,
- ընտանիքի 5 և ավելի անդամ ունեցող զոհված զինծառայողի ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ անդամին` լրացուցիչ ևս 2000-ական դրամ, նախկին` 1000-ականի փոխարեն:

Կոմունալ ծառայությունների սակագների բարձրացման հետ կապված 2007-2009թթ. նախատեսվել է բարձրացնել Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, հաշմանդամ զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքների ամենամսյա դրամական օգնության չափերը:

## 9.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 9.2.1.Նպատակները

Սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառի նպատակն է նպաստել հանրապետության բնակչության աղքատության նվազեցմանն ու հաղթահարմանը, կենսաթոշակների բարձրացման համար հնարավոր միջոցների ստեղծմանը, նպաստի միջին չափի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև մեծացնել ֆինանսական միջոցների

օգտագործման արդյունավետությունը ծրագրերի հասցեականության մեծացման և նպատակային ծրագրերի իրականացման միջոցով:

Ոլորտի հիմնական նպատակներն են՝

ա) Կենսաթոշակների չափերի ամենամյա բարձրացում, այն հաշվով, որ ապահովագրական (աշխատանքային) կենսաթոշակի միջին չափը մինչև 2008թ. գերազանցի ընդհանուր աղքատության գիծը՝ մեկ շնչի հաշվով (ԱՀՌԾ կետ 285),

բ) Ընտանեկան նպաստի բազային չափի և 18 տարին չլրացած անդամին տրվող ընտանիքների անապահովության միավորի տարբերակված հավելման չափերի բարձրացում՝ աղքատության և անհավասարության կրճատման համար,

գ) Մանկատան շրջանավարտներին ցուցաբերվող պետական աջակցությանը հատկացվող միջոցների ավելացումը, որը կապահովի մինչև 1991թ. 23 տարին չլրացած շահառուների կարիքները, իսկ այնուհետ՝ յուրաքանչյուր տարվա ընթացքում մանկատների շրջանավարտների թվին համապատասխան,

դ) Սոցիալական ապահովության քարտերի համակարգի շարունակական աշխատանքը, քարտերի համարների կիրառման կանոնների ապահովումը,

ե) Սոցիալական մոնիտորինգի եռամակարդակ համակարգի ներդրման ապահովումը:

ԱՀՌԾ-ով սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական ուղղություններն արտացոլվել և կարևորվել են նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում, մասնավորապես՝ կենսաթոշակների և ընտանեկան նպաստի չափերի բարձրացում, նպաստառուների թվաքանակի կրճատում, ընտանեկան նպաստի հասցեականության աստիճանի բարձրացում, ընդհանուր աղքատության կրճատման պարագայում՝ ամենաաղքատ բնակչության սպառման մակարդակի՝ պարենային աղքատության գծից բարձրացում, ընտանեկան նպաստի ֆինանսավորման ծավալների աճ:

**9.2..2.Գերակայությունները**

Հաշվի առնելով սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության ոլորտի առանձնահատկությունները՝ 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերից առաջնահերթությունը տրվում է հետևյալ ծախսային ուղղություններին՝ ընտանեկան նպաստ, աշխատանքային կենսաթոշակներ, տարեցների և երեխաների տուն-ինտերնատների պահպանում, տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում, հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովում, զբաղվածության պետական նպատակային ծրագրերի իրագործում, երեխային ծննդյան միանվագ նպաստ:

Գերակա ծրագրերն ուղղված են բնակչությանը պետական նպաստով և կենսաթոշակներով ապահովմանը, տարեցներին և երեխաներին մատուցվող ծառայությունների մատուցմանը, հաշմանդամների ինտեգրմանը հասարակությանը, բնակչության զբաղվածության ապահովմանը, որոնք բխում են «Պետական նպաստների մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Երեխաների իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Բնակչության

զբաղվածության մասին» ՀՀ օրենքներից, «Աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագրից», ինչպես նաև ՀՀ կառավարության առանձին որոշումներից:

**Աղյուսակ 9.6. Ծախսերի համեմատական աղյուսակ 2006 թ. պետական բյուջեի, 2006-2008թթ. ՄԺԾԾ և 2007-2009թթ. ՄԺԾԾ միջև ըստ ենթախմբերի**

**(մլն. դրամ)**

| | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2006թ. հաստատված բյուջե | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ |
| Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն | 53085.0 | 55869.9 | 56364.0 | 57984.8 | 57736.9 | 58851.7 | 62203.7 |
| Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառում պետական կառավարում | 1207.2 | 1169.2 | 1364.4 | 1329.4 | 1553.3 | 1370.3 | 1536.3 |
| Կենսաթոշակային ապահովում | 16598.2 | 17052.3 | 17567.8 | 17562.6 | 18548.2 | 18319.2 | 18979.8 |
| Պետ.նպաստներ բնակչությանը | 27400.3 | 27034.4 | 29649.7 | 28095.0 | 30615.4 | 28681.6 | 31403.2 |
| Սոցալական պահովության միջոցառումներ | 4542.3 | 4719.6 | 4525.3 | 5540.6 | 4551.6 | 5825.0 | 5600.8 |
| Այլ սոցիալական ծրագրեր | 3337 | 5894.4 | 3256.8 | 5457.2 | 2468.4 | 4655.6 | 4683.6 |

### 9.2..3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

**Կենսաթոշակային ապահովման ենթախումբ՝**

**1.«Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ»** ծրագրի ծախսերի նվազումը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 74.7 մլն. դրամ, 230.8 մլն. դրամ, իսկ աճը 2009թ.՝ 117.6 մլն. դրամ պայմանավորված 2006թ. բյուջեի գործընթացի ժամանակ հաշվարկների բազայի ճշտմամբ (ելնելով նախորդ տարիների փաստացի համապատասխան ցուցանիշներից, նոր կենսաթոշակառուների կանխատեսվող թիվը վերահաշվարկվել է միջին տարեկանի և այն կկազմի 2007թ.՝ 37286 մարդ (2006թ.՝ 36094 մարդ), 2008թ.՝ 38411 մարդ, 2009թ.՝ 39533 մարդ, պահպանելով 2006թ. միջին ամսական կենսաթոշակի չափը և ավելացնելով վճարման ծառայության համար անհրաժեշտ գումարը ու անփոփոխ թողնելով գործող կենսաթոշակի բազային չափը): Միաժամանակ 2006թ. բյուջեով կատարվել է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների չափերի 10%-ով, ինչպես նաև 1990-1994 թվականների մարտական գործողությունների մասնակից զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակների չափերի 20%-ով բարձրացումներ:

**2.«ՀՀ պետական բյուջեից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված ապահովագրական ստաժի համար ֆինանսավորում»** ծրագրի ծախսերի աճը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 59.6 մլն. դրամ, 357.7 մլն. դրամ, 715.5 մլն. դրամ պայմանավորված ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացմամբ 2007թ. 40 դրամով (2006թ. ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը կազմում է 180 դրամ), իսկ 2008թ.

համար 80 դրամով, 2009թ.՝ 60 դրամով անփոփոխ թողնելով 2006թ. բյուջեով սահմանված 496843 ապահովագրական ստաժի տարիների թիվը:

**3.«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում»** ծրագրի ծախսերի աճը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 24.5 մլն. դրամ, 42.1 մլն. դրամ, 59.6 մլն. դրամ պայմանավորված ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի չափի կանխատեսվող փոփոխության:

***Պետական նպաստներ բնակչությանը ենթախումբ՝***

**1.«Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն»** ծրագրի 2009թ. ծախսերի աճը կազմում է 2465.5 մլն. դրամ պայմանավորված նպաստի բազային և յուրաքանչյուր երեխային տրվող հավելման չափերի բարձրացմամբ՝ հաշվի առնելով ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկ-ված բարձր լեռնային և սահմամերձ բնակավայրերում հաշվարված ընտանիքների քանակը:

2009 թվականի համար նախատեսված ընտանեկան նպաստի միջոցների ավելացումը իր արտահայտությունն է գտել նաև Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում:

Միաժամանակ 2009թ. կանխատեսվում է նաև ընտանիքների թվաքանակի նվազում (տվյալները բերված են 9.5 և 9. 5.1 աղյուսակներում):

**2.«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ»** ծրագրով 2007-2008թթ. ծախսերի նվազումը կապված է հաշվարկների ճշտմամբ, իսկ 2009թ. աճը՝ 67.4 մլն. դրամի չափով ծնելիության աճի տեմպի 4.8% պահպանմամբ:

**3.«Հղիության և ծննդաբերության նպաստ»** ծրագրով ծախս չի նախատեսվել նկատի ունենալով, որ «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ( ՀՕ-208-Ն 25.11.2005թ.) համաձայն ծախսերը սկսած 2006թ. կատարվելու են ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի հաշվին:

**4.«Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում»** ծրագրի համար 2006-2008թթ. ՄԺԾԾ ծախսեր չեն նախատեսվել: 2007-2009թթ. ՄԺԾԾ ծախս է նախատեսվել 60.2-ական մլն. դրամ:

**5.«Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող հաշմանդամների համար մասնագիտական աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպում»** ծրագրի համար 2006-2008թթ. ՄԺԾԾ ծախսեր չեն նախատեսվել: 2007-2009թթ. ՄԺԾԾ ծախս է նախատեսվել 5.0-ական մլն. դրամ:

***Սոցիալական ապահովության միջոցառումներ ենթախումբ՝***

**1. Տարեցներին մատուցվող ծառայություններ ՝**

**1.1 «Տարեցների տուն-ինտերնատների ծառայությունների ձեռքբերում»** ծրագրի ծախսերի աճը 2007թ. համապատասխանաբար կազմում է 276.5 մլն. դրամ, իսկ 2008-2009թթ.՝ 250.7-ական մլն. դրամ պայմանավորված է նրանով, որ՝

ա/ 2006թ. բյուջեի հաշվարկներում ներառվել են՝ ,,ա"- խնամվողների և աշխատողների թվաքանակի ավելացումները, ,,բ".Վարդենիսի տուն-ինտերնատի աշխատողների համար նախատեսվող աշխատավարձի նկատմամբ 50%-ի և 20% չափով հավելումները, ,,գ" պարտադիր

սոցիալական վճարների նվազագույն դրույքաչափի 2.0 հազ. դրամի չափով բարձրացումը, ,,դ" ջրի սակագնի, ջեռուցման ծախսերի ճշտումը, աշխատակիցների տարեկան 2 անգամ պարտադիր բժշկական հետազոտության հետ կապված ծախսերը:

բ/ հաշվի է առնվել կապի ծառայությունների, գազի, ջրի սակագների աճը և գործուղման նորմաների բարձրացումները, 10 մարդով խնամվողների թվաքանակի և աշխատողների թվաքանակի 3 մարդով ավելացումները, ինչպես նաև աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերի 20% բարձրացումները:

**1.2 «Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոնի ծառայությունների ձեռքբերում»** ծրագրի ծախսերի աճը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 6.1 մլն. դրամ, իսկ 2008-2009թթ.՝ 2.2-ական մլն. դրամ պայմանավորված է նրանով, որ հաշվի է առնվել կապի ծառայությունների, գազի, ջրի սակագների աճը, ինչպես նաև աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերի 20% բարձրացումները:

**1.3 «Տարեցների ցերեկային խնամքի իրականացման նպատակով պետական աջակցություն «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին** ծրագրի համար 2006-2008թթ. ՄԺԾԾ ծախսեր չեն նախատեսվել: 2007-2009թթ. ՄԺԾԾ ծախս է նախատեսվել 14.8-ական մլն. դրամ:

**2.Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ՝**

**2.1«Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում»** ծրագրով ծախսերի աճը կազմում է 2007թ.՝ 163.7 մլն. դրամ, 2008-2009թթ.՝ 219.7-ական մլն. դրամ, որը պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում ներառվել են հաշմանդամներին աչքի պրոթեզներով և ձայնաստեղծ սարքերով ապահովելու համար ծախսերը՝ 38.0 մլն. դրամ (տես աղյուսակ 9.10), ինչպես նաև հաշմանդամների համար պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և հաշմանդամների կյանքը թեթևացնող այլ պարագաների, լսողական ապարատների և հաշմանդամների սայլակների քանակների ավելացմամբ, արդյունքում նրանց քանակը (պայմանական միավոր) ըստ տարիների կկազմի 2007թ.՝ 14983 պայմանական միավոր, 2008-2009թթ.՝ 16183-ական պայմանական միավոր:

**2.2 «Պետական աջակցություն «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոն ՓԲԸ-ին»** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ. կազմում է 4.3-ական մլն. դրամ պայմանավորված է նրանով, որ 2006թ. բյուջեի հաշվարկներում ներառվել են՝

ա/ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հիվանդանոցային պայմաններում բուժվող մեկ հիվանդի մեկ օրվա միջին գնի փոփոխությունը (2005թ.՝ 8300 դրամի դիմաց 2006թ. բյուջեով արդեն իսկ նախատեսվել է 9000 դրամ),

բ/ 2006թ. պետական բյուջեով պրոթեզավորման կարիք ունեցող անձանց թվաքանակը աճել է 98 մարդով (2005թ.՝309 մարդ):

**2.3 «Ղպրոցն ավարտաց, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերում»** ծրագրի համար 2006-2008թթ. ՄԺԾԾ ծախսեր չեն նախատեսվել: 2007-2009թթ. ՄԺԾԾ ծախս է նախատեսվել 11.5-ական մլն. դրամ:

**3.Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ՝**

**3.1 «Երեխաների տուն-ինտերնատների ծառայությունների ձեռքբերում»** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ. կազմում է 208.4-ական մլն. դրամ, որը պայմանավորված է կապի ծառայությունների սակագների աճով և գործուղման նորմաների, ինչպես նաև աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերի 20%-ով բարձրացումներով:

**3.2 «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին»** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 56.1 մլն. դրամ, 55.6 մլն. դրամ, 2009թ.՝ 18.9 մլն. դրամ, որը պայմանավորված է անշարժ գույքի շուկայական գների 1.7 մլն. դրամով բարձրացմամբ (2006թ՝ մեկ բնակարանի գինը 4.0 մլն. դրամ), միաժամանակ նվազում է շահառուների թվաքանակը:

**3.3 «Երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների ձեռքբերում»** ծրագիր - կապի ծառայությունների սակագների աճի և գործուղման նորմաների, ինչպես նաև աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերի 20% բարձրացումների պայմաններում ծախսերը 2007-2009թթ. նվազում են 52.2-ական մլն. դրամ, որը պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ:

**3.4** Միաժամանակ 2007-2008թթ. «Գյումրու» Երեխաների տուն ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի կառուցման համար կապիտալ ծախսեր են նախատեսվել համապատախանաբար՝ 29.1 մլն. դրամ, 126.0 մլն. դրամ և «Խարբերդի» մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հին մասնաշենքի վերանորոգման համար՝ համապատախանաբար՝ 53.7 մլն. դրամ, 153.5 մլն. դրամ:

**4. «Մեթոդաբանական և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման ծառայությունների ձեռքբերում»** ծրագրով ծախսերի աճը կազմում է 2007թ. 7.1 մլն. դրամ, 2008- 2009թթ.՝ 12.1-ական մլն. դրամ, որը պայմանավորված է կապի և կոմունալ ծառայությունների սակագների աճով և գործուղման նորմաների բարձրացմամբ, ինչպես նաև աշխատողների աշխատավարձի 20% աճով, որի արդյունքում միջին ամսական աշխատավարձը կազմում է 43.6 հազ. դրամ (2006թ.՝ 36.3 հազ. դրամ):

**5. «Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ»** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 2.2 մլն. դրամ, 2.5 մլն. դրամ, 5.0 մլն. դրամ, որը պայմանավորված է աշխատողների աշխատավարձի 20%-ով բարձրացմամբ (2006թ.՝ միջին ամսական աշխատավարձը 19.2 հազ. դրամ):

**6.«Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության ծառայությունների գնման գծով ծրագրի շրջանակներում պետական աջակցություն «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ին»** ծրագրով ծախսերի աճը 2007թ. կազմում է 29.8 մլն. դրամ, 2008-2009թթ.՝ 31.7-ական մլն. դրամ, որը պայմանավորված է կապի ծառայությունների սակագնի աճով, աշխատողների աշխատավարձի ծախսերի 20% բարձրացմամբ (2006թ.՝ միջին ամսական աշխատավարձը 40.0 հազ. դրամ):

**7.«ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ին պետական աջակցություն»** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 1.2 մլն. դրամ, 1.8 մլն. դրամ, 2.4 մլն. դրամ, որը պայմանավորված է կապի ծառայությունների սակագնի աճով և գործուղման նորմաների բարձրացմամբ, ինչպես նաև աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերի 20% բարձրացմամբ (2006թ.՝ միջին ամսական աշխատավարձը 16.4 հազ. դրամ):

*Այլ սոցիալական ծրագրերի ենթախումբ՝*

**1.«Վետերանների պատվովճարներ»** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 65.4 մլն. դրամ, 53.6 մլն. դրամ, 22.5 մլն. դրամ, որը պայմանավորված է 01.01.2006թ. ամենամսյա նպաստի չափի 5500 դրամով բարձրացմամբ (2006-2008թթ. ՄԺԾԾ՝ ամեամսյա նպաստի չափը կազմել է 4500 դրամ) վետերանների թվաքանակի նվազման պայմաններում:

**2.«ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում»** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում է 650.0 մլն. դրամ, 633.2 մլն. դրամ, 601.8 մլն. դրամ, որը պայմանավորված է հատուցման ամսական չափերի նախատեսվող փոփոխությամբ՝ հաշվի է առնված կոմունալ ծառայությունների սակագների աճը, թվաքանակի նվազման պայմաններում:

**3. «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրվող նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող զարգացման ծրագիր»** ծրագրի համար 2006-2008թթ. ՄԺԾԾ ծախսեր չեն նախատեսվել: 2007-2009թթ. ՄԺԾԾ ծախս է նախատեսվել 2007թ.՝ 23.5 մլն. դրամ և 2008թ.՝ 9.6 մլն. դրամ:

**4. «Հայխնայբանկում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում»** ծրագրի համար 2006-2008թթ. ՄԺԾԾ ծախսեր չեն նախատեսվել: 2007-2009թթ. ՄԺԾԾ ծախս է նախատեսվել 1000.0-ական մլն. դրամ:

## 9.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոլորտի գերակայությունները համընկնում են աղքատության ռազմավարական ծրագրում ամրագրված գերակայությունների հետ, այն հիմնականում վերաբերում է կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված օրենսդրական և կազմակերպական հիմքերի նախապատրաստմանը, սոցիալական աջակցության ծրագրերում հասցեականության, սոցիալական ապահովության և ապահովագրության ծրագրերում արդյունավետության մեծացմանը, պետական ծրագրերում հաշմանդամների, երեխաների նկատմամբ իրականացվող ծրագրերի առաջնահերթությանը:

***Կենսաթոշակային ապահովում***

Այս ենթախմբով ՀՀ պետական բյուջեից նախատեսված ծախսերը կազմում են 2007թ.՝ 17562.6 մլն. դրամ, 2008թ.՝ 18319.2 մլն. դրամ, 2009թ.՝ 18979.8 մլն. դրամ: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացմամբ:

Կենսաթոշակային ապահովման հիմնական ցուցանիշերը ներկայացված են ստորև բերված աղյուսակներ 9.7.-ում և 9.7.1-ում:

<u>Աղյուսակ 9.7. Պետական բյուջեի կենսաթոշակային ապահովման գծով ծախսերը 2005-2009թթ.</u>

**(մլն դրամ)**

| Խումբ/Ենթախումբ/Ծրագիր | 2005 փաստացի | 2006 հաստատված | % փոփ. | 2007 | % փոփ. | 2008 | % փոփ. | 2009 | % փոփ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 3/2 | 4 | 4/3 | 5 | 5/4 | 6 | 6/5 |
| 06.02 Կենսաթոշակային ապահովում, այդ թվում՝ | **14359.8** | **17052.3** | **18.7** | **17562.6** | **3.0** | **18319.2** | **4.3** | **18979.8** | **3.6** |
| 01. Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում | 8592.0 | 10048.7 | 17.0 | 10417.9 | 3.7 | 10741.5 | 3.1 | 11089.8 | 3.2 |
| 02. Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում | 2308.0 | 2462.2 | 6.7 | 2346.4 | -4.7 | 2326.4 | -0.9 | 2306.5 | -0.9 |
| 03. Սոցիալական կենսաթոշակներ | 2315.4 | 3261.5 | 40.9 | 3236.6 | -0.8 | 3199.1 | -1.2 | 3159.6 | -1.2 |
| 04. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասով 5-րդ մասին 1-ին 4-8 կետերով և 48 հոդվածով սահմանված կարգով հաշվարկված և ապահովագրական ստաժում հաշվարված այլ բնույթի գործունեության համար բյուջեից տրվող հատուցում | 2308.0 | 1073.2 | 12.5 | 1311.7 | 22.2 | 1788.6 | 36.4 | 2146.4 | 20.0 |
| 05.Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման,մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում | 44.4 | 52.5 | 18.2 | 70.2 | 33.7 | 87.7 | 24.9 | 105.3 | 20.1 |
| 06.ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ և ամենամսյա դրամական օժանդակություն | 146.1 | 154.3 | 5.6 | 179.8 | 16.5 | 175.9 | -2.2 | 172.2 | -2.1 |

<u>Աղյուսակ 9.7.1. Կենսաթոշակների ամենամյա բարձրացումը 2005-2009թթ.</u>

| *Ցուցանիշներ* | *2005* | *2006* | *2007* | *2008* | *2009* |
|---|---|---|---|---|---|
| *հիմնական կենսաթոշակի չափը (դրամ)* | *4000* | *4250* | *4250* | *4250* | *4250* |
| *ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը (դրամ)* | *160* | *180* | *220* | *300* | *360* |
| *աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակը (մարդ)* | *487.6* | *484.8* | *481.7* | *478.4* | *475.2* |
| *կենսաթոշակի միջին ամսական չափը (դրամ)* | *9734.4* | *11863.4* | *13687.9* | *15565.8* | *17799.2* |
| *սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակը (մարդ)* | *45.0* | *44.9* | *44.5* | *44.0* | *43.5* |
| *կենսաթոշակի միջին ամսական չափը (դրամ)* | *4867.0* | *6050.1* | *6056.5* | *6063.0* | *6059.5* |

***Պետական նպաստներ բնակչությանը***

Այս ենթախմբով ՀՀ պետական բյուջեից նախատեսված ծախսերը կազմում են 2007թ.՝ 28095.0 մլն. դրամ, 2008թ.՝ 28861.6 մլն. դրամ, 2009թ.՝ 31403.2 մլն. դրամ:

Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է.

**Ընտանեկան նպաստ**

2007-2009թթ. համար նախատեսված ֆինանսական միջոցները կազմել են համապատասխանաբար՝ 26454.6 մլն. դրամ, 26977.7 մլն. դրամ, 29631.6 մլն. դրամ:

Ընտանեկան նպաստի հիմնական ցուցանիշերը ներկայացված են ստորև բերված աղյուսակներ 9.8.-ում և 9.8.1-ում:

Ընտանեկան նպաստի ծրագրում հասցեականության մեծացման հետևանքով հանրապետությունում կնվազի նպաստառուների թվաքանակը, կբարձրանա նպաստի միջին ամսական չափը, կպահպանվի նպաստի չափի տարբերակման սկզբունքները, որոնք համապատասխանում են ԱՅՌԾ քաղաքականությանը և հաստատված չափաքանակներին:

**«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ»** ծրագրով 2007-2009թթ. նախատեսված ֆինանսական միջոցները կազմել են համապատասխանաբար՝ 1326.0 մլն.դրամ, 1389.4 մլն. դրամ, 1457.2 մլն. դրամ:

Սույն ծրագրով հաշվի է առնվել հանրապետությունում վերջին տարիներին դիտվող ծնելիության մակարդակի աճը:

**Աղյուսակ 9.8. Ընտանեկան նպաստներ 2005-2009թթ.**

**(մլն դրամ)**

| Ծրագիր | 2005 | 2006 | % փոփ. | 2007 | % փոփ. | 2008 | % փոփ. | 2009 | % փոփ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 3/2 | 4 | 4/3 | 5 | 5/4 | 6 | 6/5 |
| Ընտանեկան նպաստներ | 19572.0 | 24357.9 | 24.5 | 26454.6 | 8.6 | 26977.7 | 2.0 | 29631.6 | 9.8 |

**Աղյուսակ 9.8.1. Ընտանեկան նպաստներ 2005-2009թթ.**

**(մլն դրամ)**

| | 2005 | 2006 | 2007 | 2008 | **2009** |
|---|---|---|---|---|---|
| Անձերի միջին թիվը մեկ ընտանիքի հաշվով (մարդ) | 3.6 | 3.6 | 3.6 | 3.6 | 3.6 |
| Նպաստառու ընտանիքների քանակը (հազար ընտանիք) | 139 | 132.4 | 125.1 | 119.1 | 112.5 |
| Ընտանեկան նպաստի գծով ծախսերը՝ ՀՆԱ նկատմամբ (%) | 1.0 | 1.2 | 1.2 | 1.2 | 1.2 |
| Նպաստի միջին ամսական չափը (դրամ) | 12115 | 15331.0 | 17622.3 | 18876.1 | 21949.4 |
| Աղքատության պարենային գիծը՝մեկ շնչի հաշվով (դրամ) ըստ ԱՅՌԾ-ի | 8002 | 8207 | 8416.7 | 8626.3 | 8836.0 |
| Ամսական նպաստի չափը՝ մեկ շնչի հաշվով (դրամ) | 3365.3 | 4311.5 | 4892.3 | 5280.0 | 6137.8 |
| *աղքատության պարենային գծի նկատմամբ (%)* | 42.1 | 52.5 | 58.1 | 61.2 | 69.5 |

***Սոցիալական ապահովության միջոցառումներ***

2007-2009 թվականներին սոցիալական ապահովության ծրագրերի գծով ծախսերը կկազմեն, համապատասխանաբար՝ 5540.6 մլն. դրամ, 5825.0մլն. դրամ, 5600.8 մլն. դրամ:

**Տարեցներին մատուցվող ծառայություններ**

2007-2009թթ. նախատեսվում է ապահովել տարեցների տուն-ինտերնատների խնամվողների թվաքանակի ավելացումները՝ 10 մարդով (2006թ.՝ 1000 խնամվող), աշխատողների թվաքանակի 3 մարդով (2006թ.՝ 607.5 հաստիքային միավոր), ինչպես նաև աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերի 20% բարձրացումները (2006թ.՝ միջին ամսական աշխատավարձը կազմում է 39.9 հազ.

դրամ, մեկ խնամվողի միջին օրական սննդի ծախսը` 864.4 դրամ), հաշվի է առնվել նաև կապի ծառայությունների, գազի, ջրի սակագների աճը և գործուղման նորմաների բարձրացումները:

Միաժամանակ հաշվի է առնվել նաև Վարդենիսի տուն-ինտերնատի աշխատողների համար նախատեսված աշխատավարձի «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված առողջության համար վնասակար աշխատանքների և մասնագիտությունների ցանկում ներառված աշտատողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ սահմանված 50%-ի (նշված օրենքից բխող ՀՀ կառ.11.12.2003թ. N1907-Ն որոշումը) և ՀՀ կառ.01.04.1998թ. N226 որոշմամբ սահմանված ՀՀ բարձր լեռնային բնակավայրերի ցանկում ընդգրկվածների համար 20% չափով հավելումները:

Խնամվողները պետության լրիվ խնամքի տակ են:

Տնային պայմաններում սպասարկվում են մոտ 1200 միայնակ ծերեր և հաշմանդամներ, որոնց սոցիալական սպասարկման ամսական արժեքը մեկ սպասարկվողի հաշվով կազմում է 5.1 հազ. դրամ, որը 18.5 անգամ ավելի քիչ ծախսատար է քան տուն-ինտերնատում: Տնային պայմաններում սպասարկվողներին տրամադրվում են կենցաղային, իրավաբանական և հոգեբանական խորհրդատվության, առաջին բժշկական օգնության և այլ ծառայություններ:

2007-2009թթ. նախատեսվում է աշխատողների աշխատավարձի 20% բարձրացում (2006թ.` 29.5 հազ. դրամ), հաշվարկներում ներառվել է նաև կապի ծառայությունների սակագնի աճը:

«Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով պետական աջակցություն «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին» ծրագրով 30 անօթևան մարդկանց տրամադրվում է ժամանակավոր ապաստարան: 2007-2009թթ. համար նախատեսվում է աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերի 20% բարձրացումները (2006թ.` միջին ամսական աշխատավարձը կազմում է 29.9 հազ. դրամ, մեկ անօթևանի միջին օրական սննդի ծախսը` 806.0 դրամ), հաշվի է առնվել նաև կապի ծառայությունների, գազի, ջրի սակագների աճը:

***Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ***

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան` հաշմանդամները օգտվում են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով անվճար ապահովման իրավունքից, որը իրականացվում է **«Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում»** ծրագիրը, որի ծախսը 2007թ. կազմում է 813.2 մլն. դրամ (2007թ.` 14983 պարագա), 2008-2009թթ.` 869.2-ական մլն. դրամ (2008-2009թթ.` 16183-ական պարագա):

Հաշմանդամների պրոթեզավորումը և վերականգնողական պարագաներով ապահովումը նպաստում է նրանց` հասարակությանը ինտեգրվելուն: Վերականգնման արդյունքում հաշմանդամները հնարավորություն ունեն աշխատելու` մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև իրենց ընտանիքի սոցիալական խնդրները, որն այսօր սոցիալական քաղաքականության ռազմավարության և աղքատության հաղթահարման ծրագրի պահանջներից է:

Պատրաստվում և հաշմանդամներին անվճար տրամադրվում են վերին և ստորին վերջույթների պրոթեզներ, օրթեզներ, պրոթեզ և օրթոպեդիկ կոշիկներ, հենակներ, ձեռնափայտեր, բուժական սեղմիրաններ և աղեկապեր, սուպինատորներ, ինչպես նաև ձայնաստեղծ սարքեր և աչքի

պրոթեզներ:

Միաժամանակ կազմակերպվում է նաև պետական բյուջեի միջոցներով գնված վերականգ-նողական պարագաների (սայլակներ, քայլակներ, լսողական ապարատներ և կրծքագեղձի պրոթեզներ) բաշխումը հաշմանդամներին: Բացի այդ, իրականացվում է նաև պրոթեզների վերանորոգում:

**«Բժշկասոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության հիվանդանոցային ծառայությունների ձեռքբերում»** ծրագրով 2007-2009թթ. նախատեսվում է 407 մարդու համար նախա և հետ պրոթեզավորում իրականացնել:

**Ընտանիքին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ**

**«Երեխաների տուն-ինտերնատների ծառայությունների ձեռքբերում»** ծրագրով 2007-2009թթ. նախատեսվում է՝

- պահպանել մանկատներում խնամվող երեխաների թիվը՝ 935 երեխա,

- բարձրացնել աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերը 20% չափով (2006թ.՝ միջին ամսական աշխատավարձը կազմում է 43.9 հազ. դրամ, մեկ խնամվողի միջին օրական սննդի ծախսը՝ 806.4 դրամ),

- հաշվարկներում հաշվի է առնվել նաև կապի ծառայությունների, գազի, ջրի սակագների աճը և գործուղման նորմաների բարձրացումները:

Միաժամանակ 2007-2008թթ. կապիտալ ծախսերը կազմում են՝ «Գյումրու» երեխաների տուն ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի կառուցման համար համապատասխանաբար՝ 29.1մլն. դրամ, 126.0 մլն. դրամ և «Խարբերդի» մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հին մասնաշենքի վերանորոգման համար՝ համապատասխանաբար՝ 53.7 մլն. դրամ, 153.5 մլն. դրամ:

**«Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին»** ծրագրի իրականացման համար նախատեսվող ծախսերը 2007-2009թթ. կազմում են համապատասխանաբար՝ 379.3 մլն. դրամ, 378.8 մլն. դրամ, 342.1 մլն. դրամ: Սույն ծրագրի շրջանակներում շարունակվելու են իրականացվել բնակարանների, մասնագիտական կողմնորոշումը, ուսուցումը, վերապատրաստումը, բուժօգնության անվճար և իրավաբանական աջակցության տրամադրման գործընթացը:

**«Մանկական խնամակալական կազմակերպությունների բեռնաթափում»** ծրագրի ծախսերը 2007-2009թթ. կազմում են 17.0-ական մլն. դրամ:

Ծրագրի ընդհանուր նպատակն է Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի բարելավումը:

2006 և 2007թթ.-ին ծրագիրը կիրականացվի Լոռու մարզում: Նշված մարզն ընտրելու հիմքերն են.

- Ծրագրում ընդգրկվելու հնարավորություն ունեցող 5 հաստատությունների առկայությունը (1 մանկատուն և 4 հատուկ հանրակրթական հաստատություն),

- երեխաների պաշտպանության գործող ենթակառուցվածքների առկայություն (որոնք հետագայում կարող են լինել ծառայություններ տրամադրող),

  - 1 ցերեկային կենտրոն Վանաձորում, որը տրամադրում է սոցիալական և հոգեբանական աջակցություն ընտանիքներին (հասարակական կազմակերպությունների կողմից),

  - հոգեբանական աջակցության կենտրոն (հասարակական կազմակերպությունների կողմից),

  - ակտիվ և փորձառու 39 հասարակական կազմակերպություններ, մասնավորապես, ժամանակակից առաջավոր սոցիալական տեխնոլոգիաների հիման վրա գործող Սոցիալական ծառայությունների ինտեգրացված կենտրոնը:

Սույն ծրագրի իրականացման ընթացքում պետք է սահմանվեն տարածքային սոցիալական ծառայության կենտրոնների զարգացման հնարավորությունները, որպեսզի դրանք ի վիճակի լինեն հետագայում իրականացնել տվյալ ծրագրում նկարագրված համապատասխան գործառույթները:

***Հատուկ նպատակները***

1. Երեխաների հիմնախնդիրների հրատարակության վերաբերյալ հանրության և երեխաների պաշտպանության համակարգի աշխատակիցների իրազեկման քարոզարշավ ընտրված մարզերում,
2. Երեխաների պաշտպանության այլընտրաքնային ծրագրի իրականացում (մանկատների բեռնաթափում Լոռու մարզում 2006-2007թթ.)
3. Մանկատներում կամ հատուկ հանրակրթական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություններ) հայտնվելու ռիսկի ենթակա երեխաների և նրանց ընտանիքների հետ կանխարգելիչ-վերականգնողական աշխատանքների իրականացում (Լոռու մարզում 2006-2007թթ.):

**Ծրագրից ակնկալվող արդյունքները**

1. Ընտրված մարզերում հանրության և երեխաների պաշտպանության համակարգի ներկայացուցիչների շրջանում իրազեկվածության բարձրացում՝ երեխաների հիմնախնդիրների վերաբերյալ,
2. Ընտանիքներում (կենսաբանական ընտանիք, հարազատների ընտանիք) տեղավորված երեխաները, որոնք վերադարձվել են Հաստատություններից,
3. Երեխաներին կրկին հաստատություն ուղարկելու մտադրությունից հրաժարված ընտանիքներ,
4. Շահառու ընտանիքիներին առաջարկվող բազմաբնույթ ծառայությունների մշակված փաթեթի առկայություն,
5. Հանրապետության ամբողջ տարածքում ռիսկի ենթակա երեխաներին և ընտանիքներին մատուցվող ծառայությունների կիրառելի մշակված մոդելի առկայություն,
6. Ռիսկի ենթակա երեխաների և նրանց ընտանիքների վերաբերյալ տվյալների հավաքագրման, գրանցման, փոխանակման, հանրապետության ամբողջ տարածքում կիրառման համար պիտանի համակարգի առկայություն, տվյալների վերլուծության ձևավորված մեխանիզմ:

***Ծրագրից ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները և ծառայությունները***

1. Սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում (օրինակ. ընտանքի խորհրդատվություն և թերապիա, ծնողավարական հմտությունների ուսուցում և այլն),

2. Աջակցություն երեխաների կրթության ստանալու գործընթացին (օրինակ. տեղավորում հանրակրթական դպրոցում, դասագրքերի և այլ պարագաների տրամադրում, տրանսպորտային ծախսերի հատուցում և այլն),

3. Աջակցություն ընտանիքի նվազագույն կենսապայմանների ապահովմանը,

4. Ընտանիքներին և երեխաներին մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովում,

5. Շահառու ընտանիքներին աջակցություն աղքատության ընտանեկան նպաստի համակարգի միջոցով:

Ծրագրի համակարգման և կառավարման աշխատանքները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կիրականացնի հասարակական կազմակերպությունների միջոցով: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն արդեն երեք տարի է հաջողությամբ իրականացնում է «Պետական աջակցություն մանկական խնամակալական հաստատությունների շրջանավարտներին» ծրագիրը, որի համակարգման և կառավարման աշխատանքները նույնպես պատվիրվելու են քաղաքացիական հասարակության կառույցներին: Ընտրված հասարակական կազմակերպությունները կիրականացնեն հետևյալ միջոցառումները.

1. Ընտրված մարզերում (2006 և 2007թթ.-ին Լոռու մարզում) երեխաների պաշտպանության համակարգի ներկայացուցիչների իրազեկվածության բարձրացում՝ երեխաների հիմնահարցերի լուծման առաջավոր փորձի վերաբերյալ,
2. Երեխաների տեղավորում կենսաբանական կամ հարազատների ընտանիքիներում,
3. Երեխաների՝ Հաստատություններում հայտնվելու երևույթի կանխարգելում,
4. Շահառու ընտանիքիներին առաջարկվող ծառայությունների փաթեթի մշակում,
5. Հանրապետության ամբողջ տարածքում կիրառելի մոդելի մշակում:

**Հետագա զարգացումների հիմնական խնդիրները**

Երեխաների պաշտպանության ոլորտում բարեփոխումների հետագա ընթացքը պետք է կենտրոնանա հետևյալ հիմնական խնդիրների վրա՝

1. 2006թ. ծրագրի իրականացման փորձի ամփոփում և տարածում, այդ թվում՝

- նոր ստեղծված ծառայությունների որակի բարելավում, համապատասխան անձնակազմերի վերապատրաստում, գնահատման ստանդարտների մշակում և մոնիթորինգի համակարգի ուժեղացում,
- նոր մասնագիտացված ծառայությունների զարգացում երեխաների և ընտանիքների այն խմբերի համար, որոնք դեռևս անհարժեշտ ծառայություններ չեն ստանում: Օրինակ՝ բարդ հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական ծրագրեր, 18 տարին լրացած, համակարգից դուրս եկող երեխաների համար հասարակական ինտեգրացիայի հնարավորությունների ստեղծում,
- այլընտրանքային այլ ծրագրերի մշակում (խնամատար ընտանիք, ցերեկային կենտրոնների ստեղծում, և այլն):

2.Կանխարգելում

- Դժվարին իրավիճակներում գտնվող ընտանիքներին հասցեագրված ծրագրեր, շեշտադրելով երեխաների բռնության և լքման կանխարգելման կարևորությունը,
- Իրազեկման քարոզարշավների իրականացում, ինֆորմացիայի տրամադրում ծառայությունների պոտենցիալ շահառուներին, երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների արդյունքների մասին տեղեկատվության տարածում հանրության շրջանում,

3. Համայնքային սոցիալական աշխատանքի զարգացում (տարածքային սոցիալական ծառայության և երեխաների սոցիալական հոգածության համայնքային կենտրոնների միջոցով),

- Համայնքներին ավելի արդյունավետ կերպով ներգրավել այն խնդիրների լուծման գործում, որոնք պատճառ են դառնում ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից երեխաներին լքելու կամ ռիսկային իրավիճակներում երեխայի հայտնվելու համար,

4. Օրենսդրական դաշտի վերանայում և օրենսդրական ընթացակարգերի պարզեցում՝ 2007-2008թթ բարեփոխումների իրականացման և զարգացման համաձայն:

***Ծրագրից ակնկալվող արդյունքները.***

ա/ Մարզպետարանների սոցիալական պաշտպանության ստորաբաժանումների և Սոցիա-լական ծառայությունների տարածքային կենտրոնների աշխատակիցների վերապատրաստում երեխաների խնամքի և պաշտպանության ասպարեզում,

բ/ Մանկատներում խնամվող երեխաների վերադարձը իրենց կենսաբանական ընտանիքներ,

գ/ Կենսաբանական ընտանիքներում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

**«Երեխաների խնամքի ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալա-հոգեբանական վերա-կանգնողական ծառայությունների մատուցում»** ծրագրի ծախսը 2007-2009թթ. կկազմի 135.9-ական մլն. դրամ, որով նախատեսվում է ապահովել փողոցում հայտնված երեխաների (2007-2009թթ.՝ 200-ական երեխա) խնամքը: Հաշվարկներում հաշվի է առնվել կապի ծառայությունների սակագների աճը և գործուղման նորմաների բարձրացումները, ինչպես նաև աշխատողների աշխատավարձի և սննդի ծախսերի 20% բարձրացումները (2006թ.՝ միջին ամսական աշխատավարձը կազմում է 41.7 հազ. դրամ, մեկ խնամվողի միջին օրական սննդի ծախսը՝ 346.6 դրամ):

***Այլ սոցիալական ծրագրեր***

«Վետերանների պատվովճարներ» ծրագրի ծախսը 2007-2009թթ. համապատասխանաբար կկազմի 1032.6 մլն. դրամ, 1023.4 մլն. դրամ, 992.4 մլն. դրամ, որով վետերանների պատվովճարի ամսական չափը կազմում է 10000 դրամ:

«ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում» ծրագրի ծախսը 2007-2009թթ. կկազմի 2230.0 մլն. դրամ, 2198.6 մլն. դրամ, 2167.2 մլն. դրամ:

**Աղյուսակ 9.9. Տարեցներին, ընտանիքին, կանանց և երեխաներին, հաշմանդամներին մատուցվող ծառայություններ**

(մլն. դրամ)

| Ենթախումբ/Ծրագիր | 2005 | 2006 | % փոփ. | 2007 | % փոփ. | 2008 | % փոփ. | 2009 | % փոփ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սոցիալական ապահովության միջոցառումներ | 3927.8 | 4719.6 | 20.2 | 5540.6 | 17.4 | 5825.0 | 5.1 | 5600.8 | -3.8 |
| միայն ներքո նշված ծրագրերով, ընդամենը | 2787.7 | 3383.7 | 21.4 | 3942.9 | 16.5 | 3970.9 | 0.7 | 3991.2 | 0.5 |
| Տարեցներին մատուցվող ծառայություններ | 830.7 | 1174.4 | 41.4 | 1362.4 | 16.0 | 1362.4 | 0.0 | 1362.4 | 0.0 |
| Ընտանիքին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ, այդ թվում | 1206.9 | 1423.6 | 18.0 | 1839.6 | 29.2 | 2064.3 | 12.2 | 1805.1 | -12.6 |
| Մանկատներ | 897.4 | 954.6 | 6.4 | 1213.6 | 27.1 | 1410.2 | 16.2 | 1130.7 | -19.8 |
| Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին | 302.3 | 324.4 | 7.3 | 379.3 | 16.9 | 378.8 | -0.1 | 342.1 | -9.7 |
| Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ, այդ թվում | 750.1 | 785.7 | 4.7 | 949.4 | 20.8 | 1005.4 | 5.9 | 1005.4 | 0.0 |
| Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում | 637.2 | 649.6 | 1.9 | 813.2 | 25.2 | 869.2 | 6.9 | 869.2 | 0.0 |

***Նոր ծրագրեր***

**1.«Պետական աջակցություն «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկման իրականացման նպատակով»** ծրագրի ծախսերը 2007-2009թթ. կազմում են 109.0-ական մլն. դրամ, որի նպատակն է 6100 միայնակ, անապահով տարեցների և հաշմանդամների սպասարկում՝ մատուցելով սոցիալական, առողջապահական, խնամքի, սննդի և կենցաղային այլ ծառայությունների մատուցումը «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության միջոցով: Տարիների ընթացքում կազմակերպությունը Հայաստանի 7 մարզերի 20 քաղաքներում ստեղծել է 29 ենթակառույցներ՝ Համայնքային կենտրոններ, որոնք տարբեր միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տեղական իշխանությունների օժանդակությամբ վերանորոգվել, կահավորվել, հագեցվել են համապատասխան սարքավորումներով և հաջողությամբ գործել: Նշված 29 կենտրոնների կողմից շուրջ 6700 անապահով և միայնակ տարեց քաղաքացի ստացել է սոցիալ-առողջապահական ծառայություններ, որոնք իրենց մեջ ներառել են՝ սոցիալական, բժշկական, տնային խնամքի ծառայություններ, շուրջօրյա խնամք՝ բուժքույրական սպասարկմամբ, շահառուների բնակարանների վերանորոգում, հոգեկան հիվանդների խնամք և այլն: Ծրագրի հետագա իրագործումը ապահովելու համար 2007-2009թթ. նախատեսվում է ԲՀԿ-ին ցուցաբերել աջակցություն միայն 239 աշխատողների աշխատավարձի և պարտադիր սոցիալական վճարների մասով պետական բյուջեի միջոցների հաշվին:

2. **«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանի տրամադրման հետ կապված ծախսեր»** ծրագրի ծախսերը 2007-2009թթ. համապատասխանաբար կազմում են 85.0 մլն. դրամ, 114.0 մլն. դրամ և 171.0 մլն. դրամ, որի նպատակն է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կենտրոնացված հաշվառված 328 առանց ծնողական խնամքի մնացած

երեխաներից բնակարանային հերթի վերցված 2007թ.-15, 2008թ.-20, 2009թ.-30 անձանց համար բնակարանների ձեռքբերումը, ընդ որում մեկ բնակարանի գինը նախատեսվել է 5.7 մլն. դրամ (հաշվի է առնվել «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպություններին» ծրագրով մեկ բնակարանի ձեռքբերման համար նախատեսված միջին գինը):

3. **«Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և երեխայի ծննդյան միանվագ նպաստների տվյալների համակարգի «Նպաստ_2» շահագործման և սպասարկման նպատակով պետական աջակցություն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին»** ծրագրի ծախսերը 2007-2009թթ. կազմում են շուրջ 9.0-ական մլն. դրամ, որի նպատակն է ստեղծել երեխայի ծննդյան միանվագ նպաստի և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի միասնական տեղեկատվական դաշտ, որը կնպաստի նրանցով զբաղվող համապատասխան կառույցների արդյունավետ կառավարմանը, շահառուների սպասարկման որակի բարձրացմանը, հասարակության իրազեկման մակարդակի բարձրացմանը, պետական կառավարման մարմինների տեղեկատվական համակարգերի միջև անհրաժեշտ տվյալների փոխանակման հստակ մեխանիզմների ձևավորմանը:

<u>Աղյուսակ 9.10. Նոր ծրագրերի ֆինանսավորումը 2007-2009թթ.</u>

(մլն դրամ)

| | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|
| **Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն** | 57984.8 | 58851.6 | 62203.7 |
| **նոր ծրագրեր, այդ թվում** | 241.4 | 269.9 | 326.9 |
| Տարեցներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում պետական աջակցություն «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկման իրականացման նպատակով | 109.0 | 109.0 | 109.0 |
| Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանի տրամադրման հետ կապված ծախսեր | 85.5 | 114.0 | 171.0 |
| «Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և երեխայի ծննդյան միանվագ նպաստների տվյալների համակարգի «Նպաստ_2» շահագործման և սպասարկման նպատակով պետական աջակցություն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին» ծրագրի գծով | 9.0 | 9.0 | 9.0 |
| Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում | 38.0 | 38.0 | 38.0 |
| *% ոլորտի նկատմամբ* | 0.42 | 0.46 | 0.53 |
| գոյություն ունեցող ծրագրեր | 57743.4 | 58581.6 | 61876.8 |
| *% ոլորտի նկատմամբ* | 99.58 | 99.54 | 99.47 |

2007-2009թթ. ՄԺԾԾ-ով սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ոլորտին ուղղվող ծախսերի կանխատեսումները՝ ըստ ուղղությունների, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

<u>**Աղյուսակ 9.11. Պետական բյուջեից սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության գծով ծախսերը 2005-2009թթ.**</u>

(մլն. դրամ)

| Ենթախմբի անվանումը | 2005 | 2006 | % փոփ. | 2007 | % փոփ. | 2008 | % փոփ. | 2009 | % փոփ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| %-ը ՀՆԱ-ի նկատմամբ | 2.1 | 2.3 | x | 2.2 | x | 2.0 | x | 1.9 | x |
| %-ը պետական բյուջեի նկատմամբ | 9.7 | 11.6 | x | 11.1 | x | 10.0 | x | 10.2 | x |
| Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն, այդ թվում` | 46578.1 | 55869.9 | 19.9 | 57984.8 | 3.8 | 58851.7 | 1.5 | 62203.7 | 5.7 |
| Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառում պետական կառավարում | 695.8 | 1169.2 | 68.0 | 1329.4 | 13.7 | 1370.3 | 3.1 | 1536.3 | 12.1 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 1.5 | 2.1 | x | 2.3 | x | 2.3 | x | 2.5 | x |
| Կենսաթոշակային ապահովում | 15476.5 | 17052.3 | 10.2 | 17562.6 | 3.0 | 18319.2 | 4.3 | 18979.8 | 3.6 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 33.2 | 30.5 | x | 30.3 | x | 31.1 | x | 30.5 | x |
| Պետ.նպաստներ բնակչությանը | 22267.8 | 27034.4 | 21.4 | 28095.0 | 3.9 | 28681.6 | 2.1 | 31403.2 | 9.5 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 47.8 | 48.4 | x | 48.5 | x | 48.7 | x | 50.5 | x |
| Սոցիալական ապահովության միջոցառումներ | 3792.7 | 4719.6 | 24.4 | 5540.6 | 17.4 | 5825.0 | 5.1 | 5600.8 | x |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 8.1 | 8.4 | x | 9.6 | x | 9.9 | x | 9.0 | x |
| Այլ սոցիալական ծրագրեր | 4345.3 | 5894.4 | 35.7 | 5457.2 | -7.4 | 4655.6 | -14.7 | 4683.6 | 0.6 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 9.3 | 10.6 | x | 9.4 | x | 7.9 | x | 7.5 | x |
| վարկային ծրագիր, այդ թվում | 881.1 | 1475.6 | 67.5 | 675.3 | -54.2 | 0.0 | x | 0.0 | x |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 1.9 | 1.4 | x | 1.3 | x | 0.0 | x | 0.0 | x |
| ընթացիկ ծախսեր, այդ թվում | 45856.7 | 54149.5 | 18.1 | 57253.5 | 5.7 | 58472.2 | 2.1 | 62203.7 | 6.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 98.5 | 96.9 | x | 98.7 | x | 99.4 | x | 99.7 | x |
| կապիտալ ծախսեր, այդ թվում | 571.4 | 1570.4 | 174.8 | 581.3 | -63.0 | 279.5 | 48.1 | 0.0 | x |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 1.2 | 2.8 | x | 1.0 | x | 0.5 | x | 0.0 | x |
| վարկավորում` հանած մարում, այդ թվում | 150.0 | 150.0 | 0.0 | 150.0 | 0.0 | 100.0 | -33.3 | 200.0 | 100.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 0.3 | 0.3 | x | 0.3 | x | 0.2 | x | 0.3 | x |

## ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի զարգացման վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2004 թվականի հուլիսի 30-ին Հայաստանի Հանրապետության և Զարգացման Միջազգային Ասոցիացիայի միջև: Վարկի գումարը կազմում է 3,6 մլն SDR (5.4 մլն ԱՄՆ դոլար):

2007թ. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի ծախսը կազմում է 675.3 մլն. դրամ:

Ծրագրի ավարտման ժամկետը 2007թ. դեկտեմբերի 31-ն է:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները`

լրացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության կառավարման և տեղեկատվական համակարգի կարողությունները,

ստեղծել աշխատանքի և զբաղվածության, կենսաթոշակների և սոցիալական աջակցության ավելի արդյունավետ և կայուն համակարգ,

մոնիտորինգի և գնահատման ճիշտ մեխանիզմների կիրառմամբ բարելավել ծրագրերի կառավարումը, ուժեղացնելով բնակչության աղքատ և խոցելի խմբերի սոցիալական պաշտպանվածությունը:

**Աղյուսակ 9.12. 2005-2009թթ. սոցիալական ոլորտի ծախսերը՝ ըստ պետական կառավարման մարմինների**

**(մլն. դրամ)**

| ՀՀ պետական կառավարման մարմիններ | 2005 փաստացի | 2006 հաստատված բյուջե | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն, այդ թվում | 44145.9 | 55869.9 | 57984.8 | 58851.6 | 62203.8 |
| *ընթացիկ ծախսեր* | 44003.1 | 54299.5 | 57226.7 | 58572.2 | 62203.8 |
| *կապիտալ ծախսեր* | 142.8 | 1570.4 | 758.1 | 279.5 | 0.0 |
| ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 17415.7 | 21140.6 | 20912.6 | 21607.0 | 22205.1 |
| 1 Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում | 8592.0 | 10048.7 | 10417.9 | 10741.5 | 11089.8 |
| 2. Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում | 2308.0 | 2462.2 | 2346.4 | 2326.4 | 2306.5 |
| 3 Սոցիալական կենսաթոշակներ | 2315.4 | 3261.5 | 3236.6 | 3199.1 | 3159.6 |
| 4 ՀՀ պետական բյուջեից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված ապահովագրական ստաժի համար ֆինանսավորում | 953.9 | 1073.2 | 1311.7 | 1788.6 | 2146.4 |
| 5 Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում | 44.4 | 52.5 | 70.2 | 87.7 | 105.3 |
| 6 ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ և ամենամսյա դրամական օժանդակություն և կենսաթոշակի տարբերության հատուցում | 146.1 | 154.3 | 179.8 | 175.9 | 172.2 |
| 7 Վետերանների պատվովճարներ | 443.8 | 1054.4 | 1023.6 | 992.7 | 961.6 |
| 8. ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում | 1616.2 | 1840.7 | 2230.0 | 2198.6 | 2167.2 |
| 9 Հղիության և ծննդաբերության նպաստ | 995.9 | 1094.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 10 Ֆինասական աջակցություն գործազուրկներին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և աշխատատեղեր ստեղծելու համար | 0.0 | 10.0 | 7.5 | 7.5 | 7.5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11. Աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին | 0.0 | 23.8 | 23.8 | 23.8 | 23.8 |
| 12.Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում | 0.0 | 60.2 | 60.2 | 60.2 | 60.2 |
| 13. Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրա-կան ստաժ ունեցող հաշմանդամների համար մասնագիտական աշխատան-քային ունակությունների վերականգնման կազմակերպում | 0.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, այդ թվում | 25671.9 | 32688.3 | 35809.0 | 36718.0 | 39378.4 |
| *ընթացիկ ծախսեր* | 25671.9 | 32500.5 | 35726.2 | 36438.5 | 39378.4 |
| *կապիտալ ծախսեր* | 0.0 | 187.8 | 82.9 | 279.5 | 0.0 |
| 1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական կառավարման ապարատ, այդ թվում | 773.5 | 1169.2 | 1329.4 | 1370.3 | 1536.3 |
| *ընթացիկ ծախսեր* | 773.5 | 1096.9 | 1329.4 | 1370.3 | 1536.3 |
| *կապիտալ ծախսեր* | 0.0 | 72.3 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2 Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն | 19572.1 | 24357.8 | 26454.6 | 26977.7 | 29631.6 |
| 3. Մինչև 2 տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստ | 208.1 | 217.9 | 217.9 | 217.9 | 217.9 |
| 4 Երեխայի ծննդյան միանվագ նպաստ | 1249.5 | 1265.5 | 1326.0 | 1389.4 | 1457.2 |
| 5. Տարեցներին մատուցվող ծառայութ-յուններ ծրագրի շրջանակներում այդ թվում | 825.1 | 1174.4 | 1362.4 | 1362.4 | 1362.4 |
| *ընթացիկ ծախսեր* | 825.1 | 1058.9 | 1362.4 | 1362.4 | 1362.4 |
| *կապիտալ ծախսեր* | 0.0 | 115.5 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5.1.Տարեցներին մատուցվող ծառայութ-յուններ ծրագրի շրջանակներում «Տա-րեցների տուն-ինտերնատների ծառա-յությունների ձեռք բերում», այդ թվում | 765.0 | 1014.7 | 1134.4 | 1134.4 | 1134.4 |
| *ընթացիկ ծախսեր* | 765.0 | 950.5 | 1134.4 | 1134.4 | 1134.4 |
| *կապիտալ ծախսեր* | 0.0 | 64.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5.2 Տարեցներին մատուցվող ծառայութ-յուններ ծրագրի շրջանակներում «Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոնի ծառայությունների ձեռք բերում» | 60.1 | 64.5 | 73.0 | 73.0 | 73.0 |
| 5.3 Տարեցներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով պետական աջակցություն «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին, այդ թվում | 0.0 | 88.8 | 30.0 | 30.0 | 30.0 |
| *ընթացիկ ծախսեր* | 0.0 | 37.5 | 30.0 | 30.0 | 30.0 |
| *կապիտալ ծախսեր* | 0.0 | 51.3 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5.4 Տարեցներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում աշխատանքների մեքենայացման ծառայությունների ձեռքբերում | 0.0 | 1.2 | 1.2 | 1.2 | 1.2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5..5 Տարեցներին մատուցվող ծրագրի շրջանակներում տարեցների ցերեկային խնամքի իրականացման նպատակով պետական աջակցություն «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին | 0.0 | 5.2 | 14.8 | 14.8 | 14.8 |
| 5.6 Տարեցների մատուցվող ծրագրի շրջանակներում պետական աջակցություն «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային կենտրոններում սոցիալական սպասարկման իրականացման նպատակով» | 0.0 | 0.0 | 109.0 | 109.0 | 109.0 |
| 6 Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում, այդ թվում | 750.1 | 785.7 | 949.4 | 1005.4 | 1005.4 |
| 6.1 Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների ձեռք բերում» | 45.0 | 49.8 | 49.8 | 49.8 | 49.8 |
| 6.2 Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Բժշկա-սոցիալական վերականգնման,աշխատունակության փորձաքննության հիվանդանոցային ծառայությունների ձեռք բերում» | 54.6 | 52.1 | 52.1 | 52.1 | 52.1 |
| 6.3 Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Հաշմանդամների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռք բերում» | 8.6 | 16.8 | 16.8 | 16.8 | 16.8 |
| 6.4 Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում | 637.2 | 649.6 | 813.2 | 869.2 | 869.2 |
| 6.5 Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «ԲՍՓ ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերում» | 4.7 | 4.7 | 4.7 | 4.7 | 4.7 |
| 6.6 Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում աշխատակազմի աշխատանքների մեքենայացման ծառայությունների ձեռքբերում | 0.0 | 1.2 | 1.2 | 1.2 | 1.2 |
| 6.7 «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում դպրոցն ավարտաց, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշ-մանդամների համար հատուկ տառատե-սակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություն-ների ձեռքբերում» | 0.0 | 11.5 | 11.5 | 11.5 | 11.5 |
| 7 .Զբաղվածության ծառայություններ ծրագրի շրջանակներում իրականացվող, այդ թվում | 597.9 | 728.7 | 728.7 | 723.5 | 723.5 |
| 7.1 Զբաղվածության ծառայություններ ծրագրի շրջանակներում իրականացվող Վարձատրվող հասարակական աշխատանքներ | 584.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7.2 Զբաղվածության ծառայություններ ծրագրի շրջանակներում իրականացվող Գործազուրկների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների / «Գործ» համակարգ/ ձեռք բերում | 9.3 | 19.8 | 19.8 | 19.8 | 19.8 |
| 7.3. Զբաղվածության ծառայություններ ծրագրի շրջանակներում իրականացվող «Դպրոցական աշխատակազմի օպտի-մալացման և սոցիալական աջակցության ենթածրագրի իրականացման ուղեկցման ծախսեր» | 4.6 | 5.3 | 5.3 | 0.0 | 0.0 |
| 7.4 Զբաղվածության ծառայություններ ծրագրի շրջանակներում աշխատակազմի աշխատանքների մեքենայացման ծառայությունների ձեռքբերում | 0.0 | 3.7 | 3.7 | 3.7 | 3.7 |
| 8 Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ծառայու-թյուններ ծրագրի շրջանակներում, այդ թվում | 142.9 | 133.1 | 133.1 | 133.1 | 133.1 |
| 8.1 Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ծառայու-թյուններ ծրագրի շրջանակներում «Սոց-իալական ապահովության քարտերի համակարգի ներդրման, տեղեկատվական բազայի վարման և շահագործման գծով «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն ՓԲԸ ծառայությունների ձեռքբերում | 142.9 | 133.1 | 133.1 | 133.1 | 133.1 |
| 9 Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում ,այդ թվում | 1201.0 | 1423.7 | 1839.6 | 2064.2 | 1805.1 |
| *ընթացիկ ծախսեր* | 1201.0 | 1423.7 | 1756.8 | 1784.8 | 1805.1 |
| *կապիտալ ծախսեր* | 0.0 | 0.0 | 82.9 | 279.5 | 0.0 |
| 9.1 Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Երեխաների տուն-ինտերնատների ծառայությունների ձեռքբերում» | 895.9 | 954.6 | 1213.6 | 1410.2 | 1130.7 |
| *ընթացիկ ծախսեր* | 895.9 | 954.6 | 1130.7 | 1130.7 | 1130.7 |
| *կապիտալ ծախսեր* | 0.0 | 0.0 | 82.9 | 279.5 | 0.0 |
| 9.2 Ընտանիքներին, կանանց և երեխանե-րին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմա-կերպությունների շրջանավարտներին | 300.1 | 324.4 | 379.3 | 378.8 | 342.1 |
| 9.3Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Մանկական խնամա-կալական կազմակերպությունների բեռնաթափման հետ կապված ծախսեր» | 0.0 | 17.0 | 17.0 | 17.0 | 17.0 |
| 9.4 Ընտանիքներին, կանանց և երեխանե-րին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների ձեռք բերում» | 5.0 | 119.4 | 135.9 | 135.9 | 135.9 |
| 9.5 Ընտանիքներին, կանանց և երեխա-ներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում աշխատանք-ների մեքենայացման ծառայությունների ձեռքբերում | 0.0 | 2.4 | 2.4 | 2.4 | 2.4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9.6 Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում «Մանուկ» տեղեկատվական համակարգի շահագործման և վարման ծառայությունների ձեռքբերում | 0.0 | 5.9 | 5.9 | 5.9 | 5.9 |
| 9.7 Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ ծրագրի շրջանակներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանի տրամադրման հետ կապված ծախսեր | 0.0 | 0.0 | 85.5 | 114.0 | 171.0 |
| 10. Մարդասիրական օգնության կարգով ստացվող սննդի բաշխման ծառայությունների շրջանակներում | 33.8 | 56.1 | 56.1 | 56.1 | 56.1 |
| 10.1 Մարդասիրական օգնության կարգով ստացվող սննդի բաշխման ծառայությունների ձեռք բերում | 33.8 | 54.9 | 54.9 | 54.9 | 54.9 |
| 10.2 Մարդասիրական օգնության կարգով ստացվող սննդի բաշխման ծառայությունների շրջանակներում աշխատանքների մեքենայացման ծառայությունների ձեռքբերում | 0.0 | 1.2 | 1.2 | 1.2 | 1.2 |
| 11. Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում, այդ թվում | 314.9 | 343.7 | 378.1 | 384.3 | 416.2 |
| 11.1 Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռք բերում | 269.7 | 292.1 | 317.5 | 323.7 | 355.6 |
| 11.2 Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում աղքատության ընտանեկան նպաստի տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռք բերում» | 26.0 | 29.2 | 29.2 | 29.2 | 29.2 |
| 11.3 Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում «ՍՕՏԳ ձևաթղթի տպագրություն ծառայությունների ձեռք բերում» | 11.7 | 11.7 | 11.7 | 11.7 | 11.7 |
| 11.4 Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում Սոցիալապես անապահով քաղաքացիներին կամ ընտանիքներին դրամական օժանդակություն հրատապ օգնության համար | 7.5 | 8.3 | 8.3 | 8.3 | 8.3 |
| 11.5 Սոցիալական աջակցության ծառայություններ ծրագրի շրջանակներում աշխատանքների մեքենայացման ծառայությունների ձեռքբերում | 0.0 | 2.4 | 2.4 | 2.4 | 2.4 |
| 11.6 «Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և երեխայի ծննդյան միանվագ նպաստների տվյալների համակարգի «Նպաստ_2» շահագործման և սպասարկման նպատակով պետական աջակցություն «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին» | 0.0 | 0.0 | 9.0 | 9.0 | 9.0 |
| 12. Մեթոդաբանական և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման ծառայությունների ձեռք բերում | 0.6 | 25.1 | 31.3 | 31.3 | 31.3 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13. Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի միանվագ դրամական փոխհատուցում | 2.5 | 2.6 | 2.6 | 2.6 | 2.6 |
| 14 Պետական աջակցություն «Աֆղանստանի պատերազմի վետերանների միավորում» կազմակերպությանը | 0.0 | 5.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 15. Հայխնայբանկում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում | 0.0 | 1000.0 | 1000.0 | 1000.0 | 1000.0 |
| ՀՀ տարածքային կառավարման նախարարություն,այդ թվում | 83.0 | 63.3 | 85.9 | 74.7 | 68.2 |
| 1. ՀՀ կառավարությանն առընթեր փախստականների և միգրացիայի վարչության պետական կառավարման ապարատ | 59.1 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2. Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ | 10.9 | 12.2 | 14.2 | 14.6 | 17.0 |
| 3. Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության ծառայությունների գնման գծով ծրագրի շրջանակներում պետական աջակցություն «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ին | 9.6 | 29.6 | 39.5 | 41.4 | 41.5 |
| 4. ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ին պետական աջակցություն | 3.4 | 7.3 | 8.2 | 8.7 | 9.3 |
| 5. Փախստականի կարգավիճակ հայցողին տրվող մանվագ նպաստ | 0.0 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 |
| 6. «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրվող նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող զարգացման ծրագիր» | 0.0 | 13.7 | 23.5 | 9.6 | 0.0 |
| ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 974.8 | 1942.6 | 1142.3 | 417.0 | 517.0 |
| *ընթացիկ ծախսեր* | 832.0 | 560.0 | 467.0 | 417.0 | 517.0 |
| *կապիտալ ծախսեր* | 142.8 | 1382.6 | 675.3 | 0.0 | 0.0 |
| 1. Միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և փրկարար ծառայողներին զոհված (մահացած) զինծառայողների և փրկարար ծառայողների ընտանիքներին | 94.2 | 130.0 | 130.0 | 130.0 | 130.0 |
| 2. Վարժական հավաքների և զինծառայության ու փրկարար ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների և փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցում | 106.0 | 187.0 | 187.0 | 187.0 | 187.0 |
| 3. Անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվ բնակելի տների փայատերերի ներդրված միջոցների դիմաց առաջացած պետական պարտքի փոխհատուցում, այդ թվում | 379.1 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| *կապիտալ ծախսեր* | 68.2 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4 Համաշխարհայինբանկի աջակցությամբ իրականացվող երեխաների խնամքի համակարգում բարեփոխումների փորձարկման | 189.3 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| դրամաշնորհ | | | | | |
| *5. վարկավորում՝ հանած մարում, այդ թվում* | 131.6 | 150.0 | 150.0 | 100.0 | 200.0 |
| 5.1 Արտոնյալ պայմաններով երկարաժամկետ բյուջետային վարկերի տրամադրում բռնադատված քաղաքացիներին անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու համար | 131.6 | 150.0 | 150.0 | 100.0 | 200.0 |
| *6. Վարկային ծրագիր, այդ թվում* | 74.6 | 1475.6 | 675.3 | 0.0 | 0.0 |
| 6.1 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագիր, այդ թվում | 74.6 | 1475.6 | 675.3 | 0.0 | 0.0 |
| ընթացիկ ծախսեր | 0.0 | 93.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| *կապիտալ ծախսեր* | 74.6 | 1382.6 | 675.3 | 0.0 | 0.0 |
| ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 0.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 |
| 1 ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից զեղջ սակագնով կամ անվճար ծառայություններ մատուցելու հետևանքով չստացված եկամուտների փոխհատուցում | 0.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 |
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 0.5 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 |
| 1. Փոխհատուցում զոհված ազատամարտիկների երեխաներին ԲՈՒՀ-երում վճարովի ուսուցման համար | 0.5 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 |

Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրերի գծով 2007-2009թթ. ՄԺԾԾ-ով սահմանված հատկացումների կանխատեսումների բաշխումը ծրագրային դասակարգմամբ ներկայացված է Հավելված 2-ի N 3 աղյուսակում:

# ԳԼՈՒԽ 10. ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ

## 10.1. ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթի ոլորտում 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն 37 գոյություն ունեցող, 41 նոր նախաձեռնությունների իրականացմանը: Նշված ծրագրերը կիրականացվեն 25 պետական կառավարման մարմինների միջոցով, որոնց համար գլխադասային մարմին է հանդիսանում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը:

### 10.1.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ոլորտում ընդգրկված պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան՝ իրագործում են մշակութային արժեքների պահպանությունը, պաշտպանությունը, տարածումը, զարգացումն ու հանրահռչակումը, երիտասարդության հարցերի կարգավորումը և մշակութային միջոցառումների իրականացումը:

Իրականացվող և նախատեսվող ծախսային ծրագրերը նպատակ ունեն բարձրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը, բացահայտելու և խթանելու անհատի և հասարակության ստեղծագործական ներուժը, ապահովելու ազգային մշակութային ավանդական ձևերի զարգացումը և ինտեգրումը միջազգային մշակութային կառույցներին:

2005թ. ընթացքում իրավահարաբերությունների կարգավորման նպատակով՝ ոլորտում լիազորված պետական կառավարման մարմնի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից մշակվել են՝ 3 օրենքի նախագիծ, 3 հայեցակարգի նախագիծ, մշակութային քաղաքականությանը վերաբերող 3 մշակութային ծրագիր, ՀՀ կառավարության որոշման 7 նախագիծ և 7 այլ իրավական ակտ, որոնցից 5-ը հաստատվել են ՀՀ կառավարության որոշումներով:

Ծախսային ծրագրերը ներկայումս հիմնականում իրականացվում են 17 գրադարանների (10-ը՝ մարզային), 40 թանգարանների (11-ը՝ մարզային), 4 մշակութային կենտրոնների (3-ը՝ մարզային) և 40 թատերահամերգային կազմակերպությունների (8-ը՝ մարզային) միջոցով, որոնց պահպանմանն էլ ուղղվում են պետական հատկացումները:

Ոլորտի հիմնական խնդիրներն առնչվում են անհատի և հասարակության ստեղծագործական ներուժի խթանման, մշակույթի ոլորտում պետական աջակցության ցուցաբերման, իրավական հիմքերի մշակման, պատմամշակութային ժառանգության պահպանման, արդի և ժողովրդական արվեստի զարգացման, մշակութային նշանակալից նվաճումների խրախուսման, արտերկրում հայկական մշակույթն արժանավայել ներկայացնելուն ուղղված ծրագրերին, մշակութային կրթության և գիտության կատարելագործման, ազգային փոքրամասնությունների սոցիալ-մշակութային ներդաշնակ զարգացման և միջմարզային մշակութային համագործակցության հետ, որոնք բխում են աղքատության հաղթահարման ռազմավարական և երեխայի իրավունքների պաշտպանության ծրագրերի գերակայություններից: Միաժամանակ, ոլորտին նախատեսված հատկացումները ուղղված են՝

ա/ քաղաքացիական հասարակության ձևավորմանը և մշակույթի դերի բարձրացմանը,

բ/ մշակութային անշարժ հուշարձանների, մշակութային արժեքների, այդ թվում` ոչ նյութական, և հայերենի տառատեսակների պահպանմանը,

գ/ մշակութային կրթության և գիտության համակարգմանը և նոր ծրագրերի ու մեթոդների ներդրմանը,

դ/ համաշխարհային մշակութային գործընթացներին ազգային մշակույթի ինտեգրմանը,

ե/ մշակութային փոխանակությունների նոր ձևերի և ուղղությունների յուրացմանը,

զ/Հայաստանի Հանրապետության մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը, համագործակցությանը պետական լիազորված մարմնի, պետական տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, համատեղ մշակութային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, մոնիտորինգային գործընթացի և մասնագիտական գործուղումների կազմակերպմանը,

է/ համագործակցությանը հասարակական կազմակերպությունների, այդ թվում` ստեղծագործական և ազգային փոքրամասնությունների միությունների հետ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությանը հանձնված մի շարք մշակութային կազմակերպություններ փակվել կամ դադարել են լիարժեք գործել` շենքերի ու շինությունների վթարայնության, անբարենպաստ պայմանների, նյութատեխնիկական միջոցների անբավարար լինելու, կադրերի նվազման և այլ պատճառներով:

Ֆինանսական և նյութական լրացուցիչ միջոցների կարիք ունեն պատմական հուշարձանների և մշակութային արժեքների պահպանության, մշակութաբանության և մշակութային գիտության ոլորտները:

Մշակույթի բնագավառում անբավարար է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, մշակված չեն հայկական համակարգչային ընդհանրական տառատեսակներ, կանոնակարգված չէ դրանց կիրառությունը հանրապետության տարածքում:

Մշակութային կրթական համակարգում առկա են դժվարություններ` կապված նյութատեխնիկական միջոցների պակասի հետ:

Դեռևս անկատար են ոլորտի իրավական դաշտը և իրավահարաբերությունները:

Հանրապետությունում չի գործում մշակույթի ոլորտի մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման համակարգը:

**Գրադարաններ**

Ոլորտում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի 13, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգի 1, ՀՀ ԳԱԱ ենթակայության 2 գրադարանի «Գրադարաններին պետական աջակցություն» ծրագրերը, որոնց իրականացումը ներառում է նշված գրադարանների հիմնական գործառույթների ընդգրկունությունը բնութագրող հետևյալ ցուցանիշները` տարածքային առումով` ք.Երևանը և հանրապետության 10 մարզը, ընթերցողների տարիքային խմբերի առումով` մանկապատանեկան և մեծահասակներ, ըստ տվյալ գրադարանի հավաքածուի գրականության ու տեղեկատվության բովանդակության` բազմաբնույթ կամ մասնագիտացված ուղղվածության, այդ

թվում՝ երաժշտագիտական, գիտության, գիտաբժկական, գիտատեխնիկական:

Վերջին տասնհինգ տարիներին գրադարանների շենքային պայմանների վատթարցումը, գրքային հավաքածուների թվաքանակի կտրուկ նվազումը, ջեռուցման համակարգերի անսարքությունը, միջգրադարանային կապերի թուլացումը, գրադարանային գործի ոլորտում առաջացրել են որոշակի անկումային միտումներ, 2004-2005 թվականներին ոլորտում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների և դրամաշնորհների հաշվին պետական բոլոր գրադարաններում սկսվել է հավաքածուների ավտոմատացման գործընթացը, 7 գրադարաններ իրականացնում են էլեկտրոնային սպասարկում, 5 գրադարաններ ընդգրկված են Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցի ստեղծման ծրագրում:

Գրադարանների գործունեության առաջնահերթ ուղղություն համարելով գրադարանային-տեղեկատվական սպասարկումը՝ 2004-2006թթ. հատկացված ֆինանսական միջոցները հիմնականում նպատակաուղղվել են գրադարանային հավաքածուների համալրմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը, որոնց շնորհիվ միայն ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի 13 գրադարաններում ընթերցողների թիվը 2005 թվականին 2004թ. համեմատությամբ աճել է 9 %-ով, սպասարկված գրքերի քանակը՝ 8 %-ով, հաճախումներինը՝ 4 %-ով, գրադարանային հավաքածուների համալրումը՝ 3 %-ով:

Այնուհանդերձ, հանրությանը գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների արդյունավետության բարձրացման տեսանկյունից, գրադարաններում դեռևս ցածր է ժամանակակից ընթերցողական պահանջարկին համապատասխան համալրվող գրականության, էլեկտրոնային սպասարկմանն անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերումների քանակը: Այս առնչությամբ առաջիկա տարիներին և կշարունակվեն ֆինանսական միջոցների նպատակային հատկացումները գրադարանների նյութատեխնիկական բազայի վերազինման, արդի ժամանակաշրջանի գրականության համալրման, գրադարանային հավաքածուների պահպանվածությունն ապահովող ջերմախոնավային կայուն մթնոլորտի ստեղծման, գրքերի կոնսերվացման ու վերականգնման գործընթացների ուղղությամբ:

Ոլորտի հիմնական խնդիրների իրականացման կարևոր նախապայմաններից է մնում 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի շրջանակներում գրադարանների շենքերի, մասնավորապես՝ Հայաստանի ազգային գրադարանի, Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի մարզային գրադարանների վթարային շենքերի հիմնանորոգումը:

**Թանգարաններ**

Ոլորտում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի 48 (այդ թվում՝ մասնաճյուղ-թանգարանների, արգելոց-թանգարանների, ցուցահանդեսային կենտրոնի), ՀՀ բնապահպանության նախարարության համակարգի 1, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի 2, ՀՀ քաղաքաշինության նախարարության համակարգի 2, Երևանի քաղաքապետարանի ենթակայության 4, Արարատի մարզպետարանի ենթակայության 2, Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության 1, Լոռու մարզպետարանի ենթակայության 1, Շիրակի մարզպետարանի ենթակայության 3 (այդ թվում՝ 1 մասնաճյուղ-թանգարանի), Սյունիքի մարզպետարանի ենթակայության 1 և Վայոց ձորի

մարզպետարանի ենթակայության 1 թանգարանի ծրագրերը:

ՀՀ մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասի՝ թանգարանային հավաքածուների ավելի քան 2 միլիոն բազմաբնույթ թանգարանային առարկաները ներկայացնում են հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, հայկական արվեստի բոլոր ճյուղերն ու ճարտարապետությունը, ինչպես նաև բնական ժառանգությունը՝ ընդգրկելով մարդկության քաղաքակրթության ձևավորման պատմության ակունքներից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածները:

Ոլորտի հիմնախնդիրները հիմնականում առնչվում են թանգարաններում պահվող մշակութային ժառանգության պահպանությանը և հանրությանը պատշաճ ներկայացմանը, որոնց իրականացման կարևոր միջոցառումներից են թանգարանների շենքերի վերանորոգումը, մշտական ցուցադրությունների կազմակերպումը, ցուցադրություններում և ֆոնդապահոցներում կայուն ջերմախոնավային մթնոլորտի, թանգարանային առարկաների անվտանգության ապահովումը:

Վերջին տարիներին «Լինսի» հիմնադրամի միջոցով իրականացված հիմնանորոգման աշխատանքներից հետո բարելավվել են ոլորտի 13 թանգարանի շենքային պայմանները, 2005թ. նոր կառուցված շենք է տեղափոխվել Երևան քաղաքի պատմության թանգարանը :

Դեռևս լուծման կարիք ունեն ոլորտի 9 թանգարանի շենքերի վերանորոգման հարցերը, որոնցից 3-ը՝ երկրագիտական, ինչպես նաև Խ. Աբովյանի, Ա. Խաչատրյանի, Պ.Սևակի տուն-թանգարանները, Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ՝ Ջերմուկի պատկերասրահը:

2004-2006թթ. նոր մշտական ցուցադրություններ են կազմակերպվել 11 թանգարանում, ինչը հնարավորություն է ընձեռնել ստեղծել ցուցադրական նոր բաժիններ, հանրության ներկայացնել երբևէ չցուցադրված ավելի քան 4000 թանգարանային առարկա:

Թանգարաններում առավել հաճախակի դարձած ցուցահանդեսների, թանգարանային նորովի միջոցառումների կազմակերպումը նպաստել է թանգարանների նկատմամբ հանրապետության և միջազգային հանրության հետաքրքրության մեծացմանը՝ իր հերթին նպաստելով թանգարանային այցելուների թվաքանակի աճին՝ 2005թ. այցելուների թիվը կազմել է 275031 այցելու, 2004թ. նկատմամբ գերազանցելով 97589-ով:

Թանգարանային հավաքածուների հաշվառման, ավտոմատացման, պահպանվածության ապահովման համար ձեռք են բերվել 304 սարքավորումներ (օդաորակավորիչ սարքեր, համակարգիչներ) :

«Թանգարան անիվների վրա» ծրագիրն իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 1 ավտոմեքենա, ինչը կապահովի հանրապետության հեռավոր և սահմանամերձ բնակչությանը ծանոթացնել թանգարանների հավաքածուներին՝ թանգարանների կողմից ցուցահանդեսները համատեղ կազմակերպելու և ֆինանսական միջոցները կենտրոնացված կարգով օգտագործելու եղանակով:

**Արխիվային գործ**

Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի պահպանությունը իրականացվում է ինչպես պետական մարմինների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատակազմերի արխիվներում, այնպես էլ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ում : 2004թ. ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում է

արխիվային գործի ոլորտի առավել կարևորագույն հիմնախնդիրները, որոնք բացակայում էին նախկին օրենքում:

Մասնավորապես, համաձայն օրենքի, պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են ստեղծել աշխատակազմերի արխիվներ՝ իրենց գործունեության ընթացքում առաջացած արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով : 2005թ. ընթացքում այդպիսի արխիվներ ստեղծվեցին պետական կառավարման մարմինների մեծ մասում : 2006թ. գործընթացը շարունակվում է, հստակեցվում են դրանցում պահպանվող փաստաթղթերի կազմը :

2005թ. ՀՀ արխիվային համակարգը տեղափոխվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության ենթակայության, որը կնպաստի ՀՀ մարզերում և տարածաշրջաններում արխիվային գործի բարելավմանը :

Նույն թվականին արխիվային համակարգի կազմում ընդգրկվեց նաև Ազգային ֆիլմադարանը՝ Հայաստանի ազգային արխիվի մասնաճյուղի կարգավիճակով : Այստեղ պահպանվում է ՀՀ կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուն, որի վիճակը անմխիթար է և անհրաժեշտ է ձեռնարկել հավաքածուի պահպանման վիճակի բարելավման անհապաղ միջոցառումներ :

**Մշակութային արժեքների պահպանություն /արտահանում, ներմուծում/**

«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մեծ ծավալի աշխատանքներ են տարվել մշակութային արժեքների և առարկաների արտահանման և ներմուծման գործընթացները կարգավորող ենթաօրենսդրական ակտերի ստեղծման ուղղությամբ: ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մեկ տասնյակ իրավական ակտեր և կարգեր :

2005 թվականի օգոստոսի 4-ի ՀՀ կառավարության թիվ 1194-Ն որոշմամբ ստեղծվեց «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Կենտրոնի կողմից տրվել է մշակութային արժեքների արտահանման իրավունքի 325 վկայագիր: Թույլատրվել է արտահանել 1144 մշակութային արժեք, գանձվել 1657.7 հազ. դրամ պետական տուրք: Առանց մշակութային արժեքների արտահանման իրավունքի վկայագրի թույլատրվել է արտահանել 4611 մշակութային նշանակության առարկա: Տրվել է մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման 60 վկայագիր, որոնցով արտոնվել է ժամանակավոր արտահանել 238 մշակութային արժեք: Ընդունվել է ժամանակավոր ներմուծման 12 հայտ, որոնցով ձևակերպվել է 427 առարկայի ժամանակավոր ներմուծում: Ձևակերպվել է պետական 2 ցուցահանդեսի ժամանակավոր արտահանում : ՌԴ է տեղափոխվել՝ 58, Կանադա՝ 50 ցուցանմուշ: Հայաստանի Հանրապետության հազվագյուտ լարային նվագարանների պետական հավաքածուից ժամանակավորապես արտահանվել է 19 նվագարան: Հարկադիր կատարման ծառայությունից համապատասխան ստորաբաժանմանն է ներկայացվել բռնագրավված 88 մշակութային արժեք հանդիսացող գրականություն, որոնք մշտական պահպանության են հանձնվել Հայաստանի պատմության թանգարան՝ 38 միավոր, Հայաստանի ազգային գրադարան՝ 47 միավոր, Մատենադարան՝ 3 միավոր:

**Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ)**

Ազգային թատերարվեստի, օպերային և բալետային արվեստի ավանդույթների պահպանումը և զարգացումը իրականացվում է 40 թատերահամերգային կազմակերպությունների միջոցով:

2005թ. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում գործող 17 պետական թատրոններում ցուցադրվել է 1621 ներկայացում՝ 307348 հանդիսատեսով: Համակարգում գործող 17 երաժշտական խմբերը և համերգային կազմակերպությունները կազմակերպել են 240 համերգ՝ 107953 հանդիսատեսով: Պետական աջակցությամբ իրականացվել են՝ միջազգային «ԱՐՄՄՈՆՈ-3», տարածքային «ՏԱՎՈՒՇ-2005», մանկապատանեկան տիկնիկային 1-ին և ասմունքի հանրապետական փառատոները: ՀՀ մարզերում և Երևանում պետական աջակցությամբ բեմադրվել է 10 ներկայացում: Հանրապետության 3 թատրոններ հյուրախաղերով հանդես են եկել արտերկրում : Պետական աջակցությամբ իրականացվել են՝ 3 մրցույթ, 10 համերգ, 3 մրցույթ-փառատոն, բացվել է 4 ցուցահանդես, անցկացվել են 3 մշակութային տարբեր կարգի միջոցառումներ:

Մշակվել է Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջոցառումների համալիր ծրագիր, որի շրջանակում ստեղծվել է ֆիլմի լազերային սկավառակ, կազմակերպվել հոբելյանական երեկույթ և հայ գրքի ցուցահանդես : Էջմիածնում իրագործվել է «Գրոց երթ» թատերականացված ներկայացումը: Իրականացվել են հայ մշակույթի, հասարակական-քաղաքական գործիչների, մշակութային կազմակերպությունների 16 հոբելյաններ:

Ժողովրդական արվեստի ոլորտում իրականացվել են՝ «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ» միջազգային գիտաժողովը, «Պահպանենք մեր մշակույթը» արվեստի և «Եղեգան փող» ժողովրդագուսանական երգի փառատոները:

ՀՀ ԱԳՆ-ի հետ համատեղ նախապատրաստվել և կնքվել են միջկառավարական, միջգերատեսչական երկկողմ 22 միջազգային պայմանագիր: Կայացել են պաշտոնական պատվիրակությունների այցեր Գերմանիա, Ճապոնիա, Թայլանդ, Բելոռուս, Կիպրոս: Կատարվել են մասնագետների, արվեստի գործիչների և խմբերի փոխանակումներ, կազմակերպվել ցուցահանդեսներ ինչպես Հայաստանում /3 երկիր/, այնպես էլ արտերկրում /3 երկիր/: Հայաստանում տեղի են ունեցել ԳԴՀ-ի Սաքսոնիա-Անհալտ երկրամասի, Շարժայի Արաբական էմիրության և Բելոռուսի մշակույթի օրերը: Իրականացվել է Հայաստանում Ռուսաստանի տարվա մշակութային միջոցառումների ծրագիրը: Ապահովվել է Հայաստանի երեխաների մասնակցությունը միջազգային նկարչական մանկապատանեկան մրցույթ-ցուցահանդեսներին /մոտ 200 գործ/, որոնցից 25-ը արժանացել են մրցանակների: Ընդհանուր առմամբ միջազգային մշակութային համագործակցության ծրագրային միջոցառումներին մասնակցել է ավելի քան 1200 մարդ:

ՀՀ ազգային փոքրամասնությունների միությունների հետ համատեղ կազմակերպվել է ՀՀ ազգային փոքրամասնությունների մանկական երաժշտական 2-րդ փառատոնը:

2004-2005թթ. ԱՊՀ մասնակից երկրների 2-րդ /Քիշնև/ և 3-րդ /Կիև/ «Դելփյան խաղերին» պետական աջակցությամբ մասնակցել են 31 պատանիներ ու աղջիկներ, որոնք նվաճել են 4 ոսկե, 5 արծաթե, 6 բրոնզե մեդալ, ինչպես նաև 6- 4-րդ կարգի մրցանակ և դիպլոմ:

Կազմակերպվել է Ա. Սպենդիարյանի անվ. պատանի երաժիշտ կատարողների հանրապետական մանկապատանեկան մրցույթ-փառատոնը: Նախարարության ջանքերով և ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է թվով 6-րդ մշակութային կրթական հաստատությունը՝ «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ը:

**Կինոարվեստ**

Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի՝ որպես տեսալսողական հաղորդակցության տեսակի պահպանմամբ, տարածմամբ և զարգացմամբ, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործմամբ, միջազգային կինոփառատոներին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ:

Հայաստանի Հանրապետությունում կինոարվեստի պահպանման, տարածման և զարգացման կարևոր գործոն է օրենսդրական և իրավական ակտերի մշակումը, «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

2005թ. կազմակերպվել է 2 միջազգային կինոփառատոն, նկարահանվել են՝ 1 լիամետրաժ, 2 խաղարկային, 7 կարճամետրաժ, 3 անիմացիոն, 10 վավերագրական ֆիլմ և 2 կինոհանդես:

**Պատմամշակութային հուշարձանների պահպանություն**

Պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանության բնագավառը ընդգրկում է այդ օբյեկտների պետական հաշվառումը, վկայագրումը, վավերագրումը, դրանց անխաթար պահպանության և նպատակային օգտագործման ապահովումը, հետազոտումը, ամրակայումը, վերականգնումը և գիտատեղեկատու համապարփակ շտեմարանի ստեղծումը:

Հանրապետության տարածքում հաշվառված շուրջ 24.000 հուշարձանները խմբավորված են մոտ 4500 տարածքային պահպանական միավորներում, դրանցից 700-ը հնագույն, հին և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներ, ամրոցներ ու բնակատեղիներ են, 1200-ը՝ վանական համալիրներ, եկեղեցիներ ու տաճարներ: Կան հարյուրավոր դամբարանադաշտեր, պատմական գերեզմանոցներ, տարաբնույթ աշխարհիկ կառույցներ, մեմորիալ և մոնումենտալ արվեստի նմուշներ:

Հուշարձաններն ըստ իրենց պատմամշակութային արժևորման չափանիշների դասակարգված են երկու խմբի՝ հանրապետական և տեղական նշանակության, իսկ ըստ բնույթի տարբերակվում են նաև հնագիտական, պատմական, քաղաքաշինական ու ճարտարապետական և մոնումենտալ արվեստի հուշարձաններ: ՀՀ մարզերի 89 համայնքներում իրականացվել է պատմամշակութային հատուկ պահպանվող հողերի առանձնացում, կազմակերպվել են ուսումնասիրություններ դրանցում առկա հուշարձանների պահպանման, վերականգնման և տեխնիկական վիճակի վերաբերյալ: Կնքվել են մեկ աղբյուրից գնման կապալի 7 պայմանագիր՝ 4 մարզերի եկեղեցիների վերականգնման նպատակով:

Շարունակվել են ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի, Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի նախարարությունների միջև կնքված համագործակցության աշխատանքները: Այդ իմաստով Նախարարությունը համագործակցել է նաև Եվրոպայի Խորհրդի, նրա մշակույթի և մշակութային ու բնական ժառանգության դիրեկտորատի, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների հետ:

1998թ.-ից սկսած ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության ցանկերում» հանրապետությունից ընդգրկվել են Հաղպատի և Սանահինի վանական համալիրները, Գեղարդի վանքը և Ազատ գետի հովիտը, Էջմիածնի եկեղեցիներն ու Զվարթնոց հնագիտական վայրը: Վերոհիշյալ ցանկի համալրման նպատակով առաջարկվել է Գնիշիկաձորի մշակութային լանդշաֆտը:

Հաստատվել են Արարատի, Արագածոտնի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի հուշարձանների պետական ցուցակները: Սահմանված կարգով պեղումներ

են կատարվել վտանգված երկու հուշարձանների՝ Ներքին Նավերի և Շենգավիթ քաղաքատեղիի տարածքներում:

**Հրատարակչական գործ**

Հրատարակչական ոլորտը մեծ դեր ունի պետության և հասարակության առաջընթացի, ազգային հոգեմտավոր արժեքների ստեղծման, պահպանման և տարածման, համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի ինտեգրման գործընթացում: Գրահրատարակչությունը ազատ գործունեության ոլորտ է, որով զբաղվում են 228 ընկերություններ և շուրջ 50 պոլիգրաֆիական ձեռնարկություններ: 2000-2005թթ. գրքաշուկան արձանագրել է վերելքի միտումներ: 2004թ. հրատարակվել է 1078 անուն գիրք: Թեմատիկայի լուծումների իմաստով ոլորտում առկա են զարգացումներ, իսկ գրքի տպաքանակի, ինքնարժեքի, տարածման, քարոզչության մակարդակները բավարար չեն: Գրավաճառ ցանցի բացակայության հետևանքով ցածր է գրքի գնողականությունը: 2005 թվականին պետական պատվերով հրատարակվել է ըստ ծրագրերի՝

| Անվանումը | տպաքանակ /օրինակ/ | անուն գիրք |
|---|---|---|
| Մանկական գրականություն | 3200 | 6 |
| Հանրագիտարանային գրականություն | 3500 | 2 |
| Գիտահանրամատչելի գրականություն | 1900 | 3 |
| Այլ գրականություն | 20000 | 40 |
| Թարգմանական գրականություն | 1000 | 2 |
| Հոբելյանական գրականություն | 2200 | 5 |

2005թ. պետական աջակցությամբ՝ հայոց ցեղասպանության 90-ամյակին և Մեսրոպյան գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված, հրատարակվել է 27 անուն գիրք 17500 տպաքանակով, 7 անուն ազգային փոքրամասնության թերթեր, 36 անուն գրական-մշակութային, գիտական և այլ մամուլ, 24 անուն մարզային և հայրենակցական միությունների թերթեր, հրատարակվել է «Գրաշխարհ» ամսաթերթը:

**Երիտասարդության հարցեր**

Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականությունը, որ պետության կարևորագույն գործառույթներից է, ունի ռազմավարական նշանակություն: Այն կոչված է ստեղծելու ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից, հայրենիքի և ժողովրդի նկատմամբ պատասխանատվության խոր գիտակցում ունեցող երիտասարդ սերնդի համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման իրավական, տնտեսական և կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 11-ի թիվ 520 որոշմամբ ստեղծվել է «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամը, որի նպատակն է հանրապետության, Սփյուռքի և արտասահմանի երիտասարդության համագործակցության զարգացումը, համատեղ ծրագրերի մշակումը և իրականացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի թիվ 418 որոշմամբ ստեղծվել է «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: 2005թ.իրականացվել է 67 միջոցառում, որոնք ուղղված են եղել «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգում» ամրագրված դրույթներին համապատասխան՝ պետական երիտասարդական քաղաքականության իրականացմանը:

Շարունակվել է «Հայացք» երիտասարդական թերթի տպագրությունը: Կազմակերպվել և իրականացվել են հերթական «Բազե» համահայկական փառատոնը, «Երիտասարդություն. իրականություն, հեռանկարներ» հանրապետական երիտասարդական համաժողովը: Նախարարությունը համագործակցել է երիտասարդական միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Եվրախորհրդի երիտասարդական տնօրինության հետ: Եվրախորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեի (CDEJ) անդամների համար ՀՀ-ում կազմակերպվել է «Ամառային համալսարան» հավաքը:

## 10.1.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 10.1.2.1. Նպատակները

Մշակույթի ոլորտի 2007-2009 թվականների միջնաժամկետ ծրագիրը միտված է ապահովելու մշակույթի տարբեր բնագավառներում հետևյալ նպատակների իրականացումը:

**Գրադարաններ**

Գրադարանները ապահովում են ՀՀ գրադարանային հավաքածուներում ընդգրկված հայկական գրավոր մշակույթի և տեղեկատվական պաշարների պահպանությունը, հանրության կողմից դրանց լիարժեք օգտագործումը՝ նպաստելով աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կրթական նպատակների իրագործմանը՝ բնակչության կրթական մակարդակի բարձրացման, հանրապետության գիտական, տեխնիկական և մշակութային ներուժի զարգացման ուղղությամբ:

Հիմնական նպատակներն են՝

- ՀՀ գրադարանային հավաքածուներում ընդգրկված ավելի քան 11,8 միլիոն գրականության, այդ թվում ավելի քան 7000 հնատիպ գրքերի պահպանվածության ապահովումը.
- գրադարանային հավաքածուների համալրումը՝ ժամանակակից ընթերցողական պահանջարկին համապատասխան տեղեկատվության նյութական կրիչներով՝ տարեկան 16000 միավոր.
- գրադարանների հավաքածուների մատչելիության ապահովումը՝ գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների իրականացումը տարեկան ավելացնելով սպասարկվող միավորների ծավալը՝ տպագիրը՝ 100000-ով, էլեկտրոնայինը՝ 2000 –ով.
- տպագիր նյութերի ազգային անձեռնմխելի ֆոնդերի համալրումը և պահպանությունը,
- ազգային մատենագիտության ստեղծումը.
- միջազգային համագործակցությունը գրադարանային գործի ոլորտում:

**Թանգարաններ**

Թանգարանները ապահովում են ՀՀ մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս հանդիսացող թանգարանային հավաքածուների անխաթար պահպանումն ու փոխանցումը սերունդներին, դրանք հանրությանը պատշաճ մակարդակով ներկայացնելը, ինչը նպաստում է հանրապետությունում մշակութային զբոսաշրջության խթանմանը և աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանը՝ կարևոր ազդակ հանդիսանալով հանրապետության տնտեսական զարգացման գործում:

Հիմնական նպատակներն են՝

- ավելի քան 2 միլիոն թանգարանային առարկաների պահպանության ապահովումը.
- մշտական ցուցադրությունների ու ցուցահանդեսների միջոցով տարեկան շուրջ 4000-ով ֆոնդապահոցներում պահվող ցուցանմուշների շրջանառության ավելացումը,
- թանգարանային այցելուների թվաքանակի աճի ապահովումը ՝ տարեկան 3000 մարդ:

**Արխիվային գործ**

- Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի, այդ թվում կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթերի հավաքածուի պահպանվածության և մատչելիության ապահովումը ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման միջոցով,
- պետությանը և ՀՀ քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովումը,
- արխիվային հավաքածուի համալրումը տարեկան 40000 գործով, այդ թվում՝ հայ նշանավոր հասարակական գործիչների անձնական ծագման փաստաթղթերով,
- Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի երաշխավորված պահպանության ապահովման նպատակով՝ տարեկան 78600 արխիվային գործի ախտահանումը և վերականգնումը,
- պետական հաշվառման ավտոմատացման միասնական համակարգի ներդրումը,
- տեղեկատվական և որոնողական համակարգի ավտոմատացման և օգտագործման էլեկտրոնային շտեմարանի ստեղծումը :

**Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ)**

- Արվեստի տարբեր ճյուղերի պահպանումը, զարգացումը և տարածումը,
- արվեստի զարգացման չափանիշի հասարակական գիտակցումը,
- նոր գաղափարների և արժեքների որոնումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը,
- հայ դասական և ժամանակակից ստեղծագործությունների տարածման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- ազգային բանահյուսության, ազգագրության զարգացումն ու պրոպագանդումը,
- քաղաքացիական հասարակության ձևավորումը /ներառյալ՝ պատմական գիտակցության, լեզվի, գեղագիտության, սիրո, բարու, հայրենասիրության/:

**Կինեմատոգրաֆիա**

- Կինոարվեստի ավանդույթների պահպանումը, զարգացումն ու տարածումը,
- երկրի համար հասարակական-քաղաքական, մշակութային ու գեղարվեստական նշանակությամբ հատուկ կարևորություն ունեցող ազգային կինոնկարների ստեղծումը,

ինչպես նաև մանուկների և պատանիների համար հայկական կինոնկարների, կինոնկար-դեբյուտների, անիմացիոն կինոնկարների ստեղծումը,

- կինոնախագծերը մրցութային հիմունքներով ընտրելու համար հավասար պայմանների ստեղծումը,
- միջազգային չափորոշիչներին համապատասխան հայրենական խաղարկային, անիմացիոն, վավերագրական կինոարտադրության պայմանների ստեղծումը,
- հայրենական կինոնկարների տարածումը և պահպանումը,
- միջազգային կինոփառատոններին և միջազգային այլ կինոմիջոցառումներին մասնակցության ապահովումը:

**Մշակութային արժեքների պահպանություն /արտահանում, ներմուծում/**

- Հայաստանի Հանրապետության պատմամշակութային շարժական ժառանգության տեղեկատվական համակարգի ստեղծումը,
- Հայաստանի Հանրապետության պատմամշակութային շարժական ժառանգության պահպանությունն ապահովող իրավական դաշտի կարգավորումը,
- պատմամշակութային շարժական արժեքների հետազոտմանն անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- մշակութային արժեքների ապօրինի արտահանման ու ներմուծման կանխումը:

**Պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանություն**

- Հայաստանի Հանրապետության պատմամշակութային հուշարձանների պահպանությունը, դրանց փրկումը քայքայումից, փլուզումից և առհավետ ոչնչացումից, ու այն հետագա սերունդներին փոխանցումը,
- պետական սեփականություն համարվող և այլ օգտագործողներին չհանձնված հուշարձանների՝ հին և միջնադարյան բնակատեղիների, դամբարանադաշտերի, ամրոցների և մեծ չափով ավերված տարաբնույթ հուշարձանների հետազոտումը, ամրակայումը, բարեկարգումը, վերականգնումը և թանգարանացումը, ինչպես նաև պատմության, ճարտարապետության և արվեստի եզակի ու բարձրարժեք հուշարձանների պահպանությունը,
- Հանրապետությունում զբոսաշրջության արդյունքների և դրա հեռանկարային զարգացման նպաստումը:

**Հրատարակչական գործ**

- Գրահրատարակչական արտադրանքի տեսքով ազգաբնակչությանը ազգային և համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատչելիության ապահովումը,
- ազգային հոգևոր և մշակութային արժեք ներկայացնող հրատարակչական արտադրանքի նպատակային հրատարակման և տարածման ապահովումը,
- պետության քաղաքականությունը՝ տպագիր արտադրանքի տեսքով մասսայականացնելու և լուսաբանելու նպատակով պետության ներկայացուցչական կարիքների բավարարման ապահովումը,
- պետության առաջնահերթությունների մեջ մանկապատանեկան գրականության հրատարակման ապահովումը՝ որպես ապագա քաղաքացիական հասարակության ձևավորման հիմք,

- Համահայկական գրահրատարակչական դաշտի ձևավորումը, սփյուռքի հետ ակտիվ համագործակցության քաղաքականության իրականացումը. հայ գրքի ցուցահանդեսների, ցուցահանդես-տոնավաճառների կազմակերպումը Հայաստանում և սփյուռքի հայաշատ վայրերում, լիարժեք մատենագիտության ստեղծումը,
- Հայաստանի Հանրապետությունում հրատարակված գրքերի նպատակային տարածմանը և արտերկրներում հայկական գրքարվեստի քարոզչությանը, գրահրատարակչական միջազգային համագործակցության նպաստումը:
- այլ երկրների գրահրատարակչական արտադրանքը Հայաստան ներմուծելու և գրափոխանակության գործընթացների խթանումը:

**Երիտասարդական հարցեր**

Երիտասարդական պետական քաղաքականության գլխավոր նպատակն է՝ ստեղծել սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժը ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության նպատակն է՝ բարելավել երիտասարդների կենսապայմանները, կազմակերպել նրանց հանգիստը և բարձրացնել նրանց մասնակցության աստիճանը հասարակական, քաղաքական զարգացումներին: Այն ներառում է երիտասարդներին առնչվող հասարակական-քաղաքական, սոցիալական և մշակութային խնդիրներ:

Հիմնական նպատակներն են՝

- երիտասարդների մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին խթանելը (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում),
- Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարմանը և երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակի նվազեցման նպաստումը,
- հոգեպես և ֆիզիկապես առողջ երիտասարդություն ունենալը,
- երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և հասարակության՝ երիտասարդների մասին գիտելիքների մակարդակի բարձրացումը:

**10.1.2.2. Գերակայությունները**

**Մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են.**

- պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանություն, ամրակայում, նորոգում, վերականգնում, բարեկարգում,
- թատերա-համերգային կազմակերպությունների ստեղծագործական գործունեության աջակցումն ու խթանումը սոցիալ-ստեղծագործական պատվերների իրականացման, բեմական լուսա-ձայնային սարքավորումների, ջեռուցման համակարգերի ներդրման և շահագործման ապահովման միջոցով,
- հայաստանյան գրադարանների հավաքածուների միացյալ ավտոմատացված ցանցի ստեղծման շարունակական գործընթացի ապահովում,
- նոր ցուցադրությունների ստեղծում,

- մշակութային ժառանգության՝ գրադարանային, թանգարանային, արխիվային, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուների պահպանվածության և մատչելիության ապահովում՝ ավտոմատացված համակարգի ստեղծման միջոցով:

Մշակույթի ոլորտի 2006-2008թթ և 2007-2009թթ միջնաժամկետ ծրագրերով նախատեսված հատկացումները ներկայացված են Աղյուսակ 10.1.-ում:

**Աղյուսակ 10.1. Մշակույթի ոլորտի 2006-2008թթ և 2007-2009թթ ՄԺԾԾ նախատեսված հատկացումները ըստ ենթախմբերի (մլն դրամ)**

| Խումբ, ենթա-խումբ | Ծախսերի գործառնական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2006-2008թթ ՄԺԾԾ | ՀՀ հաստատ-ված բյուջեի | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ |
| 07.01. | Պետական կառավարում | 236.2 | 247.5 | 278.6 | 264.4 | 324.8 | 273.2 | 305.7 |
| 07.02. | Գրադարաններ | 727.3 | 757.3 | 741.3 | 892.1 | 767.6 | 920.6 | 1054.2 |
| 07.03. | Թանգարաններ և ցուցա-հանդեսներ | 1569.6 | 1880.6 | 1990.6 | 2341.1 | 2025.4 | 1231.7 | 2232.4 |
| 07.04. | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 18.0 | 18.9 | 19.1 | 22.8 | 18.6 | 22.4 | 22.5 |
| 07.05. | Այլ մշակութային հիմ-նարկներ | 384.7 | 606.0 | 418.6 | 512.3 | 417.1 | 512.3 | 520.9 |
| 07.06. | Արվեստ | 2193.6 | 2989.7 | 1833.3 | 3098.5 | 1870.5 | 2546.8 | 2600.2 |
| 07.07. | Կինեմատոգրաֆիա | 482.9 | 482.9 | 482.9 | 554.0 | 482.9 | 584.1 | 554.6 |
| 07.08. | Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահ-պանում | 760.9 | 782.2 | 905.9 | 915.6 | 960.9 | 255.5 | 921.5 |
| 07.11. | Հրատարակչու-թյուններ, խմբագրություններ | 525.8 | 621.5 | 523.9 | 681.9 | 523.9 | 696.7 | 653.4 |
| 07.12. | Տեղեկատվության ծեռքբերում | 53.9 | 55.8 | 53.9 | 55.9 | 53.9 | 55.9 | 55.9 |
| 07.14. | Երիտասարդական ծրագրեր | 286.2 | 316.2 | 286.2 | 342.8 | 286.2 | 342.8 | 342.8 |
| 07.15. | Քաղաքական կուսակցու-թյուններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ | 130.2 | 180.2 | 130.2 | 180.2 | 130.2 | 180.2 | 180.2 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 7369.5 | 8938.8 | 7664.6 | 9861.9 | 7862.0 | 7622.3 | 9444.4 |

2007-2009 թվականների ՄԺԾԾ ծախսերը 2006-2008 թվականների ՄԺԾԾ-ի նկատմամբ 2007թ. աճել են 2197.3 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված պարտադիր սոցիալական վճարների բազային դրույքաչափերի ավելացմամբ, ինչպես նաև աշխատավարձի ֆոնդի աճով, նոր նախաձեռնությունների ընդգրկմամբ, ծառայությունների սակագների աճով, 2008թ.՝ նվազել են 239.7

մլն.դրամով, հիմնականում պայմանավորված հուշարձանների և մշակութային օբյեկտների վերականգնման ծախսերի նվազմամբ:

### 10.1.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

- Քաղծառայողների աշխատավարձի հաշվարկման բազային պաշտոնային դրույքաչափի բարձրացումը, ինչպես նաև բնականոն աճը,
- ՀՀ կառավարության ընդունած ԱՅՌԾ-ում ամրագրված ընդհանուր սոցիալական խնդիրներին ու նպատակներին համահունչ մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացումը 2007թ.՝ 20% -ով,
- ծառայությունների սակագների աճը,
- նվազագույն աշխատավարձի բարձրացումը՝ յուրաքանչյուր տարի 5000 դրամի չափով,
- մշակութային օբյեկտների հիմնանորոգման և հուշարձանների վերականգնման համալիր ծրագրի իրականացումը,
- մշակութային ծառայություններից օգտվող շահառուների թվի աճի հետ կապված՝ ծառայությունների ֆինանսավորման ընդլայնումը,
- մշակույթի ոլորտում նոր նախաձեռնությունների նախատեսումը (Աղյուսակ 10.2),
- մշակույթի ոլորտի նյութատեխնիկական բազայի համալրումը:

**Աղյուսակ 10.2. Մշակույթի ոլորտի պետական ծախսերը 2007-2009 թվականներին՝ ըստ գոյություն ունեցող և նոր նախաձեռնությունների**

**(մլն դրամ)**

| Ցուցանիշը | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|
| Գոյություն ունեցող պարտավորությունների ընդհանուր ծախսերը | 9177.5 | 7206.2 | 8905.1 |
| Նոր նախաձեռնությունների ընդհանուր ծախսերը | 684.4 | 416.2 | 539.3 |
| %-ով ոլորտի նկատմամբ | 6.9 | 5.5 | 5.7 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 9861.9 | 7622.3 | 9444.4 |

### 10.1.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2007-2009 թվականներին մշակույթի ոլորտի միջնաժամկետ ծրագրով՝ մշակույթի պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ՝ ըստ ստորև ներկայացված գծանկարի:

**Գծանկար 10.1. Մշակույթի ոլորտի պետական ծախսերի մակարդակը (%՝ ՀՆԱ-ի նկատմամբ)**




2007-2009 թթ. մշակույթի ոլորտի միջնաժամկետ ծրագրով՝ մշակույթի պետական ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի մեջ ունի հետևյալ պատկերը.

**<u>Գծանկար 10.2.</u> Պետական բյուջեի ծախսերը մշակույթի բնագավառում (%՝ բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ)**




2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտի ծախսերը (ներառյալ կառավարման ապարատի և կապիտալ շինարարության ծախսերը) նախորդ տարիների նկատմամբ 2007 թվականին կավելանան 10.3 %-ով և կկազմեն 9861.9 մլն դրամ, 2008 թվականին՝ կնվազեն 22.7 %-ով, որը պայմանավորված է հիմնականում կապիտալ շինարարության ծախսերի կրճատմամբ և կկազմեն 7622.3 մլն դրամ, 2009 թվականին՝ կավելանան 23.9%-ով և կկազմեն 9444.4 մլն դրամ:

**<u>Աղյուսակ 10.3</u>. Մշակույթի ոլորտի պետական ծախսերը 2007-2009 թվականներին՝ ըստ ուղղությունների (մլն դրամ)**

| Խումբ,ենթ ախումբ | Ենթախմբերի անվանումները | Փաստացի | Հաստատված բյուջե | 2007-2009թթ. ՄԺԾԾ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2005թ. | 2006թ. | 2007թ. | 2008թ. | 2009թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 07 | **Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը, այդ թվում** | **5 958.0** | **8 938.7** | **9 861.9** | **7 622.3** | **9 444.4** |
| 07.01. | Պետական կառավարում | 161.8 | 247.5 | 264.4 | 273.2 | 305.7 |
| 07.02. | Գրադարաններ | 601.3 | 757.3 | 892.1 | 920.6 | 1 054.2 |
| 07.03. | Թանգարաններ և ցուցահանդեսներ | 1 135.3 | 1 880.6 | 2 341.1 | 1 231.7 | 2 232.4 |
| 07.04. | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 96.8 | 18.9 | 22.8 | 22.4 | 22.5 |
| 07.05. | Այլ մշակութային հիմնարկներ | 300.4 | 606.0 | 512.3 | 512.3 | 520.9 |
| 07.06. | Արվեստ | 1 677.1 | 2 989.7 | 3098.5 | 2 546.8 | 2 600.2 |
| 07.07. | Կինեմատոգրաֆիա | 447.6 | 482.9 | 554.0 | 584.1 | 554.6 |
| 07.08. | Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում | 527.3 | 782.2 | 915.6 | 255.5 | 921.5 |
| 07.11. | Հրատարակչություններ, խմբագրություններ | 500.7 | 621.5 | 681.9 | 696.7 | 653.4 |
| 07.12. | Տեղեկատվության ձեռք-բերում | 52.3 | 55.8 | 55.9 | 55.9 | 55.9 |
| 07.14. | Երիտասարդական ծրագրեր | 279.6 | 316.2 | 342.8 | 342.8 | 342.8 |
| 07.15. | Քաղաքական կուսակցություն-ներ, հասարակական կազմա-կերպություններ, արհմիություն-ներ | 177.8 | 180.2 | 180.2 | 180.2 | 180.2 |
| | *փոփոխություն նախորդ տարվա նկատմամբ, տոկոս* | | | | | |
| 07 | Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը, այդ թվում | | **50.0** | **10.3** | **-22.7** | **23.9** |
| 07.01. | Պետական կառավարում | | 53.0 | 6.9 | 3.3 | 11.9 |
| 07.02. | Գրադարաններ | | 25.9 | 17.8 | 3.2 | 14.5 |
| 07.03. | Թանգարաններ և ցուցահանդեսներ | | 65.7 | 24.5 | -47.4 | 81.2 |
| 07.04. | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | | -80.5 | 20.8 | -1.7 | 0.2 |
| 07.05. | Այլ մշակութային հիմնարկներ | | 101.7 | -15.5 | 0.0 | 1.7 |
| 07.06. | Արվեստ | | 78.3 | 3.6 | -17.8 | 2.1 |
| 07.07. | Կինեմատոգրաֆիա | | 7.9 | 14.7 | 5.4 | -5.1 |
| 07.08. | Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում | | 48.3 | 17.1 | -72.1 | 260.7 |
| 07.11. | Հրատարակչություններ, խմբագրություններ | | 24.1 | 9.7 | 2.2 | -6.2 |
| 07.12. | Տեղեկատվության ձեռք-բերում | | 6.6 | 0.3 | 0.0 | 0.0 |
| 07.14. | Երիտասարդական ծրագրեր | | 13.1 | 8.4 | 0.0 | 0.0 |
| 07.15. | Քաղաքական կուսակցություն-ներ, հասարակական կազմա-կերպություններ, արհմիություն-ներ | | 1.4 | 0.0 | 0.0 | 0.0 |

Ընդհանուր առմամբ, 2007-2009 թվականներին մշակույթի ոլորտին ուղղվող ծախսերի աճը կկազմի 505.6 մլն դրամ, այդ թվում՝ կառավարման ապարատի գծով՝ 58.2 մլն դրամ, գրադարանների գծով՝ 296.9 մլն դրամ, թանգարանների գծով՝ 188.1 մլն դրամ, կինեմատոգրաֆիայի գծով՝ 71.7 մլն դրամ, հրատարակությունների գծով՝ 32.0 մլն դրամ, մշակութային օբյեկտների հիմնանորոգման և հուշարձանների վերականգնման գծով՝ 325.8 մլն դրամ: Միաժամանակ, որոշ ծրագրերի ավարտման հետևանքով նվազել են ծախսերը արվեստի և այլ մշակութային հիմնարկների գծով 474.6 մլն

դրամով:

Ստորև ներկայացված են մշակույթի ոլորտի ծախսերի բաշխումը ըստ ենթախմբերի :

**Գծանկար 10.3. 2007 թվականի մշակույթի ոլորտում ծախսերի կառուցվածքը` ըստ ենթախմբերի (%)**




2007-2009 թվականների մշակութային և երիտասարդական ծրագրերի իրականացման հետ կապված ընթացիկ ծախսերի կառուցվածքում գերակշռող մասը կազմում է աշխատավարձը` համապատասխանաբար` 51.1%, 54.7 % և 56.0 %:

Մշակույթի ծախսերի տարանջատումը` ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի, ունի հետևյալ պատկերը.

**Գծանկար 10.4. Մշակույթի ոլորտում պետական ծախսերի կառուցվածքը` ըստ տնտեսագիտական նշանակության (%` ոլորտի պետական ընդհանուր ծախսերի նկատմամբ)**




### 10.1.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Մշակույթի ոլորտում, պետական բյուջեից ստացված հատկացումների հետ մեկտեղ, ծախսերի իրականացմանն են ուղղվում նաև սեփական եկամուտները:

Սեփական եկամուտները գոյանում են հիմնականում վճարովի ծառայությունների մատուցումից, տոմսերի վաճառքից, կինոնկարների իրացումից:

Վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն ուղղվում են աշխատավարձի լրավճարներին, ապրանքների ձեռքբերմանը, կոմունալ ծառայությունների ծախսերի իրականացմանը, գրքային և թանգարանային հավաքածուների համալրմանը :

Ստորև ներկայացված է ՀՀ պետական բյուջեից և սեփական եկամուտների հաշվին իրականացվող և կանխատեսվող ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ծախսերը :

**<u>Աղյուսակ 10.4.</u> Ըստ առանձին ծրագրերի՝ ՀՀ պետական բյուջեից և վճարովի ծառայությունների մատուցումից իրականացվող և կանխատեսվող ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ծախսերը (մլն դրամ)**

| Ենթախմբերի անվանումները | 2005թ. | | 2006թ | | 2007թ | | 2008թ | | 2009թ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | բյուջեի միջոցներով | սեփական եկամուտների հաշվին | բյուջեի միջոցներով | սեփական եկամուտների հաշվին | բյուջեի միջոցներով | սեփական եկամուտների հաշվին | բյուջեի միջոցներով | սեփական եկամուտների հաշվին | բյուջեի միջոցներով | սեփական եկամուտների հաշվին |
| | փաստացի | | ծրագիր | | կանխատեսում | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 889.5 | 121.0 | 4049.5 | 748.9 | 4096.0 | 795.5 | 3929.2 | 831.9 | 4117.7 | 883.9 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | *88.0* | *12.0* | *84.4* | *15.6* | *83.7* | *16.3* | *82.5* | *17.5* | *82.3* | *17.7* |
| 07.02.01. Պետական աջակցություն գրադարաններին- ՀՀ ՄԵՀՆ | | | 510.0 | 25.0 | 586.5 | 25.0 | 589.5 | 25.0 | 695.4 | 25.0 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | | | *95.3* | *4.7* | *95.9* | *4.1* | *95.9* | *4.1* | *96.5* | *3.5* |
| 07.02.02. Պետական աջակցություն Հայաստանի ազգային պալատին- ՀՀ ՄԵՀՆ | 29.8 | 3.4 | 35.2 | 3.4 | 44.6 | 3.5 | 43.1 | 3.5 | 69.9 | 3.6 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | *89.8* | *10.2* | *91.2* | *8.8* | *92.8* | *7.2* | *92.5* | *7.5* | *95.1* | *4.9* |
| 07.03.01. Պետական աջակցություն թանգարաններին- ՀՀ ՄԵՀՆ | | | 754.7 | 72.0 | 905.7 | 75.0 | 892.0 | 77.0 | 888.8 | 80.0 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | | | *91.3* | *8.7* | *92.4* | *7.6* | *92.1* | *7.9* | *91.7* | *8.3* |
| 07.05. 01.Պետական աջակցություն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին- ՀՀ ՏԿՆ | 158.4 | 21.4 | 211.4 | 29.4 | 264.4 | 32.4 | 263.7 | 35.6 | 271.8 | 35.6 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | *88.1* | *11.9* | *87.8* | *12.2* | *89.1* | *10.9* | *88.1* | *11.9* | *88.4* | *11.6* |
| 07.06. 01.Պետական աջակցություն «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին-ՀՀ ՄԵՀՆ | | | 644.2 | 116.4 | 646.2 | 145.4 | 648.3 | 158.8 | 658.7 | 189.3 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | | | *84.7* | *15.3* | *81.6* | *18.4* | *80.3* | *19.7* | *77.7* | *22.3* |
| *07.06.02.Պետական աջակցություն «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին-ՀՀ ՄԵՀՆ* | | | *140.8* | *49.0* | *170.1* | *52.0* | *171.0* | *55.5* | *175.0* | *58.5* |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | | | *74.2* | *25.8* | *76.6* | *23.4* | *75.5* | *24.5* | *74.9* | *25.1* |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *07.06.03.Պետական աջակցություն այլ թատրոններին և համերգային կազմակերպու-թյուններին-ՀՀ ՄԵՀՆ* | | | *919.6* | *367.1* | *1176.9* | *382.0* | *1038.1* | *394.0* | *1065.6* | *404.3* |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | | | *71.5* | *28.5* | *75.5* | *24.5* | *72.5* | *27.5* | *72.5* | *27.5* |
| *07.06.03.Պետական աջակցություն այլ թատրոններին և համերգային կազմակերպու-թյուններին-այլ ՊԿՄ-ներ* | *163.6* | *81.8* | *232.6* | *79.0* | *301.6* | *80.2* | *283.5* | *82.5* | *292.5* | *87.6* |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | *66.7* | *33.3* | *74.6* | *25.4* | *79.0* | *21.0* | *77.5* | *22.5* | *77.0* | *23.0* |
| 07.07.01.Պետական աջակցություն կինոնկարների արտադրությանը | 268.9 | 7.2 | 300.5 | 3.8 | | | | | | |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %* | *97.4* | *2.6* | *98.8* | *1.2* | | | | | | |

2005-2009թթ մշակույթի ոլորտի բյուջետային հատկացումները՝ ըստ առանձին ենթախմբերի և ընթացիկ ու կապիտալ ծախսերի ներկայացված են Աղյուսակ 10.5-ում:

**<u>Աղյուսակ 10.5.</u> Մշակույթի ոլորտի բյուջետային հատկացումները 2005-2009 թթ՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ենթախմբերի, ըստ կատարող պետական մարմինների և ընթացիկ ու կապիտալ ծախսերի (մլն դրամ)**

| Ենթախումբ | Ենթախմբերի անվանումները | Փաստացի | Հաստատված բյուջե | 2007-2009թթ. ՄԺԾԾ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2005թ. | 2006թ. | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
| 07 | **ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում** | 5 958.0 | 8 938.7 | 9 861.9 | 7 622.3 | 9 444.4 |
| | ***- ընթացիկ ծախսեր*** | *4 903.3* | *6 868.5* | *7 428.8* | *7 016.7* | *7 110.0* |
| | ***- կապիտալ ծախսեր*** | *1 054.6* | *2 070.2* | *2 433.1* | *605.6* | *2 334.3* |
| 07.01. | Պետական կառավարում, այդ թվում | 161.8 | 247.5 | 264.4 | 273.2 | 305.7 |
| | - ընթացիկ ծախսեր | 159.5 | 229.6 | 264.4 | 273.2 | 305.7 |
| | - կապիտալ ծախսեր | 2.2 | 17.9 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.02. | Գրադարաններ, այդ թվում | 601.3 | 757.3 | 892.1 | 920.6 | 1 054.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *584.7* | *732.5* | *851.7* | *855.6* | *895.2* |
| | *- կապիտալ ծախսեր* | *16.6* | *24.8* | *40.4* | *65.0* | *159.0* |
| 07.02.01. | Պետական աջակցություն գրադարաններին | 553.6 | 697.3 | 815.7 | 820.8 | 826.1 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *553.6* | *697.3* | *801.7* | *805.8* | *826.1* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *14.0* | *15.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասար-դության հարցերի նախարա-րություն | 401.3 | 510.0 | 586.5 | 589.5 | 604.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *401.3* | *510.0* | *586.5* | *589.5* | *604.9* |
| | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն | 83.4 | 103.3 | 117.8 | 118.4 | 121.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *83.4* | *103.3* | *117.8* | *118.4* | *121.0* |
| | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 68.9 | 84.0 | 111.5 | 112.9 | 100.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *68.9* | *84.0* | *97.5* | *97.9* | *100.3* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *14.0* | *15.0* | *0.0* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 07.02.02. | Պետական աջակցություն Հայաստանի ազգային գրապալատին | 29.8 | 35.2 | 40.7 | 40.8 | 41.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *29.8* | *35.2* | *40.7* | *40.8* | *41.7* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի, երիտասարդու-թյան հարցերի և սպորտի նախարարություն | 29.8 | 35.2 | 40.7 | 40.8 | 41.7 |
| 07.02.03. | Կենտրոնացված կարգով Հա-յաստանի ազգային գրապալատի և գրադարանների համար սարքերի, սարքավորումների ձեռքբերման գծով պետական պատվեր | 17.9 | 24.8 | 24.8 | 50.0 | 50.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *1.3* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *16.6* | *24.8* | *24.8* | *50.0* | *50.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 17.9 | 24.8 | 24.8 | 50.0 | 50.0 |
| | Նոր նախաձեռնություններ, այդ թվում | 0.0 | 0.0 | 10.9 | 9.0 | 136.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *9.3* | *9.0* | *27.4* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *1.6* | *0.0* | *109.0* |
| | 1.13 գրադարանների ընթերցա-սրահների կահավորում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 90.5 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *90.5* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 90.5 |
| | 2. Հայկական տառատեսակների պահպանման, ներդրման և կիրառման ծրագիր | 0.0 | 0.0 | 3.9 | 2.3 | 2.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *2.3* | *2.3* | *2.3* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *1.6* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 3.9 | 2.3 | 2.3 |
| | 3. Ազգային մատենագիտության ամսագրային և լրագրային հա-յագիտական հոդվածների մատենագիտական էլեկտրոնային շտեմարանի ստեղծման և համալրման ծրագիր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 25.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *17.9* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *8.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 25.9 |
| | 4.Հանրապետական գիտատեխ-նիկական գրադարանի ընթեր-ցասրահների կահավորում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 3.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *3.3* |
| | ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 3.3 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 5. ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի տեղեկատու-մատենագիտական ծառայության ավտոմատացում | 0.0 | 0.0 | 3.0 | 4.0 | 5.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *3.0* | *4.0* | *5.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 0.0 | 0.0 | 3.0 | 4.0 | 5.0 |
| | 6. ՀՀ մշակութային ժառանգության մաս կազմող գրքային հավաքածուների պահպանում | 0.0 | 0.0 | 4.0 | 2.7 | 2.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *4.0* | *2.7* | *2.2* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 0.0 | 0.0 | 4.0 | 2.7 | 2.2 |
| | 7. ՀՀ ԳԱԱ գրադարանների ընթերցասրահների կահավորում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 7.1 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *7.1* |
| | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 7.1 |
| 07.03. | Թանգարաններ և ցուցահանդեսներ, այդ թվում | 1 135.3 | 1 880.6 | 2 341.1 | 1 231.7 | 2 232.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *777.3* | *1 001.6* | *1 259.7* | *1 180.6* | *1 202.4* |
| | *- կապիտալ ծախսեր* | *358.0* | *879.1* | *1 081.4* | *51.1* | *1 030.0* |
| 07.03.01. | Պետական աջակցություն թանգարաններին | 803.4 | 1 001.6 | 1 159.3 | 1 170.4 | 1 189.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *775.7* | *1 001.6* | *1 159.2* | *1 164.3* | *1 189.7* |
| | *- կապիտալ ծախսեր* | *27.7* | *0.0* | *0.1* | *6.1* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 608.0 | 754.7 | 867.4 | 877.0 | 888.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *580.3* | *754.7* | *867.3* | *870.9* | *888.8* |
| | *- կապիտալ ծախսեր* | *27.7* | *0.0* | *0.1* | *6.1* | *0.0* |
| | ՀՀ պաշտպանության նախարարություն | 56.4 | 69.3 | 85.4 | 85.7 | 87.6 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *56.4* | *69.3* | *85.4* | *85.7* | *87.6* |
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 17.0 | 22.9 | 26.7 | 26.8 | 27.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *17.0* | *22.9* | *26.7* | *26.8* | *27.4* |
| | ՀՀ բնապահպանության նախարարություն | 14.8 | 18.5 | 21.6 | 21.7 | 22.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *14.8* | *18.5* | *21.6* | *21.7* | *22.3* |
| | Երևանի քաղաքապետարան | 60.2 | 77.2 | 89.2 | 89.6 | 92.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *60.2* | *77.2* | *89.2* | *89.6* | *92.0* |
| | Արարատի մարզպետարան | 6.2 | 8.3 | 9.7 | 9.8 | 10.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *6.2* | *8.3* | *9.7* | *9.8* | *10.0* |
| | Գեղարքունիքի մարզպետարան | 7.3 | 8.8 | 10.2 | 10.3 | 10.5 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *7.3* | *8.8* | *10.2* | *10.3* | *10.5* |
| | Լոռու մարզպետարան | 4.3 | 5.6 | 6.6 | 6.6 | 6.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *4.3* | *5.6* | *6.6* | *6.6* | *6.8* |
| | Շիրակի մարզպետարան | 20.0 | 24.7 | 29.1 | 29.3 | 30.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *20.0* | *24.7* | *29.1* | *29.3* | *30.2* |
| | Սյունիքի մարզպետարան | 4.7 | 5.8 | 6.8 | 6.9 | 7.1 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *4.7* | *5.8* | *6.8* | *6.9* | *7.1* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Վայոց Ձորի մարզպետարան | 4.5 | 5.7 | 6.7 | 6.7 | 6.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *4.5* | *5.7* | *6.7* | *6.7* | *6.9* |
| 07.03.02. | Մշակութային օբյեկտների հիմնանորոգում | 204.2 | 819.2 | 1 000.0 | 0.0 | 1 000.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *204.2* | *819.2* | *1 000.0* | *0.0* | *1 000.0* |
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 204.2 | 819.2 | 1 000.0 | 0.0 | 1 000.0 |
| 07.03.03. | Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր | 67.1 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *67.1* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Երևանի քաղաքապետարան | 67.1 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.03.04. | Կենտրոնացված կարգով թանգարանների համար սարքերի, սարքավորումների ձեռքբերման գծով պետական պատվեր | 55.6 | 59.9 | 43.0 | 30.0 | 30.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *1.6* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *54.0* | *59.9* | *43.0* | *30.0* | *30.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 55.6 | 59.9 | 43.0 | 30.0 | 30.0 |
| | Նոր նախաձեռնություններ, այդ թվում | 0.0 | 0.0 | 138.8 | 31.3 | 12.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *100.5* | *16.3* | *12.7* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *38.3* | *15.0* | *0.0* |
| | 1. «Գառնի» և «Զվարթնոց» արգելոց-թանգարանների գիշերային գեղարվեստական լուսավորություն և ռադիոֆիկացում | 0.0 | 0.0 | 34.5 | 15.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *34.5* | *15.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 34.5 | 15.0 | 0.0 |
| | 2. Ա.Թամանյանի թանգարան-ինստիտուտի մշտական ցուցադրության կազմակերպում | 0.0 | 0.0 | 0.5 | 0.7 | 2.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.5* | *0.7* | *2.7* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 0.0 | 0.0 | 0.5 | 0.7 | 2.7 |
| | 3. Երևան քաղաքի պատմության թանգարանի մշտական ցուցարության կազմակերպում | 0.0 | 0.0 | 75.0 | 15.6 | 10.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *75.0* | *15.6* | *10.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Երևանի քաղաքապետարան | 0.0 | 0.0 | 75.0 | 15.6 | 10.0 |
| | 4.Գյումրու ժողովրդական արվեստի և քաղաքային կենցաղի թանգարանի մշտական ցուցադրության ժողովրդական արհեստների կազմակերպում | 0.0 | 0.0 | 25.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *25.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Շիրակի մարզպետարան | 0.0 | 0.0 | 25.0 | 0.0 | 0.0 |
| | 5.Օրբելու եղբայրների տուն- | 0.0 | 0.0 | 3.8 | 0.0 | 0.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | թանգարանի գազաֆիկացում | | | | | |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *3.8* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 3.8 | 0.0 | 0.0 |
| 07.04. | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ, այդ թվում | 96.8 | 18.9 | 22.8 | 22.4 | 22.5 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *14.4* | *18.9* | *21.7* | *21.9* | *22.5* |
| | *- կապիտալ ծախսեր* | *82.4* | *0.0* | *1.0* | *0.5* | *0.0* |
| 07.04.01. | Պետական աջակցություն մշակույթի տներին, ակումբներին և կենտրոններին | 14.4 | 18.9 | 22.8 | 22.4 | 22.5 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *14.4* | *18.9* | *21.7* | *21.9* | *22.5* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *1.0* | *0.5* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդու-թյան հարցերի նախարարություն | 12.4 | 16.3 | 19.8 | 19.4 | 19.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *12.4* | *16.3* | *18.7* | *18.8* | *19.3* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *1.0* | *0.5* | *0.0* |
| | Կոտայքի մարզպետարան | 0.7 | 0.9 | 1.0 | 1.0 | 1.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.7* | *0.9* | *1.0* | *1.0* | *1.0* |
| | Սյունիքի մարզպետարան | 0.7 | 0.9 | 1.0 | 1.0 | 1.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.7* | *0.9* | *1.0* | *1.0* | *1.0* |
| | Վայոց ձորի մարզպետարան | 0.7 | 0.9 | 1.0 | 1.0 | 1.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.7* | *0.9* | *1.0* | *1.0* | *1.0* |
| 07.04.02. | Մշակութային օբյեկտների հիմնանորոգում | 82.4 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *82.4* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 82.4 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.05. | Այլ մշակութային հիմնարկներ, այդ թվում | 300.4 | 606.0 | 512.3 | 512.3 | 520.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *286.1* | *597.3* | *489.9* | *491.9* | *500.6* |
| | *- կապիտալ ծախսեր* | *14.3* | *8.7* | *22.4* | *20.3* | *20.4* |
| 07.05.01. | Պետական աջակցություն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին | 158.4 | 211.4 | 264.4 | 263.7 | 255.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *158.4* | *211.4* | *248.4* | *249.5* | *255.2* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *16.0* | *14.2* | *0.0* |
| | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 158.4 | 211.4 | 264.4 | 263.7 | 255.2 |
| 07.05.02. | Պետական աջակցություն «Տեղեկատվական - վերլուծական և հասարակայնության հետ կապերի կենտրոն» ՊՈԱԿ-ին | 9.0 | 11.9 | 15.9 | 16.0 | 14.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *9.0* | *11.9* | *14.0* | *14.1* | *14.4* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *1.9* | *1.9* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 9.0 | 11.9 | 15.9 | 16.0 | 14.4 |
| 07.05.03. | Պետական աջակցություն «Երևանի կենդանաբանական այգի» ՊՈԱԿ-ին | 100.8 | 160.3 | 178.3 | 178.6 | 179.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *100.8* | *160.3* | *178.3* | *178.6* | *179.9* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Երևանի քաղաքապետարան | 100.8 | 160.3 | 178.3 | 178.6 | 179.9 |
| 07.05.04. | Պետական աջակցություն «Ժո-ղովրդական ստեղծա-գործության և արհեստագործության կենտ-րոն» ՊՈԱԿ-ին | 12.8 | 18.5 | 20.7 | 21.2 | 19.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *12.8* | *16.5* | *19.2* | *19.3* | *19.9* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *2.0* | *1.4* | *1.9* | *0.0* |
| - | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 12.8 | 18.5 | 20.7 | 21.2 | 19.9 |
| 07.05.05. | Պետական աջակցություն «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին | 5.0 | 28.9 | 28.0 | 28.0 | 28.6 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *5.0* | *22.2* | *25.5* | *25.6* | *26.3* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *6.7* | *2.5* | *2.4* | *2.4* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 5.0 | 28.9 | 28.0 | 28.0 | 28.6 |
| 07.05.06. | Պետական աջակցություն «ԱՅԱՍ» ծովային հետազոտու-թյունների ակումբին | 0.0 | 175.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *175.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ կառավարության աշխատակազմ | 0.0 | 175.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.05.07. | Հայաստանի ազգային արխիվի հակահրդեհային անվտանգու-թյան համակարգի ներդնում | 14.3 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *14.3* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 14.3 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | Նոր նախաձեռնություններ, այդ թվում | 0.0 | 0.0 | 5.0 | 4.8 | 22.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *4.4* | *4.8* | *4.9* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.6* | *0.0* | *18.0* |
| | 1.Հայաստանի ազգային արխիվի առաջին մասնաշենքի օդակարգավորման համակարգի վերակառուցում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 16.6 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *16.6* |
| | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 16.6 |
| | 2.1. Ժողովրդական ստեղծագործության շտեմարանի ստեղծում | 0.0 | 0.0 | 3.8 | 3.8 | 3.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *3.8* | *3.8* | *3.8* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 3.8 | 3.8 | 3.8 |
| | 2.2.Հայոց ավանդական ժառան-գության հավաքման, զարգաց-ման և տարածման ծրագիր | 0.0 | 0.0 | 0.7 | 1.0 | 1.1 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | - *ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.7* | *1.0* | *1.1* |
| | - *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 0.7 | 1.0 | 1.1 |
| | 2.3. Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության կենտրոնի համար սարքավորումների ձեռք բերում | 0.0 | 0.0 | 0.6 | 0.0 | 1.4 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | - *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.6* | *0.0* | *1.4* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 0.6 | 0.0 | 1.4 |
| 07.06. | Արվեստ, այդ թվում | 1 677.1 | 2 989.7 | 3098.5 | 2 546.8 | 2 600.2 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *1 641.5* | *2 596.4* | *2 671.0* | *2 278.2* | *2 340.2* |
| | - *կապիտալ ծախսեր* | *35.6* | *393.3* | *427.5* | *268.6* | *260.0* |
| 07.06.01. | Պետական աջակցություն «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին | 283.0 | 644.2 | 434.7 | 470.5 | 398.7 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *283.0* | *321.4* | *386.2* | *388.3* | *398.7* |
| | - *կապիտալ ծախսեր* | *0.0* | *322.9* | *48.4* | *82.2* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 283.0 | 644.2 | 434.7 | 470.5 | 398.7 |
| 07.06.02. | Պետական աջակցություն «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին | 125.4 | 140.8 | 170.1 | 171.0 | 175.0 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *125.4* | *140.8* | *170.1* | *171.0* | *175.0* |
| | - *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 125.4 | 140.8 | 170.1 | 171.0 | 175.0 |
| 07.06.03. | Պետական աջակցություն այլ թատրոններին և համերգային կազմակերպություններին | 908.5 | 1 152.2 | 1 303.9 | 1 313.0 | 1 358.1 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *908.5* | *1 081.8* | *1 303.9* | *1 313.0* | *1 358.1* |
| | - *կապիտալ ծախսեր* | *0.0* | *70.4* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 744.8 | 919.6 | 1 022.3 | 1 029.5 | 1 065.6 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *744.8* | *849.2* | *1 022.3* | *1 029.5* | *1 065.6* |
| | - *կապիտալ ծախսեր* | *0.0* | *70.4* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Երևանի քաղաքապետարան | 95.0 | 152.2 | 185.3 | 186.4 | 192.1 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *95.0* | *152.2* | *185.3* | *186.4* | *192.1* |
| | Սյունիքի մարզպետաան | 17.2 | 20.2 | 24.3 | 24.5 | 25.3 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *17.2* | *20.2* | *24.3* | *24.5* | *25.3* |
| | Շիրակի մարզպետարան | 32.5 | 38.4 | 46.1 | 46.4 | 48.3 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *32.5* | *38.4* | *46.1* | *46.4* | *48.3* |
| | Գեղարքունիքի մարզպետարան | 18.9 | 21.8 | 26.0 | 26.2 | 26.9 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *18.9* | *21.8* | *26.0* | *26.2* | *26.9* |
| 07.06.04. | Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը | 259.2 | 295.8 | 340.4 | 340.4 | 340.4 |
| | - *ընթացիկ ծախսեր* | *259.2* | *295.8* | *340.4* | *340.4* | *340.4* |
| | -*կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 226.4 | 261.6 | 306.1 | 306.1 | 306.1 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *226.4* | *261.6* | *306.1* | *306.1* | *306.1* |
| | Շիրակի մարզպետարան | 3.4 | 3.5 | 3.5 | 3.5 | 3.5 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *3.4* | *3.5* | *3.5* | *3.5* | *3.5* |
| | Լոռու մարզպետարան | 2.6 | 2.7 | 2.7 | 2.7 | 2.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *2.6* | *2.7* | *2.7* | *2.7* | *2.7* |
| | Արմավիրի մարզպետարան | 0.4 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.4* | *0.5* | *0.5* | *0.5* | *0.5* |
| | Կոտայքի մարզպետարան | 2.3 | 2.4 | 2.4 | 2.4 | 2.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *2.3* | *2.4* | *2.4* | *2.4* | *2.4* |
| | Տավուշի մարզպետարան | 3.3 | 3.3 | 3.4 | 3.4 | 3.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *3.3* | *3.3* | *3.4* | *3.4* | *3.4* |
| | Արարատի մարզպետարան | 2.6 | 3.2 | 3.2 | 3.2 | 3.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *2.6* | *3.2* | *3.2* | *3.2* | *3.2* |
| | Գեղարքունիքի մարզպետարան | 3.2 | 3.3 | 3.3 | 3.3 | 3.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *3.2* | *3.3* | *3.3* | *3.3* | *3.3* |
| | Վայոց Ձորի մարզպետարան | 4.8 | 4.9 | 4.9 | 4.9 | 4.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *4.8* | *4.9* | *4.9* | *4.9* | *4.9* |
| | Սյունիքի մարզպետարան | 7.0 | 7.2 | 7.2 | 7.2 | 7.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *7.0* | *7.2* | *7.2* | *7.2* | *7.2* |
| | Արագածոտնու մարզպետարան | 3.2 | 3.3 | 3.3 | 3.3 | 3.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *3.2* | *3.3* | *3.3* | *3.3* | *3.3* |
| 07.06.05. | Մշակութային օբյեկտների հիմնանորոգում | 35.6 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *35.6* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 35.6 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.06.06. | Պետական աջակցություն Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնին | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *20.0* | *20.0* | *20.0* | *20.0* | *20.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 |
| 07.06.07. | «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճար | 30.6 | 34.4 | 35.4 | 37.8 | 40.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *30.6* | *34.4* | *35.4* | *37.8* | *40.2* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 30.6 | 34.4 | 35.4 | 37.8 | 40.2 |
| 07.06.08. | Պետական աջակցություն Հ. Մաթևոսյանի ծննդյան 70-ամյակին նվիրված միջոցառումների իրականացմանը | 14.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *14.9* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 14.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 07.06.09. | Պետական աջակցություն Ֆրանսիայի Հանրապետությու-նում և Ռուսաստանի Դաշնու-թյունում Հայաստանի տարվա միջոցառումների իրականաց-մանը | 0.0 | 702.3 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *702.3* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ կառավարության աշխատակազմ | 0.0 | 702.3 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.06.10. | Պետական աջակցություն Ֆրանսիայի Հանրապետու-թյունում Հայաստանի տարվա միջոցառումների իրականացմանը | 0.0 | 0.0 | 400.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *400.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ կառավարության աշխատակազմ | 0.0 | 0.0 | 400.0 | 0.0 | 0.0 |
| | Նոր նախաձեռնություններ, այդ թվում | 0.0 | 0.0 | 394.0 | 194.2 | 267.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *14.9* | *7.8* | *7.8* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *379.1* | *186.4* | *260.0* |
| | 1.Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի համար սարքերի, սարքավորումների ձեռքբերում | 0.0 | 0.0 | 211.6 | 177.8 | 260.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *211.6* | *177.8* | *260.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 211.6 | 177.8 | 260.0 |
| | 2. Համազգային պետական թատրոնի օդափոխման համակարգի ներդնում | 0.0 | 0.0 | 11.2 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *11.2* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 11.2 | 0.0 | 0.0 |
| | 3.Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատի-կական թատրոնի ձայնալուսային համակարգերի ներդնում | 0.0 | 0.0 | 27.8 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *27.8* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 27.8 | 0.0 | 0.0 |
| | 4.Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատի-կական թատրոնի բեմական մե-խանիզմների և սարքավորում-ների ընթացիք նորոգում | 0.0 | 0.0 | 11.3 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *11.3* | *0.0* | *0.0* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 11.3 | 0.0 | 0.0 |
| 5.Հայաստանի ժողովրդական նվագարանների նվագախմբի համերգային զգեստների, ռադիոսարքավորումների և ժողովրդական նվագարանների ձեռքբերում | 0.0 | 0.0 | 7.1 | 8.6 | 0.0 |
| *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *7.1* | *0.0* | *0.0* |
| *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *8.6* | *0.0* |
| ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 7.1 | 8.6 | 0.0 |
| 6.Կամերային պետական թատրոնի բեմական հանդիսասրահի բազկաթոռների ձեռքբերում | 0.0 | 0.0 | 6.4 | 0.0 | 0.0 |
| *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *6.4* | *0.0* | *0.0* |
| ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 6.4 | 0.0 | 0.0 |
| 7.Խամաճիկների պետական թատրոնի լուսաձայնային սարքավորումների ձեռքբերում | 0.0 | 0.0 | 35.0 | 0.0 | 0.0 |
| *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *35.0* | *0.0* | *0.0* |
| ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 35.0 | 0.0 | 0.0 |
| 8.Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գույքի, լուսաձայնային սարքավորումների ձեռքբերում | 0.0 | 0.0 | 2.9 | 0.0 | 0.0 |
| *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *2.9* | *0.0* | *0.0* |
| ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 2.9 | 0.0 | 0.0 |
| 9.Երաժշտական կամերային պետական թատրոնի գույքի, լուսաձայնային սարքավո-րումների ձեռքբերում | 0.0 | 0.0 | 28.6 | 0.0 | 0.0 |
| *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *28.6* | *0.0* | *0.0* |
| ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 28.6 | 0.0 | 0.0 |
| 10. Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գույքի և դահլիճի բազկաթոռների ձեռքբերում | 0.0 | 0.0 | 9.0 | 0.0 | 0.0 |
| *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *9.0* | *0.0* | *0.0* |
| ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 9.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 11. Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի սարքավորումների վերազինում | 0.0 | 0.0 | 15.5 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *15.5* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 15.5 | 0.0 | 0.0 |
| | 12. Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի գույքի, լուսաձայնային սարքավորումների ձեռքբերում | 0.0 | 0.0 | 19.9 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *19.9* | *0.0* | *0.0* |
| | Սյունիքի մարզպետարան | 0.0 | 0.0 | 19.9 | 0.0 | 0.0 |
| | 13. «Հեքիաթին հյուր» գյուղական մանկահասակ բնակչության սպասարկման միջոցառում | 0.0 | 0.0 | 0.8 | 0.8 | 0.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.8* | *0.8* | *0.8* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 0.8 | 0.8 | 0.8 |
| | 14.Պետական աջակցություն և խթանում միջազգային թատերական փառատոններին, որից | 0.0 | 0.0 | 4.0 | 4.0 | 4.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *4.0* | *4.0* | *4.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ա/ «Արմմոնո» | 0.0 | 0.0 | 2.0 | 2.0 | 2.0 |
| | բ/ «Հայֆեստ» | 0.0 | 0.0 | 2.0 | 2.0 | 2.0 |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 4.0 | 4.0 | 4.0 |
| | 15. ՀՀ Արմավիրի մարզի մշակութային միջոցառումների ծրագիր | 0.0 | 0.0 | 2.1 | 2.1 | 2.1 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *2.1* | *2.1* | *2.1* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Արմավիրի մարզպետարան | 0.0 | 0.0 | 2.1 | 2.1 | 2.1 |
| | 16. ՀՀ Լոռու մարզի մշակութային միջոցառումների ծրագիր | 0.0 | 0.0 | 0.9 | 0.9 | 0.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.9* | *0.9* | *0.9* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Լոռու մարզպետարան | 0.0 | 0.0 | 0.9 | 0.9 | 0.9 |
| 07.07. | Կինեմատոգրաֆիա, այդ թվում | 447.6 | 482.9 | 554.0 | 584.1 | 554.6 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *447.6* | *482.9* | *554.0* | *584.1* | *554.6* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| 07.07.01. | Պետական աջակցություն կինոնկարների արտադրությանը | 415.0 | 450.0 | 450.0 | 450.0 | 450.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *415.0* | *450.0* | *450.0* | *450.0* | *450.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի | 415.0 | 450.0 | 450.0 | 450.0 | 450.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նախարարություն | | | | | |
| 07.07.02. | Պետական աջակցություն կինեմատոգրաֆիայի ոլորտում այլ ծառայություններին | 32.7 | 32.9 | 32.9 | 32.9 | 32.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *32.7* | *32.9* | *32.9* | *32.9* | *32.9* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 32.7 | 32.9 | 32.9 | 32.9 | 32.9 |
| | Նոր նախաձեռնություններ, այդ թվում | 0.0 | 0.0 | 71.1 | 101.2 | 71.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *71.1* | *101.2* | *71.7* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | 1.Վավերագրական կինոնկարների պատճենների արտատպում, վերականգնում և թվայնացում | 0.0 | 0.0 | 8.4 | 8.4 | 8.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *8.4* | *8.4* | *8.4* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 8.4 | 8.4 | 8.4 |
| | 2.Վավերագրական կինոնկարների արտադրություն կինոժապավենի վրա | 0.0 | 0.0 | 30.0 | 60.0 | 30.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *30.0* | *60.0* | *30.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 30.0 | 60.0 | 30.0 |
| | 3.Վավերագրական կինոնկարների մասնակցության ապահովում կինոփառատոններին | 0.0 | 0.0 | 1.2 | 1.2 | 1.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *1.2* | *1.2* | *1.2* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 1.2 | 1.2 | 1.2 |
| | 4. Կինոնկարների արտադրության, միջազգային կինոփառատոններին մասնակցության, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման գծով գործուղման ծախսերի փոխհատուցում | 0.0 | 0.0 | 31.6 | 31.7 | 32.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *31.6* | *31.7* | *32.2* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 31.6 | 31.7 | 32.2 |
| 07.08. | Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում, այդ թվում | 527.3 | 782.2 | 915.6 | 255.5 | 921.5 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *37.3* | *42.2* | *55.3* | *55.5* | *56.5* |
| | *- կապիտալ ծախսեր* | *490.0* | *740.0* | *860.3* | *200.0* | *865.0* |
| 07.08.01. | Պետական աջակցություն «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին | 37.3 | 42.2 | 50.6 | 50.8 | 51.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *37.3* | *42.2* | *50.6* | *50.8* | *51.8* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 37.3 | 42.2 | 50.6 | 50.8 | 51.8 |
| 07.08.02. | Նախագծային աշխատանքներ | 86.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *86.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 86.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.08.03. | Հուշարձանների վերականգնման գծով պետական պատվեր | 404.0 | 720.0 | 860.3 | 200.0 | 865.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *404.0* | *720.0* | *860.3* | *200.0* | *865.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 374.3 | 0.0 | 860.3 | 200.0 | 865.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *374.3* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ Արմավիրի մարզպետարան | 29.7 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *29.7* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| 07.08.04. | Այլ օբյեկտների շինարարություն | *0.0* | *20.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- ընթացիկ ծախսեր* | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *20.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | *0.0* | *20.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Նոր նախաձեռնություններ, այդ թվում | 0.0 | 0.0 | 4.7 | 4.7 | 4.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *4.7* | *4.7* | *4.7* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | 1.Հուշարձանների կադաստրի կազմում | 0.0 | 0.0 | 4.7 | 4.7 | 4.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *4.7* | *4.7* | *4.7* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 0.0 | 0.0 | 4.7 | 4.7 | 4.7 |
| 07.11. | Հրատարակչություններ, խմբագրություններ, այդ թվում | 500.7 | 621.5 | 681.9 | 696.7 | 653.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *492.7* | *614.9* | *681.9* | *696.7* | *653.4* |
| | *- կապիտալ ծախսեր* | *7.9* | *6.6* | *0.0* | *0.0* | *0.0* |
| 07.11.01. | Պետական աջակցություն գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը | 30.0 | 34.5 | 38.7 | 38.9 | 39.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *30.0* | *34.5* | *38.7* | *38.9* | *39.7* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 30.0 | 34.5 | 38.7 | 38.9 | 39.7 |
| 07.11.02. | Գրականության հրատարակման գծով պետական պատվեր | 37.6 | 135.4 | 135.4 | 135.4 | 135.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *37.6* | *135.4* | *135.4* | *135.4* | *135.4* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի | 37.6 | 135.4 | 135.4 | 135.4 | 135.4 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նախարարություն | | | | | |
| 07.11.03. | Պետական աջակցություն պետական մամուլի հրատարակմանը | 57.4 | 66.7 | 60.3 | 60.3 | 60.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *57.4* | *60.1* | *60.3* | *60.3* | *60.3* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *6.6* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 57.4 | 66.7 | 60.3 | 60.3 | 60.3 |
| 07.11.04. | Պետական աջակցություն «Էկոնոմիկա հանդես» ՓԲԸ-ին | 30.2 | 35.6 | 35.6 | 35.6 | 35.6 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *30.2* | *35.6* | *35.6* | *35.6* | *35.6* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 30.2 | 35.6 | 35.6 | 35.6 | 35.6 |
| 07.11.05. | Պետական աջակցություն ոչ պետական մամուլի հրատարակմանը | 44.9 | 46.4 | 46.4 | 46.4 | 46.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *44.9* | *46.4* | *46.4* | *46.4* | *46.4* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 44.9 | 46.4 | 46.4 | 46.4 | 46.4 |
| 07.11.06. | Պետական աջակցություն մանկական, մանկապատա-նեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը | 32.1 | 34.7 | 37.4 | 40.9 | 44.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *32.1* | *34.7* | *37.4* | *40.9* | *44.8* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 32.1 | 34.7 | 37.4 | 40.9 | 44.8 |
| 07.11.07. | Հրատարակումների գծով պետական պատվեր | 258.5 | 258.2 | 258.2 | 258.2 | 258.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *250.6* | *258.2* | *258.2* | *258.2* | *258.2* |
| | *- կապիտալ ծախսեր* | *7.9* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ արդարադատության նախարարություն | 227.7 | 197.3 | 197.3 | 197.3 | 197.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *219.7* | *197.3* | *197.3* | *197.3* | *197.3* |
| | *- կապիտալ ծախսեր* | *7.9* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 20.6 | 50.6 | 50.6 | 50.6 | 50.6 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *20.6* | *50.6* | *50.6* | *50.6* | *50.6* |
| | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 10.3 | 10.3 | 10.3 | 10.3 | 10.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *10.3* | *10.3* | *10.3* | *10.3* | *10.3* |
| 07.11.08. | Պետական աջակցություն «Վրաստան» թերթի հրատարակմանը | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *10.0* | *10.0* | *10.0* | *10.0* | *10.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 |
| | Նոր նախաձեռնություններ, այդ թվում | 0.0 | 0.0 | 60.0 | 71.0 | 23.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *60.0* | *71.0* | *23.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1.Իրավաբանական տերմինաբանության զարգացում | 0.0 | 0.0 | 14.0 | 13.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *14.0* | *13.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ արդարադատության նախարարություն | 0.0 | 0.0 | 14.0 | 13.0 | 0.0 |
| | 2.Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի զարգացում | 0.0 | 0.0 | 23.0 | 23.0 | 23.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *23.0* | *23.0* | *23.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ արդարադատության նախարարություն | 0.0 | 0.0 | 23.0 | 23.0 | 23.0 |
| | 3. «Պաշտոնական հայտարա-րություններ» կայք էջի ստեղծում և վարում | 0.0 | 0.0 | 23.0 | 35.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *23.0* | *35.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ արդարադատության նախարարություն | 0.0 | 0.0 | 23.0 | 35.0 | 0.0 |
| 07.12. | Տեղեկատվության ձեռքբերում, այդ թվում | 52.3 | 55.8 | 55.9 | 55.9 | 55.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *52.3* | *55.8* | *55.9* | *55.9* | *55.9* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| 07.12.01. | Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման գծով պետական աջակցություն «Արմենպրես» ՓԲԸ-ին | 52.3 | 55.8 | 55.9 | 55.9 | 55.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *52.3* | *55.8* | *55.9* | *55.9* | *55.9* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 52.3 | 55.8 | 55.9 | 55.9 | 55.9 |
| 07.14. | Երիտասարդական ծրագրեր, այդ թվում | 279.6 | 316.2 | 342.8 | 342.8 | 342.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *279.6* | *316.2* | *342.8* | *342.8* | *342.8* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| 07.14.01. | Պետական աջակցություն երիտասարդական ծրագրերի իրականացմանը | 279.6 | 316.2 | 342.8 | 342.8 | 342.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *279.6* | *316.2* | *342.8* | *342.8* | *342.8* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 279.6 | 316.2 | 342.8 | 342.8 | 342.8 |
| 07.15. | Քաղաքական կուսակցություն-ներ, հասարակական կազմա-կերպություններ, արհմիու-թյուններ, այդ թվում | 177.8 | 180.2 | 180.2 | 180.2 | 180.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *130.2* | *180.2* | *180.2* | *180.2* | *180.2* |
| | *- կապիտալ ծախսեր* | *47.5* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| 07.15.01. | Պետական աջակցություն ազ-գային փոքրամասնու-թյուններին | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *10.0* | *10.0* | *10.0* | *10.0* | *10.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ կառավարության աշխատա-կազմ | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 |
| 07.15.02. | Նյութական աջակցություն ՀՀ ԱԺ ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին | 70.2 | 70.2 | 70.2 | 70.2 | 70.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *70.2* | *70.2* | *70.2* | *70.2* | 70.2 |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ կառավարություն | 70.2 | 70.2 | 70.2 | 70.2 | 70.2 |
| 07.15.03. | Մշակութային օբյեկտների հիմնանորոգում | 47.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *47.5* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 47.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.15.04 | Պետական աջակցություն հասարակական կազմակերպություններին | 50.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | *50.0* | *100.0* | *100.0* | *100.0* | *100.0* |
| | *- կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ Նախագահի աշխատակազմ | 50.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ծրագրերի գծով 2007-2009թթ. ՄԺԾԾ-ով սահմանված հատկացումների կանխատեսումների բաշխումը ծրագրային դասակարգմամբ ներկայացված է Հավելված 2-ի N 4 Աղյուսակում :

### 10.2. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԴԻՈ

Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն 10 ծրագրերի իրականացմանը՝ 5 պետական կառավարման մարմինների միջոցով, ինչն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ենթախմբերի ներկայացված է Աղյուսակ 10.12-ում:

#### 10.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման բնագավառներում գործունեությունն իրականացնում են Հանրային հեռուստաընկերությունը և Հանրային ռադիոընկերությունը:

2005 թվականին Հանրային հեռուստաընկերությունը պատրաստել և հեռարձակել է օրական 18-19.5 ժամ հեռուստահաղորդումներ ՀՀ տարածքում, արբանյակային կապուղով օրական 24 ժամ հեռարձակում Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում, ինչպես նաև 24 ժամ հեռարձակում դեցիմետրային տիրույթում Երևան քաղաքի տարածքում:

Հանրային ռադիոընկերությունը, 2005 թվականին պատրաստել և հեռարձակել է օրական 50 ժամ ռադիոհաղորդումներ ՀՀ տարածքում և արտասահմանում:

Շիրակի հանրային հեռուստառադիոն, որը հեռուստառադիոհաղորդումների պատրաստման և

հեռարձակման գործունեություն է իրականացնում Շիրակի մարզում 2005 թվականին պատրաստել և հեռարձակել է օրական 0.5 ժամ հեռուստահաղորդումներ և 0.5 ժամ ռադիոհաղորդումներ:

2005 թվականին «Հեռուստաֆիլմերի արտադրության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում իրականացվել են «Եվրոպայի դժվար ճանապարհին» և «Եղեռն» հեռուստաֆիլմերի արտադրության աշխատանքները:

2005 թվականին բացի հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստումից և հեռարձակումից ոլորտում իրականացվել են նաև ռադիոհեռուստատեսության պահուստային բազայի պահպանման, հասարակական կարծիքի ուսումնասիրման, ՀՀ կառավարության գործունեության, տնտեսական բարեփոխումների ընթացքի, ռազմավարական ծրագրերի լուսաբանման և պետական գնումների իրապակայնության ապահովման աշխատանքները:

2005-2006թվականներին հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների թեմատիկ ուղղությունների տեսակարար կշիռը ընդհանուր ժամերի մեջ ներկայացված է Աղյուսակներ NN 10.6, 10.7 –ում:

**<u>Աղյուսակ N 10.6.</u> 2005-2006թթ հեռուստահաղորդումների ընդհանուր ժամերի մեջ թեմատիկ ուղղությունների տեսակարար կշիռը**

| հ/հ | Հեռուստահաղորդումների թեմատիկ ուղղությունները | Տեսակարար կշիռը ընդհանուր ժամերի մեջ (%) | |
|---|---|---|---|
| | | 2005թ. փաստացի | 2006թ. նախատեսված |
| | Լրատվական վերլուծական | 29.7 | 29.7 |
| | Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական | 16.3 | 16.3 |
| | Իրավական | 0.9 | 0.9 |
| | Գիտահանրամատչելի, ճանաչողական | 5.5 | 5.5 |
| | Առողջապահական | 0.9 | 0.9 |
| | Մշակութային | 20.5 | 20.5 |
| | Մանկապատանեկան, երիտասարդական, կրթական, մարզական | 18.5 | 18.5 |
| | Երաժշտական | 7.5 | 7.5 |
| | Հոգևոր | 0.2 | 0.2 |

**<u>Աղյուսակ N 10.7.</u> 2005-2006թթ. ռադիոհաղորդումների ընդհանուր ժամերի մեջ թեմատիկ ուղղությունների տեսակարար կշիռը**

| հ/հ | Ռադիոհաղորդումների թեմատիկ ուղղությունները | Տեսակարար կշիռը ընդհանուր ժամերի մեջ (%) | |
|---|---|---|---|
| | | 2005թ.փաստացի | 2006թ. հաստատված |
| | Ռադիոլրատվական | 8.2 | 6.8 |
| | Քաղական-տնտեսական | 1.2 | 0.9 |
| | Մշակութային | 2.1 | 3.4 |
| | Երիտասարդական | 1.5 | 1.6 |
| | Մանկապատանեկան | 1.5 | 1.6 |
| | Հոգևոր | 2.6 | 1.7 |
| | Երաժշտական | 24.9 | 28.0 |
| | Ստերեոստուդիա | 42.0 | 42.0 |
| | Ձեր համար երաժշտասերներ | 5.7 | |
| 0 | Արտասահմանի համար տրվող հաղորդումներ | 10.3 | 10.3 |
| 1 | Նոր FM | | 3.7 |

2005-2006 թվականներին Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին պետական բյուջեից կատարված հատկացումները կազմել են համապատասխանաբար՝ 3167.6 և 3123.9 մլն դրամ, որոնց բաշխումը ներկայացված է Աղյուսակ N 10.8 - ում:

**Աղյուսակ N 10.8. 2005-2006թթ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին պետական բյուջեից կատարված հատկացումները**

(մլն դրամ)

| Միջոցների օգտագործման ուղղությունները | 2005թ. | 2006թ. |
|---|---|---|
| Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանում | 60.1 | 71.4 |
| Հեռուստաֆիլմերի արտադրության գծով պետական պատվեր | 37.7 | 38.2 |
| Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային հեռուստաընկերու-թյուն» ՓԲԸ-ին | 2255.7 | 2267.5 |

| | | |
|---|---|---|
| Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին | 682.9 | 690.9 |
| Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին | 15.9 | 16.7 |
| Պահուստային բազայի պահպանման նպատակով պետական աջակցություն «Եթեր ստեղծագործական տուն » ՓԲԸ-ին | 5.9 | 6.2 |
| Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով պետական աջակցություն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին | 5.0 | 8.1 |
| Եվրոպական հեռարձակողների միության մուտքի և անդամակցության վճարներ / ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ/ | 104.4 | |
| «Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ» | | 24.9 |
| Ընդամենը | 3167.6 | 3123.9 |

Հարկ է նշել, որ Հանրային հեռուստաընկերությանը և Հանրային ռադիոընկերությանը կատարվող հատկացումներում հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակման ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 2005 թվականին՝ 45.5 և 56.7 տոկոս, 2006 թվականին՝ 36.9 և 50.6 տոկոս: Հեռարձակման աշխատանքները հիմնականում կատարվում են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության ընկերությունների միջոցով: Հանրային հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման համար նախատեսված հատկացումների բաշխումը ներկայացված է Աղյուսակ N 10.9.-ում:

**Աղյուսակ N 10.9. 2005-2006թթ Հանրային հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման համար նախատեսված հատկացումների բաշխումը (մլն դրամ)**

| Միջոցների օգտագործման ուղղությունները | 2005թ. | 2006թ. |
|---|---|---|
| Հեռուստահաղորդումներ՝ ընդամենը, այդ թվում՝ | **2255.7** | **2267.5** |
| Հեռուստահաղորդումների հեռարձակում ՀՀ տարածքում | 472.5 | 440.9 |
| Հեռուստահաղորդումների արբանյակային հեռարձակում | 526.7 | 378.0 |
| Արբանյակային ընդունիչ-հաղորդիչ կայանի սպասարկում | 27.6 | 18.7 |
| Հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակման իրավունքների ձեռք բերում | 1228.9 | 1201.5 |
| Հայաստանի հանրային հեռուստաընկերության տեխնիկական | | 228.4 |

| | | |
|---|---|---|
| վերազինում | | |
| Ռադիոհաղորդումներ ընդամենը, այդ թվում՝ | **682.9** | **728.5** |
| Ռադիոհաղորդումների հեռարձակում | 387.3 | 341.2 |
| Ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակման իրավունքների ձեռք բերում | 295.6 | 387.3 |

2006 թվականին հեռարձակող կազմակերպությունների հետ բանակցությունների և նոր տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում տնտեսվել են միջոցներ: Այդ միջոցները Հանրային հեռուստաընկերությունը կուղղի տեխնիկական վերազինման աշխատանքների իրականացմանը և աշխատողների աշխատավարձի ֆոնդի ավելացմանը, համապատասխանաբար՝ 228.4 և 53.1 հազ. դրամի չափով:

Վերջին տարիներին իրականացված տեխնիկական վերազինման գործընթացի արդյունքում զգալիորեն բարելավվել է Հանրային հեռուստաընկերության տեխնիկական մակարդակը:

Հանրային հեռուստաընկերությունը 2002 թվականից սկսած իրականացնում է տեխնիկական վերազինման աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել ժամանակի պահանջներին բավարարող հաղորդումների պատրաստման և հեռարձակման գործընթացը: 2002-2005 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հանրային հեռուստաընկերության կանոնադրական կապիտալին ուղղված 343.0 մլն. դրամ միջոցները, որոնք հատկացվել են տնտեսված հեռարձակման գումարների հաշվին, ամբողջությամբ ծախսվել են ընկերության տեխնիկական վերազինման համար: Այդ նպատակին են ուղղվել նաև ընկերության առևտրային եկամուտները: Այդ միջոցները հնարավորություն են տվել նոր տեխնիկական միջոցներ ձեռք բերել լրատվական բլոկի տաղավարային սարքասրահի համար և մասամբ համալրել մյուս տաղավարային սարքասրահների տեսախցիկների քանակը: Սակայն կատարված ներդրումները բավարար չափով չեն ապահովել Հանրային հեռուստատեսության ֆիզիկապես և բարոյապես մաշված տեխնիկական բազայի անհրաժեշտ վերազինումը: Բացի դրանից Հանրային հեռուստառադիոընկերությունը 2005 թվականի հուլիսին դարձել է եվրոպական հեռարձակողների միության (EBU) լիիրավ անդամ՝ այսպիսով ընդգրկվելով եվրոպական հեռարձակման միասնական ցանցում: Եվրոպական հեռարձակման միության անդամ երկրները փոխանակում են հեռուստածրագրեր, պարտավորվում են արբանյակային կապուղիների օգնությամբ փոխանցել միմյանց առավել նշանակալից քաղաքական, սպորտային և այլ իրադարձությունների մասին տեղեկատվություններ: Այս ամենը պահանջում է ժամանակակից թվանշանային տեխնոլոգիաների ներդրում և անալոգային հեռարձակումից թվայինի աստիճանական անցում:

2006 թվականին ամբողջությամբ հայալեզու եթեր ապահովելու համար ավելացել են Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակվող հաղորդումների և ֆիլմերի կրկնօրինակման աշխատանքների ծավալները: Մասնավորապես, եթե 2005 թվականին կրկնօրինակվել են 830 գեղարվեստական, փաստագրական և մուլտիպլիկացիոն ֆիլմեր և սերիալներ՝ 736.8 ժամ ընդհանուր տևողությամբ, ապա 2006 թվականին կկրկնօրինակվեն 1955 գեղարվեստական, փաստագրական և մուլտիպլիկացիոն ֆիլմեր և սերիալներ՝ 2135.8 ժամ

ընդհանուր տևողությամբ:

2006 թվականին FM ցանցի ընդլայնման արդյունքում Հայաստանի հանրային ռադիոընկերությանը հնարավորություն է ստեղծվել հրաժարվել մինչ այդ շահագործվող բարոյապես մաշված տեխնիկական միջոցների շահագործումից և տնտեսել հեռարձակման ծախսերը 37.6 մլն դրամով: Այդ միջոցների զգալի մասը (մոտ 30.0 մլն դրամ) կուղղվի ընկերության տեխնիկական վերազինմանը: Մնացած մասը կուղղվի Հանրային ռադիոյի աշխատողների սոցիալական վիճակի բարելավմանը:

Ընդհանուր առմամբ 2006 թվականին հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը ուղղված բյուջետային հատկացումների աճը 2005 թվականի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 0.5 և 1.2 տոկոս: Նշված աճը պայմանավորված է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների բազային դրույքաչափի ավելացմամբ :

ՀՀ կառավարության գործունեության, տնտեսական բարեփոխումների ընթացքի և ռազմավարական ծրագրերի լուսաբանման աշխատանքները իրականացնում է «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ը:

2004-2005 թվականներին նշված ՊՈԱԿ-ի կողմից պատրաստվել և Հ-1 հեռուստաալիքով ցուցադրվել է «Ձեռագիր» հեռուստահաղորդաշարի 104 հաղորդում՝ յուրաքանչյուրը 30 րոպե տևողությամբ, հիմնովին վերափոխվել և թարմացվել է ՀՀ կառավարության ինտերնետային հանգույցը, հրատարակվել են ՀՀ կառավարության 4 տարիների գործունեության վերլուծության գիրքը 3 լեզուներով, հանրապետական ԶԼՄ-ներով տրվել են տասնյակ վերլուծական նյութեր, հաղորդումներ:

2004-2005 թվականներին կենտրոնը շարունակել է համագործակցել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակի հետ: Համատեղ թողարկվել են «Հայաստանի սոցիալական միտումները» 5 տեղեկագրերը, «Հայացք Տնտեսությանը» պարբերականի 12 թողարկումներ, ԱՀՌԾ իրականացման և Հազարամյակի մարտահրավերի իրազեկման գործընթացի շրջանակում ՀՀ մարզերում անցկացվել են սեմինարներ, մարզային հեռուստաալիքների և թերթերի միջոցով իրականացվել են քարոզչական աշխատանքներ:

### 10.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

#### 10.2.2.1.Նպատակները

Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի հիմնական նպատակներն են.

- Ապահովել քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության, մարզական, զվարճալի և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվությունը ազատորեն ստանալու ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքը,
- Հեռուստադիտողներին և ռադիոունկնդիրներին մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում հաշվի են առնվում հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:
- Ապահովել բնակչության լայն խավերին հուզող և նրանց կողմից պարզաբանում պահանջող խնդիրների վերաբերյալ հաղորդումներ և լրատվություն,

- Ապահովել բնակչությանն անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ,
- Բնակչության լայն խավերի շրջանում հեռուստատեսության և ռադիոյի դերը և նշանակությունը խրախուսող գործունեության իրականացում, հեռուստատեսության և ռադիոյի կողմից տրամադրվող տեղեկատվության նկատմամբ ունկնդրի վստահության ավելացում:

**10.2.2.2.Գերակայությունները**

Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հիմքում դրված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված գործունեության ծավալման համար անհրաժեշտ ծրագրերի իրականացումը:

Հանրային հեռուստառադիոընկերությունն իր 2007-2009 թվականների գործունեության ընթացքում առաջնորդվելու է հետևյալ խնդիրների իրականացմամբ.

- Ապահովել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պահանջվող Հանրային հեռուստաընկերության օրական 18 ժամ և Հանրային ռադիոընկերության օրական 50 ժամ հաղորդումների պատրաստման և հեռարձակման ծավալները,
- Ապահովել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստվող և հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը,
- Սոցիալ-տնտեսական ուղղվածության հաղորդումների շարքը համալրել աղքատության հաղթահարման ծրագրերի և դրանց ընթացքի վերաբերյալ հաղորդումներով,
- Ապահովել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության հաղորդումների սփռումը հանրապետության ամբողջ տարածքում և արտերկրում:

2007-2009 թվականներին Հանրային հեռուստառադիոընկերության զարգացման գերակա ուղղություններն են.

- Հեռարձակվող հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալում բնակչության լայն խավերին մատչելի հայալեզու, սեփական և հայրենական արտադրության հաղորդումների քանակի ավելացումը,
- Հեռուստաընկերության տեխնիկական բազայի վերազինման միջոցով հանրապետության ամբողջ տարածքում հեռարձակվող հաղորդումների բարձր որակի ապահովումը,
- Տեխնիկական վերազինման միջոցով Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության արտադրական ծախսերի կրճատումը և աշխատակիցների սոցիալական վիճակի բարելավումը,
- Հեռարձակվող հաղորդումների արբանյակային հեռարձակման աստիճանական ավելացումը, որը հնարավորություն կընձեռի սփյուռքի մեր հայրենակիցներին ամենօրյա տեղեկատվություն ստանալ հայրենիքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ,
- Հանրային հեռուստաընկերության, որպես լիիրավ անդամ, EBU (Եվրոպական հեռարձակողների միություն) հետ ավելի սերտ համագործակցության ապահովումը,
- Նոր տեխնոլոգիաների ներդրման և արբանյակային հեռարձակման միջոցով EBU (Եվրոպական հեռարձակողների միություն) հետ կապերի ընդլայնումը,

• Եվրոպական և այլ երկրների հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ փոխադարձ համագործակցության շրջանակների ընդլայնումը:

2006-2008 և 2007-2009 թվականների միջնաժամկետ ծրագրերով հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի համար նախատեսված հատկացումները ներկայացված են Աղյուսակ 10.10.-ում:

**Աղյուսակ 10.10. Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի բյուջետային հատկացումները 2006-2009թվականներին՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ենթախմբերի (մլն դրամ)**

| Խումբ, ենթախումբ | Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2006-2008թթ ՄԺԾԾ | ՀՀ հաստատ-ված բյուջե | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ |
| 01.03. | Միջազգային կազմակերպու-թյուններին Հայաստանի Հան-րապետության անդամակցու-թյան վճարներ | 0.0 | 24.9 | 0.0 | 26.7 | 0.0 | 26.7 | 26.7 |
| 07.01. | Պետական կառավարում | 156.0 | 167.0 | 168.0 | 163.9 | 183.5 | 165.6 | 176.5 |
| 07.10. | Հեռուստառադիոհաղորդումներ | 3. 108.9 | 3.184.5 | 3.113.0 | 3.202.6 | 3.115.5 | 3.205.2 | 3.205.2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3.264.9** | **3.376.4** | **3.280.9** | **3.393.2** | **3. 299.0** | **3.397.5** | **3.408.4** |

Ծախսերի աճը 2007-2008 թվականներին առաջարկվող և հաստատված ՄԺԾԾ-ի գծով համապատասխանաբար՝ 112.3 և 98.5 մլն դրամով պայմանավորված է.

- Հանրային հեռուստաընկերության EBU (Եվրոպական հեռարձակողների միություն) անդամակցության գումարի ավելացմամբ, յուրաքանչյուր տարի՝ 26.7 մլն դրամով,
- կառավարման ապարատի պահպանման ծախսերի նվազմամբ (ճշտմամբ) համապատասխանաբար՝ 4.1 և 17.9 մլն դրամով,
- հեռուստառադիոհաղորդումների գծով ծախսերի աճով, յուրաքանչյուր տարի՝ 89.7 մլն դրամով, ինչը կապված է պարտադիր սոցիալական վճարների, սակագների աճի, «Ձեռագիր» հեռուստահաղորդաշարի հաղորդումների պատրաստման, ՀՀ կառավարության գործունեության վերաբերյալ հրապարակումների, «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի, հասարակական կարծիքի ուսումնասիրման, պետական գնումների հրապարակայնության ապահովման ծախսերի ավելացման հետ :

### 10.2.2.3. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

2007-2009 թվականներին հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի հատկացումները կաճեն 32.0 մլն դրամով, որը պայմանավորված է .

- միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների ավելացմամբ՝ 1.8 մլն դրամով, կապված տարադրամի փոխարժեքի փոփոխության հետ,
- հեռուստահաղորդումների ծախսերի ավելացմամբ՝ 20.7 մլն դրամով, կապված ծառայությունների սակագների աճի հետ,
- կառավարման ապարատի պահպանման ծախսերի ավելացմամբ՝ 9.5 մլն դրամով:

Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում 2007-2009 թվականներին կշարունակվի հեռուստաընկերության տեխնիկական վերազինումը՝ այդ նպատակի համար նախատեսվում է հատկացնել 228.4 մլն դրամ:

Վերոնշյալ վերազինումը Հանրային հեռուստաընկերությանը հնարավորություն կտա ապահովել Եվրոպական հեռարձակողների միության (EBU) տեխնիկական պահանջները և հաջորդ տարիներին փոքր ներդրումների միջոցով ապահովել հեռուստաեթերի ժամանակի պահանջներին բավարարող բարձր որակ:

### 10.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հեռուստատեսության և ռադիոյի ոլորտին (ներառյալ կառավարման ապարատի ծախսերը) նախատեսվում է ուղղել՝ 2007 թվականին՝ 3393.2 մլն դրամ, 2008 թվականին՝ 3397.5 մլն դրամ և 2009 թվականին՝ 3408.4 մլն դրամ: Ծախսերի աճը կկազմի՝ 2006 թվականին 2005 թվականի փաստացիի նկատմամբ՝ 3.2%, 2007 թվականին՝ 0.5% 2006 թվականի նկատմամբ, 2008թվականին՝ 0.1% 2007 թվականի նկատմամբ, 2009թվականին՝ 0.3% 2008 թվականի նկատմամբ:

2007-2009 թվականներին հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի միջնաժամկետ ծրագրով ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կկազմի, համապատասխանաբար՝ 0.13, 0.12 և 0.11%:

2007-2009 թվականներին հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի միջնաժամկետ ծրագրով պետական ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում կունենա հետևյալ պատկերը.

**Գծանկար 10.5. Պետական բյուջեի ծախսերը հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում (%՝ բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ)**




Ըստ ենթախմբերի 2007 թվականին ծախսերի տեսակարար կշիռը հեռուստատեսության և ռադիոյի ոլորտին ուղղված հատկացումներում կունենա հետևյալ պատկերը.

**Գծանկար 10.6. 2007 թվականին հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի պետական ծախսերի կառուցվածքը .**




Հիմք ընդունելով հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի հիմնական գերակայությունները և նպատակները՝ 2007-2009 թվականներին առաջնահերթությունը կտրվի շարունակական աշխատանքների հետևյալ ուղղություններին.

(i) Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանում:

(ii) Հանրային հեռուստաընկերության հաղորդումների պատրաստում և հեռարձակում (օրական 18 ժամ՝ 9 թեմատիկ ուղղություններով):

(iii) Հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակում արտասահմանում՝ արբանյակի վարձակալությամբ:

(iv) Հանրային ռադիոընկերության հաղորդումների պատրաստում և հեռարձակում ՀՀ տարածքում և արտասահմանում (օրական 50 ժամ՝ 9 թեմատիկ ուղղություններով):

(v) Շիրակի հանրային հեռուստառադիոյի հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում (օրական համապատասխանաբար՝ 4 և 24 ժամ):

(vi) Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության մշակութային և պատմական արժեք ներկայացնող հաղորդումների արխիվացում:

(vii) ՀՀ ռադիոհեռուստատեսության պահուստային բազայի պահպանում:

(viii) Հանրային հեռուստաընկերության տեխնիկական վերազինում:

(ix) Հանրային հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակելու համար հեռուստաֆիլմերի արտադրություն (ի տարբերություն նախորդ տարիների հեռուստաֆիլմերի արտադրությունը կիրականացվի Հանրային հեռուստաընկերության միջոցով):

(x) Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության հաղորդումների վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություն:

(xi) «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի ծախսեր :

(xii) Պետական գնումների հրապարակայնության ապահովում :

## 10.2..4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Բացի պետական բյուջեից ստացվող միջոցների հաշվին իրականացվող աշխատանքներից, ոլորտի կազմակերպություններն իրականացնում են նաև հովանավորչական հաղորդումների պատրաստման և հեռարձակման, առևտրային գովազդի հեռարձակման, վերահեռարձակման և այլ աշխատանքներ:

2007-2009 թվականներին ոլորտի ընկերությունները կշարունակեն իրականացնել վերոնշյալ գործունեության տեսակները և աշխատանքներ կտարվեն դրանցից ստացվող եկամուտների ծավալների ավելացման ուղղությամբ:

Վճարովի ծառայություններից ստացված եկամուտներն ուղղվում են կազմակերպությունների տեխնիկական վերազինմանը, աշխատողների աշխատավարձի վճարմանը, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքի ձեռքբերմանը:

Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեից և սեփական եկամուտների հաշվին իրականացվող և կանխատեսվող ծախսերը ներկայացված են Աղյուսակ N 10.11-ում:

**<u>Աղյուսակ 10.11.</u> Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեից և սեփական եկամուտների հաշվին (վճարովի ծառայությունների մուտքցում) իրականացվող և կանխատեսվող ծախսերը**

(մլն դրամ)

| Ընկերությունների անվանումը | 2005թ. փաստ. | | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին | սեփական եկամուտների հաշվին | ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին | սեփական եկամուտների հաշվին | ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին | սեփական եկամուտների հաշվին | ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին | սեփական եկամուտների հաշվին | ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին | սեփական եկամուտների հաշվին |
| 07.10.01 «Երևան» ստուդիա ՓԲԸ | 37.7 | 0.6 | 38.2 | | | | | | | |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %* | *98.4* | *1.6* | *100.0* | | | | | | | |
| 07.10.02 «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ | 2255.7 | 207.0 | 2267.5 | 461.0 | 2316.5 | 340.0 | 2316.5 | 400.0 | 2316.5 | 400.0 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %* | *91.6* | *8.4* | *83.1* | *16.9* | *87.2* | *12.8* | *85.3* | *14.7* | *85.3* | *14.7* |
| 07.10.03 «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ | 682.9 | 75.6 | 690.9 | 79.7 | 694.5 | 79.7 | 694.5 | 79.7 | 694.5 | 79.7 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %* | *90.0* | *10.0* | *89.7* | *10.3* | *89.7* | *10.3* | *89.7* | *10.3* | *89.7* | *10.3* |
| 07.10.04 «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ | 15.9 | 1.8 | 16.7 | 7.6 | 16.8 | 7.7 | 16.8 | 7.7 | 16.8 | 7.7 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %* | *89.8* | *10.2* | *68.7* | *31.3* | *68.6* | *31.4* | *68.6* | *31.4* | *68.6* | *31.4* |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 07.10.05 «Եթեր» ստեղծագործական տուն» ՓԲԸ | 5.9 | 14.9 | 6.2 | 12.5 | 6.3 | 12.5 | 6.3 | 12.5 | 6.3 | 12.5 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %* | *28.4* | *71.6* | *33.2* | *66.8* | *33.5* | *66.5* | *33.5* | *66.5* | *33.5* | *66.5* |
| 07.10.07 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ | 5.0 | 10.6 | 8.1 | 7.0 | 8.1 | 7.0 | 8.1 | 7.0 | 8.1 | 7.0 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %* | *32.1* | *67.9* | *53.6* | *46.4* | *53.6* | *46.4* | *53.6* | *46.4* | *53.6* | *46.4* |
| 07.10.08 «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ | 21.5 | 19.0 | 33.4 | 5.8 | 37.2 | 4.8 | 39.7 | 5.2 | 39.7 | 5.8 |
| *տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %* | *53.1* | *46.9* | *85.2* | *14.8* | *88.6* | *11.4* | *88.4* | *11.6* | *87.3* | *12.7* |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3024.6** | **329.5** | **3061.0** | **573.6** | **3079.4** | **451.7** | **3081.9** | **512.1** | **3081.9** | **512.7** |
| տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում % | 90.2 | 9.8 | 84.2 | 15.8 | 87.2 | 12.8 | 85.8 | 14.2 | 85.7 | 14.3 |

2005-2009 թվականների հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի բյուջետային հատկացումները՝ ըստ առանձին ենթախմբերի և ընթացիկ ու կապիտալ ծախսերի ներկայացված են Աղյուսակ 10.12-ում:

**Աղյուսակ 10.12. Ռադիոի և հեռուստատեսության ոլորտի բյուջետային հատկացումները 2005-2009թթ՝ ըստ գործառական դասակարգման ենթախմբերի և ընթացիկ ու կապիտալ ծախսերի (մլն դրամ)**

| N | Ենթախմբերի /ծրագրերի/ անվանումը | 2005 թ. փաստացի | 2006թ. հաստատված բյուջե | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3271.2** | **3376.4** | **3393.2** | **3397.5** | **3408.4** |
| | *ընթացիկ ծախսեր* | *3187.9* | *3141.3* | *3162.5* | *3167.7* | *3179.6* |
| | *կապիտալ ծախսեր* | *83.3* | *235.1* | *230.7* | *229.8* | *228.8* |
| **01.03.05** | **Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ** | **0.0** | **24.9** | **26.7** | **26.7** | **26.7** |
| | *ընթացիկ ծախսեր* | *0.0* | *24.9* | *26.7* | *26.7* | *26.7* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| **07.01.01** | **Պետական կառավարում** | **162.5** | **167.0** | **163.9** | **165.6** | **176.6** |
| | *ընթացիկ ծախսեր* | *143.6* | *162.0* | *163.9* | *165.6* | *176.6* |
| | *կապիտալ ծախսեր* | *18.9* | *5.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *այդ թվում* | | | | | |
| | Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ | 58.8 | 71.4 | 71.4 | 71.4 | 71.4 |
| | *ընթացիկ ծախսեր* | *58.8* | *71.4* | *71.4* | *71.4* | *71.4* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով | 103.6 | 95.7 | 92.5 | 94.2 | 105.2 |
| | *ընթացիկ ծախսեր* | *84.8* | *90.7* | *92.5* | *94.2* | *105.2* |
| | *կապիտալ ծախսեր* | *18.9* | *5.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| **07.10** | **Հեռուստառադիոհաղորդումներ** | **3108.7** | **3184.5** | **3202.6** | **3205.2** | **3205.2** |
| | *ընթացիկ ծախսեր* | *3044.3* | *2954.4* | *2971.9* | *2975.4* | *2976.4* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *կապիտալ ծախսեր* | *64.4* | *230.1* | *230.7* | *229.8* | *228.8* |
| | *այդ թվում* | | | | | |
| 07.10.01 | Հեռուստաֆիլմերի արտադրության գծով պետական պատվեր | 37.7 | 38.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *ընթացիկ ծախսեր* | *37.7* | *38.2* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Հայաստանի հանրային հեռուստառադիոընկե-րության խորհուրդ | 37.7 | 38.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.10.02 | Հեռուստահաղորդումների պատ-րաստման և հեռարձակման նպա-տակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային հեռուս-տաընկերություն» ՓԲԸ-ին | 2255.7 | 2267.5 | 2316.5 | 2316.5 | 2316.5 |
| | *ընթացիկ ծախսեր* | *2191.3* | *2039.1* | *2088.1* | *2088.1* | *2088.1* |
| | *կապիտալ ծախսեր* | *64.4* | *228.4* | *228.4* | *228.4* | *228.4* |
| | Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ | 2255.7 | 2267.5 | 2316.5 | 2316.5 | 2316.5 |
| 07.10.03 | Ռադիոհաղորդումների պատ-րաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին | 682.9 | 690.9 | 694.5 | 694.5 | 694.5 |
| | *ընթացիկ ծախսեր* | *682.9* | *690.9* | *694.5* | *694.5* | *694.5* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Հայաստանի հանրային հեռուստա-ռադիոընկերության խորհուրդ | 682.9 | 690.9 | 694.5 | 694.5 | 694.5 |
| 07.10.04 | Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Շիրակի հանրային հեռուսառադիո» ՓԲԸ-ին | 15.9 | 16.7 | 16.8 | 16.8 | 16.8 |
| | *ընթացիկ ծախսեր* | *15.9* | *16.7* | *16.8* | *16.8* | *16.8* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ | 15.9 | 16.7 | 16.8 | 16.8 | 16.8 |
| 07.10.05 | Պահուստային բազայի պահպան-ման նպատակով պետական աջակ-ցություն «Եթեր ստեղծագործական տուն» ՓԲԸ-ին | 5.9 | 6.2 | 6.3 | 6.3 | 6.3 |
| | *ընթացիկ ծախսեր* | *5.9* | *6.2* | *6.3* | *6.3* | *6.3* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Հայաստանի հանրային հեռուստա-ռադիոընկերության խորհուրդ | 5.9 | 6.2 | 6.3 | 6.3 | 6.3 |
| 07.10.06 | «Միր» միջպետական հեռուստա-ռադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժին | 48.7 | 60.7 | 60.7 | 60.7 | 60.7 |
| | *ընթացիկ ծախսեր* | *48.7* | *60.7* | *60.7* | *60.7* | *60.7* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն | 48.7 | 60.7 | 60.7 | 60.7 | 60.7 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 07.10.07 | Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով պետական աջակցություն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին | 5.0 | 8.1 | 8.1 | 8.1 | 8.1 |
| | *ընթացիկ ծախսեր* | *5.0* | *8.1* | *8.1* | *8.1* | *8.1* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ | 5.0 | 8.1 | 8.1 | 8.1 | 8.1 |
| 07.10.08 | Պետական աջակցություն «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին | 21.5 | 33.4 | 37.2 | 39.7 | 39.7 |
| | *ընթացիկ ծախսեր* | *21.5* | *31.7* | *34.8* | *38.3* | *39.3* |
| | *կապիտալ ծախսեր* | 0.0 | 1.7 | 2.4 | 1.4 | 0.4 |
| | ՀՀ կառավարության աշխատակազմ | 21.5 | 33.4 | 37.2 | 39.7 | 39.7 |
| 07.10.09 | Պետական գնումների հրապարակայնության ապահովման գծով պետական պատվեր | 35.4 | 62.7 | 62.7 | 62.7 | 62.7 |
| | *ընթացիկ ծախսեր* | *35.4* | *62.7* | *62.7* | *62.7* | *62.7* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 35.4 | 62.7 | 62.7 | 62.7 | 62.7 |
| | *ընդամենի նկատմամբ, տոկոս* | | | | | |
| 01.03.05 | Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ | 0.0 | 0.7 | 0.8 | 0.8 | 0.8 |
| 07.01.01 | Պետական կառավարում | 5.0 | 4.9 | 4.8 | 4.9 | 5.2 |
| 07.10 | Հեռուստառադիոհաղորդումներ | 95.0 | 94.3 | 94.4 | 94.3 | 94.0 |
| | *փոփոխ. նախորդ տարվա նկատմամբ, տոկոս* | | | | | |
| | Ընդամենը | 0.0 | 3.2 | 0.5 | 0.1 | 0.3 |
| 01.03.05 | Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ | 0.0 | 0.0 | 7.1 | 0.0 | 0.0 |
| 07.01.01 | Պետական կառավարում | 0.0 | 2.8 | -1.9 | 1.0 | 6.6 |
| 07.10 | Հեռուստառադիոհաղորդումներ | 0.0 | 2.4 | 0.6 | 0.1 | 0.0 |

## 10.3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն 24 ծրագրերի իրականացմանը: Նշված ծրագրերը կիրականացվեն երեք պետական կառավարման մարմինների միջոցով, ինչն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ենթախմբերի ներկայացված է Աղյուսակ 10.14-ում:

### 10.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2007-2009թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրի իրականացումը ենթադրում է մի շարք հիմնական խնդիրների լուծում, որոնք ներկայումս գտնվում են ՀՀ կառավարության առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի ուշադրության կենտրոնում.

Զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական համայնքային, տարածաշրջանային,

մարզային և հանրապետական միջոցառումների անցկացում, հանրապետական փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային - առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, 2008 թվականին Պեկինի պարալիմպիկ խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության հաշմանդամ մարզիկների մասնակցության ապահովում, ամենամյա պետական գույքային ծրագրի շրջանակներում ֆիզկուլտուրային, մարզական կազմակերպություններին մարզագույքի հատկացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչության և առողջ ապրելակերպի արմատավորման պրոպագանդմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերի, խնդիրների հետ ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-խորհրդակցությունների անցկացում, բնակչության, մասնավորապես ուսումնական հաստատություններում, ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում :

2005 թվականին Օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման ծրագրի իրականացման նպատակն է եղել 2006 թվականին Թուրինի (Իտալիա) 20-րդ ձմեռային օլիմպիական խաղերի վարկանիշային միջազգային մրցումներին, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին լավագույն ձևով նախապատրաստվելու և մասնակցելու ուղղությամբ տարվող աշխատանքների իրականացումը:

Օլիմպիական մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և մարզական ընկերությունների համագործակցությամբ անց են կացվել Հայաստանի Հանրապետության 43 առաջնություններ, որոնց մասնակցել են 3697 մարզիկներ:

Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցումներին (այդ թվում վարկանիշային) նախապատրաստվելու նպատակով, մարզաձևերի ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված 1145 մարզիկների համար կազմակերպվել են 77 ուսումնամարզական հավաքներ:

Տարբեր մարզաձևերի ՀՀ հավաքական թիմերի 594 մարզիկներ 77 անգամ մասնակցել են աշխարհի և Եվրոպայի առաջնությունների:

Տարբեր մարզաձևերի ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկները 2005թվականին աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և գավաթի խաղարկություններում նվաճել են 67 մեդալ, որից 9-ը` ոսկե: Բացի այդ ՄՕԿ-ի կողմից ճանաչված ոչ օլիմպիական 2 մարզաձևից (շախմատ, ուշու) և սամբո ըմբշամարտից ևս 22 մեդալ, որից 4-ը` ոսկե:

Թուրինի (Իտալիա) 20-րդ ձմեռային օլիմպիական խաղերի մասնակցության իրավունք են ձեռք բերել 5 մարզիկ, այդ թվում 2 դահուկորդ, մեկ լեռնադահուկորդ և գեղասահքի պարային զույգը:

2005 թվականին ավելացել է ուսումնամարզական հավաքների և ՀՀ առաջնությունների մասնակիցների սննդի, գիշերավարձի, մրցավարների օրապահիկի, ինչպես նաև ՀՀ առաջնության մրցանակակիրների և նրանց մարզիչների պարգևատրման գումարի չափը:

2005 թվականին աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկների հետ պարգևատրվել են նաև ՀՀ հավաքական թիմերի 2-րդ մարզիչները և բժիշկները:

Ներկայումս ոչ օլիմպիական մարզաձևերի ցանկում ընդգրկված մարզաձևերով (սպորտային պարեր, ուշու, կարատե, շաշկի, կոխ, բիլիարդ) Հայաստանի Հանրապետությունում մարզվում են 8700 պատանիներ և երիտասարդներ: Գործում են 147 մարզական ակումբներ 740 մարզիչներով: Պետական կառավարման մարմնի հետ համատեղ, ոլորտի առջև դրված խնդիրների լուծմամբ զբաղվում են են նշված մարզաձևերի ազգային ֆեդերացիաները, որոնք վերջին 2 տարիների ընթացքում միջազգային պաշտոնական առաջնություններից չեն վերադարձել ձեռնունայն, նվաճել են 22 ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ: Սպորտի ոլորտի կառուցվածքային բարեփոխումների, պետական աջակցության շնորհիվ, հատկապես բարձրակարգ մարզիկների պատրաստման, նրանց մարզիչների նյութական ապահովման, ոչ օլիմպիական մարզաձևերի ավանդույթների աստիճանական վերականգնման գործում նկատվում է դրական առաջընթաց: Այդ մասին են վկայում վերը նշված նվաճումները:

Ոչ օլիմպիական մարզաձևերի հիմնական խնդիրներն են՝ ազգաբնակչության առողջության ամրապնդումը,, ֆիզիկական դաստիարակությամբ զբաղվողների ապահովումը, բարձրակարգ մարզիկների պատարաստումը, միջազգային մրցասպարեզներում հայ մարզիկների վարկանիշի բարձրացումը, հանրապետական մարզական առաջնությունների անցկացումը, պատանիների և երիտասարդների գեղագիտական և էսթետիկական զարգացումը, ազգային բանակ զորակոչվող ֆիզիկապես և հոգեպես ուժեղ երիտասարդների դաստիարակումը:

Հայաստանում մանկապատանեկան սպորտի ոլորտում կարևորագույն խնդիրները շարունակվում են համարվել մատաղ սերնդի առողջության պահպանումն ու ամրապնդումը, պարապողների մարզական ունակությունների կատարելագործում ընտրած մարզաձևում ՀՀ հավաքական թիմերի համար մարզական հերթափոխի պատրաստումը, միջազգային ասպարեզում նրանց մրցունակության ապահովումը:

Այդ խնդիրները լուծելու նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն իր քաղաքականության առաջնահերթ ուղղություններն է համարում մարզական հերթափոխի պատրաստման համակարգի պահպանումն ու զարգացումը, մարզադպրոցների ցանցի ընդլայնումը: ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի ենթակայության մարզադպրոցների թիվը 2005 թվականին ավելացել է ևս 3-ով, և ընթացիկ տարվա չորրորդ եռամսյակի սկզբին Երևան քաղաքում և հանրապետության 5 մարզերում գործում են 25 մանկապատանեկան մարզադպրոցներ, օլիմպիական հերթափոխի պետական մարզական 2 քոլեջ և հեծանվային սպորտի «Էրեբունի» մարզական կենտրոնը:

ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորում է նաև հասարակական մարզական կազմակերպությունների 23 մարզադպրոցներ, որոնք կոչված են պատրաստելու մարզական հերթափոխ:

Վերջին տարիներին կառավարության կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում, մասնավորապես մանկապատանեկան սպորտում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել մարզադպրոցների ջեռուցման համակարգի և շենքային բարենպաստ պայմանների ապահովմանը, նրանց նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

2005 թվականին պետական բյուջեից և «Հայաստան» համահայկական հիմնադրամից զգալի միջոցներ են հատկացվել Երևան քաղաքի և մարզերի մարզակառույցների հիմնանորոգման և կապիտալ շինարարության համար: Մարզակառույցների հիմնանորոգման և կապիտալ

շինարարության աշխատանքները շարունակական են նաև 2006-2008 թվականներին: Միաժամանակ, մարզադպրոցների նյութատեխնիկական բազայի ամրապնդման համար 2005-2006 թվականներին պետական բյուջեից զգալի միջոցներ են նախատեսվել մարզակառույցները մարզական գույքով և սարքավորումներով ապահովելու համար:

«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան մշակվել են հետևյալ նորմատիվ իրավական ակտերը. մարզիչ-մանկավարժների որակավորման կարգը, մարզական կազմակերպությունների ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական գործունեության իրականացման կարգը, մանուկների և պատանիների ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանները, Ֆիզիկական արատներ ունեցող կամ հաշմանդամ երեխաների համար առանձին ուսումնամարզական պարապմունքների իրականացման կարգը:

Չնայած վերը նշված դրական տեղաշարժերին, դեռևս կան չլուծված հիմնախնդիրներ, որոնց լուծումը կնպաստի արտադպրոցական հիմնարկների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և ուսումնամարզական խմբերում ընդգրկված երեխաների թվի տարեցտարի ավելացմանը:

Չնայած մարզադպրոցների շենքային պայմանների բարելավման նպատակով ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումներին, այնուամենայնիվ, ուսումնանյութատեխնիկական բազայի և ջեռուցման ուղղությամբ նախատեսված հատկացումները անբավարար են, չեն համապատասխանում իրական պահանջներին: Ցածր է նաև օլիմպիական հերթափոխի քոլեջների ուսանողների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվը:

Մարզիչ-մանկավարժների մասնագիտական որակը բարելավման կարիք ունի: Երկար տարիներ մարզչական կադրերի համար չեն անցկացվել վերապատրաստման դասընթացներ:

**Արտադպրոցական ուսուցում**

ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի ենթակայության և պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների համակարգում ներկայումս գործում են 30 մանկապատանեկան մարզադպրոցներ կամ հանրապետությունում գործող 165 մարզադպրոցների 29.1%-ը: 2005 թվականին ուսումնական խմբերի թիվը կազմել է 1343՝ 2004 թվականի 1220-ի դիմաց:

ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող մարզադպրոցներում և «Դինամո» մարզական հասարակական կազմակերպության մարզական խմբակներում ներկայումս մարզվում են 14107 աշակերտներ 2004 թվականի 13288-ի դիմաց:

Ուսումնական խմբերի և այդ խմբերում պարապողների թվի աճը՝ համապատասխանաբար 10.1 և 6.2%-ով պայմանավորված է վերջին տարիներին ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի կողմից մանկապատանեկան սպորտի ոլորտում հետևողականորեն իրականացված միջոցառումներով, որոնք ուղղված են եղել մարզադպրոցների արդյունավետության բարձրացմանն ու մարզումների անցկացման համար բարենպաստ պայմանների ապահովմանը, ինչպես նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործմանը:

Հաշվի առնելով, որ 2005 թվականին բացվել են 3 նոր մարզադպրոցներ, բնականաբար աճել է նաև բաժանմունքների քանակը: Ներկայումս գործում են 105 բաժանմունքներ 28 մարզաձևերից:

Վերջին տարիներին առաջնահերթ խնդիրը համարելով մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների աշխատավարձի բարձրացումը, ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն հետևողականորեն իրականացնում է տնտեսված միջոցների հաշվին աշխատավարձի բարձրացման քաղաքականությունը: Մասնավորապես, մարզիչ-մանկավարժների միջին ամսական աշխատավարձը 2004-2005թվականներին բարձրացվել է 40 տոկոսով՝ հասցնելով 28.0 հազար դրամի:

Միաժամանակ մարզադպրոցի մարզիչ-մանկավարժը՝ որպես արտադպրոցական հիմնարկի մանկավարժ, իրականացնում է նույնատիպ ուսումնադաստիարակչական, մանկավարժական գործունեություն շաբաթական 24-36 ժամ ուսումնական ծանրաբեռնվածությամբ, սակայն նրա վարձատրությունը զգալի չափով ավելի ցածր է, քան հանրակրթական դպրոցներում՝ շաբաթական 22 ժամ ուսումնական ծանրաբեռնվածությամբ աշխատող ուսուցչի, այդ թվում՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկա դասավանդող մանկավարժի, միջին ամսական աշխատավարձը, որը 2005թվականին կազմել է շուրջ 50.2 հազար դրամ:

Հարկ է նշել, որ հանրապետության 165 մարզադպրոցներում աշխատում են 1780 մարզիչ, այդ թվում՝ ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող մարզադպրոցների 591 մասնագետներ, որոնցից 121-ին շնորհված է վաստակավոր մարզիչ կոչումը:

**Միջին մասնագիտական կրթություն**

Ներկայումս հանրապետությունում գործող Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջներում 2005թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ սովորում են համապատասխանաբար՝ 460 և 285 ուսանող: 514 ուսանող ստանում են կրթաթոշակ:

Օլիմպիական հերթափոխի քոլեջը եզակի նշանակություն ունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն է՝ գիշերօթիկ ուղղվածությամբ, որը կոչված է ապահովելու մարզական որակյալ մասնագետներ պատրաստելու, հանրապետության հավաքական թիմերի թեկնածուներ:

Քոլեջներում ուսուցումն իրականացվում է անվճար հիմունքներով: Քոլեջները ուսումնական աշխատանքները կազմակերպում են ավագ դպրոցի և միջին մասնագիտական ծրագրերի «Ֆիզիկական կուլտուրա» «0307» մասնագիտությամբ:

Ուսումնական ծրագրերով դասավանդումը և շուրջամյա ուսումնամարզական աշխատանքները երկու քոլեջներում կազմակերպում են 59 ուսուցիչ ու դասախոս, 50 մարզիչ-մանկավարժներ, որոնցից 21-ը ունենն վաստակավոր մարզչի կոչում:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով 2005 թվականին նորոգվեցին Երևանի քոլեջի, ըմբշամարտի, բռնցքամարտի, ծանրամարտի և ծյուդոյի մարզադահլիճները: 2006 թվականին «Հայաստան» համահայկական և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով նախատեսվում է շարունակել քոլեջի ուսումնական ճաշարանային և ննջարանային

շենքերի վերանորոգման աշխատանքները:

## 10.3.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 10.3.2.1.Նպատակները

ՀՀ 2007-2009թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի հիմնական նպատակներն են.

- բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը,
- տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիությունը,
- հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը,
- բարձրակարգ մարզիկների պատրաստումը, Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում և այլ միջազգային մրցասպարեզներում երկրի վարկանիշի բարձրացման նպատակով ՀՀ հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:

### 10.3.2.2.Գերակայությունները

ՀՀ 2007-2009թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով ՀՀ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի հիմնական գերակայություններն են.

- օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստումը,
- ազգաբնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովումը:

Օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստումը ապահովելու նպատակով ՀՀ 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն.

ա/ 2008 թվականին Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին նախապատրաստությանը և մասնակցությանը,

բ/ աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մասնակցության ապահովման, օլիմպիական խաղերին, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին ու միջազգային մրցաշարերին լավագույն ձևով նախապատրաստվելու նպատակով ուսումնամարզական հավաքների կազմակերպման, ՀՀ առաջնությունների անցկացման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին պետական աջակցմանը,

գ/ 2007 թվականին համահայկական 4-րդ խաղերի անցկացմանը,

դ/ Օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում, գավաթի խաղարկություններում հաղթողների և մրցանակակիրների խրախուսման ապահովմանը :

Բացի վերը նշվածից, ՀՀ 2007-2009թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն.

ա/ ֆիզկուլտուրային առողջարարական զանգվածային հանրապետական և մարզային միջոցառումների անցկացմանը ,

բ/ հաշմանդամային և նավամոդելային սպորտին պետական աջակցմանը,

գ/ մարզադպրոցներին, հանրակրթական դպրոցներին անհրաժեշտ, պահանջարկին համապատասխան, մարզագույքով ապահովմանը:

2006-2008 և 2007-2009 թվականների միջնաժամկետ ծրագրերով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի համար նախատեսված հատկացումները ներկայացված են Աղյուսակ 10.13.-ում:

**<u>Աղյուսակ 10.13.</u> Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի բյուջետային հատկացումները 2006-2009թթ` ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ենթախմբերի (մլն դրամ)**

| Խումբ, ենթախումբ | Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2006 թ. | | 2007 թ. | | 2008 թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2006-2008թթ ՄԺԾԾ | ՀՀ հաստատված բյուջեի | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | |
| 07.01. | Պետական կառավարում | 117.9 | 132.1 | 136.0 | 140.6 | 155.5 | 144.4 | 159.0 |
| 07.09. | Սպորտային միջոցառումներ | 1.082.5 | 1.175.4 | 1.097.7 | 1.314.0 | 1.086.4 | 1.269.3 | 1.199.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1.200.4** | **1.307.4** | **1.233.7** | **1.454.6** | **1.241.9** | **1.413.8** | **1.358.0** |

Ծախսերի աճը 2007-2009 թվականների առաջարկվող և հաստատված ՄԺԾԾ-ի գծով համապատասխանաբար` 220.9 և 171.8 մլն դրամով հիմնականում պայմանավորված է սպորտային միջոցառումների ծախսերի աճով:

**10..3.2.3. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները**

ՀՀ 2007-2009 թվականներին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտին ուղղվող հատկացումները կաճեն 50.6 մլն դրամով, ինչը պայմանավորված է.

- Կառավարման ապարատի ծախսերի ավելացմամբ` 26.9 մլն դրամով,
- սպորտային միջոցառումների ծախսերի ավելացմամբ` 23.7 մլն դրամով:

**10.3..3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ**

ՀՀ 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտին (ներառյալ կառավարման ապարատի ծախսերը) նախատեսվում է ուղղել` 2007 թվականին` 1454.6 մլն դրամ, 2008 թվականին` 1413.8 մլն դրամ, 2009 թվականին` 1358.0 մլն դրամ: Ծախսերի աճը կկազմի` 2006 թվականին` 10.9% 2005 թվականի փաստացիի նկատմամբ, 2007 թվականին` 11.3% 2006 թվականի հաստատվածի նկատմամբ: 2008-2009 թվականների ծախսերը կնվազեն 2008 թվականին` 2.8 %-ով 2007 թվականի նկատմամբ, 2009 թվականին` 3.9 %-ով 2008 թվականի նկատմամբ:

ՀՀ 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և

սպորտի ոլորտի պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կկազմի 2007-2008 թվականներին, յուրաքանչյուր տարի՝ 0.05%, 2009 թվականին՝ 0.04%:

ՀՀ 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում կունենա հետևյալ պատկերը.

**Գծանկար 10.7. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտին ուղղվող պետական ծախսերը (%՝ բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ)**




ՀՀ 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի հատկացումները նախատեսվում է ուղղել.

- Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին մասնակցության ապահովմանը՝ 2008թվականին՝ 89.0 մլն դրամ,
- Համահայկական չորրորդ խաղերի անցկացմանը 2007 թվականին՝ 80.0 մլն դրամ,
- աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, միջազգային մրցաշարերին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մասնակցության, ուսումնամարզական հավաքների, Հայաստանի Հանրապետության առաջնությունների անցկացման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին պետական աջակցմանը 2007 թվականին՝ 764.3 մլն դրամ, իսկ 2008-2009 թվականներին, յուրաքանչյուր տարի՝ 729.3 մլն դրամ:
- Օլիմպիական խաղերում, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում և գավաթի խաղարկություններում հաղթողների և մրցանակակիրների խրախուսմանը, յուրաքանչյուր տարի՝ 50.0 մլն դրամ,
- ՀՀ հավաքական թիմերին անհրաժեշտ մարզական գույքով ու հանդերձանքով ապահովմանը, յուրաքանչյուր տարի՝ 12.0 մլն դրամ,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական ծրագրի իրականացմանը, յուրաքանչյուր տարի՝ 225.0 մլն դրամ,
- Համաշխարհային ունիվերսիադային և ուսանողական մարզական խաղերին մասնակցությանը, համապատասխանաբար՝ 23.0, 4.4 և 23.0 մլն դրամ,
- հաշմանդամային սպորտին պետական աջակցմանը, յուրաաքնչուր տարի՝ 9.0 մլն դրամ,

- նավամոդելային սպորտին պետական աջակցմանը, յուրաքանչյուր տարի` 5.5 մլն դրամ
- «Չեսս» շախմատային ակադեմիային պետական աջակցմանը, յուրաքանչյուր տարի` 55.1 մլն դրամ,
- այլ սպորտային միջոցառումների անցկացմանը, յուրաքանչյուր տարի` 90.1 մլն դրամ:

**Աղյուսակ 10.14. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի բյուջետային հատկացումները 2005-2009թթ` ըստ գործառական դասակարգման ենթախմբերի, ծրագրերի և ընթացիկ ու կապիտալ ծախսերի (մլն դրամ)**

| N | ենթախմբերի /ծրագրերի/ անվանումը | 2005թ. փաստացի | 2006թ. հաստատված բյուջե | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1178.5** | **1307.4** | **1454.6** | **1413.8** | **1358.0** |
| | ընթացիկ ծախսեր | 1157.5 | 1296.2 | 1454.6 | 1413.8 | 1358.0 |
| | կապիտալ ծախսեր | 21.0 | 11.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| **07.01.01.** | Պետական կառավարում, այդ թվում | **95.2** | **132.1** | **140.6** | **144.4** | **159.0** |
| | ընթացիկ ծախսեր | 74.2 | 120.9 | 140.6 | 144.4 | 159.0 |
| | կապիտալ ծախսեր | 21.0 | 11.2 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 95.2 | 132.1 | 140.6 | 144.4 | 159.0 |
| **07.09.** | **Սպորտ** | **1083.3** | **1175.4** | **1314.0** | **1269.3** | **1199.0** |
| | ընթացիկ ծախսեր | 1083.3 | 1175.4 | 1314.0 | 1269.3 | 1199.0 |
| 07.09.01. | Մարզաձևերի զարգացման նպատակով պետական աջակցություն ՀՀ մարզական ֆեդերացիաներին | 596.6 | 684.3 | 764.3 | 729.3 | 729.3 |
| | ընթացիկ ծախսեր | 596.6 | 684.3 | 764.3 | 729.3 | 729.3 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 596.6 | 684.3 | 764.3 | 729.3 | 729.3 |
| 07.09.02. | Պետական աջակցություն «Չեսս» շախմատային ակադեմիա» հիմնադրամին | 55.0 | 55.0 | 55.1 | 55.1 | 55.1 |
| | ընթացիկ ծախսեր | 55.0 | 55.0 | 55.1 | 55.1 | 55.1 |
| | ՀՀ կառավարության աշխատակազմ | 55.0 | 55.0 | 55.1 | 55.1 | 55.1 |
| 07.09.03. | Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2007-2009թթ. պետական ծրագրի իրականացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 178.9 | 225.0 | 225.0 | 225.0 | 225.0 |
| | ընթացիկ ծախսեր | 178.9 | 225.0 | 225.0 | 225.0 | 225.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 178.9 | 225.0 | 225.0 | 225.0 | 225.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 07.09.04. | Օլիմպիական խաղերում, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և գավաթի խաղարկություններում հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի | 57.7 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 |
| | ընթացիկ ծախսեր | 57.7 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 57.7 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 |
| 07.09.05. | ՀՀ հավաքական թիմերին մարզագույքով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի | 5.0 | 12.0 | 12.0 | 12.0 | 12.0 |
| | ընթացիկ ծախսեր | 5.0 | 12.0 | 12.0 | 12.0 | 12.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 5.0 | 12.0 | 12.0 | 12.0 | 12.0 |
| 07.09.06. | Ուսանողական մարզական խաղերի անցկացման նպատակով պետական աջակցություն ՀՀ ուսանողական մարզական ֆեդերացիային | 0.0 | 2.8 | 0.0 | 4.4 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 2.8 | 0.0 | 4.4 | 0.0 |
| | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 0.0 | 2.8 | 0.0 | 4.4 | 0.0 |
| 07.09.07. | Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 5-րդ մարզական խաղերի անցկացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 |
| 07.09.08. | ՀՀ մարզերում, Երևանում և ԼՂՀ-ում ազգային մարզաձևերի փառատոնի անցկացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 6.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 6.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 6.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 07.09.09. | Գիտամեթոդական գրականության, Եվրոպայի խորհրդի սպորտի կոմիտեի նյութերի, միջազգային առաջատար փորձի տարածման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| 07.09.10. | Հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանների միջև ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության անցկացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 |
| | ընթացիկ ծախսեր | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 |
| 07.09.11. | «Հուսո Գավաթ» հանրապետական ֆուտբոլային փառատոնի անցկացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 |
| | ընթացիկ ծախսեր | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 |
| 07.09.12. | Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 |
| | ընթացիկ ծախսեր | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 |
| 07.09.13. | ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 |
| | ընթացիկ ծախսեր | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 |
| 07.09.14. | Հանրապետական մարզային և տարածաշրջանային սեմինար-խորհրդակցությունների, կլոր սեղանների կազմակերպման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 |
| 07.09.15. | ՀՀ մարզերի միջև ֆուտբոլի առաջնության անցկացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 |
| 07.09.16. | Պետական աջակցություն հաշմանդամային սպորտով զբաղվող մարզական կազմակերպություններին | 0.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 9.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 9.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 9.0 |
| 07.09.17. | Թուրինի 20-րդ ձմեռային օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 29.3 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 29.3 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 29.3 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.09.19. | ՀՀ-ում կազմակերպվող մինչև 20 տարեկան պատանիների և աղջիկների շախմատի Աշխարհի առաջնության անցկացման նպատակով պետական աջակցություն Հայաստանի շախմատային ֆեդերացիային | 0.0 | 18.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 18.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 18.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 07.09.20. | Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով պետական աջակցություն ՀՀ նավամոդելային սպորտի ֆեդերացիային | 0.0 | 5.5 | 5.5 | 5.5 | 5.5 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 5.5 | 5.5 | 5.5 | 5.5 |
| | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 0.0 | 5.5 | 5.5 | 5.5 | 5.5 |
| 07.09.21. | Պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 10.2 | 15.8 | 15.8 | 15.8 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 10.2 | 15.8 | 15.8 | 15.8 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 10.2 | 15.8 | 15.8 | 15.8 |
| 07.09.22. | ՀՀ հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի 8 չեմպիոնների թոշակի հատկացման գծով պետական աջակցություն «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ -ին | 17.3 | 17.3 | 17.3 | 17.3 | 17.3 |
| | ընթացիկ ծախսեր | 17.3 | 17.3 | 17.3 | 17.3 | 17.3 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 17.3 | 17.3 | 17.3 | 17.3 | 17.3 |
| 07.09. | Եվրոպայի առաջնությանը ֆուտբոլի ազգային պատանեկան հավաքականների մասնակցության ապահովման նպատակով պետական աջակցություն ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիային | 50.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 50.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 50.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.09. | Համաշխարհային ունիվերսիադային ՀՀ ուսանող - մարզիկների մասնակցության ապահովման նպատակով պետական աջակցություն ՀՀ ուսանողական մարզական ֆեդերացիային | 22.9 | 0.0 | 23.0 | 0.0 | 23.0 |
| | ընթացիկ ծախսեր | 22.9 | 0.0 | 23.0 | 0.0 | 23.0 |
| | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 22.9 | 0.0 | 23.0 | 0.0 | 23.0 |
| 07.09. | «Հատուկ օլիմպիադաներ» միջ-ազգային կազմակերպության ձմեռային խաղերին մասնակ-ցության ապահովման գծով պետական պատվեր | 2.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 2.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 2.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.09. | Պետական աջակցություն Կ. Դեմիրճյանի անվան մարզամ-շակութային կենտրոն» ՊՈԱԿ-ին | 19.2 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 19.2 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 19.2 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.09. | ՀՀ հավաքական թիմերին անհրաժեշտ վիտամիններով, դեղամիջոցներով և վերականգնողական միջոցներով ապահովման գծով պետական պատվեր | 8.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 8.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 8.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.09. | Հաշմանդամների հանրապետական մարզական խաղերի և «Հատուկ օլիմպիադաներ» միջազգային կազմակերպության ծրագրի շրջանակներում մարզական փառատոնի անցկացման գծով պետական պատվեր | 3.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 3.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 3.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.09. | ՀՀ մարզերում, մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների միջև սպորտային խաղերի անցկացման գծով պետական պատվեր | 39.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 39.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 39.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 07.09. | Համահայկական չորրորդ խաղերի անցկացման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 0.0 | 80.0 | 0.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 0.0 | 80.0 | 0.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 0.0 | 80.0 | 0.0 | 0.0 |
| 07.09. | Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման նպատակով պետական աջակցություն «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.0 | 0.0 | 0.0 | 89.0 | 0.0 |
| | ընթացիկ ծախսեր | 0.0 | 0.0 | 0.0 | 89.0 | 0.0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե | 0.0 | 0.0 | 0.0 | 89.0 | 0.0 |
| | ընդամենի նկատմամբ, տոկոս | | | | | |
| 07.01.01 | Պետական կառավարում | 8.1 | 10.1 | 9.7 | 10.2 | 11.7 |
| 07.09 | Սպորտ | 91.9 | 89.9 | 90.3 | 89.8 | 88.3 |
| | փոփոխ. նախորդ տարվա նկատմամբ, տոկոս | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | 0.0 | 10.9 | 11.3 | -2.8 | -3.9 |
| 07.01.01 | Պետական կառավարում | 0.0 | 38.8 | 6.5 | 2.7 | 10.1 |
| 07.09 | Սպորտ | 0.0 | 8.5 | 11.8 | -3.4 | -5.5 |

# ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## 11.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ ագրոպարենային համակարգը, տալիս է երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 30%-ը, գյուղատնտեսության մասնաբաժինը վերջին 3 տարիներին կազմել է 22.5%: Ներկայումս ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է 338 հազարից ավելի գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Հանրապետության գյուղատնտեսական արտադրության հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք տնօրինում են վարելահողերի 76.2%-ը, խոտհարքների՝ 45.1-ը և բազմամյա տնկարկների գերակշռող մասը:

Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 98 % արտադրվում է մասնավոր հատվածի կողմից: 2004թ. տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի 57.3 % բաժին է ընկնում բուսաբուծությանը, իսկ 42.7 տոկոսը անասնապահությանը:

### 11.1.1. Գյուղատնտեսության զարգացման միտումները

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից, կարևորվում է անցումային ժամանակաշրջանում գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, պարենային ու սննդամթերքի անվտանգության ապահովմանը և այլն:

Հանրապետության գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսվարող սուբյեկտների արդյունավետ գործունեության և վարվող քաղաքականության արդյունքում 2005 թ. ապահովվել է տնտեսական աճ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2004թ. կազմել է 504.1 մլրդ դրամ, որը 2003թ. մակարդակը գերազանցել է 14.5%-ով: Բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 283.9 մլրդ դրամ, իսկ անասնապահությանը՝ 220.2 մլրդ դրամ և աճը համապատասխանաբար կազմել է 20.1% և 7.9%: 2005 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը նախորդ տարվա նկատմամբ նախնական տվյալներով, կազմել է 10.3%:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսվարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի (կարտոֆիլ, հացահատիկ), տնկիների, հանքային պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների մատակարարման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Արդյունքում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններ 2004 թ. կազմել են 325.2 հազ. հա, նախորդ տարվա 314.6 հազ. հա դիմաց, 2005 թ.՝ 329.0

հազ.հա: Բուսաբուծության համախառն արտադրանքի մեջ աճը հիմնականում ապահովվել է ինտենսիվ գործոնի հաշվին:

Վերջին տարիներին նկատելիորեն ակտիվացել է խաղողի և պտղատու այգիների հիմնման գործընթացը: Դա պայմանավորված է խաղողի և պտղի իրացման հիմնախնդրի մեղմացմամբ և ոռոգման համակարգերի զարգացմամբ: 2005 թ. հիմնվել է 1194 հա խաղողի և 1309 հա պտղատու այգիներ:

2005 թ. նախորդ տարվա համեմատությամբ նախնական տվյալներով որոշակիորեն ավելացել է խոշոր եղջերավորների և խոզերի գլխաքանակը, ինչպես նաև անասնաբուծական մթերքների արտադրության ծավալները: Ըստ օպերատիվ տվյալների` խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացել է 6.0%, խոզերինը` 17.1 % :

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները 2004 թ. նախորդ տարվա նկատմամբ ավելացել է` մսինը` 5.1%, կաթինը` 9.5%:

Գործող վերամշակող ընկերությունների կարողությունների ընդլայնման և նոր ընկերությունների գործարկման շնորհիվ 2005թ. հնարավորություն էր ստեղծվել գնելու գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող պտղի, բանջարեղենի և խաղողի ողջ քանակությունը: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ընկերությունների կողմից 2005թ. գնվել և վերամշակվել է 95.6 հազ. տոննա խաղող` նախորդ տարվա 79.5 հազ. տոննայի դիմաց: Զգալիորեն ավելացել է պտղի և բանջարեղենի գնումների ծավալները, այն համապատասխանաբար կազմել է 20.7 և 42.8 հազ.տոննա, նախորդ տարվա 4.4 և 35.8 հազ.տոննայի դիմաց:

Շնորհիվ գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակող կազմակերպությունների միջև պայմանագրային հարաբերությունների արմատավորման, ապրանքի դիմաց վճարումների անմիջական իրականացման, որոշակիորեն բարելավվել է գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցների համալրումը:

### 11.1.2.Գյուղատնտեսության հիմնական խնդիրները

Գյուղատնտեսության առջև ծառացած են հետևյալ հիմնական խնդիրները, որոնք բխում են Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրից և ներառված են ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունում.

- Ագրարային բարեփոխումների խորացումը, շուկայական ենթակառուցվածքների զարգացումը և տնտեսավարման ձևերի կատարելագործումը:
- Պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացումը, սննդի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովումը:
- Բուսաբուծության ճյուղում ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգի ներդրմանը նպաստելը, սերմնաբուծության, սելեկցիայի, բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների արդյունավետ իրականացման ապահովումը:
- Անասնաբուծության ոլորտում տոհմային գործի զարգացմանը և անասնաբուժության համակարգի բարելավմանն աջակցությունը:

- Գյուղատնտեսական հումքի վերամշակման, գյուղատնտեսության սպասարկող և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը նպաստելը:

Վերը նշված խնդիրների լուծումը կնպաստի գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը, հետևաբար նաև գյուղական բնակավայրերում աղքատության կրճատմանը, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

## 11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 11.2.1 Նպատակները

Գյուղատնտեսությունում 2007-2009 թ.թ. վարվող քաղաքականությունը կնպատակաուղղվի ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը, որի հետևանքով պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, բնակչության աղքատության նվազեցման համար:

Գյուղատնտեսության ոլորտում 2007-2009թ.թ. միջնաժամկետ ծրագիրը կապահովի հետևյալ կոնկրետ նպատակների իրականացումը.

- Հողերի բերրիության պահպանում և բարձրացում – հողերի մելիորատիվ վիճակի գնահատում, հողատեսքերի երկրորդական աղակալման, ալկալիացման կանխարգելում, հողերի արմատական բարելավում, բնական կերհանդակների (արոտների) բարելավում և ջրարբիացում:
- Գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ բերքի անկորուստ ստացում - բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում:
- Ներմուծվող և արտադրվող անվտանգ բուսական և կենդանական ծագումով մթերքներով բնակչության ապահովում – կարանտին անվտանգության ապահովում, կարանտին օրգանիզմների և կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի և կենդանիների միջոցով հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներթափանցման կանխարգելում:
- Կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպա նություն, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում - կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների և տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում:
- Գյուղացիական տնտեսություններին բարձրորակ սերմերով ապահովում - բույսերի սելեկցիոն նոր սորտերի պաշտպանություն, բարձր վերարտադրության սերմերի որակի գնահատում:
- Գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների և գյուղատնտեսությունում համախառն ներքին արդյունքի ավելացում:
- Պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատում:

### 11.2.2. Գերակայությունները

Գյուղատնտեսությունում 2007-2009 թ.թ. վարվող քաղաքականությունը կնպատակաուղղվի ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվի գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, բնակչության աղքատության մակարդակի կրճատման համար: ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեության հիմնական ուղղություններից մեկն էլ կլինի հանրապետության անտառային տնտեսության պահպանման ու անտառների վերականգնման համալիր միջոցառումների իրականացումը:

Նախատեսվում է 2007-2009 թ.թ. ընթացքում շարունակել բարեփոխումները, նպատակ ունենալով գյուղատնտեսության զարգացումը առաջնահերթ ոլորտներում՝ առաջնային սերմնաբուծության, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ կենտրոնական պայքարի իրականացման, տոհմային գործի, անասնաբուժության, բնական կերահանդակների բարելավման միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Նշված քաղաքականության իրականացման համար նախատեսվում է 2007-2009 թ.թ. պետական բյուջեով նախատեսվող ծախսերը նպատակաուղղել գերակայություն ունեցող հետևյալ ներդրումային ծրագրերին.

- առաջնային սերմնաբուծության, տոհմային գործի կազմակերպման, արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում,
- բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ կենտրոնական պայքարի միջոցառումներին աջակցության ցուցաբերում,
- անասնաբուժական և հակահամաճարակային միջոցառումների իրականացում,
- գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման գործընթացի շարունակում:
- բնական կերահանդակների և հողերի մելիորատիվ վիճակի բարելավման միջոցառումների իրականացում,
- հողերի արմատական բարելավում, աղազերծում,
- գիտակրթական, տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում ու զարգացում,
- գյուղական համայնքներում իրավիճակի գնահատման մեխանիզմների կատարելագործում և դրանից ելնելով գյուղական համայնքների սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն աջակցություն,

Դրա հետ մեկտեղ գյուղատնտեսության զարգացման 2007-2009 թ.թ. քաղաքականության մեջ, որպես գլխավոր նպատակ, կմնա երկրի պարենային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացումը:

Վերջին փաստերն այն մասին են վկայում, որ Հայաստանում աղքատության կրճատման վրա ավելի մեծ է եղել գյուղատնտեսական աճի ազդեցությունը, քան տնտեսական աճինը: Տնային տնտեսությունների հետազոտությունները ցույց են տալիս, որ 2000-2003թ.թ. գյուղատնտեսության ոլորտում գրանցված աճի յուրաքանչյուր տոկոսային կետ հանգեցրել է մինչև 2003թ. գյուղական աղքատության կրճատմանը՝ 0.37%-ով:

Հետևաբար կարելի է հետևություն անել, որ վերը նշված նպատակներին և խնդիրներին համապատասխան միջոցառումների իրականացումն ուղղված է ԱՀՌԾ-ի հիմնական նպատակին՝ գյուղական բնակավայրերում աղքատության կրճատմանը:

Գյուղատնտեսության ոլորտի 2006-2008թ.թ. և 2007-2009թ.թ. ՄԺԾ ծրագրերով նախատեսված ծախսերի համամատականը ներկայացված է հետևյալ աղյուսակով.

**Աղյուսակ 11. 1 Ծախսերի համեմատական աղյուսակ 2006-2008թթ. ՄԺԾԾ և 2007-2009թթ. ՄԺԾԾ միջև ըստ ենթախմբերի**

(մլն դրամ)

| Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի, ծրագրերի անվանումները | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2006թ հաս տատված բյուջե | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ |
| 10.01Գյուղատնտեսու թյան ոլորտում պետական կառավարում | 369.93 | 463.22 | 438.5 | 515.37 | 510.7 | 532.33 | 593.19 |
| 10.02 Հողերի բարելավման աշխատանքներ | 615.10 | 616.95 | 564.1 | 610.89 | 564.1 | 711.39 | 712.03 |
| 10.04 Բույսերի պաշտ պանություն | 468.71 | 471.37 | 372.7 | 389.01 | 308.7 | 325.01 | 325.01 |
| 10.05Անասնաբուժու թյուն և հակահամաճա րակային միջոցառումներ | 1236.76 | 1441.93 | 1153.6 | 1349.70 | 1153.56 | 1349.70 | 1356.99 |
| 10.06 Անտառային տն տեսություն | 1093.60 | 1137.30 | 1292.7 | 1342.27 | 1292.7 | 1251.37 | 1353.47 |
| 10.07Տոհմաբուծություն, սերմնաբուծություն և այլ ծրագրեր | 3057.44 | 4871.33 | 5173.7 | 5735.03 | 2658.42 | 6056.23 | 3612.96 |
| Ընդամենը գյուղատն տեսության ոլորտ | 6841.54 | 9002.10 | 8995.33 | 9942.27 | 6488.17 | 10226.03 | 7953.65 |

2007-2009թ.թ. ՄԺԾԾ ծախսերը 2006-2008թ.թ. ՄԺԾԾ նկատմամբ աճել են հետևյալ պատճառներով՝ հողերի բարելավման աշխատանքների, հակահամաճարակային միջոցառումների, 2006-08թ.թ. ՄԺԾԾ-ով չնախատեսված, սակայն 2006թ հաստատված բյուջեով նախատեսված վարկային նոր ծրագրի (Գյուղատն տեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր) համար հատկացվող գումարների ավելացմամբ, ինչպես նաև կառավարման ապարատի և պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ:

### 11.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունից ելնելով 2006-2008թ.թ. ՄԺԾԾ-ի համեմատ 2007-09թ.թ. ժամանակահատվածում ոլորտում իրականացվող ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող հիմնական գործոն է հանդիսանում ՊՈԱԿ-երի աշխատողների աշխատավարձի 20% բարձրացումը, նվազագույն աշխատավարձի շեմը համապատասխանաբար ՝ 2007 թ.՝ 25.0 հազ դրամ, 2008 թ.՝ 25.0 հազ դրամ, 2009 թ.՝ 30.0 հազ դրամ նախատեսումը, ինչպես նաև հաստիքային միավորների ավելացումը, որի հետևանքով ՀՀ 2006թ պետական բյուջեով հաստատված ծախսերի համեմատ ավելացումները կազմել են համապատաս խանաբար՝ 169356.6 հազ դրամ, 169356.6 հազ դրամ և 179569.2 հազ դրամ:

Հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտի հիմնական գերակայությունները և նպատակները՝ 2007-2009թ.թ. միջնաժամկետ ժամանակահատվածում առաջնահերթությունը կտրվի շարունակական աշխատանքների հետևյալ ուղղություններին:

## 11.3. ՈԼՈՐՏԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսության ռազմավարության խնդիրների լուծման շրջանակներում պետությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) Օրենսդրական հիմքերի ստեղծում, ազատ մրցակցության ապահովում:

բ) Գյուղատնտեսական հողերի մոնիտորինգ և պահպանություն:

գ) Անասունների և բույսերի համաճարակային և կարանտին հիվանդությունների կանխարգելում:

դ) Սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի գործունեության կատարելագործում:

ե) Ոլորտի գիտատեխնիկական ապահովում, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների աջակցություն:

զ) Զարգացման ծրագրերի ընդունում և դրանց իրականացման պայմանների ապահովում:

է) Միջազգային համագործակցության զարգացում և շուկայահանման հնարավորությունների ընդլայնում:

### *ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ*

2007-2009թ.թ. ընթացքում նոր ծրագրեր չեն նախատեսվում:

**Աղյուսակ 11.2. Գոյություն ունեցող և նոր ծրագրերի ֆինանսավորումը 2007-2009թ.թ.**

(մլն դրամ)

| | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|
| Գյուղատնտեսության ոլորտ | 9942.26 | 10226.03 | 7953.65 |
| նոր ծրագրեր | 0.00 | 0.00 | 0.00 |
| %-ով ընդամենի նկատմամբ | 0.00 | 0.00 | 0.00 |
| գոյություն ունեցող ծրագրեր | 9942.26 | 10226.03 | 7953.65 |
| %-ով ընդամենի նկատմամբ | 100.00 | 100.00 | 100.00 |

2007-2009թ.թ. ՄԺԾԾ-ով գյուղատնտեսության ոլորտին ուղղվող ծախսերի կանխատեսումներն

ըստ ուղղությունների ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 11.3. Պետական բյուջեից գյուղատնտեսության գծով ծախսերը 2005-2009թթ. (ենթախմբերով)

մլն.դրամ

| | 2005թ. փաստ. կատար. | 2006թ.հաստ. բյուջե | նախորդ տարվա նկատմամբ %- | 2007թ. | նախորդ տարվա նկատմամբ %- | 2008թ. | նախորդ տարվա նկատմամբ %- | 2009թ. | նախորդ տարվա նկատմամբ %- |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ծախսերը Հայաս տանի ՀՆԱ-ի նկատմամբ %-ով | 0.2 | 0.4 | x | 0.4 | x | 0.3 | x | 0.2 | x |
| Ընդամենը ծախսերը պետա կան բյուջեի ծախսերի նկատմամբ %-ով | 1.0 | 1.9 | x | 1.9 | x | 1.7 | x | 1.3 | x |
| Գյուղատնտեսության ոլորտ, այդ թվում | 3921.1 | 9002.1 | 129.6 | 9942.3 | 10.4 | 10226.0 | 2.9 | 7953.7 | -22.2 |
| 10.01Գյուղատնտեսության ոլորտում պետական կառա վարում | 258.6 | 463.2 | 79.1 | 515.4 | 11.3 | 532.3 | 3.3 | 593.2 | 11.4 |
| տեսակարար կշիռը ամբողջ ծախսերի մեջ % | 6.6 | 5.1 | x | 5.2 | x | 5.2 | x | 7.5 | x |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10.02 Հողերի բարելավման աշխատանքներ | 230.1 | 617.0 | 168.1 | 610.9 | -1.0 | 711.4 | 16.5 | 712.0 | 0.1 |
| տեսակարար կշիռը ամբողջ ծախսերի մեջ % | 5.9 | 6.9 | x | 6.1 | x | 7.0 | x | 9.0 | x |
| 10.04 Բույսերի պաշտպա նություն | 136.9 | 471.4 | 244.2 | 389.0 | -17.5 | 325.0 | -16.5 | 325.0 | 0.0 |
| տեսակարար կշիռը ամբողջ ծախսերի մեջ % | 3.5 | 5.2 | x | 3.9 | x | 3.2 | x | 4.1 | x |
| 10.05Անասնաբուժություն և հակահամաճարակային մի ջոցառումներ | 1245.7 | 1441.9 | 15.8 | 1349.7 | -6.4 | 1349.7 | 0.0 | 1357.0 | 0.5 |
| տեսակարար կշիռը ամբողջ ծախսերի մեջ % | 31.8 | 16.0 | x | 13.6 | x | 13.2 | x | 17.1 | x |
| 10.06 Անտառային տնտեսու թյուն | 458.5 | 1137.3 | 148.0 | 1342.3 | 18.0 | 1251.4 | -6.8 | 1353.5 | 8.2 |
| տեսակարար կշիռը ամբողջ ծախսերի մեջ % | 11.7 | 12.6 | x | 13.5 | x | 12.2 | x | 17.0 | x |
| 10.07 Տոհմաբուծություն, սերմնաբուծություն և այլ ծրագրեր | 1591.3 | 4871.3 | 206.1 | 5735.0 | 17.7 | 6056.2 | 5.6 | 3613.0 | -40.3 |
| տեսակարար կշիռը ամբողջ ծախսերի մեջ % | 40.6 | 54.1 | x | 57.7 | x | 59.2 | x | 45.4 | x |

Գյուղատնտեսության ոլորտում 2007-2009թթ միջնաժամկետ ծրագիրը կապահովի հետևյալ ծրագրերի իրականացումը.

### *ՀՈՂԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*

**Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ**

Ծրագրի իրականացման գլխավոր նպատակը հողի բերրիության պահպանումն է, պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ օգտագործումը:

Ծրագրի իրականացման արդյունքում ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում ակնկալվում է ստանալ.

1. Հանրապետության 174 համայնքների հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող և պարարտանյութերի պահանջարկի համար ագրոքիմիական քարտեզներ.
2. Մշակաբույսերի պարարտացման համար գիտականորեն հիմնավորված և կազմված երաշխավորագրեր.

Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Գյուղատնտեսական նշանակության 52.1 հազ. հեկտար հողատարածությունների ագրոքիմիական դաշտային հետազոտություններ՝ 22.1 հազ. հողանմուշների նմուշառում.
- Հողանմուշների և պարարտանյութերի 104.2 հազ. լաբորատոր փորձաքննություններ և գնահատում.
- Ագրոքիմիական քարտեզների կազմում և 174 համայնքներին հանձնում.
- Մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմում և 174 համայնքներին հանձնում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը կրում է շարունակական բնույթ և յուրաքանչյուր համայնքի համար այն պետք է կատարվի 5-տարին մեկ անգամ, հաշվի առնելով, որ հողի բերրիության հիմնական ցուցանիշներ հանդիսացող սննդատարրերի պարունակությունը էական փոփոխություններ է կրում այդ ժամանակահատվածում:

ժամանակին կատարվող հետազոտությունը հնարավորություն կտա կանխելու հողերի բերրիության անկումը: Ծրագրի իրականացման արդյունքների, մինչև 2009 թ. ավարտը, ցուցանիշներ են հանդիսանալու համայնքների թիվը, որոնք ձեռք են բերել ագրոքիմիական սխեմաներ, վճարելով արժեքի 50% (համայնքների թիվը ընդհանուր հետազոտվող համայնքներից)՝ 2007թ՝ 55, 2008թ՝ 70, 2009թ՝ 85:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներում:

**Բնական կերհանդակների (արոտների) բարելավում և ջրարբիացում**

Վերջին տասնամյակում խիստ անբարենպաստ իրավիճակ է ստեղծվել բնական կերահանդակների օգտագործման բնագավառում: Մասնավորապես, հեռագնա արոտների բարելավման և ջրարբիացման աշխատանքներ չկատարելու պատճառով դրանք գրեթե չեն օգտագործվում: Մինչդեռ գյուղամերձ արոտավայրերում նկատվում է գերբեռնված արածեցում, որի հետևանքով ակտիվացել են բուսածածկի նոսրացման, ինտենսիվ հողատարման գործընթացները և, արդյունքում, խիստ նվազել է արոտների օգտագործման արդյունավետությունը: Ստեղծված իրավիճակի շարունակումը կհանգեցնի գյուղամերձ արոտների շրջանառությունից դուրս գալուն, իսկ հեռագնա արոտներում կակտիվանան այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են գուղձապատումը, բուսածածկի աղքատացումը, ոչ պիտանի թունավոր ու վնասակար բուսատեսակների զանգվածային տարածումը: Հրատապ խնդիր է դարձել արոտների բարելավման և ջրարբիացման միջոցառումների իրականացումը:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար առաջարկում է նախատեսել 300,0 մլն դրամի աշխատանքներ.

Ծրագրով նախատեսվում է իրականացնել.

1) 2007 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզում - 55,0 մլն դրամ՝

Սպիտակասարի (Գավառի տարածաշրջան) շուրջ 16 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում - 30,0 մլն դրամ,

Ծավինար-Արծվանիստի (Մարտունու տարածաշրջան) շուրջ 13 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում - 25,0 մլն դրամ,

ՀՀ Արագածոտնի մարզում - 20,0 մլն դրամ՝

Աշտարակի շուրջ 30 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում - 20,0 մլն դրամ,

ՀՀ Տավուշի մարզում - 40,0 մլն դրամ՝

Իջևանի տարածաշրջանի շուրջ 4 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում - 20,0 մլն դրամ,

Բերդի տարածաշրջանի շուրջ 3 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում - 10,0 մլն դրամ,

Նոյեմբերյանի տարածաշրջանի շուրջ 3 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում - 10,0 մլն դրամ,

ՀՀ Լոռու մարզում* - 80,0 մլն դրամ (շուրջ 9 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում),

ՀՀ Վայոց Ձորի մարզում* - 60,0 մլն դրամ (շուրջ 8 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում):

ՀՀ Արարատի մարզում* - 45.0 մլն դրամ (շուրջ 8 կմ ջրարբիացման համակարգի վերականգնում),

* - ՀՀ Լոռու, Վայոց Ձորի և Արարատի մարզերում տարածքները կճշտվեն 2006 թ.:

2) 2008 թվականին

ՀՀ Գեղարքունիքի մարզում - 25,0 մլն դրամ,

ՀՀ Արագածոտնի մարզում - 25,0 մլն դրամ

ՀՀ Շիրակի մարզում - 90,0 մլն դրամ,

ՀՀ Կոտայքի մարզում - 80,0 մլն դրամ

ՀՀ Սյունիքի մարզում - 80,0 մլն դրամ:

3) 2009 թվականին

ՀՀ Շիրակի մարզում - 50,0 մլն դրամ,

ՀՀ Լոռու մարզում - 50,0 մլն դրամ,

ՀՀ Տավուշի մարզում - 50,0 մլն դրամ

ՀՀ Կոտայքի մարզում - 50,0 մլն դրամ

ՀՀ Սյունիքի մարզում - 50,0 մլն դրամ,

ՀՀ Վայոց Ձորի մարզում - 50,0 մլն դրամ:

ՀՀ 2007 թ. պետական բյուջեով ծրագրի համար նախատեսված ծախսերի հաշվին, մինչև 2008թ. բյուջետային ֆինանսավորման հայտի քննարկումը, կիրականացվի 2008թ. կատարվելիք աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը, որով կճշգրտվեն աշխատանքների ծավալներն ու արժեքները:

Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա բնական կերահանդակների բերքատվությունը, կավելանա իրական եկամուտները, որը կնպաստի աղքատության նվազեցմանը:

Ծրագրի իրականացման արդյունքների, մինչև 2009 թ. ավարտը, ցուցանիշներ են հանդիսանալու ջրարբիացվող արոտների տարածքը (% ընդհանուրից)՝ 2007թ՝ 11, 2008թ՝ 16, 2009թ՝ 20:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներում:

**Արարատյան հարթավայրի ոռոգելի երկրորդային աղակալված հողերի արմատական բարելավում**

Ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի հ. 1115-Ն որոշմամբ:

Արարատյան հարթավայրի 80,9 հազ. հա ոռոգելի հողերից շուրջ 35,0 հազ. հա տարբեր աստիճանի աղակալված և ալկալիացված են, ինչը Արարատյան հարթավայրի անապատացման հզոր ազդակներից մեկն է: Այս հողերում բերքի կորուստները, կախված հողում աղերի պարունակությունից, կազմում են 20-80%:

Աղակալված և ալկալիացված հողերի աղազերծումը ողջ հարթավայրում ֆինանսական հսկայական միջոցներ կպահանջի և Արարատյան հարթավայրի ոռոգելի երկրորդական աղակալված հողերի արմատական բարելավումն երկարաժամկետ ծրագիր է, որը պետք է սկսվի և, ֆինանսական հնարավոր միջոցների հայթհայթմանը զուգընթաց, հետևողականորեն իրականացվի:

Համաձայն «Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոնի» կողմից մշակված «Աղակալված և ալկալիացված հողերի մելիորացիայի տեխնոլոգիայի», աղակալված և ալկալիացված հողերի աղազերծումը հնարավոր է միայն դրենաժային ցանցի արդյունավետ աշխատանքի պայմաններում:

Ծրագրի նպատակն է վերականգնել ներկայումս խցանված և չգործող փակ դրենաժային համակարգը՝ ապահովելով այդ տարածքներում գրունտային ջրերի անարգել հոսքը:

Ծրագրի իրականացման արդյունքում հողատարածքներում կկարգավորվեն գրունտային ջրերի մակարդակները, կկանխարգելվեն երկրորդական աղակալման գործընթացները, կկանխվի այդ տարածքներում գտնվող բնակավայրերի ջրակալումը, կբարելավվեն բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, կապահովվի գյուղատնտեսական մշակաբույսերի կայուն բերքատվությունը, ինչն էլ կնպաստի աղքատության նվազեցմանը:

Նշված արդյունքներին հասնելու համար միջնաժամկետ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում նախատեսվում է իրականցնել հողատարածքների բարելավման աշխատանքներ՝ 2007 թ. - 268.6 մլն դրամի, 2008 թ. - 369.1 մլն. դրամի, 2009 թ. - 369.1 մլն. դրամի:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներում:

**ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում**

Ծրագրի իրականացման նպատակն է հետազոտությունների և դիտարկումների հիման վրա բույսերի վնասակար և կարանտին օրգանիզմների արեալի ճշտում դրանց բազմացման ու զարգացման կանխատեսում, ախտորոշում և ահազանգում: Բույսերի պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի մշակումը և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև հանրապետություն ներկրվող և հանրապետությունում օգտագործվող թունանյութերի որակի նկատմամբ հսկողության ապահովումը:

Ծրագրի իրականացման արդյունքում հանրապետությունում կօգտագործվի ստուգված և փորձաքննություն անցած թունանյութեր և առկա կլինի վնասակար օրգանիզմների հայտնաբերման, կանխատեսման համար մոնիտորինգի ենթարկված գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր և բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման հաջորդ տարվա ծրագրերը:

Վերոհիշյալ արդյունքներին հասնելու համար նախատեսվում է ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում մոնիտորինգի ենթարկել շուրջ 243 հազ. հեկտար հողատարածություն և թունանյութերի ազդող նյութի որոշման նպատակով լաբորատոր փորձաքննության ենթարկել թունանյութի 4500 նմուշ:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներում:

**Բույսերի պաշտպանության միջոցառումներ**

Ծրագրի նպատակն է հանրապետությունում իրականացնել առավել զանգվածային տարածված և վտանգավոր օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումներ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երեք բաղադրիչներով.

*1. **Պայքար մկնանման կրծողների դեմ:*** Այս բաղադրիչով նախատեսվում է կենտրոնացված կարգով թունանյութերը ձեռք բերել և տրամադրել գյուղական համայնքներին, իսկ բույսերի պաշտպանության աշխատանքերն իրականացնել գյուղացիական տնտեսությունների միջոցով, որի

համար նախարարության համապատասխան կառույցների կողմից գյուղատնտեսական տնտեսություններին կտրամադրվի անհրաժեշտ խորհրդատվություն և կիրականացվի համապատասխան վերահսկողություն: Միջնաժամկետ ժամանակահատվածում բույսերի պաշտպանության միջոցառումների մեջ կընդգրկվի՝ 2007 թ. – 160.0 հազ. հեկտար 70.0 մլն դրամ գումարով, 2008 թ. – 84.8 հազ.հեկտար 37.1 մլն դրամ գումարով և 2009 թ. –84.8 հազ. հեկտար 37.1 մլն դրամ գումարով:

***2. Պայքար մորեխների և ծղրիդների դեմ:*** Նշված միջոցառումը կիրականացվի կենտրոնացված կարգով ավիացիայի միջոցով, ինչպես գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններում, այնպես էլ խոտհարքներում, արոտներում և այլ հողատեսքերում: ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում նախատեսվում է բույսերի պաշտպանության միջոցառումներում ընդգրկել 5000-ական հեկտար՝ 58.5 մլն դրամ գումարով:

***3. Պայքար անտառի վնասակար օրգանիզմների դեմ:*** Բաղադրիչով նախատեսվում է հանրապետության անտառային տարածքներում իրականացնել պայքարի կենտրոնացված ծառայություններ ավիացիայի միջոցով: ՄԺԾԾ ժամանակահատվածում բույսերի պաշտպանության միջոցառումների մեջ կընդգրկվի՝ 2007 թ. 14,6 հազ.հեկտար 171.5 մլն դրամ գումարով, 2008 թ. 12.0 հազ. հեկտար 140.4 մլն դրամով և 2009 թ. 12.0 հազ. հեկտար 140.4 մլն դրամով:

Այսպիսով հանրապետությունում 2007-2009 թթ նախատեսվում է պայքարի միջոցառումներ կատարել.

2007 թ. 179600 հա հողատարածության վրա 300.0 մլն դրամ գումարով

2008 թ. 101800 հա հողատարածության վրա 236.0 մլն դրամ գումարով

2009 թ. 101800 հա հողատարածության վրա 236.0 մլն դրամ գումարով

Բույսերի պաշտպանության միջոցառումների մեջ ընդգրկվող տարածությունների ընտրության հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

1. «Բույսերի պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով իրականացված մոնիտորինգի արդյունքում ընտրված բույսերի առավել վնասակար օրգանիզմներով վարակված տարածաշրջանները,

2. Հանրապետության սոցիալապես առավել անապահով բնակչություն ունեցող տարածաշրջանները,

3. Հիմնական հացահատիկային մշակաբույսերի մշակությամբ զբաղվող տարածաշրջանները:

Ծրագրով նախատեսված միջոցառումների շնորհիվ հնարավոր կլինի կանխել վնասատու օրգանիզմների գործունեությունը և նվազագույնի հասցնել դրանց տարածման արեալը, որը նախապայման կհանդիսանա անկորուստ բերքի ստացման համար, զգալիորեն կբարելավվի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի բուսասանիտարական վիճակը և շուրջ 60-80%-ով կնվազի վնասակար օրգանիզմների պատճառած վնասը:

Ծրագրի իրականացումը կապահովի լրացուցիչ բերքի ստացում, որը կբարձրացնի հողօգտագործողների իրական եկամուտները և կնպաստի աղքատության նվազեցմանը:

Ծրագրի իրականացման արդյունքների, մինչև 2009 թվականի ավարտը, ցուցանիշներ են հանդիսանալու.

1. մկնանման կրծողներով վարակված տարածքը (հա)՝2007թ՝ 180000, 2008թ՝ 110000, 2009թ՝ 110000;

2. մորեխներով վարակված տարածքը (հա)՝ 10000, 8000, 8000;

3.վնասատուներով և հիվանդություններով վարակված անտառային տարածքներ (հա)՝ 11000, 11000, 11000:

Ծրագրի նպատակն է հանրապետությունում իրականացնել առավել զանգվածային տարածված և վտանգավոր օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումներ:

*ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ*

**Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում**

Ծրագրի իրականացման նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը:

Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա հակահամաճարակային միջոցառումների արդյունքում պատվաստված կենդանիների վարակամերժության (իմունայնության) մակարդակը և կկատարվի գյուղատնտեսական կենդանիների ախտորոշումը լաբորատոր մեթոդներով:

Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- շիճուկամոնիտորինգ (սերոմոնիտորինգ)՝ հակահամաճարակային միջոցառումների իրականացումից հետո, որի հիման վրա գնահատվում են առանձին հիվանդությունների դեմ կատարված կանխարգելիչ պատվաստումների արդյունքները.
- համակարգչային մշակմամբ պատվաստումների արդյունքների գնահատման բանկի ստեղծում, որի հիման վրա առաջարկվում են հակահամաճարակային միջոցառումների ծրագրի փոփոխություններ.
- գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների տեսակներին պատվաստանյութերի համապատասխանության գնահատում.
- պատվաստանյութերի և ախտորոշիչ նյութերի պահպանություն՝ սահմանված նորմերին համապատասխան.
- անասնաբուժական պետական տեսուչների և սահմանային հսկիչ կետերի աշխատակիցների կողմից ներկայացված փորձանմուշների ախտորոշում և եզրակացության տրամադրում.
- հակահամաճարակային մոնիտորինգի իրականացում և հարևան երկրներում հակահամաճարակային վիճակի վերաբերյալ տեղեկատվության ապահովում.

Միջնաժամկետ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում նախատեսվում է իրականցնել աշխատանքներ՝ 2007 թ. – 154.3 մլն դրամի, 2008 թ. – 154.3 մլն. դրամի, 2009 թ. – 161.6 մլն. դրամի:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներում:

**Պատվաստուկներ և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում**

Ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքով ու այդ հիվանդությունների դեմ պայքարի կազմակերպման գործող հրահանգներով, հանրապետությունում անասնաբուժական

հակահամաճարակային կայուն իրավիճակ ապահովելու, ինչպես նաև մարդկանց և կենդանիների վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով հանրապետությունում իրականացվում են ամենամյա հակահամաճարակային պարտադիր միջոցառումներ:

Միջնաժամկետ ժամանակահատվածում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումների՝ հակահամաճարակային միջոցառումների մեջ, նախատեսվում է ընդգրկել կենդանիների և մարդկանց համար առավել վտանգավոր հետևյալ 9 հիվանդությունները՝

1. Բրուցելյոզ - խոշոր եղջերավոր անասուններ, մանր եղջերավոր անասուններ, խոզեր, ձիեր
2. Տուբերկուլյոզ - խոշոր եղջերավոր անասուններ
3. Սիբիրախտ - խոշոր եղջերավոր անասուններ, մանր եղջերավոր անասուններ, խոզեր, ձիեր
4. Դաբաղ - խոշոր եղջերավոր անասուններ
5. Էմկար - խոշոր եղջերավոր անասուններ
6. Պաստերելյոզ - խոշոր եղջերավոր անասուններ
7. Ժանտախտ – խոզեր
8. Թռչնի նյուկասլ – թռչուններ
9. Մեղուների վարատոզ- մեղվաընտանիքներ

Կարանտինային և հատուկ վարակիչ հիվանդությունների կանխարգելումն ու վերացումը ներառում է հետևյալ համալիր միջոցառումների միաժամանակյա և հաջորդական իրականացումը՝

ա) պատվաստուկների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում,

բ) հակահամաճարակային պատվաստումներ և ախտորոշիչ հետազոտումներ:

Ծրագրի իրականացման արդյունքում հակահամաճարակային միջոցառումների մեջ ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում կընդգրկվեն շուրջ 640 հազ. գլուխ խ.ե.ա., 730 հազ. գլուխ մ.ե.ա., 320 հազ. գլուխ խոզ և 15 հազ. գլուխ ձի, 2.8 մլն թռչուն, 130 հազ մեղվաընտանիք:

Ծրագրերի իրականացումը կնպաստի հանրապետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն հակահամաճարակային վիճակի ստեղծմանը, անասնաբուժասանիտարական տեսակետից բարորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովմանը, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանությանը, ինչպես նաև կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատմանը:

Ծրագրի իրականացման արդյունքների, մինչև 2009 թվականի ավարտը, ցուցանիշներ են հանդիսանալու համապատասխանաբար՝

1.Սիբիրախտով հիվանդ կենդանիներ (% ամբողջ գլխաքանակից)՝ 0.003, 0.001, 0.001;
2. Բրուցելյոզով հիվանդ կենդանիներ (% ամբողջ գլխաքանակից)՝ 0.4, 0.3, 0.2;
3.Տուբերկուլյոզով հիվանդ կենդանիներ (% ամբողջ գլխաքանակից)՝ 0.4, 0.3, 0.2;
4. Ժանտախտով հիվանդ խոզեր (% ընդհանուր խոզերի գլխաքանակից)՝ 0.4, 0.3, 0.2;
5. Դաբաղով հիվանդ կենդանիներ (% ամբողջ գլխաքանակից)՝ 1.0, 0.9, 0.5;
6. Խչխչան պալարով հիվանդ կենդանիներ խոշոր (% ամբողջ ԽԵԱ գլխաքանակից)՝ 0.003, 0.001, 0.001:

Վերոհիշյալ ցուցանիշները կվերանայվեն կենդանիների հիվանդությունների հսկողության ազգային համակարգի 2006թ.-ի տարեկան հաշվետվության տվյալների հիման վրա:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներում:

**Անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում**

Ծրագրով նախատեսված հակահամաճարակային կենդանիների հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և այլ անասնաբուժական ծառայությունների իրականացումը պետությունը պատվիրակել է համայնքների ղեկավարներին և համայնքների ու անասնաբույժների հետ կնքվել են 800 պայմանագրեր, 2007-2009թթ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել 384.0 մլն դրամ /800 * 12* 40.0= 384.0 մլն դրամ/:

**ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացում**

Ծրագրի հաշվին նախատեսվում է ՀՀ ոստիկանության ՀԿԱ վարչության կազմում ստեղծված ոստիկանության հատուկ դասակի միջոցով համաճարակային բռնկումների ժամանակ իրականացնել գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունները օջախներում լոկալիզացնելու, հետագա տարածումը կանխելու, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից կարանտինային կանոններով սահմանված պահանջները կատարելու նպատակով կարանտին սահմանափակումներ:

***ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ***

**Անտառապահպանական, անտառապաշտպանական, անտառավերականգման աշխատանքների իրականացում**

ՀՀ կառավարության 2004թ հունվարի 15-ի N 7-Ն որոշմամբ ՀՀ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառների կառավարման իրավասությունները վերապահվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

Միաժամանակ որոշակի փոփոխության է ենթարկվել անտառտնտեսության ոլորտում վարվող պետական քաղաքականությունը` ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի N 38-Ա որոշմամբ ընդունվել է ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը, ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1232-Ն որոշմամբ ընդունվել է ՀՀ անտառի ազգային ծրագիրը և 2005 թվականին ընդունվել է անտառային նոր օրենսգիրք: Արդյունքում կրճատվել են անտառահատման ծավալները, զուգահեռաբար ավելացել է անտառավերականգման ծավալները, որի հետ կապված ավելացել են ՀՀ պետական բյուջեով ծրագրի իրականացման համար նախատեսված ծախսերը: ՄԺԾԾ ժամանակահատվածի համար նախատեսվել է հատկացնել` 2007թ.- 1289.7 մլն.դրամ, 2008 թ. – 1198.8 մլն.դրամ, 2009 թ. – 1300.9 մլն.դրամ:

Ծրագիրն իրականացվում է երեք բաղադրիչով` անտառպահպանություն, անտառշինություն և անտառվերականգնում:

1. **Անտառպահպանություն-** «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնված հանրապետության անտառպետֆոնդի տարածքը կազմում է ավելի քան 360.0 հազ.հա (ընդհանուրի 78%-ը), որտեղ անտառտնտեսվարում իրականացնելու համար գործում է 22 անտառտնտեսություն: Անտառային տարածքները պահպանելու համար, համաձայն անտառշինական նախագծերի, ստեղծված են 92 անտառպետություններ - 529 պահաբաժիններ, որոնք ի պահ են տրված նույնքան անտառապետերի և անտառապահերի: Վերջիններս նյութական պատասխանատու անձինք են: Միջին հաշվով յուրաքանչյուր անտառապահի ի պահ է տրված շուրջ 680.5 հա անտառային տարածք:

Նշված բաղադրիչով նախատեսվում է 2007թ՝ 697 մլն դրամ՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատողների աշխատավարձերի և սոցապ հատկացումների վճարումներ /970 աշխատող X 47,7 հազ.դրամ X 12 ամիս = 555.2 մլն դրամ, սոցապ հատկացումներ՝128.9 մլն դրամ/, հանքայնացված շերտերի կառուցում /60 կմ/, հակահրդեհային ճանապարհների կառուցում /50 կմ/, հակահրդեհային ճանապարհների նորոգում /50 կմ/ – 12.9 մլն դրամ,

2. **Անտառվերականգնում** - Հայաստանի անտառները վերջին 10-12 տարիների ընթացքում, պայմանավորված էներգետիկ ճգնաժամով, զգալիորեն տուժել են: Տարբեր աստիճանի ապօրինի հատումներ են կատարվել շուրջ 40 հազար հեկտարի վրա, բացի այդ հանրապետության անտառների 1/3 մասը, ավելի քան 100 հազար հեկտար, արդեն իսկ կորցրել են ինքնավերականգնման ունակությունը: Այդ իսկ պատճառով անտառների վիճակը բարելավելու համար խիստ կարևոր է դառնում անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալների ընդարձակումը և աշխատանքների որակի բարելավումը, ինչը նախատեսված է ՀՀ անտառային ազգային քաղաքականությամբ և ռազմավարությամբ, որը ընդունվել է ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 30-ի նիստի թիվ 38 արձանագրային որոշմամբ:

Միջոցառման իրականացման համար պահանջվում է 2007 թ. – 542.7 մլն դրամ, 2008 թ. – 442.6 մլն դրամ, 2008 թ. – 542.7 մլն դրամ:

Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

Հանրապետության անտառների պահպանության բարելավում, ապօրինի օգտագործման նվազում.

- անտառներում վնասատուների և հիվանդությունների նվազում.
- անտառապատ տարածքների ավելացում
- անտառշինական նախագծերի առկայություն
- արդյունավետ անտառկառավարում:
- անտառամերձ բնակչության աղքատության նվազեցում:

Ծրագրերի իրականացման արդյունքում մինչև 2009 թվականի ավարտը, ցուցանիշներ են հանդիսանալու.

1. ապօրինի հատումների նվազում 2006 թվականի համեմատ (%)՝ 5, 10, 15;
2. անտառապատում և անտառվերականգնում (հա)՝ 4500, 5000, 5000;
3. անտառային տնկանյութի արտադրություն (տնկանյութի թիվ)՝ 2000, 3500, 4500;
4. անտառշինական նախագծերում ընդգրկված անտառային տարածք (հա)՝ 49800, 49600, 48100;

1. **Անտառշինություն** - 1993թ.-ից հետո Անտառային պետֆոնդի տարածքում անտառշինական նախագծեր չեն իրականացվել բացառությամբ Լալվարի և Նոյեմբերյանի անտառտնտեսությունների:

Ներկայումս Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում իրականացվում է Իջևանի և Սևքարի անտառտնտեսությունների անտառշինական նախագծերի մշակումը: 2007-2009 թթ համար նախատեսվում է իրականացնել Կապանի, Գորիսի, Մեղրու, Ստեփանավանի, Գուգարքի, Հրազդանի, Եղեգսի, Ջերմուկի, Լալվարի, Ջիլիզայի և Դսեղի անտառտնտեսությունների անտառային պետֆոնդի գույքագրում և հաշվառում, ինչպես նաև անտառշինական նախագծերի կազմում յուրաքանչյուր տարում 50-ական հազար հեկտարի համար տարեկան՝ 50.0 մլն դրամ գումարով (մեկ հեկտարի արժեքը՝ 1000 դրամ):

**Անտառային պետական մոնիտորինգի իրականացում**

Ծրագիրն ընդգրկված չի եղել ՀՀ 2006-2008 թթ ՄԺԾԾ-ում: ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 28-ի «Անտառների պետական մոնիտորինգի համակարգի ներդրման մասին» N 1152-Ն որոշմամբ ստեղծվել է «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազակերպությունը և ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով անտառային պետական մոնիտորինգի և ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունները կանխարգելու համար ուսումնասիրությունների իրականացնելու նպատակով վերոհիշյալ կազմակերպությանը որպես դրամաշնորհ նախատեսվել է հատկացնել 21.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է անտառային մոնիտորինգի իրականացման միջոցով նպաստել ՀՀ պետական անտառներում ապօրինի հատումների կանխարգելմանը: Ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխերգելման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ, ուսումնասիրություններ և իրականացնել անտառային պետական մոնիտորինգը:

2007-2009 թթ. Հայաստանում անտառային պետական մոնիտորինգի զարգացման աշխատանքային ծրագրի հիմնական խնդիրներն են.

- պահանջվող տեղեկատվության ապահովում և վերլուծություն՝ անտառային պետական մոնիտորինգի տվյալների հավաքագրման կարգի համապատասխան;
- տեղեկատվության փոխանակման գործող ցանցի ստեղծում՝ տեղական (մարզային) և «Պետական անտառային մոնիտորիգի կենտրոն» ՊՈԱԿ հարթություններում;
- անտառային հատվածներում մոնիտորինգի իրականացում՝ ստացված տեղեկատվության հավաստիությունը ճշտելու համար;
- ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների դեմ տարվող աշխատանքների թափանցիկության ապահովում:

Նշված խնդիրներն իրագործելու համար նախատեսվում է.

ա) մշակված մեթոդաբանության և ապօրինի հատումների և անտառանյութի անտառից դուրս բերման մոնիտորինգի չափորոշիչների հիման վրա իրականացնել անտառային մոնիտորինգը ՀՀ անտառային տարածքներում (այդ թվում հատուկ պահպանվող տարածքներում)

բ) ստեղծել անտառային պետական մոնիտորինգի մարզային մասնաճյուղեր՝ տեղերից տեղեկություններ ստանալու և տեղեկատվության օպերատիվ փոխանակման նպատակով

գ) վերլուծել ՀՀ պետական մարմիններից, կազմակերպություններից, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանցից անտառտնտեսվարման, անտառօգտագործման,

անտառխախտումների, բնափայտի տեղափոխման և իրացման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները

դ) իրականացված մոնիտորինգի արդյունքների և այլ համապատասխան աղբյուրներից ստացված տվյալների համադրման հիման վրա կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ և առաջարկություններ ներկայացնել Անտառների պետական մոնիտորինգի խորհուրդ

ե) տեղեկագրերի տպագրման և տեղեկատվական այլ միջոցների օգտագործմամբ ապահովել ՀՀ տարածքում ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական երևույթների դեմ իրականացվող պայքարի աշխատանքների թափանցիկությունը:

2007-2009 թթ ՄԺԾԾ ծրագրով տարեկան նախատեսվել է հատկացնել 52.588 մլն դրամ:

## *ՏՈՀՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ*

### Հատուկ միջոցառումների իրականացում

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության 1999թ. հուլիսի 15-ի հ. 425 նամակի, հատուկ միջոցառումների համար նախատեսված ծախսերի հաշվին իրականացվելու են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի աշխատողների պաշտպանության և գործունեության ապահովման նախապատրաստական միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակների պայմաններում: Այն է՝ կառավարման արտաքաղաքային պահուստային կետին սպասարկող անձնակազմի վարձատրման, կոմունալ և այլ ծառայությունների, դեղամիջոցների և առաջին անհրաժեշտության այլ նյութերի ձեռքբերում: 2007-2009 թթ ՄԺԾԾ ծրագրով տարեկան նախատեսվել է հատկացնել 1.0 մլն դրամ:

### Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում

Բուսաբուծության կայուն զարգացման տեսակետից կարևորագույն միջոցառումներից մեկը բույսերի նոր սորտերի փորձարկումների և դրանց արդյունքների հիման վրա արտադրության մեջ լավագույն սորտերի ներդրման կազմակերպումն է: Այդ աշխատանքներն ունեն շարունակական բնույթ և համապետական մասշտաբով ապահովում են հայրենական և արտերկրների սելեկցիոն կենտրոնների կողմից բուծված արդյունավետ սորտերի օգտագործման և այդ նվաճումների իրավական պաշտպանության խնդիրների լուծումը:

Այս ծրագրի իրագործումը հնարավորություն է ընձեռում կանխել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի և տնկանյութի օգտագործումը և ապահովել կոնդիցիոն սերմերի վերարտադրություն:

Նախատեսվող միջոցառումներն են՝

- սորտային նույնականացման աշխատանքների իրականացում,
- սերմերի խմբաքանակներից նմուշների ընտրություն,
- սերմանմուշների լաբորատոր փորձարկումների կազմակերպում.

- սորտային սերմնադաշտերի ապրոբացիա:

- բույսերի սերմերի որակի ստուգում և փաստաթղթավորում, որն ապահովում է նաև «Սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատանքների կատարումը:

2007-2009 թթ ՄԺԾԾ ծրագրով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել ՝ 28.3 մլն դրամ, 28.3 մլն դրամ, 28.6 մլն դրամ:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներում:

**Հիդրոօդերևութաբանական միջոցառումների գծով պետական պատվեր**

Ծրագրի շնորհիվ նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

- բույսերի ցրտահարությունների նախնական զգուշացման արդյունքում՝ բերքի կորուստներից խուսափելու միջոցառումների իրականացում,

- գետերի, լճերի, ջրավազանների և այլ ջրային մակերեսների ջրի պաշարների, գարնանային հորդացման էլեմենտների կանխատեսմամբ նպաստել ցանքերի ոռոգման խնդիրների արդյունավետ կազմակերպմանը,

վտանգավոր և առավել վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսումներով նախնական միջոցառումների կազմակերպման հնարավորություն ընձեռնել:

2007-2009 թթ ՄԺԾԾ ծրագրով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել ՝ 2.2 մլն դրամ:

**Արհեստական սերմնավորման միջոցառումներ.**

Ծրագիրը բաղկացած է 3 բաղադրիչներից՝

1. Սերմնահեղուկի խորը սառեցման եղանակով պահպանում: Այս բաղադրիչը նախատեսվում է իրականացնել Արարատի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերում պահեստավորված առկա 49.3 հազար չափաբաժին սերմնահեղուկի պահպանումը –1960 C աստիճանում (հեղուկ ազոտի միջավայրում), որը հնարավորություն կտա պահպանել սերմնահեղուկի կենսաբանական հատկանիշներն ու գենետիկական կայունությունը և առաջիկա տարիներին այդ սերմնահեղուկով հանրապետությունում իրականացնել կովերի արհեստական սերմնավորում: ՄԺԾԾ ժամանակահատվածում ծախսերի նվազեցումը պայմանավորված է սերմնահեղուկի օգտագործման հետևանքով պահպանվող սերմնահեղուկի նվազեցմամբ:

2. Տոհմակայաններում պահվող տավարի բարձր մթերատու ցեղերի ցուլերից ստացված սերմնահեղուկի օգտագործմամբ հանրապետության տարբեր մարզերում իրականացնել կովերի արհեստական սերմնավորում: ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում նախատեսվում է իրականացնել շուրջ 15400 գլուխ կովերի արհեստական սերմնավորում:

Արհեստական սերմնավորման միջոցով պետք է ապահովել սերմնավորվող կովերի գլխաքանակի առնվազն 90-95% հղիություն:

Նախատեսվում է տարեցտարի ավելացնել կովերի արհեստական սերմնավորման ծավալները:

Ծրագրի իրականացման արդյունքում արհեստական սերմնավորումից ստացված կովերի կաթնատվությունը կբարձրանա 15-20%-ով:

3. Բարձր մթերատու վարազներից ստացված սերմնահեղուկով մերուների արհեստական սերմնավորում:

ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել՝ 2007 թ. 3830 մերուի արհեստական սերմնավորում, 2008 թ.՝ 4000 մերուներ և 2009 թ.՝ 4160 մերուներ:

Նշված բաղադրիչի իրականացման արդյունքում զուգավորման ժամանակ փոխանցվող վարակիչ հիվանդությունները կպակասեն 50-60%-ով, իսկ մերուների անպտղությունը՝10-15%-ով:

Արհեստական սերմնավորումից ստացված սերնդի մոտ մինչև մեկ տարեկան հասակը աճի ինտեսիվությունը կբարձրանա 20-30%-ով:

Աղքատության հաղթահարման առումով ծրագիրն անմիջական օգնություն է գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին:

2007-2009 թթ ՄԺԾԾ ծրագրով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել 41.5 մլն դրամ:

**Աջակցություն գյուղատնտեսական տվյալների հավաքագրմանը**

Ծրագրի հիմնական նպատակն է հանրապետության գյուղական համայնքների, ագրարային ոլորտի տարբեր ճյուղերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, դրանց մեքենայական մշակումը, պահպանումն ու վերլուծությունը և արդյունքում՝ ոլորտի գործունեության բարելավմանն առընչվող առաջարկությունների, ծրագրերի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ ելակետային բազայի ստեղծումը:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա իրականացվում է գյուղական համայնքների վիճակի, բուսաբուծության, անասնաբուծության ճյուղերի, գյուղատնտեսության կոոպերացիայի, պարենային անվտանգության և այլ բնագավառների զարգացմանը նպաստող առաջարկությունների մշակումը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ագրոպարենային ոլորտում:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումներում:

2007-2009 թթ ՄԺԾԾ ծրագրով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել 30.0 մլն դրամ:

**Գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով ԳԱՄԿ-ների և ԳԱՀԿ-ների ֆինանսավորում**

Հայաստանի Հանրապետության կառավարության և Համաշխարհային բանկի միջազգային զարգացման ընկերության միջև 2005 թվականի հուլիսի 20-ին ստորագրված «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» վարկային համաձայնագրի (վարկ թիվ 4095-AM) 4-րդ հավելվածի 3-րդ ենթակետի «(a)» և «(b)» ենթակետերով, որպես նախապայման սահմանվել է, որ վարկառուն պետք է «(a) ապահովի, որպեսզի Ծրագրի B1 Մասի (գյուղական խորհրդատվական ծառայությունների) խորհրդատվական ծախսերի համար հատկացվեն համապատասխան բյուջետային միջոցներ»», և «(b) մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը ներկայացնի ընկերությանը, հաջորդ տարվա համար Վարկառուի ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղական խորհրդատվական ծառայությունների համար նախատեսված, բյուջետային հատկացումները»:

Վերոհիշյալը ամրագրվել է նաև ՀՀ վարչապետին ուղղված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2005 թվականի հուլիսի 2-ի N 6/1-3336-7082 նամակում:

Վերոհիշյալ ծրագրի նշված բաղադրիչը պետք է իրականացվի 4 տարվա ընթացքում:

ՀՀ պետական բյուջեից (որպես բյուջետային առանձին նպատակային տող) հատկացվող ծախսերը պետք է կազմեն 711530.0 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Ծրագիրն ընդգրկված չի եղել ՀՀ 2006-2008 թթ ՄԺԾԾ-ում, սակայն համաձայնագրով սահմանված նախապայմանների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ 2006 թ. պետական բյուջեում նախատեսվել է առանձին նպատակային «Գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով ԳԱՄԿ-երի և ԳԱՀԿ-երի ֆինանսավորում» բյուջետային ծրագիրը՝ 46361.2 հազ. դրամ գումարով: 2007-09թթ. ՄԺԾԾ-ով 2007թ նախատեսվել է 44.024 մլն դրամ, իսկ 2008-09թթ. յուրաքանչյուր տարվա համար 107.595 մլն դրամ:

**Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Ծրագիր (ԳԶՄՀ)**

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման վարկային համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության զարգացման միջազգային Հիմնադրամի կողմից ստորագրվել է 2005թ. հունվարի 28-ին: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 28.72 մլն. ԱՄՆ դոլար: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել չորս տարվա ընթացքում: Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող առավել աղքատ 7 լեռնային մարզերի գյուղական բնակչության եկամուտների կայուն աճը և ծրագրի սահմանված տարածքներում աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսության հետ առընչվող տնտեսական գործունեության կայուն աճին:

Ծրագրի շրջանակներում 2007-2009 թթ ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում, որի շրջանակներում նախատեսվում է աջակցել գյուղական տնտեսական գործունեության ակտիվացմանը՝ ԳՏՏԶԾ տարածքում գյուղական միջին և փոքր արտադրողների ու ձեռնարկատերերի համար համապատասխան ֆինանսավորումը մատչելի դարձնելու միջոցով:

- գյուղական միջնորդային բիզնես ծառայություններ, որի շրջանակներում նախատեսվում է ծրագրի տարածքում զարգացնել ԳՏՏԶԾ հավատարմագրած բիզնես ծառայություններ մատակարարող կազմակերպությունների ցանց, որոնք կաջակցեն վարկառուներին բիզնես ծրագրեր նախապատրաստելու գործում:

- տնտեսական հիմնավորված ենթակառուցվածքներ, որի շրջանակներում նախատեսվում է բարելավել մատակարար-արժեքային շղթայի գործունեության արդյունավետությունը՝ հիմնական ենթակառուցվածքների թերությունների վերացման ճանապարհով:

**Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր**

Ծրագրի նպատակն է՝ աջակցել Հայաստանի փոքր և միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը՝ ֆերմերների ու գյուղական ձեռնարկատերերի համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում շուկայամետ և պետական ներդրումներ խթանելու միջոցով:

Այդ կապակցությամբ 2006 թվականից սկսած իրականացվում է ծրագրի կատարման միջոցառումների հիմնական հատվածում ընդգրկված փոքր և միջին ֆերմերների ու գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների ու անհատ ձեռներեցների բարելավված տեղեկատվական ու ֆինանսական ծառայությունների (մասնավորապես վարկերի տրամադրման միջոցով) տրամադրում, որակյալ մուտքային ապրանքների (հումքի) առավել մատչելի առաջարկների ու կատարելագործված տեխնոլոգիաների տրամադրում, ինչպես նաև շուկայավարմանը նպատակաուղղված աջակցության տրամադրում:

Աղյուսակ 11.4 2005-2009 թթ գյուղատնտեսության ոլորտի ծախսերը /մլն դրամ/

| Ծրագրի անվանումը | 2005թ փաստ. ֆինանս. | ՀՀ 2006թ. հաստատված բյուջե | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ Գյուղատնտեսության միջոցառումն. իրականաց. ծրագիր, որից** | 3,921.11 | 9,002.11 | 9,942.26 | 10,226.04 | 7,953.65 |
| **Ընթացիկ ծախսեր** | 2,820.66 | 3,522.30 | 4,001.61 | 3,893.42 | 3,838.62 |
| **Կապիտալ ծախսեր** | 1,100.45 | 4,208.62 | 3,897.66 | 4,190.62 | 2,891.93 |
| **Վարկավորում՝ հանած մարումը** | 0.00 | 1,271.20 | 2,043.00 | 2,142.00 | 1,223.10 |
| **10.01.01.Գործադիր իշխանության պետ. կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում** | 258.61 | 463.22 | 515.37 | 532.33 | 593.19 |
| **Ընթացիկ ծախսեր** | 258.61 | 463.22 | 515.37 | 532.33 | 593.19 |
| **Կապիտալ ծախսեր** | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **10.02. ՀՈՂԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ որից** | 230.13 | 616.95 | 610.89 | 711.39 | 712.03 |
| Ընթացիկ ծախսեր | 72.28 | 87.85 | 42.29 | 42.29 | 42.93 |
| Կապիտալ ծախսեր | 157.85 | 529.10 | 568.60 | 669.10 | 669.10 |
| 1. Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ | 34.54 | 36.85 | 42.29 | 42.29 | 42.93 |
| Ընթացիկ ծախսեր | 34.54 | 36.85 | 42.29 | 42.29 | 42.93 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2.Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմերի և ռեժիմների ճշտում, որից | 19.26 | 51.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 19.26 | 51.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 3. Արարատյան հարթավայրի ոռոգելի հողերի աղային հանույթի կատարում, որից | 18.48 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 18.48 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 4. Արարատյան հարթավայրի ոռոգելի հողերի բարելավում հակահեղեղային միջոցառումների իրականացման միջոցով | | 369.10 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 369.10 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 5.Արարատյան հարթավայրի ոռոգելի երկրորդային աղակալած հողերի արմատական բարելավում, որից | | 0.00 | 268.60 | 369.10 | 369.10 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 268.60 | 369.10 | 369.10 |
| 6. Բնական կերհանդակների (արոտների) բարելավում և ջրարբիացում, որից | 157.85 | 160.00 | 300.00 | 300.00 | 300.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կապիտալ ծախսեր | 157.85 | 160.00 | 300.00 | 300.00 | 300.00 |
| **10.04 ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ որից** | 136.93 | 471.37 | 389.01 | 325.01 | 325.01 |
| Ընթացիկ ծախսեր | 136.93 | 471.37 | 389.01 | 325.01 | 325.01 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 1. Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում | 55.00 | 75.37 | 89.01 | 89.01 | 89.01 |
| Ընթացիկ ծախսեր | 55.00 | 75.37 | 89.01 | 89.01 | 89.01 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2. Բույսերի պաշտպանության միջոցառումներ, որից | 81.93 | 396.00 | 300.00 | 236.00 | 236.00 |
| Ընթացիկ ծախսեր | 81.93 | 396.00 | 300.00 | 236.00 | 236.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **10.05. ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ և ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ որից** | 1,245.67 | 1,441.93 | 1,349.70 | 1,349.70 | 1,356.9 9 |
| Ընթացիկ ծախսեր | 1,052.36 | 1,228.73 | 1,349.70 | 1,349.70 | 1,356.9 9 |
| Կապիտալ ծախսեր | 193.31 | 213.20 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 1. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում | 142.08 | 137.04 | 154.33 | 154.33 | 161.61 |
| Ընթացիկ ծախսեր | 142.08 | 137.04 | 154.33 | 154.33 | 161.61 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2. Պատվաստուկներ և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում, որից | 666.50 | 797.37 | 797.37 | 797.37 | 797.37 |
| Ընթացիկ ծախսեր | 666.50 | 797.37 | 797.37 | 797.37 | 797.37 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 3. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացում | 14.00 | 14.00 | 14.00 | 14.00 | 14.00 |
| Ընթացիկ ծախսեր | 14.00 | 14.00 | 14.00 | 14.00 | 14.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 4. Անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում | 229.78 | 280.32 | 384.00 | 384.00 | 384.00 |
| Ընթացիկ ծախսեր | 229.78 | 280.32 | 384.00 | 384.00 | 384.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 5. Սահմանային հսկիչ կետերի կառուցում | | 63.20 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 63.20 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 6. Գյուղատնտեսական նշականության այլ օբյեկտների հիմնանորոգում | 193.31 | 150.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 193.31 | 150.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **10.06.ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ** | 458.52 | 1,137.30 | 1,342.27 | 1,251.37 | 1,353.4 7 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ընթացիկ ծախսեր | 458.52 | 743.70 | 749.57 | 758.81 | 760.77 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 393.60 | 592.70 | 492.57 | 592.70 |
| 1.Անտառպահպանական, անտառպաշտպանական, անտառվերականգնման աշխատանքների իրականացում,որից | 458.52 | 1,115.66 | 1,289.68 | 1,198.78 | 1,300.88 |
| Ընթացիկ ծախսեր | 458.52 | 722.06 | 696.98 | 706.22 | 708.18 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 393.60 | 592.70 | 492.57 | 592.70 |
| 2. Անտառային պետական մոնիտորինգի իրականացում | | 21.65 | 52.59 | 52.59 | 52.59 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 21.65 | 52.59 | 52.59 | 52.59 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **10.07. ՏՈՀՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ որից** | 1,591.25 | 4,871.33 | 5,735.03 | 6,056.23 | 3,612.96 |
| Ընթացիկ ծախսեր | 841.96 | 527.42 | 955.67 | 885.28 | 759.73 |
| Կապիտալ ծախսեր | 749.28 | 3,072.72 | 2,736.36 | 3,028.95 | 1,630.13 |
| Վարկավորում հանած մարումը | 0.00 | 1,271.20 | 2,043.00 | 2,142.00 | 1,223.10 |
| 1. Հատուկ միջոցառումների իրականացում, որից | 0.91 | 1.00 | 1.00 | 1.00 | 1.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.91 | 1.00 | 1.00 | 1.00 | 1.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2. Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում | 21.31 | 25.00 | 28.30 | 28.30 | 28.62 |
| Ընթացիկ ծախսեր | 21.31 | 25.00 | 28.30 | 28.30 | 28.62 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 3. Հիդրոօդերևութաբանական միջոցառումների գծով պետպատվեր | 2.20 | 2.20 | 2.20 | 2.20 | 2.20 |
| Ընթացիկ ծախսեր | 2.20 | 2.20 | 2.20 | 2.20 | 2.20 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 4. Արհեստական սերմնավորման միջոցառումներ, որից | 40.91 | 41.50 | 41.50 | 41.50 | 41.50 |
| Ընթացիկ ծախսեր | 40.91 | 41.50 | 41.50 | 41.50 | 41.50 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 5. Աջակցություն գյուղատնտեսական տվյալների հավաքագրմանը, որից | 26.47 | 30.00 | 30.00 | 30.00 | 30.00 |
| Ընթացիկ ծախսեր | 26.47 | 30.00 | 30.00 | 30.00 | 30.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 6 . Հակակարկտային սարքավորումների ձեռքբերման գործընթացում պետության ստանձնած պարտավորությունների կատարում | 73.17 | | | | |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 73.17 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 7. Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի հաշվին իրականացվող հակահեղեղային միջոցառումներ | 252.01 | 214.10 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 252.01 | 214.10 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 8. Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի հաշվին իրականացվող անտառվերականգնման միջոցառումներ | 209.33 | 399.75 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 209.33 | 399.75 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. Գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով ԳԱՄԿ-ների և ԳԱՀԿ-ների ֆինանսավորում | | 46.36 | 44.02 | 107.60 | 107.60 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 46.36 | 44.02 | 107.60 | 107.60 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 10. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալում և հաշվառում | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 11. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիր | 380.17 | | | | |
| Ընթացիկ ծախսեր | 352.19 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 27.98 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 12.Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր | 160.56 | 2,538.09 | 2,736.00 | 2,808.00 | 810.00 |
| Ընթացիկ ծախսեր | 68.08 | 46.86 | 171.00 | 171.00 | 90.00 |
| Կապիտալ ծախսեր | 92.48 | 1,596.68 | 1,170.00 | 1,260.00 | 270.00 |
| Վարկավորում հանած մարումը | 0 | 894.55 | 1,395.00 | 1,377.00 | 450.00 |
| 13.Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ճապոնական դրամաշնորհային ծրագիր | 316.71 | 247.22 | 236.34 | 159.71 | 111.56 |
| Ընթացիկ ծախսեր | 316.71 | 247.22 | 236.34 | 159.71 | 111.56 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Վարկավորում հանած մարումը | 0 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 14.Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր | | 1,326.11 | 2,615.67 | 2,877.93 | 2,480.49 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 87.28 | 401.31 | 343.98 | 347.27 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 862.18 | 1,566.36 | 1,768.95 | 1,360.13 |
| Վարկավորում հանած մարումը | 0 | 376.65 | 648.00 | 765.00 | 773.10 |
| 15.Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսական ծառայությունների ծրագիր | 107.49 | | | | |
| Ընթացիկ ծախսեր | 13.18 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 94.31 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Վարկավորում հանած մարումը | 0 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

# ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## 12.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական հարցերն ուղղակիորեն առնչվում են երկրի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնախնդիրներին:

Ցանկացած տնտեսական գործունեություն իր ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի վրա: Բնապահպանության ոլորտի խնդիրն է առավելագույն չափով նվազեցնել շրջակա միջավայրի` մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները` ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները:

Վերջին տարիներին ոլորտի զարգացում ընթանում է բյուջետային հատկացումների և միջազգային ֆինանսական/բնապահպանական կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների ընձեռնած հնարավորությունների շրջանակներում, նպատակաուղղված լինելով `

- ♦ կանխարգելել/կամ նվազեցնել շրջակա միջավայրի հետագա աղտոտումը,
- ♦ պահպանել կենսաբազմազանությունը,
- ♦ վերականգնվող բնական ռեսուրսների գծով ապահովել դրանց վերարտադրության անհրաժեշտ ծավալները,
- ♦ չվերականգնվող բնական ռեսուրսների գծով ապահովել դրանց բանական և արդյունավետ օգտագործումը :

Բնագավառի զարգացումն ընթացել է երկրի տնտեսության զարգացմանը զուգընթաց և համահունչ այն բարեփոխումներին, որոնք կատարվել և կատարվում են Հայաստանում` տնտեսության գրեթե բոլոր բնագավառներում:

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում վերջին ժամանակահատվածի հիշատակման արժանի ձեռքբերումներն են եղել`

1. 1999թ.-ից Սևանա լճից էներգետիկ նպատակներով ջրբացթողումների դադարեցումը,
2. Սևանա լճի մակարդակի բարձրացման կայուն միտումները (շարունակական բնույթը) (2002թ.` 44սմ, 2003թ.` 48 սմ, 2004 թ.` 41 սմ, 2005թ.` 41 սմ ) :
3. 2002 թվականից էթիլացված բենզինի արտադրության, օգտագործման և ներմուծման արգելումը,
4. Կայուն օրգանական աղտոտիչ համարվող մի շարք նյութերի արտադրության և օգտագործման արգելումը,
5. Ջերմոցային գազերի, ծծմբի, ազոտի օքսիդների, ամոնիակի և ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման գործողությունները,
6. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ստեղծումը,
7. Հայաստանի կողմից վավերացվել են մի շարք կարևոր բնապահպանական միջազգային համաձայ- նագրեր ու կոնվենցիաներ, այդ թվում`

➢ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրություն, որը հնարավորություն կտա Հայաստանին մասնակցելու այդ արձանագրությամբ

սահմանված միջազ-գային երկկողմանի համագործակցության մեխանիզմներում, իրականացնելով երկրի տնտեսական զարգացմանը նպատակաուղղված ներդրումային նախագծեր,

➢ «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում՝ իրականացված համապատասխան նախաձեռնող քայլերի արդյունքում 2002 թվականի նոյեմբերին կայացած Կոնվենցիայի և Արձա-նագրության Կողմերի հերթական կոնֆերանսի որոշմամբ Հայաստանը դասվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի երկրների դասին, որը թույլ կտա օգտվելու Մոնրեալի արձանագրության ներքո գործող բազմակողմանի ֆոնդից՝ Հայաստանում օզոնաանվտանգ տեխնոլոգիաներ ներդնելու համար,

➢ «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» Ռոտերդամի կոնվենցիա,

➢ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա,

➢ «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Կոպենհագենի և Լոնդոնի ուղղումներ :

8. Ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի զարգացումը և ընդլայնումը, այդ թվում՝

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը նոր էջ է բացում Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացվող քաղաքականության տարեգրությունում:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում և դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում կատարված մի շարք փոփոխությունները և լրացումները նպաստել են բնօգտագործման հաշվառվող ծավալների ավելացման և բնապահպանական տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, որի շնորհիվ բնապահպանական և բնօգտագործ-ման վճարների գծով շարունակական կերպով ապահովվում է պետական բյուջեի մուտքերի զգալի աճը (1998 թ. համեմատ աճել են ավելի քան 8 անգամ), որն իրեն հերթին հնարավորություններ է ընձեռում աստիճանական կերպով զգալի չափերով ավելացնելու բնապահպանական համապատասխան միջոցա-ռումների իրականացման համար պետական բյուջեից ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները,

**Գծանկար 12.1** **Բնապահպանության ոլորտի բյուջետային ֆինանսավորման ծավալները (մլն.դրամ)**



**Ընդամենը ֆինանսավորում (ներառյալ վարկային միջոցները)**

**այդ թվում՝ առանց վարկային միջոցների**

- «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդու-նումը, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ջրային ռեսուրսների, հողային ռեսուրսների և մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգերի հաս-տատումը հնարավորություն է ընձեռում բնապահպանական տեսչական մարմիններին ավելի արդյու-նավետ և գործուն կերպով ապահովել շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկման և հատուցման գործընթացը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը (2005 թվական), որը հնարավորություն կտա 2006 թվականին Հայաստանում ներդնել ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների վերահսկողության համապատասխան համակարգ:
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքից բխող՝ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում լիցենզավորման կարգերի մշակումը և ՀՀ կառավարության կողմից դրանց հաստատումը:
- Բնապահպանական տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերի զգալի աճը (2004 թ. համեմատ աճել են ավելի քան 60.6% կամ 999.5 մլն. դրամով ):
- ՀՀ նոր ջրային օրենսգրքի համաձայն ձևակերպված ՋԹ-ներով իրավական դաշտ է բերվել հանրապե-տության ջրօգտագործման ծավալի շուրջ 90%-ը:
- Ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք փաստաթղթերի ընդունումը՝
- Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք,
- «Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման միջոցա-ռումների ծրագիր»,
- «Հայաստանի Հանրապետության «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվեն-ցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2005-2010 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկ»,
- «Կենսաբազմազանության մասին», «Կլիմայի փոփոխության մասին» և «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիաներից բխող՝ խաչաձևվող խնդիրների իրականացման միջոցառումների ցանկ:

**<u>Գծանկար 12.2</u> Բնօգտագործման վճարների դինամիկան 2001-2005 թ.թ. / մլն.դրամ /**




Վերջին երկու տարիների (2003 – 2005 թ.թ.) կտրվածքով ոլորտը բնութագրվում է հետևյալ հիմնական ցուցանիշներով

1) «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2003-2005 թվականների տարեկան ծրագրի իրականացման շրջանակներում.

1.1. Լճի ջրի մակարդակը 2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1898.06 մ, որը համապատասխանում է 1991 թվականի լճի մակարդակի ցուցանիշին: Մակարդակի բարձրացումը անցած չորս տարիների ընթացքում կազմել է 174 սմ, որը հերթական անգամ վկայում է լճի ջրի մակարդակի բարձրացման կայուն միտումների մասին:

1.2. Սևանա լճի իշխան ձկան և դրա տարատեսակների վերաճի ապահովում գերակա խնդրի կատարման շրջանակներում իշխանի, նրա ենթատեսակների պաշարների համալրման գծով ֆինանսավորման մի քանի աղբյուրների (պետական բյուջեի, «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտա-բյուջետային հաշվի, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների) հաշվին 2004 թվականի համեմատ Սևանա լիճ է բաց թողնվել ավելի մեծ ծավալով մանրաձկներ՝

1.3. Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված՝ լճի շրջակա տարածքների գույքագրում և հաշվառում գերակա խնդրի կատարման շրջանակներում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված 52251.4 հազ. դրամ գումարի հաշվին իրականացվել է Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների շուրջ 92 հա մաքրման աշխատանքները:

2) ՀՀ նոր ջրային օրենսգրքի համաձայն ձևակերպված ջրօգտագործման թույլտվություններով իրավական դաշտ է բերվել հանրապետության ջրօգտագործման ծավալի շուրջ 90%-ը:

3) «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվել են շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրու-թյուններ՝

մթնոլորտային օդի գծով Երևանի 5, Վանաձորի 3, Ալավերդու 2, Գյումրիի, Արարատի և Հրազդանի մեկական դիտակայանների միջոցով որոշվել է մթնոլորտային օդն աղտոտող մինչև 11 ցուցանիշ (ծծմբի երկօքսիդ, ազոտի օքսիդ, ազոտի երկօքսիդ, փոշի, բենզոլ, տոլուոլ, քսիլոլ, էթիլբենզոլ, քլորոպրեն, ածխածնի օքսիդ):

ջրերի աղտոտվածության գծով 36 ջրային օբյեկտներում՝ Փամբակ, Դեբեդ, Մարցիգետ, Ձորագետ, Ախթալա, Հրազդան, Մարմարիկ, Գետառ, Սևջուր, Քասախ, Արաքս, Ազատ, Վեդի, Արփա, Մեղրիգետ, Ողջի, Գեղի, Որոտան, Գորիսգետ, Սիսիան, Արծվանիկ, Գավառագետ, Ծակքար, Արգիճի, Մարտունի, Վարդենիս, Կարճաղբյուր, Սոտք, Ձկնագետ, Մասրիկ, Աղստև, Գետիկ գետերի, Արփա-Սևան թունելի, Կեչուտի ջրամբարի, Երևանյան լճի, ինչպես նաև Սևանա լճի սահմանված 104 դիտակետերում:

4) Հայհիդրոմետի բնականոն աշխատանքի արդյունքներով հանրապետության ազգաբնակչությանը, ղեկավար մարմիններին, շահագրգիռ կազմակերպություններին ու ձեռնարկություններին տրամադրվել է փաստացի և սպասվող եղանակի մասին տեղեկատվություն, հիդրոօդերևութաբանական, հելիոերկրաֆի-զիկական և ֆոնային-գամմա ռադիացիոն իրավիճակի մասին տեղեկանքներ, կոնսուլտացիաներ, վտանգավոր և աղետային հիդրոօդերևութաբանական երևույթների մասին տրվել նախազգուշացումներ, այդ թվում բավարար օդերևութաբանական սպասարկմամբ ապահովվել են օդանավերի թռիչքները:

## 12.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 12.2.1. Նպատակները

Ոլորտի զարգացման 2007-2009թ.թ. ժամանակահատվածի գերակայությունները, որոնց շրջանակ-ներում ձևավորվելու են առաջիկա երեք տարվա նպատակները, սահմանվել են վերջին ժամանակա-հատվածում մշակված և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած մի շարք փաստաթղթերի հիման վրա, այդ թվում՝

- Շրջակա միջավայրի պահպանության Ազգային գործողությունների ծրագիր (1998թ.)
- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ծրագիր (1998թ.)
- Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր (2002թ.)
- Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական ռազմավարության և ազգային գործողությունների ծրագիր (2002թ.),
- Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր (2003թ.)

2007 – 2009թթ. զարգացման կարևորագույն նպատակներն են՝

(i) ՀՀ շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելումը կամ նվազեցումը,

(ii) մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ապահովումը,

(iii) շրջակա միջավայրի վիճակի և հիդրոօդերևութաբանական երևույթների դիտարկումների, ուսում-նասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովումը,

(iv) ընդերքի պահպանության և արդյունավետ օգտագործման ապահովումը:

### 12.2.2. Գերակայությունները

Միջնաժամկետ ժամանակահատվածում բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների և Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում ներառված ներքոհիշյալ հրատապ հիմնախնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝

- Սևանա լճի հիմնախնդիր
- Կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանություն
- Պայքար անապատացման գործընթացի դեմ:

Բնագավառի զարգացման 2007-2009թթ. ժամանակահատվածի գերակայություններն են համարվում՝

(i) շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, բնական ռեսուրսների բանա-կան օգտագործման և վերարտադրության պետական կառավարման ապահովումը,

(ii) շրջակա միջավայրի վիճակի և հիդրոօդերևութաբանական երևույթների դիտարկումները,

(iii) ընդերքի ուսումնասիրություն և պահպանություն:

Բնապահպանության ոլորտում 2006-2008թթ. և 2007-2009 ՄԺԾ ծրագրերով նախատեսված ծախսերի համեմատականը ներկայացված է հետևյալ աղյուսակով.

**Աղյուսակ .12.1. Ծախսերի համեմատական աղյուսակ 2006-2008թթ. ՄԺԾԾ և 2007-2009թթ. ՄԺԾԾ միջև ըստ ենթախմբերի (մլն դրամով)**

| Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի անվանումները | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006-2008թ. ՄԺԾԾ | 2006թ. հաստատված բյուջե | 2006-2008թ. ՄԺԾԾ | 2007-2009թ. ՄԺԾԾ | 2006-2008թ. ՄԺԾԾ | 2007-2009թ. ՄԺԾԾ | 2007-2009թ. ՄԺԾԾ |
| 11.01 Բնապահպանության բնագավառում պետական կառավարում | 651.6 | 788.7 | 765.0 | 911.5 | 890.9 | 931.0 | 1032.3 |
| 10.03 Ջկնաբուծություն, ջրային տնտեսություն | 14.0 | 14.0 | 14.0 | 14.0 | 14.0 | 14.0 | 14.0 |
| 11.02 Լեռնահանքային արդյունաբերություն և երկրաբանություն | 23.0 | 44.1 | 40.0 | 49.1 | 41.5 | 43.0 | 23.8 |
| 11.05 Բնության հատուկ պահպանվող տարածքներ | 206.1 | 511.7 | 218.8 | 482.4 | 246.8 | 467.2 | 414.9 |
| 11.06 Բնապահպանական այլ միջոցառումներ | 1192.1 | 1632.3 | 1815.4 | 1989.9 | 4032.3 | 2019.0 | 179.1 |
| 13.05 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 454.1 | 521.3 | 321.2 | 430.0 | 287.6 | 425.0 | 403.4 |
| **Ընդամենը** | **2540.9** | **3512.1** | **3174.4** | **3876.9** | **5513.1** | **3899.2** | **2067.5** |

2007-2009թթ. ՄԺԾ ծրագրով 2007 թվականի համար նախատեսված ծախսերի ավելացումը 2006-2008թթ. ՄԺԾԾ համապատասխան ծախսերի նկատմամբ հիմնականում պայմանավորված է պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի ֆինանսավորման ծավալների ավելացմամբ, ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման նոր ծրագրի նախատեսմամբ, ինչպես նաև կառավարման ապարատի պահպանման ծախսերի ավելացմամբ: 2007-2009թթ. ՄԺԾ ծրագրով 2008 թվականի համար նախատեսված ծախսերը նվազում են 2006-2008թթ. ՄԺԾԾ նույն ժամանակահատվածում ծրագրող ծախսերի նկատմամբ, ինչը բացատրում է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Բնական պաշարների կառավար-ման և չքավորության նվազեցման ծրագրի

ֆինանսավորման ծավալների պակասեցումով (ծրագիրը ավարտվելու է 2008 թվականին), ինչպես նաև մի շարք բնապահպանական ծրագրերի ծավալների փոփոխությամբ:

### 12.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունից ելնելով 2006-2008 թվականների ՄԺԾԾ-ի համեմատ 2007-2009 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվող ծրագրերի գծով (առանց վարկային ծրագրի և կառավարման ապարատի ծախսերի) ծախսերի մակարդակի վրա ազդող հիմնական գործոն է հանդիսանում պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձի աճը 20 տոկոսով և նվազագույն աշխատավարձի չեմը համապատասխանաբար՝ 2007 թվականին՝ 20.0 հազ դրամ, 2008 թվականին՝ 25.0 հազ դրամ, 2009 թվականին 30.0 հազ դրամ նախատեսումը, որի հետևանքով ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի համեմատ 2007-2009 թվականներին ծախսերը ավելացել են համապատասխանաբար՝ 98.2 մլն դրամով, 129.3 մլն դրամով և 145.8 մլն դրամով:

Շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, այդ թվում՝ անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, բնական ռեսուրսների բանական օգտագործմանն ու վերարտադրությանն ուղղված առաջնային համարվող ծրագրերն են՝

## 12.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2007 – 2009թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում շարունակվելու են ըստ բնագավառների /ոլորտների/ ներքոհիշյալ ծրագրերի կատարումը.**

**I. «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ** կատարմանը նպատակաուղղված Սևանա լճի համալիր ծրագրի շրջանակներում իրականացման ենթակա միջոցառումների և ենթածրագրերի կատարման ապահովում, այդ թվում՝

**(I)** Սևանա լճում արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրություն, որի համար 2007–2009թթ. հատկացվելու է 30.0 մլն դրամ՝ յուրաքանչյուր տարվա համար 10.0 մլն դրամ:

**(II)** Սևանա լճի ջրհավաք ավազանի վայրի բուսական և կենդանական ռեսուրսների հաշվառման շրջանակներում «Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրի իրականացումը, որի համար 2007–2009թթ. հատկացվելու է 12.0 մլն դրամ՝ յուրաքանչյուր տարվա համար 4.0 մլն դրամ;

**(III)** Սևանա լճի շուրջ 125 հա ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների իրականացման համար 2007թ. հատկացվելու է 41.7 մլն դրամ:

### II. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ջրի ազգային ծրագրով նախատեսված աշխատանքները,

2.Ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագրով նախատեսված միջոցառումները :

Այս բնագավառում 2007-2009թթ. պետական բյուջեից հատկացումները համապատասխանաբար կազմելու են՝ 98.3 մլն դրամ, 2008թ. 62.6 մլն դրամ, 2009թ. 64.9 մլն դրամ:

## III. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ծրագրավորվող ժամանակահատվածում բնագավառի գծով գոյություն ունեցող հինգ գերակա ծրագրերին զուգընթաց (բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունը ապահովող ծրագրերին 2007-2009թթ. ընդամենը ուղղվելու է 844.2 մլն դրամ, այդ թվում՝ 2007թ. 401.6 մլն դրամ, 2008թ. 402.2 մլն դրամ, 2009թ. 403.7 մլն դրամ) իրականացվելու են՝

ՀՀ ԲՀՊՏ պետական ռազմավարության և ազգային գործողությունների ծրագրում ներառված բնության հատուկ պահպանվող տարածքների վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման, գոտիավորման նախագծերի կազմման աշխատանքներ,

տեխնիկական աջակցություն և սարքավորումների տրամադրում Էրեբունու արգելոցին և մոնիտորինգի ու հետազոտական կայանի ստեղծում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ –ում:

Այս բնագավառում 2007-2009թթ. պետական բյուջեից հատկացումները համապատասխանաբար կազմելու են՝ 2007թ. 430.1 մլն դրամ, 2008թ. 457.2 մլն դրամ, 2009թ. 403.7 մլն դրամ

## IV. ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հիդրոօդերևութաբանության ոլորտում «Աջակցություն «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ին » ծրագրով աշխատանքները նպատակաուղղվելու են.

- օդերևութաբանական, ագրոօդերևութաբանական, հիդրոլոգիական, ռադիոլոկացիոն, ակտինոմետրիական, օզոնամետրիական և աէրոլոգիական դիտարկումների կատարմանը,
- կլիմայի փոփոխության ուսումնասիրությանը և կլիմայի մոնիտորինգի իրականացմանը,
- հանրապետության տարածքում ռադիացիոն մոնիտորինգի կատարմանը,
- կլիմայի փոփոխության ուսումնասիրությունների կատարմանը,
- հիդրոօդերևութաբանական տվյալների հավաքագրմանը, կանխատեսումների և վտանգավոր աղետային երևույթների վերաբերյալ նախազգուշացումների կազմմանը,
- հանրապետության ղեկավար մարմիններին, զինված ուժերին, ավիացիային, տնտեսավարող սուբյեկտներին, գյուղատնտեսությանը, էներգետիկային, տրանսպորտին և այլ շահագրգիռ կազմակերպություններին հիդրոօդերևութաբանական, ռադիացիոն և հելիոերկրաֆիզիկական տարբեր տեղեկատվությամբ ապահովմանը :

Այս նպատակով 2007-2009թթ. ընդամենը ուղղվելու է 1130.28 մլն դրամ, այդ թվում 2007 թվականին 351.9 մլն դրամ, 2008 թվականին 382.0 մլն դրամ և 2009 թվականին 396.4 մլն դրամ:

2. Շրջակա միջավայրի վիճակի մոնիտորինգի 2007-2009թթ. միջնաժամկետ ծրագիրը, որպես Հանրապետության էկոլոգիական անվտանգության ապահովմանը նպատակամղված քայլերի ամբողջություն, հիմք ունենալով ՀՀ էկոլոգիական մոնիտորինգի և տեղեկույթի պետական հայեցակարգը, կազմելու է Հանրապետության տարածքում 2007-2015թթ. պետական էկոլոգիական

մոնիտորինգի երկարաժամկետ ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը և ուղղված է լինելու քիմիական աղտոտիչներով մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի, հողածածկույթի աղտոտվածության վիճակի, մոնիտորինգի իրականացման, դրանց արդյունքների, աղտոտման պրոցեսի և դրա ազդեցության միտումների գնահատմանը՝ աղտոտման աղբյուր - միջավայրի որակ - աղտոտման հետևանքներ (ազդակիրներ) համակարգում կապերի բացահայտման, դինամիկայի կանխատեսման, աղտոտման հետևանքների տնտեսական գնահատման և շրջակա միջավայրի որակի կառավարման համակարգին համապատասխան տեղեկույթով ապահովման համար:

Այս աշխատանքների իրականացման համար հատկացվելու է՝ 2007 թվականին 97.8 մլն դրամ, 2008 թվականին՝ 98.2 մլն դրամ և 2008թ. 98.7 մլն դրամ:

Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիտորինգի բնագավառի զարգացման նպատակների իրագործման շրջանակներում 2007-2009թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում նաև նախատեսվում է իրականացնել՝

Տեխնիկական աջակցություն «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին /այս նպատակով 2007թ. նախատեսվում է 91.4 մլն դրամ և 2008թ. 100 մլն դրամ/,

«Հիդրոօդերևութաբանական կայանների տեխնիկական վերազինում» ծրագիրը, որի իրականացման համար 2007-2008թվականների հատկացումները համապատասխանաբար կազմելու են 71.1 մլն դրամ և 36.0 մլն դրամ:

## V. ԸՆԴԵՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ծրագրվող ժամանակահատվածում ՝

ա/ ընդերքի ուսումնասիրության բնագավառի գծով «երկրաբանահետախուզական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում կատարվող երկրաբանական ուսումնասիրությունները նպատակաուղղվելու են. Հանրապետության տարածքում օգտակար հանածոների նոր երևակումների հայտաբերմանը և երկրաբանական մի շարք կարևոր հիմնահարցերի պարզաբանմանը նպատակաուղղված երկրաբանական, հիդրոերկրաբանական, երկրաֆիզիկական ու երկրաքիմիական ուսումնասիրություններին և քարտեզագրմանը,

բ/ ընդերքի պահպանության բնագավառի գծով ՝

1. Կշարունակվեն պահուստային հանքավայրերի գույքագրման աշխատանքները,

2.«Աջակցություն «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին ծրագրի շրջանակներում կշարունակվի երկրաբանական ֆոնդի գործունեության արդյունավետության բարձրացումը՝ նպատակաուղղված նրա հիմնական գործառույթների իրականացման ապահովմանը՝ այդ թվում՝

օգտակար հանածոների հանքավայրերի ու հանքերևակումների կադաստրների և օգտակար հանածոների պաշարների հաշվեկշիռների վարում,

երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների հանքավայրերի ու դրանց պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվական նյութերի հավաքագրում և պահպանում :

Նշված աշխատանքների իրականացման համար 2007-2009 թվականների ժամանակահատվածում պետական բյուջեից հատկացումները կազմելու են համապատասխանաբար 49.1 մլն դրամ, 43.0 մլն դրամ և 23.8 մլն դրամ:

VI. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԾՈՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ծրագրվող ժամանակահատվածում «Պետական աջակցություն բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման նպատակով» ծրագրի շրջանակներում կիրականացվեն ելնելով Օրհուսի Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակներից :

Այդ նպատակով 2007-2009 թվականներին հատկացվելու է 25.8մլն դրամ, յուրաքանչյուր տարվա համար 8.6 մլն դրամ:

### VII ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության միջև 2002 թվականի հուլիսի 1-ին ստորագրվել է «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման» ծրագիրը, որն ուժի մեջ է մտել 2002թ. դեկտեմբերի 27 – ին և նախատեսվում է ավարտել 2008թ. դեկտեմբերի 27 – ին: Վարկի գումարը կազմում է 6.7 մլն SDR (10,000,000.0 ԱՄՆ դոլար):

Ծրագրի գործողությունները նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բնական պաշարների կայուն կառավարման մեխանիզմների ստեղծմանը և դրանց իրականացման միջոցով չքավորության նվազեցմանը: ՀՀ Կառավարությունը Ծրագրի իրականացման համար առաջնահերթությունը տվել է այս մարզերին, քանի որ Տավուշի մարզում են գտնվում հանրապետության անտառների ամենամեծ պաշարները, իսկ Գեղարքունիքի մարզում` ռազմավարական նշանակություն ունեցող Սևանա լիճը: Միաժամանակ երկու մարզերում էլ արձանագրվել են հանրապետությունում աղքատության միջին տվյալներից բարձր ցուցանիշներ:

Ծրագրի շրջանակներում 2007-2009 թվականներին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները`

- Ջրհավաք ավազանների համայնքահեն կառավարում.
- Պետական ֆոնդի անտառների կառավարում.
- Պահպանվող տարածքների կառավարում և կենսաբազմազանության պահպանություն.
- Ծրագրի համակարգում և կառավարում:

## 12.4. ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ

Նոր նախաձեռնություններով 2007 – 2009 թ.թ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում ծրագրավորվում է ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագրի իրականացումը, որին ուղղվելու է 2007թ. 10.6 մլն դրամ, 2007թ. 10 մլն դրամ և 2009թ. 11.1 մլն դրամ:

<u>Աղյուսակ 12.2.</u> Գոյություն ունեցող և նոր ծրագրերի ֆինանսավորումը 2007-2009թթ. (մլն դրամով)

| Ցուցանիշը | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|
| Բնապահպանություն | 3876.9 | 3899.2 | 2067.5 |
| Նոր ծրագրեր | 10.6 | 10.0 | 11.1 |
| % ոլորտի նկատմամբ | 0.3 | 0.3 | 0.5 |

| | | | |
|---|---|---|---|
| գոյություն ունեցող ծրագրեր | 3866.3 | 3889.2 | 2056.4 |
| % ոլորտի նկատմամբ | 99.7 | 99.7 | 99.5 |

**Աղյուսակ 12.3**. 2007-2009թթ. բնապահպանության ոլորտի ծախսերը ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի մլն դրամով

| | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|
| Ա. Ընթացիկ ծախսեր | 2096.4 | 2061.8 | 2048.5 |
| Կառավարման մարմնի պահպանում | 911.5 | 931.0 | 1032.3 |
| Բնապահպանական ծրագրեր | 1184.9 | 1040.6 | 1005 |
| Բ.Կապիտալ ծախսեր | 1780.5 | 1837.4 | 19.0 |
| Բնապահպանական ծրագրեր | 1780.5 | 1837.4 | 19.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 3876.9 | 3899.2 | 2067.5 |

**Աղյուսակ 12.4** Պետական բյուջեից բնապահպանության ոլորտի գծով ծախսերը 2007-2009թթ. ըստ ենթախմբերի (մլն դրամով)

| Ծախսերի գործառական դասակարգման ենթախմբերի անվանումները | 2005թ.փաստացի կատարողական | 2006թ. ծրագիր | փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, տոկոս | 2007թ. | նախորդ տարվա նկատմամբ, տոկոս | 2008թ. | փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, տոկոս | 2009թ. | փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, տոկոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր ծախսերը Հայաստանի ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսով | 0.09 | 0.15 | x | 0.14 | x | 0.13 | x | 0.06 | x |
| Ընդհանուր ծախսերը պետական բյուջեի ծախսերի նկատմամբ՝ տոկոսով | 0.5 | 0.73 | x | 0.74 | x | 0.66 | x | 0.34 | x |
| Բնապահպանության ոլորտ, այդ թվում | 2100.5 | 3512.1 | 67.2 | 3876.9 | 10.4 | 3899.2 | 0.6 | 2067.5 | -47.0 |
| 11.01 Բնապահպանու-թյան բնագավառում պետական կառավարում | 477.3 | 788.7 | 65.2 | 911.5 | 15.6 | 931.0 | 2.1 | 1032.3 | 10.9 |
| տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ | 22.7 | 22.5 | x | 23.5 | x | 23.9 | x | 49.9 | x |
| 10.03 Ջկնաբուծություն, ջրային տնտեսություն | 13.4 | 14.0 | 4.5 | 14.0 | 0.0 | 14.0 | 0.0 | 14.0 | 0.0 |
| տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ | 0.6 | 0.4 | x | 0.4 | x | 0.4 | x | 0.7 | x |
| 11.02 Լեռնահանքային արդյունաբերություն և երկրաբանություն | 27.0 | 44.1 | 63.3 | 49.1 | 11.3 | 43.0 | -12.4 | 23.8 | -44.7 |
| տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ | 1.3 | 1.3 | x | 1.3 | x | 1.1 | x | 1.2 | x |
| 11.05 Բնության հատուկ պահպանվող տարածքներ | 236.5 | 511.7 | 116.4 | 482.4 | -5.7 | 467.2 | -3.2 | 414.9 | -11.2 |
| տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ | 11.3 | 14.6 | x | 12.4 | x | 12.0 | x | 20.1 | x |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11.06 Բնապահպանական այլ միջոցառումներ | 1096.2 | 1632.3 | 48.9 | 1989.9 | 21.9 | 2019.0 | 1.5 | 179.1 | -91.1 |
| տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ | 52.2 | 46.5 | x | 51.3 | x | 51.8 | x | 8.7 | x |
| 13.05 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 250.1 | 521.3 | 108.4 | 430.0 | -17.5 | 425.0 | -1.2 | 403.4 | -5.1 |
| տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ | 11.9 | 14.8 | x | 11.1 | x | 10.9 | x | 19.5 | x |

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2007-2009 թվականների ընթացքում ըստ առանձին ծախսային ուղղությունների ծախսերը համառոտ ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 12.5.** 2005-2009թթ. բնապահպանության ոլորտի ծախսերը ըստ ծրագրերի

(մլն դրամով)

| Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2005թ. փաստացի կատարողական | 2006թ. հաս տատված բյուջե | 2007 թ. | 2008 թ. | 2009 թ. |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ծախսեր, այդ թվում | 2100.52 | 3512.10 | 3876.88 | 3899.23 | 2067.47 |
| Ընթացիկ ծախսեր | 1118.38 | 1892.66 | 2096.40 | 2061.81 | 2048.47 |
| Կապիտալ ծախսեր | 982.13 | 1619.44 | 1780.48 | 1837.42 | 19.00 |
| 11.01 Բնապահպանության բնագավառում պետական կառավարում | 477.34 | 788.71 | 911.45 | 931.02 | 1032.33 |
| Ընթացիկ ծախսեր | 477.34 | 758.71 | 911.45 | 931.02 | 1032.33 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 30.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **10.03 Ձկնաբուծություն, ջրային տնտեսություն ընդամենը, այդ թվում** | 13.36 | 14.00 | 14.00 | 14.00 | 14.00 |
| Ընթացիկ ծախսեր | 13.36 | 14.00 | 14.00 | 14.00 | 14.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ձկան պաշարների համալրման գծով պետական պատվեր | 10.00 | 10.00 | 10.00 | 10.00 | 10.00 |
| Ընթացիկ ծախսեր | 10.00 | 10.00 | 10.00 | 10.00 | 10.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում | 3.36 | 4.00 | 4.00 | 4.00 | 4.00 |
| Ընթացիկ ծախսեր | 3.36 | 4.00 | 4.00 | 4.00 | 4.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **11.02 Լեռնահանքային արդյունաբերության և երկրաբանահետախուզություն ընդամենը,, այդ թվում՝** | 27.00 | 44.09 | 49.07 | 42.99 | 23.80 |
| Ընթացիկ ծախսեր | 7.00 | 25.09 | 30.07 | 23.99 | 4.80 |
| Կապիտալ ծախսեր | 20.00 | 19.00 | 19.00 | 19.00 | 19.00 |
| Երկրաբանահետախուզական աշխատանքներ | 20.00 | 19.00 | 19.00 | 19.00 | 19.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կապիտալ ծախսեր | 20.00 | 19.00 | 19.00 | 19.00 | 19.00 |
| Պետական աջակցություն «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին | 4.00 | 4.19 | 4.80 | 4.80 | 4.80 |
| Ընթացիկ ծախսեր | 4.00 | 4.19 | 4.80 | 4.80 | 4.80 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պահուստային հանքավայրերի գույքագրում | 3.00 | 20.90 | 25.27 | 19.19 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 3.00 | 20.90 | 25.27 | 19.19 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **11.05 Բնության հատուկ պահպանվող տարածքներ ընդամենը, այդ թվում`** | 236.49 | 511.72 | 482.43 | 467.18 | 414.86 |
| Ընթացիկ ծախսեր | 199.58 | 450.75 | 453.37 | 412.18 | 414.86 |
| Կապիտալ ծախսեր | 36.91 | 60.97 | 29.06 | 55.00 | 0.00 |
| Բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ստեղծման ծրագրերի մշակման գծով պետական պատվեր | 4.40 | 1.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 4.40 | 1.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պետական աջակցություն «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրու-թյունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման նպատակով | 78.40 | 151.61 | 166.41 | 166.41 | 166.80 |
| Ընթացիկ ծախսեր | 78.40 | 151.61 | 166.41 | 166.41 | 166.80 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պետական աջակցություն «Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրու-թյունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման նապատակով | 27.17 | 66.47 | 72.93 | 73.41 | 73.48 |
| Ընթացիկ ծախսեր | 27.17 | 66.47 | 72.93 | 73.41 | 73.48 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պետական աջակցություն «Արգելո-ցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, ԲՀՊ տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանք-ների իրականացման նպատակով | 31.16 | 59.92 | 65.62 | 65.62 | 66.51 |
| Ընթացիկ ծախսեր | 31.16 | 59.92 | 65.62 | 65.62 | 66.51 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պետական աջակցություն «Շիկահող» պետական արգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխա-տանքների իրականացման նպատակով | 8.98 | 22.56 | 24.84 | 24.90 | 25.10 |
| Ընթացիկ ծախսեր | 8.98 | 22.56 | 24.84 | 24.90 | 25.10 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պետական աջակցություն «Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների իրականացման նպատակով | 42.12 | 66.91 | 71.85 | 71.85 | 71.85 |
| Ընթացիկ ծախսեր | 42.12 | 66.91 | 71.85 | 71.85 | 71.85 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Բնության հատուկ պահպանվող տարածքների կադաստրի ստեղծում | 2.34 | 2.70 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 1.35 | 1.35 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.99 | 1.35 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Տեխնիկական աջակցություն «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներին | 21.04 | 5.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 21.04 | 5.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Բնության հուշարձանների գույքագրման, անձնագրավորման և ցանկի հաստատման ծրագրի մշակման գծով պետական պատվեր | 6.00 | 6.34 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 6.00 | 6.34 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Բնության հատուկ պահպանվող տարածքների վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքներ | 14.88 | 1.00 | 23.45 | 55.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 14.88 | 1.00 | 23.45 | 55.00 | 0.00 |
| «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի վարչական շենքի վերանորոգում | 0.00 | 15.98 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 15.98 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Խոսրովի անտառ» ՊՈԱԿ-ի վարչական շենքի վերանորոգում | 0.00 | 37.65 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 37.65 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կառավարման պլանի մշակման աշխատանքներ | 0.00 | 5.55 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 5.55 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման ծրագիր | 0.00 | 69.03 | 41.73 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 69.03 | 41.73 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Տեխնիկական աջակցություն և սարքավորումների տրամադրում Էրեբունի արգելոցին և մոնիտորինգի ու հետազոտական կայանի ստեղծում «Արգելոցապարկային համալիր» | 0.00 | 0.00 | 5.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՊՈԱԿ-ում | | | | | |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 5.00 | 0.00 | 0.00 |
| ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագիր | 0.0 | 0.0 | 10.6 | 10.0 | 11.1 |
| Ընթացիկ ծախսեր | 0.0 | 0.0 | 10.00 | 10.00 | 11.12 |
| Կապիտալ ծախսեր | 0.0 | 0.0 | 0.61 | 0.00 | 0.00 |
| **11.06 Բնապահպանական այլ միջոցառումներ ընդամենը, այդ թվում՝** | 1096.24 | 1632.25 | 1989.93 | 2019.06 | 179.09 |
| Ընթացիկ ծախսեր | 171.02 | 319.08 | 328.60 | 291.64 | 179.09 |
| Կապիտալ ծախսեր | 925.22 | 1313.17 | 1661.33 | 1727.42 | 0.00 |
| Բնապահպանության ոլորտի տեխնի-կական կանոնակարգերի մշակման աշխատանքների գծով պետական պատվեր | 2.65 | 2.60 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 2.65 | 2.60 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Վնասակար նյութերի արտանետումների աղբյուրների և քանակների քարտեզագրում | 8.90 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 8.90 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պետական աջակցություն բնապահ-պանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման նպատակով | 5.75 | 9.35 | 8.58 | 8.58 | 8.58 |
| Ընթացիկ ծախսեր | 4.04 | 7.45 | 8.58 | 8.58 | 8.58 |
| Կապիտալ ծախսեր | 1.70 | 1.90 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պետական աջակցություն ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտո-րինգի իրականացում | 37.90 | 82.25 | 91.86 | 92.32 | 92.80 |
| Ընթացիկ ծախսեր | 37.90 | 82.25 | 91.86 | 92.32 | 92.80 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Աղտոտման անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետում-ների տեխնոլոգիական և տարածքային նորմավորման ներդրման մեխանիզմի մշակում | 0.90 | 5.54 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.90 | 5.54 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագիր | 22.45 | 37.07 | 16.13 | 16.13 | 16.13 |
| Ընթացիկ ծախսեր | 9.12 | 16.13 | 16.13 | 16.13 | 16.13 |
| Կապիտալ ծախսեր | 13.33 | 20.94 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ջրի ազգային ծրագրի մշակման աշխատանքներ | 24.80 | 107.85 | 82.18 | 46.47 | 48.73 |
| Ընթացիկ ծախսեր | 24.80 | 107.85 | 82.18 | 46.47 | 48.73 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պետական աջակցություն «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին | 0.00 | 6.14 | 7.00 | 7.00 | 7.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 6.14 | 7.00 | 7.00 | 7.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Թափոնների ըստ վտանգավորության աստիճանի դասակարգում» նորմատիվ փաստաթղթի մշակման աշխատանքներ | 0.00 | 4.41 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 3.70 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.71 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Թափոնների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող նորմատիվ փաստաթղթի մշակման աշխատանքներ | 0.00 | 3.95 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 3.95 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ծաղկաձորի օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի կայանի ստեղծում և շահագործում | 0.00 | 31.75 | 5.85 | 5.85 | 5.85 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 5.85 | 5.85 | 5.85 | 5.85 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 25.90 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման ծրագիր | 0.00 | 0.00 | 91.45 | 100.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 91.45 | 100.00 | 0.00 |
| Համաշխարհային Բանկի աջակցու-թյամբ իրականացվող Բնական պա-շարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր | 628.30 | 976.36 | 1056.88 | 851.13 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 39.35 | 20.76 | 45.00 | 35.15 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 588.94 | 955.61 | 1011.88 | 815.98 | 0.00 |
| Համաշխարհային Բանկի աջակցու-թյամբ իրականացվող Բնական պա-շարների կառավարման և չքավորության նվազեցման դրամաշնորհային ծրագիր | 364.59 | 364.98 | 630.00 | 891.59 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 52.25 | 56.87 | 72.00 | 80.15 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 312.34 | 308.11 | 558.00 | 811.44 | 0.00 |
| **13.05 Ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայություններ ընդամենը, այդ թվում՝** | 250.10 | 521.33 | 430.00 | 424.99 | 403.40 |
| Ընթացիկ ծախսեր | 250.10 | 325.03 | 358.90 | 388.99 | 403.40 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 196.30 | 71.10 | 36.00 | 0.00 |
| Պետական աջակցություն «Հայաս-տանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ին | 250.10 | 300.03 | 351.90 | 381.99 | 396.40 |
| Ընթացիկ ծախսեր | 250.10 | 300.03 | 351.90 | 381.99 | 396.40 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Հիդրոօդերևութաբանական կայանների շենքերի և կառույցների հիմնանորոգում | 0.00 | 22.40 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 22.40 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Ծազկաձորը՝ միջազգային չափա-նիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման միջոցառումների ցանկով նախատեսված հիդրոօդերևու-թաբանական միջոցառումներ | 0.00 | 17.30 | 3.40 | 3.40 | 3.40 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 3.40 | 3.40 | 3.40 | 3.40 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 13.90 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Հիդրոօդերևութաբանական կայանների տեխնիկական վերազինում | 0.00 | 0.00 | 71.10 | 36.00 | 0.00 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 0.00 | 71.10 | 36.00 | 0.00 |
| Սևանա լճում և նրա ավազանում կատարվող հիդրոօդերևութաբանական մոնիտորինգի ծրագիր | 0.00 | 181.60 | 3.60 | 3.60 | 3.60 |
| Ընթացիկ ծախսեր | 0.00 | 21.60 | 3.60 | 3.60 | 3.60 |
| Կապիտալ ծախսեր | 0.00 | 160.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

# ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

## 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տրանսպորտի և կապի ոլորտի 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հիմնական ուղղությունը՝ ***ճանապարհային տնտեսությունն է*** ։

Վերջին տարիներին ճանապարհային բնագավառում զգալի աշխատանքներ է կատարվել: 2005 թվականին ՀՀ պետական բյուջեից իրականացված ֆինանսավորման շնորհիվ զգալիորեն բարելավվել և անվտանգ են դարձել միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները:Մասնավորապես, իրականացվել է 16697.8 մլն.դրամի ճանապարհաշինարարական և շահագործման աշխատանքներ: Նշված գումարի հաշվին իրականացվել են հետևյալ ծրագրերը՝ պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում ծրագիրը՝ 4439.5 մլն.դրամ արժեքով, որից՝ ավտոճանապարհների ձմեռային պահպանությունը (միջպետական նշանակության 1324.3 կմ, հանրապետական՝ 1495.8 կմ )՝ 720.1 մլն.դրամ արժեքով , Պուշկինի թունելի շահագործումը՝ 49.0 մլն.դրամ արժեքով, Սպիտակի թունել՝ 25.0 մլն.դրամ , Դիլիջանի թունել՝ 85.6 մլն.դրամ: Իրանացվել են նաև Մեղրիի (7.9 մլն.դրամ), Եղվարդի (11.0 մլն.դրամ) ,Աշտարակի (12.8 մլն.դրամ), Ջերմուկ քաղաքի (10.8 մլն.դրամ), Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման գ.Չորագետի (11.3 մլն.դրամ) կամուրջների պահպանման և շահագործման աշխատանքները: Կատարվել է պետական նշանակության ավտոճանապարհի ընթացիկ (փոսային) նորոգման և պահպանման աշխատանքները 3325.2 մլն.դրամ արժեքով: Ներդրումների արդյունքում տեղի է ունեցել հիմնական ճանապարհային ցանցի վիճակի բարելավման կտրուկ աճ,որի հետևանքով էապես նվազել է ճանապարհներից օգտվողների կողմից կատարված տրանսպորտային միջոցների շահագործման տարեկան ծախսերը:

Կատարված ներդրումների արդյունքում տեղի է ունեցել տրանսպորտային ընդհանուր ծախսերի համարյա կրկնակի նվազում,երթևեկության միջին արագության մեծացման շնորհիվ զգալիորեն կրճատվել է երթևեկության ժամանակը:

Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում ծրագրով (788.2 մլն.դրամ) կատարվել են 34 կամուրջների նորոգման աշխատանքներ:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում ծրագրով (10457.6 մլն.դրամ) հիմնանորոգվել են 38 ճանապարհահատվածներ մոտ 110 կմ երկարությամբ այդ թվում ՝ ռազմավարական նշանակություն ունեցող Կապան-Ծավ-Շվանի Ջոր-Մեղրի ավտոճանապարհի հիմնանորոգում (5999.6 մլն.դրամ):

Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման 7800 կմ ընդհանուր երկարության ավտոմոբիլային ճանապարհների ցանցից 3360 կմ-ը (միջպետական նշանակության ՝1560 կմ և հանրապետական նշանակության ՝ 1800 կմ) գտնվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության իրավասության տակ ,իսկ մնացած 4440 կմ տեղական և համայնքային նշանակության ավտոճանապարհները գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների ենթակայության տակ:

Ճանապարհները սարքին վիճակում պահելու համար անհրաժեշտ է կատարել նորոգման և պահպանության մշտական համակարգված աշխատանքներ:Նախկինում այդ աշխատանքները գրեթե չեն կատարվել:Ամբողջ ճանապարհային ցանցի նորմատիվ նորոգման բոլոր ժամկետները վաղուց անցել են

,ճանապարհների ընթացիկ պահպանության աշխատանքներ կատարվել են միայն մայրուղիների վրա,այն էլ` ոչ լիարժեք ձևով ,որի հետևանքով ճանապարհները հայտնվել էին զանգվածային քայքայման վիճակում: Վատթարացել էին երթևեկության անվտանգության պայմանները,խաթարվել էր ճանապարհների գեղագիտական տեսքը:

Ճանապարհների քանդվելուն նպաստել է նաև ծանր քաշային ցուցանիշներով տրանսպորտային միջոցների հոսքի աննախադեպ աճը, որի դինամիկ ազդեցությունն արդեն նվազ կրողունակություն ունեցող ճանապարհների վրա վերջիններին հասցնում է լրիվ քայքայման: Ուստի շեշտակիորեն նվազել է ճանապարհների արդյունավետությունը, քանզի բազմաթիվ հատվածներում երթևեկության արագությունն այնքան է ընկել, որ գրեթե մոտենում է ճանապարհազուրկ վիճակին:

## 2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ , ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 2.1.Նպատակները

**Տրանսպորտի բնագավառում** 2007-2009թթ. քաղաքականությունը հիմնականում նպատակամղված է լինելու գոյություն ունեցող ճանապարհների (ավտոմոբիլային, երկաթուղային) արդյունավետ օգտագործման միջոցով հանրապետության տարածքում փոխադրումների ամբողջ ծավալով ապահովմանը: 2007 - 2009 թվականներին պետական բյուջեի հաշվին կշարունակվեն հանրապետության համար կենսական և ռազմավարական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման և պահպանման աշխատանքները: Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգումները կիրականացվեն այն ճանապարհահատվածներում, որոնք տարիներ շարունակ շահագործվելով, շարքից դուրս են եկել և տրանսպորտային միջոցների համար դարձել դժվար անցանելի և վտանգավոր: Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ փոսային նորոգումները և ձմեռային պահպանության աշխատանքները տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդարձնեն ավելի անվտանգ ,արագ և դյուրին:

2007-2009թթ. ժամանակահատվածի ՄԺԾԾ-ով նախատեսվում է իրականացնել պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման, շահագործման, հիմնանորոգման,ինչպես նաև տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները:

**Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման, շահագործման և հիմնանորոգման ծրագրով 2007-**2009թթ. նախատեսվում է վերականգնել 1000 կմ ճանապարհահատվածներ, մասնավորապես` պետական նշանակության ավտոճանապարհներն ու դրանց վրա գտնվող արհեստական կառույցները, իրականացնել ավտոճանապարհների նորոգում, այդ թվում ` 2007 թվականին ` միջպետական նշանակության 40 կմ և հանրապետական նշանակության 250 կմ ճանապարհահատվածների նորոգում, 2008 թվականին` միջպետական նշանակության 45 կմ և հանրապետական նշանակության 300 կմ ճանապարհահատվածների նորոգում, 2009 թվականին ` միջպետական նշանակության 45 կմ և հանրապետական նշանակության 250 կմ ճանապարհահատվածների նորոգում, իսկ մարզային նշանակության ավտոճանապարհների նորոգում և հիմնանորոգում` 2007 թվականին` 60 կմ, 2008 թվականին` 70 կմ և 2009 թվականին` 80 կմ:

2007 - 2009թթ. նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետությունում պետական նշանակության ավտոճանապարհահատվածների վրա գտնվող վթարավտանգ 50 կամուրջների (այդ թվում` միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 15 կամուրջ) ինչպես նաև

երկաթուղային կամուրջների վիճակի մանրակրկիտ հետազոտման և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ, որոնց վերականգնումը կիրականացվի 2007-2009թթ. ընթացքում:

2007-2008թթ. կշարունակվի ՀՀ երկաթուղու Ջամառլուի մետաղական կամրջի հիմնանորոգման աշխատանքների իրականացումը:

Ծրագրի իրականացման հիմնական արդյունքը կլինի այն, որ հանրապետությունը կունենա ճանապարհային արհեստական հուսալի կառույցներ և կապահովի ինչպես հանրապետության, այնպես էլ տարանցիկ բեռների և ուղևորների անխափան և կանոնավոր փոխադրումները:Հանրապետությունը կունենա ավտոճանապարհային ցանցի արհեստական կառուցվածքներ, որոնք իրենց շահագործման տեխնիկական ցուցանիշներով կհամապատասխանեն գործող նորմատիվային պահանջներին:

**2.2. Գերակայությունները**

2007-2009 թվականներին տրանսպորտի և կապի ոլորտում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են հանդիսանալու՝

- պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման, շահագործման և հիմնանորոգման աշխատանքների իրականացումը,
- տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգումը,
- Երևանի մետրոպոլիտենի և էլեկտրատրանսպորտի բնականոն գործունեության ապահովումը:

**2.3.Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները**

Տրանսպորտի ոլորտի 2007-2009թթ. ժամանակահատվածում նախատեսված ծրագրերի կատարման վրա ազդում են հետևյալ գործոնները.

- **Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում** ծրագրով նախատեսված գումարների նվազեցումը 2006թ. հաստատված բյուջեի նկատմամբ պայմանավորված է նրանով, որ 2006թ. մոտենում է ավարտին ռազմավարական նշանակություն ունեցող Կապան - Ծավ - Շվանի Ջոր - Մեղրի ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները, ինչպես նաև 2007-2009թթ. նորոգման ենթակա ճանապարհահատվածների ծավալների պակասեցմամբ և մի շարք օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտմամբ:
- **Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում** ծրագրով նախատեսված գումարների նվազեցումը պայմանավորված է նրանով , որ 2006թ. պետական բյուջեով հաստատված գումարից պակասեցվել են միանվագ հատկացված գումարները (Ախուրյան-Ջրառատ մարզային ճանապարհի փոսային նորոգման համար՝ 10.0 մլն.դրամ, հանրապետական և միջպետական ու մարզային ավտոճանապարհների կահավորման համար համապատասխանաբար ՝ 250.0 մլն.դրամ և 100.0 մլն.դրամ ):
- **Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով նախատեսված գումարների նվազեցումը 2006թ. հաստատված բյուջեի նկատմամբ պայմանավորված է նրանով, որ նշված ծրագրում ընդգրկված է նաև ՀՀ երկաթուղու Ջամառլուի մետաղական կամրջի հիմնանորոգման աշխատանքները, որի ընդհանուր արժեքը կազմում է 2362776,7 հազ.դրամ: 2006թ. նախատեսված է կատարել կամուրջի հիմնանորոգում 1000000.0 հազ.դրամի չափով, աշխատանքները կշարունակվեն 2007-2008թթ.:

**3.ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2007-2009թթ. ՄԺԾԾ-ով ***Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում*** ծրագրով նախատեսվում է հատկացնել 2007թ.՝ 11000.0մլն.դրամ, 2008թ. ՝ 11000.0 մլն.դրամ և 2009թ. ՝ 13000.0 մլն.դրամ :

***Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում*** ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվում է հատկացնել 2007թ.՝ 4694.7 մլն.դրամ, 2008թ. ՝ 4694.7 մլն.դրամ և 2009թ. ՝ 4694.7 մլն.դրամ:

***Տեղական (մարզային) նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանություն*** , ***ընթացիկ պահպանում և շահագործում*** ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվում է հատկացնել 2007թ.՝ 469.4 մլն.դրամ, 2008թ. ՝ 469.4 մլն.դրամ և 2009թ. ՝ 469.4 մլն.դրամ:

***Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում*** ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 02.07.01թ. թիվ 591 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ճանապարհային վթարավտանգ տեխնիկական վիճակում գտնվող կամրջային կառուցվածքների հիմնանորոգման աշխատանքները: 2007-2009թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է նշված ծրագրի իրականացման համար հատկացնել 2007թ.՝ 1181.4 մլն.դրամ, 2008թ. ՝ 681.4 մլն.դրամ և 2009թ. ՝ 500.0 մլն. դրամ: 2007-2008թթ. շարունակվելու և ավարտվելու են ***ՀՀ երկաթուղու Ջամառլուի մետաղական կամրջի հիմնանորոգման*** **աշխատանքները:**

***«Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսեր*** ծրագրով 2007-2009թթ. ՄԺԾԾ-ում յուրաքանչյուր տարվա համար նախատեսված 470.0 մլն.դրամ գումարը ծրագրվել է ՀՀ կառավարության 06.10.2005թ. թիվ 1807-Ն որոշման պահանջով , որի համաձայն նախատեսվում է հատկացնել 2007թ.՝ 470.0 մլն.դրամ, 2008թ.՝ 470.0 մլն.դրամ և 2009թ. ՝ 470.0 մլն.դրամ:

***«Երևանի մետրոպոլիտեն» ՊՓԲԸ-ի սուբսիդավորում***

Մետրոպոլիտենին տրամադրվող սուբսիդիան կուղղվի վերջինիս գործունեությունից առաջացող ֆինանսական ճեղքվածքի ֆինանսավորմանը: Հաշվի առնելով մետրոպոլիտենի հատուկ նշանակությունը և դրա որպես տրանսպորտի միջոցի ոչ ճկուն լինելը, չի ակնկալվում,որ միջին ժամկետ հեռանկարում վերջինիս գործունեությունը շահութաբեր կլինի, որով էլ պայմանավորված է մետրոպոլիտենի սուբսիդավորման անհրաժեշտությունը:

2007-2009թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է հատկացնել 2007թ.՝870.4 մլն.դրամ, 2008թ.՝ 870.4 մլն.դրամ և 2009թ.՝ 870.4 մլն.դրամ:

***«Երևանի էլեկտրատրանսպորտ » ՓԲԸ-ի սուբսիդավորում***

Էլեկտրատրանսպորտին տրամադրվող սուբսիդիան կուղղվի վերջինիս գործունեությունից առաջացող ֆինանսական ճեղքվածքի ֆինանսավորմանը: Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտը հանդիսանալով քաղաքային տրանսպորտ հաստատագրվել է քաղաքի բնակչության մի մասի համար,որպես փոխադրման հիմնական միջոց: Հաշվի առնելով տրանսպորտի միջոցի ոչ ճկուն լինելը, չի ակնկալվում,որ միջին ժամկետ հեռանկարում վերջինիս գործունեությունը շահութաբեր կլինի, որով էլ պայմանավորված է էլեկտրատրանսպորտի սուբսիդավորման անհրաժեշտությունը:

2007-2009թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է հատկացնել 2007թ.՝ 276.0 մլն.դրամ, 2008թ.՝ 276.0 մլն.դրամ և 2009թ.՝ 276.0 մլն.դրամ:

**Աղյուսակ 13.1. Ծախսերի համեմատական աղյուսակ 2006-2008թթ. ՄԺԾԾ և 2007-2009թթ. ՄԺԾԾ միջև ըստ ենթախմբերի (մլն.դրամ)**

| | | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2006թ. հաստատ-ված բյուջե | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ |
| 12.01 | ՀՀ տրանսպորտի և կապի բնագավառում պետական կառավարում | 234.3 | 278.7 | 279.2 | 283.6 | 329.5 | 291.5 | 323.7 |
| 12.02 | 01.«Երևանի մետրոպոլիտեն» ՊՓԲԸ- ի սուբսիդավորում | 697.0 | 870.4 | 697.0 | 870.4 | 697.0 | 870.4 | 870.4 |
| 12.02 | 02.«Երևանի էլեկտրատրանս-պորտ» ՓԲԸ-ի սուբսիդավորում | 0.0 | 276.0 | 0.0 | 276.0 | 0.0 | 276.0 | 276.0 |
| 12.07 | 01.Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում | 9267.4 | 12617.4 | 6000,0 | 11000,0 | 7000,0 | 11000,0 | 13000,0 |
| 12.07 | 02.Պետական նշանակության ավտոճանապարհների պահպա-նում, շահագործում | 3938.3 | 5054.7 | 3938.3 | 4694.7 | 3938.3 | 4694.7 | 4694.7 |
| 12.07 | 03.Տեղական (մարզային) նշանակության ավտոճան. ձմեռային պահպանում , ընթացիկ պահպանում և շահագործում | 940.2 | 469.4 | 940.2 | 469.4 | 940.2 | 469.4 | 469.4 |
| 12.07 | 04.Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում | 1530.4 | 1553.4 | 1211.8 | 1181.4 | 1281.4 | 681.4 | 500.0 |
| 12.08 | 01. «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսեր | 0.0 | 0.0 | 0.0 | 470.0 | 0.0 | 470.0 | 470.0 |

**Աղյուսակ 13.2. Պետական բյուջեից տրանսպորտի ոլորտի գծով ծախսերը 2005-2009թթ.**

մլն.դրամ

| Ենթախմբի անվանումը | 2005 | 2006 | % փոփ. | 2007 | % փոփ. | 2008 | % փոփ. | 2009 | % փոփ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այն կազմում ՀՆԱ-ի նկատմամբ %-ը | 0.8 | 0.9 | x | 0.7 | x | 0.6 | x | 0.6 | x |
| Այն կազմում է պետական բյուջեի ծախսերի նկատմամբ %-ը | 4.6 | 4.4 | x | 3.7 | x | 3.2 | x | 3.4 | x |
| Տրանսպորտի և կապի ոլորտ,այդ թվում | 18135.3 | 21304.5 | 17.5 | 19245.5 | -9.7 | 18753.4 | -2.6 | 20604.2 | 9.9 |
| ՀՀ տրանսպորտի և կապի բնագավառում պետական կառավարում | 241.3 | 278.7 | 15.5 | 283.6 | 1.8 | 291.5 | 2.8 | 323.7 | 11.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 1.3 | 1.3 | x | 1.5 | x | 1.6 | x | 1.6 | x |
| **«Երևանի մետրոպոլիտեն» ՊՓԲԸ-ի սուբսիդավորում** | 697.0 | 870.4 | 0.0 | 870.4 | 0.0 | 870.4 | 0.0 | 870.4 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 3.8 | 4.1 | x | 4.5 | x | 4.6 | x | 4.2 | x |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի սուբսիդավորում | 0.0 | 276.0 | 0.0 | 276.0 | 0.0 | 276.0 | 0.0 | 276.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 0.0 | 1.3 | x | 1.4 | x | 1.5 | x | 1.3 | x |
| Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում | 10457.6 | 12617.4 | 20.7 | 11000.0 | -12.8 | 11000.0 | 0.0 | 13000.0 | 18.2 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 57.7 | 59.2 | x | 57.2 | x | 58.7 | x | 63.1 | x |
| Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում, շահագործում | 4439.5 | 5054.7 | 13.9 | 4694.7 | -7.1 | 4694.7 | 0.0 | 4694.7 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 24.5 | 23.7 | x | 24.4 | x | 25.0 | x | 22.8 | x |
| Տեղական (մարզային) նշանակության ավտոճանապարհների պահպանում ու շահագործում (այդ թվում ձմեռային պահպանություն ) | 1036.8 | 469.4 | -54.7 | 469.4 | 0.0 | 469.4 | 0.0 | 469.4 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 5.7 | 2.2 | x | 2.4 | x | 2.5 | x | 2.3 | x |
| Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում | 788.2 | 1553.4 | 97.1 | 1181.4 | -23.9 | 681.4 | -42.3 | 500.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 4.3 | 7.3 | x | 6.1 | x | 3.6 | x | 2.4 | x |
| «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսեր | 0.0 | 0.0 | 0.0 | 470.0 | 0.0 | 470.0 | 0.0 | 470.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 0.0 | 0.0 | x | 2.4 | x | 2.5 | x | 2.3 | x |
| Համայնքային նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման նպատակով համայնքներին սուբվենցիայի տրամադրում | 305.1 | 0.0 | -100 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 1.7 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| Պետական աջակցություն «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ շարժասանդուղքների և գծի վերանորոգման համար | 145.0 | 0.0 | -100 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 0.8 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| Ավտոճանապարհների հիմնանորոգման նպատակով ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյանի համայնքին սուբվենցիայի տրամադրում | 0.0 | 20.0 | 0.0 | 0.0 | -100.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 0.0 | 0.1 | x | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| Ճանապարհաշինարարության նպատակով ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքին սուբվենցիայի տրամադրում | 0.0 | 15.0 | 0.0 | 0.0 | -100.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 0.0 | 0.1 | x | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| Հայաստանի Հանրային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովող միջոցառումներ | 0.0 | 149.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 0.0 | 0.7 | x | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Տրանսպորտի ծրագիր** | 24.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, % | 0.1 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |

## ԳԼՈՒԽ 14. ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### 14.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսությունը բաղկացած է ոռոգման և խմելու ջրի համակարգերից: Ջրօգտագործման շուրջ 70%-ը բաժին է ընկել ոռոգման համակարգին, իսկ մնացած 30%-ը` խմելու ջրի համակարգին:

Ոլորտի խմելու ջրի մատակարարումն ու ջրահեռացումը մինչև 2006 թվականի հունիսի 1-ը իրականացվում է Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի, իսկ 2006 թվականի հունիսի 1-ից հետո`«Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից, ինչպես նաև «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների միջոցով: Ոռոգման համակարգի պահպանումն ու շահագործումն իրականացվում է «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Դեբետ-Աղստև-ջրառ» և «Որոտան-Արփա-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների և «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով ստեղծված 53 ջրօգտագործողների ընկերությունների միջոցով: Վարկային որոշ ծրագրերի իրականացման նպատակով համակարգում գործում են «Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ» և «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկները, իսկ Որոտան-Արփա-Սևան թունելի շահագործման վերահսկման նպատակով ՀՀ ջրտնտպետկոմիտեի ենթակայությամբ գործում է «Որոտան-Արփա-Սևան» թունելների վարչություն» պետական հիմնարկը: 2005 թվականի հունվարի 1-ից ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից ՀՀ ջրտնտպետկոմիտեին է փոխանցվել «Մելիորացիա» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները, որն իրականացնում է կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների վերահսկման, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման գործառույթներ: Համակարգում գործում են նաև «Ոռոգում» և «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ները, (որոնց համապատասխանաբար միանալու են «Ոռոգում-ջրառ» և Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ները) որոնք իրականացնում են դեբիտորական պարտքերի հավաքագրում և գույքի օտարումից առաջացող միջոցների հաշվին կրեդիտորական պարտքերի մարման գործընթացներ:

**«Երևանի Ջուր» ՓԲԸ-ն** իրականացնում է Երևան քաղաքի և շրջակա թվով 32 բնակավայրերի ջրամատակարարումը և ջրահեռացումը, ինչպես նաև ջրմուղ-կոյուղու ցանցերի շահագործման և պահպանման աշխատանքները: Համակարգն իր կազմում ընդգրկում է թվով 8 գլխամասային (ջրաղբյուրներում գտնվող) պոմպակայաններ, 90 կապտաժներ, 29 հորատանցքեր, 23 տեղերում օրվա կարգավորող ջրամբարներ, 2645 կմ ջրմուղ և 1120 կմ կոյուղու ցանց:

**«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն** ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործման և պահպանման ամբողջ գործունեությունն իրականացնում է հանրապետության 40

քաղաքներում և շուրջ 300 գյուղական բնակավայրերում: Ընկերությունը շահագործում է նաև ջրմուղ-կոյուղու ներհամայնքային բաշխիչ ցանցերը տեղական ինքնակառավարման մարմինների հետ կնքված պայմանագրային հիմունքներով` համաձայն ՀՀ կառավարության 21.01.1999թ. N0 33 և 13.03.1999թ. N0 149 որոշումների: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացնում է 4 տարածքային մասնաճյուղերի միջոցով: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման տեխնիկական համակարգն իր կազմում ընդգրկում է գործող թվով 441 կապտաժային կառուցվածքներ, 78 խորքային (արտեզյան) հորեր, 76 վարակազերծման կայաններ, 42 գլխավոր պոմպակայաններ, գետակներից սնվող 12 խմելու ջրի մաքրման կայաններ, 322 օրվա կարգավորման-պաշարապահ ջրամբարներ (225.45 հազ. մ$^3$ ընդհանուր տարողությամբ), 3848.4 կմ մայրուղի ջրատարներ, 4345.4 կմ ջրամատակարարման ցանց և 141 ներհամայնքային պոմպակայաններ: Ջրահեռացման համակարգում շահագործվում են 10 կոյուղու մաքրման կայաններ, 600.5 կմ երկարությամբ գլխավոր կոլեկտորներ, 1369.4 կմ ջրահեռացման ցանց:

**«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն** իրականացնում է Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի 16 բնակավայրերի ջրա-մատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումը և սպասարկումը: «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման տեխնիկական համակարգն իր կազմում ընդգրկում է գործող թվով 77 կապտաժային կառուցվածքներ, 6 վարակազերծման կայաններ, 9 գլխավոր պոմպակայաններ, գետակներից սնվող 1 ջրի մաքրման կայան, 14 օրվա կարգավորող ջրամբարներ (23.5 հազ.մ$^3$ ընդհանուր տարողությամբ), 176 կմ մայրուղի ջրատարներ, 285 կմ ջրամատակարարման ցանց և 22 պոմպակայաններ: Ջրահեռացման համակարգում շահագործվում է 1 կոյուղու մաքրման կայանի 58 կմ գլխավոր կոլեկտորներ, 175 կմ ջրահեռացման ցանց:

**«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն** իրականացնում է Գյումրի և Մարալիկ քաղաքների ու գլխավոր ջրատարի սպասարկման գոտում գտնվող շուրջ 33 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն ու սպասարկումը: Համակարգի ջրամատակարարումն իրականացվում է Ղազանչիի, Ջուլգաղբյուրի, Կրասարի և Վարդբաղի ջրաղբյուրներից: Ջրամատակարարման ներհամայնքային ցանցի երկարությունը կազմում է մոտ 350 կմ, իսկ ջրահեռացման համակարգի երկարությունը` 286 կմ և իր կազմում ընդգրկում է 9 օրվա կարգավորիչ ջրամբարներ, 78 ներհամայնքային պոմպեր, 5 քլորակայաններ:

**«Նոր Ակունք» ՓԲԸ-ն** իրականացնում է Արմավիր և Մեծամոր քաղաքների և 10 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն ու սպասարկումը: «Նոր Ակունք» ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացնում է 1 կապտաժային կառուցվածքի, 14 խորքային հորերի, 14 գլխավոր պոմպակայանների, 8 օրվա կարգավորիչ ջրամբարների և 5 ջրաճնշման աշտարակների միջոցով:

**«Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Դեբետ-Աղստև-ջրառ» և «Որոտան-Արփա-ջրառ» ՓԲԸ-ների** կողմից ներկայումս շահագործվում են 23 ջրամբարներ, 5 մայր ջրանցքներ (որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 272 կմ և որոնց վրա գտնվում են 2623 հիդրոտեխնիկական կառուցվածքներ), 53 պոմպակայաններ և 3 խորքային հորեր:

Հանրապետությունում գործող 53 ջրօգտագործողների ընկերությունների կողմից ներկայումս շահագործվում են` 1901.2 կմ միջտնտեսային նշանակության ջրանցքներ, 13451.5 կմ երրորդ կարգի ջրանցքներ` իրենց հիդրոկառուց-վածքներով, 254 հատ պոմպակայաններ` 645 հատ պոմպային

ագրեգատներով, 724 հատ խորքային հորեր, 1900 հատ ջրաչափական դիտակետեր, 45 հատ համայնքային նշանակության ջրամբարներ:

**Արփա-Սևան** ջրատարն ունի 48.35 կմ երկարություն և բաղկացած է երկու թունելներից, որոնք միացված են Եղեգիս գետի վրայով կառուցված ակվեդուկով: Թիվ 1 թունելն ունի 18.45 կմ երկարություն, իսկ թիվ 2 թունելի երկարությունը կազմում է 29.65 կմ: Նախագծային ջրթողունակությունը կազմում է 22 մ$^3$/վրկ, փաստացին (թունելների ներկայիս իրավիճակից ելնելով՝ թույլատրելին)՝ 18.0 մ$^3$/վրկ, որը բերում է 4.0 մ$^3$/վրկ-ով ջրի հոսքի նվազեցման, կամ արդյունքում տարեկան շուրջ 90,0 մլն մ$^3$ պակաս ջուր է տեղափոխվում Սևանա լիճ:

**«Մելիորացիա» ՓԲԸ-ի** մասով անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության ոռոգելի հողերում դրենաժային ցանցի տակ ընկած տարածքը 34.0 հազ.հա է, որից բաց հորիզոնական դրենաժի տակ՝ 26.3 հազ.հա և փակի տակ 7.7 հազ.հա, բաց հորիզոնական դրենաժների երկարությունը՝ 1030 կմ է, իսկ փակ դրենաժինը՝ 641 կմ, ընդամենը՝ 1671 կմ:

Անցած տարիների ընթացքում ՀՀ ջրտնտպետկոմիտեի աշխատանքային գործունեության հիմքում ընկած են ՀՀ ջրային օրենսգրքի դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից ընդհանուր առմամբ կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Կայացել է Երևանի «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության վարձակալության տրամադրման մրցույթը, որի արդյունքում պայմանագիր է կնքվել ֆրանսիական «General Deseau» կազմակերպության հետ՝ ստեղծվել է «Երևան Ջուր» ՓԲԸ-ն, որի գործունեությունը մեկնարկվել է 2006 թվականի հունիսի 1-ից: Մեկնարկվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագիրը՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի սպառողներին արդյունքի վրա հիմնված օժանդակության ուղղությամբ:

2. Մեկնարկվել է «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունում ֆրանսիական SAUR կազմակերպության կողմից կառավարման պայմանագիրը և Համաշխարհային բանկի վարկային ծրագիրը:

3. Իրականացվել է Լոռու և Շիրակի մարզերում KfW բանկի ներդրումային ծրագրերի նախապայմանների արդյունավետ ճանաչման և սկսման գործընթացը, ապահովվել է նորաստեղծ «Լոռի-ջրմուղ-կոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կայացումն ու բնականոն աշխատանքը:

4. Ինքնածախսածածկման քաղաքականության անցման ապահովման համար բարձրացվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սակագները:

5. Կատարվել է ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ:

6. Ապահովվել է հավաքագրումների մակարդակի դինամիկ աճ:

7. Իրականացվել է էլեկտրաէներգիայի ծախսի կրճատում:

8. Իրականացվել է նախորդ տարիների պարտքերի կրճատում և ապահովվել է նոր պարտքերի չառաջացման գործընթացը:

9. Ապահովվել է «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերության մաքրման կայանի վերականգնման համար KfW բանկի ծրագրի շարունակական գործընթացը:

10. OECD կազմակերպության հետ համատեղ՝ ապահովվել է կազմակերպության նախարարական կոնֆերանսի անցկացումը Երևանում, սկսվել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում ֆինանսական ռազմավարության ազգային ծրագրի մշակման աշխատանքների իրականացումը, նախատեսվել է սկսել համակարգի ընկերությունների ֆինանսական պլանավորման բարելավմանը և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ֆինանսավորմանն ուղղված ծրագրի մշակման աշխատանքների իրականացումը:

11. Աշխատանքներ են իրականացվել գյուղական համայնքների խմելու ջրի նվազագույն ջրամատակարարումն ապահովող խնդիրների և միջոցառումների, ինչպես նաև ջրային տնտեսության համակարգում սեփականության իրավունքի և շահագործման պատասխանատվության տարանջատման և իրականացման ենթակա հարցերի ուսումնասիրման ուղղություններով:

12. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ սկսվել են Սևան ջրավազանի և մի շարք բնակավայրերի (թվով 5) կեղտաջրերի մաքրման կայանների ներդրումային ծրագրի նախապատրաստական աշխատանքները:

13. Սկսվել է «Խմելու ջրի մասին» օրենքի նախագծի մշակումը, որը կավարտվի 2006 թվականին:

14. Շարունակվել է կատարելագործել հաշվառման համակարգը, սահմանվել են ջրաչափական սարքեր չտեղադրած բաժանորդների գծով սպառման առավել իրատեսական և ընդունելի նորմեր:

15. Ընդունվել են համապատասխան իրավական ակտեր և ապահովվել է ջրամատակարար կազմակերպությունների նախորդ տարիներին առաջացած որոշ հարկային, սոցիալական, բնապահպանական վճարների գծով պարտքերից, տույժերից ու տուգանքներից ազատում, ինչպես նաև առանձին հարկատեսակների և վճարների գծով սահմանվել են արտոնություններ, ինչպես նաև վճարման ժամկետների հետաձգում:

16. Սկսվել է «Արզնի Շամիրամ» ջրօգտագործողների ընկերությունների միության հիմնադրման գործընթացը:

17. Աջակցություն է ցուցաբերվել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի կազմման աշխատանքներին:

18. Ոռոգման հատվածում ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումների հետագա գործընթացի վերաբերյալ Համաշխարհային բանկի ծրագրերի շրջանակներում մշակվել են համալիր առաջարկություններ:

19.Ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող հանրապետության շուրջ 600 համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ճապոնական կառավարության միջոցներով իրականացվելիք ծրագիրը ճանաչվել է արդյունավետ:

20. Շարունակվել են աշխատանքները Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբու-Դաբի վարկային ծրագրի ներգրավման ուղղությամբ:

21. USAID-ի ֆինանսավորման շրջանակներում շարունակվել են աշխատանքների իրականացումը Հրազդան, Արտաշատ և Կապան քաղաքների ջրային համակարգերի բարելավման ուղղություններով:

22.. 2004 թվականի համեմատությամբ ապահովվել է Սևանա լճի մակարդակի բարձրացում 41 սմ-ով:

23. Իրականացվել են մեծածավալ աշխատանքներ վարկային ծրագրերի արդյունավետ իրականացման ուղղություններով:

24. Աշխատանքներ են իրականացվել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման ուղղություններով:

Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժ: Ընդ որում, միայն հավաքագրումների գծով 2005 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 11.3 մլրդ դրամ՝ 2004 թվականի 9.3 մլրդ դրամի փոխարեն: Առանձին կազմակերպությունների գծով կատարված դրական աշխատանքները ևս ակնառու են: Այսպես, 2005թ. Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից գանձվել է 5405.9 մլն դրամ, որը 2004 թվականի (առանց պարտքերի նվազեցման արտոնությունների օրենքի կիրարկման արդյունքում հավաքագրված 307.4 մլն դրամի) համեմատությամբ ավել է շուրջ 902 մլն դրամով: Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի համար 2005 թվականի մայիսի 1-ից հաստատվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման նոր սակագին՝ 125.1 դրամ, որը շուրջ 38.7 %-ով ավել է 2004 թվականին հաստատած սակագնից: Անհրաժեշտ է նշել, որ 2006 թվականի հուլիսի 1-ից նշված տարածքների բաժանորդների համար «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունները մատուցվելու են 172.8 դրամ ընդհանուր սակագներով: 2005թ. ընթացքում Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի բաժանորդների քանակը կազմել է շուրջ 320.2 հազար: Ընդ որում, բաժանորդներից 285.6 հազարի մոտ (89.2 %) տեղադրված են ջրաչափական սարքեր: 2005թ. շուրջօրյա ջրամատակարարմամբ ապահովված բաժանորդների թիվը կազմել է շուրջ 76 %:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 2005թ. գանձվել է 1923.4 մլն դրամ, որն էականորեն բարձր է 2004 թվականի գանձումից: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար 2005 թվականի մայիսի 1-ից հաստատվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման նոր սակագին՝ 140 դրամ, որը շուրջ 39.5 %-ով ավել է 2004 թվականին հաստատած 100.4 դրամ սակագնից: 2005թ. ընթացքում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի բաժանորդների քանակը կազմել է շուրջ 262.3 հազար: Ընդ որում, բաժանորդներից 122.7 հազարի մոտ (46.8 %) տեղադրված են ջրաչափական սարքեր:

2005թ. «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից գանձվել է 193.4 մլն դրամ, որը 51.2 մլն դրամով ավել է 2004 թվականի գանձումից: Ընկերության սակագինը 2005 թվականի ընթացքում չի փոխվել: 2005թ. ընթացքում «Նոր Ակունք» ՓԲԸ-ի բաժանորդների քանակը կազմել է շուրջ 14.951: Ընդ որում, բաժանորդներից 12.616-ի մոտ (84.4 %) տեղադրված են ջրաչափական սարքեր:

«Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից 2005 թվականին գանձվել է համապա տասխանաբար 232.5 մլն դրամ և 428.1 մլն դրամ: Ընկերությունների համար 2005 թվականի մարտի 1-ից գործում են նոր սակագներ, որոնք շուրջ 20 %-ով ավել են նախկին սակագներից: Ընդ որում, «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-րի բաժանորդների քանակը կազմել է համապատասխանաբար 39451 և 63860, որոնցից 27640-ի (70.1 %) և 15921-ի մոտ (24.9 %) տեղադրված են ջրաչափական սարքեր:

2005 թվականին ոռոգման ոլորտում գանձվել է 3067.6 մլն դրամ (որից 91.9 մլն դրամը՝ «Ոռոգում-ջրառ» և «Ոռոգում» ՓԲԸ-ների կողմից), որը 506.3 մլն դրամով ավել է 2004 թվականի գանձման մակարդակից: Տվյալ ժամանակահատվածում ոռոգման ջրի վճարը կազմել է շուրջ 8 դրամ: 2005 թվականի ընթացքում ոռոգման ոլորտում ապահովվել է նորմալ և անխափան ջրամատակարարում:

2005թ. Սևանա լճից բաց է թողնվել 143.99 մլն.մ$^3$ ջուր նախորդ տարվա 149.9 մլն.մ$^3$-ի փոխարեն՝ պլանային 150.0 մլն.մ$^3$-ի դիմաց: Սևանա լիճ է տեղափոխվել 252.87 մլն.մ$^3$ ջուր: 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1898.07 մ., որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 41 սանտիմետրով:

«Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից 2005թ. ընթացքում իրականացվել են գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման գծով 74.5 մլն դրամի աշխատանքներ, իսկ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման, նորոգման և նախագծային փաստաթղթերի կազմման գծով համապատասխան կապալառու կազմակերպությունների կողմից կատարվել են շուրջ 321 մլն դրամի աշխատանքներ:

Համակարգում գործող վարկային և ներդրումային ծրագրերի շրջանակներում իրականացվել են մեծածավալ շինարարական աշխատանքներ: Դրանցից կարելի է առանձնացնել հիմնական և օժանդակ կառույցների վերանորոգման, ջրամբարների մաքրման, նորոգման և կառուցման, ջրամատակարարման ցանցերի գոտիավորման, ջրագծերի և կոյուղագծերի կառուցման ու վերակառուցման, ՕԿՋ-ների կառուցման, պոմպակայանների և վարչական շենքերի վերանորոգման, ասֆալտապատման աշխատանքները: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են նաև խորհրդատվական, նախագծման, գնումների, տեխնիկական վերահսկման, աջակցության և այլ աշխատանքներ ու ծառայություններ:

**Ոլորտի հիմնական խնդիրները**

Ջրային տնտեսության բնագավառում էապես կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող նոր հիմնախնդիրների լուծումը: ՀՀ ջրային տնտեսության կառավարման բարեփոխումների ծրագրում ամրագրված միջոցառումների իրագործման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. կազմակերպել Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից օգտագործվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալին սահուն կերպով փոխանցելու և անցումային ժամանակահատվածի համար արդյունավետ աշխատանքների իրականացման գործընթացները.

2. ապահովել և վերահսկել համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը.

3. ապահովել ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում KfW բանկի կողմից ֆինանսավորվող «Լոռու (Վանաձոր) և Շիրակի (Գյումրի) մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ներդրումային ծրագրի իրականացումը.

4. նպաստել ջրօգտագործողների ընկերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծմանը.

5. շարունակել կատարելագործել հաշվառման համակարգը.

6. խրախուսել ջրի և էլեկտրաէներգիայի խնայողությունը.

7. ապահովել Երևան քաղաքի շարունակական ջրամատակարարման ծրագրի իրականացումը և նպաստել «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում նույնատիպ գործընթացի աստիճանական ակտիվացմանը.

8. խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև ոռոգման մասով նպաստել գյուղական ենթակառուցվածքների զարգացմանը,

9. միջոցառումներ ձեռնարկել մաքրման կայանների վերականգնման և գործարկման ուղղություններով, այդ թվում՝

ա) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ սկսել աշխատանքներ՝ Սևան ջրավազանի և մի շարք բնակավայրերի (թվով 5) կեղտաջրերի մաքրման կայանների ներդրումային ծրագրի ուղղությամբ.

բ) Երևանի «Աէրացիայի» կոյուղու մաքրման կայանի վերականգնման համար JBIC-ի հետ համատեղ վարել բանակցություններ իրականացնել նախնական ուսումնասիրություններ Ճապոնիայի միջազգային զարգացման ինստիտուտի կողմից.

գ) ապահովել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի կոյուղու մաքրման կայանի ներդրումային ծրագրի իրականացումը,

10. աջակցել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի իրականացմանը,

11. աշխատանքներ իրականացնել Համաշխարհային բանկի ֆինանսավորման շրջանակներում ոռոգման համակարգի ներդրումային նոր ծրագրի նախապատրաստման ուղղությամբ,

12. իրականացնել ոռոգման հատվածում ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումներ,

13. իրականացնել աշխատանքները Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար ֆինանսական միջոցների ներգրավման ուղղությամբ,

14. շարունակել բարելավել օրենսդրական դաշտը և նորմատիվային բազան, այդ թվում՝ մշակել «Խմելու ջրի մասին» օրենքի նախագիծ.

15. գործուն մեխանիզմներ ստեղծել մատուցած ծառայությունների դիմաց վճարումների գանձման համար, այդ թվում՝ շարունակելով օգտագործել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ուժերը.

16. միջոցառումներ ձեռնարկել տարիներով կուտակված պարտքերի մարման ուղղությամբ.

17. իրականացնել վերահսկողություն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինությունների կանխարգելման ուղղությամբ.

18. ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող հանրապետության շուրջ 600 համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների նախապատրաստման համար JICA-ի հետ իրականացնել համապատասխան աշխատանքներ.

19. Ասիական բանկի հետ սկսել բանակցություններ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ներդրումային ծրագրերին մասնակցություն ունենալու ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատել

ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Միաժամանակ անհրաժեշտ է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որով կապահովվի դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

## 14.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 14.2.1. Նպատակները

ՀՀ ջրտնտպետկոմիտեի գործունեության հիմնական նպատակներն են՝

- ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փործաքննության կազմակերպումը,
- մասնավոր կառավարման և մասնավոր կառավարիչներ, ինչպես նաև ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված կառավարման համակցված և խորացված ձևերի կիրառում,
- համակարգի ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը, ինչպես նաև ֆինան-սական կենսունակության բարձրացումը՝ ի հաշիվ շահագործման և պահպանման ծախսերի կրճատման, կորուստների նվազեցման և հավաքագրման մակարդակի բարձրացման:

### 14.2.2. Գերակայությունները

Ոլորտի գերակայություններն են.

- մատակարարվող ջրի որակի բարելավումը, կայուն ջրամատակարարումը, ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև աստիճանական շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը,
- ջրային համակարգերի հիմնանորոգումներին, տեխնիկական վերազինմանը, ինչպես նաև ներտնտեսային ցանցերի վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

### 14.2.3. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Ջրային տնտեսության ոլորտի 2007-2009 թվականների միջին ժամկետ ծախսային ծրագրի վրա ազդող հիմնական գործոններն են.

- խմելու և ոռոգման ջրի սակագները, մատուցվող ծառայությունների դիմաց գանձման, ինչպես նաև ջրի կորուստների մակարդակները: Այս գործոններով էլ պայմանավորված է 2007-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիաների ծավալների նվազեցումը: Այսպես, 2007թ. հատկացվող սուբսիդիայի ծավալը 2006թ. նկատմամբ նվազել է 13.73 %-ով, 2008թ.-ին 2007թ. նկատմամբ՝ 14.51%-ով, իսկ 2009թ-ին 2008թ.-ի նկատմամբ՝ 37.25%-ով:

## 14..3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջրային տնտեսության ոլորտի միջին ժամկետ ծախսային ծրագրով նախատեսված ծախսերն ամփոփված են Աղյուսակ 14.1-ում :

Ծախսերի համեմատական աղյուսակ 2006-2008թթ. ՄԺԾԾ և 2007-2009թթ.ՄԺԾԾ միջև

Աղյուսակ 14.1

| | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2006թ. հաստատված բյուջե | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ |
| ՀՀ ջրտնտպետկոմիտեի կենտրոնական ապարատի պահպանում | 101.52 | 111.03 | 113.34 | 112.18 | 126.45 | 113.81 | 124.75 |
| «Որոտան-Արփա-Սևան ԹՇՎ» ՊՀ-ի պահպանում, Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործում, տեխնիկական վիճակի բարելավում և նորոգում | 320.60 | 1320.70 | 376.61 | 311.79 | 465.73 | 367.83 | 454.95 |
| Անավարտ շինարարական օբյեկտների պահպանում | 45.50 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ջրամբարներում պահակային ծառայությունների իրականացում | 17.10 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում, Գրունտային ջրերի մակարդակերի և որակի որոշման գծով պետական պատվեր | 82.80 | 87.00 | 82.80 | 87.00 | 82.80 | 87.00 | 87.00 |
| Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և նորոգում | 337.20 | 333.00 | 337.20 | 333.00 | 337.20 | 333.00 | 333.00 |
| «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի համալրում | 19.89 | 19.89 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի համալրում | 18.87 | 18.87 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ջրային համակարգերի օգտագործման և պահպանման տեխնիկական հանձնաժողովի պահպանում | 0.00 | 20.00 | 0.00 | 14.00 | 0.00 | 14.00 | 14.00 |
| Ոռոգման համակարգի և խմելու ջրի ծեռնարկությունների սուբսիդավորում` այդ թվում | 5091.60 | 5353.66 | 3878.70 | 4601.26 | 3326.60 | 3933.53 | 2468.32 |
| «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սուբսիդավորում | 1371.50 | 1381.26 | 949.40 | 1381.26 | 949.40 | 1213.53 | 248.32 |
| Երևան «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ սուբսիդավորում | 0.00 | 252.30 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ոռոգման համակարգերի սուբսիդավորում | 3720.10 | 3720.10 | 2929.30 | 3220.00 | 2377.20 | 2720.00 | 2220.00 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատա-կարարման և կոյուղու համակարգերի վերա-կանգնման ծրագիր | 66.15 | 785.81 | 57.20 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատա-կարարման և կոյուղու համակարգերի վերա-կանգնման ծրագիր /նոր ծրագիր/ | 0.00 | 0.00 | 0.00 | 680.02 | 0.00 | 659.29 | 0.00 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Պատվարների անվտանգու-թյան ծրագիր | 2350.24 | 2077.00 | 2190.24 | 1135.83 | 1035.10 | 172.50 | 127.65 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Պատվարների անվտանգու-թյան երկրորդ ծրագիր | 1420.50 | 1021.71 | 1137.16 | 1132.68 | 420.45 | 968.30 | 716.54 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր | 1925.28 | 1678.61 | 1595.08 | 1414.43 | 792.08 | 848.66 | 628.01 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Համայնքային ջրամատա-կարարման և ջրահեռացման ծրագիր | 2362.32 | 1279.71 | 3796.90 | 1917.49 | 2470 | 2647.29 | 1958.99 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Երևանի ջրամատակարար-ման և ջրահեռացման ծրագրի նախապատ-րաստական կանխավճարի ծրագիր | 0.00 | 416.59 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Երևանի ջրամատակարար-ման և ջրահեռացման ծրագրի | 1993.71 | 967.74 | 3510.54 | 2518.43 | 960.34 | 2100.36 | 715.50 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Համայնքային զարգացման ծրագիր | 0.00 | 13.44 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագիր | 96.11 | 64.39 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր | 0.00 | 0.00 | 0.00 | 171.41 | 0.00 | 286.07 | 286.07 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր | 3482.50 | 1061.97 | 750.00 | 1621.21 | 0.00 | 1197.62 | 0.00 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր | 4941.70 | 1325.46 | 850.00 | 2380.00 | 0.00 | 1243.36 | 0.00 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի դրամաշնորհային ծրագիր | 0.00 | 911.23 | 0.00 | 435.02 | 0.00 | 623.97 | 0.00 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի դրամաշնորհային ծրագիր | 0.00 | 1135.85 | 0.00 | 419.36 | 0.00 | 969.25 | 0.00 |
| Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության տրամադրված միջոցներով իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման դրամաշնորհային ծրագիր | 0.00 | 148.30 | 0.00 | 82.19 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության տրամադրված միջոցներով իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման դրամաշնորհային ծրագիր | 0.00 | 148.30 | 0.00 | 82.19 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի միջոցով իրկանացվող ծախսեր | 0.00 | 0.00 | 0.00 | 2808.00 | 0.00 | 15990.00 | 14850.00 |

**1. «Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործում, Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործում, տեխնիկական վիճակի բարելավում և նորոգում**

2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը կազմված է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 10-ի N 865-Ն և 2003թ. հունվարի 16-ի N 189-Ն որոշումները, որոնք թույլ կտան թունելի հետագա անխափան և անվտանգ շահագործումը: Ծրագիրը հիմնված է «Արփա-Սևան թունելի տեխնիկական վիճակը գնահատող հանձնաժողովի» եզրակացության և «Աուդիտի, խորհրդատվությունների, ինֆորմացիայի և վերլուծությունների» ՓԲԸ-ի և «Թունել» ՍՊԸ-ի կողմից համատեղ կազմված «Արփա-Սևան ջրատարի համալիր կառույցների վերականգնման ներդրումային ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման» վրա:

2007-2009թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի շահագործումը և պահպանումը, ինչպես նաև Արփա-Սևան թունելի 3-րդ - 4-րդ հորանների վերագործարկումը և թիվ

3, 5, 6, 7, 8, 9, 10, 11 թունելախորշերի առավել վքարված մոտ 5 կմ ընդհանուր երկարությամբ տեղամասերի վերանորոգումը – վերակառուցումը:

Ծրագրի ամբողջական իրականացումը հնարավորություն կընձեռի անվտանգ և անխափան շահագործել Որոտան-Արփա-Սևան հիդրոտեխնիկական համալիրը, ապահովել Սևանա լիճ տեղափոխվող ջրի նախագծային ծավալը՝ տարեկան 450 մլն.մ3:

Նախատեսվող միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ կբարձրանա Սևանա լճի մակարդակը, մոտավորապես 5-6մ-ով, կլուծվեն Սևանա լճի հիմնական էկոլոգիական խնդիրները, կբարձրանա Սևան-Հրազդան համակարգի էներգետիկ օբյեկտների աշխատանքների հուսալիությունը, կապահովվի Արարատյան դաշտավայրի շուրջ 30000 հա ոռոգելի տարածքների ոռոգումն ինքնահոս եղանակով, կավելանա Սևանա լճի ջրային պաշարները, որը հանդիսանում է խմելու ջրի խոշոր աղբյուր:

**2 «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սուբսիդավորում**

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի օգտագործման իրավունքը մրցույթով՝ 10 տարի ժամկետով Վարձակալության պայմանագրով փոխանցվելու է «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը, ուստի 2007-2009 թվականներին Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի մասով սուբսիդիա չի նախատեսվում:

**3. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սուբսիդավորում**

ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ ենթակա է իրականացման ընկերության ընթացիկ գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի մարմանն ուղղված սուբսիդիայի ծրագիրը: Ընդ որում ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1381.26 մլն դրամ սուբսիդիա:

2007-2009թթ. ընթացքում ՀՀ պետբյուջեից «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին հատկացվելիք սուբսիդիայի ծրագրերը, համապատասխանաբար՝ 1381.26 մլն դրամ, 1213.5 մլն դրամ և 248.3 մլն դրամ գումարներով, հնարավորություն կընձեռեն ընկերության ֆինանսատնտեսական գործունեության անխափան ապահովմանը և այդ նպատակով անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորմանը՝ ապահովելով համապատասխան տարիների ֆինանսական ճեղքվածքների մարումները:

Բացի այդ 2009թ. հաշվարկներում ընդգրկվել են նաև 2006-2008թթ. ժամանակահատվածում հաշվարկվող բնապահպանական վճարների գծով ծախսերը, որոնք 2007 և 2008թթ. ծախսերի հանրագումարում չեն ընդգրկվել:

Հետևաբար 2009թ. ֆինանսական ճեղքվածքի ծածկման համար կամ կպահանջվի համապատասխան սուբսիդիա ՀՀ պետբյուջեից, կամ էլ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարել գործող օրենսդրության մեջ և հետաձգել վերը նշված հարկային և բնապահպանական վճարների գծով պարտավորությունների կատարման արտոնյալ պայմանների ժամկետները:

**4. Ոռոգման համակարգերի սուբսիդավորում**

2002թ.-ից ի վեր ՀՀ ոռոգման համակարգում իրականացվող կառուցվածքային և օրենսդրական բարեփոխումների հիմնարար արդյունքներից է ջրօգտագործողների կողմից ոռոգման մասնակցային

կառավարման ներդրումը, ջրօգտագործողների ընկերությունների ինստիտուտի ձևավորումն ու կայացման գործընթացները: Բարեփոխումների շրջանակներում ընդունվել է «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի և առաջացել է նոր կազմակերպաիրավական կարգավիճակ՝ «ջրօգտագործողների ընկերություն» (ՋՕԸ), որը նշված օրենքի համաձայն ջրօգտագործողների կողմից ստեղծվող կազմակերպություն է:

Հայաստանի Հանրապետության ոռոգման ոլորտում ներկայումս գործում են երկու կազմակերպաիրավական տեսակի կազմակերպություններ՝ «Սևան-Հրազդան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Դեբետ-Աղստև-ջրառ, և «Որոտան-Արփա-ջրառ» ՓԲԸ-ները և 53 ջրօգտագործողների ընկերությունները :

Հայաստանի Հանրապետությունումում ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը կանոնակարգող մարմինը ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը Կանոնակարգող խորհուրդն է, որի համապատասխան եզրակացությամբ ՀՀ մարզերում ջրօգտագործողների կողմից, առաջնորդվելով հանրային շահերով և կամավորության սկզբունքով, հիմնադրվել են վերոհիշյալ ջրօգտագործողների ընկերությունները:

Սուբսիդավորման հիմնական նպատակն է՝ ջրօգտագործողների ընկերությունների վնասների փոխհատուցման արդյունքում՝ ապահովել ընկերությունների տեխնիկական և ֆինանսական գործունակությունը և ֆինանսական կայունացումը, որն իր հերթին թույլ կտա ընկերություններին՝ ողջ տեխնիկական և մասնագիտական ներուժի կիրառման արդյունքում ապահովել ջրօգտագործողների հետ կնքված պայմանագրերով և համապատասխան հայտերով ոռոգման ջրի մատակարարումը և ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը:

Տվյալ ոլորտի հիմնական գերակայությունների թվին են դասվում ընկերությունների տեխնիկական և ֆինանսական ցուցանիշների իրատեսական ու նորմերին համապատասխան ծրագրավորումը, սուբսիդավորման քաղաքականությունը և կանոնակարգը, ընկերություններում կառավարման ժամանակակից հայեցակարգերի և մոդելների ներդրումը, ընկերությունների ֆինանսական կայունացումը և ոռոգման համակարգերի նորմերին համապատասխան պահպանումը և շահագործումը՝ ներդնելով ոռոգման ջրի հաշվառման ժամանակակից համակարգչային ծրագրեր, գանձումների անկանխիկ համակարգեր:

**5. Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում**

Ծրագրի իրականացման արդյունքում ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում կպահպանվեն և կշահագործվեն հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը և կմաքրվեն ու կվերանորոգվեն շուրջ 460.0 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցեր, որը հնարավորություն կտա Արարատյան հարթավայրի 19.0 հազ. հեկտարից ոչ ավելի հողերի գրունտային ջրերի մակարդակների պահպանումը թույլատրելի խորությունների վրա:

Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել՝ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, ինչպես նաև կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում:

**6. Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման գծով պետական պատվեր**

Ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար նախատեսվում է իրականացնել.

1. Գրունտային ջրերի մակարդակների ստացիոնար, տասնօրյա միաժամանակյա 14400 դիտումներ Արարատյան հարթավայրի 400 դիտողական հորատանցքերում,

2. Գրունտային ջրերի շուրջ 950 քիմիական անալիզ,

3. Դրենաժային և ոռոգման ջրերի 140 քիմիական անալիզ,

4. Դիտման հորատանցքերի վերականգնման նպատակով մինչև 10 մ խորությամբ 400 գծամետր հորատում,

5. Դիտման հորատանցքերի մաքրման նպատակով էրլիֆտով ջրի արտամղում:

**7. Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի պահպանման ծախսերը**

Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է, որն ստեղծվել է ջրային համակարգերի հիդրոտեխնիկական կառուցվածքների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության, ինչպես նաև տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով: Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N 686 որոշման: Նշված հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով նախատեսվել է որոշակի ֆինանսավորում: Հետագա արդյունավետ գործունեություն իրականացնելու, ինչպես նաև օրենքով պատվիրակված լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով 2007-2009թթ. նույնպես նախատեսվում են համապատասխան ֆինանսական միջոցներ:

**ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ**

Ջրային տնտեսության բարեփոխումների և համակարգի վերականգնման ծրագրերում իրենց առանձնահատուկ տեղն ու նշանակությունն ունեն ներդրումները և վարկային ծրագրերը :

**1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների» ծրագիր**

Համայնքային զարգացման առաջին վարկային ծրագրի աշխատանքները շարունակելու և ծեռքբերումները անշրջելի դարձնելու, ինչպես նաև մասնավոր ընկերությունների ներգրավումը խորացնելու նպատակով, ՀՀ կառավարությունը 2004 թվականի սեպտեմբերի 23-ի N1361-Ա որոշմամբ հավանության արժանացրեց Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից օգտագործվող ջրային համակարգերի օգտագործման իրավունքը մրցույթով՝ 10 տարի ժամկետով Վարձակալության պայմանագրով փոխանցել «Ժեներալ դեզ Օ» և վերջինիս կողմից ստեղծված «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը :

Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծրագիրը» ունի 2 բաղադրիչ. «ԵՋՋԾ հիմնադրամ» և «Տեխնիկական աջակցություն»: Ընդհանուր ծրագրով գումարը կազմում է 22 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում ՀՀ կառավարության մասնաբաժինը՝ 2 մլն ԱՄՆ դոլար:

Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի ավարտման ժամկետն է՝ 2011 թվականի փետրվարի 28-ը:

**2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռաց ման» ծրագիր**

Հանրապետության բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում առաջացած բազմաթիվ տեխնիկական, ֆինանսատնտեսական և այլ խնդիրների լուծման համար իրականացվում է Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագիրը, որի նպատակներն են՝

• Համակարգի հետագա փլուզման կանխումը և վիճակի բարելավումը,

•Կառուցվածքային բարեփոխումների միջոցով ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների առավել արդյունավետ կառավարման ապահովումը,

• Խմելու ջրի նկատմամբ բնակչության աճող պահանջների բավարարումը,

• Ջրի օգտագործման հաշվառման կազմակերպումը,

• Ծախսվող էլեկտրաէներգիայի կրճատումը,

• Համակարգի ֆինանսական վիճակի առողջացումն ու մասնավոր ներդրողների համար գրավիչ պայմանների ստեղծումը,

• Համակարգի հետագա ապապետականացման գործընթացի նախապատրաստումը:

<u>3. *Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող* Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր</u>

Տվյալ ծրագիրը նախատեսվել է իրականացնել երկու փուլերով: Առաջին փուլի իրականացումը սկսվել է 2001թ. դեկտեմբեր ամսից: Երկրորդ փուլը սկսվել է 2004 թվականին :

Ծրագրի նպատակն է ոռոգման և դրենաժային համակարգերի կառավարման կառուցվածքային բարեփոխումների միջոցով բարձրացնել ոռոգելի երկրագործության արդյունավետությունը, ջրամատակարարման համակարգը դարձնել կառավարելի, ֆինանսապես առողջ և գրավիչ ներդրողների համար, ջրօգտագործողներին ներգրավել համակարգերի կառավարման գործընթացի մեջ՝ քայլ առ քայլ ապապետականացնելով համակարգերի շահագործումն ու պահպանումը:

Վերը նշված նպատակների իրականացման համար ծրագրով նախատեսված է լուծել հետևյալ խնդիրները՝

• Ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցման միջոցով իջեցնել ջրի արժեքը, ապահովել հուսալի ջրամատակարարում և բարձրացնել ջրապահովությունը:

• Համակարգերի տեխնիկական վիճակի բարելավման միջոցով ապահովել հուսալի ջրամատակարարում, ջրի կորուստների և համակարգերի շահագործման ծախսերի նվազեցում:

• Լրացուցիչ ջրառի շնորհիվ բարձրացնել երկրագործության արդյունավետությունը:

• Ջրօգտագործողների սպառողական կոոպերատիվների և ֆեդերացիաների հաստատման և ուժեղացման շնորհիվ ստեղծել պայմաններ ապապետականացնելու համակարգերի շահագործումը և պահպանումը:

• Կառուցվածքային բարեփոխումների միջոցով բարելավել համակարգերի արդյունավետ կառավարումը, ապահովել սակագնային քաղաքականության թափանցելիությունը և մինչև ծրագրի ավարտը ոլորտը դարձնել ինքնածախսածածկելի:

***<u>4. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պատվարների անվտանգության ծրագիր</u>***

Պատվարների անվտանգության ծրագրի հիմնական նպատակներն են՝ շուրջ 360.000 բնակչության անվտանգության ապահովումը և ոռոգման համակարգերի ջրապահովվածության ավելացումը, ապահովել պատվարների հուսալի շահագործումը, հիմնականում ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը :

Վերը նշված նպատակների իրականացման համար ծրագրով նախատեսված էր լուծել հետևյալ խնդիրները՝

• Առավել մեծ վտանգ ներկայացնող 20 պատվարների վերականգնում և անվտանգության միջոցառումների իրականացում:

• Մնացած բոլոր 60 պատվարների ուսումնասիրում, վթարային իրավիճակների հայտնաբերում և վերացում:

• Ջրամբարները շահագործող կազմակերպության տեխնիկական հագեցում:

*<u>Այդ խնդիրների լուծման համար ծրագրի շրջանակներում իրականացվում են հետևյալ աշխատանքները.</u>*

• Ժամանակակից պահանջներին համապատասխան գործող համակարգերի վերանորոգում և վերակառուցում, բաշխիչ ցանցերի գոտիավորում:

• Ինքնահոս համակարգերի կառուցում և էլեկտրաէներգիայի սպառման կրճատում:

• Հոսակորուստների հայտնաբերում և վերացում:

• Ջրի օգտագործման հաշվառման կազմակերպում:

• Կայուն և անխափան ջրամատակարարմամբ ապահովված սպառողների քանակի ավելացում:

• Վթարների վերանորոգման արձագանքման միջին անհրաժեշտ ժամանակի և վթարների թվի կրճատում:

• Ջրամատակարարման և ջրահեռացման գծերի քարտեզավորում:

• Ջրավարձերի հավաքագրման ավելացում:

• Սպառողների սպասարկմանն առընչվող ուսուցում, հասարակական տեղեկատվություն, արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերի մշակում և այլն:

<u>5. *Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող* Պատվարների անվտանգության երկրորդ ծրագիր</u>

Ծրագրի բաղադրիչներն են՝ թվով 47 պատվարների վերականգնումը, աշխատանքների նախագծումն ու վերահսկումը, վերականգնողական աշխատանքները, պատվարների անվտանգության կայունությունը, պատվարների անվտանգության սարքավորումների դաշտային

տեղադրումը, Ոռոգում-ջրառի ուժեղացումը, մոտեցնող ճանապարհ ների բարելավումն անվտանգության միջոցառումների համար, ծրագրի կառավարումը, տեխնիկական օժանդակու թյունն ու աուդիտը և գործառական ծախսերը:

**6. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող** Լոռու մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր

«ՀՀ Լոռու մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերականգնում» ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի,, Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ միջև կնքված պայմանագրերով հատկացված 6.84 մլն. եվրո վարկային միջոցների և ծրագրին ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 1.1մլն եվրո: Բացի այդ ծրագրի իրականացման համար ներգրավվել է 3.44 մլն եվրո դրամաշնորհ:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2008 թվականին: Ծրագրի հիմնական ուղղությունն է «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքի ***ջրամատակարարման և կոյուղու համակարգը*** առկա ծանր վիճակից դուրս բերելու, ընկերության ինքնուրույնության, շրջանառու կապիտալի ֆինանսական կառավարման, պահպանման և զարգացման, ինչպես նաև բնակչությանը որակյալ և շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը:

**7.Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող** Շիրակի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր

«ՀՀ Շիրակի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերականգնում» ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի,, Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ միջև կնքված պայմանագրերով հատկացված 8.71 մլն. եվրո վարկային միջոցների և ծրագրին ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 1.5մլն.եվրո: Բացի այդ ծրագրի իրականացման համար ներգրավվել է 4.38 մլն եվրո դրամաշնորհ:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2008 թվականին: Ծրագրի հիմնական ուղղությունն է «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքի ջրամատակարարման և կոյուղու համակարգը առկա ծանր վիճակից դուրս բերելու, ընկերության ինքնուրույնության, շրջանառու կապիտալի ֆինանսական կառավարման, պահպանման և զարգացման, ինչպես նաև բնակչությանը որակյալ և շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը:

**Աղյուսակ 14.2 Պետական բյուջեից ջրային տնտեսության ոլորտի գծով 2006-2009թթ. ծախսերը ըստ ենթախմբերի**

(մլն.դրամ)

| | 2006թ | 2007թ. | % փոփ | 2008թ. | % փոփ | 2009թ. | % փոփ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ՝ %-ով | 0.85 | 0.83 | * | 1.11 | * | 0.71 | * |
| Ընդհանուր ծախսերը պետական բյուջեի ծախսերի նկատմամբ %-ով | 4.21 | 4.25 | * | 5.53 | * | 3.75 | * |
| ՀՀ ջրային տնտեսության ոլորտ, այդ թվում՝ | 20300.20 | 22257.50 | 9.64 | 32556.32 | 46.27 | 22764.77 | -30.08 |
| 08.04 Բնակարանային-կոմունալ տնտեսություն | 9931.09 | 11688.59 | 17.70 | 10940.72 | -6.40 | 3208.88 | -70.67 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| տեսակարար կշիռը ամբողջի մեջ, % | 48.92 | 52.52 | * | 33.61 | * | 14.10 | * |
| 10.01. ՀՀ ջրտնտպետկոմիտեի կենտրոնական ապարատի պահպանում | 111.03 | 112.18 | 1.04 | 113.81 | 1.45 | 124.75 | 9.61 |
| տեսակարար կշիռը ամբողջի մեջ, % | 0.55 | 0.50 | * | 0.35 | * | 0.55 | * |
| 10.02. Հողերի բարելավման աշխատանքներ | 420.00 | 420.00 | 0.00 | 420.00 | 0.00 | 420.00 | 0.00 |
| տեսակարար կշիռը ամբողջի մեջ, % | 2.07 | 1.89 | * | 1.29 | * | 1.84 | * |
| 10.03. Ջկնաբուծություն, ջրային տնտեսություն | 4419.37 | 2580.30 | -41.61 | 1508.63 | -81.35 | 1299.14 | -28.32 |
| տեսակարար կշիռը ամբողջի մեջ, % | 21.77 | 11.59 | * | 4.63 | * | 5.71 | * |
| 10.07 Տոհմաբուծություն, սերմնաբուծություն և այլ ծրագրեր | 5418.71 | 7456.43 | 37.61 | 19572.66 | -55.53 | 17712.01 | -44.38 |
| տեսակարար կշիռը ամբողջի մեջ, % | 26.69 | 33.50 | * | 60.12 | * | 77.80 | * |

**Աղյուսակ 14.3 Ջրային տնտեսության ոլորտում 2007-2009թվականներին կանխատեսվող ծախսերը.**

մլն.դրամ

| | 2005թ. փաստացի | 2006թ. հաստատված բյուջե | 2007թ. | | | 2008թ. | | | . 2009թ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | ընթացիկ | կապիտալ | ընդամենը | ընթացիկ | կապիտալ | ընդամենը | ընթացիկ | կապիտալ |
| Ջրային տնտեսության գծով ծրագրեր, այդ թվում՝ | 19263.7 | 20300.27 | 22257.5 | 7351.79 | 14905.76 | 32556.26 | 7293.69 | 25262.57 | 22764.7 | 4861.82 | 17902.8 |
| ՀՀ ջրտնտպետկոմիտեի կենտրոնական ապարատի պահպանում | 70.30 | 111.03 | 112.18 | 112.18 | 0.00 | 113.81 | 113.81 | 0.00 | 124.75 | 124.75 | 0.00 |
| «Որոտան-Արփա-Սևան ԹԾՎ» ՊՀ-ի պահպանում, տեխնիկական վիճակի բարելավում և նորոգում | 307.33 | 1320.70 | 311.80 | 311.80 | 0.00 | 367.80 | 367.80 | 0.00 | 454.90 | 454.90 | 0.00 |
| Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման գծով պետական պատվեր | 74.50 | 87.00 | 87.00 | 87.00 | 0.00 | 87.00 | 87.00 | 0.00 | 87.00 | 87.00 | 0.00 |
| Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և նորոգում | 320.87 | 333.00 | 333.00 | 0.00 | 333.00 | 333.00 | 0.00 | 333.00 | 333.00 | 0.00 | 333.00 |
| «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի համալրում | 25.50 | 19.89 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի համալրում | 25.50 | 18.87 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ջրային համակարգերի օգտագործման և պահպանման տեխնիկական հանձնաժողովի պահպանում | 0.00 | 20.00 | 14.00 | 14.00 | 0.00 | 14.00 | 14.00 | 0.00 | 14.00 | 14.00 | 0.00 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ոռոգման համակարգի և խմելու ջրի ձեռնար-կությունների սուբսի-դավորում՝ այդ թվում | 8137.61 | 5353.70 | 4601.30 | 4601.30 | 0.00 | 3933.50 | 3933.50 | 0.00 | 2468.30 | 2468.30 | 0.00 |
| «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սուբսիդավորում | 1366.49 | 1381.30 | 1381.30 | 1381.30 | 0.00 | 1213.50 | 1213.50 | 0.00 | 248.30 | 248.30 | 0.00 |
| Երևան «Ջրմուղ-կոյու-ղի» ՓԲԸ սուբսիդավո-րում | 1202.32 | 252.30 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ոռոգման համակար-գերի սուբսիդավորում | 5568.80 | 3720.10 | 3220.00 | 3220.00 | 0.00 | 2720.00 | 2720.00 | 0.00 | 2220.00 | 2220.00 | 0.00 |
| Գերմանիայի զարգաց-ման վարկերի բանկի աջակցությամբ իրակա-նացվող Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համա-կարգերի վերականգման ծրագիր | 3391.15 | 785.81 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Գերմանիայի զարգաց-ման վարկերի բանկի աջակցությամբ իրակա-նացվող Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համա-կարգերի վերականգման / նոր ծրագիր/ | 0.00 | 0.00 | 680.02 | 311.69 | 368.34 | 659.29 | 228.96 | 430.33 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Համաշխարհային բան-կի աջակցությամբ իրա-կանացվող՝ Պատվար-ների անվտանգության ծրագիր | 299.56 | 2076.97 | 1135.83 | 37.50 | 1098.32 | 172.50 | 145.71 | 26.79 | 127.65 | 107.83 | 19.82 |
| Համաշխարհային բան-կի աջակցությամբ իրա-կանացվող՝ Պատվար-ների անվտանգության երկրորդ ծրագիր | 332.13 | 1021.71 | 1132.68 | 69.86 | 1062.82 | 968.30 | 71.92 | 896.39 | 716.54 | 53.22 | 663.33 |
| Համաշխարհային բան-կի աջակցությամբ իրա-կանացվող՝ Ոռոգման համակարգերի զար-գացման ծրագիր | 2232.15 | 1678.61 | 1414.43 | 192.88 | 1221.55 | 848.66 | 115.73 | 732.93 | 628.01 | 85.64 | 542.37 |
| Համաշխարհային բան-կի աջակցությամբ իրա-կանացվող՝ Համայնքա-յին ջրամատակարար-ման և ջրահեռացման ծրագիր | 1641.86 | 1279.71 | 1917.49 | 513.35 | 1404.14 | 2647.29 | 1293.51 | 1353.78 | 1958.99 | 957.20 | 1001.80 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի նախապատրաստման | 398.13 | 416.59 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| կանխավճարի ծրագիր | | | | | | | | | | | |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող`Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի | 0.00 | 967.74 | 2518.43 | 102.36 | 2416.07 | 2100.36 | 102.36 | 1998.00 | 715.50 | 90.50 | 625.00 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Համայնքային զարգացման ծրագիր | 1662.32 | 13.44 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագիր | 290.65 | 64.39 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող` Սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր | 0.00 | 0.00 | 171.41 | 0.00 | 171.41 | 286.07 | 0.00 | 286.07 | 286.07 | 0.00 | 286.07 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր | 24.68 | 1061.97 | 1621.21 | 83.70 | 1537.51 | 1197.62 | 64.91 | 1132.71 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր | 29.47 | 1325.46 | 2380.00 | 226.80 | 2153.20 | 1243.36 | 140.40 | 1102.96 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության տրամադրված միջոցներով իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման դրամաշնորհային ծրագիր | 0.00 | 148.30 | 82.19 | 82.19 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի դրամաշնորհային ծրագիր | 0.00 | 911.23 | 435.02 | 41.58 | 393.44 | 623.97 | 50.22 | 573.75 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության տրամադրված միջոցներով իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման դրամաշնորհային ծրագիր | 0.00 | 148.30 | 82.19 | 82.19 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի դրամաշնորհային ծրագիր | 0.00 | 1135.85 | 419.36 | 62.91 | 356.45 | 969.25 | 145.37 | 823.88 | 0.00 | 0.00 | 0.00 |
| «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի միջոցով իրկանացվող ծախսեր | 0.00 | 0.00 | 2808.00 | 418.50 | 2389.50 | 15990.50 | 418.50 | 15572.00 | 14850.00 | 418.50 | 14431.50 |

# ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

## 15.1. ՀՀ էներգետիկ համակարգի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

### 15.1.1.Համակարգի ընդհանուր նկարագիրը

Էներգետիկան ունի ռազմավարական նշանակություն երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման համար: Էներգետիկայի զարգացումը կարևորվում է ինչպես Հայաստանի արդյունաբերության, տրանսպորտի և հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման, այնպես էլ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման համար: Թանկարժեք և անհուսալի էներգամատակարարումը զգալի վտանգ կարող է ներկայացնել Հայաստանի տնտեսության և բնակչության կենսամակարդակի բարելավման համար: Ուստի՝ էներգետիկայի բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնահարցը լինելու է ժամանակակից էներգետիկ սարքա վորումների կիրառմամբ նվազագույն ծախսերով էներգահամակարգի զարգացման խթանումը՝ անվտանգության, էներգամատակարարման հուսալիության և շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառն իր մեջ ներառում է էլեկտրաէներգետիկական համակարգը, գազամատակարարման համակարգը և ջերմամատակարարման համակարգը: Այն իր մեջ ընդգրկում է շուրջ 3200 ՄՎտ ընդհանուր հզորությամբ էլեկտրակայաններ, շուրջ 35000 կմ ընդհանուր երկարությամբ տարբեր լարման էլեկտրահաղորդման գծեր, ավելի քան 9000 էլեկտրական ենթակայաններ, շուրջ 220.0 մլն նմ$^3$ տարողությամբ գազի ստորգետնյա պահեստարաններ, 2000 կմ մայրուղային և ավելի քան 9260 կմ բաշխիչ գազատար ցանցեր, 1788 գազակարգավորիչ կետեր ու բազում այլ հանգույցներ, սարքեր ու սարքավորումներ, որոնց զգալի մասը սպառել են իրենց ծառայության ժամկետները կամ գտնվում են ֆիզիկապես և բարոյապես մաշված վիճակում:

Փլուզված է հանրապետության ջերմամատակարարման համակարգի գերակշռող մասը: Իրենց աշխատունակությունը պահպանել են միայն Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երի և Գյումրիի կաթսայատան ջերմամատակարարման համակարգերը՝ ոչ լրիվ ծավալով: Անհրաժեշտ է կատարել հսկայական ծավալի վերանորոգման և արդիականացման աշխատանքներ այս համակարգում ևս:

Հետևաբար, ժամանակի հրատապ պահանջ են դարձել արտադրող հզորությունների սերնդափոխության և արդիականացման հետ կապված հարցերը, որոնց իրականացման համար ներգրավվել են օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացվող վարկային միջոցներ:

Ներկայումս ՀՀ էներգետիկայի ոլորտում ներդրումային քաղաքականության առումով իրականացվում է պետության մասնակցության կրճատում, ինչը պայմանավորված է որոշ ենթակառույցների մասնավորեցմամբ և օտարերկրյա պետություններից ու միջազգային ֆինանսական կազմակերպություններից ֆինանսական միջոցների ներգրավմամբ:

### 15.1.2.Վերջին երկու տարիների զարգացման միտումները

Վերջին տարիներին էներգետիկայի բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնական խնդիրներն էին էներգահամակարգի ֆինանսական կայունության ամրապնդումը,

էներգետիկ անվտանգության ու անկախության ապահովման, տեխնիկական վերազինման և զարգացման ծրագրերի մշակումն ու իրականացումը:

2005 թվականին մշակվեց և ՀՀ կառավարության հավանությանն արժանացավ «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգաց ման ռազմավարությունը», որում սահմանված են մինչև 2025-30թթ. էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական խնդիրներն ու ուղղությունները:

Զգալի առաջընթաց արձանագրվեց էներգահամակարգի տեխնիկական վերազինման և զարգացմանն ուղղված ծրագրերում:

Ավարտվեցին Համաշխարհային Բանկի վարկային միջոցների հաշվին իրականացվող 220կՎ լարման թվով 8 ենթակայանների վերազինման աշխատանքները, ինչպես նաև TACIS ծրագրով Տաթև ՀԷԿ-ի արագության կարգավորիչների արդիականացման աշխատանքները: Տարեվերջին գործարկվեց և սկսեց էլեկտրաէներգիա արտադրել Իրանի Իսլամական Հանրապետության տեխնիկական օգնությամբ Պուշկինի լեռնանցքում կառուցված 2,6 ՄՎտ հզորությամբ առաջին հողմաէլեկտրա կայանը:

Նախատեսված ժամանակացույցի գերազանցումով ընթանում է Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը: Մեկնարկեցին «Ալավերդի-2» ենթակայանի վերակառուցման և Երևանի ՋԷԿ-ի տարածքում նոր համակցված ցիկլով էներգաբլոկի կառուցման  աշխատանքները:

Սակագնային ճկուն քաղաքականության շնորհիվ մասնավոր ներդրողների կողմից շարունակվում են փոքր ՀԷԿ-երի կառուցման աշխատանքները, պահպանվում է հողմաէլեկտրակայան կառուցել ցանկացող ներդրողների հետաքրքրությունը: Դրական արդյունքներ են սպասվում Հայաստանի երկրաջերմային ռեսուրսների օգտագործմանն ուղղված հետազոտությունների և կատարվելիք աշխատանքների ուղղությամբ Համաշխարհային Բանկի հետ տարվող բանակցություններում:

Ստեղծվեց «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամը», ինչը համահունչ է էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական խնդիրներին և ուղղված է խթանելու դրանց իրականացումը:

Վերջին տարիներին իրականացված գազաֆիկացման ընդլայնման աշխատանքների շնորհիվ հանրապետության բնական գազից օգտվողների թիվը կազմել է 364 115 բաժանորդ: Այս բնագավառում իրականացվող միջոցառումները կատարվում են «Գազաֆիկացման և գազամատակա րարման վերականգնման ծրագրի» շրջանակներում: Ինչպես նաև, 2006թ ՀՀ պետբյուջեի միջոցներից 105200,0 հազ. դրամի չափով սուբվենցիա տրամադրվեց ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր և Վերնաշեն համայնքներին՝ գազամատակարարման աշխատանքներ կատարելու համար: Իսկ կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքավորումների շահագործման անվտանգությունն ապահովե լու նպատակով՝ ՀՀ վարչապետի 2005թ մայիսի 6 N 308-Ա որոշմամբ նախատեսվում է ստեղծել գազի վառարանների և գազի կաթսաների փորձարկման լաբորատորիա:

2005 թ. ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի պետական ընկերությունների համար կարևոր էր նրանով, որ ավարտվեց ՀՀ կառավարության 06.11.2003թ. N1694-Ն որոշմամբ հաստատված՝ ընկերու թյունների ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը: ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգում պետության կողմից որդեգրված և վերջին

տարիների ընթացքում հետևողականորեն իրականացրած արմատական բարեփոխումները (այդ թվում՝ կառուցվածքային, իրավական և ֆինանսական հիմնախնդիրների քայլ առ քայլ կարգավորումը), ի վերջո, 2005 թ. համակարգը բերեցին ավարտուն առևտրային փոխհարաբերությունների դաշտ, երբ համակարգի ընկերությունների հետագա զարգացմանն այլևս խոչընդոտ չեն ֆինանսական հին պարտքերի բեռը, իսկ ընկերությունների ընթացիկ գործունեության կազմակերպումը, նաև զարգացմանն ուղղված խնդիրները կարգավորվում են ձևավորված իրավանորմատիվային դաշտում:2005թ.-ի արդյունքներով ՀՀ էներգահամակարգի պետական ընկերությունների ֆինանսական հոսքերի ընթացիկ հաշվեկշիռը եղել է դրական և նախնական տվյալներով կազմել է շուրջ՝ 4.0 մլրդ դրամ (ինչպես և նախորդ երկու տարիների արդյունքներով՝ 2004թ համար - 3.2 մլրդ դրամ, 2003թ. համար - 0.7 մլրդ դրամ), որով մեկ անգամ ևս հավաստվում է, որ ընկերությունների ֆինանսական առողջացման գործընթացը ավարտված է, և վերջիններիս գործունեությունն իրականացվում է առևտրային սկզբունքներով:

### 15.1.3. Համակարգի հիմնական խնդիրները

**Էներգետիկ համակարգի հիմնական խնդիրները** կապված են լինելու բնագավառի զարգացման՝ ներդրումային, ֆինանսական ու այլ ծրագրերի մշակմամբ, բարոյապես ու ֆիզիկապես մաշված առանձին օբյեկտների ու կառույցների հրատապ վերակառուցման ու արդիականացման գործում առկա վարկերի արդյունավետ օգտագործման և հնարավոր նոր վարկերի ձեռքբերման, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների և արտադրական հզորությունների առավելագույնս օգտա գործման, ինստիտուցիոնալ բարեփոխումների հետագա կատարելագործման, էլեկտրաէներգետիկա կան շուկայի շարունակական ազատականացման և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրացման գործընթացի ակտիվացման հետ:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից են նաև հանրապետությունում գազամատակարար ման վերականգնումն ու գազաֆիկացումը, ինչպես նաև կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքավորումների շահագործման անվտանգության ապահովումը

Էներգետիկ համակարգի խնդիրների շարքում կարևորվում է ջերմամատակարարման համակարգի վերականգնումը, որն անմիջականորեն կհանդիսանա երկրում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների ներդրման արդյունքը, ինչպես նաև կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

## 15.2. Համակարգի նպատակները, գերակայությունները և ծախսերի վրա ազդող գործոնները ՄԺԾԾ ժամանակահատվածում

### 15.2.1. Նպատակները

Էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում ուղղված է երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, որոնք իրենց հերթին հանդիսանում են տնտեսության կայուն զարգացման հիմնական գործոններից:2007-2009թթ միջնաժամկետ հատվածում էներգետիկայի ոլորտի հիմնական նպատակները կլինեն՝ էներգահամակարգի զարգացումը և վերակառուցումը: Ելնելով վերը շարադրված խնդիրներից և նպատակներից՝ ծրագրային ժամանակահատվածում ՀՀ էներգետիկայի ոլորտի համար գերակա

խնդիրներ են դիտարկվում էներգահամակարգի հուսալիության բարձրացումը, սեփական էներգառե սուրսների առավելագույն օգտագործումը և համակարգի ֆինանսատնտեսական գործունեության հավասարակշռությունը: Այս գերակայությունների իրագործմանը կնպաստեն ինչպես 2007-2009թթ ՄԺԾԾ-ում ընդգրկված ծրագրերը, այնպես էլ էներգետիկայի զարգացմանն ուղղված այլ ծրագրեր:

#### 15.2.3. Համակարգում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Էներգահամակարգում 2007-2009թթ. իրականացվող ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոններն են.քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բազային պաշտոնային դրույքաչափերի բարձրացումը («Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված):գնվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գների և սակագների փոփոխությունները:

### 15.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում համակարգում իրականացվելիք ծախսային ծրագրերը

#### 15.3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը

2007-2009թթ ՄԺԾԾ-ում ՀՀ էներգահամակարգում նախատեսվում է իրականացնել 4 ծրագիր:

1. «էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնում» վարկային ծրագիր (Միջազգային համագործակցության ճապոնական բանկ (ՄՀՃԲ))

Ծրագրով նախատեսվում է 110 կՎ ենթակայանների հիմնական սարքավորումներով վերազի նում, բարձրավոլտ ենթակայանների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև ՀՀ էներգահամակարգի նոր SCADA/Կապի համակարգի իրականացման համար առաջին փուլի սարքավորումների առաքում և տեղադրում: Մրցույթը նախատեսվում է հայտարարել 2006թ առաջին եռամսյակում:

2. «էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցում» վարկային ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի (KfW) բանկ)

Ծրագրով նախատեսվում է «Ալավերդի-2» ենթակայանի ամբողջական վերականգնում և վերազինում: Կովկասյան նախաձեռնության շրջանակներում իրականացվող վարկային ծրագիրը կշարունակվի ներառյալ 2008 թ.: Այս ծրագրի շրջանակներում 2003թ վերակառուցվել և շահագործման են հանձնվել «Վանաձոր-2» և «Կամո» ենթակայանները:

3. Երևանի ՋԷԿ-ի տարածքում համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագիր, (Միջազգային համագործակցության ճապոնական բանկ (ՄՀՃԲ))

2005թ մարտի 29-ին ՀՀ կառավարության և Միջազգային համագործակցության ճապոնական բանկի միջև կնքվեց վարկի տրման մասին համաձայնագիրը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևանի ՋԷԿ-ի տարածքում համակցված շոգեգազային ցիկլով նոր էներգաբլոկի կառուցում:

Ծրագրի նպատակն է՝ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ նվազեցնել վառելիքի տեսակարար ծախսը, կայանի սպասարկման մնացած ծախսերը, հետևապես՝ արտադրանքի ինքնարժեքը և սակագները:

4. «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ում աշխատած միջուկային վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի նախագծում, անվտանգության հիմնավորում և կառուցում» ծրագիր (ՀՀ պետբյուջե)

Ծրագրի շրջանակներում իրականացվում է Հայկական ԱԷԿ-ի տարածքում աշխատած վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի նախագծում, անվտանգության հիմնավորում և կառուցում՝ Հայկական ԱԷԿ-ի» թիվ 2 էներգաբլոկի հետագա անվտանգ շահագործումը շարունակելու համար, որի կառուցման ծրագրին կանդրադառնան ՀՀ 2007 թ. պետական բյուջեի քննարկման ժամանակ:

2006թ ՀՀ պետբյուջեով նախատեսված է «Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի պահպանման ծախսերը և գազաֆիկացման աշխատանքների կատարման նպատակով ՀՀ Վայոց Ձորի մարզի Գլաձոր և Վերնաշեն համայնքներին սուբվենցիայի տրամադրումը: Միջնաժամկետ հատվածում ֆինանսավորում չի նախատեսվում:15.5. Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր

էներգահամակարգի վերակառուցման և վերազինման համար արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով շարունակվում են վարկեր ստացվել Գերմանական KFW բանկի կողմից՝ «Ալավերդի-2» ենթակայանի վերակառուցման, Միջազգային Համագործակցության Ճապոնա կան բանկի (ՄՀՃԲ) կողմից՝ էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման և Երևանի ՋԷԿ-ի համակցված ցիկլով շոգեգազային էներգաբլոկի կառուցման համար:

**Աղյուսաակ 15.1. Ծախսերի համեմատական աղյուսակ 2006-2008թթ. ՄԺԾԾ և 2007-2009թթ. ՄԺԾԾ միջև ըստ ենթախմբերի**

(մլն դրամ)

| Ծրագրի անվանումը | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ |
| ՀՀ էներգետիկայի ոլորտում պետական կառավարում | 170,80 | 210,70 | 201,00 | 222,00 | 234,00 | 228,75 | 253,14 |
| Ճապոնիայի կառավարու թյան աջակցությամբ իրակա նացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր | 3198.50 | 368,2 | 13526.9 | x | 0.0 | x | x |
| Ճապոնիայի կառավ արու թյան աջակցությամբ իրակա նացվող համակցված շոգե գազային ցիկլով էներգա բլոկի կառուցման ծրագիր | 0.0 | 805,6 | 0.0 | 13304.9 9 | 0.0 | 41815.32 | 20251.93 |
| Գերմանիայի զար գացման վարկերի բանկի աջակցու թյամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղա փոխման սեկտորի վերակա ռուցման ծրագիր | 2318.0 | 2056.53 | 1540.3 | 871.29 | 2596.4 | 230.40 | 0.0 |
| «Հայկական ԱէԿ» ՓԲԸ-ում աշխատած միջուկային վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստա րանի կառուցում | 0.0 | 854.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

**Աղյուսակ 15.2. Պետական բյուջեից էներգետիկայի ոլորտի ծախսերը 2007 -2009թթ.**

*(մլն դրամ)*

| Ծրագրի անվանումը | 2005թ. փաստ | 2006թ. հաս տատվ | % փոփ | 2007թ. | % փոփ | 2008թ. | % փոփ . | 2009թ. | % փոփ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | ած բյուջե | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ծախսերը ՀՆԱ-ի նկատ մամբ %-ով | 0,08 | 0,16 | x | 0,61 | x | 1,60 | x | 0,90 | X |
| Ընդամենը ծախ սերը ՀՀ ՊԲ-ի նկատմամբ %-ով | 0,4 | 0,8 | x | 3,1 | x | 8,1 | x | 4,8 | x |
| էներգետիկայի, այդ թվում` | 1774,7 | 4085,1 | 130,2 | 16735, 8 | 309,7 | 48291,0 | 188, 5 | 29415,1 | -39,1 |
| Ճապոնիայի կառավա րության աջակցու թյամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցան ցերի վերականգնման ծրագիր | 23,1 | 368,2 | 1492, 2 | 2559,5 | 595,1 | 6245,2 | 144, 0 | 9163,2 | 46,7 |
| տեսակարար կշի ռը ամբողջ ծախ սերի մեջ %-ը | 1,3 | 9,0 | x | 15,3 | x | 12,9 | x | 31,2 | x |
| Ճապոնիայի կառավա րության աջակցու թյամբ իրականացվող համակցված շոգեգա զային ցիկլով էներգա բլոկի կառուցման ծրագիր | 0,0 | 805,6 | 0,0 | 13305, 0 | x | 41815,3 | 214, 3 | 20251,9 | -51,6 |
| տեսակարար կշի ռը ամբողջ ծախ սերի մեջ %-ը | 0,0 | 19,7 | x | 79,5 | x | 86,6 | x | 68,8 | x |
| Գերմանիայի զարգաց ման բանկի վարկերի աջակցությամբ իրակա նացվող էլեկտրաէներ գիայի տեղափոխման սեկտորի վերակառուց ման ծրագիր, այդ թվում` | 896,8 | 2056,5 | 129,3 | 871,3 | -57,6 | 230,4 | -73,6 | 0,0 | -100,0 |
| տեսակարար կշիռը ամբողջ ծախսերի մեջ %-ը | 50,5 | 50,3 | x | 5,2 | x | 0,5 | x | 0,0 | x |
| «Հայկական ԱէԿ» ՓԲԸ-ում աշխատած միջուկային վառելիքի չոր եղանակով պահ պանման պահեստա րանի կառուցում | 854,8 | 854,8 | 0,0 | 0.0 | x | 0.0 | x | 0,0 | x |
| տեսակարար կշիռը ամբողջ ծախսերի մեջ %-ը | 48.2 | 20.9 | x | 0,0 | x | 0.0 | x | 0,0 | x |

## ԳԼՈՒԽ 16.1. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ

### 16.1.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Առևտրի և տնտեսական զարգացման ոլորտն ընդգրկում է` Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը և աջակցումը, զբոսաշրջության ոլորտի զարգացումը, ռադիոակ տիվ թափոնների վնասազերծման աշխատանքները, արտադրանքի, աշխատանքների և ծառայություն ների անվտանգության և որակի ապահովման բնագավառում պետության շահերի և սպառողների իրավունքների պետական պաշտպանությունը, ստանդարտացման և համապատասխանության գնահատման, չափագիտության միասնականությունը, լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլո գիական նախագծման նորմեր մշակելը և տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի կանոնակարգումը:

ՀՀ կառավարությունը ՓՄՁ ոլորտը դասել է տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը և շարունակական քայլեր է ձեռնարկում ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը հանդիսանում է ՀՀ տնտեսության դինամիկ զարգացող ոլորտներից մեկը: Վերջին երեք տարիների ընթացքում ստեղծվել են շուրջ 25.000 ՓՄՁ սուբյեկտներ, ապահովելով ավելի քան 22.000 նոր աշխատատեղեր: Դրա հետ մեկտեղ ՓՄՁ ոլորտը նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում.

2004 թ. տվյալներով ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է շուրջ 39%` գրեթե կրկնակի գերազանցելով 2000 թ. մակարդակը: Ըստ կանխատեսումների այս ցուցանիշը 2006 թ. կկազմի շուրջ 41%:

1. **Զբոսաշրջությունը** Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ուղղություններից է, և որպես պետական քաղաքականության հիմնական սկզբունք, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հայտարարված է որպես գերակա ճյուղ: Զբոսաշրջային ոլորտն ամբողջությամբ ընդգրկված է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում և ներառում է աշխատուժի առումով մարդկային ռեսուրսի սոցիալապես խոցելի այնպիսի խավեր, ինչպիսիք են երիտասարդներն ու կանայք:

Վերջին տարիներին ոլորտում տեղի է ունեցել լուրջ առաջընթաց`

- ձևավորվել և կատարելագործվել է ոլորտի օրենսդրական դաշտը,

- մեծ զարգացումներ են տեղի ունեցել հյուրանոցաշինության, հասարակական սննդի կազմակերպման և սպասարկման այլ բնագավառներում,
- աճել է հուշանվերների վաճառքի ծավալը,
- ակտիվացել է տրանսպորտային համակարգը,
- գրանցվել է զբոսաշրջային արդյունքի միջնորդական ծառայությունների առաջարկի կտրուկ աճ, ուղղված գոյություն ունեցող պահանջարկի բավարարմանը:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման առումով մեծ նշանակություն ունի հանրապետության ամբողջ տարածքում ճանապարհների բարելավումը, հիմք հանդիսանալով Հայաստանում որակապես նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորման համար, ինչն էլ իր հերթին խթանում է շրջակա համայնքներում տնտեսության այլ ոլորտների զարգացումը:

Վերջին տարիների ընթացքում վերանորոգված մշակութային օջախները և հատկապես թանգարան ների վերաբացումը նույնպես խթան են հանդիսանում զբոսաշրջության ցուցանիշների աճի համար, քանզի հայկական զբոսաշրջային արդյունքում մշակութային զբոսաշրջությունը էական դերակատարում ունի: Զբոսաշրջային ենթակառուցվածքների, համայնքներում զբոսաշրջության զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ Ծաղկաձորի ճոպանուղու վերագործարկումը, ինչպես նաև վերջինի երրորդ հատվածի կառուցումը և շահագործումը: Միջազգային չափանիշներին համապատասխանող այս համալիրի գործարկումը խթան կհանդիսանա տարածաշրջան բազմաթիվ միջազգային և ներքին զբոսաշրջիկների ներգրավման համար:

2. **Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման** ծրագրով իրականացվում է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրում, պահպանում, վնասազերծում, թաղում՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

3. **Ստանդարտների ազգային ինստիտուտ** ՓԲԸ ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառներում, համաձայն «Ստանդարտացման մասին» և «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքների, իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացնում է գործունեության հետևյալ տեսակները.- ընդունում է ազգային ստանդարտներ,

-ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոններ, ընթացակարգեր, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը:

4. **Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին** արտադրանքի և ծառայությունների համապատասխանության պետական վերահսկողությունը և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական չափագիտական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ՀՀ որակի տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) կողմից:

5. **Չափագիտության ազգային ինստիտուտ** ՓԲԸ չափագիտության բնագավառում, համաձայն Չափումների միասնականության ապահովման մասին ՀՀ օրենքի, իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացնում է պետական քաղաքա կանություն՝

– ստեղծում, կատարելագործում, պահպանում և կիրառում է մեծությունների միավորների էտալոններ, ստեղծում է մեծությունների միավորների չափերի փոխանցման համակարգը,

– կազմակերպում և իրականացնում է պետական չափագիտական հսկողության ենթակա ոլորտներում չափման միջոցների ստուգաճշտում, չափումների կատարման մեթոդիկաների

վկայագրում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հավատարմագրման աշխատանքներ:

6. **Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման** ոլորտը կարգավորվում է ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազորված պետական մարմիններ են ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, ՀՀ բնապահպանության և ՀՀ էներգետիկայի նախարարությունները: Ընդերքի շահագործման հետ կապված հիմնական գործառույթներն իրականացնում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը, մասնավորապես` հանքարդյունահանման (հատուկ) լիցենզիայի տրամադրում, ընդերքօգտագործման նախագծերի պետական փորձաքննության իրականացում, կայունացման, կոնցեսիոն և լիցենզային (վերջինս ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ) պայմանագրերի կնքում, լեռնահատկացման կատարում:

**7. 2006թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը**, համաձայն որի տեսչական գործառույթների փոխարեն իրականացվում է օրենսդրական կանոնակարգում և սահմանված տեխնիկական պահանջների համապատասխանու թյան ապահովմանն ուղղված տեխնիկական անվտանգության փորձաքննություն: Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի գործառույթների մեջ մտնում է տեխնիկական կանոնակարգերի մշակումը: Համաձայն «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի` տեխնիկական կանոնակարգերն ընդունվում են մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության, սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելման նպատակներով:Տեխնիկական կանոնակարգերի ընդունումն այլ նպատակներով չի թույլատրվում:

8. **ՀՀ-ում Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ)** ծանուցման գործակալության գործունեությունը նպատակաուղղված է ՀՀ-ի ԱՀԿ անդամակցությամբ ստանձնած պարտավորու թյունների կատարման, ՀՀ առևտրատնտեսական ոլորտում իրականացվող ընթացիկ բարեփոխում ների գործընթացները ԱՀԿ պահանջների համապատասխանության, ինչպես նաև ՀՀ և ԱՀԿ անդամ երկրների առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության ու թափանցիկու թյան ապահովմանը:

**16.1.2.Ոլորտի զարգացման և պետական աջակցության միտումները**

ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության միտումները պահպանվել են ինչպես 2005 թ., այնպես էլ 2006 թ. (ինչպես ֆիզիկական, այնպես էլ ֆինանսական) շրջանակներում: 2005 թ. կտրված քով պատկերը հետևյալն է.

Իրականացման փուլում է ՓՄՁ պետական աջակցության 2005 թ. ծրագիրը: ՓՄՁ պետական աջակցության 2005 թ. ծրագրային միջոցառումների շուրջ 70% նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության տարածաշրջաններում տնտեսական և գործարար ակտիվության բարձրացմանը: Բացի այդ, միջազգային և օտարերկյա դոնոր կազմակերպություններից ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին ընդլայնվել են ՓՄՁ ոլորտի հեռանկարային զարգացմանն ու այդ նպատակով իրականացվող պետական աջակցությանն ուղղված ծրագրային միջոցառումների շրջանակները:2005 թ. ընթացքում, վարկային երաշխավորությունների տրամադրման, որակի կառավարման համակարգ երի ներդրման, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական

աջակցություն է ցուցաբերվել Երևանում և ՀՀ այլ մարզերում գործող շուրջ 4500 ՓՄՁ սուբյեկտի:

2005 թ. ընթացքում աշխատանքներ են իրականացվել նաև ՓՄՁ պետական աջակցության 2004թ. ծրագրի շրջանակներում ստեղծված «Անդրոն-գիտահետազոտական ինստիտուտ-տեխնոպարկի» ինստիտուցիոնալ զարգացման և ամրապնդման ուղղությամբ:

ՓՄՁ պետական աջակցության 2005 թ. ծրագրով նախատեսված միջոցառումների բաղկացուցիչ մաս կազմող Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրն ուղղված է ՓՄՁ զարգաց ման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունների ընդլայն մանը: Վարկային երաշխավորությունը նախատեսված է վարկունակ, սակայն ցածր գրավունակու թյուն ունեցող ՓՄՁ սուբյեկտների համար, որը նաև էականորեն (մինչև 15%) կրճատում է վարկային տոկոսադրույքները և կազմում է վարկային պարտավորության մինչև 70%-ը (10.0 միլիոն դրամը չգերազանցող գումարի սահմաններում):Զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումները պահպան վել են նաև ընթացիկ ժամանակահատվածում: Ըստ կանխատեսումների աճի նույն դինամիկայի պահպանման դեպքում 2006 թ-ին այն կանցնի 350 000-ից: Հիմք ընդունելով Համաշխարհային Զբոսաշրջության Կազմակերպության միջազգային զբոսաշրջու թյունից ստացվող եկամուտների հաշվարկման մեթոդաբանությունը` միջազգային մեկ զբոսաշրջիկը Հայաստան այցելության միջինը 7 օրվա ընթացքում ծախսում է մոտ 1000 ԱՄՆ $:

Համաձայն այս հաշվարկի միայն միջազգային ներգնա զբոսաշրջության ոլորտում 2005թ. ընթացքում զբոսաշրջային արդյունքի արտահանումը կազմել է շուրջ 300 մլն.ԱՄՆ $:Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերջին տարիներին զբոսաշրջության չափաբաժինը ՀՆԱ-ում կազմել է մոտ 5%, իսկ արտահանման ծավալներով այն առաջատար ճյուղերից է: Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման գծով ծախսերի ծրագրի շրջանակներում 2005թ. ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները

ա/ տեղափոխվել է 4 տարբեր կազմակերպություններից 120 հատ ռադիոակտիվ թափոն 2.2 կյուրի ակտիվությամբ,

բ/ պահեստարաններում պահպանվում է 21.0 հազար կյուրի ակտիվությամբ թափոններ,

գ/ հատնաբերվել, տեղափոխվել և պահեստավորվել է ՌԹՎ-ում 2 հատ անհայտ թափոններ` Մեղրու անցակետից:

⇒2006թ. զարգացման միտումներն են ռադիոակտիվ թափոնների անվտանգ տեղափոխումը և պահպանումը համաձայն Ատոմային էներգիայի Միջազգային Գործակալության կողմից հաստատ ված նորմերի: Նշված ծրագրի իրականացման շրջանակներում և մատուցված ծառայությունների դիմաց համաձայն 11.12.2003թ. ՀՀ կառավարության 1653-Ն որոշման ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների մատուցված սակագնի սահմանն է 0 դրամ, որի հետևանքով բոլոր ծախսերի փոխհատուցումը իրականացվում է պետական բյուջեի կողմից սուբսիդիա հոդվածով:

**2005թ. շարունակվել են Հայաստանի Հանրապետության ստանդարտացման և համապատասխա նության** գնահատման համակարգերի ներդաշնակեցման աշխատանքները միջազգային և եվրոպա կան նորմերին: Թվով 19 առաջնային տեխնիկական կանոնակարգերի մշակումը և ՀՀ կառավա րության կողմից դրանց հաստատումը` Առևտրի համաշխարհային կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրով Հայաստանի Հանրապետության

ստանձնած պարտավորու թյունների կատարման ապացույցն է: Միջպետական ստանդարտացման աշխատանք ների շրջանակներում 2005 թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունը միացել է 150-ից ավել միջպետական ստանդարտների և դրանց փոփոխությունների նախագծերին, ինչն իրականացվել է նախագծերի գնահատումով և քննարկումով հանրապետության տարբեր շահագրգիռ կազմակերպու թյունների կողմից: Այդ ժամանակաշրջանում գրանցված ազգային ստանդարտների քանակը 353 - ն են, այդ թվում ՀՀ ստանդարտներ - 49, միջպետական ստանդարտներ - 226 (ներառյալ Ռուսաստանի Դաշնության ստանդարտները, միջազգային ԻՍՕ, ԵՆ, ԻԷԿ ստանդարտներ – 78): Կանխատեսվում է, որ 2006թ. ընթացքում ֆիզիկական և ֆինանսական ցուցանիշները կհամապատասխանեն 2005թ. մակարդակին: Պետական գրանցում ստացած տեխնի-կական պայմանների քանակը կազմել է 356 հատ, իսկ թողարկված տեղեկատվական փաստաթղ-թերը՝ Ստանդարտների կատալոգ-1, Ստանդարտ ների տեղեկատուներ-4:

**Տեսչության առջև դրված խնդիրների լուծման համար** 2005թ. ընթացքում տեխնիկական կանոնա կարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական վերահս-կողություն է իրականացվել շուրջ 2447 տնտեսվարող սուբյեկտներում, որից 367 – ում հայտնաբերվել են 458 խախտումներ, 17 տնտեսվարող սուբյեկտների ղեկավարներ խոչնդոտել են ստուգումների իրականացմանը, ինչ վերաբերում է 2006թ. զարգացման միտումներին ապա այն իրականացվելու է 2005թ. մակարդակով:

⇒ Ստուգումների արդյունքների հիման վրա 2005թ. ընթացքում հետևյալ պատկերն է՝

- 193 տնտեսվարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումը կասեցնելու մասին,
- 41 տնտեսվարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր չստուգաչափված չափման միջոցների շահագործումը արգելելու մասին,
- խախտումներ թույլ տված 370 պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ շուրջ 24.0 մլն դրամի չափով:
- **2005 թ. շարունակվել է չափումների միասնականության ապահովման նպատակով իրականացվող աշխատանքները՝** այդ թվում ձեռք է բերվել ծրագրով նախատեսված ճիշտ ժամանակի և էտալոնային հաճախականությունների ազդանշանների ընդունիչ, ինչպես նաև ինստիտուտի միջոցների հաշվին ձեռք է բերվել հեղուկների էտալոնային ծախսաչափ, միջպետական էտալոնների հետ բաղդատվել է 17 միավոր ազգային էտալոն, մշակվել է չափումների միասնականության ապահովման ազգային համակարգի երկու հիմնադիր ստանդարտ, իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ հետևյալ ուղղությամբ՝ գազի շահագործման ժամանակ անվտանգության ապահովման սարքի նախագծման աշխատանքներ: 2006 թվականին նախատեսվում է. ձեռք բերել էլեկտրական հոսանքի և լարման տրանսֆորմատորների ստուգաչափման շարժական կայանք, ԱՊՀ երկրների միջպետական էտալոնների հետ բաղդատման ենթարկել 10 աշխատանքային էտալոն, կատարել հետազոտական աշխատանքներ բնական գազի, գազային խառնուրդների պատրաստման և վկայագրման համար, ստեղծել ստանդարտ նմուշներ ոգելից խմիչքների արդյունաբերության համար:

Լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմեր մշակելու ծրագրի 2005-2006թթ. զարգացման միտումները թե ֆիզիկական, թե ֆինանսական ցուցնիշների ներկայացումն ունի որոշակի բարդություններ կապված ծրագրի իրականացման գործընթացից, որը

սկսվելու 2006թ: 2006 թ. լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմեր մշակելու ծրագրի հաջող իրականացման արդյունքում, ներկայումս հանքարդյունահանման լիցենզիաներ ստացած 370 գործող հանքարդյունահանող կազմակերպությունների (մոտակա ժամանակաշրջանում դրանց թիվը կհասնի մոտ. 450-ի) աշխատանքային նախագծերը կարող են վերանայվել և նախագծվել նոր նորմերին համապատասխան, ինչը կնպաստի այդ կազմակերպությունների կողմից ընդերքի արդյունավետ օգտագործմանը, շահագործման անվտանգության, շրջակա միջավայրի պահպանու թյան աստիճանի, ընդերք տրամադրող պետական լիազոր մարմնի կողմից ընդերքի ռացիոնալ և անվտանգ շահագործման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Վերը նշված գործունեության արդյունքում, մասնավորապես 2004-2005թթ. հավաքագրվել և պետական բյուջե պետական տուրքի գծով փոխանցվել է 2004թ. – 54.8 մլն դրամ, իսկ 2005թ. – 53.6 մլն դրամ: Նշված գումարների ապահովումն իրականացվել է նորմերի բացակայության ժամանակ, որի արդյունքում կանխատեսվում է, որ պետական բյուջեի ֆինանսավորում իրականացնելու դեպքում պետական տուրքերի հավաքագրման աշխատանքների արդյունավետության բարձարացումը կկազմի շուրջ 20 %:«Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեխնիկական անվտանգության ապահովման համակարգի վերջնական ձևավորումն իրականացվելու է երկու անցումային փուլերի ավարտից հետո: Առաջին անցումային փուլի ընթացքում (ամբողջ 2006 թ.)`օրենքով սահմանված չափանիշներին համապատասխան, պետք է նույնականացվեն (իդենտիֆի կացվեն) և գրանցվեն տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի կողմից վարվող արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում ՀՀ շահագործվող բոլոր արտադրական վտան գավոր օբյեկտները,Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրվեն իրավա բանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը` տեխնիկական անվտանգության փորձաքն նության իրավունք ձեռք բերելու համար:

- Երկրորդ անցումային փուլի ընթացքում, որը կարող է տևել 3-4 տարի` տեխնիկական անվտան գության ազգային կենտրոնը պետք է իրականացնի տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի կանոնակարգումը:

Իր գործունեության ընթացքում ՀՀ-ում ԱՀԿ ծանուցման գործակալությունը կատարել է ԱՀԿ համաձայնագրերի պահանջների համապատասխան ՀՀ առևտրատնտեսական բնագավառին վերա բերվող նախատեսված ծանուցումները, այդ և ստանձնած այլ պարտավորությունների կատարման նպատակով համակարգել է ՀՀ-ում ԱՀԿ հարցման կետերի` ՀՀ նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների աշխատանքները, կազմակերպել և անցկացրել է ուսուցողական սեմինարներ, մշակել է ծանուցումների ապահովման ընթացակարգերի ուղեցույց-բազա, ապահովել է ԱՀԿ անդամ երկրներից ստացված ծանուցումների տրամադրումը ԱՀԿ հարցման կետերին, ծանուցումների կատարման և միջազգային առևտրի գործընթացների պարզեցման ուղղությամբ համագործակցել է մի շարք միջազգային կառույցների հետ /էներգետիկայի խարտիա, ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական Հանձնաժողով և այլն/, ապահովել է բոլոր գործընթացների տեղեկատվությունն ու թափանցիկությունը:

**16.1.3. Հիմնական խնդիրները**

ՓՄՁ ոլորտի զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ ոլորտի փորձագիտական ուսումասի-րությունների և վարչական մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ,

որոնց դեռ շարունակում են բախվել ՓՄՁ սուբյեկտները: Այդ հիմնախնդիրները պայմանավորված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության, խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի (ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրներով, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասով:

Հայաստանում զբոսաշրջության կայուն զարգացում և Հայաստան այցելող զբոսաշրջիկների թվի դինամիկ աճ հնարավոր է ապահովել միայն հետևյալ խնդիրների լուծման դեպքում.

ա) զբոսաշրջային արդյունքի որակի և մրցունակության բարձրացում,

բ) Հայաստանի՝ որպես զբոսաշրջային բարենպաստ, գրավիչ և ապահով երկրի նկարագրի ձևավորում և միջազգային շուկայում պատշաճ և արդյունավետ ներկայացում,

գ) վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման արդյունավետ համակարգի ներդրում:

Ստանդարտացման և համապատասխանության գնահատման ոլորտներում հիմնական խնդիրներն են.

Մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, շրջակա միջավայրի, այդ թվում՝ կենդանական և բուսական աշխարհի անվտանգության ապահովման աջակցումը,

- տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության, արտադրանքի համափոխարինելիության ապահովումը,
- արտադրանքի, աշխատանքի, ծառայության որակի և մրցունակության բարձրացումը,
- ռեսուրսախնայողությունը,
- արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության ապահովումը և թյուրիմացության մեջ նրանց գցող գործոնների կանխումը,
- ներքին և արտաքին առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը, ինչպես նաև միջազգային տնտեսական, գիտատեխնիկական համագործակցության և միջազգային առևտրում մասնակցելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը,
- ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառներում միասնական տեխնիկական քաղաքականության ապահովումը,
- սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների գործունեության արդյունքների միջազգային փոխճանաչման համար պայմանների ստեղծումը

→ Տեսչության հիմնական խնդիրներն են՝

- տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրանքի և ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների խախտումների կանխարգելումը և վերացումը,
- տեխնիկական կանոնակարգերին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության ապահովումը,
- չափումների միասնականության ապահովման բնագավառում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված չափագիտական կանոնների ու նորմերի պահպանումը, խախտումների բացահայտումը և դրանց կանխարգելումը:

- Չափումների միասնականության ապահովման ոլորտում հիմնական խնդիրներն են՝
- հանրապետությունում չափումների միասնականության ապահովումը,
- միջազգային, միջպետական փոխհամագործակցության առևտրատնտեսական կապերի ժամանակ տեխնիկական խոչընդոտների վերացումը,
- բարձր ճշգրտության չափումների կատարման հարցում հանրապետության կախվածության բացառումը,
- տնտեսության առավել կարևոր ճյուղերում ներդրվող ժամանակակից տեխնոլոգիաների չափա գիտական սպասարկման ապահովումը:
- Չափագիտության ազգային ինստիտուտի նյութատեխնիկական բազայի արդիականացումն ու վերազինումը բարձր ճշտության նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ստուգաչափական սարքավորումներով, էտալոններով

Լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմեր և նորմատիվներ մշակելու հիմնական խնդիրն է՝

- նախկին ԽՍՀՄ լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմերի մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն
- նմանատիպ հանքային արդյունաբերություն ունեցող զարգացած երկրների տվյալ բնագավառում ունեցած փորձի ուսումնասիրություն և վերլուծություն
- գործող լեռնահանքային ձեռնարկություններում ուսումնասիրությունների իրականացում
- ստացված տեխնիկա-տնտեսական ցուցանիշների վերլուծություն
- ստացված արդյունքների ամփոփում և նորմերի կազմում
- համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշակում

Տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի կանոնակարգման խնդիրն է վերլուծել ներկայումս գործող տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտում բազմաթիվ նորմատիվ փասթաթղթերը (Հայաստանի ստանդարտները, սանիտարական նորմերը և կանոնները, շինարա րական նորմերը և կանոնները և այլն) և փոխարենը մշակել (հաշվի առնելով ժամանակակից գիտա տեխնիկական նվաճումները, տեխնոլոգիաների զարգացումները և միջազգային փորձը) տեխնիկա կան կանոնակարգեր՝ ըստ արդյունաբերության տարբեր ճյուղերի առանձնահատկությունների:

→ ԱՀԿ ոլորտի հիմնական խնդիրներն են՝

ա/ Տեղեկատվության մատչելիության և հասանելիության, ինչպես նաև ՀՀ-ում ԱՀԿ հարցման կետերի աշխատանքներին աջակցության միջոցով նպաստել ՀՀ-ում ԱՀԿ հիմնական սկզբունքների, նպատա կների և պահանջների լիիրավ իրականացման ապահովմանը:

բ/ ՀՀ առևտրատնտեսական քաղաքականության և այլ ընթացակարգերի, ինչպես նաև ԱՀԿ անդամ և ՀՀ գործընկեր երկրների առևտրատնտեսական քաղաքականությունների և այլ ընթացակարգերի փոխադարձ թափանցիկության և տեղեկատվության ապահովում, որը հիմք է հանդիսանում թափան ցիկ առևտրատնտեսական միջավայրի արգելքների նվազեցման և կայունության հաստատման հա մար, որն էլ իր հերթին կապահովի առևտրի, ներդրումների և տնտեսական զարգացման հետագա աճ:

գ/ Գործարարներին՝ արտահանողներին, ներմուծողներին, փոքր և միջին ձեռնարկատերերին արտաքին առևտրատնտեսական բնագավառին վերաբերող տեղեկատվության հասանելիության և մատչելիության ապահովում, խորհրդատվությունների, ինչպես նաև առևտրային քաղաքականու թյունների, զարգացումների և դրանց դինամիկայի վրա հիմնված վերլուծությունների տրամադրում:

**16.1.4.. Ոլորտի հիմնական նպատակները, գերակայությունները և ծախսերի վրա ազդող գործոնները**

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության նպատակներն են.

- ՓՄՁ պետական աջակցության ընդլայնումը և շարունակականության ապահովումը,
- ՓՄՁ սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը և ամրապնդումը,ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը,
- ՓՄՁ սուբյեկտների նորարարական և արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը,
- ՓՄՁ սուբյեկտների՝ գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծառայու թյուններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը,
- գործարարությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը:
- ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացումը՝ դրա հաշվին նոր աշխատատեղերի ստեղծումը և երկրում աղքատության հաղթահարմանը նպաստելը:

➔ Զբոսաշրջության ոլորտի 2007-2009թթ. հիմնական նպատակներն են՝

ա/ Հայաստանում ստեղծել ժամանակակից բարձրարդյունավետ և մրցունակ զբոսաշրջային արդյու նաբերություն, որը կապահովի հայրենական և արտասահմանյան զբոսաշրջիկներին մատուցվող ծառայությունների պահանջների բավարարման լայն հնարավորությունները,

բ/ միջազգային զբոսաշրջային շուկայում նորովի ներկայացնել Հայաստանի զբոսաշրջային արդյուն քը՝ որպես չորս սեզոնների տարածաշրջան, այդ թվում նաև ք. Ծաղկաձորը, որպես հայաստանյան զբոսաշրջային արդյունքի մի մաս, չսահմանափակելով Ծաղկաձորի զբոսաշրջային արդյունքը միայն ձմեռային մարզաձևերով:

Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծրագրի նպատակն է իրականացնել ՀՀ-ում, ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ, ռադիոակտիվ թափոնների փոխադրումը, ուսումնասիրումը, պահպանումը, վնասազերծումը և թաղումը: 2007-2009թթ-ին նախատեսված ծրագրի համար հատկացված գումարները նպատակ ունեն պահպանելու և ապա հովելու ընկերության աշխատունակությունը և կադրերի, մասնագետների արտահոսքի կանխումը:

Ստանդարտացման և համապատասխանության գնահատման ոլորտներում 2007- 2009 թ.թ. միջնա ժամկետ ծախսային ծրագրի նպատակներն են.

- Հայաստանի Հանրապետության ստանդարտացման և համապատասխանության գնահատման համակարգերի ներդաշնակեցումը միջազգային նորմերին, այդ թվում Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջներին,
- անցում ազգային ստանդարտների կիրառման կամավոր սկզբունքին:

Չափումների միասնականության ապահովման ոլորտում 2007–2009 թթ. միջնաժամկետ ծախսա յին ծրագրի նպատակն է.

- ապահովել օրենսդրորեն կանոնակարգվող ոլորտներում՝ ներառյալ առողջության պահպանման, ախտորոշման, շրջակա միջավայրի պաշտպանության, աշխատանքի անվտանգության, նյութական և էներգետիկ պաշարների հաշվառման, կապի և տրանսպորտի, աշխատանքի հուսալիության, երկրի պաշտպանության, սպառողների շահերի պաշտպանության ոլորտներում չափումների միասնակա նության ապահովման պահանջվող ճշտությունը, հավաստիությունը և համադրելիությունը;
- ապահովել տնտեսության առավել կարևոր ճյուղերում ներդրվող ժամանակակից

տեխնոլոգիաների չափագիտական սպասարկումը;

- բացառել հանրապետության կախվածությունը այլ երկրներից՝ բարձր ճշտության չափումների կատարման հարցում:

Տեսչության հիմնական նպատակներն են՝

- տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրանքի և ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների խախտումների կանխարգելումը և վերացումը,
- տեխնիկական կանոնակարգերին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության ապահովումը,
- չափումների միասնականության ապահովման բնագավառում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված չափագիտական կանոնների ու նորմերի պահպանումը, խախտումների բացահայտումը և դրանց կանխարգելումը,
- հաստատված տեսակին թողարկվող չափման միջոցների համապատասխանության որոշումը,
- չափման միջոցների ստուգաչափման համար կիրառվող չափման միջոցների, այդ թվում՝ էտալոնների և աշխատանքային չափման միջոցների վիճակի ու կիրառման ճշտության որոշումը,
- չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների առկայությունը:

➔ Տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի կանոնակարգման գործընթացի հիմնական նպատակն է տեխնիկական կանոնակարգերի համակարգի ստեղծումը, որոնցով սահման ված պահանջները կապահովեն արտադրական և սպասարկման ոլորտի օբյեկտներում տեխնածին վթարներից, արտադրական պատահարներից և դրանց հետևանքներից հասարակության և անհատի կենսականորեն առավելագույն պաշտպանվածության վիճակը: 2007-2009 թ.թ. ընթացքում մշակվելիք տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերով պետք է ներկայացվեն ՀՀ-ում շահագործ վող բոլոր տեսակների արտադրական վտանգավոր օբյեկտների վերաբերյալ պահանջ ները:

Լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմերի և նորմատիվների մշակման գործընթացի իրականացման նպատակը Հայաստանի Հանրապետությունում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի շահագործման արդյունավետության բարձրացումն է: Եռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմերի և նորմատիվների մշակման գործընթացի իրականացումն իրավական դաշտ կստեղծի օգտակար հանածոների շահագործման աշխատանքային նախագծերի կազմման և դրանց պետական փորձաքն նությունների անցկացման համար, վերահսկելի կդարձնի հանքավայրերի շահագործման գործընթացը թե աշխատանքների կատարման անվտանգության, և թե տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների կատարման տեսանկյունից:

ԱՀԿ ծանուցման գործակալության Նպատակները

ա) ՀՀ և ԱՀԿ անդամ երկրների առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և թափանցիկության ապահովում:

բ) ԱՀԿ նկատմամբ ՀՀ-ի հետանդամակցային պարտավորությունների կատարման և ընթացիկ առևտրային բանակցություններին մասնակցության ապահովում:

գ/ Գործարարության, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը աջակցություն, ՀՀ գործարար շրջանակների ներգրավում ԱՀԿ-ում ընթացող գործընթացներին:

### 16.1.5. Գերակայությունները

**Առաջիկա 3 տարիների առաջնահերթ նպատակներով պայմանավորված ՓՄՁ ոլորտի գերակայու թյուններն են.**

• ՓՄՁ սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումն ու ամրապնդումը,

• ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը:

¦ Զբոսաշրջության ոլորտում գերակա ուղղություններն են` ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացումը, ինչը ամրագրված է նաև «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

¦ Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծրագրի գերակայությունները հանդիսանում են` ռադիոակտիվ թափոնների փոխադրումը , ուսումնասիրումը, պահպանումը վնասազերծումը և թաղումը:

¦ Ստանդարտացման և համապատասխանության գնահատման ոլորտում գերակայությունները հանդիսանում են.

- արտադրանքի և ծառայությունների անվտանգության ապահովումը,
- առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը,
- արտադրանքի և մատուցվող ծառայությունների մրցունակության և որակի բարձրացումը ներքին և արտաքին սպառողական շուկայում:

¦ Չափումների միասնականության ապահովման ոլորտում գերակայություններն են`

- ազգային էտալոնների ստեղծումը (ձեռքբերումը), կատարելագործումը, մեծությունների միավորների էտալոնների (ելակետային չափման միջոցների) ԱՊՀ երկրների միջպետական էտալոնների հետ բաղդատումը, պահպանումն ու սպասարկումը;

-միասնական ժամանակի և հաճախականության չափումների ապահովումը;

-չափագիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների կատարումը;

-չափումների միասնականության ապահովման ոլորտի իրավական ակտերի, նորմատիվ փաստաթղթերի մշակումը;

¦ Տեսչության ոլորտի գերակայություններն են` արտադրանքի և ծառայությունների անվտանգության և որակի ապահովման բնագավառում պետության շահերի և սպառողների իրավունքների պետական պաշտպանությունը:

¦ Տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի գերակայությունը տրվում է այն տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի մշակմանը, որոնք վերաբերվում են Հայաստանի Հանրապետությունում առավել զարգացած արդյունաբերության ճյուղերին և որոնք համընդհանուր միասնական բնույթ են կրում:

¦ Լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմեր մշակելու գերակայությունն է`

1.լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմերի մշակում

2.համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշակում

¦ ԱՀԿ ծանուցման գործակալության Գերակայությունները`

ա) ՀՀ արտաքին առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող ու դրանց վրա ազդեցություն ունեցող օրենքների, այլ նորմատիվիրավական ակտերի և (կամ) դրանց նախագծերի, ինչպես նաև ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին համապատասխան այլ տեղեկատվության հավաքագրում և ծանուցման իրականացում ԱՀԿ քարտուղարությանը, ԱՀԿ քարտուղարության միջոցով ԱՀԿ անդամ երկրներից ստացված նմանատիպ տեղեկատվության տրամադրում ՀՀ-ում ԱՀԿ հարցման կետերին, ՀՀ համապատասխան նախարարություններին, պետական կառավարման այլ մարմիններին և գործարարներին, ԱՀԿ նկատմամբ ՀՀ հետանդամակցային պարտավորությունների կատարման նպատակով հարցման կետերի հետ աշխատանքների համակարգում, ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին առնչվող ՀՀ իրավական ակտերի նախագծերի՝ ԱՀԿ պահանջներին համապատասխանեցման ապահովում, միջազգային առևտրային և տնտեսական տարբեր կառույցների հետ համագործակցության շարունակում և նոր կապերի ստեղծում:

բ) Վերոնշյալ գործընթացների, համաշխարհային առևտրի ընթացիկ զարգացումների, վերլուծությունների, նորությունների, ՀՀ և ԱՀԿ անդամ երկրների առևտրային օրենսդրական ակտերի /օրենքներ, կանոնակարգեր, իրավական այլ ակտեր / և ծրագրերի, ինչպես նաև ԱՀԿ շրջանակներում ընթացող առևտրային բանակցությունների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովում:

գ) Ձեռներեցներին, գործարարներին, շահագրգիռ անձանց, խմբերին և կազմակերպություններին ԱՀԿ անդամ երկրների առևտրատնտեսական քաղաքականությունների, ռեժիմների վերաբերյալ տեղեկատվության, համապատասխան վերլուծությունների և կանխատեսումների, ինչպես նաև զարգացման պլանների և ծրագրերի տրամադրում:

#### 16.1.6. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի վրա ազդող գործոնները

ՓՄՁ ոլորտում իրականացվելիք ծրագրերի (տվյալ դեպքում Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության տարեկան (2007թ., 2008թ. և 2009թ.) ծրագրերի) գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները պայմանավորված են ինչպես ՓՄՁ պետական քաղաքականության արդյունավետ իրականացմամբ (ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացում), այնպես էլ ՓՄՁ պետական քաղաքականության իրականացման հետ անմիջական առնչություն չունեցող գործոնների առկայությամբ (բնակչության տեղաշարժեր, բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխություն) և այլն:

ա) Զբոսաշրջության ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոններն են.՝

- միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանի զբոսաշրջության գրավչության վարկանիշը բարձրացնելու և արդյունավետ ինտեգրվելու մարքեթինգային ծախսերի մակարդակը,
- ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճի ապահովումը,
- նոր ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը ,

բնակլիմայական փոփոխությունները, բնական աղետները,

- տնտեսական (գնվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գների և սակագների փոփոխությունները) բաղադիչների ազդեցությունը:

բ) Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման, Ստանդարտացման և

համապատասխանության գնահատման, Չափումների միասնականության ապահովման, որակի տեսչության, տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի կանոնակարգման և Լեռնահանքային ձեռնարկու թյունների տեխնոլոգիակն նախագծման նորմեր մշակելու ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոններն են՝

- տնտեսական (գնվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գների և սակագների փոփոխությունները) բաղադրիչների ազդեցությունը:
- աշխատավարձի բազային դրույքաչափերի բարձրացումը

գ) ԱՀԿ ծանուցման գործակալության իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները.

Իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա հիմնականում կարող են ազդել ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունից անկախ հետևյալ գործոնները.

ա/ ժողովրդագրական (աշխատուժի կառուցվածքի և զբաղվածության փոփոխություն),

բ/ սոցիալական (նվազագույն պարենային և սպառողական զամբյուղների կառուցվածքի փոփոխություն),

գ/ տնտեսական (գնվող ապրանքների և ծառայությունների գների ու սակագների փոփոխություն, արտարժույթի կուրսի փոփոխություն);

դ/ արտաքին (ԱՀԿ անդամ երկրների առևտրատնտեսական քաղաքականությունների, ռեժիմների, առևտրատնտեսական բնագավառին վերաբերվող բոլոր գործող օրենքների ու կանոնակարգերի փոփոխություն):

### 16.1.7.Գոյություն ունեցող ծախսային ծրագրեր

2007-2009թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության տարեկան (2007թ., 2008թ. և 2009թ.) ծրագրերի իրականացումը մեծապես կնպաստի ՓՄՁ ոլորտի գերակայությունների և ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության ծրագրային նպատակների իրականացմանը, որի արդյունքում, մինչև ՄԺԾԾ ժամանակահատվածի ավարտը, ակնկալվում է երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացում՝ այն հասցնելով շուրջ 45%-ի,

- ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում՝ Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի ընդլայնում և դրա շրջանակներում վարկային երաշխավորությունների դրամագլխի գումարի ավելացում՝ այն հասցնելով մինչև 700 մլն դրամի,
- ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնում՝ այդ ուղղությամբ ակտիվ գործող բիզնես աջակցող կառույցների թվաքանակը գրեթե կրկնապատկելով (ներկայիս 30-ից հասցնելով մինչև 60-ի),
- ՓՄՁ սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնում և նրանց մրցունակության բարձրացում, նրանց կողմից թողարկվող արտադրանքի/ մատուցվող ծառայությունների տեսականու ընդլայնում և դրանց բազմազանեցում, նոր ապրանքատեսակների արտադրության և ծառայություն ների մատուցման քանակական ու որակական աճ և դրանց արտահանման ծավալների ավելացում՝ ներկայիս շուրջ 16%-ից այն հասցնելով շուրջ 20%-ի,

• ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացում մոտ 25 հազար միավորով և դրանց հաշվին մոտ 50 հազար նոր աշխատատեղերի ստեղծում, այդ թվում ՀՀ մարզերում,

• ՀՀ մարզերում և հեռավոր բնակավայրերում գործարար ակտիվության բարձրացում և այդ նպատակով ցուցաբերվող պետական աջակցության շուրջ 80%-ի ուղղորդում այդտեղ գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին:

Ծրագրի իրականացման համար 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախա-տեսված է 2007թ.-ին՝ 400.0 մլն.դրամ, 2008թ.-ին՝ 400.0մլն.դրամ և 2009թ.-ին 400.0մլն.դրամ:

Զբոսաշրջության ոլորտում գոյություն ունեցող ծրագրեր են՝

1.«Զբոսաշրջության զարգացման ծրագիրը», որի միջոցառումների իրականացումը, ուղղված է ոլորտի տարբեր բնագավառների զարգացմանը, կնպաստի Հայաստանում զարգացած զբոսաշրջության արդյունաբերության ստեղծմանը, որը կբավարարի հայրենական և արտասահմանյան զբոսաշրջիկ ների պահանջները և կապահովի երկրի տնտեսական զարգացման զգալի առաջընթաց:

«Զբոսաշրջության զարգացման ծրագիրը» կազմված է ենթածրագրերից, որոնք նույնպես ինքնուրյուն ծրագրեր են:

- զբոսաշրջության ոլորտի գովազդա-տեղեկատվական ապահովման համակարգի զարգացում,

- «Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային ուսումնասիրությունների իրականացում»

«Հայաստանի տարբեր տարածաշրջանների մասնագիտական ինտերնետային կայքի ստեղծում և հետագա շահագործում»«Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն» նպատա կային խնդիրների լուծման ծրագիր

2007-2009թթ. «Զբոսաշրջության զարգացման ծրագրի» իրականացման արդյունքում կպահպանվի միջազգային և ներքին զբոսաշրջիկների թվաքանակի աճի տեմպը՝ ապահովելով տարեկան 20-25 % աճ, պատշաճ որակի կներկայացվի հայրենական զբոսաշրջային արդյունքը, ապահովելով Հայաստանի ինտեգրումը միջազգային զբոսաշրջային շուկայում, կստեղծվեն մի շարք զբոսաշրջային կենտրոն ներ, կզարգանա զբոսաշրջությունը մարզերում, կստացվեն վիճակագրական մանրամասն և ստույգ տվյալներ, ինչն էլ իր հերթին թույլ կտա մշակել հեռանկարային զարգացման ծրագրեր:

Ծրագրի իրականացման համար 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2007թ. համար՝ 250.0 մլն.դրամ, 2008 թ. համար՝ 200.0մլն.դրամ և 2009 թ. համար՝ 200.0մլն.դրամ:

Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման գոյություն ունեցող ծրագրերի իրականացումը նպաստում է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանման, ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրման, մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու աշխատանքների ծավալի բարելավմանը:

Ծրագրի իրականացման համար 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախա-տեսված է 2007թ.-ին՝ 20.9մլն.դրամ, 2007թ.-ին՝ 21.0մլն.դրամ և 2009թ.-ին 21.1 մլն.դրամ:

2007-2009թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում համակարգում իրականացվելիք ստանդարտացման և տեխնիկական կանոնակարգերի մշակման ծրագրերի կատարման արդյունքը կապահովի հանրապետությունում ստանդարտացման և համապատասխանության գնահատման աշխատանք ների մակարդակի բարձրացումը, և Առևտրի համաշխարհային կազմակերպության «Առևտրում

տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություների կատարումը:

Ծրագրի իրականացման համար 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատես ված է 2007թ.-ին` 41.0 մլն.դրամ, 2008թ.-ին`44.5մլն.դրամ և 2009թ.-ին 45.0մլն. դրամ:

Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը Տեսչության կողմից ստուգումների իրականացման ընթացքում փորձանմուշների գնման և հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում դրանց փորձարկման համար նախատեսվալ է 100.0 մլն դրամ, իսկ նավթամթերքների շարժական փորձարկման լաբորատորիայի ստեղծման համար 2005թ. պետական բյուջեյով հատկացվել էր 56.0 մլն դրամ: Ի կատարումն գոյություն ունեցող ծախսային ծրագրերի Տեսչության կողմից գնվել են փորձանմուշներ և տրվել փորձարկման հավատարմագրված լաբորատորիաներում:

Ծրագրի իրականացման համար 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2007թ.-ին` 100.0 մլն,դրամ, 2008թ.-ին` 100.0մլն.դրամ և 2009թ.-ին` 100.0 մլն.դրամ:

ՄԺԾԾ ժամանակահատվածում չափումների միասնականության ապահովման համակարգում գոյություն ունեցող և իրականացվելիք չափագիտական ծրագրերի (էտալոնների ձեռքբերում, բաղդա տում միջպետական էտալոնների հետ, հետազոտական աշխատանքների իրականացում և այլն) կատարման արդյունքում կբարձրանա հանրապետությունում չափագիտական սպասարկման մակարդակը և չափումների ճշտությունը, պետական փորձարկումների, ստուգաչափումների, արտադրանքի սերտիֆիկացման արդյունքների նկատմամբ փոխադարձ վստահությունը: Հայրենական չափագիտու թյունը կբարձրացնի որակապես նոր մակարդակի վրա, կնպաստի նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, կապահովի նյութական արժեքների էներգետիկ ռեսուրսների հաշվառման հավաստիու թյունը և կնպաստի խոչընդոտների վերացմանը միջազգային ապրանքաշրջանառության ժամանակ և կբացառի հանրապետության կախվածությունը այլ երկրներից` բարձր ճշտության չափումների հարցում: Ծրագրի իրականացման համար 2007-2009թ.թ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախա տեսված է 2007թ.-ին` 21.5 մլն.դրամ, 2008թ.-ին` 21.5 մլն.դրամ և 2009թ.-ին` 21.5 մլն. դրամ:

Տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի կանոնակարգման ծրագիրը ներկայաց վում է առաջին անգամ: Ծրագրի իրականացման համար 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրա գըրով նախատեսված է 2007թ.-ին` 80.0մլն.դրամ, 2008թ.-ին` 80.0մլն.դրամ և 2009թ.-ին` 80.0 մլն. դրամ :

Լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմեր մշակելու ծրագիրը բաղկացած է երկու փուլից: Ծրագրի բաժանումը 2 փուլի պայմանավորված է նախատեսվող աշխա տանքների ծավալով:

Ծրագրի իրականացման համար 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2007թ.-ին` 20.0 մլն.դրամ, 2008-2009թթ.-ի համար ծախսային ծրագիր չի նախատեսված:

ՀՀ-ում ԱՀԿ ծանուցման գործակալության ծախսային ծրագրերա) ՀՀ-ում ԱՀԿ ծանուցման գործակալության ներքո տեղեկատվական, վերլուծական և հանրամատչելի ինտերնետային կայքի (**www.arm-wto.am**) պահպանում, շարունակական զարգացում, նրա բովանդա կային պարբերական թարմացում և ընդգրկման ոլորտների ընդլայնում:

բ/ ՀՀ գործարարների հետ հանդիպումների, խորհրդաժողովների և սեմինարների կազմակերպում:

գ/ ԱՀԿ հարցման կետերի, ՀՀ համապատասխան նախարարությունների և պետական կառավարման

այլ մարմինների պատասխանատու աշխատակիցների հետ դասընթացների կազմակերպում:

դ/ ԱՀԿ համաձայնագրերի ընդհանուր դրույթների և պահանջների, ինչպես նաև ընթացիկ բանակցությունների վերաբերյալ համապատասխան գրականության թարգմանություն, տպագրություն և դրանց տրամադրում ԱՀԿ հարցման կետերին, ՀՀ համապատասխան նախարարություններին և պետական կառավարման այլ մարմիններին, ինչպես նաև ՀՀ գործարարներին:Ծրագրի իրականացման համար 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2007թ.-ին՝ 37.968 մլն.դրամ,2008թ.-ին՝28.840 մլն. դրամ և 2009թ.-ին՝ 30.612 մլն.դրամ :

**Աղյուսակ 16.1.1 Ծախսերի համեմատական աղյուսակ 2006-2008թթ. ՄԺԾԾ և 2007-2009թթ. ՄԺԾԾ միջև ըստ ենթախմբեր**ի (մլն. դրամ)

| Ծրագրի անվանումը | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2006թ, հաստատված բյուջե | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ |
| ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման ոլորտում պետական կառավարում | 573.70 | 626.50 | 687.40 | 666.17 | 800.70 | 688.30 | 770.83 |
| Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագիր | 350.0 | 350.0 | 400.0 | 400.0 | 450.0 | 400.0 | 400.0 |
| ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր | 200.0 | 276.0 | 200.0 | 250.0 | 200.0 | 200.0 | 200.0 |
| Պետական աջակցություն «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ –ին | 29.54 | 18.697 | 20.25 | 20.86 | 20.25 | 20.90 | 21.1 |
| ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող պատ վեր | 28.662 | 35.0 | 28.662 | 41.0 | 28.662 | 44.5 | 45.0 |
| ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող պատվեր | 41.324 | 21.50 | 41.324 | 21.50 | 41.324 | 21.50 | 21.50 |
| ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության «Որակի տեսչության համակարգի» պետական ծախսային ծրագիր | 100.0 | 80.0 | 100.0 | 100.0 | 165.747 | 100.0 | 100.0 |
| «Լեռնահանքային ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նոր մեթոդների մշակելու ծրագիր» | 0.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթխթերի կանոնակարգման ծախսային ծրագիր | 0.0 | 0.0 | 0.0 | 80.0 | 0.0 | 80.0 | 80.0 |
| ԱՀԿ ծանուցման գործակալություն | 0.0 | 0.0 | 0.0 | 37.968 | 0.0 | 28.840 | 30.612 |

**Աղյուսակ 16.1.2.Պետական բյուջեից առևտրի և տնտեսական զարգացման ոլորտի ծախսերը 2007 - 2009թթ.**

(մլն դրամ)

| Ծրագրի անվանումը | 2005թ. | 2006թ. | % փոփ. | 2007թ. | % փոփ. | 2008թ. | % փոփ. | 2009թ. | % փոփ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այն կազմում է ՀՀ ՊԲ-ի նկատմամբ %-ով | 0,12 | 0,17 | x | 0,18 | x | 0,15 | x | 0,15 | x |
| Այն կազմում է ՀՆԱ-ի նկատմամբ %-ով | 0,02 | 0,03 | x | 0,04 | x | 0,03 | x | 0,03 | x |
| ՀՀառևտրի տնտե սական զարգացման ոլորտ | 489,39 | 801,20 | 63,71 | 971,323 | 21,23 | 895,74 | -7,8 | 898,17 | 0,27 |
| Հայաստանում փոքր և մի-ջին ձեռնարկատիրության պետական աջակ ցության ծրագիր | 300,0 | 350,0 | 16,67 | 400,0 | 14,29 | 400,0 | 0,0 | 400,0 | 0,0 |
| տեսակարար կշիռն ամ բողջ ծախսերի մեջ %-ը | 61,3 | 43,7 | x | 41,2 | x | 44,7 | x | 44,5 | x |
| ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր | 19,95 | 276,0 | 1283,32 | 250,0 | -9,42 | 200,0 | -20,0 | 200,0 | 0,0 |
| տեսակարար կշիռն ամ բողջ ծախսերի մեջ %-ը | 4,1 | 34,4 | x | 25,7 | x | 22,3 | x | 22,3 | x |
| Պետական աջակցություն «Ռադիոակտիվ թափոն ների վնասազերծում» ՓԲԸ-ին | 17,041 | 18,697 | 9,72 | 20,856 | 11,55 | 20,903 | 0,23 | 21,06 | 0,75 |
| տեսակարար կշիռն ամ բողջ ծախսերի մեջ %-ը | 3,5 | 2,3 | x | 2,1 | x | 2,3 | x | 2,3 | x |
| ՀՀ առևտրի և տնտե սական զարգացման նա խարարու-թյան «Ստան դարտների ազգային ինս տիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրականաց-վող պատվեր | 28,662 | 35,0 | 22,11 | 41,0 | 17,14 | 44,5 | 8,5 | 45,0 | 1,1 |
| տեսակարար կշիռն ամ բողջ ծախսերի մեջ %-ը | 5,9 | 4,4 | x | 4,2 | x | 5,0 | x | 5,0 | x |
| ՀՀ առևտրի և տնտե սական զարգացման նա խարարու-թյան «Չափա գիտության ազգային ինս տիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրականաց-վող պատվեր | 41,262 | 21,5 | -47,9 | 21,5 | 0,00 | 21,5 | 0,0 | 21,5 | 0,0 |
| տեսակարար կշիռն ամ բողջ ծախսերի մեջ %-ը | 8,4 | 2,7 | x | 2,2 | x | 2,4 | x | 2,4 | x |
| ՀՀ առևտրի և տնտեսա կան զարգացման նախ -ն «ՀՀ որակի տեսչության համակարգի» պետական ծախսային ծրագիր | 82,47 | 80,0 | -3,00 | 100,0 | 25,00 | 100,0 | 0,0 | 100,0 | 0,0 |
| տեսակարար կշիռն ամ բողջ ծախսերի մեջ %-ը | 16,9 | 10,0 | x | 10,3 | x | 11,2 | x | 11,1 | x |
| «Լեռնահանքային ձեռ նար-կությունների տեխնո լոգիական նախագծման նորմեր մշակելու ծրագիր | 0,0 | 20,0 | 0,0 | 20,0 | | 0,0 | | 0,0 | |
| տեսակարար կշիռն ամ բողջ ծախսերի մեջ %-ը | 0,0 | 2,5 | x | 2,1 | x | 0,0 | x | 0,0 | x |
| Տեխնիկական անվտան գության նորմատիվ փաս տաթխթերի կանոնաարգ ման ծախսային ծրագիր | 0,0 | 0,0 | 0,0 | 80,0 | | 80,0 | 0,0 | 80 | |
| տեսակարար կշիռն ամ բողջ ծախսերի մեջ %-ը | 0,0 | 0,0 | x | 8,2 | x | 8,9 | x | 8,9 | x |
| ԱՀԿ ծանուցման գործակալություն | 0,0 | 0,0 | 0,0 | 37,967 | | 28,840 | -24,0 | 30,612 | |
| տեսակարար կշիռն ծախսերի մեջ %-ը | 0,0 | 0,0 | x | 3,9 | x | 3,2 | x | 3,4 | x |

## ԳԼՈՒԽ 16.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի ոլորտի 2007-2009 թթ. ծրագրերը կազմվել են հիմնվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2006-2008 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 777-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի բյուջետային

գործընթացն սկսելու մասին» N 907-Ն որոշման հիման վրա: 2005 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին կոմիտեի ղեկավարությամբ իրականացվել են 17 ծրագրային աշխատանքներ, որոնց իրականացման համար նախատեսված էր 1508900.0հազար դրամ: 2005 թվականի ընթացքում ծրագրային աշխատանքները ֆինանսավորումը կազմել է 1506566.5հազար դրամ կամ նախատեսվածի շուրջ 99.9%-ը: 2006 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին կոմիտեի ղեկավարությամբ նախատեսվում է իրականացնել 14 ծրագրային աշխատանքներ, որոնց իրականացման համար նախատեսված է 1069215.5 հազար դրամ:

### 16.2.1. Իրավիճակի նկարագրություն

***Հաշվառում***

2005թվականին 754 համայնքների՝ որոնց պետական սեփականություն հանդիսացող հողերը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով փոխանցվել են համայնքներին, համար սահմանված կարգով պատրաստվել են հողերի սկզբնական հաշվառման նյութերը և հանձնվել են համայնքների ղեկավարներին:Իրականացվել են համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի սկզբնական հաշվառում աշխատանքներ:

Հանրապետության բոլոր համայնքներում հաշվառման աշխատանքներն ավարտվել են: Ամփոփվել է Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը (679համայնքների հողերի սկզբնական հաշվառման արդյունքների և 239 համայնքների 1997թվականի հողային հաշվեկշիռների տվյալների հիման վրա) և ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարություն, որն էլ կառավարության կողմից ընդունվել է ի գիտություն:

2005թվականի ընթացքում հաշվառման ոլորտում նախատեսված աշխատանքները իրականացվել են 100%-ով, որոնց ֆինանսավորման գումարը կազմել է 20000.0հազար դրամ:

**Քարտեզագրում**

2005թվականին քարտեզագրման ոլորտում աշխատանքներն իրականացվել են հինգ հիմնական ուղղություններով՝ տեղագրական, կադաստրային, թեմատիկ, աշխարհագրական անվանումներ և երկրատեղեկատվական համակարգ:

1. Տեղագրական քարտեզագրման ոլորտում շարունակվել են աշխատանքները պետական մասշտաբային շարքի բազային 1:10 000 մասշտաբի տեղագրական քարտեզների ստեղծման ուղղությամբ: Այս ծրագրի շրջանակներում հանրապետության տարածքից 6207 քառ. կմ ծածկված է օդալուսանկարներով, իսկ 11.1հազ. քառ.կմ՝ տիեզերալուսանկարներով:

Օդալուսանկարահանման աշխատանքներից 2005 թվականին պետական մասշտաբային շարքի 1:10000մասշտաբի օդալուսանկարահանման նյութերի մշակման, օրթոֆոտոքարտեզների ստեղծման և թվայնացման աշխատանքներ են իրականացվել ևս 2210 քառ. կմ տարածքի համար: Ընդհանուր հաշվարկով օդալուսանկարահանման նյութերից մշակվել և թվայնացվել է 3421քառ.կմ տարածքի նյութեր, իսկ մնացած 2786 քառ. կմ-ի օդալուսանկարահանման նյութերի մշակման աշխատանքները կիրականացվեն 2006թ –ին:

Տիեզերահանութագրված տարածքից տիեզերալուսանկարահանման նյութերի մշակման, այդ

թվում դաշտային վերծանման աշխատանքներ են իրականացվել 3038.5 քառ.կմ տարածքի համար, իսկ 1:10000 մասշտաբի տիեզերալուսանկարահանման նյութերի օրթոֆոտոքարտեզներ են ստեղծվել և թվայնացվել՝ 516 քառ.կմ տարածքի համար:

Ընդհանուր հաշվարկով տիեզերահանութագրման նյութերից մշակվել է 4400քառ.կմ տարածքի նյութեր, իսկ մնացած 6700 քառ. կմ տարածքի տիեզերահանութագրման նյութերի մշակման աշխատանքները կիրականացվեն 2006-2007 թվականներին:

Ավարտվել են նախկինում ստեղծված և թարմացված 651թերթ 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզների թվայնացման աշխատանքները, որից 206 թերթը 2005թվականին:Կատարվել է Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի 1:10 000 մասշտաբի տեղագրական քարտեզների հիման վրա 1:25 000, 1:50 000 և 1:100 000 մասշտաբների տեղագրական քարտեզների ստեղծման աշխատանքներ ընդհանրացման եղանակով՝ 120 թերթ, ընդհանուր 526 թերթից: Մնացած 406 թերթերի ստեղծման աշխատանքները կիրականացվեն 2006-2007 թվականներին:

2005թվականի ընթացքում տեղագրական քարտեզագրման ոլորտում ֆինանսավորման գումարը կազմել է 350600.0հազար դրամ, իսկ 2006թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 259183.3հազար դրամ:

Պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման աշխատանքների իրակա-նացման համար համակարգը հագեցված է ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով, իրականացվել է կադրերի ուսուցում և վերապատրաստում, ինչպես նաև առաջավոր փորձի ուսումնասիրում:

2. Կադաստրային քարտեզագրման աշխատանքներ են իրականացվել 3 մարզերի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում, որով այս աշխատանքներն ավարտվեցին բոլոր 10 մարզերում: Ավարտվել են նաև հանրապետության բոլոր համայնքների կադաստրային քարտեզագրման աշխատանքները, սակայն հաշվի առնելով կապիտալ շինարարության և անշարժ գույքի շուկայի ակտիվացման տեմպերը, մի շարք համայնքներում առաջ է գալիս կադաստրային քարտեզների թարմացման խնդիր: Դրանք հիմնականում այն համայնքներն են, որտեղ քարտեզագրումն ավարտվելուց հետո համայնքի տարածքում իրականացվել են պետական նշանակության քաղաքաշինական կամ ճանապարհաշինական աշխատանքներ, որտեղ եղել են մեծ թվով նոր հողհատկացումներ, աճուրդներ, ինչպես նաև վարձակալությամբ տրամադրված հողամասեր:

2005թվականի ընթացքում կադաստրային քարտեզագրման ոլորտում նախատեսված աշխատանքները իրականացվել են 100%-ով, որոնց ֆինանսավորման գումարը կազմել է շուրջ 120000.0հազար դրամ, իսկ 2006թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 20000.0հազար դրամ:

3. Թեմատիկ քարտեզագրության բնագավառում աշխատանքները շարունակվել են Հայաստանի Ազգային Ատլասի ստեղծման ուղղությամբ:Ազգային ատլասի ստեղծման աշխատանքներն հիմնականում ավարտված են և նյութերը տրամադրվել են տարբեր մարմինների՝ կարծիքների համար: Ատլասի հրատարակման աշխատանքները պետք է իրականացվեին 2005թ. դեկտեմբեր

ամսին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգային ատլասը հիմնարար և եզակի քարտեզագրական հրատարակություն է և որպեսզի ատլասում բացառվեն օտարամուտ, անբարեհունչ աշխարհագրական անվանումները և վերականգնվեն բնակավայրերի պատմական և հայեցի անվանումները, նպատակահարմար գտնվեց Ատլասի հրատարակչական աշխատանքները տեղափոխել 2006 թվականին:

2005թվականի ընթացքում թեմատիկ քարտեզագրության ոլորտում ֆինանսավորման գումարը կազմել է 43000.0հազար դրամ:

Հրատարակվել են մի շարք քարտեզներ՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանապարհային ատլասը,Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական և ֆիզիկական քարտեզները 1:300 000 մասշտաբով, «Հայոց Մեծ եղեռն 1915» բացիկը հայերեն և անգլերեն լեզուներով, «Հայկական լեռնաշխարհ» ռելիեֆային քարտեզը 1:2000000 մասշտաբով, Հայկական լեռնաշխարհի ֆիզիկական քարտեզը,Աշխարհի մանկական ատլասը,«Արագածի շուրջ»բացիկը,«Գյումրիի վերածնունդը» բացիկը և այլն:

4. Աշխարհագրական անվանումների բնագավառում շարունակվել են աշխատանքները աշխարհագրական անվանումների հաշվառման, գրանցման և ավտոմատացված համակարգի ներդրման ուղղությամբ: Լրացուցիչ հաշվառվել է շուրջ 18000 աշխարհագրական օբյեկտի անվանում: Սկզբնական հաշվառման արդյունքում հաշվառվել է մոտ 38000 աշխարհագրական օբյեկտի անվանում, սակայն այս աշխատանքները կրում են շարունակական բնույթ, որը ենթադրում է քարտադարանի վարման և թարմացման ամենամյա աշխատանք:Կատարվել է վարչատարածքային բաժանման տեղեկատուի տպագրման աշխատանքներ, առաջիկայում նախապատրաստվում է տպագրության բնակավայրերի համառոտ բառարանը:2004-2005 թվականներին ներկայացվել է 5 մարզերի (Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի) և Երևան քաղաքի տարածքում գտնվող բնակավայրերի և աշխարհագրական օբյեկտների 411 անվանափոխման առաջարկություն, որից ընդունվել են 3 մարզի՝ Արարատի, Արմավիրի, Սյունիքի և Երևան քաղաքի 155 անվանափոխումները, իսկ մնացած 256-ը ընթացքի մեջ են: 5 համայնքի անվանափոխություն ընդունվել է Ազգային ժողովի կողմից, որպես փոփոխություն «Վարչա-տարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար պատրաստվում է 119 գյուղական բնակավայրերի նոր անվանակոչումների և անվանափոխումների ցանկը:

2005թվականի ընթացքում աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսված աշխատանքները իրականացվել են 100%-ով, որոնց ֆինանսավորման գումարը կազմել է 180000.0հազար դրամ, իսկ 2006 թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 7000.0հազար դրամ:

5. Երկրատեղեկատվական համակարգի ներդրման նպատակով իրականացվել է Քանաքեռ-Զեյթուն համայնքի բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքների փորձնական ծրագիր, որի արդյունքների քննարկումից և վերլուծությունից հետ կիրականացվեն այդ համակարգի լայնածավալ ներդրման աշխատանքներ: Մշակվել են 1:500-ից 1:5000 և 1:10 000 մասշտաբների տեղագրական քարտեզների պայմանական նշանները, ինչպես նաև 1:500-1:10 000 մասշտաբների թվային քարտեզագրության ավտոմատացված համակարգերում կիրառվող

տեղագրական տեղեկատվության դասակարգիչը:

2005թվականի ընթացքում երկրատեղեկատվական համակարգի ներդրման նախատեսված աշխատանքները իրականացվել են 100%-ով, որոնց ֆինանսավորման գումարը կազմել է 50000.0հազար դրամ, իսկ 2006թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 91000.0հազար դրամ:

Ոլորտի զարգացման համար կարևորագույն խնդիր է քարտեզագրական /հանույթային/ հիմքը որպես բազային՝ սկզբունքի ներդրում, թվային և երկրատեղեկատվական տեխնոլագիաների, ֆոտոգրամետրիայի, հանութագրման մասնագետների պատրաստում և վերապատրաստում, աշխարհագրական անվանումների կանոնակարգում, աշխարհագրական անվանումների միասնական տեղեկատվական բանկի ստեղծում, բազային քարտեզագրական նյութերի ստացման նպատակով օդա և տիեզերահանույթների իրականացում, թվային ֆոտոգրամետրիկ տեխնոլոգիաների ներդրում, ֆոտոպլանների և օրթոֆոտոքարտեզների ստեղծում և այլն:

Միջոցառումների իրականացումը կնպաստի Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող աշխատանքների իրականացմանը. ինչպիսիք են գույքային իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները, հողի շուկայի զարգացումը և այլն:

***<u>Անշարժ գույքի կադաստրային գնահատում և շուկայի համակարգված դիտարկումներ</u>***

Հանրապետությունում 2005 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հողի հարկի բազաների ձևավորման ծրագրային աշխատանքների շրջանակներում կադաստրի տարածքային ստորաբաժանումների կողմից գնահատվել են 1532253 միավոր (498386 հեկտար ) հողեր, այդ թվում Երևանում՝ 37620 միավոր (3601 հեկտար) հողեր:Հողի հարկի բազաները սահմանված ժամկետներում տրամադրվել են հարկային և տեղական ինքնակառավարման մարմիններին: 2005 թվականին՝ 2000 թվականի համեմատությամբ, հողի հարկի բազաները ավելացել են շուրջ 77192 հեկտարով, այդ թվում գյուղատնտեսական նշանակության հողերը՝ շուրջ 56554 հեկտարով և բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերը՝ շուրջ 20686 հեկտարով:

Շարունակվել են գույքահարկի հարկման բազաների համալրման աշխատանքները: Ընթացիկ գործառույթների արդյունքում գնահատվել են 79996 շենքեր, շինություններ: 2004 թվականի համեմատությամբ գույքահարկի բազաները 2005թվականին համալրվեցին Երևան քաղաքում 23220 միավոր, մյուս մարզերում 9908 միավոր շենքեր, շինություններով: Գույքահարկի բազաները սահմանված ժամկետներում տրամադրվել են հարկային և տեղական ինքնակառավարման մարմիններին:

2005թվականի ընթացքում կադաստրային գնահատման ոլորտում նախատեսված աշխատանքները իրականացվել են 100%-ով, որոնց ֆինանսավորման գումարը կազմել է 40000.0հազար դրամ, իսկ 2006թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 35000.0հազար դրամ:

Իրականացվել են 10 մարզերի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող բնական հողատարածքների որակական և քանակական դիտարկումներ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանալու բնական կերահանդակների կադաստրային գնահատման նոր մեթոդիկայի մշակման համար:

Իրականացվել են բնակավայրերի հողերի և դրանց վրա գտնվող շենքերի, շինությունների գնային իրավիճակի համակարգված դիտարկումներ,որոնց արդյունքները հիմք կհանդիսանան անշարժ գույքի միասնական հարկման նպատակով կադաստրային գնահատման նոր մեթոդիկայի մշակման համար:

Կատարվել են անշարժ գույքի շուկայի ուսումնասիրություններն ու վերլուծությունները, որոնց արդյունքում ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքներով պատրաստվել են անշարժ գույքի շուկայի վիճակի և գնային իրավիճակի վերլուծական ժողովածուներ, որոնց համառոտագրերը հրապարակվել են մամուլում և տրամադրվել պետական ու տարածքային կառավարման մարմիններին: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրվել են նաև անշարժ գույքի շուկայի վիճակի և գնային իրավիճակի վերաբերյալ ամփոփ տվյալներ ու վերլուծական համառոտագրեր՝ «Վիճակագրական ժողովածուներում» ներառելու նպատակով:

2005թվականի ընթացքում համակարգված դիտարկումների ոլորտի նախատեսված աշխատանքները իրականացվել են 100%-ով, որոնց ֆինանսավորման գումարը կազմել է 55000.0հազար դրամ, իսկ 2006թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 30000.0հազար դրամ:

Գույքահարկ վճարողներին աջակցելու և գույքահարկի ինքնուրույն հաշվարկներ իրականացնելու նպատակով, կադաստրի կոմիտեի ինտերնետային էջում (WWW.cadastre.am) տեղադրվել է «Գույքահարկի հաշվարկման» համակարգչային ավտոմատացված աղյուսակ:

2005թվականին դեռևս լիարժեք չհաջողվեց տարածքային կառավարման մարմինների հետ իրականացնել գույքահարկի և հողի հարկի հարկման բազաների ամբողջական համալրման գործառույթները:

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի 2005թվականի վերլուծությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ այն ունի զարգացման և գների աճման միտումներ:

Վերջին տարիների կտրվածքով, անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխման շարժընթացը աճման միտում ունի: Այսպես, 2000 թվականին՝ արձանագրվել են անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների 33233, 2001 թվականին՝ 44792, 2002 թվականին՝ 60874, 2003 թվականին՝ 71797, 2004 թվականին՝ 98345, իսկ 2005 թվականին՝ 122405 պետական գրանցումներ: Հանրապետությունում, 2005 թվականին նախորդ տարվա համեմատությամբ, պետական գրանցումների քանակական աճը կազմել է 24.5%: 2004-2005թթ. համեմատությամբ, փոփոխվել է անշարժ գույքի նկատմամբ իրականացված օտարման և վարձակալության գործարքների աշխարհագրությունը: Տարեց-տարի Երևան քաղաքի համեմատությամբ առավել մեծ քանակով անշարժ գույքի օտարման և վարձակալության գործարքներ են արձանագրվում մարզերում: Փոխոխվել է նաև անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների կառուցվածքը: Այսպես, եթե նախորդ տարիներին անշարժ գույքի նկատմամբ իրականացվում էին առավելապես օտարման գործքներ (41%-ից - 50%), ապա 2005թվականին այն չի գերազանցել 35%-ը: Ակտիվացել են անշարժ գույքի վարձակալության և գրավադրման գործարքները:

2005թվականին գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական գների տարեկան միջին աճը Երևան քաղաքում կազմել է 23.4%, մյուս մարզերում` 28.8%, իսկ անհատական բնակելի տների շուկայական գների տարեկան միջին աճը Երևան քաղաքում կազմել է 22.1%, մյուս մարզերում` 24.2%:

Անշարժ գույքի շուկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2000թվականից անշարժ գույքի քաղաքացիական շրջանառության գործընթացի ակտիվացման վրա էական ազդեցություն են ունեցել.

սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակի կայունացումը,

քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի իրականացման ներկա մակարդակը,

օրենսդրական դաշտի կարգավորումը,

գործարքների իրականացման ժամկետների կրճատումը, դրանց դիմաց գանձվող վարձավճարների իջեցումը,գրանցման ընթացակարգերի պարզեցումը,

անշարժ գույքի շուկայի մասնակիցներից` ռիելթորների, անշարժ գույքի գնահատողների, տեղագրական և կադաստրային քարտեզագրողների լիցենզավորման գործընթացի իրականացումը և դրանց ներգրավումը:

**Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում**

2005թվականին ընթացիկ աշխատանքների շրջանակներում իրականացվել է անշարժ գույքի նկատմամբ 122405 գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ:Նախորդ տարվա համեմատությամբ`23274-ով ավելի:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներ իրականացվել են հանրապետության 108 համայնքներում: Առաջին պետական գրանցման աշխատանքները դեռևս շարունակվում են հանրապետության 75 համայնքներում:Իրավունքների պետական գրանցում է ստացել 234 հազար միավոր անշարժ գույք, իսկ 188 հազար միավոր անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական անվճար տրամադրվել է սեփականատերերին և օգտագործողներին: Մինչ օրս կատարվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների շուրջ 2 միլիոն պետական գրանցում, որից 1500.6 հազարը` առաջին պետական գրանցման աշխատանքների շրջանակներում`անվճար:

2005թվականին առաջին պետական գրանցումն ավարտված 167 համայնքներում օրենքով սահմանված կարգով` համայնքների հետ համատեղ սահմանված կարգով վերացվել են գույքի նկատմամբ իրավունքների գրանցման խոչընդոտները և գրանցվել են իրավունքները, որի արդյունքում սեփականատերերին հնարավորություն ընձեռնվեց շուկայում հանդես գալ որպես լիիրավ սուբյեկտ:

Առաջին պետական գրանցման աշխատանքների ընթացքում քաղաքացիների կողմից առանց իրավական հիմքերի, օգտագործվող հողամասերից օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց տրամադրվեցին 818326 միավոր 55879.2 հա:

Չնայած որ, համայնքների հետ աշխատանքները եղավ արդյունավետ` այնուամենայնիվ

քաղաքային համայնքներում չհաջողվեց լուծել խնչընդոտներն ամբողջությամբ: Մասնավորապես՝ Երևան քաղաքում առաջին պետական գրանցման շրջանակներում, քաղաքապետին 2005 թվականին տրամադրված՝ մոտ 31 հազար միավոր ինքնակամ գույքի վերաբերյալ այդպես էլ չկայացվեց որևէ որոշում:

2005թվականի ընթացքում գրանցման ոլորտի նախատեսված աշխատանքների ֆինանսավորման գումարը կազմել է 75000.0հազար դրամ, իսկ 2006թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 103722.0հազար դրամ:

Կոմիտեի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից պետական կառավարման մարմիններին տրամադրվել է 24529 տեղեկանք և 2114 էջ փաստաթղթերի պատճեններ:

2004 թվականին ներդրվել է շարժական գույքի գրավի ռեգիստրը. առ այսօր կատարվել է շարժական գույքի գրավի 807 և ֆինանսական վարձակալության (լիզինգի) 5 պայմանագրերից ծագող իրավունքների գրանցում: Քաղաքացիներին և իրավաբանական անձանց տրամադրվել է գրանցված իրավունքների վերաբերյալ 25 տեղեկանք:

Թեև շարժական գույքի գրավի և լիզինգի իրավունքի պետական գրանցումը չի կրում պարտադիր բնույթ,իրավունքների պետական գրանցման համար ներկայացվող դիմումների քանակի աճը (օրական արդեն իսկ մուտքագրվում է միջինը 30-40 դիմում) վկայում է իրավունքների պետական գրանցման նկատմամբ սուբյեկտների ունեցած վստահության աճի մասին:

Միջնաժամկետ ժամանակահատվածում գրանցման ոլորտի հիմնական խնդիրներն են լինելու գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համակարգի հուսալիության և թափանցիկության բարձրացումը, գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության օբյեկտիվության, մատչելիության և անընդհատության ապահովումը :

**Անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկի ստեղծում և ՀՀ անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացում**

<u>ՀՀ անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացման նպատակով.</u>

- 2004թ. նախագծվել եւ մշակվել է.
  - Հողերի գնահատման, անշարժ գույքի եւ անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկում-ների ու շուկայի վերլուծության ավտոմատացված համակարգը,
  - ՀՀ աշխարհագրական անվանումների քարտադարանի ավտոմատացված համակարգը,
  - Ինտերնետի միջավայրում անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանա-փակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ավտոմատացված համակարգը:

2004թ. ստեղծված երեք համակարգերը նախագծվել եւ մշակվել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների գրանցման համակարգի (ARPACREG) բազայի հիման վրա, որն ապահովում է այդ համակարգերի տեղեկատվական համատեղելիությունը՝ ապահովվելով անշարժ գույքի կադաստրի վարման միասնական տեղեկատվական բանկի ստեղծման եւ վարման գործընթացների ավտոմատացումը: 2005թ. իրականացվել է այդ համակարգերի փորձնական շահագործում:

• 2005թ. իրականացվել է բազային երկրատեղեկատվական համակարգի փորձնական ծրագիր Երեւանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի օրինակով, որի արդյունքում ստեղծվել է բազային երկրատեղեկատվական համակարգի վարման ավտոմատացված համակարգ, որը ներդրվելու է 2006թ. ընթացքում:

<u>Անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկի ստեղծման նպատակով կատարվել է հետեւյալ աշխատանքները.</u>

- ստեղծվել է 928 համայնքի թվային կադաստրային քարտեզներ,
- ավարտվել է 829 համայնքի կադաստրային քարտեզների կադաստրային ծածկագրումը,
- էլեկտրոնային արխիվ է մուտքագրվել է 1,564,353 անշարժ գույքի եւ նրանց նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տվյալներ, որոնք անշարժ գույքի գրանցման ավտոմատացված համակարգի ներդրմանը զուգընթաց տեղափոխվելու են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների գրանցման տվյալների շտեմարան,
- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների գրանցման տվյալների շտեմարան է մուտքագրվել մոտ 20000 (առաջին պետական գրանցման շրջանակներում) անշարժ գույքի քանակական եւ որակական, նրանց սեփականատերերի (օգտագործողների) եւ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տվյալներ,
- աշխարհագրական անվանումների տվյալների շտեմարան է մուտքագրվել 15450 աշարհագրական օբյեկտների տվյալներ,
- ավարտվել է 2000-2004թ.թ. անշարժ գույքի եւ անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների տվյալների ստանդարտիզացման եւ անշարժ գույքի եւ անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների տվյալների շտեմարան տեխափոխելու աշխատանքները,
- 2005թ. սկսվել է շենքերի թվային պլան-հատակագծերի ստեղծման, անշարժ գույքի քանակական եւ որակական տվյալների մուտքագրման աշխատանքները

***<u>Գեոդեզիական աշխատանքներ</u>***

Հայաստանի Հանրապետության կառավարության 19 սեպտեմբերի 2002 թվականի N 1530-Ն « Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի ոլորտի 2002-2006 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» և N 1024–ՆԳ որոշումների շրջանակներում գեոդեզիայի ոլորտում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Ծրագրով 2002-2005 թվականներին իրականացվել է.

Հայաստանի Հանրապետության տարածքում WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում պլանային գեոդեզիական նոր ցանցի 806 /0-ական դասի - 5, 1-ի դասի - 40, 2-րդ դասի - 761/ կետերի ստեղծման աշխատանքներ, կազմվել են կոորդինատների կատալոգները: 2004 թվականի հունիսի 1-ին Սլովակիայի Բրատիսլավա քաղաքում կայացած սիմպոզիումում Հայաստանի Հանրապետության տարածքում WGS-84 0-ական դասի հավասարակշռված 5 կետերը ընդգրկվել են Համաեվրոպական EUREF-ի համակարգում, որպես B կարգի կետեր, որին տրվել է ARMEF 02 պայմանական անվանումը: WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգը Հայաստանի Հանրապետության տարածքում ամբողջությամբ ներդրվել է և աշխատանքները ավարտվել են:

Աշխատանքներն իրականացրել է ժամանակակից արբանյակային բարձր ճշտության գործիք-սարքավորումներով և տեխնոլոգիաներով:

Քաղաքների տարածքում WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում 2-րդ դասի 308 կետերի ստեղծում, նիվելիրացման II - 219 գծ.կմ. և III դասի 311.35 գծ.կմ. աշխատանքներ 17 քաղաքներում՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Սևան, Չարենցավան, Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, Կապան, Քաջարան, Սպիտակ, Դիլիջան, Իջևան, Գորիս, Արտաշատ, Արմավիր:

Նիվելիրացման I դասի նախատեսված 1634.9 գծ.կմ-ից իրականացվել է 1315.9 գծ.կմ., այդ թվում 2005 թվականին 696.6 գծ.կմ., II դասի նախատեսված 852.2 գծ.կմ-ից իրականացվել է 625 գծ.կմ., որից 2005 թվականին 260 գծ.կմ., աշխատանքները կավարտվեն 2006 թվականին:

Հայաստանի Հանրապետության կառավարության N 1024–ՆԳ որոշմամբ հաստատված ծրագրով 2003-2005թվականներին WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում իրականացվել է 106 /0-ական դասի- 1, 1-ի դասի - 10, 2-րդ դասի – 95/ կետերի ստեղծման աշխատանքներ, որոնք 2005 թվականին ավարտվել են: I դասի նախատեսված 350.4 գծ.կմ-ից 2005 թվականին իրականացվել է 260.18 գծ.կմ., II դասի 85 հենանիշերի տեղադրման աշխատանքներ, ծրագիրը կավարտվի 2006 թվականին:

2005թվականի ընթացքում նախատեսված գեոդեզիական աշխատանքները իրականացվել են շուրջ 100%-ով, որոնց ֆինանսավորման գումարը կազմել է 194163.0հազար դրամ, իսկ 2006թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 91500.0հազար դրամ:

***<u>Հողաշինարարություն</u>***

Հանրապետության 740 համայնքներում իրականացվել են վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերը անհատույց սեփականության իրավունքով համայնքներին փոխանցելու աշխատանքները: Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով 740 համայնքների վարչական սահմաններում գտնվող 1314.1 հազ. հեկտար պետական սեփականության հողերից 846.0 հազ. հեկտարը փոխանցված են համայնքներին, այդ թվում 2005 թվականին՝ 771.6 հազար հեկտարից 517.1-ը:

Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացվել համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության տարբեր կատեգորիաների հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու մասին ծրագրի հայեցակարգը, որը հաստատվել է 27.11.2005 թվականի N 1873-Ն որոշումով: Ծրագրի շրջանակներում նախապատրաստական աշխատանքները իրականացվել են հանրապետության ամբողջ տարածքի համար,իսկ Շիրակի, Գեղարքունիքի /առանց Գավառի շրջանի/, Կոտայքի և Արագածոտնի մարզերի համար մշակվել են նախագծեր համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության տարբեր կատեգորիաների հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու վերաբերյալ: Հանրապետությունում 2005թվականին աճուրդներով և ուղղակի վաճառքով օտարվել է շուրջ 19000 հեկտար հող, կայացել է 293 աճուրդ և վաճառվել են 8742.5 հա հողեր, համայնքային բյուջեներ է մուտքագրվել շուրջ 2մլն դրամ /առանց Երևան քաղաքի/:

Մշակվել է հողերի միավորման հայեցակարգի նախագիծը, որը հետագայում պետք է հիմք

հանդիսանա հողերի միավորման ռազմավարության մշակման համար:«Հայաստանում հողերի միավորման և հողաշինարարական սխեմաների պատրաստման և իրականացման» ծրագրի շրջանակներում 2005 թվականից Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղական համայնքում Իրականացվում է հողերի միավորման ծրագիր: Նշված աշխատանքների շրջանակներում մշակվել է Նոր Երզնկա համայնքի հողերի օգտագործման սխեման:

Հողային հարաբերություններում օրենսդրությամբ սահմանված պահանջների ապահովմանը մեծապես կարող է նպաստել Ազգային ժողով ներկայացված «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին»օրենքի ընդունումը:

2005թվականի ընթացքում հողաշինարարության ոլորտի նախատեսված աշխատանքները իրականացվել են 100%-ով, որոնց ֆինանսավորման գումարը կազմել է 110000.0հազար դրամ, իսկ 2006թվականի նախատեսված ֆինանսավորման գումարը կազմում է 175000.0հազար դրամ:

Հողաշինարարության ոլորտում համայնքների սահմանների ճշգրտման, նկարագրման և քարտեզագրման աշխատանքների հետ կապված խդիրների առկայությունը, համայնքներում ինչպես հողօգտագործման, այնպես էլ քաղաքաշինական գործունեության հետ կապված բազմաթիվ խնդիրների լուծման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք միջոցառումների իրականացման հետ, մասնավորապես՝ գյուղատնտեսական հողերում ներդրումների և հիպոթեքային վարկավորման խթանման նպատակով հողերի միավորման ու խոշորացման ծրագրերի իրականացման հետ :

***<u>Միջազգային համագործակցություն</u>***

Տարվա ընթացքում շարունակվել են ՄԱԿ-ի ԵՏՀ հողի կառավարման աշխատանքային խմբի (ՀԿԱԽ) աշխատանքները: Կոմիտեի ներկայացուցիչները մասնակցել են աշխատանքային խմբի կոնֆերանսներին:

Կոմիտեի ներկայացուցչի մասնակցությամբ մշակվել է «Հողային ռեսուրսների կառավարումը ԵՏՀ երկրներում», «Անշարժ գույքի միավորների իդենտիֆիկացիա», «Պետական և Մասնավոր ոլորտների համագործակցությունը հողային ռեսուրսների կառավարման ոլորտում» ՄԱԿ-ի ուղեցույցերը:

Համաշխարհային Բանկի “Doing Business 2006” պարբերականի կողմից Հայաստանի անշարժ գույքի կադաստրի համակարգը գործընթացների պարզության,թափանցիկության և արդյունավետության առումով աշխարհի 145 երկրների ցանկում ճանաչվել է 7-րդը (նախորդ տարվա համեմատությամբ բարելավել է երկու տեղով):

Կոմիտեի աշխատանքների թափանցիկության և հրապարակայնության ապահովման, հասարակության իրազեկման և տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվեցին մի շարք աշխատանքներ: Շարունակվել են բացատրական բնույթի տեսահոլովակների հեռուստատեսությամբ ցուցադրումները: Պատրաստվել և տպագրվել են բացատրական բնույթի բուկլետներ, որոնք անդրադարձել են կադաստրի համակարգի գործունեությանը:Պատրաստվել և հրատարակվել է «Կադաստրի տեղակագիր» ամսագիրը, որտեղ ամսեկան կտրվածքով արտացոլվել է նաև անշարժ գույքի շուկայի վերլուծությունները:

**2. Ոլորտի նպատակները, գերակայությունները և ծախսերի վրա ազդող գործոնները ՄԺԾԾ ժամանակահատվածում:**

**2.1. Նպատակը**

(i) ՀՀ տարածքում անշարժ գույքի միասնական կադաստրի վարման համակարգի ներդրումը և դրա արդյունավետ կառավարման ապահովումը :

(ii) Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացումը :

**2.2 Հիմնական գերակայությունները**

2007-2009 թթ. անշարժ գույքի կադաստրի զարգացման հիմնական ուղղություններն ու գերակայությունները հետևյալն են.

(iii) <u>ՀՀ տարածքում անշարժ գույքի միասնական կադաստրի վարման համակարգի ներդրումը և դրա արդյունավետ կառավարման ապահովումը</u>

- ՀՀ տարածքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ավտոմատացված on-line համակարգի ներդրում, անշարժ գույքի վերաբերյալ գրանցված իրավունքների և սահմանափակումների, որակական և քանակական տվյալների միասնական տեղեկատվական համակարգի ներդրում և կառավարում. անշարժ գույքի կադաստրի 47 տարածքային ստորաբաժանումներում և տեղեկատվական կենտրոնում ներդրվելու է անշարժ գույքի գրանցման ավտոմատացված համակարգ և ապահովվելու է արտաքին օգտագործողներին դրա հասանելիությունը:
- Շուկայական մեխանիզմների վրա հիմնված՝ հարկման նպատակով գնահատման նոր համակարգի ներդրում և գնահատման աշխատանքների ավտոմատացման ուղղությամբ անշարժ գույքի միասնական հարկին անցման աշխատանքների իրականացում:
- Անշարժ գույքի շուկայի զարգացմանն աջակցում:

(iv) <u>Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացումը</u>

- Պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրային, թեմատիկ) թվային ֆոնդի ստեղծում՝ հիմնված նորագույն տեխնոլոգիաների վրա:
- Արբանյակային, օդային և վերգետնյա հանույթային տեխնոլոգիաների հիման վրա ֆոտոգրամետրիկ մեթոդների ներդրում:
- Աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման ավտոմատացված համակարգի ներդրում:
- Արբանյակային տեխնոլոգիաների հիման վրա պետական գեոդեզիական պլանային և բարձունքային ցանցի արդիականացում:

**2.3. Ծրագրվող ծախսերը և ակնկալվող արդյունքները**

Ակնկալվում է, որ իրականացվելիք ծրագրերը (ըստ բնագավառների) կունենան հետևյալ արդյունքները.

Քարտեզագրում

- ՀՀ տարածքի նոր աերոլուսանկարներ և բարձր թույլատրելիությամբ (ռեզոլյուցիայով) տիեզերալուսանկարներ սահմանամերձ գոտու և բարձրլեռնային տարածքների համար, ՀՀ տարածքի և ԼՂՀ պետական մասշտաբային շարքի բազային տեղագրական քարտեզների ստեղծում, ՀՀ ամբողջ տարածքի մասշտաբի բազային տեղագրական քարտեզների թարմացում, (թվային և ավանդական),
- ՀՀ պետական մասշտաբային շարքի 1:25 000-ից մինչև 1:1 000 000 մասշտաբի տեղագրական քարտեզներ, որոնք կստեղծվեն 1:10 000 մասշտաբի տեղագրական թվային քարտեզների ընդհանրացման (գեներալիզացիայի) եղանակով կամերալ պայմաններում:
- ՀՀ ողջ տարածքի՝ համայնքների և համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքների թվային կադաստրային քարտեզներ:
- ՀՀ աշխարհագրական անվանումների քարտադարանի վարման ավտոմատ համակարգ:
- Տեխնոլոգիաներ և մասնագետներ, որոնք անհրաժեշտ են տվյալներ մշակելու, թվայնացված աերո-տիեզերալուսանկարներից բազային քարտեզների ստեղծման և պահպանման, օրթոֆոտոքարտեզների ստեղծման, աերո-տիեզերալուսանկարահանման նյութերի օգտագործման միջոցով կադաստրային տվյալների թարմացման և պահպանման, ինչպես նաև հողօգտագործման պլանավորման, գյուղատնտեսության, բնապահպանական, շրջակա միջավայրի և այլ կարևոր նպատակներով կիրառման դեպքերում:

Ստացված քարտեզագրական նյութերի հիման վրա հնարավոր կլինի իրականացնելու հետևյալ աշխատանքները.

- անշարժ գույքի կադաստրի վարում.
- հողի հարկի և գույքահարկի բազայի տվյալների ճշգրտում.
- ՀՀ պետական, վարչատարածքային միավորների (մարզերի, համայնքների) սահմանների նկարագրման և ամրացման աշխատանքներ.
- ՀՀ հողային հաշվեկշռի կազմում՝ ըստ վարչատարածքային միավորների.
- համայնքների հողերի օգտագործման սխեմաների կազմում.
- գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման և մոնիտորինգի անցկացում .
- ՀՀ տարածքի հերթապահ քարտեզի վարում.
- ՀՀ երկրատեղեկատվական համակարգի վարում.
- քաղաքաշինական, բնապահպանական և տարածքային կառավարման խնդիրների պլանավորում և լուծում.
- ՀՀ տնտեսության և պետական այլ խնդիրների լուծում:

Ավտոմատացում

Ծրագրի իրականացումից սպասվող հիմնական արդյունքներն են.

- 928 համայնքի եւ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքների (կադաստրային սեկտորների) թվային կադաստրային քարտեզներ,
- անշարժ գույքի պետական միասնական տեղեկատվական բանկ,
- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ժամանակի էական կրճատում,

• անշարժ գույքի ու նրա նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության (ինչպես տարածական, այնպես էլ իրավական) տրամադրման ժամանակի զգալի կրճատում (հաշված րոպեների ընթացքում),

• ամբողջ հասարակությանը անշարժ գույքի տեղեկատվական բանկի մատչելիության ապահովում (Ինտերնետի միջոցով),

• անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության բարձրացում, տվյալների փոփոխման եւ թարմացման անընդհատության ապահովում,

• անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության անհարկի կրկնության բացառում:

• Երկրատեղեկատվական համակարգի նախագծում, ներդնում և սպասարկում:

Գնահատում և համակարգված դիտարկում

1. Անշարժ գույքի գնահատման նոր համակարգի ներդրման նպատակով.

• Հողամասերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների միասնական գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացում/2007-2009թթ. ընթացքում/,

• Գյուղատնտեսական նշանակության հողերի գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացում /2007-2009թթ. ընթացքում/,

2. Անշարժ գույքի 2008-2010թթ. միասնական հարկման բազայի ձևավորման նպատակով՝ բնակավայրերի հողերի և նրա վրա գտնվող շենքերի, շինությունների կադաստրային գնահատությունների իրականացում /2007թ ընթացքում/:

3. Գյուղատնտեսական նշանակության հողերի 2008-2010թթ. հարկման բազայի ձևավորման նպատակով՝ այդ հողերի կադաստրային գնահատությունների իրականացում /2007թ ընթացքում/:

4. Գնահատման ոլորտի կանոնակարգում, պետական և մասնավոր հատվածի իրավասությունների տարանջատմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

1. Անշարժ գույքի՝ հողերի և դրանց վրա կառուցված շենքեր, շինությունների.

• միասնական գնային իրավիճակի 2007-2009թթ. համակարգված դիտարկումների իրականացում;

• տարածագնահատման միասնական գոտիների բացահայտում (սահմանագծերի արտապատկերում, ընդգրկվածության բնութագրում), դիտարկումների շարունակում 2007-2009թթ. ընթացքում;

• գտնվելու վայրի /տեղադրության/ միասնական գոտիների անցման գործակիցների բացահայտում, դիտարկումների շարունակում 2007-2009թթ. ընթացքում:

2. Գյուղատնտեսական նշանակության հողերի գնային իրավիճակի.

• 2007-2009թթ. համակարգված դիտարկումների իրականացում (շարունակում), ըստ շրջանացման գոտիների (ենթագոտիների), գնային իրավիճակի բնութագրում, դիտարկումների շարունակում 2007-2008թթ. ընթացքում;

• գտնվելու վայրի գնային գոտիների (ենթագոտիների), հաշվի առնելով ԱԳ շուկայում գյուղատնտեսական նշանակության հողերի 2004-2006թթ. գնային իրավիճակի վերլուծությունների արդյունքները;

• գնահատման մեթոդիկաների մշակման աջակցում, այդ թվում՝ տվյալների վերլուծում, գնագոյացման մաթեմատիկական մոդելների դուրս բերում, բազային գների և դրանց վրա էական ազդեցություն ունեցող գործոնների բացահայտում, տրամադրում:

3. Գյուղատնտեսական նշանակության հողերի վիճակի.

- 2007-2009թթ. համակարգված դիտարկումների (շարունակում), այդ թվում նախապատրաստական, դաշտային, լաբորատոր և կամերալ աշխատանքների իրականացում, վրա ազդող էական, այդ թվում բացասական գործոնների բացահայտում:

<u>Հողաշինարարություն</u>

- Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը համայնքների միջև վերաբաշխման աշխատանքները :
- ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի կազմման աշխատանքները :
- Հողերի միավորման (կոնսոլիդացման) փորձնական ծրագրի իրականացում, որը հնարավորություն կտա խոշորացնել հողամասերը՝ դրանց օգտագործումը դարձնելով ավելի արդյունավետ և նպաստավոր ներդրումների համար:

**4.** ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը՝

Ծախսերի համեմատական աղյուսակ 2006-2008թթ. ՄԺԾԾ և 2007-2009թթ. ՄԺԾԾ միջև ըստ ծրագրերի

| Ծրագրի անվանումը | 2006թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2006թ. հաստատված բյուջե | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2006-2008թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ | 2007-2009թթ. ՄԺԾԾ |
| ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի բնագավառում պետական կառավարում | 1404320.0 | 1583000.0 | 1488580.0 | 1662150.0 | 1577890.0 | 1745257.5 | 1832520.4 |
| Անշարժ գույքի կադաստրի ոլորտի ընդամենը | 1069215.7 | 1069215.5 | 635700.0 | 729700.0 | 476000.0 | 635000.0 | 635000.0 |
| Կադաստրային քարտեզագրում, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացում | 20000.0 | 20000.0 | 20000.0 | 10000.0 | 20000.0 | 10000.0 | 10000.0 |
| 03.«Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներ | 7000.0 | 7000.0 | 14000.0 | 7000.0 | 14000.0 | 7000.0 | 7000.0 |
| 04.«Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող պետական | 269261.0 | 259183.5 | 109000.0 | 245600.0 | 36000.0 | 208000.0 | 208000.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| մասշտաբի շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման պետական պատվեր | | | | | | | |
| «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից քարտեզագրված միավոր-ների թվայնացման աշխա-տանքների պետական պատվեր | 10000.0 | 10000.0 | 10000.0 | 1797.0 | 10000.0 | 2000.0 | 2000.0 |
| «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գեոդե-զիական աշխատանքների իրականացման (WGS -84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համա-կարգում նոր գեոդեզիական ցանցի ստեղծման աշխատանքների շարունակություն) պետական պատվեր | 125232.7 | 91500.0 | 0.0 | 40000.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման և սեփակա-նության իրավունքների տրամադրում | 118722.0 | 103722.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրում | 30000.0 | 30000.0 | 30000.0 | 30000.0 | 30000.0 | 30000.0 | 30000.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 09.«Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանա-կության հողերի գնահատման աշխատանքների իրակա-նացման գծով պետական պատվեր | 0.0 | 50000.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Գույքահարկի և հողի հարկի բազայի ստեղծման նպատակով անշարժ գույքի այդ թվում հողերի կադաստրային գնահատման աշխատանքների իրակա-նացում | 0.0 | 35000.0 | 40000.0 | 40000.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդնում, զարգացում և տեղեկատվական բանկի սպասարկում | 170000.0 | 158810.0 | 315500.0 | 158810.0 | 273000.0 | 253000.0 | 253000.0 |
| Երկրատեղեկատվական համակարգի նախագծում, ներդնում և սպասարկում | 104000.0 | 91000.0 | 3000.0 | 87293.0 | 53000.0 | 87000.0 | 87000.0 |
| «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող անշարժ գույքի գնահատման նոր համակարգի ներդրման նպատակով հողի և դրա վրա գտնվող շենքերի և շինությունների և անշարժ գույքի համակարգված դիտարկումների իրականաց-ման պետական պատվեր | 30000.0 | 30000.0 | 30000.0 | 47000.0 | 30000.0 | 30000.0 | 30000.0 |
| Հասարակության տեղեկատվություն | 10000.0 | 8000.0 | 10000.0 | 8000.0 | 10000.0 | 8000.0 | 8000.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «Յողշինմոնտորինգ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ վարչատարածքային միավորների սահմանների նկարագրություն և վարչա-տարածքային նոր բաժանման կազմակերպում և իրականացում | 175000.0 | 175000.0 | 54200.0 | 54200.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

Անշարժ գույքի կադաստրի ոլորտի ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա ծախսերի փոփոխությունը նախորդ տարվա մակարդակի նկատմամբ կազմում է՝

Կադաստրային քարտեզագրում առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացում ծրագրով 2006-2008թթ.ՄԺԾԾ-ով նախատեսվել է յորաքանչյուր տարվա համար 20.0մլն.դրամ, իսկ 2007-2009թթ.ՄԺԾԾ-ով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 10.0մլն.դրամ, գումարների նվազեցումը պայմանավորված են աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքների համար 2006-2008թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվել է յորաքանչյուր տարվա համար 14.0մլն.դրամ, իսկ 2007-2009թթ.ՄԺԾԾ-ով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 7.0մլն.դրամ, գումարների նվազեցումը պայմանավորված է նրանով, որ այս բնագավառում 2002-2005թ. ավարտվել են ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքները, իսկ ֆիզ-աշխարհագրական օբյեկտների վերաբերյալ տեղեկագիրը նախատեսվում է հրատարակել 2006թ. : Ծրագրի շարունակության համար առաջարկվում է նախատեսել 2006թ. պետական բյուջեով հաստատված գումարին համապատասխան:

Պետական մասշտաբի շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների համար 2006-2008թթ.ՄԺԾԾ-ով նախատեսվել է 2007թ.՝ 109.0մլն.դրամ,, 2008թ.՝ 36.0 մլն. դրամ, իսկ 2007-2009թթ.ՄԺԾԾ-ով 2007թ՝ 245.6մլն.դրամ, 2008թ և 2009թ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 208.0մլն.դրամ, գումարների ավելացումը պայմանավորված են աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Քարտեզագրված միավորների թվայնացման աշխատանքների իրականացման համար 2006-2008թթ.ՄԺԾԾ-ով նախատեսվել է յորաքանչյուր տարվա համար 10.0մլն.դրամ, իսկ 2007-2009թթ.ՄԺԾԾ-ով 2007թ՝ 1.8.0մլն.դրամ, 2008թ և 2009թ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 2.0մլն.դրամ, գումարների նվազեցումը պայմանավորված են միավորների թվայնացման ծավալներից:

Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդնում, զարգացում և տեղեկատվական բանկի սպասարկում ծրագրով 2006-2008թթ.ՄԺԾԾ-ով նախատեսվել է 2007թ.՝ 315.5 մլն.դրամ,, 2008թ.՝ 273.0մլն.դրամ, իսկ 2007-2009թթ.ՄԺԾԾ-ով 2007թ՝ 158.81մլն.դրամ և 2008թ և 2009թ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 253.0մլն.դրամ, գումարների ավելացումները պայմանավորված են աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Երկրատեղեկատվական համակարգի նախագծում, ներդնում և սպասարկում ծրագրով 2006-2008թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվել է 2007թ.՝ 3.0 մլն.դրամ,, 2008թ.՝ 53.0 մլն.դրամ, իսկ 2007-

2009թթ. ՄԺԾԾ-ով 2007թ՝ 87.293 մլն.դրամ և 2008թ և 2009թ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 87.0 մլն.դրամ, գումարների ավելացումները պայմանավորված են՝ «ՀՀ երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 20.01.2005թ. N 197-Ն որոշմամբ հաստատված հայեցակարգի ժամանակացույցով կատարման ժամկետով 2006-2013թթ., և ֆինանսական միջոցների նախնական գնահատականով՝ 792.6մլն.դրամ:

Հասարակության տեղեկատվություն 2006-2008թթ.ՄԺԾԾ-ով նախատեսվել է 2007թ.՝ 10.0 մլն.դրամ,, 2008թ.՝ 10.0 մլն.դրամ, իսկ 2007-2009թթ.ՄԺԾԾ-ով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 8.0 մլն.դրամ, առաջարկվում է պահպանել 2006թ. բյուջեով հաստատված չափաքանակը:

### 16.2.1.Կադաստրի բնագավառի 2007-2009թթ. պետական ծախսերի կանխատեսումը

հազար դրամ

| Խումբ | Ենթախումբ | Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2005թ. փաստացի | ՀՀ 2006թ. հաստատված բյուջե | 2007թ. | Տեսակարար կշիռը ընդամենը ծախսերի նկատմամբ, % | 2008թ. | Տեսակարար կշիռը ընդամենը ծախսերի նկատմամբ,% | 2009թ. | Տեսակարար կշիռը ընդամենը ծախսերի նկատմամբ,% |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Այն կազմում է ՀՀ ՊԲ-ի նկատմամբ % | | 0.2 | x | 0.1 | x | 0.1 | x | 0.1 |
| | | Այն կազմում է ՀՆԱ-ի կատմամբ % | 0.01 | 0.04 | x | 0.03 | x | 0.02 | x | 0.02 |
| | | Անշարժ գույքի կադաստրի ոլորտի ընդամենը | 1,508,900.0 | 1,069,215.5 | 729700.0 | 100.0 | 635,000.0 | 100.0 | 635,000.0 | 100.0 |
| 08 | 05 | Կադաստրային քարտեզագրում, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացում | 120,000.0 | 20,000.0 | 10,000.0 | 1.4 | 10,000.0 | 1.6 | 10,000.0 | 1.6 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -83.3 | -50.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| 08 | 05 | 03.«Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներ | 18,000.0 | 7,000.0 | 7,000.0 | 1.0 | 7,000.0 | 1.1 | 7,000.0 | 1.1 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -61.1 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| 08 | 05 | 04.«Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող պետական մասշտաբի շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման պետական | 350,600.0 | 259,183.5 | 245600.0 | 33.7 | 208,000.0 | 32.8 | 208,000.0 | 32.8 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պատվեր | | | | | | | | |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -26.1 | -5.1 | x | -15.4 | x | 0.0 | x |
| 08 | 05 | «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից քարտեզագրված միավորների թվայնացման աշխատանքների պետա-կան պատվեր | 27,000.0 | 10,000.0 | 1,797.0 | 0.2 | 2,000.0 | 0.3 | 2,000.0 | 0.3 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -63.0 | -82.0 | x | 11.3 | x | 0.0 | x |
| 08 | 05 | «Գեոդեզիայի և քարտե-զագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրակա-նացվող գեոդեզիական աշխատանքների իրակա-նացման (WGS -84 համաշխարհային գեոդե-զիական կոորդինատային համակարգում նոր գեոդեզիական ցանցի ստեղծման աշխա-տանքների շարունակու-թյուն) պետական պատվեր | 133,924.2 | 91,500.0 | 40,000.0 | 5.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -31.7 | -56.3 | x | 0.0 | x | 0.0 | x |
| 08 | 05 | Գույքի նկատմամբ իրա-վունքների առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման և սեփա-կանության իրավունքների տրամադրում | 75,000.0 | 103,722.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | 38.3 | -100.0 | x | 0.0 | x | | x |
| | 05 | Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրա-մադրում | 30,000.0 | 30,000.0 | 30,000.0 | 4.1 | 30,000.0 | 4.7 | 30,000.0 | 4.7 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | 0.0 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| 08 | 05 | 09.«Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից իրա-կանացվող ՀՀ համայնք-ների վարչական սահման-ներից դուրս գտնվող գյու-ղատնտեսական նշանա-կության հողերի գնահատ-ման աշխատանքների իրականացման գծով պետական պատվեր | 70,000.0 | 50,000.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -28.6 | -100.0 | x | 0.0 | x | 0.0 | x |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 08 | 05 | Գույքահարկի և հողի հարկի բազայի ստեղծման նպատակով անշարժ գույքի այդ թվում հողերի կադաստրային գնահատման աշխա-տանքների իրականացում | 40,000.0 | 35,000.0 | 40,000.0 | 5.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -12.5 | 14.3 | x | -100.0 | x | 0.0 | x |
| 08 | 05 | Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդնում, զարգացում և տեղեկատ-վական բանկի սպասարկում | 296,100.0 | 158,810.0 | 158,810.0 | 21.8 | 253,000.0 | 39.8 | 253,000.0 | 39.8 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -46.4 | 0.0 | x | 59.3 | x | 0.0 | x |
| 08 | 05 | Երկրատեղեկատվական համակարգի նախագծում, ներդնում և սպասարկում | 50,000.0 | 91,000.0 | 87,293.0 | 12.0 | 87,000.0 | 13.7 | 87,000.0 | 13.7 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | 82.0 | -4.1 | x | -0.3 | x | 0.0 | x |
| 08 | 05 | «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից իրակա-նացվող անշարժ գույքի գնահատման նոր համա-կարգի ներդրման նպա-տակով հողի և դրա վրա գտնվող շենքերի և շինու-թյունների և անշարժ գույքի համակարգված դիտարկումների իրականացման պետական պատվեր | 55,000.0 | 30,000.0 | 47,000.0 | 6.4 | 30,000.0 | 4.7 | 30,000.0 | 4.7 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -45.5 | 56.7 | x | -36.2 | x | 0.0 | x |
| 08 | 05 | Հասարակության տեղեկատվություն | 10,000.0 | 8,000.0 | 8,000.0 | 1.1 | 8,000.0 | 1.3 | 8,000.0 | 1.3 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -20.0 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| 08 | 05 | «Հողշինմոնտորինգ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ վարչատարածքային միավորների սահմանների նկարագրություն և վարչատարածքային նոր բաժանման կազմակերպում և իրակա-նացում | 110,000.0 | 175,000.0 | 54,200.0 | 7.4 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | x | 59.1 | -69.0 | x | -100.0 | x | 0.0 | x |
| 08 | 05 | Քաղաքների տարածքում WGS -84 համաշխարհային գեոդեզիական կոորդինա-տային համակարգում 2-րդ դասի ցանցի ստեղծում և II, III դասի նիվիլ ցանցի նիվիլիրացում, հավասա-րակշռում և կատալոգի կազմում | 60,275.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -100.0 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 08 | 05 | Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող Հայաստանի ազգային ատլասի ստեղծման աշխատանքների պետական պատվեր | 43,000.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -100.0 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |
| 08 | 05 | «Հողշինմոնտորինգ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքների սկզբնական հաշվառման տվյալների ստեղծման և թարմացման աշխատանքների պետական պատվեր | 20,000.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | շեղումը նախորդ տարվա նկատմամբ % | | -100.0 | 0.0 | x | 0.0 | x | 0.0 | x |

## ԳԼՈՒԽ 16.3.ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 16.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթների ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը, որպես հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող պետական մարմին, պատասխանատու է տնտեսության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների, գործընթացների և դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպման և պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց, պետական հիմնարկներին և միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև հանրությանը վիճակագրական ամփոփ տեղեկատվությամբ ապահովման համար:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ ՀՀ տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիրն է /այսուհետ՝ Ծրագիր/, որը հաստատվում է պետական բյուջեի հաստատումից հետո մեկամսյա ժամկետում:

2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների Ծրագրում ներառված 443 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1845) վիճակագրական աշխատանքներից 440-ը (պարբերականությունը հաշվի առած՝ 1842) կամ 99.8%-ը կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Ընդ որում, չկատարված 3 աշխատանքները կատարվել են 35 %-ով:

Ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով 2005 թվականին, ներառյալ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն լեզուներով) ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են 121 անուն՝ ընդհանուր առմամբ 11647 տպաքանակով և մոտ 1,5 մլն էջ ընդհանուր ծավալով վիճակագրական նյութեր: Ծրագրով նախատեսված և հրապարակված 17 անուն վիճակագրական ժողովածուներից 15-ը կամ 88.2 %-ը հրապարակել են ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Միաժամանակ, համաձայն Ծրագրի, հրապարակվել են նախատեսված 19 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ 84) և 8 վիճակագրական զեկույցներ, 32 մամլո հաղորդագրություններ և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունների 44 տեղեկատվական եռամսյակային զեկույցներ:

2005 թվականի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 8 հրապարակում, 1 մամլո հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 287 հարցումների:

2006 թվականի Ծրագրում ներառված են 455 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1954) վիճակագրական աշխատանքներ:

Նախատեսված է իրականացնել 13 վիճակագրական հետազոտություններ, որոնցից 5-ը ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Ծրագրով նախատեսված է հրապարակել 20 վիճակագրական ժողովածուներ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Միաժամանակ, համաձայն Ծրագրի, կիրապարակվեն 19 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ 84) և 1 վիճակագրական զեկույց, մոտ 10 թեմատիկ մամլո հաղորդագրություններ, 24 տեղեկատվական ամսական զեկույցներ և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունների 44 տեղեկատվական եռամսյակային զեկույցներ:

Հայաստանի Հանրապետությունում պետական վիճակագրության առջև ծառացած խնդիրներն են.

ա) միջազգային, ֆինանսական, տնտեսական, հասարակական և այլ կազմակերպությունների կողմից ընդունված, ինչպես նաև ազգային չափանիշներին համապատասխան վիճակագրության միասնական մեթոդաբանության ապահովումը,

բ) տնտեսական ու հասարակական գործընթացների և դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպումը և համակարգումը,

գ) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին (այդ թվում՝ միջազգային), գիտակրթական հաստատություններին, լրատվամիջոցներին, ինչպես նաև հանրությանը ամփոփ տեղեկատվությամբ ապահովումը,

դ) վիճակագրական տեղեկատվական աղբյուր հանդիսացող փաստաթղթերի ձևերի մշակման համակարգումը,

ե) վիճակագրական տեղեկատվության արժանահավատության, ամբողջականության ապահովումը, ներառյալ այդ նպատակով վիճակագրական սկզբնական (անվանական) տվյալների անանունության (գաղտնիության) պահպանման նկատմամբ վերահսկողության կազմակերպումն ու իրականացումը,

զ) վիճակագրական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարումը և դրա պարբերական արդիականացումը,

է) տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչների մշակումը և դրանց ներդաշնակեցումը (այդ թվում՝ շարունակական կատարելագործման միջոցով) միջազգայնորեն ընդունված ու կիրառվող դասակարգումների հետ:

Սույն ենթակետում թվարկված խնդիրների իրագործումը, թե ուղղակիորեն և թե անուղղակի, պայմանավորված է նաև «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» մոնիտորինգի իրականացման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմի ու բովանդակության, ինչպես նաև դրանց հաշվարկային մեթոդաբանությունների կատարելագործման ու միջազգայնորեն երաշխավորված ու կիրառվող մեթոդաբանությունների հետ ներդաշնակեցման հիմնադրույթով:

## 16.3.2.ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

### 16.3.2.1.Նպատակները

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի դրույթների ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, պետական վիճակագրության իրագործման բնագավառում իր գործունեությունն իրականացնում է հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերով սահմանված հիմնական ուղղությունները, և այդ ուղղությունների առարկայական իրագործման ենթատեքստով՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող Ծրագրերով սահմանված միջոցառումները:

Ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության ցանկը (հավաքագրման աղբյուրները, ներկայացման և աշխատանքի կատարման (ցուցանիշի մշակման) ժամկետները և հրապարակումները, որտեղ պետք է տեղադրվեն վերջիններս)՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

### 16.3.2.2.Գերակայությունները

ՀՀ 2007-2009թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով ՀՀ վիճակագրության ոլորտի հիմնական գերակայություններն են.

ա) վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման, վիճակագրությունում միջազգային չափանիշների ներդրման և կիրառման նկատառումներով պայմանավորված՝ անցում կատարել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների կիրառմանը (մասնավորապես անդամակցել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Տվյալների տարածման հատուկ ստանդարտին»), ինչը ենթադրում է նաև Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթատվյալների պարբերական արդիականացում,

բ) համայնքների անձնագրերի ներդրմանը և վարմանը զուգընթաց, կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

գ) անցում կատարել վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը, հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների

իրականացման ապահովումը,

դ) բարձրացնել տվյալների նախապատրաստման օպերատիվությունը` օգտագործելով տվյալների հավաքագրման ժամանակակից միջոցները և մեթոդները, այդ թվում` տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման միջոցով,

ե) զարգացնել վիճակագրական տվյալների բազաները, մասնավորապես պարբերաբար (նվազագույնը` ամենամյա) արդիականացնել բիզնես - ռեգիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով), ձևավորել և վարել ճյուղային և տարածքային ռեգիստրները,

զ) վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջմունքների առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով ընդլայնել վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) կազմն ու բովանդակությունը, ընդլայնելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տարածման հնարավորությունները,

է) վիճակագրական տեղեկատվության համադրելիության և միասնականության ապահովման նկատառումներով պայմանավորված շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կոդավորման միասնական համակարգի ստեղծումը,ներդաշնակեցված միջազգային դասակարգումների հետ,

ը) կանանց հիմնախնդիրների վիճակագրական հաշվառման հետագա կատարելագործման և այդ բնագավառում միջազգային համադրումների ապահովման նկատառումներով պայմանավորված` շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,

թ) միջազգային համագործակցության շրջանակում ընդլայնել տվյալների ընդգրկման դաշտը` կատարելագործելով տվյալների հավաքագրման հիմնական ենթակառուցվածքը և ավելացնել վիճակագրական հետազոտությունների հաճախականությունն ու քանակը,

ժ) արդիականացնել Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տեղային (լոկալ) համակարգչային ցանցը, ցանցային ռեսուրսների կորպորացման և կորպորատիվ ցանցի կառուցման միջոցով, ինչը կմիավորի նշված ծառայության աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումները:

Վիճակագրության ոլորտի համար 2006-2008 և 2007-2009 թվականների միջնաժամկետ ծրագրերով նախատեսված հատկացումները ներկայացված են Աղյուսակ N 16.3.1.-ում:

Աղյուսակ 16.3.1. Ոլորտի բյուջետային հատկացումները 2006-2009թթ` ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ենթախմբերի (մլն դրամ)

| Խումբ, ենթախումբ | Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2006 թ. | | 2007 թ. | | 2008 թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2006-2008թթ ՄԺԾԾ | ՀՀ հաստատված բյուջեի | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | |
| 01.07.01. | Պետական կառավարում | 497.8 | 488.1 | 571.1 | 562.3 | 653.5 | 580.9 | 646.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 01.07.03 | Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում | 208.0 | 219.3 | 208.0 | 221.6 | 208.0 | 248.5 | 276.5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 705.8 | 707.4 | 779.1 | 783.9 | 861.5 | 829.4 | 922.5 |

### 16.3.2.3. Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Պետական վիճակագրության ոլորտում 2007-2009 թվականներին իրականացվելիք ծախսերի վրա ազդող հիմնական գործոններն են՝

- ՄԺԾԾ ժամանակահատվածում նվազագույն աշխատավարձի աճը յուրաքանչյուր տարի՝ 5000 դրամով,
- ծառայությունների սակագների աճը:

## 16.3.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվող՝ պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերով սահմանվող վիճակագրության գործառութային ոլորտների ռազմավարական զարգացման հիմնական ուղղություններն ու միջոցառումները՝ 2007-2009թվականներին ոլորտին ուղղված հատկացումները ըստ տարիների կկազմեն՝ 2007թվականին՝ 784.0 մլն դրամ, 2008 թվականին՝ 829.4 մլն դրամ, 2009թվականին՝ 922.5 մլն դրամ:

Ծախսերի աճը կկազմի՝ 2006 թվականին՝ 29.0% 2004 թվականի փաստացիի նկատմամբ, 2007 թվականին՝ 10.8% 2006 թվականի նկատմամբ, 2008 թվականին՝ 5.8 % 2007 թվականի նկատմամբ, 2009 թվականին՝ 11.2% 2008 թվականի նկատմամբ:

Պետական վիճակագրության բնագավառի միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումնրն ամփոփված են Աղյուսակ 16.3.2.-ում:

**<u>Աղյուսակ 16.3.2.</u> Ոլորտի բյուջետային հատկացումները 2005-2009թթ՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ենթախմբերի և ընթացիկ ու կապիտալ ծախսերի**

| N | Ենթախմբերի /ծրագրերի/ անվանումը | 2005 թ. փաստացի | 2006թ. հաստատված բյուջե | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **548.3** | **707.4** | **784.0** | **829.4** | **922.5** |
| | *ընթացիկ ծախսեր* | *548.3* | *707.4* | *784.0* | *829.4* | *922.5* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| 01.07.01 | **Պետական կառավարում** | **350.9** | **488.1** | **562.3** | **580.9** | **646.0** |
| | *ընթացիկ ծախսեր* | *350.9* | *488.1* | *562.3* | *580.9* | *646.0* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |
| | <u>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն</u> | 350.9 | 488.1 | 562.3 | 580.9 | 646.0 |
| 01.07.03 | **Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում** | **197.4** | **219.3** | **221.6** | **248.5** | **276.5** |
| | *ընթացիկ ծախսեր* | *197.4* | *219.3* | *221.6* | *248.5* | *276.5* |
| | *կապիտալ ծախսեր* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* | *0.0* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն | 197.4 | 219.3 | 221.6 | 248.5 | 276.5 |
| | *ընդամենի նկատմամբ, տոկոս* | | | | | |
| 01.07.01 | Պետական կառավարում | 64.0 | 69.0 | 71.7 | 70.0 | 70.0 |
| 01.07.03 | Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում | 36.0 | 31.0 | 28.3 | 30.0 | 30.0 |
| | *փոփոխ. նախորդ տարվա նկատմամբ, տոկոս* | | | | | |
| | Ընդամենը | 0.0 | 29.0 | 10.8 | 5.8 | 11.2 |
| 01.07.01 | Պետական կառավարում | 0.0 | 39.1 | 15.2 | 3.3 | 11.2 |
| 01.07.03 | Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում | 0.0 | 11.1 | 1.1 | 12.1 | 11.3 |

# ԳԼՈՒԽ 17. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## 17.1.ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### 17.1.1 Ռազմական կարիքների բավարարում (ԳԱՂՏՆԻ)

### 17.1.2. Այլընտրանքային ծառայության ապահովում

Համաձայն՝ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի սահմանվել է այլընտրանքային ծառայությունը և, որի կազմակերպման ու անցկացման նպատակով առաջին անգամ 2005 թվականից պետական բյուջե է ընդգրկվել «Այլընտրանքային ծառայության ապահովում» ծրագիրը, որն էլ իրականացվում է 3 պետական կառավարման մարմինների միջոցով: Ծրագրի շրջանակներում իրականացվում է այլընտրանքային ծառայությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինումը, եթե նրա կրոնական դավանանաքին կամ համոզմունքներին հակասում է ռազմական ստորաբաժանումներում պարտադիր զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը: Այդ նպատակի համար 2005 թվականին պետական բյուջեում նախատեսվել է 77.4 մլն դրամ, որից՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը –58.3 մլն դրամ, ՀՀ առողջապահության նախարարությանը -13.2 մլն դրամ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը – 5.9 մլն դրամ, 2006 թվականին՝ 43.9 մլն դրամ, որից՝ վերը նշված նախարարություններին նախատեսվել է համապատասխանաբար՝ 11.4 մլն դրամ, 16.1 մլն դրամ և 16.4 մլն դրամ: Ծրագրի ֆինանսական միջոցների գումարի 2005 թվականի նկատմամբ նվազման միտումը պայմանավորված է այլընտրանքային ծառայողների փաստացի թվաքանակով:

**Աղյուսակ 17.1.2.1 Այլընտրանքային ծառայության ապահովման ծրագրի ծախսերն՝ ըստ իրականացնող մարմինների (մլն դրամ)**

| | 2007թ | 2008թ | 2009թ |
|---|---|---|---|
| Ընդամենը, այդ թվում | 35.7 | 35.7 | 35.7 |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | 11.4 | 11.4 | 11.4 |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ առողջապահության նախարարություն | 10.8 | 10.8 | 10.8 |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 13.5 | 13.5 | 13.5 |

## 17.2. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ոլորտներում 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն 8 գոյություն ունեցող ծրագրերի իրականացմանը: Նշված ծրագրերը մշակվել են 2007-2009 թվականների ՄԺԾԾ շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից սահմանված կողմնորոշիչ չափաքանակների ու աշխատանքները համակարգող մշտապես գործող խմբի կողմից արված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա և կիրականացվեն 4 պետական կառավարման մարմինների միջոցով (տես Աղյուսակ 17.2.1.):

### Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում իրավիճակի նկարագրություն

### Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, գործելով ՀՀ օրենդրական դաշտի պահանջների սահմաններում, ինչպես նաև 2001 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված՝ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով, կատարում է բազմաբնույթ ծառայություններ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) իրավասության սահմաններում ՀՀ ինքնիշխանության, պետական սահմանների անձեռնմխելիության, տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի, քաղաքացիների իրավունքների, ազատության և օրինական շահերի ապահովումը, հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը, անվտանգության ապահովման և ամրապնդման, պետական պահպանության, տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման նպատակով համապատասխան տեղեկատվությունների հավաքումը, ռազմաարդյունաբերական, տնտեսական, ատոմային էներգետիկայի, տրանսպորտի, կապի, էկոնոմիկայի, ֆինանսների և արդյունաբերական, ռազմավարական օբյեկտների, առաջնային գիտական մշակումների ոլորտներում անվտանգության ապահովումը, ահաբեկչության, կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարը, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեության բացահայտումը, կանխումը ու խափանումը:

Յուրաքանչյուր տարի նախատեսվում է 2 սահմանապահ ուղեկալների կառուցում, գործող ուղեկալների կապիտալ վերանորոգում, նրանց համապատասխանեցում ռեժիմային գոտու համար նախատեսված պայմաններին, տեխնիկական վերազինում, սարքերի և սարքավորումների ձեռքբերում, հատուկ տեխնիկայով, հեռադիտակներով, գիշերային դիտման սարքերով և այլ անհրաժեշտ սարքերով ապահովում: 2005 թվականին կառուցվել է 2 սահմանապահ ուղեկալ՝ Բագրատաշենի և Հաղթանակի, ինչպես նաև Պետական պահպանության ծառայության վարչական շենքը: 2006 թվականին կկառուցվի ևս 2 սահմանապահ ուղեկալ՝ Այրումի և Բավրայի:

Համաձայն՝ ՀՀ վարչապետի 2006 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 242-Ն որոշման, 2006 թվականի հունվարի 1-ից բարձրացվել է Ծառայության սպայական, ենթասպայական և կրտսեր հրամանատարական կազմի պաշտոնային դրույքաչափերը (նվազագույն և առավելագույն):

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով ստեղծվել և առաջին անգամ 2005 թվականից պետական բյուջե է ընդգրկվել «Պետական պահպանության ապահովում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է պետական պահպանություն՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ, որն իրականացվում է իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցության հիման վրա:

**Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն և պետավտոհամարանիշների ձեռքբերում**

ՀՀ ոստիկանության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով: ՀՀ ոստիկանության առջև դրված կանոնադրական խնդիրների կատարումն ապահովվում են ՀՀ ոստիկանության 10 մարզային և 58 ստորաբաժանումների, ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 1008-Ն որոշմամբ պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով ծառայություն իրականացնող 42 ստորաբաժանումների միջոցով:

Առկա խնդիր է դիտարկվում սույն ոլորտին ուղղվող պետական ծախսերի շարունակական ավելացման պայմաններում առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը: Սույն ոլորտում պետական ծախսերի աճը հանդիսանում է ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկը: Ծրագրային ամբողջ ժամանակահատվածի ընթացքում սույն ոլորտի պետական ծախսերն ունենալու են աճի միտում:

2005 թվականին իրականացվել են 6 նպատակային ծրագրեր՝ ՀՀ քաղաքացու անձնագրի և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձանց վկայականների կենտրոնացված տպագրություն՝ 202.0 մլն դրամ,բնակչության ռեգիստրի վարման կազմավորման ծրագիր՝ 110.0 մլն դրամ, հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարանի ստեղծում 40.0 մլն դրամ՝ հրազենի գնդակների և պարկուճների հետքերի հաշվառման (համեմատման) հսկողության իրականացում, 390.7 մլն դրամ ոստիկանության համակարգի կապի և տրանսպորտի նյութատեխնիկական ապահովման բարելավում:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ձերբակալվածներին պահելու վայրերի պայմանների նորմերին համապատասխանության համար հատկացվել է՝ 379.5 մլն դրամ:

ՀՀ ոստիկանության կողմից 2004-2005 թվականների ընթացքում իրականացվել են ոստիկանության վարչական շենքերի (զորանոցի կառուցման), ստորաբաժանումների շենք-շինությունների, կաթսայատների, զորանոցի կառուցման և նորոգման աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովում:

ՀՀ ոստիկանության 2006 թվականի բյուջետային հատկացումների 2005 թվականի համեմատությամբ աճը կազմել է` 17.6 %, որի զգալի մասը ուղղվել է աշխատավարձի ֆոնդին, որն էլ պայմանավորված է ՀՀ վարչապետի 2006 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 242-Ն որոշման համաձայն ծառայության սպայական, ենթասպայական և կրտսեր հրամանատարական կազմի պաշտոնային դրույքաչափերի (նվազագույն և առավելագույն) բարձրացումով:

ՀՀ ոստիկանության մարմիններն ու ստորաբաժանումները համագործակցելով այլ իրավապահ մարմինների հետ, ձեռնարկել են անհրաժեշտ բոլոր միջոցները հանցագործությունների նախականխման, բացահայտման, ինչպես նաև հասարակական կարգն ու անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

Որակական նոր հարթության վրա է բարձրացվել փոխհամագործակցությունը ՀՀ ոստիկանության և անչափահասների հիմնախնդիրներով զբաղվող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային տարբեր կազմակերպությունների հետ, մշակվել և համատեղ իրագործվում են սոցիալական ուղղվածություն ունեցող մի շարք ծրագրեր: Կատարված աշխատանքների արդյունքում հաջողվել է ոչ միայն կասեցնել անչափահասների հանցավորության շարունակական աճը, այլև վերջին ինը տարիների ընթացքում առաջին անգամ արձանագրվել է անչափահասների հանցավորությունը բնութագրող հիմնական ցուցանիշների նվազման միտում:

Արդյունքների բարելավում է արձանագրվել նաև քննությունից և դատից խուսափող անձանց հետախուզման ուղղությամբ, բացի այդ, հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ձերբակալվել են այլ պետությունների կողմից հետախուզվող 59 հանցագործներ:

**Քրեակատարողական համակարգի պահպանում**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թվով 13 քրեակատարողական հիմնարկներից:

Ծառայությունը կազմակերպում է քրեական պատիժների կատարման կապակցությամբ դատարանների` օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների կատարումը, կալանավորվածներին կալանքի տակ պահելը, ինչպես նաև դատապարտյալների և կալանավորվածների փոխադրումներին աջակցելը, քրեակատարողական հիմնարկներում օրինականության, այնտեղ պահվող անձանց, ինչպես նաև դրանց տարածքում գտնվող անձնակազմի և քաղաքացիների անվտանգությունն ապահովելը, դատապարտյալների և

կալանավորվածների կյանքի և առողջության պահպանման, անհատական, կրթական և մշակութային զարգացման պայմանների ապահովումը, դատապարտյալների և կալանավորվածների սոցիալ-հոգեբանական վերականգնումը, աջակցությունն իրավապահ մարմիններին՝ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքներում, ենթակա կառուցվածքային ստորաբաժանում-ների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գործունեության համակարգումը:

2007-2009 թվականների ընթացքում ծառայության հիմնական նպատակը ծառայության առջև օրենքով սահմանված խնդիրների պատշաճ իրականացումն է՝ կալանավորված և դատապարտված անձանց քրեակատարողական հիմնարկներում պահելու նյութական, ներառյալ՝ սննդամթերքով և կենցաղային իրերով ապահովելու, կենցաղային, բուժսպասարկման և այլ պայմանները մարդու իրավունքների ասպարեզում գոյություն ունեցող և համընդհանուր ընդունելության արժանացած միջազգային փաստաթղթերի դրույթներին և չափանիշներին համապատասխան ապահովելը:

Հիշյալ հանգամանքը կարևորվեց Եվրոպայի Խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցության կապակցությամբ: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի հոկտեմբերի 1-ից: Համաձայն Կոնվենցիայի, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ CPT) այցելություններ է կատարում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ, որոնց ժամանակ ԵԽ անդամ պետության կառավարությանն է ներկայացնում համապա-տասխան զեկույց, որում բարձրացված առաջարկությունները տվյալ պետության կառավարության համար կրում են պարտադիր բնույթ (CPT-ն Հայաստանի Հանրապետություն այցելություններ է կատարել 2002 և 2004 թվականներին):

Ելնելով վերոշարադրյալից, 2007-2009 թվականների ընթացքում (և ընդհանրապես) ծառայության հիմնական նպատակն օրենքով սահմանված խնդիրներն արդի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնելն է: Կապված CPT-ի առաջարկությունների հետ, ենթակառուցվածքային ոլորտի բարեփոխումների գծով ծառայության առջև ծառացած խնդիրները հիմնականում կապիտալ ծախսերն են, որոնք անմիջականորեն պետք է ուղղվեն քրեակատարողական հիմնարկների անվտանգության ապահովման առումով կառավարելիության պատշաճ մակարդակի հասնելուն:

Կապիտալ ծախսերի գծով աշխատանքների կատարման համար առկա են մի շարք գործոններ: Մասնավորապես.

1) Նախկինում կալանավորված կամ դատապարտված մեկ անձին հատկացվում էր 2քմ մակե-րեսով բնակելի տարածք: Քրեակատարողական քաղաքականության ասպարեզում ՀՀ ստանձնած պարտավորությունների և CPT-ի առաջարկությունների հիման վրա՝ մեկ անձի հաշվարկով բնակելի տարածության նվազագույն չափը 4քմ պետք է լինի: Այդ իսկ պատճառով, չնայած դատապարտյալների ընդհանուր թվի պակասելուն, առանց այդ էլ առկա շենքային պայմանների ծավալների անբավարարության խնդիրը ծառայությունում սրվել է: Միջազգային չափանիշներին համապատասխան, կալանավորված կամ դատապարտված անձանցով քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնումն անթույլատրելի է երկու առումով, նախ՝ վերջիններիս համար ոչ պատշաճ պայմաններ են ստեղծվում (համարվում է անմարդկային կամ արժանապատվությունը

նվաստացնող վերաբերմունք), և, միևնույն ժամանակ, տարածքային ու վարչակազմի արդեն իսկ չբավարարող (մեկ դատապարտյալի կամ կալանավորվածի հաշվարկով) անձնակազմի դեպքում առաջանում են նախապայմաններ քրեակատարողական հիմնարկների անկառավարելիության (անվտանգության ապահովման առումով) համար:

2) Խորհրդային տարիներից մինչ այժմ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալները բնակվում էին հիմնականում հանրակացարանային ձևի բնակելի տարածքներում, մինչդեռ անհրաժեշտություն է առաջացել անցում կատարելու ամբողջությամբ խցային տիպի բնակելի տարածքների: Խնդիրը կարևորվում է երկու տեսանկյունից: Նախ՝ այն բխում է միջազգային չափանիշներին համապատասխան՝ պատժի անհատականացման սկզբունքն (անձը պետք է հնարավորինս առանձնանալու հնարավորություն ունենա) իրագործելու անհրաժեշտությունից, ապահովելով պայմաններ, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները փոքր խմբերով պահվեն առանձին խցերում, հաշվի առնելով վերջիններիս համատեղելիությունը՝ յուրաքանչյուր խցում ապահովելով առանձնացված սանհանգույց և այլ հարմարություններ (հիշյալ դրույթներն ամրագրված են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով): Բացի այդ, խնդիրն էլ ավելի է կարևորվում վարչակազմի կողմից անվտանգությունն ապահովելու առումով՝ հիմնարկի կառավարելիության անհրաժեշտ աստիճան ապահովելը հնարավոր չէ: Ներկայիս իրավիճակում անվտանգության ապահովման առումով վարչակազմը գտնվում է անպաշտ-պան վիճակում (խոսք անգամ լինել չի կարող քրեակատարողական հիմնարկում հնարավոր արտակարգ իրավիճակի առաջացման դեպքերում):

3) Ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով տարիներ շարունակ քրեակա-տարողական հիմնարկները կապիտալ վերանորոգման չեն ենթարկվել, ինչի արդյունքում շենքային պայմաններն անմխիթար վիճակում են (միջազգային փորձագետների կողմից գնահատվում է անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք): CPT-ի կողմից ներկայացվել են բազմաթիվ առաջարկություններ, որոնց իրագործման համար անհրաժեշտ են խոշոր ֆինանսական ծախսեր (քրեակատարողական ծառայության 119 շենքերի և շինությունների վերանորոգման համար) կատարել: Այդ նպատակով 2005 թվականին նախատեսվել էր 550 մլն. դրամ):

4) Հայաստանի Հանրապետությունն, անդամագրվելով Եվրոպայի Խորհրդին, որպես քրեական պատժի տեսակ, ամբողջությամբ վերացրեց մահապատիժը, միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրվեց որպես առավելագույն պատիժ ցմահ ազատազրկումը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման կատեգորիայի դատապարտյալների թիվը աճելու միտում ունի: Կանխատեսվում է, որ մոտ 3 մլն բնակչություն ունեցող երկրում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց թիվը աստիճանաբար կհասնի 100-150-ի (վերլուծությունը կատարվել է Շոտլանդիայի օրինակով): Ներկայումս ցմահ ազատա-զրկման դատապարտված անձանց թիվը կազմում է 71 մարդ (վերջին երկու տարվա ընթացքում այդ թիվը գրեթե կրկնապատկվել է):

Հետևաբար, նպատակահարմար է նոր ուղղիչ հիմնարկի կառուցումը մոտ 600 մարդ լրակազմով (նախատեսված 600 դատապարտյալի համար), որտեղ բացի ցմահ ազատազրկման դատապարտված անձանցից կպահվեն նաև այլ՝ ներառյալ տեխնիկատնտեսական աշխատանքների համար թողնված դատապարտյալներ:

Նոր ուղղիչ հիմնարկի կառուցումը հնարավորություն կտա նաև ապագայում առկա 13 հիմնարկներից վատթարագույն վիճակում գտնվող (որտեղ շենք-շինությունների վիճակն այնքան վատ է, որ ամբողջությամբ աննպատակահարմար է հանրակացարանայինից խցային տիպի շինությունների անցնելու նպատակով շինարարական աշխատանքներ կատարելը) հիմնարկի գործունեության դադարեցմանը:

Նախկինում քրեակատարողական հիմնարկները 15-ն էին, որոնցից 2-ի գործունեությունը ՀՀ կառավարության որոշմամբ դադարեցվել է 2004 թվականին: Հնարավոր է ևս մեկի գործունեության դադարեցում մոտ ապագայում:

Նոր ուղղիչ հիմնարկի (ցմահ դատապարտյալների համար) կառուցման համար անհրաժեշտ կլինի մոտ 6,5 մլրդ դրամ: Այդ աշխատանքների սկիզբը դրվել է 2006 թվականին, որի համար «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հատկացվել է 400 մլն դրամ, սակայն հիմնական ծախսային շեշտադրումները կլինեն 2007-2008 թվականներին, իսկ անվտանգության ապահովման ինժեներատեխնիկական աշխատանքները՝ 2009 թվականին:

Ծառայության պահպանման նպատակով ոչ առաջնահերթ ծախսային ուղղությունները մատնանշվում են, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ուղղություններով կատարվող ծախսերն ավելացնելու անհրաժեշտությամբ հանդերձ դրանք, այնուամենայնիվ, մյուս ուղղությունների համեմատ փոքր կարևորություն ունեն: Ոչ առաջնահերթ ծախսային ուղղություններն են.

1. գրասենյակային պարագաներ և նյութեր,
2. գույք և սարքավորումներ,
3. գործուղումներ և ծառայողական շրջագայություններ:

### ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում

Հայաստանի փրկարար ծառայությունը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կազմում գործող պետական մարմին է, իր 11 տարածքային փրկարարական վարչություններով, մշակում և իրականացնում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Նրա լիազորությունները սահմանվում են «Հայաստանի փրկարար ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», և «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

Վերջին տարիների կառուցվածքային բարեփոխումները թերևս առավել չափով իրենց ազդեցություններն ունեցան փրկարար ծառայության վրա: Նախ 2002 թվականին, այն ժամանակվա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կազմում վերակազմավորվեց հրշեջ ծառայությունը, այնուհետև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունը

վերակազմավորվեց Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կազմում, այնուհետև վերանվանվեց Հայաստանի փրկարար ծառայության:

Համակարգի ստեղծումը համընկել է անկախ պետականության ձեռքբերման հետ, հետևաբար անցումային շրջանի բոլոր դժվարությունները ուղղակիորեն ազդել են փրկարար ծառայության ձևավորման և զարգացման վրա: 2005 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքը, առավել հստակացնելով նրա դերը և տեղը պետական գործառույթների բնագավառում: 2006 թվականին բյուջեն նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1078.7 մլն դրամով, կամ 64.1 %- ով: Առաջին անգամ, միջոցներ հատկացվեցին կապիտալ ծախսերի համար՝ 45.0 մլն դրամ, որը կարևոր որակական փոփոխություն էր: Նկատելիորեն ավելացան ծախսերի տնտեսագիտական դասակարգման գրեթե բոլոր հոդվածների բյուջետային հատկացումների չափերը, մասնավորապես գույք և սարքավորումները՝ 1.5 անգամ, հանդերձանք՝ 2.7 անգամ, վառելիք՝ 2.8 անգամ, գրասենյակային ապրանքներ և նյութեր՝ 1.6 անգամ: Առավել զգալի փոփոխություններ կրեցին անձնակազմի սոցիալական վիճակը բնորոշող ծախսերը, սահմանվեց շարքային անձնակազմի պարենի փոխհատուցման ամսական գումարը՝ 10000 դրամ: Շարունակվելու են նյութատեխնիկական վերազինման և կապի միջոցների արդիականացման գործընթացները՝ 2005 թվականին ձեռք է բերվել կապի նորագույն միջոցներ՝ 6 գերկարճալիք ստացիոնար, 5 գերկարճալիք դյուրակիր, 1 կարճալիք ստացիոնար և 40 շարժական գերկարճալիք ռադիոկայաններ և 16 օպերատիվ ծառայության և 14 հրշեջ փրկարարական մեքենաներ, ինչպես նաև գնվել է 5000 մետր փողրակ:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներին համապատասխան համակարգի մարզային (Երևան քաղաքի) փրկարարական ստորաբաժանումների կողմից կազմակերպվել և անցկացվել են ընդհանուր թվով՝

23 հրամանատարաշտաբային ուսումնավարժություն,

70 շտաբային ուսումնավարժություն,

32 շտաբային վարժանք,

15 հատուկ տակտիկական ուսումնավարժություն,

10 համայնքային և օբյեկտային համալիր ուսումնասիրություն,

18 օբյեկտային վարժանք,

որոնցում ընդգրկվել են 8 քաղաք, 82 համայնք և 17 կազմակերպություն:

2005 թվականի ընթացքում հանրապետության տարածքում գրանցվել է 1590 (2004թ. 1683) հրդեհ: Ուսումնասիրվել և եզրակացություններ են տրվել բազմաբնակարան շենքերի գազաֆիկացման վերականգնման 868 նախագծերի վերաբերյալ: Ստուգվել է գազաֆիկացված 2956 շենք, 48620 բնակարան և 14086 անհատական բնակելի տուն: Հրդեհատեխնիկական հետազոտության են ենթարկվել շուրջ 22500 օբյեկտ:

Հաշվետու տարում իրականացվել է համագործակցություն՝

Թայլանդի, Հոլանդիայի, Ֆինլանդիայի, Շվեդիայի, Չեխիայի, Ռումինիայի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Վրաստանի, Ղրղզստանի, Բելառուսի համապատասխան ծառայությունների և Ռուսաստանի Դաշնության հրշեջ պաշտպանության ակադեմիայի հետ,

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների հետ,

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ,

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) հետ,

ԱՊՀ միջպետական խորհրդի և գործադիր կոմիտեի հետ,

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի հետ,

ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության ծրագրի շրջանակներում,

GTZ գերմանական կառավարման կազմակերպության հետ,

Կոնրադ Հիլթոն հիմնադրամի հետ,

Մեծ Բրիտանիայի առևտրի և արդյունաբերության դեպարտամենտի (DTI) հետ,

World Vision հայաստանյան գրասենյակի հետ:

ՀՀ կառավարության և Շվեյցարիայի Համադաշնության կառավարության միջև ստորագրվել է «Տեխնիկական և ֆինանսական համագործակցության մասին Հայաստանի արտակարգ իրավիճակներին արձագանքման համակարգին օժանդակության վերաբերյալ համաձայնագիր»:

2007-2009թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում համակարգի հետագա զարգացումները և միտումները պայմանավորվում են ժամանակակից կապի միջոցների կիրառման ազդեցությամբ, օրենսդրական դաշտի կատարելագործմամբ, համակարգի ստորաբաժանումների գազաֆիկացմամբ, տանիքների վերանորոգմամբ և ՀՀ կառավարության մի շարք որոշումների հիման վրա բնակչության ազդարարման կենտրոնացված համակարգերի ներդրմամբ:

**Պետական աջակցություն «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին**

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայությունը «Կոսմոս–Մ» համակարգի միջոցով կատարել է մթնոլորտային երևույթների ընդհանուր պատկերների վերաբերյալ արբանյակային ամենօրյա տվյալների ստացում: Իրականացվել են մթնոլորտային երևույթների ամենօրյա ռադիոլոկացիոն դիտարկումներ, որոնց տվյալները գրանցվել, վերլուծվել և կատարվել են եղանակի կանխատեսումներ: Հարկ է նշել, որ 2006 թվականին Արագածոտնի մարզում տեղակայված 15 արգենտինյան գեներատորների հետագա շահագործումն ապահովելու համար պետական բյուջեով նախորդ տարվա համեմատ ավել է նախատեսվել 33.6 մլն դրամ, կամ աճ՝ 90.8 %, կապված՝ գեներատորների շահագործման և սպասարկման համար նյութատեխնիկական բազայի ստեղծման, համապատասխան մասնագետներով համալրված նոր կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման, գեներատորային կայանքների շինարարական աշխատանքների, գեներատորների շահագործումը, սպասարկումը և մեթոդի տեխնոլոգիան ուսումնասիրելու ու յուրացնելու նպատակով երկու մասնագետների արգենտինյան «SAPOI.SA» կազմակերպություն գործուղման հետ:

**Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում նպատակները, գերակայությունները**

**Նպատակները**

Հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ոլորտներում 2007-2009 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը միտում ունի ապահովելու սույն ոլորտի տարբեր բնագավառներում հետևյալ նպատակների իրականացումը:

**Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում**

- Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի ապահովումը,
- պետական սահմանների պահպանությունը, սահմանային գոտու անձեռնմխելիությունը,
- օտարերկրյա հատուկ ծառայությունների գործունեության կանխումը,,
- պետական բարձրաստիճան պաշտոնյաների անվտանգության ապահովումը,
- պետական բարձրաստիճան պաշտոնյաններին հատուկ կապով ապահովումը:

**Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն և պետավտոհամարանիշների ձեռքբերում**

- անձի կյանքի և առողջության, իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ արձանագրություններից,
- հասարակության և պետության շահերի պաշտպանությունը,
- հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը,
- հանցագործությունների կանխարգելմանը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը
- անչափահասների հանցավորության խմբավորմանը հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ-դաստիարակչական աշխատանքների բարելավումը,
- քաքաղաքացիների անձնագրավորման, փաստաթղթավորման և հաշվառման գործընթացի կատարելագործումը,
- Հայաստանի Հանրապետությունում ավտոճանապարհային երթևեկության վթարայնության նվազեցման, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- Ոստիկանական գործունեության իրավական դաշտի կատարելագործումը,
- հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացումը,
- Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի ժամկետային պարտադիր զինծառայողների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավումը,
- Պետավտոհամարանիշներով ապահովումը:

**Քրեակատարողական համակարգի պահպանում**

- կալանավորված և դատապարտված անձանց նյութական, ներառյալ սննդամթերքով և կենցաղային իրերով ապահովումը,
- կալանավորված և դատապարտված անձանց բուժսպասարկման ապահովումը,
- կալանավորված և դատապարտված անձանց քրեակատարողական հիմնարկներում պահելու պայմանները մարդու իրավունքների ասպարեզում գոյություն ունեցող և համընդհանուր ընդունելության արժանացած միջազգային փաստաթղթերի դրույթներին և չափանիշներին համապատասխան ապահովումը:

**ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության**

**համակարգի ստորաբաժանումների պահպանում**

- արտակարգ իրավիճակներում և ռազմական (պատերազմի) դրության ժամանակ մարդկանց կյանքի և առողջության պահպանումը.
- արտակարգ իրավիճակներում միասնական պետական քաղաքականության իրականացումը.
- արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների վերացման և նվազեցման, բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակումն ու դրանց կատարման ապահովումը.
- բնակչության ուսուցման կազմակերպումը.
- փրկարարական, վքարավերականգնման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

**Պետական աջակցություն «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին**

2007-2009թթ. միջնաժամկետ ժամանակահատվածում սույն ծրագրի կոնկրետ նպատակն է՝ մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործումը, կարկուտի դեմ պայքարի շարունական գործընթացի ապահովումը:

**Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում առանձին զարգացման հիմնական գերակայություններն են.**

**Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում**

- նոր սահմանապահ ուղեկալների և անցագրային կետերի կառուցումը, խմելու ջրով ապահովումը,
- սահմանապահ ուղեկալներում նոր ուսումնական սենյակների կահավորումը, հատուկ պահպանման համար անհրաժեշտ տարածքների համապատասխան ձևավորումը, դրանց հակահրդեհային, չհրկիզվող սարքերով ապահովումը,
- ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի կապիտալ վերանորոգում, դրա համապատասխանեցումը ներկայացվող պահանջներին,
- նոր շնանոցի կառուցումը, անհրաժեշտ կինոլոգ-վարժեցնողների ներգրավումը,
- սննդամթերքի, հանդերձանքի, նորագույն հատուկ տեխնիկայի, սարքավորումների, զենքի և զինամթերքի ձեռքբերման շարունակական գործընթացի ապահովումը,
- բարձր անցողականության և ներկայացուցչական տրանսպորտային միջոցներով ապահովումը, հետագայում նաև ԲՄՊ և ԲՏՌ տիպի տրանսպորտային միջոցների ձեռքբերումը,
- նոր սերնդի համակարգչային տեխնիկայով և կապի միջոցներով ապահովումը:

***Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն և***

***Պետավտոհամարանիշների ձեռքբերում***

- անձի կյանքի և առողջության դեմ ուղղված, ծանր, առավելագույն ծանր հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացումը,
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության, թմրամոլության դեպքերի կանխարգելումը,
- տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացումը,
- օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացումը,
- հանցագործությունների կանխարգելմանը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- անօրինական շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև բնակչության մոտ պահվող զենքի և զինամթերքի հայտնաբերման, առգրավման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը,
- անչափահասների հանցավորության խմբավորմանը հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ-դաստիարակչական աշխատանքների բարելավումը,
- քաղաքացիների անձնագրավորման, փաստաթղթավորման և հաշվառման գործընթացի կատարելագործումը,
- Հայաստանի Հանրապետությունում ավտոճանապարհային երթևեկության վթարայնության նվազեցման, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- Ոստիկանական գործունեության իրավական դաշտի կատարելագործումը,
- հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացումը,
- ՀՀ ոստիկանության զորքերի ժամկետային պարտադիր զինծառայողների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավումը,
- նյութատեխնիկակն բազայի բարելավման շարունակական գործընթացի ապահովումը:

***Քրեակատարողական համակարգի պահպանում***

- քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության մեղմացման անհրաժեշտությունը.
- քրեակատարողական հիմնարկներում բնակելի տարածքների հանրակացարանային ձևը խցային ձևի վերափոխելու և, միաժամանակ, անվտանգության նորմաների պահանջներն ապահովելու անհրաժեշտությունը.
- քրեակատարողական ծառայողների դրամական բավարարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ավելացում, պայմանավորված` «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրամական բավարարման նոր համակարգի ներդրմամբ,
- կալանավորվածների և դատապարտյալների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ շարունակական միջոցառումների ձեռնարկում.

*ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում*

- նյութատեխնիկական բազայի բարելավման շարունակական գործընթացի ապահովումը
- փրկարարական և քաղաքացիական ծառայողների սոցիալական վիճակի բարելավումը, պայմանավորված` «Հայաստանի փրկարար ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներով սահմանված նոր համակարգի ներդրմամբ,
- փրկարարական, վքարավերականգնման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

Սույն ոլորտի 2007-2009թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում պահպանման ծախսերի աճը պայմանվորված է լինելու նշված կառույցների կենսագործունեության ապահովման համար բավարար պայմանների ստեղծման և դրա շնորհիվ այդ կառույցների պատրաստականության բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտությամբ: Սույն ոլորտների 2006-2008թթ և 2007-2009թթ միջնաժամկետ ծրագրով նախատեսված հատկացումները ներկայացված են Աղյուսակ 17.2.1.-ում:

**Աղյուսակ 17.2.1. Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում ծախսերի համեմատական աղյուսակ 2006-2008թթ ՄԺԾԾ և 2007-2009թթ ՄԺԾԾ միջև ըստ ծրագրերի**

(մլն դրամ)

| Խումբ, ենթա-խումբ | Ծախսերի գործառ-նական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2006 թ. | | 2007 թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2006-2008թթ ՄԺԾԾ | ՀՀ հաստատ-ված բյուջեի | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ |
| 03.01. | 01.ՀՀ անձնագրերի բլանկների տպագ-րություն | 142.9 | 126.0 | 142.9 | 196.4 | 142.9 | 196.4 | 196.4 |
| 03.01. | 02. Հասարակական կարգի պահպանության ապահովում | 14520.0 | 15302.6 | 16000.6 | 16331.8 | 17257.1 | 18436.7 | 19090.7 |
| 03.01. | 03. Քրեակատարողա-կան համակարգի պահպանում | 4601.3 | 4420.0 | 5251.3 | 5086.6 | 4301.3 | 6343.6 | 6573.6 |
| 03.01. | 04. Պետավտոհամա-րանիշների ձեռքբերում | 125.4 | 112.5 | 125.4 | 162.0 | 125.4 | 175.5 | 189.0 |
| 03.01. | 05. ՀՀ տարածքային կառավարման նախա-րարության Հայաստա-նի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում | 1746.7 | 2761.8 | 1746.7 | 3168.6 | 1746.7 | 3032.7 | 3203.7 |
| 13.05. | 08. Պետական աջակ-ցություն «Մթնոլորտա-յին երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին | 37.0 | 70.6 | 37.0 | 61.7 | 37.0 | 62.3 | 64.3 |
| 03.02. | 01. Ազգային անվտանգության ապահովում | 7324.3 | 7470.8 | 8075.4 | 7973.3 | 8711.1 | 9000.9 | 9320.2 |

| Խումբ, ենթա-խումբ | Ծախսերի գործառ-նական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2006 թ. | | 2007 թ. | | 2008թ. | | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2006-2008թթ ՄԺԾԾ | ՀՀ հաստատ-ված բյուջեի | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2006-2008թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ | 2007-2009թթ ՄԺԾԾ |
| 03.02. | 02. Պետական պահ-պանության ապահո-վում | 853.4 | 1373.6 | 936.6 | 1256.1 | 1008.6 | 1068.0 | 1105.9 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 29351.0 | 31637.9 | 32315.9 | 34236.5 | 33330.1 | 38316.1 | 39743.8 |

2007-2009թթ. ՄԺԾԾ ծախսերը 2006-2008 թվականների ՄԺԾԾ-ի նկատմամբ աճել են համապատասխանաբար՝ 1920.6 և 4986.0 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով արդեն իսկ ընդգրկված ծրագրերի և ծախսերի հաշվարկմամբ, կապիտալ ակտիվների ձեռքբերմամբ, կապիտալ շինարարության և կապիտալ նորոգման ծախսերի ավելացմամբ:

**Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները**

**Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում** ծրագրերի ծախսերի աճը 2007-2009թթ համապատասխանաբար կազմում է՝ 385.0 մլն դրամ կամ 4.4 %, 839.5 մլն դրամ կամ 9.1 %, 357.2 մլն դրամ կամ 3.5 %, պայմանավորված՝ հանրապետության ներսում գործուղման, կապի ծառայությունների վճարների, գազի և ջրի սակագների բարձրացմամբ, կապի համակարգի նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, այլ օպերատիվ ծառայությունների կատարման ծախսերի ավելացմամբ, նոր շնանոցի կառուցմամբ, Ծառայության վարչական շենքի վերանորոգմամբ, սահմանապահ ուղեկալներում նոր ուսումնական սենյակների կահավորմամբ, հատուկ պահպանման տարածքների հակահրդեհային և չհրկիզվող սարքերով ապահովմամբ:

**Հասարակական կարգի պահպանության ապահովում** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ համապատասխանաբար կազմում է՝ 1029.1 մլն դրամ կամ 6.7 %, 2014.9 մլն դրամ կամ 12.9 %, 654.0 մլն դրամ կամ 3.5 %, պայմանավորված՝ հանրապետության ներսում գործուղման, կապի ծառայությունների վճարների, գազի և ջրի սակագների բարձրացմամբ, կապի համակարգի նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, ավտոտրանսպորտի պահպանման ծախսերի ավելացմամբ, 4 նոր կառուցվող վարչական շենքերի և ավտոկայանատեղի կառուցմամբ, ՀՀ ոստիկանության զորքերի սպառազինության, հատուկ տեխնիկական և տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև զորամասի ջեռուցման ապահովմամբ, ՀՀ ոստիկանության 12 ստորաբաժանումների շենքերի և շինությունների վերանորոգմամբ, «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխան զբոսաշրջության կենտրոն» նոր նախաձեռնության միջոցառումների իրականացման ապահովմամբ:

**ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն** ծրագրով ծախսերի աճը 2006 թվականի նկատմամբ 2007-2009թթ կազմում է՝ 70.4 մլն դրամ կամ 55.8 %, որը պայմանավորված է անձնագրերի փոփոխման ժամկետայնության, ինչպես նաև նոր նախաձեռնության՝ յուրաքանչյուր տարի անձնագրին կից 67500 հատ ռուսերեն ներդիրների տպագրության հետ: 2007-2009թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում 2006 թվականի 250000 հատ անձնագրի դիմաց յուրաքանչյուր տարի կանխատեսվում է ձեռքբերել 350000 հատ անձնագիր:

**Պետավտոհամարանիշների ձեռքբերում** ծրագրով ծախսերի աճը 2007-2009թթ համապատասխանաբար կազմում է՝ 49.5 մլն դրամ կամ 44.0 %, 13.5 մլն դրամ կամ 8.3 %, 13.5 մլն

դրամ կամ 7.7 %, պայմանավորված՝ ազգաբնակչության կողմից ավտոմեքենաների ձեռքբերման աճման միտումով: 2007-2009թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում կանխատեսվում է ձեռքբերել համապատասխանաբար՝ 60000, 65000 և 70000 զույգ պետավտոհամարանիշներ:

**Քրեակատարողական համակարգի պահպանում** ծրագրի ծախսերի աճը 2007-2009թթ համապատասխանաբար կազմում է՝ 666.6 մլն դրամ, 1257.0 մլն դրամ, 230.0 մլն դրամ, պայմանավորված քրեակատարողական ծառայության աշխատողների բազային դրույքաչափի կանխատեսվող բարձրացմամբ՝ 2007-2009 թվականներին 12000 դրամ, գործող 8000 դրամի դիմաց, ինչպես նաև ազատ վարձու աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ նվազագույնը 20000 դրամ, գործող 14500 դրամի դիմաց, ցմահ դատապարտյալների նոր քրեակատարողական հիմնարկի կառուցմամբ, որի շինարարության սկիզբը նախատեսվել է 2006 թվականին, իսկ հիմնական ծախսային շեշտադրումները կլինեն 2007-2009 թվականներին (անվտանգության ապահովման ինժեներատեխնիկական աշխատանքները՝ 2009 թվականին, «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի հիմնանորոգման և կաթսայատան վերականգնման համալիր ծրագրի իրականացմամբ, «Սևան» քրեակատարողական հիմնարկի կապիտալ նորոգմամբ, դեղորայքի և վիրակապային նյութերի ծախսերի ավելացմամբ, գույք և սարքավորումների, կապիտալ ակտիվների ձեռքբերամբ, գործուղման, կապի ծառայությունների վճարների, գազի և ջրի սակագների բարձրացմամբ:

**ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում** ծրագրի ծախսերի աճը 2007 թվականին կազմում է՝ 406.8 մլն դրամ կամ 14.7 %, 2009 թվականին՝ 171.0 մլն դրամ կամ 5.6 %, պայմանավորված՝ գործուղման, կապի ծառայությունների վճարների, գազի և ջրի սակագների բարձրացմամբ, համակարգի քաղաքացիական ծառայողների բազային դրույքաչափի բարձրացմամբ՝ 20000 դրամի նկատմամբ սահմանվել է համապատասխանաբար 2007-2008թթ. 35500-ական դրամ, 2009 թվականին 40000 դրամ, բնակչության ազդարարման կենտրոնացված համակարգերի ներդրմամբ՝ 2007թ.-137.4 մլն դրամ, որից՝ ՀՀ Սյունիքի մարզում - 48.1 մլն դրամ, ՀՀ Գեղարքունիքի մարզում - 43.9 մլն դրամ և ՀՀ Տավուշի մարզում - 45.4 մլն դրամ, 2008թ.-178.6 մլն դրամ և 2009թ.-300.0 մլն դրամ: 2007 թվականին նախատեսվում է նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տեղեկատվության ընդունման և մշակման մոնիտորինգի տիեզերական կենտրոնի ստեղծում՝ 157.5 մլն դրամ գումարով, ինչպես նաև թվով 48 հրշեջ փրկարարական ջոկատների զբաղեցրած շենքերի տանիքների վերանորոգում՝ 25.0 մլն դրամ գումարով: 2008 թվականին նախորդ տարվա նկատմամբ սույն ծրագրին կանխատեսվող գումարի 135.9 մլն դրամով նվազեցումը պայմանավորված է վերը նշված կապիտալ ծախսերի միանվագ կատարման բնույթով:

**Պետական աջակցություն «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին** ծրագրով՝ Արագածոտնի մարզում տեղակայված 15 արգենտինյան գեներատորների հետագա շահագործման նպատակով, 2007-2009 թվականներին նախատեսվել է համապատասխանաբար՝ 61.7 մլն դրամ, 62.3 մլն դրամ, 64.3 մլն դրամ, որոնց շրջանակներում նախատեսվում է մինչև 20000 հազար դրամ ստացողների աշխատավարձի բարձրացում, հաշվի է առնվել նաև հանրապետության ներսում գործուղման, կապի ծառայությունների վճարների, գազի և ջրի սակագների բարձրացումները:

**Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները**

2007-2009թթ. ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտների միջնաժամկետ ծրագրով՝ Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտների պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կկազմի՝ 1.27; 1.3 և 1.24%:

2007-2009թթ. ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտների միջնաժամկետ ծրագրով՝ ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտների պետական ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի մեջ ունի հետևյալ պատկերը.

**Գծանկար 17.2.1. Պետական բյուջեի ծախսերը ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում (%՝ բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ)**




2007-2009թթ. ՄԺԾԾ-ով ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներին նախատեսվում է ուղղել՝ 2007 թվականին՝ 34236.5 մլն դրամ, 2008 թվականին՝ 38316.1 մլն դրամ, 2009 թվականին՝ 39743.8 մլն դրամ: Ծախսերի աճը նախորդ տարվա նկատմամբ 2006 թվականին կկազմի 18.3 %, 2007 թվականին՝ 8.2 %, 2008 թվականին՝ 11.9 %, 2009 թվականին՝ 3.7 %:

**Գծանկար 17.2.2. Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում ըստ ծրագրերի ծախսերի բաշխումը 2007-2009թթ.**




Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում ծախսերի տարանջատումը՝ ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի, ունի հետևյալ պատկերը.

**Գծանկար 17.2.3. Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում պետական ծախսերի կառուցվածքը՝ ըստ տնտեսագիտական նշանակության (%՝ ոլորտի պետական ընդհանուր ծախսերի նկատմամբ)**




2007-2009թթ. ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում բյուջետային հատկացումները՝ ըստ առանձին ենթախմբերի, ծրագրերի և ընթացիկ ու կապիտալ ծախսերի ներկայացված են Աղյուսակ 17.2.2.-ում:

**Աղյուսակ 17.2.2. Ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում բյուջետային հատկացումները 2006-2009 թթ՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ենթախմբերի, ըստ ծրագրերի, կատարող պետական մարմինների և ընթացիկ ու կապիտալ ծախսերի (մլն դրամ)**

| Ենթախումբ | Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի և | 2005թ | 2006թ. | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|

| | ծրագրերի անվանումները | *փաստ* | *ծրագիր* | *կանխատեսում* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը, այդ թվում | 26555.1 | 31637.9 | 34236.5 | 38316.1 | 39743.8 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 22286.6 | 27141.2 | 29127.7 | 32284.1 | 33518.6 |
| | *- կապիտալ ծախսեր* | 4268.5 | 4496.7 | 5108.8 | 6032.0 | 6225.2 |
| 03.01.01 | ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն, այդ թվում | 133.8 | 126.0 | 196.4 | 196.4 | 196.4 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 133.8 | 126.0 | 196.4 | 196.4 | 196.4 |
| | *- կապիտալ ծախսեր* | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | 133.8 | 126.0 | 196.4 | 196.4 | 196.4 |
| 03.01.02 | Հասարակական կարգի պահպանության ապահովում, այդ թվում | 13498.5 | 15302.6 | 16331.8 | 18436.7 | 19090.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 11785.3 | 14140.0 | 15091.0 | 17036.0 | 17640.3 |
| | *- կապիտալ ծախսեր* | 1713.2 | 1162.6 | 1240.8 | 1400.7 | 1450.4 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | 13498.5 | 15302.6 | 16331.8 | 18436.7 | 19090.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 11785.3 | 14140.0 | 15091.0 | 17036.0 | 17640.3 |
| | *- կապիտալ ծախսեր* | 1713.2 | 1162.6 | 1240.8 | 1400.7 | 1450.4 |
| 03.01.03 | Քրեակատարողական համա-կարգի պահպանում, այդ թվում | 3241.5 | 4420.0 | 5086.6 | 6343.6 | 6573.6 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 2460.4 | 2720.0 | 3024.6 | 3218.6 | 3473.6 |
| | *- կապիտալ ծախսեր* | 781.1 | 1700.0 | 2062.0 | 3125.0 | 3100.0 |
| | ՀՀ արդարադատության նախարարություն | 3241.5 | 4420.0 | 5086.6 | 6343.6 | 6573.6 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 2460.4 | 2720.0 | 3024.6 | 3218.6 | 3473.6 |
| | *- կապիտալ ծախսեր* | 781.1 | 1700.0 | 2062.0 | 3125.0 | 3100.0 |
| 03.01.04 | Պետավտոհամարանիշների ձեռքբերում,այդ թվում | 120.7 | 112.5 | 162.0 | 175.5 | 189.0 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 120.7 | 112.5 | 162.0 | 175.5 | 189.0 |
| | *- կապիտալ ծախսեր* | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն | 120.7 | 112.5 | 162.0 | 175.5 | 189.0 |
| 03.01.05 | ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համա-կարգի ստորաբաժանումների պահպանում, այդ թվում | 1653.2 | 2761.8 | 3168.6 | 3032.7 | 3203.7 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 1610.3 | 2716.8 | 2848.8 | 2854.1 | 2903.7 |
| | *- կապիտալ ծախսեր* | 42.9 | 45.0 | 319.8 | 178.6 | 300.0 |
| | ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն | 1653.2 | 2761.8 | 3168.6 | 3032.7 | 3203.7 |

| Ենթախումբ | Ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ենթախմբերի և ծրագրերի անվանումները | 2005թ | 2006թ. | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | *փաստ* | *ծրագիր* | *կանխատեսում* | | |
| | *- ընթացիկ ծախսեր* | 1610.3 | 2716.8 | 2848.8 | 2854.1 | 2903.7 |
| | *- կապիտալ ծախսեր* | 42.9 | 45.0 | 319.8 | 178.6 | 300.0 |
| 13.05.08 | Պետական աջակցություն «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին, այդ թվում | 37.0 | 70.6 | 61.7 | 62.3 | 64.3 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 37.0 | 70.6 | 61.7 | 62.3 | 64.3 |
| | *- կապիտալ ծախսեր* | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն | 37.0 | 70.6 | 61.7 | 62.3 | 64.3 |
| 03.02.01 | Ազգային անվտանգության ապահովում, այդ թվում | 6966.5 | 7470.8 | 7973.3 | 9000.9 | 9320.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 5483.6 | 6368.8 | 6797.1 | 7673.2 | 7945.4 |
| | *- կապիտալ ծախսեր* | 1482.9 | 1102.0 | 1176.2 | 1327.7 | 1374.8 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | 6966.5 | 7470.8 | 7973.3 | 9000.9 | 9320.2 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 5483.6 | 6368.8 | 6797.1 | 7673.2 | 7945.4 |
| | *- կապիտալ ծախսեր* | 1482.9 | 1102.0 | 1176.2 | 1327.7 | 1374.8 |
| 03.02.02 | Պետական պահպանության ապահովում, այդ թվում | 903.9 | 1373.6 | 1256.1 | 1068.0 | 1105.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 655.5 | 886.5 | 946.1 | 1068.0 | 1105.9 |
| | *- կապիտալ ծախսեր* | 248.4 | 487.1 | 310.0 | 0 | 0 |
| | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | 903.9 | 1373.6 | 1256.1 | 1068.0 | 1105.9 |
| | *- ընթացիկ ծախսեր* | 655.5 | 886.5 | 946.1 | 1068.0 | 1105.9 |
| | *- կապիտալ ծախսեր* | 248.4 | 487.1 | 310.0 | 0 | 0 |

# ԳԼՈՒԽ 18. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերի ծրագիր

## 1. Պետական կապիտալ ծախսերի ծրագրման հիմնադրույթները

Շուկայական տնտեսությունում պետական կապիտալ ծախսերի անհրաժեշտության հիմնավորման կենտրոնական տարրն է հանդիսանում պետության միջամտությունը պահանջող ոլորտների սահմանումը և դրանով պայմանավորված մասնավոր ու պետական ներդրումների միջև ընտրությունը, որը և հիմք է հանդիսանում պետական ներդրումային ծրագրերի ծավալների և գերակա ուղղությունների որոշման համար:

Հայաստանում տեղի ունեցած տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների արդյունքում պետության դերը և մասնակցության աստիճանը տնտեսության մեջ զգալիորեն կրճատվել են և ներկայումս համեմատելի են ԵՄ նոր անդամ, ինչպես նաև անդամակցող երկրների ցուցանիշներին:

Նշված կրճատումը պայմանավորում է նաև պետական ներդրումային քաղաքականության գերակայությունների և հիմնական ուղղությունների սահմանման և դրանց պետության փոփոխվող տնտեսական դերին համապատասխանեցման անհրաժեշտությունը: Դրա հիմքն է կազմում կառավարության հստակ պատկերացումը տնտեսական զարգացման ներկա փուլում պետության տնտեսական դերակատարության մասին, որը իր արտահայտությունն է գտնում պետության տնտեսական զարգացման ռազմավարական հիմնարար փաստաթղթերում:

Այդ առումով պետական երկարաժամկետ և միջնաժամկետ ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները, գերակայությունները և ծավալային սահմանափակումները պետք է որոշվեն ելնելով ծրագրման գործողությունների հետևյալ հաջորդականությունից՝

(i) տնտեսությունում պետության դերի վերաբերյալ հասարակությունում ձևավորված քաղաքական կոնսենսուսի բացահայտում և հստակեցում.

(ii) այդ կոնսենսուսի հիման վրա ձևավորված պետական ներդրումային ծրագրերի հիմնական ուղղությունների, գերակա ոլորտների, ֆինանսավորման ցանկալի ծավալների (ներառյալ ներքին և փոխառու ու դրամաշնորհային բնույթի արտաքին ռեսուրսներից ֆինանսավորումը)՝ երկարաժամկետ բնույթի սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարական պետական փաստաթղթերում արտահայտում[5],

(iii) երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի հիման վրա որոշակի պարբերությամբ ձևավորված և դրանց դրույթները ըստ ծավալների և ժամկետների մանրամասնող և հստակեցնող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակում[6]:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում առաջին բյուջետային տարվա համար

---

[5] *Ü»ñÏ³ÛáõÙë Ð³Û³ëï³ÝáõÙ ³Û¹åÇëÇ ÑÇÙÝ³ñ³ñ ÷³ëï³ÃÕáõÕÃ ¿ Ñ³Ý¹Çë³ÝáõÙ §²Õù³ïáõÃÛ³Ý Ñ³ÕÃ³Ñ³ñÙ³Ý é³½Ù³í³ñ³Ï³Ý Íñ³·ÇñÁ¦ (²ÐèÌ), áñÁ ÐÐ Ï³é³í³ñáõÃÛ³Ý ÏáÕÙÇó ÁÝ¹áõÝí»É ¿ 2003 Ã. û·áëïáëÇÝ ¨ áñÇ Íñ³·ñ³ÛÇÝ ÑáñÇ½áÝÁ ï³ñ³ÍíáõÙ ¿ ÙÇÝã¨ 2015 Ã.:*

[6] *ä»ï³Ï³Ý ÙÇçÝ³Å³ÙÏ»ï Í³Ëë»ñÇ Íñ³·ñ»ñÁ (ØÄÌÌ)Ð³Û³ëï³ÝáõÙ áõÝ»Ý 3 ï³ñí³ ·áñÍáÕáõÃÛ³Ý ÑáñÇ½áÝ, Ï³½ÙíáõÙ »Ý ²ÐèÌ ·»ñ³Ï³ÛáõÃÛáõÝÝ»ñÇ ¨ µÛáõç»ï³ÛÇÝ ßñç³Ý³ÏÇ ÑÇÙ³Ý íñ³ ¨ ÁÝ¹áõÝíáõÙ »Ý ³Ù»Ý ï³ñÇ µÛáõç»ï³ÛÇÝ ·áñÍÁÝÃ³óÝ»ñÇ ß³ñáõÝ³Ï³Ï³ÝáõÃÛáõÝÁ ¨ Í³Ëë»ñÇ Íñ³·ñ³ÛÇÝ µÝáõÛÃÁ ³å³Ñáí»Éáõ Ýå³ï³Ïáí: ²é³çÇÝ ÝÙ³ÝûñÇÝ³Ï Íñ³·ÇñÁ ÐÐ Ï³é³í³ñáõÃÛ³Ý ÏáÕÙÇó ÁÝ¹áõÝí»É ¿ 2003 Ã:*

նախատեսված պետական ծախսերի շրջանակը, ներառյալ ներդրումային ծրագրերը հիմք են հանդիսանում տարեկան պետական բյուջեների կազման համար, ներառյալ ներդրումային ծրագրերի մանրամասնումը, այսպիսով՝ ապահովելով պետական ծախսերի երկարաժամկետ գերակայությունների, միջնաժամկետ կանխատեսումների և կարճաժամկետ իրականացման սկզբունքների համակցումը, ինչպես նաև զարգացման ծրագրերի վրա հիմնված ծախսային քաղաքականության ապահովումը:

Ժամանակակից պետության դերը ներդրումային քաղաքականության ոլորտում պայմանավորված է և ուղղակի բխում է դրա ընդհանուր տնտեսական դերի գնահատականից: 15 տարի տևող բարեփոխումների ընթացքում հայկական հասարակության մեջ արդեն ձևավորվել է այն պատկերացումը, որ պետությունը կայուն սոցիալական և տնտեսական զարգացման ապահովման նպատակով պետք է իրականացնի գործառույթների երկու լայն շրջանակ՝

(i) սոցիալական և տնտեսական զարգացմանը նպաստող հանրային բարիքների մատակարարում[7],

(ii) տնտեսական և սոցիալական արդարության ապահովում[8], որը նպատակաուղղված է բնակչության սոցիալապես անապահով և աղքատ խավերին հիմնարար բարիքներից օգտվելու հնարավորություններ ընձեռելուն՝ համապատասխան ֆինանսական օժանդակություն տրամադրելով և/կամ համապատասխան ապրանքների և ծառայությունների մատչելիությունն ապահովելով:

Ելնելով պետության մասնակցության վերը նշված հիմնական շրջանակներից, ներդրումային ծրագրերի միջոցով պետական մասնակցության նպատակահարմարության պարզաբանման առումով շրջանակներից յուրաքանչյուրի մասով անհրաժեշտ է պատասխաններ ձևավորել հետևյալ հարցադրումներին.

(i) Ո՞րն է պետության ներկայիս և նախատեսվող դերը նշված ոլորտում (կարգավորում, հասարակական ծառայությունների մատուցում, ենթակառուցվածքների պահպանում և զարգացում, ծառայությունների մատչելիության ապահովում, աղքատների և անապահով խավերի պաշտպանություն և այլն):

(ii) Ի՞նչպես է իրագործվում պետության մասնակցությունը նշված ոլորտում և մասնակցության ինչպիսի՞ փոփոխություններ են նախատեսվում միջնաժամկետ հեռանկարում (հանրային ծառայությունների ուղղակի մատուցում պետական սեփականության հիման վրա և պետական հատվածի կողմից, ոչ պետական կառույցների հետ համագործակցելով, մատուցվող ծառայությունների դիմաց ոչ պետական կազմակերպությունների պետական ֆինանսավորմամբ, բնակչության որոշակի խավերի միջև ֆինանսական ռեսուրսների ուղղակի բախշմամբ և այլն): Պետության ոլորտային մասնակցության ձևերի և բնույթի փոփոխությունը պայմանավորված է

---

7 Ð³Ýñ³ÛÇÝ µ³ñÇùÝ»ñÝ Çñ»ÝóÇó Ý»ñÏ³Û³óÝáõÙ »Ý ³ÛÝåÇëÇ ³åñ³ÝùÝ»ñ (Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ), áñáÝù ëå³éÙ³Ý Ù»ç áã Ùñó³Ïó»ÉÇ »Ý (¹ñ³Ýó ëå³éáõÙÁ áñ¨¿ Ù»Ï ëå³éáÕÇ ÏáÕÙÇó ãÇ µ³ó³éáõÙ ëå³éáõÙÁ áñ¨¿ ³ÛÉ ëå³éáÕÇ Ï³Ù ëå³éáÕÝ»ñÇ ËÙµ»ñÇ Ñ³Ù³ñ) ¨ áõÝ»Ý áã µ³ó³é»ÉÇ µÝáõÛÃ (ÑÝ³ñ³íáñ ã¿ ë³ÑÙ³Ý³÷³Ï»É ëå³éáõÙÁ ³é³ÝÓÇÝ ³ÝÓ³Ýó Ï³Ù ³ÝÓ³Ýó ËÙµ»ñÇ Ñ³Ù³ñ): ºÉÝ»Éáí ¹ñ³ÝÇó` ³ÝÑÝ³ñ ¿ ¹³éÝáõÙ í×³ñÝ»ñ ·³ÝÓ»É Ñ³Ýñ³ÛÇÝ µ³ñÇùÝ»ñÇ ëå³éÙ³Ý Ñ³Ù³ñ, Ñ»ï¨³µ³ñ Ù³ëÝ³íáñ ³ñï³¹ñáÕÝ»ñÁ ËÃ³ÝÝ»ñ ã»Ý áõÝ»ÝáõÙ ³Û¹ ³ñï³¹ñáõÃÛáõÝÁ Ï³½Ù³Ï»ñå»Éáõ: ²ÛëåÇëáí, Å³Ù³Ý³Ï³ÏÇó βáõÏ³Û³Ï³Ý ïÝï»ëáõÃÛáõÝáõÙ ³ñ¹ÛáõÝ³í»ï Ï»ñåáí áñáβ³ÏÇ ³åñ³ÝùÝ»ñ ¨ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ Ù³ï³Ï³ñ³ñ»Éáõ βáõÏ³ÛÇ ³ÝÏ³ñáÕáõÃÛáõÝÁ Ñ³Ý¹Çë³ÝáõÙ ¿ å»ïáõÃÛ³Ý Ù³ëÝ³ÏóáõÃÛ³Ý ÑÇÙÝ³Ï³Ý å³ï×³éÝ»ñÇó Ù»ÏÁ:

8 Øñó³Ïó³ÛÇÝ βáõÏ³Ý»ñÁ ³ÝóáõÙ³ÛÇÝ ¨ ½³ñ·³óáÕ »ñÏÝ»ñáõÙ Ñ³×³Ë ³ÛÝå»ë »Ý µ³Ëβáõ٠µÝ³ÏãáõÃÛ³Ý Ñ³Ù³ñ ÑÇÙÝ³ñ³ñ å³Ñ³ÝçÝ»ñ µ³í³ñ³ñáÕ ³åñ³ÝùÝ»ñÁ ¨ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÁ, áñÁ ëáóÇ³É³å»ë ÁÝ¹áõÝ»ÉÇ ã¿ ¨ 13 ãÇ Ýå³ëïáõÙ ³Õù³ïáõÃÛ³Ý ¨ ³ÝÑ³í³ë³ñáõÃÛ³Ý Ïñ×³ïÙ³ÝÁ: ²Û¹ å³ñ³·³ÛáõÙ å»ï³Ï³Ý ÙÇç³ÙïáõÃÛáõÝÁ ³ÝÑñ³Å»βï ¿ ³Û¹ ³åñ³ÝùÝ»ñÇó ¨ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÇó µÝ³ÏãáõÃÛ³Ý ³Õù³ï ¨ ëáóÇ³É³å»ë ³Ýå³βïå³Ý Ë³í»ñÇÝ û·ïí»Éáõ ÑÝ³ñ³íáñáõÃÛáõÝÝ»ñÁ ³å³Ñáí»Éáõ Ýå³ï³Ïáí:

սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարական փաստաթղթերով, որոնց դրույթները հետագայում մանրամասնվում և հստակեցվում են պետական ծախսային միջնաժամկետ ծրագրերում:

(iii) Անհրաժեշտ են արդյո՞ք պետական ներդրումային ծրագրերը և պետական սեփականությունը տվյալ ոլորտում պետության արդյունավետ մասնակցության համար: Այս հարցադրման պատասխանը պայմանավորված է սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարությամբ, որը սահմանում է այն ոլորտները, որտեղ պետական մասնակցության ձևերը ենթակա են փոփոխման և սահմանում է նշված փոփոխությունների իրականացման ռազմավարությունը:

Անհրաժեշտության մասին որոշումները զարգացման ռազմավարությամբ սահմանված ոլորտներում պետական ներդրումների և պետական սեփականության վերաբերյալ կարող են չհամընկնել, այսինքն՝ պետական ներդրումային ծրագրերը, ելնելով տվյալ ոլորտում միջամտության անհրաժեշտությունից, կարող են ուղղվել նաև ոչ պետական հատված:

Պետական մասնակցության և պետական ներդրումային ծրագրերի կարիք ունեցող ոլորտների բացահայտման և մակրոտնտեսական, ներառյալ բյուջետային շրջանակի երկարաժամկետ կանխատեսման հիման վրա, սահմանվում են պետական ներդրումային ծրագրերի գծով ծախսերի չափերը և միջոլորտային գերակայությունները:

Միջոլորտային գերակայությունների սահմանումից հետո պետական ներդրումային ծրագրերի մեջ ընդգրկված ամեն մի ոլորտի համար ընտրվում են պետական ներդրումային ծրագրերի իրականացման տարբերակները, որոնք ընդհանուր առմամբ կարող են ունենալ հետևյալ դրսևորումները՝

(i) Պետական ներդրումային ծրագրերը ուղղված են տվյալ ոլորտում պետական սեփականության պահպանմանը կամ զարգացմանը: Այդ դեպքում խնդիր է դրվում պահպանել կամ ավելացնել պետական սեփականության հաշվեկշռային արժեքը և/կամ հասնել այդ սեփականությունը բնութագրող որոշակի որակական ցուցանիշների նախատեսված արժեքների: Նմանօրինակ ծրագրերը նաև պետք է համապատասխան որոշումներ պարունակեն ներդրումների օբյեկտ հանդիսացող պետական սեփականության հետագա ճակատագրի, ինչպես նաև ներդրումային ծրագրերի արդյունքում առաջացած նոր պետական գույքի շահագործման համար անհրաժեշտ ընթացիկ և հետագա կապիտալ ծախսերի մասին:

(ii) Նշված ծրագրերի հաջող իրականացման կարևոր պայման է հանդիսանում տվյալ ոլորտի պետական սեփականության գույքագրումը և պահպանման ու զարգացման ներոլորտային գերակայությունների սահմանումը, որը պետք է իրականացվի ելնելով տվյալ ոլորտում պետական սեփականության առկայության անհրաժեշտության մասին կայացրած որոշումներից, ինչպես նաև ներոլորտային պետական ներդրումների ընդհանուր ծավալային սահմանափակումներից, որոնք նախատեսվում են ԱՅՌԾ-ում և մանրամասնեցվում են պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրերում և տարեկան բյուջեներում: Պետական սեփականություն հանդիսացող օբյեկտների նկատմամբ, որոնք չեն ընդգրկվել ներոլորտային գերակայությունների ցանկերի մեջ, պետք է կայացվեն համապատասխան որոշումներ (օրինակ՝ վերապրոֆիլավորում, մասնավորեցում, փոխանցում համայնքային սեփականության և այլն):

(iii) Պետական ներդրումային ծրագրերը ուղղված են ոչ պետական սեփականություն պահպանմանը: Նշված ծրագրերի անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել կենսական կարևորություն ունեցող և կոլեկտիվ օգտագործման առարկա հանդիսացող ոչ պետական միջոցների պահպանմանը կամ վերականգնմանը, եթե կանխավ հայտնի է ներդրումային մասնավոր

ռեսուրսների բացակայության կամ խիստ սահմանափակ լինելու մասին (օրինակ՝ ներհամայնքային ոռոգման երկրորդային ցանցեր):

(iv) Եթե գոյություն ունի այլընտրանք նոր պետական սեփականության ձեռք բերման կամ կառուցման ու եղած շուկայի հնարավորությունների օգտագործման միջև, ապա ընտրությունը պետք է կատարվի ելնելով տնտեսական արդյունավետության հայտանիշներից: Մասնավորապես, բնակարանային շինարարության ոլորտում այլընտրանք կարող է լինել բնակարանային շինարարությունը և բնակարանային հավաստագրերը, որոնց օգնությամբ պետությունը ֆինանսավորում է պետության հաշվին բնակարանային պայմանները բարելավման ենթակա անձանց: Պետական կառավարման բնագավառի ներդրումային ծրագրերի շրջանակներում այդպիսի այլընտրանք կարող են լինել շենքերի շինարարությունը կամ վերականգնումը և վարձակալությունը, ավտոտրանսպորտի ձեռքբերումը և պահպանումը և դրա վարձակալությունը և այլն:

Նշված փուլի արդյունքում պետական ներդրումային ծրագրերի մեջ ընդգրկված ոլորտների համար պետք է որոշվեն պետական ներդրումային ծրագրերի հնարավոր տեսակները, նշելով այն ենթաոլորտները, որտեղ դրանք կարող են կիրառվել և համապատասխան ենթաոլորտային սահմանափակումները:

**Ü»ñ¹Çñ .ä»ï³Ï³Ý Ï³åÇï³É Í³Ëë»ñÇ ·»ñ³Ï³ÛáõÃÛáõÝÝ»ñÁ` ³Õù³ïáõÃÛ³Ý Ñ³ÕÃ³Ñ³ñÙ³Ý é³½Ù³í³ñáõÃÛ³Ý Ñ³Ù³ï»ùëïáõÙ**

²ÐèÌ-áõÙ å»ï³Ï³Ý Ý»ñ¹ñáõÙ³ÛÇÝ Íñ³·ñ»ñÇ Í³í³É³ÛÇÝ ë³ÑÙ³ÝÝ»ñÁ, »ÉÝ»Éáí ïÝï»ëáõÃÛ³Ý Ù»ç å»ïáõÃÛ³Ý Ù³ëÝ³ÏóáõÃÛ³Ý Ý»ñÏ³ÛÇë ã³÷»ñÇó ¨ »ñÏ³ñ³Å³ÙÏ»ï Ñ»é³ÝÏ³ñáõÙ ¹ñ³Ýó ÷á÷áËÙ³Ý Ï³ÝË³ï»ëáõÙÝ»ñÇó, ë³ÑÙ³Ýí³Í »Ý ÐÜ² ÝÏ³ïÙ³Ùµ ï³ñ»Ï³Ý 4.0-4.4%-Ç ë³ÑÙ³ÝÝ»ñáõÙ (4.4 ïáÏáë` 2007 Ã., Ñ»ï³·³ÛáõÙ Ýí³½»Éáí ÙÇÝã¨ ÐÜ² ÝÏ³ïÙ³Ùµ 4 ïáÏáë` 2015 Ã.):

ä»ï³Ï³Ý Ý»ñ¹ñáõÙ³ÛÇÝ Íñ³·ñ»ñÇ ÙÇçáÉáñï³ÛÇÝ ·»ñ³Ï³ÛáõÃÛáõÝÝ»ñÇ ë³ÑÙ³ÝáõÙÁ ²ÐèÌ-áõÙ Çñ³Ï³Ý³óí»É ¿ Ñ³ßíÇ ³éÝ»Éáí`

(i) ïíÛ³É áÉáñïáõÙ å»ï³Ï³Ý Ý»ñ¹ñáõÙÝ»ñÇ ¨ ³Õù³ïáõÃÛ³Ý áõ ³ÝÑ³í³ë³ñáõÃÛ³Ý Ñ³ÕÃ³Ñ³ñÙ³Ý ÙÇç¨ ·áÛáõÃÛáõÝ áõÝ»óáÕ Ï³åÁ, ³ÛëÇÝùÝ` ÇÝãù³Ýá±í »Ý å»ï³Ï³Ý Ý»ñ¹ñáõÙ³ÛÇÝ ÙÇç³ÙïáõÃÛ³Ý ³ñ¹ÛáõÝùáõÙ µ³ñ»É³ííáõÙ ÝÛáõÃ³Ï³Ý Ï³Ù Ù³ñ¹Ï³ÛÇÝ ³Õù³ïáõÃÛáõÝÁ µÝáõÃ³·ñáÕ ²ÐèÌ Ýå³ï³Ï³ÛÇÝ óáõó³ÝÇßÝ»ñÇ ³ñÅ»ùÝ»ñÁ: Ð»ï¨³µ³ñ, ·»ñ³Ï³ÛáõÃÛáõÝ »Ý ëï³ÝáõÙ ³ÛÝ áÉáñïÝ»ñÁ, áñï»Õ å»ï³Ï³Ý Ý»ñ¹ñáõÙ³ÛÇÝ ÙÇç³ÙïáõÃÛáõÝÁ µ»ñáõÙ ¿ ³é³í»É³·áõÛÝ ³ñ¹ÛáõÝùÝ»ñÇ:

(ii) ïíÛ³É áÉáñïáõÙ å»ï³Ï³Ý Ý»ñ¹ñáõÙ³ÛÇÝ ÙÇç³ÙïáõÃÛ³Ý Å³Ù³Ý³Ï³ÛÇÝ ³éáõÙáí ³é³çÝ³Ñ»ñÃáõÃÛáõÝÝ»ñÁ` ·»ñ³Ï³ÛáõÃÛáõÝ »Ý ëï³ÝáõÙ ³ÛÝ áÉáñïÝ»ñÁ, áñï»Õ å»ï³Ï³Ý ÙÇç³ÙïáõÃÛ³Ý Å³Ù³Ý³ÏÇÝ ãÇñ³Ï³Ý³óÝ»ÉÁ ÏÑ³Ý·»óÝÇ áÉáñïÇ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý Ñ³Ù³ñ ³ÝÑñ³Å»ßï ÑÇÙÝ³Ï³Ý ÙÇçáóÝ»ñÇ ³Ý¹³éÝ³ÉÇ Ï³Ù ¿³Ï³Ý Ïáñëï: ²ÛÉ µ³é»ñáí, ÝÛáõÃ³Ï³Ý Ï³Ù Ù³ñ¹Ï³ÛÇÝ ³Õù³ïáõÃÛ³Ý Ñ³ÕÃ³Ñ³ñÙ³Ý ³éáõÙáí Ñ³Ù»Ù³ï»ÉÇ ³ñ¹ÛáõÝùÝ»ñ áõÝ»óáÕ ÙÇç³ÙïáõÃÛáõÝÝ»ñÇó ·»ñ³Ï³ÛáõÃÛáõÝ »Ý ëï³ÝáõÙ ³ÛÝ áÉáñïÝ»ñÁ, áñï»Õ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý Ñ³Ù³ñ ³ÝÑñ³Å»ßï ÑÇÙÝ³Ï³Ý ÙÇçáóÝ»ñÇ µÝáõÃ³·ñ»ñÝ ³í»ÉÇ í³ïÃ³ñ »Ý:

## 2. 2000 - 2006 թթ հիմնական զարգացումները

2000-2006 թթ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված *կապիտալ ծախսերը* տատանվել են ՀՆԱ նկատմամբ 3-5%-ի շրջանակներում: Միևնույն ժամանակ, բյուջեի ընդամենը ծախսերի կառուցվածքում կապիտալ ծախսերի մասնաբաժինը տատանվել է 15-25%-ի շրջանակներում :

**Աղյուսակ 2.1 ՀՀ պետական բյուջեի կապիտալ ծախսերը 2000 - 2006 թթ**

| | 2000 | 2001 | 2002 (1) | 2003 (2) | 2004 | 2005 | 2006 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *Փաստացի* | | | | | | *Բյուջե (3,4)* |
| Ընդամենը կապիտալ ծախսեր | | | | | | | |
| մլն դրամ | 38,610.7 | 39,773.1 | 34,193.2 | 83,803.4 | 60,618.5 | 82,948.2 | 132,990.3 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ | 17.3 | 16.3 | 13.0 | 26.8 | 18.2 | 21.0 | 27.6 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 3.7 | 3.4 | 2.5 | 5.2 | 3.2 | 3.7 | 5.5 |
| *Ներքին աղբյուրների հաշվին* | | | | | | | |
| մլն դրամ | 21,592.6 | 12,161.0 | 13,406.1 | 19,253.7 | 30,423.9 | 69,265.3 | 79,073.2 |
| %՝ ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 55.9 | 30.6 | 39.2 | 23.0 | 50.2 | 83.5 | 59.5 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ | 9.7 | 5.0 | 5.1 | 6.2 | 9.1 | 17.5 | 16.4 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 2.1 | 1.0 | 1.0 | 1.2 | 1.6 | 3.0 | 3.3 |
| *Արտաքին աղբյուրների հաշվին* | | | | | | | |
| մլն դրամ | 17,018.1 | 27,612.1 | 20,787.0 | 64,549.7 | 30,194.6 | 13,682.9 | 53,917.1 |
| %՝ ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 44.1 | 69.4 | 60.8 | 77.0 | 49.8 | 16.5 | 40.5 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ | 7.6 | 11.3 | 7.9 | 20.6 | 9.0 | 3.4 | 11.2 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 1.7 | 2.3 | 1.5 | 4.0 | 1.6 | 0.6 | 2.2 |

(1) *Ներառված չեն Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացված կապիտալ ծախսերը (30.4 մլրդ դրամ կամ ՀՆԱ 2.2 տոկոս):*

(2) *Ներառված են Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացված կապիտալ ծախսերը (39.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ 2.5 տոկոս):*

(3) *Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

(4) *Ներառված են Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացված կապիտալ ծախսերը (25.0 մլրդ դրամ կամ ՀՆԱ 1.0 տոկոս) և ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում Մեծ Բրիտանիքյի Միացյալ Թագավորության կողմից տրվող դրամաշնորհով իրականացվող ծրագրի ծախսերը:*

*Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:*

Ֆինանսավորման աղբյուրների առումով կապիտալ ծախսերի կառուցվածքում 2000-2003 թթ, ընդհանուր առմամբ, գերակշռել են արտաքին աղբյուրներից ֆինասավորվող նպատակային ծրագրերի գծով ծախսերը: Ընդ որում, 2000-2001 թթ ներքին աղբյուրներից ֆինանսավորված կապիտալ ծախսերի շուրջ կեսը ֆինանսավորվել է ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին: Այդ տարիներին բյուջետային քաղաքականության առանցքային հիմնախնդիրներից էր ծախսերի գծով նախկինում կուտակված պարտքերի մարումը (այդ թվում՝ կապիտալ ծախսերի գծով), ինչը հարուցում էր ռեսուրսային լրացուցիչ սահմանափակումներ:

Վերջին տարիներին, բյուջետային համակարգի կայունացմանն ու ռեսուրսային շրջանակի ընդլայնմանը զուգընթաց, աստիճանաբար մեծանում են երկարաժամկետ հեռանկարին միտված ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղված բյուջետային քաղաքականության ձևակերպման ու

իրականացման հնարավորությունները: Դա, մասնավորապես, իր արտացոլումն է գտել 2003-2006 թթ ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող կապիտալ ծախսերի մակարդակների վարքագծում, որոնք ավելացել են ինչպես անվանական արտահայտությամբ, այնպես էլ ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունների տեսքով: Մասնավորապես, 2006թ. ծրագրային համապատասխան ցուցանիշները զգալիորեն գերազանցում են 2005 թ. արձանագրված փաստացի ցուցանիշների մակարդակը: Միևնույն ժամանակ, եթե 2004 թ. ներքին աղբյուրներից ֆինանսավորված կապիտալ ծախսերի մասնաբաժինը ընդամենը կապիտալ ծախսերում կազմել է շուրջ 50%, ապա 2005 թ. փաստացին կազմել է 83.5% իսկ 2006 թ. բյուջեով ծրագրավորված է շուրջ 60%:

Ոլորտների միջև կապիտալ ծախսերի բաշխման և ծրագրերի առաջնահերթությունների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ՀՀ կառավարությունը հնարավորինս ձգտել է առաջնորդվել պետական քաղաքականության գերակայություններով՝ դրանք արտացոլելով պետական ծախսերի, մասնավորապես, կապիտալ ծախսերի ծրագրերում: Բացի այդ, կարևոր խնդիրներից է ներքին և արտաքին աղբյուրների հաշվին կատարվող կապիտալ ծախսերի համաձայնեցումն ու դրանց փոխլրացնելիության ապահովումը: Այդուհանդերձ, ներքին ռեսուրսների անբավարարության պայմաններում 2001-2002 թթ դրանք ավելի շատ կողմնորոշված են եղել ընթացիկ ծախսերին, իսկ ներքին կապիտալ ծախսերն ուղղվել են այն գերակա ուղղություններին, որտեղ արտաքին օժանդակության մասնակցությունը սահմանափակ է եղել: Սակայն, 2003-2006 թթ ընթացքում ներքին ռեսուրսային հնարավորությունները (ի հաշիվ ընթացիկ եկամուտների) տարեցտարի ավելացել են՝ ընդլայնելով բյուջետային շրջանակը և մեծացնելով կապիտալ ծախսերի գծով որոշումների կայացման ազատության աստիճանը, ինչն իր արտացոլումն է գտել 2004-2006 թթ պետական բյուջեների ցուցանիշներում:

**Աղյուսակ 2.2 ՀՀ պետական բյուջեի կապիտալ ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառական դասակարգման խոշորացված խմբերի 2000 - 2006 թթ**

| | 2000 | 2001 | 2002 (1) | 2003 (2) | 2004 | 2005 | 2006 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *փաստացի ծախսեր* | | | | | | *Բյուջե (3,4)* |
| | *տոկոս՝ ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ* | | | | | | |
| **Ընդամենը կապիտալ ծախսեր** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100** | **100.0** |
| Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ | 2.3 | 5.4 | 7.9 | 7.0 | 15.2 | 23.6 | 19.8 |
| Սոցիալական ծառայություններ | 15.1 | 16.4 | 6.7 | 13.7 | 17.3 | 14.5 | 22.5 |
| Բնակարանային կոմունալ տնտեսություն | 28.6 | 15.2 | 14.2 | 25.7 | 12.4 | 16.9 | 14.9 |
| Տնտեսական ծառայություններ | 45.4 | 56.8 | 53.5 | 51.0 | 52.9 | 30.1 | 40.9 |
| Այլ ծառայություններ | 8.7 | 6.2 | 17.7 | 2.4 | 2.2 | 14.9 | 1.9 |
| | *տոկոս՝ ընդամենը ներքին աղբյուրների հաշվին կապիտալ ծախսերի նկատմամբ* | | | | | | |
| ***Ներքին աղբյուրների հաշվին, ընդամենը*** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100** | **100.0** |
| Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ | 4.0 | 17.7 | 18.7 | 26.6 | 26.7 | 26.6 | 29.7 |
| Սոցիալական ծառայություններ | 11.6 | 19.5 | 10.5 | 15.4 | 27.8 | 14.6 | 18.8 |
| Բնակարանային կոմունալ տնտեսություն | 38.4 | 25.1 | 20.0 | 23.2 | 10.2 | 13.2 | 13.3 |
| Տնտեսական ծառայություններ | 34.0 | 30.1 | 22.4 | 26.0 | 32.0 | 28.4 | 30.5 |
| Այլ ծառայություններ | 12.0 | 7.7 | 28.3 | 8.8 | 3.2 | 17.3 | 7.7 |
| | *տոկոս՝ ընդամենը արտաքին աղբյուրների հաշվին կապիտալ ծախսերի նկատմամբ* | | | | | | |
| ***Արտաքին աղբյուրների հաշվին, ընդամենը*** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100** | **100.0** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ | 0.0 | 0.0 | 1.0 | 1.2 | 3.6 | 9.9 | 5.4 |
| Սոցիալական ծառայություններ | 19.6 | 15.0 | 4.2 | 13.2 | 6.8 | 13.4 | 27.9 |
| Բնակարանային կոմունալ տնտեսություն | 16.1 | 10.9 | 10.4 | 26.5 | 14.6 | 35.4 | 13.9 |
| Տնտեսական ծառայություններ | 59.8 | 68.5 | 73.5 | 58.5 | 73.9 | 38.4 | 52.2 |
| Այլ ծառայություններ | 4.5 | 5.6 | 10.9 | 0.5 | 1.1 | 2.9 | 0.6 |

*(1) Ներառված չեն Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացված կապիտալ ծախսերը (30.4 մլրդ դրամ):*

*(2) Ներառված են Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացված կապիտալ ծախսերը (39.8 մլրդ դրամ ):*

*(3) Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

*(4) Ներառված են Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացված կապիտալ ծախսերը (25.0 մլրդ դրամ) և ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում Մեծ Բրիտանիքյի Միացյալ Թագավորության կողմից տրվող դրամաշնորհով իրականացվող ծրագրի ծախսերը:*

Պետական քաղաքականության գերակայությունների և բյուջետային ծախսերի փոխկապվածության ուժեղացման առումով մեծ դերակատարում է ունեցել 2002 թվականից բյուջետային ծախսերի միջնաժամկետ ծրագրման պրակտիկայի արմատավորումը բյուջետային գործընթացում, իսկ 2003 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» դարձել է ռազմավարական այն հենքը, որն ուղղորդում է պետական ծախսերի ինչպես միջնաժամկետ, այնպես էլ տարեկան ծրագրերի մշակումը: Բացի այդ, աղքատության հաղթահարման համապարփակ ռազմավարության և պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի առկայությունը էապես բարձրացրել է ներքին աղբյուրների և արտաքին օժանդակության հաշվին ֆինանսավորվող կապիտալ ծախսերի համաձայնեցման գործընթացը: Ըստ էության, վերջին երկու տարիներին, դոնորները՝ երկրին օժանդակության իրենց ռազմավարությունները մշակելիս և ՀՀ իշխանությունների հետ դրանք բանակցելիս մեծ կարևորություն են տվել ԱՀՌԾ և պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի փաստաթղթերում ամրագրված գերակայություններին և քաղաքականության ուղղություններին:

Այդուհանդերձ, ձեռքբերումներին զուգընթաց, շարունակում են բաց մնալ հարցեր, որոնք վերաբերում են կապիտալ ծախսերի ինչպես միջոլորտային, այնպես էլ, հատկապես, ներոլորտային և կոնկրետ ծրագրերի մակարդակով գերակայությունների և առաջնահերթությունների վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմներին և այդ հարթությունում բյուջետավորման ընթացակարգերում առկա հիմնախնդիրներին: Ինչպես 2006-2008 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում այնպես էլ 2007 - 2009 թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրում կապիտալ ծախսերի առանձին բաժնով ներկայացումը նպատակ է հետապնդում շեշտադրել այն տրամաբանությունն ու սկզբունքները, որոնք ընկած են եղել միջոլորտային և ներոլորտային կտրվածքով առաջիկա երեք տարիների ընթացքում կապիտալ ծախսերի բաշխման հիմքում, ինչպես նաև առանձնացնել կապիտալ ծախսերի բյուջետավորման գործընթացում ու մեխանիզմներում առկա առանցքային խնդիրներն ու հիմնական խոչընդոտները, որոնց մեղմման ուղղությամբ մոտ ապագայում ձեռնարկվելու են համապատասխան միջոցառումներ:

### 3 .Պետական կապիտալ ծախսերի անհրաժեշտությունը

Կապիտալ ծախսերի ծրագրման փուլում առանցքային դեր է վերագրվել ծախսերի անհրաժեշտությունը պայմանավորող գործոնների տարանջատմանը, որոնք, ըստ էության, ազդել են ինչպես առանձին ծրագրերի՝ կապիտալ ծախսերի միջնաժամկետ ծրագրում ընդգրկելու վերաբերյալ որոշումների կայացման, այնպես էլ, որոշ դեպքերում, միջծրագրային առաջնահերթությունների սահման-

ման պարագայում:

Ծրագիրը մշակելիս ՀՀ կառավարությունը առանձին ուղղություններով ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում տարանջատել է հետևյալ գործոնները, որոնք պայմանավորում են կապիտալ ծախսերի անհրաժեշտությունը՝

(i) Կապիտալ ծախսեր, որոնց չկատարումը հանգեցրել է (և/կամ հանգեցնելու է) *հետաձգված ծախսերի* կուտակմանը, ինչն, իր հերթին, ավելացնում է ընթացիկ ծախսերի վրա ճնշումը.

(ii) Կապիտալ ծախսեր, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է համապատասխան ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճով.

(iii) Կապիտալ ծախսեր, որոնց նպատակը մատուցվող ծառայությունների որակի բարելավումն է.

(iv) Կապիտալ ծախսեր այն ոլորտներում, որտեղ մասնավոր ներդրումների ծավալներն անբավարար են (թեև այդ ոլորտների ծառայություններին ավելի շատ բնորոշ են «մասնավոր» բարիքների հատկություններ).

(v) Կապիտալ ծախսեր, որոնք կրում են միանգամյա (ոչ պարբերական) բնույթ և պայմանավորված են պետության կողմից ստանձնած որոշակի պարտավորություններով (օրինակ, աղետի գոտում բնակարանային շինարարություն, փախստականների բնակարաններով ապահովում և այլն):

## 4. Կապիտալ ծախսերի ծրագրման սկզբունքները

2007-2009 թթ կապիտալ ծախսերը ծրագրելիս ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակներից բխող ընդհանուր սահմանափակումները, առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

(i) կառավարության քաղաքականության նպատակներին և գերակայություններին համապատասխանություն,

(ii) հանրային ակտիվների չվերականգնման պարագայում՝ մատուցվող ծառայությունների ծավալների (և/կամ որակի) անկման վտանգի հաղթահարում,

(iii) անվտանգության, ռազմավարական նշանակության և տարածաշրջանային մրցունակությանը նպաստող խնդիրների լուծում,

(iv) մասնավոր հատվածի զարգացմանը (ներդրումների ներգրավմանը) նպաստում և տնտեսական աճի խթանում,

(v) տարածքային կտրվածքով անհամամասնությունների մեղմում և համապատասխան ծառայությունների մատչելիության ավելացում,

(vi) պետության կողմից ստանձնած որոշակի (ներդրումային բնույթի) պարտավորությունների կատարում,

(vii) ապագա ընթացիկ ծախսերի կրճատում՝ ի հաշիվ ծրագրային ժամանակահատվածում կապիտալ ծախսերի կատարման,

(viii) կապիտալ ծախսերի առանձին ծրագրերի նպատակների և արդյունքների որոշակիություն, հստակություն և հիմնավորվածություն:

Միևնույն ժամանակ, կառավարությունը կապիտալ ծախսերի եռամյա ծրագրում առանձնացրել է ռեզերվային (ըստ ոլորտների առայժմ չբաշխված) բաղադրիչ: Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

(i) Որոշ ոլորտներում, թեև կապիտալ ծախսերի պահանջը ակնհայտ է, այդուհանդերձ, պահանջվող կապիտալ ծախսերի ծավալների ճշգրիտ գնահատականը պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություններ:

(ii) Որոշ ոլորտներում, որտեղ կա կապիտալ ծախսերի պահանջ, ներկայումս ընթացքի մեջ են հզորությունների ճշգրտմանը (օպտիմալացմանը) ուղղված բարեփոխումներ, որոնց ավարտից հետո պետության միջամտության շրջանակները ավելի կիստակեցվեն՝ ինչպես կապիտալ ծախսերի ծավալների, այնպես էլ դրանց ֆինանսավորման սկզբունքների և մեխանիզմների առումով:

(iii) Կապիտալ ծախսերի չբաշխված բաղադրիչը որոշակիորեն մեծացնում է հարկաբյուջետային քաղաքականության դիսկրեցիոնության աստիճանը՝ հնարավորություն տալով ավելի ադեկվատ արձագանքել մակրոտնտեսական զարգացումներին:

Կառավարությունը հատուկ կարևորում է պետական ակտիվների գույքագրման և արժեքի գնահատման (և/կամ վերագնահատման) անհրաժեշտությունը, որից էապես կախված է կապիտալ ծախսերի ծրագրման և բյուջետավորման նպատակայնությունն ու արդյունավետությունը:

### 5. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերի շրջանակը

2007 – 2009 թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվում է կապիտալ ծախսերի գծով իրականացնել 424.9 մլրդ դրամ հատկացումներ՝ 2007 թ.՝ 122,1 մլրդ դրամ, 2008 թ.՝ 152.2 մլրդ դրամ և 2009 թ.՝ 150.6 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալ ծախսերի շուրջ 55.8 տոկոսը նախատեսվում է ֆինանսավորել ներքին, իսկ 44.2 տոկոսը՝ արտաքին աղբյուրների հաշվին:

**Աղյուսակ 5.1 ՀՀ 2007-2009 թթ կապիտալ ծախսերի շրջանակը, մլն դրամ**

| | | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2007-2009 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *Փաստ.* | | *Բյուջե* [1] | *2007-2009 ՄԺԾԾ* | | | |
| **Ա** | **Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ** | **9,214.8** | **19,548.9** | **26,327.0** | **31,442.0** | **30,370,5** | **32,394.1** | **94,206.6** |
| **Բ** | **Սոցիալական ծառայություններ** | **10,512.5** | **12,013.9** | **29,932.8** | **22,554.9** | **17,740.5** | **21,483.1** | **61,778.4** |
| Բ1 | Կրթություն և գիտություն | 8,569.4 | 9,004.9 | 21,229.8 | 14,038.4 | 14,941.7 | 17,121.8 | 46,101.8 |
| Բ2 | Առողջապահություն | 1,393.3 | 1,429.0 | 4,922.5 | 5,271.4 | 1,683.9 | 1,798.2 | 8,753.5 |
| Բ3 | Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն | 32.8 | 421.2 | 1,498.1 | 581.2 | 279.5 | 0.0 | 860.7 |
| Բ4 | Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն | 516.9 | 1,158.9 | 2,282.4 | 2,663.9 | 835.4 | 2,563.1 | 6,062.4 |
| **Գ** | **Բնակարանային կոմունալ տնտեսություն** | **7,533.0** | **14,014.5** | **19,834.4** | **16,672.4** | **14,443.9** | **7,845.2** | **38,961.5** |
| Գ1 | Բնակարանային տնտեսություն և բնակարանային շինարարություն | 1,184.9 | 6,232. | 9,104.4 | 6,936.6 | 5,929.5 | 5,122.4 | 17,988.5 |
| Գ2 | Ջրամատակարարում և կոյուղու համակարգերի շահագործում | 4,754.4 | 5,132.2 | 8,262.6 | 8,881.1 | 7,721.4 | 1,912.8 | 18,515.3 |
| Գ3 | Այլ | 1,593.8 | 2,649.9 | 2,467.4 | 854.7 | 793.0 | 810.0 | 2,457.7 |
| **Դ** | **Տնտեսական ծառայություններ** | **32,047.4** | **24,977.6** | **54,332.2** | **47,010.1** | **86,793.7** | **75,102.4** | **208,906.2** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վառելիքային և էներգետիկ համալիր | 8,021.1 | 18,337.6 | 3,877.0 | 16,395.1 | 42,992.3 | 28,658.2 | 88,045.6 |
| 2 | Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն | 6,761.2 | 4,143.7 | 10,361.9 | 10,316.1 | 19,926.1 | 18,993.6 | 49,235.8 |
| 3 | Արդյունաբերություն, հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), շինարարություն և բնապահպանություն | 1,319.3 | 2.495.4 | 3,119.1 | 2,596.6 | 2,012.1 | 664.0 | 5,272.7 |
| 4 | Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ | 13,806.3 | 14,333.9 | 34,547.8 | 15,602.3 | 19,763.2 | 23,679.0 | 59,044.5 |
| 5 | Տնտեսական այլ ծառայություններ | 2,139.5 | 2,170.8 | 2,426.3 | 2,100.0 | 2,100.0 | 3,107.6 | 7,307.6 |
| **Ե** | **Այլ ծառայություններ** | **1,310.8** | **12,393.3** | **2,564.0** | **2,615.0** | **2,916.1** | **2,916.1** | **8,447.2** |
| 1 | Հիմնական խմբին չդասվող ծախսեր | 1,310.8 | 12,393.3 | 2,564.0 | 2,615.0 | 2,916.1 | 2,916.0 | 8,447.2 |
| **Զ** | **Չբաշխված կապիտալ ծախսեր** | **0.0** | | **0.0** | **1,776.1** | **0.0** | **10,872.2** | **12,648.3** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ** | **60,618.5** | **82,948.2** | **132,990.3** | **122,070.4** | **152,264.7** | **150,613.3** | **424,948.2** |

*(1) Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

2007 – 2009 թթ ծրագրված կապիտալ ծախսերը ծրագրային ՀՆԱ-ի նկատմամբ միջինում կազմելու են 4.8 տոկոս՝ ընդ որում ծրագրային ժամանակահատվածում այս ցուցանիշի ամենաբարձր նիշը կանխատեսվում է 2008 թ.՝ 5.2 տոկոս: Թեև այս ցուցանիշի գծով միջազգային համեմատականները բավականին դժվար է կատարել, այդուհանդերձ կարելի է արձանագրել, որ զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում պետական կապիտալ ծախսերի մակարդակը (ՀՆԱ-ի նկատմամբ) ավելի ցածր է: Դա, մասամբ, պայմանավորված է այդ տնտեսությունների արդեն կայացած կառուցվածքներով: Հայաստանի տնտեսությունն առայժմ գտնվում է կառուցվածքային փոփոխությունների փուլում և ծրագրելով նման մակարդակի կապիտալ ծախսեր կառավարությունը, նախ և առաջ, հաշվի է առել այն հանգամանքը, որ մի շարք ոլորտներում մասնավոր հատվածի ներգրավումը գրեթե անհավանական է և պետական կապիտալ ծախսերը պետք է հանդիսանան մասնավոր ներդրումներին փոխլրացնող ու խթանող՝ հնարավորինս բացառելով մասնավոր ներդրումների դուրսմղման հնարավորությունը: Նման տրամաբանությամբ է պայմանավորված նաև ընդամենը պետական բյուջեի ծախսերում կապիտալ ծախսերի բավական մեծ տեսակարար կշիռը, որը ծրագրային ժամանակահատվածում տատանվում է 23-25% շրջանակներում:

2007-2009 թթ կապիտալ ծախսերի շրջանակում ընդհանուր առմամբ գերակշռում են ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվելիք կապիտալ ծախսերը՝ ծրագրային ժամանակահատվածում ներքին աղբյուրների հաշվին տարեկան կտրվածքով ֆինանսավորվելու է ընդամենը կապիտալ ծախսերի շուրջ 55.6 տոկոսը: 2005 և 2006 թվականների համեմատությամբ ընդհանուր կապիտալ ծախսերի մեջ արտաքին աղբյուրների հաշվին իրականացվելիք կապիտալ ծախսերի տեսակարար կշռի աճը պայմանավորված է կանխատեսվող ժամանակահատվածում «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով իրականացվելիք ծախսերով՝ շուրջ 48,9 մլրդ. դրամ կամ կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալի 11.5 տոկոսը::

**Աղյուսակ 5.2. ՀՀ 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերի շրջանակը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների**

| | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|
| | *փաստ* | *Բյուջե (1)* | *2007-2009 ՄԺԾԾ* | | |
| **Ընդամենը կապիտալ ծախսեր** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| մլն դրամ | 82,948.2 | 132,990.3 | 122,070.4 | 152,264.7 | 150,613.3 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ | 21.0 | 27.6 | 23.3 | 25.8 | 24.8 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 3.7 | 5.5 | 4.5 | 5.2 | 4.7 |
| *Ներքին աղբյուրների հաշվին* | | | | | |
| մլն դրամ | 69,265.3 | 79,073.2 | 77,932.9 | 70,078.1 | 89,138.2 |
| %՝ ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 83.5 | 59,5 | 63.8 | 46.0 | 59.2 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ | 17.5 | 16.4 | 14.9 | 11.9 | 14.7 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 3.0 | 3.3 | 2.9 | 2.4 | 2.8 |
| *Արտաքին աղբյուրների հաշվին* | | | | | |
| մլն դրամ | 13,682.9 | 53,917.1 | 44,137.5 | 82,186.6 | 61,475.1 |
| %՝ ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 16.5 | 40.5 | 36.2 | 54.0 | 40,8 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ | 3.4 | 11.2 | 8.4 | 13.9 | 10.1 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 0.6 | 2.2 | 1.6 | 2.8 | 1.9 |

*(1) Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

## 6. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերը՝ ըստ ոլորտների

Եռամյա կտրվածքով նախատեսված հատկացումների՝ ըստ ծառայությունների բնույթի բաշխումն ունի հետևյալ պատկերը. 22.2 տոկոսն ուղղվելու է ընդհանուր նշանակության պետական ծառայություններին, սոցիալական ծառայությունները կլանելու են ընդհանուր կապիտալ հատկացումների 14.5 տոկոսը, բնակարանային կոմունալ տնտեսության գծով խնդիրների լուծմանն ուղղված կապիտալ ծախսերը կազմելու են 9.2%, իսկ տնտեսական ծառայութնների գծով ծախսերը՝ 49.2%: Տնտեսական ծառայությունների գծով ծախսերի այսպիսի գերակշռությունը պայմանավորված է կանխատեսվող ժամանակահատվածում «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի միջոցով իրականացվելիք ծախսերով: Կապիտալ ծախսերի եռամյա փաթեթում 3.0 տոկոսը վերագրված է կապիտալ ծախսերի չբաշխված բաղադրիչին: Ընդ որում, եթե ծրագրային ժամանակահատվածի առաջին երկու տարիներին չբաշխված բաղադրիչի մասնաբաժինը կազմում է շուրջ 0.4%, ապա երրորդ տարվա կտրվածքով դրա մասնաբաժինն անհամեմատ մեծ է և կազմում է 2.6% (երեք տարվա ընդհանուր կապիտալ ծախսերի նկատմամբ): 2007 թ. համար կապիտալ ծախսերի չբաշխված բաղադրիչի բաշխումը կիրականացվի տարեկան բյուջեի մշակման ընթացքում՝ երբ կհստակեցվեն ներկայումս քննարկման մեջ գտնվող որոշ ծրագրերի տեխնիկական բնույթի մանրամասները:

**Աղյուսակ 6.1. Կապիտալ ծախսերի կառուցվածքը՝ ըստ ծառայությունների բնույթի, տոկոս՝ ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ՝**

| | | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2007-2009 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *Փաստ.* | | *Բյուջե (2)* | *2007-2009 ՄԺԾԾ* | | | |
| Ա | Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ | 15.2 | 23.5 | 19.8 | 25.8 | 19.9 | 21.5 | 22.2 |
| 1 | Սոցիալական ծառայություններ | 17.3 | 14.5 | 22.5 | 18.5 | 11.6 | 14.3 | 14.5 |
| 2 | Բնակարանային կոմունալ տնտեսություն | 12.4 | 16.9 | 14.9 | 12.8 | 9.3 | 5.2 | 9.2 |
| 3 | Տնտեսական ծառայություններ | 52.9 | 30.2 | 40.9 | 36.1 | 57.2 | 49.9 | 49.2 |
| 4 | Այլ ծառայություններ | 2.2 | 14.9 | 1.9 | 5.4 | 1.9 | 1.9 | 1.9 |
| Ձ | Չբաշխված կապիտալ ծախսեր | 0.0 | 0.0 | 0.0 | 1.5 | 0.0 | 7.2 | 3.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ** | **100.0** | **100** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |

## Ü»ñ¹Çñ 2. àÉáñïÝ»ñÇ ³é³ÝÓÝ³Ñ³ïÏáõÃÛáõÝÝ»ñÁ ¨ å»ï³Ï³Ý Ï³åÇï³É Í³Ëë»ñÇ Íñ³·ñáõÙÁ

²é³ÝÓÇÝ áÉáñïÝ»ñáõÙ å»ï³Ï³Ý Ï³åÇï³É Í³Ëë»ñÁ Íñ³·ñ»ÉÇë Ñ³ßíÇ »Ý ³éÝí»É ³Û¹ áÉáñïÝ»ñÇ ³é³ÝÓÝ³Ñ³ïÏáõÃÛáõÝÝ»ñÁ` ¹³ë³Ï³ñ·í³Í Áëï áñáß³ÏÇ Ñ³Ûï³ÝÇßÝ»ñÇ: êáõÛÝ Íñ³·ñÇ ßñç³Ý³ÏÝ»ñáõÙ ¹Çï³ñÏí»É »Ý áÉáñïÝ»ñÇ ¹³ë³Ï³ñ·Ù³Ý »ñÏáõ Ñ³Ûï³ÝÇß` (i) áÉáñïÝ»ñÇ ¹³ë³Ï³ñ·áõÙ` Áëï å»ï³Ï³Ý Í³Ëë»ñÇ µÝáõÛÃÇ (ÁÝÃ³óÇÏ/Ï³åÇï³É) ¨ (ii) áÉáñïÝ»ñÇ ¹³ë³Ï³ñ·áõÙ` Áëï å»ï³Ï³Ý ÙÇç³ÙïáõÃÛ³Ý ÑÇÙÝ³Ï³Ý ß³ñÅ³éÇÃÝ»ñÇ:

àÉáñïÝ»ñÇ ¹³ë³Ï³ñ·áõÙÁ` Áëï å»ï³Ï³Ý Í³Ëë»ñÇ µÝáõÛÃÇ (ÁÝÃ³óÇÏ/Ï³åÇï³É): ²Ûë Ïïñí³Íùáí ¹Çï³ñÏí»É ¿ áÉáñïÝ»ñÇ »ñÏáõ Ëáõßµ`

(i) áÉáñïÝ»ñ, áñï»Õ å»ï³Ï³Ý µÛáõç»Çó ýÇÝ³Ýë³íáñáõÙ »Ý ÇÝãå»ë ÁÝÃ³óÇÏ, ³ÛÝå»ë ¿É Ï³åÇï³É Í³Ëë»ñ.

(ii) áÉáñïÝ»ñ, áñï»Õ å»ï³Ï³Ý µÛáõç»Ç ýÇÝ³Ýë³íáñáõÙÁ ë³ÑÙ³Ý³÷³Ïíáõ٠¿ ÑÇÙÝ³Ï³ÝáõÙ Ï³åÇï³É Í³Ëë»ñáí:

àÉáñïÝ»ñÝ` Áëï å»ïáõÃÛ³Ý ÙÇç³ÙïáõÃÛ³Ý ÑÇÙÝ³Ï³Ý ß³ñÅ³éÇÃÝ»ñÇ: ²Ûë Ñ³ñÃáõÃÛáõÝáõÙ ¹Çïí»É »Ý áÉáñïÝ»ñÇ Ñ»ï¨Û³É »ñ»ù ËÙµ»ñÁ`

(i) å»ïáõÃÛ³Ý ÏáÕÙÇó Ù³ïáõóíáÕ ÑÇÙÝ³Ï³Ý (³é³çÝ³ÛÇÝ) Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ, áñáÝó Ù³ïáõóÙ³Ý ³ÝÑ³ï³Ï³Ý³óáõÙÁ ³ÝÑÝ³ñ ¿ (Ï³Ù ·ñ»Ã» ³ÝÑÝ³ñ ¿).

- áÉáñïÝ»ñ, áñï»Õ Ù³ïáõóíáÕ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÁ Çñ»Ýó µÝáõÛÃáí Ñ³Ý¹Çë³ÝáõÙ »Ý Ñ³Ýñ³ÛÇÝ µ³ñÇùÝ»ñ, ³ÛëÇÝùÝ` ëå³éÙ³Ý Ù»ç áã Ùñó³Ïó»ÉÇ »Ý ¨, Áëï ¿áõÃÛ³Ý, ³ÝÑÝ³ñ ¿ ë³ÑÙ³Ý³÷³Ï»É ¹ñ³ÝóÇó û·ïíáÕÝ»ñÇ ßñç³Ý³ÏÁ (ûñÇÝ³Ï, å»ï³Ï³Ý Ï³é³í³ñáõÙ, å³ßïå³ÝáõÃÛáõÝ, Ñ³ë³ñ³Ï³Ï³Ý Ï³ñ·Ç å³Ñå³ÝáõÃÛáõÝ ¨ ³½·³ÛÇÝ ³Ýí³Ý·áõÃÛáõÝ).
- áÉáñïÝ»ñ, áñï»Õ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÇÝ µÝáñáß »Ý §Ë³éÁ¦ µ³ñÇùÝ»ñÇ Ñ³ïÏáõÃÛáõÝÝ»ñ` Ñ³Ýñ³ÛÇÝ µ³ñÇùÝ»ñÇ Ñ³ïÏáõÃÛáõÝÝ»ñÇ ·»ñ³ÏßéÙ³Ùµ ¨., ³éÝí³½Ý ï»ë³Ý»ÉÇ ³å³·³ÛáõÙ, ¹ñ³Ýó å³Ñå³ÝáõÙÝ áõ í»ñ³Ï³Ý·ÝáõÙÁ ÑÇÙÝ³Ï³ÝáõÙ ßñáõÝ³Ï»Éáõ ¿ ÙÝ³É Ï³é³í³ñáõÃÛ³Ý (¨/Ï³Ù îÆØ-»ñÇ) ³é³ÝóÝ³ÛÇÝ ·áñÍ³éáõÛÃÝ»ñÇ ß³ñùáõÙ (ûñÇÝ³Ï` ×³Ý³å³ñÑ³ÛÇÝ ïÝï»ëáõÃÛáõÝ).

(ii) áÉáñïÝ»ñ, áñï»Õ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÁ, áñå»ë Ï³ÝáÝ, ³ÝÑ³ï³Ï³Ý³óí³Í »Ý ¨ ß³Ñ³éáõÝ»ñÇ ßñç³Ý³ÏÁ Ñëï³Ï ¿, ë³Ï³ÛÝ å»ïáõÃÛáõÝÁ, áñáß³ÏÇ ÝÏ³ï³éáõÙÝ»ñÇó »ÉÝ»Éáí, ýÇÝ³Ýë³íáñáõÙ ¿ ³Û¹ áÉáñïÝ»ñÁ (ûñÇÝ³Ï` ÏñÃáõÃÛáõÝ (Ù³ëÝ³íáñ³å»ë, Ñ³Ýñ³ÏñÃáõÃÛáõÝ), ³éáÕç³å³ÑáõÃÛáõÝ).

(iii) áÉáñïÝ»ñ, áñï»Õ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÇÝ ³í»ÉÇ ß³ï µÝáñáß »Ý §Ù³ëÝ³íáñ¦ µ³ñÇùÝ»ñÇ Ñ³ïÏáõÃÛáõÝÝ»ñ, ë³Ï³ÛÝ Ñ³ßíÇ ³éÝ»Éáí ³Û¹ áÉáñïÝ»ñáõÙ å³Ñ³ÝçíáÕ Ý»ñ¹ñáõÙÝ»ñÇ Í³í³ÉÝ»ñÁ ¨ ß³ï ¹»åù»ñáõÙ ¹ñ³Ýó Ñ»ï·ÝÙ³Ý Ñ»é³ÝÏ³ñÝ»ñÁ` ¹ñ³Ýù Ù³ëÝ³íáñ Ñ³ïí³ÍÇ Ñ³Ù³ñ ¹ÝáõÙ »Ý áã ·ñ³íÇã (ûñÇÝ³Ï` ÉÙ»Éáõ çñÇ Ñ³Ù³Ï³ñ·, áéá·Ù³Ý Ñ³Ù³Ï³ñ·, ¿Ý»ñ·»ïÇÏ³):

*Սոցիալական ծառայություններ*

2007-2009 թթ կապիտալ ծախսերի շրջանակով (եռամյա կտրվածքով) սոցիալական ծառայությունների գծով հատկացումները կազմում են 61.87 մլրդ դրամ կամ նույն ժամանակահատվածի ծրագրված կապիտալ ծախսերի 14.5 տոկոսը: Սոցիալական ծառայությունների գծով կապիտալ ծախսերի հատկացումները տարեկան կտրվածքով ծրագրային ժամանակահատվածում կազմելու են ՀՆԱ-ի 0.7%: Ծախսերը գերազանցապես ֆինանսավորվելու են ներքին աղբյուրների հաշվին, որոնց մասնաբաժինը կազմելու է շուրջ 85.5% :

Սոցիալական ծառայությունների գծով ներոլորտային բաշխումը (եռամյա կտրվածքով) ունի հետևյալ պատկերը՝ կրթության բնագավառ ուղղվող ծախսերը կազմում են 46.1 մլրդ դրամ (կամ սոցիալական ծառայությունների գծով կապիտալ հատկացումների 74.6 տոկոսը), առողջապահության ոլորտին հատկացումները՝ 8.7 մլրդ դրամ (14.2 տոկոս)[9], մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառին մասհանումները՝ 6.1 մլրդ դրամ (9.8 տոկոս), իսկ սոցիալական ապահովագրությանն ու սոցիալական ապահովության բնագավառին 0.86 մլրդ դրամ (1.4 տոկոս):

**Աղյուսակ 6.2 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերը սոցիալական ծառայությունների բնագավառում**

| | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| | *Բյուջե [(1)]* | *2007-2009 թթ ՄԺԾԾ* | | |
| **Ընդամենը** | | | | |
| մլն դրամ | 29,932.8 | 22,554.9 | 17,731.9 | 21,483.1 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 22.5 | 18.5 | 11.6 | 14.3 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 1.2 | 0.8 | 0.6 | 0.7 |
| *Ներքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 14,831.1 | 16,929.8 | 15,560.3 | 20,159.9 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 49.5 | 75.0 | 87.7 | 93.8 |
| *Արտաքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 15,101.7 | 5,625.1 | 2,171.6 | 1,323.2 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 50.5 | 25.0 | 12.3 | 6.2 |

*[(1)] Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

*Կրթություն*

*[9] Հաշվի չի առնված կապիտալ ծախսերի չբաշխված բաղադրիչից ոլորտին հնարավոր հատկացումները, որոնց անդրադարձ է կատարվում ծրագրի առողջապահության ոլորտին նվիրված հատվածում:*

Կրթության բնագավառը, հանդիսանալով պետական քաղաքականության գերակայություններից մեկը, 2007-2009 թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրում ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի առումով գտնվում է առաջնահերթությունների շարքում:

2007-2009 թթ կապիտալ ծախսերի շրջանակում, ինչպես և ընթացիկ ծախսերի առումով, կրթության բնագավառում գերակայությունը տրվում է տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթությանը (հանրակրթություն): 2007-2009 թթ այս ուղղությամբ կապիտալ ծախսերի ծրագրված մակարդակը կազմում է 46.1 մլրդ դրամ (բնագավառին ծրագրային հատկացումների 100 տոկոսը) կամ նույն ժամանակահատվածի ընդհանուր կապիտալ ծախսերի շուրջ 10.9 տոկոսը: Հանրակրթության բնագավառում կապիտալ ծախսերը ծրագրային ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով կազմելու են ՀՆԱ-ի 0.5%: Ընդ որում, ծրագրային ժամանակահատվածում հանրակրթության բնագավառի կապիտալ ծախսերի շուրջ 89.5 տոկոսը ֆինանսավորվելու է ներքին աղբյուրների հաշվին :

**Աղյուսակ 6.3. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերը կրթության բնագավառում**

| | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| | *Բյուջե [1]* | *2007-2009 թթ ՄԺԾԾ* | | |
| **Ընդամենը** | | | | |
| մլն դրամ | 21,229.8 | 14,038.4 | 14,941.7 | 17,121.8 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 15.9 | 11.5 | 9.8 | 11.4 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 0.9 | 0.5 | 0.5 | 0.5 |
| *Ներքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 10,636.0 | 12,201.7 | 13,116.1 | 16,065.4 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 50.1 | 86.9 | 87.8 | 93.8 |
| *Արտաքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 10,593.8 | 1,836.7 | 1,825.6 | 1,056.4 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 49.9 | 13.1 | 12.2 | 6.2 |
| ***Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն*** | | | | |
| մլն դրամ | 18,807.6 | 14,038.4 | 14,941.7 | 17,121.8 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 88.5 | 100.0 | 100.0 | 100.0 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 14.1 | 11.5 | 9.8 | 11.4 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 0.9 | 0.5 | 0.5 | 0.5 |

*[1] Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

Հանրակրթության ոլորտում կապիտալ ծախսերի **հիմնական նպատակը** պետական սեփականություն հանդիսացող ակտիվների պահպանման և վերականգնման ճանապարհով հանրակրթական հաստատությունների բնականոն և հուսալի գործունեության ապահովումն է:

Առաջնորդվելով աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագրային գերակայություններով և հիմք ընդունելով «ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագրի» դրույթները՝ հիմնական նպատակի ապահովումն իրականացվելու է հետևյալ ուղղություններով նախատեսվող միջոցառումներով.

(i) հանրակրթական դպրոցների վթարավտանգ մասնաշենքերի վերականգնում-ուժեղացում՝

ապահովելով դրանց շահագործման անվտանգությունը,

(ii) ջեռուցման համակարգերի ներդրում՝ ապահովելով ջեռուցման ամբողջ սեզոնի ընթացքում ուսումնական գործընթացի անընդհատությունը,

(iii) դպրոցների շենքերի (և/կամ կառուցվածքների) պատշաճ պահպանության ապահովում,

(iv) դպրոցներում սանիտարահիգիենիկ անվտանգ պայմանների ապահովում:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում կառավարությունը ձգտելու է հաղթահարել հանրակրթական դպրոցներում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները[10]:

Ծրագրված կապիտալ ծախսերի արդյունավետությունը բարձրացնելու և հետագա տարիների կապիտալ ծախսերի ծրագրերում համապատասխան ճշգրտումներ կատարելու առումով կառավարությունը հատուկ կարևորություն է տալու «ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագրի» շրջանակներում 2002-2006 թթ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության պատրաստմանը: ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից նշված հաշվետվության ներկայացումը նախատեսված էր նաև 2006-2008 թթ. ՄԺԾԾ-ով, սակայն դա չի արվել: Հաշվետվությունում ամփոփվելու են ըստ մարզերի և ըստ դպրոցների կատարված աշխատանքները: Նման հաշվետվությունը հիմք կհանդիսանա համապատասխան ծրագրի վերանայման և հանրակրթական դպրոցների կապիտալ ծախսերի պահանջի ճշգրտված գնահատականների ներկայացման համար: Ծրագրի վերանայման ընթացքում, մասնավորապես, քննարկման առարկա է դառնալու ծրագրի տարբեր բաղադրիչների (ա) ուսումնական մասնաշենքեր, բ) մարզադահլիճներ (հանդիսությունների սրահներ), գ) գույքի համալրում) նույն հարթությունում դիտարկելու նպատակահարմարությունը:

Ընդունելով այն փաստը, որ կապիտալ ծախսերը կրում են միանվագ բնույթ և ըստ դպրոցների կապիտալ ծախսերի պահանջները տարբերվում են, այդուհանդերձ, ՀՀ կառավարությունը ձգտելու է, որ պետական կապիտալ ծախսերը ըստ դպրոցների բաշխվեն այնպես, որ դա չհանգեցնի ըստ դպրոցների (և/կամ ըստ մարզերի) էական անհամամասնությունների:

Ըստ դպրոցների կապիտալ ծախսերը որոշակի համամասնություններով բաշխմանը զուգընթաց, կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնելու արդյունավետության ցուցանիշներին և կապիտալ ծախսերի հիմնավորվածությանը: Այս համատեքստում, կառավարությունը առայժմ ձեռնպահ է մնալու հանրակրթական դպրոցների տարածքների ընդլայնմանն ուղղված կապիտալ ծախսերից, բացառությամբ այն դեպքերի, երբ նման միջամտության պահանջը կհիմնավորվի պահանջարկի ավելացման և համապատասխան ծառայությունների մատչելիության վտանգվածության փաստարկներով:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում կառավարությունը հատուկ կարևորում է անավարտ շինարարությանը վերաբերող հարցերը՝ նման ծրագրերին տալով հիմնական գերակայություն, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տարածքային կառավարման մարմինների (և/կամ համապատասխան վերադաս կառավարման մարմինների) կողմից այդ ծրագրերը

*[10] Տվյալ համատեքստում խոսքը չի վերաբերում մարզադահլիճներին և հանդիսությունների սրահներին վերաբերող խնդիրներին, որոնց վերաբերյալ որոշումների կայացումը պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություններ:*

առաջնահերթ չեն համարվում և ենթակա են կոնսերվացման:

Առաջիկայում պետությունը մտադիր է շարունակել հանրակրթական դպրոցների ինքնուրույնության ընդլայնմանն ուղղված բարեփոխումները՝ ինչ-որ առումով նպաստելով նաև այդ հաստատությունների կառավարման մարմինների վարքագծում պետական ակտիվների արդյունավետ կառավարման խթանների ներդրմանը: Այս համատեքստում, կառավարությունը մտադիր է ընդլայնել մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորման մեխանիզմի կիրառելիությունը՝ համանման մեխանիզմով ֆինանսավորելով նաև կապիտալ ծախսերի կարիքների համար դպրոցներին տրամադրվելիք կապիտալ տրանսֆերտները (դրամաշնորհները):

Միևնույն ժամանակ, կապիտալ ծախսերի մասով դպրոցներին տրամադրվող որոշակի ինքնուրույնության հետ մեկտեղ, քայլեր են ձեռնարկվելու տրամադրվելիք միջոցների օգտագործման նպատակայնությունը ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, դպրոցների կողմից կապիտալ տրանսֆերտների հաշվին ֆինանսավորվելիք կապիտալ ծախսերի բյուջեները հաստատվելու են համապատասխան մարմինների կողմից, ինչպես նաև քայլեր են ձեռնարկվելու դրանց իրականացման հսկողությունը կանոնակարգելու ուղղությամբ:

*Առողջապահություն*

Առողջապահության ոլորտում մինչ այժմ բոլոր աղբյուրներից կատարված կապիտալ ներդրումները, ընդհանուր առմամբ, անբավարար են եղել ժամանակակից չափորոշիչներին բավարարող որակյալ ծառայությունների մատուցման համար: Արտաքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի կապիտալ ծախսերը հիմնականում ուղղվել են գյուղական բժշկական ամբուլատորիաներին, իսկ ներքին աղբյուրներից բյուջետային կապիտալ ծախսերը վերջին տարիներին կատարվել են կենտրոնացված կարգով՝ առաջնահերթությունը, մասնավորապես տալով մանկաբարձագինեկոլոգիական ծառայությունների որակի բարելավմանը:

Առաջիկա տարիներին ոլորտում կատարվելիք կապիտալ ծախսերը ուղղվելու են ինչպես առաջնային, այնպես էլ հիվանդանոցային բուժօգնության օղակներ: Այդուհանդերձ, հաշվի առնելով ոլորտի ներոլորտային առանձնահատկությունները, կապիտալ ծախսերի ծրագրումը և ֆինանսավորումը իրականացվելու է տարբերակված մոտեցումներով:

**<u>Հիվանդանոցային բուժօգնության</u>** ոլորտի առանձնահատկություններից է, մասնավորապես այն, որ համապատասխան ծառայությունների գծով պետական պատվերի շրջանակներում ծառայությունները մատուցվում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հաստատությունների կողմից: Այս առումով կառավարության համար առաջնահերթ խնդիրներից է հանդիսանում կապիտալ ծախսերի ծրագրման և ֆինանսավորման ռազմավարության մշակումը և ներդրումը:

Հիվանդանոցային բուժօգնության ոլորտում կապիտալ ծախսերի ծրագրման հաջորդ կարևոր խնդիրներից է ներկայումս բնագավառի օպտիմալացման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների ազդեցությունը կապիտալ ծախսերի պահանջի չափերի վրա:

Մյուս կողմից, հիվանդանոցային բուժօգնության բնագավառում ներքին աղբյուրներից կապիտալ ծախսերի՝ ըստ հաստատությունների բաշխման առումով առանցքային է տարածքային կտրվածքով անհամամասնությունների մեղմումը՝ միտված հանրապետության բնակչությանը որակյալ բժշկական ծառայությունների մատչելիության ապահովմանը: Այս տեսանկյունից

կառավարությունը առաջնահերթությունը տալու է կապիտալ ծախսերի գծով այն ծրագրերին, որոնք ուղղված են Երևանից դուրս տեղաբաշխված հիվանդանոցային բուժհաստատությունների շենքային պայմանների ու սարքավորումներով զինվածության բարելավմանը: Այդուհանդերձ, այս մասով ևս, կապիտալ ծախսերի նպատակայնությունն ու արդյունավետությունը էապես կախված են առկա հզորությունների` պահանջարկին համապատասխանեցման և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրների հետ: Հաշվի առնելով այս հանգամանքը, կառավարությունը կապիտալ ծախսերի առումով առաջնահերթությունը տալու է այն հաստատություններին, որոնց համար մշակված և իրականացման փուլում կլինեն հզորությունների օպտիմալացման ծրագրեր` Երևան քաղաքի բուժհաստատությունների համապատասխան փաստաթղթերի օրինակով:

**Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության** բնագավառում առաջիկա տարիներին առաջնահերթ են լինելու մարզային և Երևան քաղաքի պոլիկլինիկական հաստատությունների կապիտալ ծախսերի պահանջները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տարիներին պետական բյուջեից առաջնային բուժօգնության օղակում կատարված կապիտալ ծախսերը հիմնականում ուղղված են եղել գյուղական բժշկական ամբուլատորիաների շենքային պայմանների բարելավմանն ու սարքավորումներով վերազինմանը:

Այս համատեքստում կառավարության քաղաքականության հիմնարար մոտեցումներից է լինելու առաջնային բուժօգնության օղակում կապիտալ ծախսերի ռազմավարության համապատասխանեցումը ոլորտում ներկայումս իրականացվող բարեփոխումներին, որոնք նպատակ են հետապնդում անցում կատարել ընտանեկան բժշկության համակարգին:

Ստորև բերվող աղյուսակում արտացոլված է առողջապահության բնագավառի 2007-2009 թթ կապիտալ ծախսերի շրջանակը, որը ներառում է արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող կապիտալ ծախսերը և ներքին աղբյուրներից ծրագրված ծախսերի այն մասը, որոնք պայմանավորված են բնակչության առողջության պահպանմանը վերաբերող հրատապ լուծում պահանջող խնդիրներով` հաշվի առնելով հիմնական ծառայությունների որակի, մատչելիության և հավասարության նկատառումները: Այս մասով, առաջիկա տարիներին պետությունը շարունակելու է կիրառել կենտրոնացված կարգով կապիտալ ծախսերի իրականացման պրակտիկան և դրանց գծով ծրագրված մասհանումներն արտացոլված են կապիտալ ծախսերի շրջանակի առողջապահության ոլորտի ցուցանիշներում:

**Աղյուսակ 6.4. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերը առողջապահության բնագավառում**

| | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| | *Բյուջե [1]* | *2007-2009 թթ ՄԺԾԾ* | | |
| **Ընդամենը** | | | | |
| մլն դրամ | 4,922.5 | 5,271.4 | 1,683.9 | 1,798.2 |
| %` պետական բյուջեի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 3.7 | 4.3 | 1.1 | 1.2 |
| %` ՀՆԱ նկատմամբ | 0.2 | 0.2 | 0.1 | 0.1 |
| *Ներքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 1,676.5 | 1,924.6 | 1,337.9 | 1,531.4 |
| %` ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 34.1 | 36.5 | 79.5 | 85.2 |
| *Արտաքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 3,246.0 | 3,346.8 | 346.0 | 266.8 |
| %` ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 65.9 | 63.5 | 20.5 | 14.8 |

*(1) Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

Միևնույն ժամանակ, կառավարությունը համոզված է, որ ոլորտի կապիտալ ծախսերի պահանջը անհամեմատ մեծ է: Այդուհանդերձ, հաշվի առնելով ոլորտի հզորությունների օպտիմալացմանն ուղղված ներկայումս ընթացող բարեփոխումները (հատկապես հիվանդանոցային բուժօգնության օղակում) և ոլորտի կապիտալ ծախսերի պլանավորման ու ֆինանսավորման մեխանիզմների հստակեցման անհրաժեշտությունը, կառավորությունը առայժմ ձեռնպահ է մնում առողջապահության ոլորտում լրացուցիչ կապիտալ ծախսերի եռամյա կտրվածքով ծրագրումից՝ նկատի ունենալով համապատասխան հիմնավորվածության դեպքում կապիտալ ծախսերի շրջանակի չբաշխված բաղադրիչի հաշվին այդ ծախսերի ֆինանսավորման հնարավորությունը:

### *Տնտեսական ծառայություններ*

2007-2009 թթ կապիտալ ծախսերի շրջանակով (եռամյա կտրվածքով) տնտեսական ծառայությունների գծով հատկացումները կազմում են 208.9 մլրդ դրամ կամ նույն ժամանակահատվածի ծրագրված կապիտալ ծախսերի 49.2 տոկոսը: Տնտեսական ծառայությունների գծով կապիտալ ծախսերի գծով հատկացումները տարեկան կտրվածքով ծրագրային ժամանակահատվածում կազմելու են ՀՆԱ-ի 2.3%: Այս գծով կանխատեսվող ծախսերի այսպիսի աճը պայմանավորված է «Հազարամյակի մարտահիրավերներ» ծրագրով իրականացվելիք ծախսերով: Ծախսերի ֆինանսավորումը արտաքին աղբյուրների հաշվին գերազանցելու է ներքին աղբյուրներից ֆինանսավորման ծավալները: Այդուհանդերձ, ըստ ոլորտների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը տարբերվում է: Մասնավորապես, տրանսպորտի բնագավառում ծրագրված կապիտալ ծախսերն ամրագրված են թե ներքին և թե արտաքին աղբյուրներից, իսկ էներգետիկայի ոլորտում դրանք գրեթե ամբողջությամբ ֆինանսավորվելու են արտաքին աղբյուրների հաշվին: Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման «Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն» և «Արդյունաբերություն, հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), շինարարություն և բնապահպանություն» խմբերում գերակշիռ մասը  մասը ֆինանսավորվելու է նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում:

**Աղյուսակ 6.5. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերը տնտեսական ծառայությունների բնագավառում**

| | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| | *Բյուջե (1)* | *2007-2009 թթ ՄԺԾԾ* | | |
| **Ընդամենը** | | | | |
| մլն դրամ | 54.332.2 | 47,010.1 | 86,793.7 | 75,102.4 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 40.8 | 38.5 | 57.0 | 49.9 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 2.3 | 1.7 | 2.9 | 2.4 |
| *Ներքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 26,044.9 | 20,161.1 | 15,679.8 | 18,708.4 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 47.9 | 42.8 | 18.0 | 24.9 |
| *Արտաքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 28,287.3 | 26,849.0 | 71,113.9 | 56,394.0 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 52.1 | 57.2 | 82.0 | 75.1 |

*(1) Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

Տնտեսական ծառայությունների գծով կապիտալ ծախսերի կառուցվածքում (եռամյա կտրվածքով) ամենամեծ տեսակարար կշիռն ունեն վառելիքային և էներգետիկ համալիրին հատկացումները ամբողջությամբ արտաքին աղբյուրներից՝ 42.1% (88,0 մլրդ դրամ), տրանսպորտի և ճանապարհին տնտեսության բնագավառին հատկացումները՝ 28.3% (59,0 մլրդ դրամ): Ընդ որում, վերջինիս կառուցվածքում գերակշռում են ճանապարհային տնտեսություն ուղղվող կապիտալ ծախսերը (շուրջ 90 տոկոս): «Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն» խումբը տնտեսական ծառայությունների գծով կապիտալ ծախսերի կառուցվածքում իր տեսակարար կշռով երրորդն է (23.4% կամ 49,2 մլրդ դրամ):

Հաշվի առնելով տնտեսական աճի և աղքատության հաղթահարման առումով ճանապարհային ցանցի և ոռոգման համակարգի կարևոր նշանակությունը[11] (ինչը ամրագրված է աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագրային դրույթներում), ստորև ներկայացվում է այդ ոլորտների կապիտալ ծախսերը պայմանավորող հիմնական գործոնները, կապիտալ ծախսերի գերակայություններն ու քաղաքականության հիմնական ուղղությունները:

***Ճանապարհային տնտեսություն***

Ավտոմոբիլային ճանապարհային ցանցին խիստ բնորոշ են հանրային բարիքների հատկությունները, այսինքն՝ մի կողմից, տվյալ բարիքների (ծառայությունների) սպառումն, ըստ էության, ոչ մրցակցելի է, մյուս կողմից՝ գրեթե անհնար է սահմանափակել այդ ծառայություններից օգտվողների շրջանակը:

Թեև վերջին տարիներին ճանապարհային տնտեսությունում կատարված բավականին մեծ ծավալի պետական ներդրումներին, ճանապարհային տնտեսությունում մնում են խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է պետական կապիտալ ծախսերի տեսքով պետության միջամտություն: Դա, մասնավորապես, պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչ այժմ կատարված ներդրումներն ավելի շատ ուղղված են եղել միջպետական նշանակության ճանապարհներին: Ըստ վերջին գնահատականների, ճանապարհային ցանցի առկա վիճակի պայմաններում ճանապարհներից օգտվողների (միայն տրանսպորտային միջոցների մասով) տարեկան կորուստները գնահատվում են շուրջ 100 մլն դոլար: Մյուս կողմից, հետազոտությունները վկայում են, որ Հայաստանում տնտեսական աճը խիստ կորելացվում և պայմանավորված է ճանապարհային ցանցի վիճակով:

Հաշվի առնելով ճանապարհային ցանցի՝ երկրի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման առումով առանցքային նշանակությունը, պետության քաղաքականությունը առաջիկա տարիներին ուղղվելու է ճանապարհային ցանցի վիճակի բարելավմանն ու դրա պահպանմանը:

2007-2009 թթ բնագավառի կապիտալ ծախսերը ծրագրելիս կառավարությունն առաջնորդվել է հետևյալ **գերակայություններով**՝

(i) ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհային հատվածներ,

---

*[11] «Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն» խմբում կապիտալ ծախսերի կառուցվածքում գերակշռում են ոռոգման համակարգին ուղղվող ներդրումները:*

(ii) տնտեսական արդյունավետության առավել բարձր ցուցանիշներով բնութագրվող ճանապարհային հատվածներ,

(iii) ճանապարհային հատվածներ, որոնց վերկանգնումը նպատակ է հետապնդում ՀՀ բնակավայրերը առնվազն մեկ ուղիով կապել միմյանց և ելք ապահովել դեպի մայրուղիներ՝ դրանց շարքում առաջնահերթությունը տալով այն հատվածներին, որոնք տնտեսական աճի խթանման և աղքատության կրճատման առումով ունեն ավելի բարձր վարկանիշ (ռանգ):

2007-2009 թթ ճանապարհային տնտեսությանը կապիտալ հատկացումները կազմելու են 59.0 մլրդ դրամ (ՀՆԱ-ի նկատմամբ՝ միջին հաշվով տարեկան 0.7 տոկոս): Ընդ որում, ծրագրով նախատեսվում է այդ ծախսերը ֆինանսավորել թե ներքին, թե արտաքին աղբյուրների հաշվին: Կապիտալ ծախսերի աճին զուգընթաց, կառավարությունը պատրաստակամ է համապատասխանորեն ծրագրել նաև ակտիվների պատշաճ պահպանման և բնականոն շահագործման համար պահանջվող ընթացիկ ծախսերի գծով մասհանումները՝ անհրաժեշտության դեպքում վերանայելով դրանց մակարդակը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների զգալի մասը՝ 18,5 մլրդ դրամ պետք է իրականացվի Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիայի (ԷմՍիՍի) ԱՄՆ կառավարության Հազարամյակի մարտահրավերներ նախաձեռնության շրջանակներում Հայաստանին տրամադրված օժանդակության շրջանակներում:

**Աղյուսակ 6.6. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերը ճանապարհային տնտեսության բնագավառում**

| | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| | *Բյուջե* (1) | *2007-2009 թթ ՄԺԾԾ* | | |
| **Ընդամենը** | | | | |
| մլն դրամ | 34.547.8 | 15,602.3 | 19,763.2 | 23,679.0 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 26.0 | 12.8 | 13.0 | 15.7 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 1.4 | 0.6 | 0.7 | 0.7 |
| *Ներքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 17,621.0 | 15,281.4 | 11,681.4 | 13,500.0 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 51.0 | 98.0 | 59.1 | 57.0 |
| *Արտաքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 16,926.8 | 320.9 | 8,081.8 | 10,179.0 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 49.0 | 2.0 | 40.8 | 43.0 |

*(1) Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

***Գյուղատնտեսություն և ջրային տնտեսություն***

Գյուղատնտեսության և ջրային տնեսության բնագավառում կապիտալ ծախսերի ծրագրային մակարդակը 2007-2009 թթ, եռամյա կտրվածքով, կազմում է 49.9 մլրդ դրամ: Ոլորտի կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալի 9.2 տոկոսը ֆինանսավորվելու է ներքին աղբյուրների հաշվին, իսկ մնացած մասը՝ վարկային ծրագրերի և «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում:

**Աղյուսակ 6.7. 2007-2009 թթ պետական կապիտալ ծախսերը գյուղատնտեսության և ջրային տնտեսության բնագավառում**

| | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| | *Բյուջե* (1) | *2007-2009 թթ ՄԺԾԾ* | | |
| **Ընդամենը** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մլն դրամ | 10,361.9 | 10,316.1 | 19,926.1 | 18,993.6 |
| %՝ պետական բյուջեի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 7.8 | 8.4 | 13.1 | 12.6 |
| %՝ ՀՆԱ նկատմամբ | 0.4 | 0.4 | 0.7 | 0.6 |
| *Ներքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 3,447.6 | 1,735.60 | 1,377.7 | 1,436.8 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 33.3 | 16.8 | 6.9 | 7.6 |
| *Արտաքին աղբյուրների հաշվին* | | | | |
| մլն դրամ | 6,914.3 | 8,580.5 | 18,548.4 | 17,556.8 |
| %՝ ոլորտի ընդամենը կապիտալ ծախսերի նկատմամբ | 66.7 | 83.2 | 93.1 | 92.4 |

*(1) Ըստ ՀՀ կառավարության «ՀՀ 2006 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման:*

Ոլորտին հատկացումների զգալի մասը ամրագրված է **ոռոգման համակարգում** կատարվելիք ներդրումներին : Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել ոլորտին տրամադրվելիք կապիտալ ծախսերի ծավալների մեջ գերակշռող մաս է կազմում Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայից (էմՍիՍի) ԱՄՆ կառավարության Հազարամյակի մարտահրավերներ նախաձեռնության շրջանակներում Հայաստանին օժանդակություն տրամադրված գումարները, եռամյա կտրվածքով՝ 30.4 մլրդ դրամ:

Կառավարությունը, իր քաղաքականության շրջանակներում, ոռոգման համակարգը դիտելով որպես գերակա ուղղություն՝ դա պայմանավորում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և պարենային անվտանգության առումով գյուղատնտեսության կարևոր նշանակությամբ, որի հետագա աճը կարող է էապես վտանգվել՝ պայմանավորված ոռոգման համակարգի հիմնախնդիրներով: Ոռոգման համակարգում կատարվող պետական ներդրումների **առաջնային նպատակը** տնտեսական աճի խոչընդոտների վերացումն ու փոքր գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճն է:

Մյուս կողմից, կառավարությունը, հաշվի առնելով այն փաստը, որ ոռոգման ոլորտի ծառայությունները, ըստ էության, չեն բավարարում հանրային բարիքների հատկություններին, որդեգրելու է ոլորտում պետական և ոչ պետական հատվածների փոխգործության կատարելագործմանը միտված քաղաքականություն: Այս համատեքստում կառավարությունը հիմնականում իր վրա է վերցնելու ներդրումային պարտավորությունները և շարունակելու է վարել ոլորտի սուբսիդավորման զուսպ քաղաքականություն՝ ակտիվների պահպանության և շահագործման ապահովումն իրականացնելով համապատասխան սակագնային քաղաքականության օգնությամբ: Բացի այդ, կառավարությունը, համապատասխան միջավայր ապահովելով, ձգտելու է ներդրումային պարտավորությունները ևս ժամանակի ընթացքում փուլային կերպով փոխանցել ծառայություններից զուտ օգտվողներին (ջրօգտագործողների ընկերություններին):

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ